

Գ. Հ. Գյուրջիև

ԱՄԵՆՆ ԱՄԵՆԱՅՆԻՎ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

**Հանդիպումներ
հիշարժան մարդկանց հետ**

(թարգմանություն ռուսերենից՝ անգլերենի համեմատությամբ)

2014

Տասը գիրք՝ երեք մասից

Առաջին մաս – Մարդու կյանքի օբյեկտիվ-անաչառ քննություն կամ Բեհեդգեբուդի պատմածներն իր թոռանը՝ երեք գրքով

Երկրորդ մաս – Հանդիպումներ հիշարժան մարդկանց հետ՝ երկու գրքով

Երրորդ մաս – Կյանքն իրական է միայն այնժամ, երբ ԵՍ կամ՝ հինգ գրքով

ԱՄԵՆ-ը գրված է տրամաբանական դատողության բոլորովին նոր սկզբունքների հիման վրա և նպատակ ունի լուծելու հետևյալ երեք հիմնարար խնդիրները.

Առաջին մասում՝ ավերել, անխնա կերպով և առանց որևէ զիջողականության, աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչի վերաբերյալ ընթերցողի մտածողության մեջ ու զգացմունքներում առկա հավատալիքներն ու հայացքները, որոնք նրա մեջ բույն են դրել բազմաթիվ հարյուրամյակների ընթացքում:

Երկրորդ մասում՝ ընթերցողին ծանոթացնել արարչության նոր նյութին և ապացուցել, որ այն ավելի խելամիտ է ու լավորակ:

Երրորդ մասում՝ նպաստել, որ ընթերցողի մտածողության մեջ ու զգացմունքներում գոյանան իրական, ոչ երևակայական պատկերացումներ ոչ այն պատրանքային աշխարհի վերաբերյալ, որ նա զգում է իր շուրջ, այլ իրականում գոյություն ունեցողի:

*«Որևէ մեկը նրանցից, ովքեր հետաքրքրվում են իմ գրվածքներով,
չպետք է նույնիսկ փորձի դրանք կարդալ այլ հերթականությամբ,
քան նշված է. այլ կերպ ասած, երբեք չպետք է կարդա իմ որևէ գրվածքը՝
առանց լավ ուսումնասիրած լինելու իմ նախորդ գործերը»:*
Գ. Հ. Գյուրջին

Ընկերական խորհուրդ

(հանպատրաստից գրված է հեղինակի կողմից,
երբ արդեն տպագրության պատրաստ գիրքը
հանձնվում էր հրատարակման)

Իրենց ամբողջ կարդացածի կամ լսածի նկատմամբ ժամանակակից մարդկանց ընկալման արդյունավետության վերաբերյալ արված բազմաթիվ հետևությունների և եզրահանգումների հիման վրա, որոնց հանգել եմ իմ փորձարարական պրպտումների ընթացքում, նաև ելնելով հնուց եկած մի իմաստուն ասույթի գաղափարից, որը հենց նոր մտքիս եկավ, այն է՝ «Ամեն մի աղոթք կարող է լսելի դառնալ Վերին Ուժերին և համապատասխան արձագանքի արժանանալ, եթե այն արտաբերվում է եռակի.

առաջին անգամ՝ ի ողջություն ծնողների կամ նրանց հոգու հանգստության համար,

երկրորդ անգամ՝ ի ողջություն մերձավորի,

և միայն երրորդ անգամ՝ հանուն քեզ»,

անհրաժեշտ եմ համարում լիովին հրատարակման պատրաստ այս գրքի հենց առաջին էջում տալու հետևյալ խորհուրդը. «Իմ յուրաքանչյուր գրավոր շարադրանքը կարդացեք եռակի.

առաջին անգամ՝ հենց այնպես, ինչպես սովոր եք կարդալ բոլոր ժամանակակից գրքերն ու թերթերը,

երկրորդ անգամ՝ այնպես, կարծես բարձրաձայն կարդում եք ուրիշ մեկի համար,

և միայն երրորդ անգամ ջանացեք հասկանալ գրվածքիս բուն էությունը»:

Միայն այդ դեպքում կարող եք ակնկալել, որ ձեր սեփական, միայն ձեզ հատուկ անաչառ կարծիքը կկազմեք իմ գրվածքների վերաբերյալ: Եվ միայն այդ դեպքում կիրականանա իմ հույսը, որ դուք, ձեր ըմբռնմանը համապատասխան, կքաղեք այն առանձնահատուկ օգուտը, որը ես ակնկալում եմ և կամենում ձեզ իմ ողջ էությանս:

Հեղինակ

Ներածություն

Ա – Հայրս

Բ – Իմ առաջին ուսուցիչը

Գ – Բոգաչևսկի

Դ – Միստր Իքս կամ նավապետ Պողոսյան

Ե – Աբրամ Ելով

Զ – Իշխան Յուրի Լյուբովեցկի

- Վիտվիցկայա
- Սոլովյով
- Սոլովյովի մահը

Է – Եթիմ բեյ

Ը – Պյոտր Կարպենկո

Թ – Պրոֆեսոր Սկրիդով

Դրամական հարցեր

Ներածություն

Առաջին գիրքս ավարտին հասցնելուց հետո մեկ ամիս է անցել՝ մի ժամանակաշրջան, որը հարկ էր նվիրել հանգստին: Ինչպես կարող եք իմանալ այս գրքի վերջին գլխից, ինքս ինձ խոսք էի տվել, որ այդ ամսվա ընթացքում ոչ մի տող չեմ գրի: Եվ եթե երբեմն դիմում էի գրականության արվեստին, ապա միայն այն բանի համար, որ բաժակաճառ ասեմ՝ գովաբանելով հին կավադոսի ընտիր որակը, որից հենց հիմա խմում եմ Շատե-դյու-Պրիերի գինու մառանում. այս խմիչքը պատրաստողները հաստատ իմացել են, թե որն է կյանքի ճշմարիտ իմաստը...

Իմ առաջին գրքի նկատմամբ ընթերցողների անկեղծ հետաքրքրությունից քաջալերվելով՝ ես որոշեցի կրկին ձեռնամուխ լինել գրական գործին: Այս անգամ ընտրել եմ շարադրանքի ավելի մատչելի ձև, որն ընթերցողին կօգնի նախապատրաստվելու իմ գաղափարների ընկալմանը:

Ինտելեկտուալ զարգացման ցանկացած մակարդակի վրա գտնվող ժամանակակից մարդու գիտակցությունն ունակ է ճանաչելու շրջակա աշխարհը միայն առանձին փաստերի ընկալման միջոցով, որոնք ամեն մի առանձին դեպքում պատահականորեն կամ միտումնավոր կերպով աղավաղվում են, ինչի արդյունքում նա կեղծ պատկերացում է ստանում շրջապատի իրականության վերաբերյալ: Ավելորդ ու աղավաղված տեղեկատվության հոսքով պայմանավորված աններդաշնակությունն աստիճանաբար հանգեցնում է ողբալի արդյունքների, որոնցից կարողացել են խույս տալ նրանք, ովքեր իրենց գիտակցությունը մեկուսացրել են այդ վնասակար ազդեցություններից: Ժամանակակից քաղաքակրթության պատճառած վնասի ապացույցն է այն, որ տասնամյակ առ տասնամյակ կրճատվում է մարդկանց կյանքի տևողությունը:

Երկրորդ գրքում ես մտադիր եմ ընթերցողին ծանոթացնել յոթ պատվիրանների, որոնք ես բախտ եմ ունեցել գտնելու և վերծանելու իմ բազմաթիվ փորձարշավների ընթացքում: Դրանցում մեր հեռավոր նախնիները ձևակերպել են իրենց ճանաչած օբյեկտիվ ճշմարտությունը, որը կարող է գնահատվել նույնիսկ մեր ժամանակակից գիտակցությամբ: Ես կսկսեմ իմ կողմից վերծանված մի գրառմամբ, որը մեկնարկային կետ կծառայի իմ շարադրանքի համար և միաժամանակ կապող օղակ կդառնա իմ նախորդ գրքի վերջին ու սույն գրքի առաջին գլուխների միջև:

Այդ հինավուրց իմաստուն խոսքը հետևյալն է.

«Միայն նա է արժանի մարդ կոչվելու, ով կարողանում է ողջ պահել իր խնամքին հանձնված ոչխարները՝ չկոտորելով գայլերին»:

Իհարկե, «գայլեր» և «ոչխարներ» հասկացությունները բառացի հասկանալու հարկ չկա. դրանք այստեղ խորհրդանշում են մարդու բանականությունն ու հույզերը: Մեր նախնիներն արժանապատիվ էին համարում այն մարդուն, որը կարողանում է «խաղաղ» գոյակցության պայմաններ ստեղծել իր անձի այդ երկու տարաբնույթ և իրարամերժ բաղադրիչների համար:

Հետաքրքիր է նշել, որ ասիական ցեղերի մոտ գոյություն ունեցող բազմաթիվ ասացվածքների, հանելուկների և առակների մեջ կա մեկը, որում գործող անձեր են գայլն ու այծը, և որը գալիս է լրացնելու արդեն մեջբերված ասացվածքը:

Այսպիսի խնդիր է դրվում մեր առջև. ինչպե՞ս գետի մյուս ափը տեղափոխել գայլին, այծին ու կաղամբը, եթե նավակում միայն մեկ «ուղևոր» կարող է տեղավորվել, ընդ որում, պետք է հաշվի առնել, որ գայլին չի կարելի թողնել այծի «ընկերակցությամբ», իսկ այծին՝ կաղամբի, այլապես հետևանքները ողբալի կլինեն:

Այս խնդրի ճիշտ լուծումը գտնելու համար միայն հնարամտություն ունենալը քիչ է. անհրաժեշտ է նաև գործունյա լինել. չէ՞ որ հարկ կլինի ավելորդ անգամ գետանց կատարել:

Երեկ զբոսայգում վերընթերցելով այս իմ ասած «մտավարժանքը»՝ չնկատեցի, թե ինչպես է երեկոն փոխվում գիշերվա. Ֆոնտենբլոյի հանրահայտ սառը մառախուղը սկսեց թափանցել իմ հագուստի բոլոր ծալքերի մեջ, իսկ լեռնային բարձունքների՝ թռչուններ կոչվող թխակապույտ բնակիչները սկսեցին ավելի ու ավելի հաճախ իրենց կենսագործունեության հետքերը թողնել ծնկի պես լերկ իմ գանգի վրա: Սրտնեղելով Աստծո այդ արարածների անսրբանկատ պահվածքից՝ ես այնուհանդերձ որոշեցի հետևել նրանց օրինակին և, նրանց պես արհամարհելով հեղինակությունների կարծիքը, այս գլուխը նույնպես մտցնել նոր գրքիս մեջ. հետո՝ ինչ լինելու է, թող լինի:

Այստեղ ես նկարագրում եմ ոչ այնքան հաճելի տպավորություններս, որ ստացել եմ ժամանակակից գրական գործիչների և, առավել ևս, ժամանակակից գրականության հետ ունեցած իմ

շփումներից: Դրա հետ կապված՝ ուզում եմ այս գլխի մեջ ներառել մի հատված մի հարգարժան պարսիկ գրողի ելույթից, որն ինձ վրա անջնջելի տպավորություն է թողել: Դա եղել է այն ժամանակ, երբ դեռևս շատ երիտասարդ տարիքում ես անցա Պարսկաստան և ինձ վիճակվեց ներկա գտնվել տեղացի մտավորականների մի հավաքի, որում քննարկվում էր ժամանակակից գրականության վիճակը:

Ելույթ ունեցողներից մեկը արդեն տարիքն առած մի պարսիկ գրող էր, որը մտավորական էր՝ ոչ եվրոպական, այլ ասիական իմաստով, այսինքն՝ ոչ միայն շատ կրթված էր, այլ նաև ներդաշնակ զարգացած մարդ էր:

Ամեն ինչից գատ՝ նա ասաց հետևյալը.

«Շատ ափսոս, որ ներկա ժամանակաշրջանը, որը եվրոպական քաղաքակրթություն է կոչվում, այսքան անպտուղ դուրս եկավ և ունակ չէ մեր հետնորդներին որևէ օգտակար բան թողնելու:

Ժամանակակից գրողները, փոխանակ ձգտելու իրենց գաղափարները հնարավորին չափ հստակ արտահայտելու, իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում են, այսպես կոչված, «ոճի գեղեցկության» վրա:

Եվ իրոք, դուք մի ամբողջ օր կարող եք ծախսել մի «հաստափոր» գիրք կարդալու վրա, բայց այնուամենայնիվ խրվել գուշակությունների մեջ, թե հեղինակն ինչ էր ուզում ասել: Եվ միայն ևս մեկ-երկու օր կորցնելուց և գրքի ավարտին հասնելուց հետո կհայտնաբերեք, որ արժարժված գաղափարը մի քոռ կոպեկ չարժե, և ամբողջ դիպաշարը կառուցված է այն բանի վրա, թե արդյոք ք Սմիթը սիրում է Մերիին, իսկ Մերին՝ Սմիթին:

Ասածս վերաբերում է ոչ միայն գեղարվեստական, այլև գիտական գրականությանը:

Գիտական աշխատանքները, որպես կանոն, պարունակում են հին վարկածների հավաքածուներ, որոնք ամեն անգամ նորովի են վերաշարադրվում:

Վեպերում գլխավորապես նկարագրվում են բարձր զգացմունքներ, որոնք արդեն այլասերված են ժողովրդի մեջ, կամ էլ դրանք նվիրված են լինում ամեն տեսակի մեղքերի նկարագրությանը, որոնց միջոցով դրսևորվելու էլք են գտնում մարդկային բնական զգացմունքները, որոնք բավարարություն չեն ստացել:

Կա գրքերի ևս մի տարատեսակ, որոնք սովորաբար պարունակում են զանազան ճանապարհորդությունների և արկածների, ինչպես նաև տարբեր երկրների բուսածածկույթի ու կենդանական աշխարհի նկարագրություններ: Այս տեսակի ստեղծագործությունները հաճախ գրվում են այնպիսի մարդկանց կողմից, որոնք իրենց տան շեմը հատել են միայն ծխախոտ գնելու համար, և շուռումուռ են տալիս նման խղճուկ պատմություններ՝ չարչրկելով իրենց վերին աստիճանի խղճուկ երևակայությունը: Հաճախ նրանք պարզապես ուրիշ գրքերից քաղված ամբողջական հատվածներ են մտցնում իրենց գրքերի մեջ՝ դրանք վերադասավորելով մի փոքր այլ կերպ:

Չնչին պատկերացում անգամ չունենալով գրողի պատասխանատվության մասին՝ այդ «ստեղծագործողները», ձգտելով ապահովել ոճի գեղեցկությունը, ոչնչացնում են իրենց ստեղծագործություններում եղած իմաստի վերջին մնացորդները:

Որքան էլ ձեզ տարօրինակ թվա, ես գրականության կողմից մարդկությանը հասցվող վնասի համար մեղավոր եմ համարում ոչ այլ ինչը, քան ժամանակակից քերականությունը: Այն ես համարում եմ ժամանակակից քաղաքակրթության՝ հասարակության դեմ ուղղված «դավադրության» ամենաահավոր զենքերից մեկը:

Լեզուների մեծ մասի ժամանակակից քերականությունն արհեստականորեն է կառուցված, այն դեպքում, երբ նախկինում քերականությունը ձևավորվում էր բուն կյանքի կողմից՝ կախված տվյալ ժողովրդի զարգացման մակարդակից, կլիմայական պայմաններից, սնունդ հայթայթելու գերադասելի եղանակներից:

Իսկ ժամանակակից քերականությունը խանգարում է, որ գրողը ճշգրիտ արտահայտի իր միտքը, որի արդյունքում ընթերցողը, հատկապես օտարազգին, զրկվում է նրա ասածի իմաստը հասկանալու վերջին հնարավորությունից:

Միտքս հասկանալի դարձնելու համար նկարագրեմ մի դրվագ, որին ինձ վիճակվել է վկա դառնալ:

Ինչպես գիտեք, ես միայն մեկ մերձավոր ազգական ունեմ՝ հորական կողմից եղբորս որդին, որը մի քանի տարի առաջ Բաքվի մոտակայքում նավթահանք ժառանգություն ստացավ և ստիպված եղավ այնտեղ բնակություն հաստատել:

Քանի որ իր բիզնեսը վերահսկելու անհրաժեշտությունից ելնելով՝ իմ այդ եղբորորդին չէր կարողանում Բաքվից հեռանալ, ապա երբեմն ես էի այցելում նրան:

Շրջանը, որտեղ գտնվում էր այդ նավթահանքը, այժմ Ռուսաստանին է պատկանում՝ մի երկրի, որը հայտնի է իր ժամանակակից հարուստ գրականությամբ:

Բաքու քաղաքում և դրա մերձակայքում տարբեր ազգությունների պատկանող մարդիկ էին ապրում, որոնք իրենց ընտանիքներում խոսում էին մայրենի լեզվով, իսկ ազգամիջյան հաղորդակցության համար օգտվում էին ռուսերենից:

Քանի որ Բաքու կատարած իմ այցելությունների ընթացքում շփվում էի տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ, ապա որոշեցի սովորել ռուսաց լեզուն:

Այդ ժամանակ ես արդեն տիրապետում էի շատ օտար լեզուների, և այդ խնդիրն ինձ առանձնապես բարդ չէր թվում:

Որոշ ժամանակ անց ես արդեն բավականին վարժ ռուսերեն էի խոսում, բայց, իհարկե, ընդգծված առոգանությամբ, ինչպես այդտեղի բնակիչները:

Որպես բանասիրական կրթություն ունեցող մեկը՝ ուզում եմ նշել, որ նույնիսկ շատ լավ տիրապետելով որևէ օտար լեզվի՝ դրանով մտածել հնարավոր չէ, եթե շարունակում ես խոսել և մտածել քո մայրենի լեզվով:

Եվ հետևաբար, արտահայտվելով ռուսերեն, ես այնուամենայնիվ շարունակում էի մտածել պարսկերեն՝ մշտապես ռուսերեն համարժեքներ փնտրելով իմ «պարսկերեն» մտքերի համար:

Որևէ միտք պարսկերենից ռուսերեն թարգմանելուս ընթացքում առաջանում էին համարյա անբացատրելի դժվարություններ, և ես սկսեցի մտորել, թե ինչու է երբեմն շատ դժվար լինում անգամ ամենահասարակ միտքը օտար լեզվի բառերով արտահայտելը:

Շեղանակով լինելով այդ խնդրով և բավարար ազատ ժամանակ ունենալով դրա համար՝ ես սկսեցի ուսումնասիրել ռուսերենի և մի քանի այլ ժամանակակից լեզուների քերականությունը և շուտով հասկացա, որ միտքը մի լեզվից մյուսին թարգմանելու դժվարությունը պայմանավորված է խոսքի կառուցման արհեստածին քերականական կանոններով: Ահա այդպես ես հիմնավորապես համոզվեցի, որ շատ լեզուների քերականական կանոնները կազմել են ինտելեկտուալ զարգացման շատ ավելի բարձր մակարդակ ունեցող մարդիկ, քան ունի բնակչության հիմնական զանգվածը:

Իմ այս միտքը հաստատելու համար մատնացույց եմ անում այն դժվարությունը, որ ունեցա ռուսաց լեզուն ուսումնասիրելուս սկզբնական փուլերում, որն էլ դրդեց, որ ավելի մանրակրկիտ ուսումնասիրեմ այդ խնդիրը:

Մի անգամ, երբ սովորականի պես զբաղված էի ռուսերենի ուսումնասիրությամբ, փորձեցի այդ լեզվով արտահայտել հարազատ պարսկերենով իմ գիտակցության մեջ ծագած մտքերը և դրա համար ուզեցի օգտագործել մի արտահայտություն, որը մենք՝ պարսիկներս, շատ ենք օգտագործում մեր խոսակցական լեզվում՝ «myan-diaram», որը ֆրանսերենով նշանակում է «je dis», իսկ անգլերեն թարգմանվում է որպես «I say»: Երբ փորձեցի ռուսերենում գտնել համապատասխան արտահայտությունը, երկար ժամանակ լարում էի իմ հիշողությունը, սակայն, բավականին լավ տիրապետելով այդ լեզվին, պետք եղած համարժեքը չգտա: Ինչպես հասարակ ժողովրդի մեջ, այնպես էլ այդ ազգի մտավորականության ընտրանու միջավայրում օգտագործվող և ոչ մի արտահայտություն չէր համապատասխանում դրան:

Շիմանավորապես ձախողվելով՝ ես նախ ենթադրեցի, որ ռուսերեն բառերի և արտահայտությունների բավականաչափ մեծ պաշար չունեմ, ուստի և քրքրեցի մեծ թվով բառարաններ և խորհրդակցեցի այդ բնագավառում հեղինակություն վայելող անձանց հետ: Ի վերջո պարզվեց, որ ռուսերենում գոյություն չունի արտահայտություն, որը լրիվ համարժեք լինի պարսկերենի «myan-diaram»-ին. դրա փոխարեն օգտագործվում է «я говорю», որը համապատասխանում է պարսկերենի «myan-soil-yaram»-ին, ֆրանսերենի «je parle»-ին և անգլերենի «I speak»-ին:

Քանի որ պարսիկ ժողովրդի մյուս ներկայացուցիչներն ինձ հետ ունեն կերպերի ընկալման միևնույն համակարգը, ապա արդյո՞ք նրանք առանց ներքին դիմադրության ընդունելի կհամարեն նման անհամարժեք փոխարինումը: Իհարկե՝ ոչ: Չէ՞ որ «soil-yaram»-ն ու «diaram»-ը և «speak»-ն ու «say»-ը բայեր են, որոնք տարբեր գործողություններ են նշանակում:

Սա ընդամենը մեկն է այն հազարավոր հնարավոր օրինակներից, որոնք վկայում են այն դժվարությունների մասին, որոնք առաջանում են միտքն ուրիշ կուլտուրայի պատկանող լեզվի թարգմանելիս, որը, ըստ ընդհանուր կարծիքի, իր ծաղկման շրջանում է:

Համարժեք բառերի և արտահայտությունների բացակայության հետևանքով, ինչը նկատելի է ժամանակակից գրական լեզուներում, այն քաղաքակրթությունների ներկայացուցիչները, որոնց լեզվում բառերը միայն ուղղակի իմաստ ունեն, լսելով կամ կարդալով փոխաբերական իմաստով կիրառված բառերն ու արտահայտությունները, դրանց հեղինակի միտքն աղավաղված են ընկալում:

Եվ դա այն դեպքում, երբ հասարակ մարդկանց կյանքին ու գործունեությանը վերաբերող բառերն ու արտահայտությունները լեզուների մեծ մասում ունեն իրենց ճշգրիտ համարժեքները:

Պարսկերեն տարբերակին համապատասխանող ճշգրիտ համարժեք արտահայտության բացակայությունը ռուսաց լեզվում, որի մի օրինակը ներկայացրի, հաստատում է առաջին հայացքից մակերեսային թվացող իմ այն հետևությունը, որ մի լեզվից մյուսին կատարած ցանկացած ամենահմուտ թարգմանություն ընդամենն էրզաց է՝ բնագրի ինչ-որ արհեստական նմանակ:

Պետք է ասեմ, որ, սկսելով ուսումնասիրել ռուսերենի, ինչպես նաև այլ ժամանակակից լեզուների քերականությունը, որպեսզի պարզեմ համարժեք արտահայտությունների բացակայության պատճառը, ես հասկացա, որ դրա համար միայն բանասիրական գիտելիքները բավարար չեն և սկսեցի ծանոթանալ նաև ռուսաց լեզվի ծագման ու զարգացման պատմությանը:

Իմ պրպտումները հաստատեցին, որ նախկինում այդ լեզուն պարունակել է բառեր, որոնք համապատասխանել են պրակտիկ գործունեությանը վերաբերող կոնկրետ հասկացությունների: Բայց ժամանակի ընթացքում հասնելով զարգացման որոշակի աստիճանի՝ այն դարձել է բազմաթիվ կեղծ-գրական դուրսպրծուկների փորձարարությունների թիրախ, ինչը հանգեցրել է շատ բառերի և արտահայտությունների իմաստի աղավաղմանը, կամ էլ դրանք իսպառ դուրս են եկել գործածությունից միայն այն պատճառով, որ չեն համապատասխանել «կուլտուրական» խոսքի պահանջներին: Դրանց մեջ է եղել նաև պարսկերենի «diaram»-ին համապատասխանող այն բառը, որը ես երկար ժամանակ չէի կարողանում գտնել, և որը նախկինում հնչել է այսպես՝ «сказываю»:

Հետաքրքիր է նշել, որ այդ բառաձևը պահպանվել է մինչև այժմ, բայց իր նախնական, տառացի իմաստով կիրառվում է միայն այն մարդկանց կողմից, որոնք թեն ազգությամբ ռուս են, սակայն ապրում են այդ երկրի կուլտուրական կենտրոններից հեռու շրջաններում և մեկուսացված են ժամանակակից քաղաքակրթության ազդեցությունից:

Արհեստականորեն ստեղծված լեզվական կառույցները, որոնք երիտասարդ սերունդը ստիպված է լինում յուրացնել, իմ կարծիքով այն հիմնական պատճառներից մեկն են, որ ժամանակակից եվրոպական ժողովուրդների միջավայրում զարգանում և նորմալ գործում է առողջ գիտակցության ձևավորման երեք սկզբունքներից միայն մեկը՝ մտածողությունը: Բայց, առանց հստակեցնելու և գիտակցելու սեփական հույզերն ու բնազդները, չի կարող ձևավորվել լիարժեք անձ. մի բան, որ ակնհայտ է ամեն մի առողջ բանականություն ունեցող մարդու համար:

Ժամանակակից գրականության վերաբերյալ իմ բոլոր ասածներն ամփոփելով՝ առավել ճշգրիտ այն կարող եմ բնորոշել այսպես. «Այն հոգի չունի»:

Ժամանակակից քաղաքակրթությունն սպանել է գրականության, ինչպես և այն ամենի հոգին, ինչին առնչվել է:

Ես առավել քան բավարար հիմքեր ունեմ ժամանակակից քաղաքակրթությանն այսպիսի անողորմ գնահատական տալու համար, քանի որ մինչև մեր օրերը հասած անտիկ գրականության կոթողները վկայում են այն մասին, որ մենք դրանցից փոխառնելու շատ բան ունենք, և որ այդ գրականությունը կարող է նպաստել լիարժեք, ներդաշնակ զարգացած մարդու ձևավորմանը և արժանի է փոխանցվելու մի սերնդից մյուսին:

Ես հանգեցի այն եզրակացությանը, որ հինավուրց ժողովուրդների իմաստությունը՝ նրանց գաղափարների բուն էությունը, որը հավերժացել է կարճաժամ ու մատչելի ասույթների տեսքով, կարող է շատ օգտակար լինել նրանց հետնորդների համար:

Որպեսզի ցույց տամ հինավուրց և ժամանակակից գրականությունների տարբերությունը, ուզում եմ պատմել երկու ճնճղուկների վերաբերյալ մի հին անեկդոտ:

Մի անգամ խրճիթի քիվի տակ նստած էին մի ծեր և մի ջահել ճնճղուկ: Նրանք քննարկում էին «օրվա աղմկահարույց դեպքը». մովայի սպասուհին փողոցի ճնճղուկների երամի առաջ պատուհանից

դուրս էր նետել առաջին հայացքից չորացած շիլայի կտոր հիշեցնող մի բան, որն իրականում հնացած սպունգ էր: Որոշ ջահել ու անփորձ ճնճողուկներ վրա էին պրծել դրան:

Դեպքը քննարկելու ընթացքում ծեր ճնճողուկը հանկարծ փետուրները փքեց և դժգոհ տեսքով սկսեց թևի տակ ոջիլներ ման գալ, որոնք իրեն անընդհատ նեղություն էին տալիս: Դրանցից մեկը բռնելուց հետո, խորիմաստ տեսքով նա ասած. «Չէ՛, հիմա էն ժամանակները չեն... Նստում էինք քիվի տակ, դանթում մեզ համար: Մեկ էլ հանկարծ ներքևում աղմուկ-աղաղակ էր բարձրանում: Հոտից բերանիդ ջրերը գնում էին: Հոգիդ ցնծում էր այն կանխազգացումից, որ հիմա ցած կթռչենք ու մի լավ քեֆ կանենք: Իսկ հիմա՞ ինչ է. աղմուկը չնայած տեղն է, բայց գարշահոտն ուղղակի անտանելի է: Իսկ արդյունքը սալարկի վրա յուղի մի քանի հետքն է ընդամենը...»:

Այս գրույցում, ինչպես դուք գուցե գլխի ընկաք, խոսքը ձիակառքերի մասին է: Վերջիններս անհամեմատ ավելի բարձր աղմուկ և տհաճ հոտ են հանում, բայց լիովին անօգուտ են ճնճողուկների կերի տեսակետից: Իսկ առանց կերակուրի ճնճողուկի կյանքն էլ առանձնապես քաղցր չէ:

Այս անեկդոտը հրաշալի պատկերավոր ապացույցն է իմ այն պնդման, թե որքան են անցյալի և ներկայիս քաղաքակրթություններն իրարից տարբերվում:

Գրականությունը պետք է ծառայի մարդկության կատարելագործմանը, բայց ներկայումս այն չի կարող իրականացնել իր այդ գործառույթը, քանի որ չափազանց մակերեսային է. ճիշտ այնպես, ինչպես ծեր ճնճողուկի, աղմուկի, իրարանցման և վատ հոտի մասին անեկդոտի մեջ:

Յուրաքանչյուր ոք, էթե մի կողմ դնի իր կանխակալ կարծիքները, տարբերություններ կնկատի Ասիայում ծնված և իր ամբողջ կյանքն այնտեղ անցկացրած մարդու և բնիկ եվրոպացիների հույզերի զարգացման աստիճանների միջև:

Հիրավի, շատերն են նկատում, որ Ասիայի ժամանակակից բնակիչները, որոնք ապրել են ժամանակակից քաղաքակրթությունից մեկուսացված, անհամեմատ ավելի ուժեղ զարգացած հույզեր ունեն, քան եվրոպացիները: Իսկ քանի որ զգացմունքներն անձի ներդաշնակ ձևավորման հիմքն են կազմում, ապա ասիացիները, որոնք սովորաբար ավելի քիչ հիմնարար գիտելիքների են տիրապետում, այնուհանդերձ ավելի ստույգ պատկերացումներ ունեն շրջակա աշխարհի և հենց իրենց մասին, քան նրանք, ովքեր իրենց ժամանակակից քաղաքակիրթ հասարակության սերուցքն են համարում:

Եվրոպական կրթությունը միտված է դիտման առարկայի իմաստավորմանը, մինչդեռ ասիացիներն իրենց տեղեկությունները քաղում են զգացմունքների կամ նույնիսկ բնագոյների միջոցով:

Ասիական երկրների բնակիչներն սկզբնական շրջանում հետաքրքրություն դրսևորեցին եվրոպական գրականության նկատմամբ, բայց, շատ շուտով գիտակցելով դրա բավականին մակերեսային բնույթը, կորցրին այդ հետաքրքրության նշանակալի մասը և ներկայումս հազիվ թե նման բաներ կարդալիս լինեն:

Եվրոպական գրականության նկատմամբ այդպիսի սառը վերաբերմունքի գլխավոր պատճառն, ըստ իս, վեպ կոչվող գրական ժանրն է:

Հռչակ վայելող եվրոպական վեպերի մեծամասնությունը նվիրված է մարդկանց փոխհարաբերությունների ներդաշնակության խախտմանը, որը նրանց թուլության ու կամազրկության արդյունք է և նկարագրվում է ամեն տեսակի ոճական գունազարդումներով: Ասիացիները, որոնք դեռևս շատ չեն հեռացել մայր բնությունից, տղամարդկանց ու կանանց համար փոխհարաբերությունների նման վիճակը վնասակար ու անարժան են համարում, անարժան՝ հատկապես մարդկության արական կեսի համար, և բնագրով արհամարհում են նման մարդկանց:

Ինչ վերաբերում է մնացած ժանրերին՝ գիտական հոդվածներին, ակնարկներին և ճանաչողական գրականության մյուս ձևերին, ապա ասիական երկրների բնակիչները, բնությանն ավելի մոտ լինելով, ենթադրակցաբար զգում են հեղինակի թերի գիտելիքների պատճառով այն ամենի անեղծ ըմբռնման իսպառ բացակայությունը, ինչի մասին նա գրում է:

Եվ ահա, այն ժամանակ, երբ ասիացիները գործնականում լրիվ անտեսում են ժամանակակից գրականությունը, Եվրոպայի գրախանութների դարակները ճկում են նորույթների ծանրության տակ:

Իհարկե, կարող է տեղին հարց ծագել, թե ինչպե՞ս իմ պնդումը համաձայնեցնել այն փաստի հետ, որ Ասիայի բնակչության ճնշող մեծամասնությունն անգրագետ է:

Դրան կպատասխանեմ, որ այնուամենայնիվ ժամանակակից եվրոպական գրականության նկատմամբ ասիացիների հետաքրքրության բացակայության իրական պատճառն այդ գրականության

թերություններն են: Բազմաթիվ անգամ ես ինքս վկա եմ եղել, թե ինչպես են հարյուրավոր անգրագետ մարդիկ հավաքվում գրաճանաչ մեկի մոտ, որպեսզի լսեն Սուրբ Գրքի կամ Շեհերեզադեի «Հազար ու մեկ գիշեր»-ի հեքիաթների ընթերցանությունը:

Իհարկե, կարող եք ինձ առարկել՝ նշելով, որ այդ ստեղծագործություններում, հատկապես՝ հեքիաթներում, նկարագրված բաները վերցված են իրենց կյանքից, դրա համար էլ հասկանալի ու հետաքրքիր են ունկնդիրների համար: Բայց ամբողջ գաղտնիքն այն է, որ այդ տեքստերը, հատկապես՝ «Հազար ու մեկ գիշեր»-ը, գրականություն են՝ բառիս բուն իմաստով: Բոլոր ընթերցողներն ու ունկնդիրները հասկանում են, որ այդ գրքերում նկարագրված ամեն ինչը հեղինակների հորինվածքն է, բայց այդ հորինվածքները շատ ճշմարտանման են, նույնիսկ այն դրվագները, որոնք իրական կյանքում տեղի ունենալ չեն կարող: Ընթերցողների մոտ հետաքրքրություն է ծնում այն, որ հեղինակը նրբորեն կարողանում է թափանցել գործող անձանց հոգեբանության մեջ և գործողությունների զարգացումը կենտրոնացնում է այնպիսի դեպքերի շուրջ, որոնք տեղի են ունենում իրական կյանքում:

Ժամանակակից քաղաքակրթության պահանջմունքները ծնել են նոր, կատարելապես առանձնահատուկ գրական ժանր՝ լրագրությունը:

Ես չեմ կարող լռությամբ շրջանցել այդ հարցը, քանի որ, իմ կարծիքով, լրագրությունը ոչ մի նոր բան չի բերում, որպեսզի նպաստի գիտակցության լիարժեք, ներդաշնակ զարգացմանը, այլ, կործանարար ազդեցություն թողնելով մարդկանց փոխհարաբերությունների վրա, դարձել է ժամանակակից մարդկանց կյանքի գլխավոր չարիքներից մեկը:

Գրականության այդ տեսակն այնպիսի լայն տարածում է գտել մեր օրերում, որ դառնում է ժամանակակից մարդկանց կամազրկությունն ու պակասավորությունը ավելի ու ավելի մեծացնող գործոն: Կամքի հետզարգացումն ու պասսիվությունը մարդկանց զրկում են իրենց համար նախկինում մատչելի ինքնագիտակցությունից. նրանք դադարում են հասկանալ իրենք իրենց, ինչը թույլ չի տալիս, որ ընթանան ինքնակատարելագործման ուղով:

Մյուս կողմից՝ այդ ամենօրյա թեթև կարդալիքն այնպես է փոխում մտածելակերպը, որ նրանց զրկում է նույնիսկ նախկինում ձեռք բերված ինքնագիտակցությունից ու ներդաշնակությունից: Այդպիսով չքանում են այն պայմանները, որոնք նախկինում մարդկանց հնարավորություն էին տալիս կյանքը քիչ թե շատ ներդաշնակ դարձնել գոնե իրենց փոխհարաբերությունների բնագավառում:

Դժբախտաբար, ավելի հաճախակի և ավելի մեծ տպաքանակներով հրատարակվելով՝ թերթերն ու ամսագրերը թուլացնում են մարդու անկախ մտածելու և ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակությունը, նվազեցնում բոլոր տեսակի խաբեությունների ու մոլորությունների նկատմամբ դիմադրողականությունը, ապակողմնորոշում նրա գիտակցությունը՝ մարդկանց մեջ խթանելով ամեն տեսակի բացասական հատկությունների զարգացումը, ինչպիսիք են՝ նախանձը, կասկածամտությունը, կեղծավորությունը, գոռոզությունը և այլն:

Որպեսզի հիմնավորեմ իմ անսասան համոզվածությունն այն մասին, որ պարբերական մամուլը վնաս է հասցնում մարդկությանը, կպատմեմ մի քանի դեպք, որոնց իսկությունը կարող եմ վկայել, քանի որ դեպքերի բերումով ես դրանց մասնակիցն եմ դարձել:

Ես Թեհրանում ապրող ամերիկացի բավականին մտերիմ մի ընկեր ունեի, որն իր մահից ոչ շատ առաջ ինձ իր կտակակատարն էր դարձրել:

Նա ուներ մի տղա, որն արդեն ջահել չէր, բիզնեսից իր եկամուտներն ուներ և բազմանդամ ընտանիքով ապրում էր եվրոպական մեծ քաղաքներից մեկում:

Մի անգամ ընթրիքից հետո նրանք ամբողջ տնով վատ էին զգացել և առավոտյան կողմ անխտիր բոլորը մահացել: Լինելով այդ ընտանիքի կտակակատարը՝ ես ստիպված եղա մեկնել այնտեղ, որտեղ տեղի էր ունեցել այդ ահավոր դեպքը:

Այնտեղ ես իմացա, որ այդ ողբերգությունից ոչ շատ առաջ այդ դժբախտ ընտանիքի հայրը մի քանի օր անընդհատ թերթեր է կարդացել: Դրանցից մի քանիսում նա կարդացել է մի նոր բացված խանութի մասին, որտեղ երջիկ է վաճառվում, որն արտադրվել է իբր առանձնապես որակյալ հումքից և հատուկ տեխնոլոգիայով:

Վերջիվերջո այդ համառ գովազդների ազդեցության տակ նա գնացել է այդ խանութը և գնել այդ երջիկից՝ չնայած ոչ ինքը, ոչ էլ իր ընտանիքի անդամները նախկինում երբեք չէին հրապուրվել երջիկեղենով, քանի որ ապրել ու մեծացել էին Հայաստանում, որտեղ երջիկ չեն ուտում: Ընթրիքին համատեսելով այդ երջիկը՝ նրանք բոլորը ծանր թունավորում էին ստացել և հենց դրանից էլ մահացել:

Այս արտառոց դեպքը կասկածներ արթնացրեց իմ մեջ, և, որպեսզի լույս սփռեմ դրա վրա, օգտվեցի մասնավոր խուզարկուի ծառայությունից:

Ինձ հաջողվեց պարզել հետևյալը: Խոշոր ֆիրմաներից մեկը էժան գնով մեծ քանակությամբ երշիկեղեն է ձեռք բերել, որը սկզբում նախատեսված է եղել ուրիշ երկիր առաքելու համար, բայց մերժվել է բեռնումն ուշացնելու պատճառով: Երշիկեղենի այդ խմբաքանակից շուտափույթ ազատվելու նպատակով այդ ֆիրման միջոցներ չի խնայել՝ պարզևատրելու այն լրագրողներին, որոնց հանձնարարել է գովազդային արշավ ծավալել:

Իսկ հիմա՝ մի ուրիշ պատմություն:

Բաքու կատարած իմ հերթական այցելություններից մեկի ընթացքում պարապությունից տարվեցի թերթեր կարդալով, որոնք ստանում էր իմ ազգականը: Իմ հետաքրքրությունը շարժեցին միանգամից մի քանի թերթերում տպագրված հսկայածավալ հոդվածները, որոնք նվիրված էին մի հայտնի դերասանուհու:

Նրա մասին այնքան շատ էր գրվում, և այնպիսի արտահայտություններով, որ նույնիսկ ես՝ տարիքս առած մարդ, կարդացածիս տպավորության տակ մի կողմ դրեցի բոլոր պլանավորած գործերս և, խախտելով սովորական ժամակարգս, գնացի թատրոն:

Եվ, ի՞նչ եք կարծում, ի՞նչ տեսա այնտեղ: Տեսածներիս մեջ որևէ բան համապատասխանում էր թերթերում գրվածին: Ոչ մի նման բան:

Իմ ապրած կյանքի ընթացքում նման ժանրի դերասանուհիների քիչ չէի տեսել՝ թե՛ լավ, թե՛ վատ, և առանց չափազանցության կարող եմ հեղինակություն համարվել այդ բնագավառում: Բայց եթե նույնիսկ մի կողմ դնենք իմ նուրբ ճաշակը, ապա անգամ սովորական մարդու տեսակետից պետք է խոստովանեմ, որ ամբողջ կյանքիս ընթացքում ես չէի տեսել նման անտաղանդ ու տաղտկալի բան: Այդ կինը ամենաչնչին պատկերացում իսկ չուներ դերասանական արվեստի մասին:

Նա ինձ վրա այնպիսի վատ տպավորություն թողեց, որ եթե նույնիսկ իմ մեջ արթնանար այլասիրության ալիքը, ես նրան իմ խոհարարուհու դերն էլ չէի հանձնարարի:

Ինչպես հետո իմացա, նավթարդյունաբերողներից մեկը լրագրողներին կլորիկ գումար էր տվել՝ խոստանալով այն կրկնապատկել, եթե «անշլագ» ապահովեն իր սիրուհու ելույթների ժամանակ, որը մինչ այդ ինչ-որ մի ռուս ինժեների աղախինն էր եղել:

Ահա ևս մի դեպք. հռչակ վայելող գերմանական թերթերից մեկում ժամանակ առ ժամանակ ես հանդիպում էի հոդվածների, որոնք մինչև երկինք էին հանում մի նկարչի. դրանց ազդեցությամբ իմ մեջ կարծիք ձևավորվեց, որ այդ գեղանկարիչը պետք է որ արտակարգ տաղանդավոր լինի:

Եղբորորդիս Բաքվում այդ ժամանակ մեծ տուն էր գնել և, պատրաստվելով իր հարսանիքին, որոշել էր այն հնարավորին չափ հարուստ կահավորել: Քանի որ նրա նավթահանքերում մի տարում երկու անգամ նավթ էր դուրս ժայթքել՝ ավելացնելով նրա եկամուտները, ապա ես նրան խորհուրդ տվեցի փողը խելացի ծախսել՝ վճարելով այդ հրաշալի նկարչին, որի մասին ես այդքան լավ բաներ էի լսել, ինչպես նաև մի քանի որմնանկար գնի տան պատերը զարդարելու համար:

Այդ ծախսերը ոչ միայն կբարձրացնեին տանտիրոջ հեղինակությունը, այլ նաև նրա ժառանգները տեր կդառնային այդ նշանավոր վարպետ-նկարչի վրձնին պատկանող որմնանկարներին ու մյուս գործերին:

Եվ եղբորորդիս հետևեց իմ խորհրդին: Նա նույնիսկ անձամբ այցելեց այդ եվրոպական նշանավոր նկարչին, որպեսզի ներկայացնի իր պատվերը: Շուտով նկարիչը եկավ մի ամբողջ վագոն ասիստենտների, ներկարարների և, ինչպես ինձ թվաց, նույնիսկ անձնական հարեմի ուղեկցությամբ (հիարկե, բառիս եվրոպական իմաստով) և անշտապ սկսեց իր գործը:

Այդ նշանավոր նկարչի աշխատանքի արդյունքը եղավ այն, որ հարսանիքի օրը հետաձգվեց, որպեսզի տունը բերվի իր նախնական վիճակին:

Լրագրողներին արժանին մատուցելու համար նաև նշեմ, որ տվյալ դեպքում նրանք այդ շատ միջակ նկարչին գովաբանել էին համարյա անշահախնդրորեն. ուղղակի պետք էր եղել ինչ-որ աղմկահարույց բան գրել, թեկուզ հարկ լիներ դրա համար լուր ուղտ սարքել:

Որպես վերջին օրինակ՝ ես ուզում եմ պատմել մի թյուրիմացության մասին, որը բնութագրում է ժամանակակից գրականության վիճակը:

Մի անգամ Խորասանում ես ծանոթացա եվրոպացի մի ջահել գույգի հետ, որը սիրում էր ճանապարհորդել:

Նրանք Խորասանում եղել էին մի քանի անգամ, բայց ամեն անգամ՝ կարճ ժամանակով:

Պարզվեց, որ ջահել ընկերս տարված է մի հետաքրքիր խնդրի լուծմամբ: Բոլոր երկրներում, որտեղ նա եղել էր, հավաքել և վերլուծել էր մարդու օգանիզմի և հոգեկանի վրա ծխախոտի տարբեր տեսակների մեջ առկա նիկոտինի ազդեցության վերաբերյալ տեղեկություններ:

Այդ խնդրին վերաբերող բավարար քանակությամբ անհրաժեշտ տվյալներ հավաքելով Ասիայի շատ երկրներից՝ նա իր կնոջ հետ վերադարձել էր Եվրոպա և սկսել գիրք գրել, որը պետք է պարունակեր իր հետազոտությունների արդյունքները: Բայց քանի որ նրա ջահել ու անհոգ կողակցուհին, տնտեսելուց բոլորովին հեռու լինելով, ճամփորդության ընթացքում ծախսել էր իրենց մոտ եղած բոլոր փողերը, ապա հիմա ստիպված պետք է որպես մեքենագրուհի աշխատեր մի խոշոր հրատարակչությունում:

Այն գրասենյակը, որտեղ նա հիմա աշխատում էր, հաճախ էր ացելում մի գրող, որը, հրապուրիչ կին տեսնելով, սիրահարվել էր ու փորձում էր գայթակղել նրան: Բայց ջահել տիկինը, համատարիմ մնալով իր պարտքին, մերժել էր նրա սիրահետումները: Սակայն, այն ընթացքում, երբ նա տոնում էր իր բարոյական փոքրիկ հաղթանակը, ձախողակ սիրահետողը զանազան խարդավանքների միջոցով հասնում է նրա՝ աշխատանքից հեռացվելուն. այդ մարդու բարոյական մակարդակը թույլ էր տալիս, որ այդ ձևով վրեժ լուծի իր կիրքը բավարարելուց հրաժարվելու համար:

Այդ ժամանակ արդեն իմ ջահել ընկերը հրատարակել էր իր գիրքը և, իր կնոջը վիրավորողի նկատմամբ ասելությունից վառվելով, սկսեց ոչնչացնող քննադատական հոդվածներ գրել այդ գրողի գրքերի մասին՝ դրանց բմբուլները քամուն տալով: Եվ նա հասավ իր նպատակին. այդ գրողի գրքերի պահանջարկը զգալիորեն նվազեց:

Ես ճանաչել եմ նաև մի երաժշտական քննադատի, որն իր ողջ կյանքի ընթացքում ո՛չ որևէ երաժշտական գործիք էր ձեռքն առել, ո՛չ էլ նոտա էր ճանաչում: Նա «դո»-ն «ոե»-ից չէր տարբերում, բայց իրերի բերումով երաժշտական քննադատի պատասխանատու պաշտոն էր վարում և հեղինակություն էր դարձել մի լուրջ ու շատ տարածված թերթի ընթերցողների համար: Ահա և ձևավորում էր հազարավոր մարդկանց երաժշտական ճաշակը:

Ընթերցողները երբեմն տեղյակ չեն լինում հոդվածի գրության շարժառիթների ու հեղինակի իրական հայացքների և բոլոր այն անդրկուլիսյան խարդավանքների ու շահերի մասին, որոնց կարելի է հասնել՝ շահադիտական նպատակներով օգտագործելով զանգվածային լրատվության միջոցները:

Ծերությանս շեմին հասած լինելով՝ կարող եմ համոզված ասել, և ցանկացած առողջ բանականություն ունեցող մարդ կհամաձայնի ինձ հետ, որ անհեթեթություն է արժեհամակարգ և ճաշակ ձևավորել՝ հիմնվելով այն «տեղեկատվության» վրա, որը մենք ստանում ենք զանգվածային լրատվության միջոցներից:

Ժամանակակից մշակույթի աստղերը, որոնց բարոյականության և ինտելեկտի մակարդակը շատ ցածր է, կրակի հետ խաղացող երեխաների նման ունակ չեն հենց իրենք գնահատելու զանգվածային լրատվամիջոցների ազդեցության բացասական հետևանքները զանգվածային գիտակցության վրա:

Ուսումնասիրելով անտիկ պատմությունը՝ ես հանգեցի այն եզրակացությանը, որ հինավուրց մշակույթի կրողները երբեք իրենց թույլ չեն տվել այնպիսի բաներ, որոնք ներկայումս սովորական ընդունված կարգ են դարձել:

Իմ եզրակացությունները հիմնված են արժանահավատ աղբյուրների վրա, որոնք մեզ են հասել այն ժամանակներից, երբ մեր երկիրն աշխարհի հզորագույն տերություններից մեկն էր, իսկ Բաբելոնը, որը մեր ժողովրդին էր պատկանում, այդ դարաշրջանի միակ մշակութային կենտրոնն էր:

Պատմական փաստերի հիման վրա մենք կարող ենք պնդել, որ «մամուլ» այն ժամանակ էլ է գոյություն ունեցել, բայց, իհարկե, անհամեմատ ավելի համեստ ծավալներով:

Սակայն անտիկ աշխարհում այդ պատասխանատու գործը վստահվում էր միայն ամենալուսավորյալ և արժանավոր մարդկանց, որոնք այդ պատվին արժանանում էին իրենց ազնիվ կյանքով և բարի գործերով:

Նախքան նման պաշտոն վարելու թույլտվություն ստանալը մարդիկ երդվում էին, որ կձառայեն սեփական ժողովրդի բարօրությանը:

Իսկ հիմա ամեն մի պատանյակ կարող է լրագրող լինել, եթե շան լեզու կա բերանում և և տարրական գրագիտություն ունի:

Ես բավական մոտ ծանոթացել եմ այդ տեսակի մարդկանց հետ, և նրանց մասին իմ կարծիքն ավելի է ամրապնդվել, երբ երեք-չորս ամիսների ընթացքում ամեն օր մասնակցում էի Բաքվի երիտասարդ լրագրողների ժողովներին:

Դա տեղի ունեցավ հետևյալ հանգամանքներում :

Մի անգամ, երբ կրկին Բաքու էի գնացել եղբորորդուս հետ ամբողջ ձմեռն անցկացնելու մտադրությամբ, վկա եղա, թե ինչպես են մի քանի ջահելներ գալիս նրա մոտ, որպեսզի թույլտվություն ստանան նրա շենքի առաջին հարկում, որտեղ սկզբում ռեստորան պետք է լիներ, անցկացնելու «Գրական գործիչների ընկերության» ժողովները: Ազգականս տվեց իր համաձայնությունը, և հաջորդ օրվանից սկսած այդ ջահելները գլխավորապես երեկոյան ժամերին, հավաքվում էին մեզ մոտ:

Քանի որ կողմնակի անձանց թույլատրվում էր այդ ժողովներին մասնակցել, ես հաճախ միանում էի նրանց, որովհետև երեկոյան ժամերին համարյա միշտ ազատ էի լինում: Իմ սենյակը նրանց հավաքատեղի կողքին էր, ինչն էլ նպաստեց, որ նրանց հետ բավական մոտ հարաբերություններ հաստատեմ:

Նրանցից շատերը դեռևս շատ ջահել էին և թուլակազմ ու փափկասուն տեսք ունեին: Ոմանց դեմքերից պարզորոշ նկատվում էր, որ նրանց ծնողները չարաշահել են սպիրտային խմիչքները կամ ունեցել են այլ կործանարար սովորություններ:

Թեև եվրոպական շատ քաղաքների համեմատությամբ Բաքուն ընդամենը մի փոքրիկ քաղաք էր, իսկ մեր տանը հավաքվող մարդիկ՝ ընդամենը աննշան արարածներ, այնուհանդերձ՝ ես ինձ թույլ կտամ որոշ ընդհանրացումներ անել նրանց գործակիցների վերաբերյալ, որտեղ էլ նրանք աշխատելիս լինեն: Ճամփորդելով Եվրոպայով և սերտ շփումներ ունենալով այդ մասնագիտության շատ ներկայացուցիչների հետ՝ ես ավելի ու ավելի էի համոզվում նրանց մասին ունեցած իմ կարծիքի ճշմարտացիության մեջ: նրանք իրար նման էին նույն պատիճի սիսեռահատիկների պես:

Նրանք իրարից տարբերվում էին միայն քթի վերցցվածության աստիճանով, իսկ դա կախված էր լինում բացառապես այն բանից, թե ո՞ր հրատարակչության աշխատակիցներ էին, և թե որքան էր այն թերթի կամ ամսագրի տպաքանակը, որն իր էջերը տրամադրում էր նրանց անձարակ ճամարտակություններին: Այն բանից, թե որքանով է հայտնի կամ բարգավաճող այն ֆիրման, որը տվյալ հրատարակչության և, հետևաբար, այդ աշխատակիցների տերն է, որոշվում է նրանց սնապարծության աստիճանը:

Նրանցից շատերը, չգիտես ինչու, բանաստեղծներ էին կոչվում: Մեր ժամանակներում, եթե ինչ-որ մեկը հեղափոխական բնույթի ոտանավորի մի երկու տող է գրում, ինչպես ասենք՝

Կանաչ վարդեր,

Կարմիր արտեր՝

Չքնադատես

Երազիս պես

և այլն, ապա անմիջապես իր նման թուղթ մրտտողների կողմից արժանանում է բանաստեղծի կոչման, իսկ նրանցից ոմանք նույնիսկ այցեքարտեր են պատվիրում, որոնց վրա սևով սպիտակի վրա գրված է լինում, որ իրենց տերը բանաստեղծ է:

Ներկայիս գրական գործիչների միջավայրում ընդունված է ամեն հարմար առիթով մեկը մյուսին մեծարելը:

Իմ կարծիքով՝ դա է այն բանի գլխավոր պատճառներից մեկը, որ այդ կեղծ հեղինակությունների ազդեցության ոլորտը շատ արագ ընդարձակվում է, և ամբոխը ստրկամտորեն խոնարհվում ու քծնում է այդ ոչնչություններին, ինչպիսին դրանց համարում է ամեն մի առողջ բանականություն ունեցող մարդ:

Բաքվի գրական գործիչների այդ հավաքներից մեկի ժամանակ, որոնց մասին պատմեցի, նրանցից մեկը կանգնեց համեմատաբար բարձր տեղ և կարդաց իր բանաստեղծությունը, որը շատ նման էր իմ մեջբերածին. այնուհետև պատմեց այն մասին, թե բանկետներից մեկի ժամանակ այսինչ նախարարը կատարը տաքացրած վիճակում ինչ է ասել իր այդ քերթվածքի մասին և այլ նման բաներ: Իր ելույթը նա ավարտեց հետևյալ խոսքերով. «Այժմ ես իմ տեղն այս ամբոխի մոտ զիջում եմ մեր օրերի մեծագույն գրողներից մեկին՝ պարոն այսինչին, ով այցի է եկել մեր քաղաքը և այնքան բարի է գտնվել, որ մեր այս ժողովը զարդարի իր ներկայությամբ: Եվ հիմա մենք երջանիկ կլինենք՝ լսելով նրա ելույթը»:

«Մեծագույն գրողը» մոտեցավ հանպատրաստից սարքած ամբիոնին և իր խոսքը սկսեց այսպես. «Հարգելի տիկնայք և պարոնայք, իմ կոլեգան ու գրչակից եղբայրը սիրալիք կերպով ինձ մեծագույն գրող կոչեց...»: Այստեղ նշեմ, որ այդ գրողը չէր կարող լսած լինել իր «գրչակից եղբոր» ասած խոսքերից և ոչ մեկը, քանի որ սենյակ էր մտել նրա ելույթի ավարտից հետո՝ բացելով պինդ փակված դուռը, իսկ այդ տան պատերի լավ ձայնամեկուսացվածությունն ինձ քաջ հայտնի էր:

Այնուհետև նա շարունակեց. «Իրականում ես նույնիսկ արժանի չեմ նրա ներկայությամբ նստելու պատվին: Մեր ժամանակների մեծագույն գրողը ոչ թե ես եմ, այլ նա՝ իմ մեծապատիվ գրչակիցը, որին ճանաչում է ոչ միայն ամբողջ Ռուսաստանը, այլ նաև նրան պաշտում է ամբողջ քաղաքակիրթ մարդկությունը: Մեր հետնորդները ակնածանքով կարտասանեն նրա անունը և երբեք չեն մոռանա այն, ինչ նա արել է մարդկության բարօրության համար: Նրա տեղը ոչ թե մեր կողքին է, այլ Օլիմպոսի աստվածների շրջապատում»:

Եվ միայն այդ բարձրագույն նախաբանից հետո էր, որ նա կարդաց իր բոլորովին անպետք հորինվածքը, որից հետո սեղան գցվեց, ի դեպ, շատ համեստ՝ գումարած երկու շիշ էծանագին գինի: Հացկերույթի ընթացքում մի քանի կտոր երջիկ ու ձուկ սեղանից բարեհաջող տեղափոխվեցին ներկաներից մի քանիսի գրպանները: Ակամա վկաներին շփոթմունքով բացատրվում էր հետևյալը. «Մա իմ շան համար է: Այդ անպետքը սովորություն է դարձրել անպայման ինձնից մի կտոր ուտելու բան ուզել, երբ տուն եմ վերադառնում»:

Հաջորդ օրը բոլոր տեղական թերթերում մանրամասն զեկույց տպվեց այդ գրական միջոցառման վերաբերյալ, որը բավականին զուսպ տոնով էր շարադրված և պարունակում էր բոլոր ներկա եղածների ելույթներից հատվածներ, բայց, իհարկե, խոսք չկար ընթրիքի համեստության և սեղանից որոշ մթերքների անհետացման մասին:

Ահա այդպիսին են այն մարդիկ, որոնք շարունակ մեզ ապրել են սովորեցնում, ձևավորում մեր ճաշակն ու մտածելակերպը, և որոնց կարող է հավատ ընծայել միայն շատ միամիտ ընթերցողը, որը տեղյակ չէ, թե ինչպիսին են նրանք իրականում:

Եվրոպայի գրեթե բոլոր գրողներն ու լրագրողները դարձել են այն, ինչ կան, ոչ թե շնորհիվ իրենց արժանիքների, այլ թուլությունների:

Իմ տեսակետից՝ չի կարող որևէ կասկած լինել, որ ժամանակակից քաղաքակրթության պակասավորությունը մեծավ մասամբ պայմանավորված է այն վնասակար, բարոյալքող ազդեցությամբ, որն ունենում է պարբերական մամուլը զանգվածային գիտակցության վրա:

Ինձ անչափ շատ է զարմացնում այն փաստը, որ ներկայիս կառավարություններից և ոչ մեկը, որոնք, այսպես կոչված, պետական բյուջեի կեսից ավելին ծախսում են ոստիկանության, պատժիչ համակարգի, դատավարության, եկեղեցու, բժշկության և այլ բնագավառների վրա, ինչպես նաև ոչ քիչ վարձատրություն են տալիս մեծ քանակությամբ այնպիսի պետական պաշտոնյաների, ինչպիսիք են՝ բժիշկները, եկեղեցականները, գաղտնի ոստիկանության գործակալներն ու դատախազները՝ բնակչության բարոյական մակարդակը պահպանելու միակ նպատակով, ոչ մի գրոշ չեն ծախսում, որպեսզի վերացնեն այդ չարիքը, որը շատ հանցագործությունների ու դժբախտությունների ակնհայտ պատճառն է»:

Ահա այսպես ավարտեց իր ճառն այդ իմաստուն ու ազնվաբարո պարսիկը:

Ես այդ մարդու ասածներն այստեղ բերեցի միայն այն պատճառով, որ դրանցում պարփակված իմաստն օգտակար է և ուսանելի հատկապես ժամանակակից քաղաքակրթության այն երկրպագուների համար, որոնք միամտաբար կարծում են, թե ներկայումս այն մարդկային բանականության զարգացման նախկին ժամանակներից անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա է: Այսքանով ուզում եմ ավարտել գրքիս ներածական մասն ու անցնել դրա հիմնական մասին:

Երբ սկսեցի աշխատել հրատարակման համար նախատեսված նյութի վրա, որպեսզի այն դարձնեմ ընկալման համար առավել մատչելի, հիշեցի ոչ անհայտ մոլլա Նասրեդինի մի խորհուրդը, որը հնչում է այսպես. «Ամեն մի գործում աշխատիր հաճելին համատեղել օգտակարի հետ»:

Ինչ վերաբերում է մեր իմաստուն ուսուցչի այդ խորհրդի երկրորդ մասին, դրա մասին ինձ չի վիճակվի չափազանց անհանգստանալ, քանի որ տեքստում առատորեն սփռված գաղափարները կհասցնեն այդ նպատակին, իսկ ինչ վերաբերում է իմ սեփական հաճույքին, ապա ես այն կստանամ՝ տեքստը ներկայացնելով պատմվածքների ձևով, ինչն իմ կյանքը տանելի կդարձնի, քանի որ մարդիկ ինձ գրող կհամարեն:

Որպեսզի ձեզ համար հասկանալի լինի, թե ինչ է նկատի ունենում «տանելի կյանք» ասելով, պետք է ասեն, որ Ասիայի և Աֆրիկայի երկրներով կատարած իմ ճամփորդություններից հետո, որոնք այս կամ այն պատճառով ներկայումս գրավել են լայն հասարակության ուշադրությունը, երկար ժամանակ ինձ համարում էին մոգ և «անդրշիրիմյան աշխարհի» հարցերով փորձագետ:

Ուստի առաջին պատահաձր, համարելով, որ լիակատար իրավունք ունի իր դատարկ հետաքրքրասիրությանը հագուրդ տալու նպատակով ձանձրացնելու ինձ, հիմար հարցեր էր տալիս բարձր թեմաներից՝ ստիպելով, որ իրեն հաղորդակից դարձնեմ իմ անձնական կյանքի այս կամ այն կողմին և պատմեմ այդ հեռավոր երկրներում ճամփորդելուս ընթացքում ունեցած իմ բոլոր արկածների մասին:

Որքան էլ հոգնած լինեի, ես պարտավոր էի լինում գոնե ինչ-որ պատասխան տալ, այլապես նեղանում ու անբարյացակամ էին դառնում իմ նկատմամբ. հետագայում այդ մարդիկ մշտապես վատաբանում էին ինձ և ինձ որևէ տհաճություն պատճառելու առիթը բաց չէին թողնում: Ահա թե ինչու, վերանայելով այս գրքի համար նախատեսված նյութը, ես որոշեցի այն ձևավորել առանձին պատմությունների տեսքով, որոնցից ամեն մեկը ծառայում է որևէ գաղափարի հաստատմանը և անուղղակիորեն պատասխանում է առավել հաճախակի ինձ տրված հարցերին: Եվ հետագայում, երբ գործ կունենամ ամեն տեսակի անամոթ անբանների հետ, կկարողանամ բավարարել նրանց դատարկ հետաքրքրասիրությունը՝ պարզապես հղում անելով այս գրքի համապատասխան գլխին: Շարադրման այս ոճը, որին սովոր է ընթերցողը, միաժամանակ ինձ հնարավորություն կտա մի փոքր շունչ քաշելու և փրկվելու մտավոր գերհոգնածությունից, ինչն անխուսափելի է, երբ բարեխղճորեն կատարում ես այն բազմաթիվ պարտականությունները, որոնք մեզ վրա է դնում կյանքը:

Տարբեր խավերի պատկանող և կրթվածության տարբեր մակարդակ ունեցող մարդկանց կողմից առավել հաճախ տրվող հարցերն այսպիսին են.

- Ի՞նչ հիշարժան մարդկանց հետ եմ հանդիպել
- Արևելքում տեսել է՞մ արդյոք անսովոր ու զարմանահրաշ որևէ բան
- Արդյոք մարդը հոգի ունի՞, և անմահ է արդյոք այն
- Մարդ ազատ կամք ունի՞,
- Ի՞նչ բան է կյանքը, և ինչու՞ տառապանք գոյություն ունի
- Հավատո՞ւմ եմ արդյոք օկուլտային և հոգեկանչական գիտություններին
- Ի՞նչ բան են հիպնոսը, մագնետիզմն ու տելեպատիան
- Ինչու՞ են ինձ հետաքրքրել այդ խնդիրները
- Ինչի՞ց դրդված եմ ստեղծել այն համակարգը, որը կիրառվում է իմ անունը կրող ինստիտուտում:

Այն, որ իմ շարադրանքը բաժանել եմ գրքի մի քանի առանձին գլուխների, այդ հարցերից առաջինի պատասխանն է հենց. այն է՝ ի՞նչ արժանահիշատակ մարդկանց հետ եմ հանդիպել: Գլուխներից յուրաքանչյուրում ես պատմում եմ մի որևէ հանդիպման մասին՝ գլուխների հերթականությունը դասավորելով այնպես, որը հստակորեն երևա նաև ինքնակենսագրական գիծը. միաժամանակ պատասխանում եմ նաև առավել հաճախակի տրված բոլոր հարցերին:

Նախքան առաջ անցնելս կուզենայի բացատրել, թե ինչ եմ ես հասկանում «հիշարժան մարդիկ» ասելով, քանի որ, ինչպես մնացած բոլոր որոշակի կոնկրետ հասկացությունները, դա էլ է ծայրահեղ անհատական ընկալվում:

Օրինակ՝ աճապարարություններ ցուցադրող մարդուն սկզբում շատերը «հիշարժան» են համարում, բայց հենց որ աճապարարությունների գաղտնիքը բացահայտվում է, նրան դադարում են այդպիսին անվանել:

Իմ տեսակետը ներկայացնելու համար կտամ այդ հասկացության հնարավորինս սեղմ սահմանումը:

Ես կարծում եմ, որ իրավամբ կարելի է հիշարժան մարդ համարել նրան, ով իր մտքի ու տաղանդի շնորհիվ առանձնանում է իր շրջապատից, ուրիշներին չի պարտադրում իր մտածելակերպը և միաժամանակ հանդուրժող ու արդարամիտ է ուրիշների թուլությունների ու թերությունների նկատմամբ:

Քանի որ առաջին մարդը, որի ազդեցությունը խոր հետք է թողել իմ կյանքում, իմ հայրն է եղել, ապա ես կսկսեմ նրանից:

ԳԼՈՒԽ Ա Հայրս

Անցյալ դարի վերջին քառորդում և այս դարասկզբում հայրս հայտնի աշուղ էր, այսինքն՝ բանաստեղծ ու բանասաց՝ Ադաշ կեղծանունով. ու թեև ոչ թե արհեստավարժ էր այդ գործերում, այլ միայն սիրող, այնուհանդերձ կարողացել էր լայնորեն հայտնի դառնալ Կովկասի և Միջին Ասիայի բնակիչների շրջանում:

Ասիայում ու Բալկաններում աշուղ էին կոչում ժողովրդական բանահյուսություն ներկայացնողներին, որոնք հորինում, արտասանում ու երգում էին՝ բազմաթիվ ունկնդիրների առջև կատարելով հինավուրց երգեր, պատմելով առասպելներ ու ժողովրդական հեքիաթներ, կարդալով պոեմներ:

Չնայած այդ ժամանակներում գործունեության այդ տեսակին նվիրված մարդիկ, որպես կանոն, գրաճանաչ չէին լինում և նույնիսկ տարրական կրթություն չունեին, այնուհանդերձ այնպիսի հիշողությամբ և հարուստ երևակայությամբ էին օժտված լինում, որոնք հիմա անհավանական և նույնիսկ արտառոց են թվում:

Աշուղները ոչ միայն անգիր հիշում էին անհաշիվ, հաճախ շատ երկարաշունչ ասքեր ու պոեմներ, այլև, օժտված լինելով հիանալի երաժշտական լսողությամբ, հանպատրաստից ստեղծում էին արվեստի հրաշալի գործեր՝ դրանց հարմարեցնելով նորանոր մեղեդիներ ու ռիթմեր:

Ներկայումս այդ արվեստը կորստյան է մատնված, և նույնիկ իմ երիտասարդության տարիներին նման շնորհով օժտված երիտասարդ մարդիկ ավելի ու ավելի հազվադեպ էին հանդիպում:

Ես բախտ եմ ունեցել ներկա լինելու աշուղների ելույթներին, որոնք այն ժամանակներում շատ հայտնի մարդիկ էին, և նրանց կերպարները խորապես դրոշմվել են իմ հիշողության մեջ:

Այդպես է եղել այն պատճառով, որ հայրս ինձ՝ դեռևս մի մատ երեխա, իր հետ տանում էր աշուղների մրցույթի, որոնք գալիս էին շատ երկրներից՝ Պարսկաստանից, Թուրքիայից, Կովկասից և նույնիսկ Թուրքեստանի որոշ շրջաններից, որպեսզի մեծաքանակ հանդիսատեսների առջև իրար հետ մրցեին իրենց երգարվեստով ու հանպատրաստից հորինելու կարողությամբ:

Մովորաբար դա տեղի էր ունենում հետևյալ կերպ:

Մրցույթի մասնակիցներից մեկը, որը վիճակահանությամբ էր ընտրվում, սկսում էր երգել՝ միանգամից ընտրելով մեղեդին և թեման, որոնց իր մրցակիցները պետք է միանային ու շարունակեին հորինել՝ յուրաքանչյուրը յուրովի: Թեմաները կրոնական ու իմաստասիրական բնույթ էին ունենում, կամ ունկնդիրների ուշադրությանն էին հանձնվում անեղծ հինավուրց առասպելներ ու ավանդապատումներ:

Խոսքերը, որպես կանոն, հնչում էին թուրքերեն, որն այդ վայրերում ընդունված էր որպես ազգամիջյան լեզու:

Այդպիսի մրցույթները տևում էին շաբաթներ, անգամ ամիսներ և ավարտվում էին մրցանակների ու նվերների հանձնումով. երախտապարտ հանդիսականներն առավել աչքի ընկած աշուղներին իրենց երախտագիտությունն արտահայտում էին գորգեր և ընտանի կենդանիներ նվիրելով:

Ես ներկա եմ եղել երեք այդպիսի մրցումների, որոնցից առաջինը եղավ ներկայիս Թուրքիայի Վան քաղաքում, երկրորդը՝ թաթարաբնակ Ղարադաղ քաղաքում և երրորդը՝ Կարսի մոտ գտնվող Մուրատան փոքրիկ քաղաքում:

Ալեքսանդրապոլում ու Կարսում, որտեղ իմ մանկության տարիներին ապրում էր մեր ընտանիքը, հորս հաճախ էին հրավիրում հավաքույթների, որոնց ներկայանում էին նրա շնորհը գնահատող մարդիկ, որպեսզի նրա կատարմամբ լսեն երգեր ու ասքեր:

Նա կարողում էր հենց այն պոեմը կամ այն հինավուրց առասպելը, որն ուզում էին լսել ներկաները:

Հաճախ մի երեկոն չէր հերիքում պատումն ավարտին հասցնելու համար, և հանդիպման մասնակիցները հավաքվում էին նաև հաջորդ օրը:

Կիրակի և տոնական օրերին նախորդող երեկոներին, երբ լուսաբացին վաղ արթնանալու անհրաժեշտություն չէր լինում, հայրս զանազան հետաքրքիր պատմություններ էր պատմում անտիկ հերոսների մասին, բանաստեղծություններ էր կարդում և ամեն անգամ ավարտում էր «Հազար ու մեկ

գիշերի» հեքիաթներից մեկով, որոնցից նա այնքան շատ գիտեր, որ դրանք իրոք կհերիքեին հազար ու մեկ գիշերվա համար:

Այդ երեկոյան ընթերցումների շարքում կար մեկը, որն, ինձ համար ամենատպալորիչը լինելով, խոր հետք է թողել իմ կյանքում և դարձել այն ոգեղեն հայտնությունը, որն ինձ հնարավորություն տվեց ըմբռնելու անըմբռնելին:

Այդ տպավորությունը, որն իմ հոգում հայտնվելուց հետո բյուրեղացավ ժամանակի ընթացքում, ես ստացա հորս ու իր ընկերոջ մի բանավեճից, որը ծագեց մի հինավուրց առասպելի շուրջ:

Դա պատահեց այն ժամանակ, երբ կենսական հանգամանքները հորս ստիպեցին արհեստավարժ հյուսն դառնալ:

Չորս ընկերը հաճախ էր այցելում նրա արհեստանոցը, որտեղ նստում էր ամբողջ գիշեր և հորս հետ քննարկում անտիկ առասպելների ու ավանդապատումների նշանակությունը:

Չորս այդ ընկերը ոչ այլ ոք էր, քան ավագերեց Բորշը՝ մի մարդ, որը շուտով պետք է դառնար իմ դաստիարակը, ձևավորեր իմ աշխարհայացքը և ինձ դարձներ այն, ինչ այսօր կամ:

Այդ երեկոյան, երբ կայացավ այդ բանավեճը, ես հորս արհեստանոցում էի քեռուս հետ միասին, որը մեզ հյուր էր եկել այգիներով ու խաղողի վազերով շրջապատված իր քաղաքամերձ առանձնատնից:

Ես ու քեռիս նստել էինք տաշեղների կույտի վրա և շունչներս պահած լսում էինք հորս երգը բաբելական հերոս Գիլգամեշի մասին և այդ ստեղծագործությանը վերաբերող նրա բացատրությունները:

Վեճը ծագեց այն ժամանակ, երբ հայրս ավարտեց այդ էպոսի 21-րդ երգը, որում Ութնապիշտին Գիլգամեշին պատմում է ջրհեղեղի հետևանքով Շուտուպակ քաղաքի կործանման պատմությունը:

Այդ երգից հետո հայրս դադար առավ, որ ծխամորձը լցնի, և ասաց, որ իր կարծիքով Գիլգամեշի առասպելը մեզ է հասել շումերներից՝ ավելի հինավուրց մի ժողովրդից, քան բաբելացիներն են, և անկասկած այդ առասպելը՝ որպես ջրհեղեղի իրական վկայություն, իր արձագանքն է գտել հուդայական Աստվածաշնչում և, սուկ որոշ մանրամասներում փոփոխություններ կրելով, հիմք է ծառայել քրիստոնեական աշխարհընկալման համար:

Չայր-ավագերեց Բորշը սկսեց առարկել՝ բերելով այդ տեսակետը մերժող զանազան փաստարկներ, և վեճը շուտով այնքան բորբոքվեց, որ նրանք նույնիսկ մոռացան ինձ ուղարկել քնելու, ինչպես նման դեպքերում լինում էր նախկինում:

Քեռուս հետ այնքան էինք կլանված այդ բանավեճով, որ առանց շարժվելու մինչև առավոր պառկած մնացինք տաշեղների կույտի վրա, մինչև որ վեճն ավարտվեց և վիճաբանողներն իրարից բաժանվեցին:

Այդ 21-րդ երգը գիշերվա ընթացքում այնքան կրկնվեց, որ ամբողջ կյանքում դրոշմված մնաց հիշողությանս մեջ:

Այն ամենը, ինչ մանկությանս ընթացքում հորս ազդեցությամբ կուտակվում էր իմ ներսում, թեև միանգամից չէր հասնում իմ գիտակցությանը, այնուամենայնիվ իր դերն ունեցավ իմ հետագա ամբողջ կյանքի ընթացքում:

Մի անգամ մի դեպք պատահեց, որն իմ ամբողջ հոգին տակնուվրա արեց: Ամսագիր կարդալիս ես մի հոդվածի հանդիպեցի, որում խոսվում էր այն մասին, որ Բաբելոնի ավերակներում մի քանի աղյուսագրեր են հայտնաբերվել, որոնց տարիքը չորս հազար տարուց ավելի է. նույն հոդվածում բերված էր նաև այդ վերծանված գրառումների թարգմանությունը, և դա հենց հերոս Գիլգամեշի էպոսն էր:

Երբ ես հասկացա, որ խոսքը հենց այն առասպելի մասին է, որն այդքան շատ էի լսել հորիցս, և հատկապես երբ կարդացի այդ էպոսի 21-րդ երգը, որն ինձ այնքա՞ն ծանոթ արտահայտություններն էր պարունակում, այնպիսի հուզմունք ապրեցի, կարծես այդ դեպքով էր որոշվելու իմ հետագա ամբողջ կյանքը:

Այդ 21-րդ երգում այսպիսի տողեր կային.

*...Ութնապիշտին այսպես ասաց Գիլգամեշին.
«Լսի՛ր, ո՞վ Գիլգամեշ, խոսքս խորհրդավոր,
Գաղտնիքն աստվածների կհայտնեն հիմա քեզ.*

*Շուռուպակը հայտնի՝ Եփրատի ակունքներում
Հինավուրց քաղաք էր մի, աստվածներին մոտիկ:
Բայց մարդկանց սրտերը այնքան շատ կարծրացան,
Որ կանգնեցին ահեղ ջրհեղեղի առաջ:*

*Գաղտնի խորհուրդ արին աստվածները վերին.
Նրանց հայրը՝ երկնի հզոր աստված Անուն,
Եվ Էլիլը հերոս՝ նրանց խորհրդատուն,
Նինուարդան բանբեր, Էնուակին ջրբեր
Եվ լուսակն Էան ներկա էին այնտեղ:*

*Էան այդ գաղտնիքը պահում էր, բայց ասաց,
– Եղեգնապատ խրճի թ, և դու՛, խրճիթի պա՛տ,
Լսի՛ր դու ինձ, խրճի թ, հիշի՛ր ասածս, պա՛տ,
Թող այս շուռուպակցին՝ որդին Ուբար-Տուտի,
Կացարանն իր քանդի, շինի հսկա մի նավ,
Մոռանա լավ ապրուստը, հոգա կյանքի մասին,
Իր գանձերը թողնի և փրկի սուկ հոգին...»:*

Մանկությանս ընթացքում իմ ներսում տպավորված այս տվյալները, որոնք ես ստացա սովորական կյանքով իրենց ծերության շեմին հասած այդ երկու մարդկանց վերացական թեմայով գրույցի ընթացքում, բարերար ազդեցություն ունեցան իմ անհատականության ձևավորման գործում, ինչի մասին ես գլխի ընկա համեմատաբար ավելի ուշ՝ եվրոպական պատերազմից¹ անմիջապես առաջ, և դրանից հետո դրանք սկսեցին ոգեշնչման աղբյուր ծառայել ինձ համար:

Ինձ ցնցել էր այն, որ այդ առասպելն աշուղների միջոցով հազարավոր տարիների ընթացքում սերնդեսերունդ փոխանցվել էր համարյա առանց բովանդակության մեջ փոփոխության կրելու:

Այդ դեպքը բաց արեց իմ աչքերը. ես հասկացա, թե ինձ վրա որքա՛ն բարերար ազդեցություն էր գործել իմ հայրը և ափսոսացի, որ այդքան ուշ եմ գիտակցում անտիկ գրական հուշարձանների մեծ նշանակությունը:

Հորիցս լսել էի նաև մի ուրիշ առասպել, որում չափածո ձևով խոսվում էր մեծ ջրհեղեղի մասին. շատ դարեր առաջ՝ վերջին ջրհեղեղից յոթանասուն սերունդ ավելի վաղ (այստեղ պետք է նկատի ունենալ, որ մեկ սերունդ է համարվում հարյուր տարվա շրջանը), երբ ցամաքի տեղում ջուր էր կանգնած, կար մի մեծ քաղաքակրթություն, որի կենտրոնը Քանան կղզին էր, որն այն ժամանակ նաև երկրի կենտրոնն էր համարվում:

Ինչպես ավելի ուշ իմացա ուրիշ պատմական աղբյուրներից, Քանան կղզին գտնվում էր ժամանակակից Հունաստանի տարածքում:

Առաջին ջրհեղեղից փրկվել էին միայն այն մարդիկ, որոնք այն ժամանակներում գոյություն ունեցած Բմաստունների² եղբայրության անդամներ էին: Հինավուրց Հայաստանում իմաստուն էին անվանում որոշակի առանձին դասի պատկանող նշանավոր մարդկանց, որոնք այն ժամանակ սփռված էին ամբողջ երկրով մեկ:

Այդ եղբայրությունը բաղկացած է եղել շատ կիրթ մարդկանցից, որոնք ամեն ինչից գատ նաև աստղաբաշխներ էին: Անմիջապես ջրհեղեղից առաջ եղբայրության անդամները հաստատվել էին Երկրի բոլոր ծագերում, որպեսզի այդ երևույթը տարբեր վայրերից դիտելու հնարավորություն ունենային: Չնայած իրարից շատ հեռու գտնվելուն՝ նրանք մշտական կապ են պահպանել իրար հետ և կարևոր տեղեկատվության ամբողջ ծավալը հեռագրացական ճանապարհով ուղարկել են կենտրոն:

Այդ նպատակի համար նրանք օգտագործել են հատուկ մեղիումների, որոնք ծառայել են ընդունող սարքերի տեղ: Հայտնվելով հոգեհաղորդության մեջ՝ այդ մարդիկ անգիտակցորեն ընդունել ու գրանցել են Երկրի տարբեր ծայրերից առաքված տեղեկատվությունը:

Մա մեր օրերում գոյություն ունեցող կապի միջոցների, այսպես ասած, ճշգրիտ նկարագիրն է:

¹ նկատի ունի Առաջին համաշխարհային պատերազմը (թ.)

² ռուս. տարբերակում՝ братство Имастумов, անգլ. տարբերակում՝ Imastun Brotherhood

Հորս մասին պատմելու ինձ ընձեռնված այս հնարավորությունից օգտվելով՝ ուզում եմ հիշատակել նաև նրա ընկերոջ և իմ առաջին դաստիարակի՝ ավագերեց Բորչի մասին: Միանգամայն անհրաժեշտ եմ համարում նկարագրել այն սովորությունը, որը հաստատվել էր այդ երկու մարդկանց միջև, որոնք հանձն էին առել ինձ՝ դեռևս մանկահասակ երեխայիս, գիտակցական կյանքին նախապատրաստելու գործը:

Այդ սովորությունը, ինչպես ես հասկացա շատ ավելի ուշ, հսկայական դեր է խաղացել կյանքում իմ մտածելակերպի, իմ հոգու ձևավորման գործում:

Իրենք դա «կաստուսիլիա» (kastousilia) էին անվանում՝ մի բառ, որը հավանաբար նրանց էր հասել հինավուրց Ասորեստանից. հայրս այն քաղել էր ինչ-որ մի առասպելից:

Սովորաբար տեղի էր ունենում հետևյալը. նրանցից մեկը հանկարծակի հարց էր ուղղում մյուսին, որը դրան պիտի տար համոզիչ ու տրամաբանական պատասխան՝ պահպանելով լիակատար սառնասրտություն:

Օրինակ՝ մի անգամ երեկոյան իմ ապագա ուսուցիչն անսպասելի մտավ արհեստանոց և հենց շեմից հարց ուղղեց հորս. «Իսկ Բարձրյալը հիմա որտե՞ղ է գտնվում»:

Հայրս անվրդով պատասխանեց. «Նա հիմա Մարիդամիշում է»:

Մարիդամիշը Ռուսաստանի և Թուրքիայի սահմանային շրջանում գտնվող անտառածածկ մի վայր է, որտեղ աճում են ամբողջ Կովկասում և Միջին Ասիայում հոչակ վայելող անսովոր բարձր սոճիներ:

Ստանալով նման պատասխան՝ ավագերեցն ուզեց տեղեկանալ. «Իսկ ի՞նչ է անում այնտեղ»: Դրան հայրս պատասխանեց, որ Բարձրյալն այնտեղ երկար շարժական աստիճան է պատրաստում, որպեսզի դրա օգնությամբ սոճիների կատարներին երջանկություն ամրացնի այնպես, որ առանձին մարդիկ ու ամբողջ ժողովուրդներ կարողանան դրանով վեր բարձրանալ և իջնել:

Հարցերն ու դրանց պատասխանները միշտ հնչում էին շատ լուրջ տոնով՝ նույնիսկ եթե մեկը հետաքրքրվում էր կարտոֆիլի գնով, իսկ մյուսը տեղեկացնում էր, որ այդ տարվա առատ բերքի շնորհիվ կարտոֆիլը չափազանց էժան կլինի:

Միայն շատ ավելի ուշ ես հասկացա, թե որքան իմաստալից էին այդ հարցերն ու պատասխանները:

Նման քննարկումներին վկա դարձած կողմնակի մարդը կարող էր կարծել, թե գործ ունի խելքները կորցրած երկու ձեռուկների հետ, որոնք միայն ինչ-որ թյուրիմացության արդյունքում են հայտնվել գժանոցի պատերից դուրս:

Հայրս շատ պարզ ու որոշակի տեսակետ ուներ կյանքի իմաստի նկատմամբ: Պատանեկությանս օրերին նա շատ անգամ է ինձ ասել, որ մարդու համար կարևորն այն է, որ ներքին ազատություն ձեռք բերի և իր համար ապահովի երջանիկ ու խաղաղ ծերություն:

Նա միանգամայն անհրաժեշտ էր համարում, որ մարդն իր առջև դնի պարզ ու հասկանալի նպատակ, որն իր մեջ չի պարունակում որևէ վերացական մտավարժանք: Բայց դրան հնարավոր է հասնել միայն այն դեպքում, եթե մարդն իր մանկության ու պատանեկության ընթացքում յուրացնի հետևյալ պատվիրանները և դրանք խստորեն պահպանի հետագա կյանքում՝

առաջին՝ սիրել ծնողներին.

երկրորդ՝ մնալ հասարակ մարդ.

երրորդ՝ հարգալից լինել բոլորի նկատմամբ, անկախ այն բանից՝ հարուստ են, թե աղքատ, տեր են, թե ծառա և ինչ կրոն են դավանում.

չորրորդ՝ սիրել սեփական գործը՝ հանուն հենց այդ գործի, այլ ոչ թե այն եկամուտի, որ այդ գործը կարող է բերել:

Հայրս, որպես առաջնեկի՝ ինձ բոլորից շատ սիրելով, առանձնահատուկ ազդեցություն է թողել իմ կյանքի վրա: Ես ավելի շատ նրան ավագ եղբոր տեղ էի դնում, քան հոր, իսկ նա, մշտապես ինձ հետ շփվելով և զանազան գրավիչ պատմություններ պատմելով, նպաստեց իմ բանաստեղծական երևակայության ու բարձր իդեալների զարգացմանը:

Հայրս դաստիարակվել էր հունական ընտանիքում, որի նախնիները գաղթել էին Բյուզանդիայից. նրանք լքել էին իրենց հայրենիքը, որպեսզի փրկվեն Կոնստանդնուպոլիսը նվաճած թուրքերի հալածանքներից:

Նախ նրանք հաստատվել են Թուրքիայի կենտրոնում, բայց հետո, զանազան պատճառների բերումով, որոնցից մեկը լավագույն կլիմայական պայմաններ և արոտավայրեր գտնելն է եղել իմ

նախնինների հարստության հիմքը կազմող մեծաքանակ նախիրների համար, նրանք տեղափոխվել են Սև ծովի արևելյան ափին գտնվող Գյումուշխանե քաղաքի մերձակայքը, իսկ վերջին ռուս-թուրքական պատերազմից ոչ շատ առաջ, կրկին հետապնդվելով թուրքերից, անցել են Վրաստան:

Վրաստանում հայրս առանձնացել է իր եղբայրներից և տեղափոխվել Հայաստան՝ բնակություն հաստատելով Ալեքսանդրապոլ քաղաքում, որը նախկինում Գյումրի էր կոչվում:

Ընտանեկան ունեցվածքի բաժանման ժամանակ հորս մի քանի նախիր է բաժին հասել, որն այդ ժամանակներում հսկայական հարստություն էր:

Մեկ-երկու տարի անց հորս ժառանգածը կորստյան է մատնվել մարդու կամքից անկախ հանգամանքների բերումով:

Իր ընտանիքով, նախրապաններով ու նախիրներով հաստատվելով Հայաստանում՝ հայրս դարձել է այդ վայրի ամենահարուստ մարդը, և ավելի աղքատ ընտանիքները նրան են փոխանցել իրենց ունեցած ոչ մեծ քանակի անասունները, իսկ նա, համաձայն այդտեղ հաստատված սովորույթի, դրա դիմաց պետք է նրանց տար որոշակի քանակությամբ յուղ և պանիր:

Այդպիսով նրա անասունների գլխաքանակը հասել է մի քանի հազարի, սակայն դաբաղի պատճառով, որը, Ասիայից տարածվելով, հասել է մինչև Անդրկովկաս, համարյա ամբողջ գլխաքանակը մի քանի ամսում ոչնչացել է: Կենդանի մնացած ոչ շատ անասուններից կաշին ու ոսկորն է մնացել:

Իր խնամքի տակ վերցնելով ուրիշների անասունները, միաժամանակ հայրս, տեղական սովորույթի համաձայն, իր վրա է վերցրած եղել նաև գլխաքանակի անկման և այլ դժբախտ պատահարների պատասխանատվությունը, ինչպես, օրինակ, գայլերի ոհմակի հասցրած վնասը, ինչն այդ վայրերում բավականին հաճախ էր տեղի ունենում: Ուստի նա ստիպված է եղել կենդանի մնացած անասունները որպես փոխհատուցում հանձնել ուրիշ մարդկանց:

Այդպիսով հայրս հարուստ մարդուց հանկարծակի վերածվել է չքավորի:

Այդ ժամանակ մեր ընտանիքը բաղկացած էր վեց հոգուց՝ հայրս, մայրս, տատիկս, որը ցանկացել էր ապրել կրտսեր որդու հետ, և երեք երեխաներս՝ ես, կրտսեր եղբայրս և քույրս:

Պատահած դժբախտությունից հետո հայրս ստիպված եղավ սեփական գործ բացել, քանի որ լի կյանքի սովոր ընտանիքը պահելը հեշտ խնդիր չէր: Հավաքելով ունեցվածքի մնացորդները՝ հիմնականում տնային իրեր՝ նա գրավատուն բացեց և միաժամանակ, հետևելով տեղական սովորույթին, նաև մի արհեստանոց՝ փայտյա զանազան իրեր պատրաստելու համար:

Բայց քանի որ հայրս նախկինում երբեք առևտրական գործունեությամբ չէր զբաղվել և հետևաբար այդ բնագավառում ոչ մի փորձ չուներ, ապա գրավատունը միայն վնասներ էր բերում: Ի վերջո հարկ եղավ այն փակել և թողնել միայն փայտյա ոչ մեծ առարկաների արտադրությանը հատկացված արհեստանոցը:

Երկրորդ անհաջողությանը հայրս ունեցավ առաջին դժբախտությունից չորս տարի անց:

Մեր ընտանիքն Ալեքսանդրապոլում ապրում էր այն տարիներին, երբ ռուսներն ակտիվորեն վերականգնում էին իրենց նվաճած սահմանային Կարս քաղաքը:

Մտածելով, որ Կարսում կարող է լավ վաստակել, ինչպես նաև ենթարկվելով այդ քաղաքում արդեն գործ բացած քեռուս հորդորներին՝ հայրս արհեստանոցը տեղափոխեց Կարս: Սկզբում մենակ գնաց, հետո եկավ մեզ տանելու:

Մինչ այդ մեր ընտանիքն արդեն մեծացել էր «սննդի վերամշակման տիեզերական սարքերի» ևս երեք նմուշներով՝ իմ երեք հիասքանչ քույրիկներով:

Երբ հաստատվեցինք Կարսում, հայրս նախ ինձ տվեց հունական դպրոց, ապա տեղափոխեց ռուսականը:

Քանի որ լավ ընդունակություններ և հիշողություն ունեի, ապա շատ ժամանակ չէի ծախսում դասերս սովորելու վրա և մնացած ամբողջ ժամանակս հատկացնում էի արհեստանոցում հորս օգնելուն:

Շուտով նույնիսկ սեփական հաճախորդներ ձեռք բերեցի իմ ընկերների թվից, որոնց համար պատրաստում էի խաղալիքներ և որոշ դպրոցական պիտույքներ, օրինակ՝ գրչատուփեր: Կամաց-կամաց ինձ սկսեցին վստահել տների մասնակի վերանորոգման ավելի լուրջ գործեր:

Չնայած այդ ժամանակներում ես դեռ մի մատ երեխա էի, բայց հիմա ամենայն մանրամասնությամբ հիշում եմ բոլոր իրադարձությունները: Մինչև հիմա ինձ հիացմունք է

պատճառում հորս արիությունը, որով նա դիմակայում էր այն բոլոր դժբախտություններին, որոնք թափվում էին նրա գլխին, ինչպես առատության եղջյուրից: Միաժամանակ նա պահպանում էր կենսուրախությունն ու ինքնատիրապետումը՝ հոգով մնալով իսկական պոետ:

Ինչ էլ որ տեղի ունենար, ինչպիսի դժվարին իրավիճակում էլ որ մենք հայտնվեինք, մեր ընտանիքում միշտ տիրում էին համերաշխությունը, սերը և իրար օգնելու ցանկությունը:

Շնորհիվ առօրեական կյանքում մշտապես ոգևորություն և ուրախություն գտնելու հորս բնածին հատկության՝ նա օրինակ էր ծառայում մեզ համար և իր լավատեսությունը փոխանցում մեզ:

Պատմելով հորս մասին՝ ես չպետք է լռության մատնեմ նաև այն, թե ինչ տեսակետ ունեմ, այսպես կոչված գերբնականի մասին: Դրա վերաբերյալ հայրս ուներ իր հատուկ կարծիքը:

Մի անգամ այցի գալով հորս՝ ես նրան ուղղեցի այն կարծրացած հարցերից մեկը, որոնք իմ հետագա բազմաթիվ ճամփորդությունների ընթացքում ես հաճախ եմ տվել այն մարդկանց, որոնց հետ ճակատագրի բերումով առնչվել եմ:

Ես նրան խնդրեցի, որ, առանց ընդունված ընդհանուր արտահայտությունների դիմելու և երկարաշունչ փիլիսոփայության, հայտնի իր կարծիքը հոգու անմահության մասին:

«Դու ուզում ես իմանալ իմ կարծիքը,- հարցրեց նա:- Դե ի՞նչ, ասեմ, որ այնպիսի անմահությանը, որով, ինչպես ընդունված է համարել, մահից հետո մարդու մարմնից անջատվելով, հոգին շարունակում է գոյություն ունենալ այդ մարմնից անկախ, ես չեմ հավատում:

Ես հանգել եմ այն համոզմունքին, որ մարդն ի ծնե օժտված է լինում որոշակի հատկությամբ, որի շնորհիվ կյանքի ընթացքում նրա ներսում գոյանում է ինչ-որ սուբստանցիա, որը համարյա անկախ է լինում ֆիզիկական մարմնից:

Երբ մարդը մահանում է, այդ սուբստանցիան, ֆիզիկական մարմնից առանձնանալուց հետո դեռևս որոշ ժամանակ շարունակում է իր գոյությունը:

Թեև այդ «ինչ-որ բանը» կազմավորվում է այն նույն նյութից, ինչ մարդու ֆիզիկական մարմինը, բայց այն անհամեմատ ավելի զգայուն է զանազան ազդեցությունների նկատմամբ: Դա է ապացուցում և քո այն փորձը, որը դու կատարեցիր շատ տարիներ առաջ»:

Նա նկատի ուներ իմ փորձերից մեկը, որին ինքը մի անգամ ներկա էր եղել. ես հիպնոսացնում էի տարբեր մարդկանց, որպեսզի ինձ համար պարզեմ մի հետաքրքիր երևույթ:

Ես վարվում էի հետևյալ կերպ. կավից ու մումից կերտում էի այն փորձարկվողի արձանիկը, որին մտցնում էի հիպնոսային վիճակի մեջ: Այնուհետև հիպնոսացվածի մարմնի որևէ մասը տրոքում էի ձեռքապտղի և հնդկեղեգի յուղերի խառնուրդով, որից հետո դրա մի մասը հեռացնում էի և դրանով տրոքում նաև կավե արձանիկի համապատասխան մասը:

Չորս այն ժամանակ հատկապես զարմացրել էր այն, որ երբ ես ասեղով ծակում էի արձանիկի յուղոտված մասը, հիպնոսացվածը ցնցվում էր, իսկ երբ արձանիկն ավելի ուժեղ էի ծակում, մարդու մաշկի համապատասխան տեղում արյան կաթիլ էր գոյանում:

Նրան հետաքրքրել էր նաև այն, որ փորձի ենթարկված մարդը հիպնոսի վիճակից դուրս գալուց հետո բացարձակապես ոչինչ չէր հիշում իր հետ տեղի ունեցածի մասին և, իհարկե, ցավ չէր զգում այդ «ծակոցներից»:

Հենվելով հենց այն փաստի վրա, որին ինքը վկա էր եղել, հայրս ասաց. «Այդ «ինչ-որ բանը», որը գոյանում է մարդու ներսում, կարող է ինքնուրույն կերպով արձագանքել որոշակի արտաքին ազդեցություններին»:

Չայրս իմ դաստիարակությամբ զբաղվում էր որոշակի համակարգով, որը խորապես մտածված էր իր կողմից և ամենաբարերար ազդեցությունն ունեցավ իմ անձի ձևավորման վրա:

Վաղ մանկությունից սկսած՝ նա այնպես ձևավորեց իմ մտածելակերպն ու մշակեց իմ զգացմունքները, որ ապագա կյանքում իմ բնավորության մեջ բացառվեն այնպիսի գծերը, ինչպիսիք են չմահավանությունը, վախկոտությունը, ամաչկոտությունը, գոռոզությունը, որոնք առաջացնում են կամազրկություն և կյանքի նկատմամբ անտարբերություն:

Ես շատ լավ հիշում եմ, որ նա այդ նպատակով կենդանիներ՝ մուկ ու գորտ էր խցկում իմ անկողնու մեջ, թույլ էր տալիս, որ ձեռքով ոչ թունավոր օձեր բռնեմ և նույնիսկ խաղամ դրանց հետ:

Չայրս ինձ ուսուցանում էր, որ մարդը պետք է հոգատար լինի մերձավորների, հատկապես ծերերի նկատմամբ՝ մորս, մորաքրոջս և նույնիսկ այն ծեր հովիվների նկատմամբ, որոնք աշխատում էին մեզ մոտ:

Նա ինձ ստիպում էր արթնանալ առավոտ կանուխ, երբ մանկան քունը հատկապես քաղցր է լինում, և գնալ աղբյուրի սառնորակ ջրով լվացվելու. նաև վարժեցնում էր ինձ, որ անգամ ցուրտ եղանակներին բավարարվեմ թեթև հագուստով:

Որքան էլ փորձեի խույս տալ այդ թեթև պարտականությունները կատարելուց, հայրս երբեք չէր զիջում, թեև բարի մարդ էր և շատ էր սիրում ինձ: Չնայած այն բանին, որ հաճախ եմ պատժի ենթարկվել, ես նրան երախտագիտությամբ եմ հիշում այն ամենի համար, որ նա արել է հանուն ինձ:

Եթե հայրս իմ նկատմամբ այդքան խիստ ու պահանջկոտ չլիներ, ապա հասուն մարդ դառնալուց հետո ես չէի կարողանա հաղթահարել բոլոր այն խոչընդոտները, որոնք իմ երկարատև ճամփորդությունների ընթացքում հայտնվում էին իմ ճանապարհին:

Հայրս պահանջկոտություն էր դրսևորում ոչ միայն իմ նկատմամբ, այլ նաև ոչ պակաս խստապանջ էր հենց իր նկատմամբ: Նա իր կյանքը բժախնդրորեն ենթարկել էր խիստ ժամակարգի:

Օրինակ՝ նա միշտ շատ շուտ էր պառկում քնելու, որպեսզի հաջորդ առավոտյան շատ վաղ արթնանա, և իր այդ սովորությունից չհրաժարվեց նույնիսկ իր դստեր հարսանիքի օրը:

Վերջին անգամ հորս հետ տեսակցել եմ 1916 թվականին: Նա արդեն 82 տարեկան էր, ընդ որում՝ առողջ էր, լի ուժով ու լավատեսությամբ. խիտ մորուքում ընդամենը մի քանի սպիտակ մազ կար: Դրանից մի տարի հետո նա մահացավ, բայց ոչ իր բնական մահով:

Այդ իրադարձությունը, որը ցավալի ու անարդարացի էր բոլոր նրան ճանաչողների համար, տեղի ունեցավ մարդկային կրքերի անհեթեթ ժայթքման ժամանակ, երբ թուրքերը հերթական անգամ հարձակվեցին Ալեքսանդրապոլի վրա, և մեր ընտանիքը ստիպված եղավ այնտեղից փախչել, որպեսզի փրկվի:

Հայրս չի ցանկացել տունը թողնել բախտի քմահաճույքին և այն թուրքերից պաշտպանելիս ծանր վիրավորվել է և շուտով մահացել: Նրան թաղել են մի քանի ծերունիներ, որոնք վկա էին եղել այդ դեպքերին:

Հորս գրի առած հինավուրց առասպելների ու երգերի տեքստերը, ցավոք, անդառնալիորեն կորսվել են զանգվածային թալանի ու ջարդերի ընթացքում: Չայնարկիչի ժապավենի վրա գրի առնված նրա մի քանի հարյուր երգերը հավանաբար պահպանվել են այն իրերի շարքում, որոնք ինձ վիճակվեց թողնել Մոսկվայում:

Շատ կցավեմ ժողովրդական բանահյուսության սիրահարների համար, եթե այդ ձայնագրություններն անհետ կորչեն:

Հորս անձնական յուրահատկությունն ու նրա նշանակալի խելքն անշուշտ ընթերցողներն ըստ արժանվույն կգնահատեն, եթե այստեղ բերեմ նրա սիրած ասույթներից մի քանիսը, որոնք նա հաճախ ու շատ տեղին օգտագործում էր գրույցների ընթացքում:

Դրա հետ կապված հետաքրքիր կլինի նշել, որ եթե այդ նույն ասույթներն ուրիշ մեկն էր օգտագործում գրույցի ժամանակ, դրանք այլ կերպ էին ընկալվում՝ թվալով անհեթեթության գագաթ:

- Աղի համը չտեսած՝ շաքարի համը չես իմանա:
- Փարաջան հիմարությունը ծածկելու լավ միջոց է:
- Եթե տերտերն աջ է թեքվում, ապա խելացի մարդն առանց երկմտելու պետք է ձախ թեքվի:
- Սեփական վախկոտությունն ընդունելու համար ոչ քիչ արիություն պետք է ունենալ:
- Մարդուն կշտացնում է ոչ թե սննդի առկայությունը, այլ ազահության բացակայությունը:
- Խավարի մեջ ոջիլը վագրից ավելի սարսափելի է:
- Սեփական բեռը ծանր չէ:
- Հիմար է նա, ով չափազանց շատ է խելքին գոռ տալիս:
- Շատախոս կինը ծանր հիվանդությունից վատ է:
- Երջանիկ է նա, ով չի նկատում սեփական դժբախտությունները:
- Չինգիզ խանը հզոր մարդ էր, բայց ոստիկանապետն էլ ավելի հզոր է:
- Եթե ուզում ես հարստանալ, ընկերացիր ոստիկանության հետ:
- Եթե ուզում ես նշանավոր մարդ դառնալ, ընկերացիր լրագրողների հետ:
- Եթե ուզում ես կուշտ լինել, ընկերացիր գոքանչիդ հետ:
- Եթե ուզում ես խաղաղ ու հանգիստ ապրել, ընկերացիր հարևանիդ հետ:
- Եթե ուզում ես հանգիստ քնել, հաշտվիր կնոջդ հետ:
- Եթե ուզում ես արեխստ դառնալ, ընկերացիր տերտերի հետ:

Որպեսզի լիակատար պատկերացում ստանաք հորս անձի մասին, ես պետք է նկարագրեմ նրա բնավորությունը, ինչպիսին հազվադեպ են ունենում ժամանակակից մարդիկ. այն զարմացնում էր բոլոր նրանց, ովքեր նրա հետ լավ ծանոթ էին:

Այն ժամանակից սկսած՝ երբ հայրս գրկվեց իր ամբողջ հարստությունից և ստիպված էր զբաղվել առևտրական գործունեությամբ, նրա գործերն այնքան վատ էին ընթանում, որ բոլոր նրանք, ովքեր ծանոթ էին նրա գործարարությանը, նրան համարում էին ծայրահեղ ոչ գործնական:

Եվ իսկապես, հորս նախաձեռնած ցանկացած առևտրական գործ, չնայած նրա բոլոր ջանքերին, միայն վնասներ էր բերում: Բայց այդպես էր լինում ոչ այն պատճառով, որ նա գործնականության պակաս ուներ կամ թե առևտրական գործունեության բնագավառում ունակություններ չուներ: Այդ անհաջողությունների պատճառը նրա բնավորությունն էր:

Բնավորության այդ յուրահատկությունը, որը, հավանաբար, ձևավորվել էր դեռևս մանուկ հասակում, ես կբնորոշեի այսպես՝ բնագդական հակակրանք սեփական երջանկությունը ուրիշ մարդկանց դժբախտության վրա կառուցելու նկատմամբ:

Այլ կերպ ասած, լինելով հպարտ ու ազնիվ մարդ՝ հայրս երբեք չէր կարող շահ կորզել իր հաճախորդների միամտությունից կամ անփորձությունից: Բայց նրա շրջապատում եղած մարդկանց մեծ մասը՝ լինելով իրենց ժամանակի տիպական ներկայացուցիչներ, օգտվում էին նրա ազնվությունից ու անմիջականությունից, որպեսզի ամենաանխիղճ ձևով խաբեն նրան:

Չիրավի, հորս նկատմամբ իդեալականորեն կիրառելի են սուրբ Գրքի տողերը, որոնք ամենատարբեր դավանանքների ներկայացուցիչներ մեջբերում են, որպեսզի նկարագրեն մեր առօրեական կյանքի թշվառությունը.

«Եթե չես ուզում ծեծված լինել, ապա առաջինը խփիր»:

«Եթե ինքդ չխփես, ապա կողերդ կջարդեն»:

Թեև հայրս հաճախ էր հայտնվում բարդ իրավիճակներում, որոնց հաղթահարումը լինում էր անհնար, և դժբախտությունները նրա գլխին թափվում էին, ինչպես առատության եղջյուրից, ու թեև մշտապես նա բախվում էր մարդկային բնույթի ամենաստոր դրսևորումների հետ, որոնք ստիպում էին ենթադրել, թե մարդն առաջացել է բորենուց, նա պահպանեց իր սրտի բարությունն ու կարեկցանքը և միշտ հավատարիմ մնաց ինքն իրեն:

Նրա կյանքում, այսպես կոչված, նյութական բարեկեցության բացակայությունը դուրս-ինչ անգամ չէր անհանգստացնում նրան: Այն ամենը, ինչ պետք էր հորս, ճաշի ժամին մի քիչ հաց ունենալն էր և լռությունն այն ժամերին, երբ նա ընկնում էր մտասևեռման մեջ:

Միակ բանը, որ կարող էր վրդովել նրան, երեկոյան ազատ ժամանակ չունենալն էր, երբ նա սիրում էր դիտել աստղերը:

Այն ամենը, ինչ ինքս ինձ կցանկանայի՝ լինել այնպիսի մարդ, ինչպիսին հայրս էր իր հասուն տարիքում:

Ինձնից անկախ հանգամանքների բերումով ես հնարավորություն չեմ ունեցել այցելելու իմ սիրելի հոր գերեզմանին, և քիչ հավանական է, որ կկարողանամ դա անել ապագայում. սակայն, ավարտելով իմ ամենասիրելի մարդու մասին այս գլուխը, արյունակից ու հոգևոր իմ որդիներին կտակում եմ, որ եթե ճակատագիրը նրանց հնարավորություն ընձեռի, փնտրեն միայնակ ու լքված գերեզմանը և մի հուշաքար դնեն հետևյալ գրությամբ.

«Նա պատկանում է մեզ:

Մենք պատկանում ենք Նրան:

Մենք անասահման մոտ ենք իրար»:

ԳԼՈՒԽ Բ Իմ առաջին ուսուցիչը

Ինչպես նախորդ գլխում հիշատակեցի, իմ առաջին ուսուցիչը եղել է ավագերեց Բորշը: Կարսի տաճարում որպես ավագերեց ծառայելու ընթացքում նա միաժամանակ մեծագույն հոգևոր հեղինակություն էր ամբողջ գավառի համար, որը նկարագրվող դեպքերից ոչ շատ առաջ գրավել էին ռուսական զորքերը:

Երջանիկ դիպվածի բերումով՝ հայր Բորշը հսկայական դեր խաղաց իմ անձի ձևավորման գործում:

Տաճարային երգչախմբում երգողներին ընտրում էին քաղաքային ռուսական դպրոցի աշակերտներից, որտեղ էս սովորում էի: Լավ ձայնիս շնորհիվ էս հայտնվեցի ընտրյալների թվում:

Ծեր ավագերեցը, որին հետաքրքրում էր եկեղեցական երգեցողությունը, հաճախ ներկա էր լինում մեր փորձերին: Նա շատ էր սիրում երեխաներին և շատ բարեհաճ էր փոքրիկ երգիչներին նկատմամբ:

Շուտով ավագերեցն սկսեց հատուկ ուշադրություն դարձնել ինձ վրա. գուցե այն պատճառով, որ իմ ձայնը շատ լավն էր և առանձնանում էր երգչախմբի ընդհանուր ձայներից, կամ էլ այն պատճառով, որ էս շատ աշխույժ էի, և նրան դուր էին գալիս ինձ նման թովռանները: Ամեն դեպքում՝ նա իմ նկատմամբ անկեղծ հետաքրքրություն դրսևորեց և շուտով սկսեց ինձ օգնել դպրոցական դասերս պատրաստելու գործում:

Տարվա վերջում էս երգչախմբի փորձերից շատերը բաց թողեցի, քանի որ հիվանդացել էի տրախոմայով: Այդ մասին իմանալով՝ ավագերեցն անձամբ եկավ մեր տուն՝ իր հետ բերելով երկու ակնաբույժ-բժիշկների: Զննությունից հետո բժիշկներն ինձ պնդեցին սուլֆատի փոշի ու հատուկ քսուք նշանակեցին ու հեռացան, իսկ իմ հայրը գրույցի բովեց ավագերեց Բորշի հետ: Այդ երկու մարդիկ, որոնք իրարից այդքան տարբեր կյանքեր էին ապրել, հարազատ հոգիներ էին:

Հենց առաջին հանդիպումից իրար նկատմամբ մեծ համակրանք տածելով՝ նրանք սկսեցին հաճախակի հանդիպել մեր արհեստանոցում և ժամերով գրուցել՝ ըմպելով հորս պատրաստած սուրճը: Մեկուսի անկյունում հարմար տեղավորվելով թեփի կույտի վրա՝ նրանք քնարկում էին կրոնական ու պատմական հարցեր: Հիշում եմ, որ ավագերեց Բորշը հատկապես աշխուժանում էր, երբ հայրս նրան պատմում էր Ասորեստանի մասին:

Հայր-ավագերեցն այն ժամանակ կլիներ մոտ յոթանասուն տարեկան: Ամուր առողջություն չունենալով՝ նա պահպանել էր հոգու եռանդը: Ազնիվ դիմագծերով այդ բարձրահասակ ու բարեկամ մարդն ուներ նաև խոր ու համապարփակ գիտելիքներ, ընդ որում նրա հայացքները տարբերվում էին իր շրջապատի մարդկանց հայացքներից:

Նրան համարում էին տարօրինակություններ ունեցող մարդ, և քաղքենիական տեսակետից նա բավարար հիմքեր տալիս էր նման վերաբերմունքի համար: Թեև բավականին հարուստ էր և լավ էր վաստակում, նա զբաղեցնում էր միայն մեկ սենյակ իր խոհանոցով, մինչդեռ նրա օգնականները, որոնք պակաս ապահովված էին, ապրում էին վեցից տասը սենյականոց հարմարավետ բնակարաններում:

Հայր Բորշը, համարյա ոչ ոքի հետ չշփվելով, մեկուսի կյանք էր վարում. չէր այցելում իր փոքրաթիվ ծանոթներին, իր սենյակը մտնել ոչ ոքի թույլ չէր տալիս՝ բացի ինձնից և սպասավորից, ընդ որում սպասավորը չէր կարող սենյակ մտնել նրա բացակայության ժամանակ:

Բարեխղճորեն կատարելով իր պարտականությունները՝ հայր-ավագերեցն իր ամբողջ ազատ ժամանակը տրամադրում էր գիտություններին, հատկապես քիմիային և աստղագիտությանը. երբեմն էլ հանգստի համար զբաղվում էր երաժշտությամբ՝ ջութակ նվագելով և հոգևոր երաժշտություն հորինելով: Նրա ստեղծագործություններից շատերը լայնորեն հայտնի դարձան Ռուսաստանում:

Նրա որոշ գործեր, որոնք հորինվել էին իմ ներկայությամբ, հետագայում ինձ վիճակվել է տեսնել ձայնարկիչի համար ձայնագրված վիճակում:

Ավագերեց Բորշը հորս տեսնելու համար սովորաբար մեզ այցելում էր երեկոյան ժամերին, երբ երկուսն էլ ազատ էին լինում իրենց պարտականություններից:

Որպեսզի ուրիշներին, այսպես ասած գայթակղության մեջ չզցցի, նա աշխատում էր մեզ այցելել հնարավորին չափ աննկատ, քանի որ նա քաղաքում հայտնի դիրք էր գրավում և բոլորը դեմքով ձանաչում էին, մինչդեռ իմ հայրը հասարակ հյուսն էր:

Հորս արհեստանոցում տեղի ունեցած այդպիսի հանդիպումներից մեկի ժամանակ ավագերեց Բորշը խոսք բացեց իմ հետագա կրթության մասին:

Նա ասաց, որ ինձ շատ ընդունակ երեխա է համարում և կարծում է, որ միանգամայն անիմաստ է այն դպրոցում մնալը, որտեղ դեռ ութ տարի պետք է կորցնեի, որպեսզի նախնական կրթությունս հաստատող վկայական ստանայի:

Եվ իսկապես, քաղաքային դպրոցն անհետք է ձուլվել, քանի որ ութ տարի սովորելուց հետո կրթության վկայական էր տրվում, որը համապատասխանում էր երրորդ դասարանի կրթությանը:

Ուստի ավագերեց Բորշը համոզիչ կերպով հորս խորհուրդ տվեց ինձ հանել դպրոցից և ուսուցումը շարունակել տանը՝ խոստանալով իր ծառայությունները և հանձն առնելով ինձ համար ուրիշ ուսուցիչներ գտնել: Նա ասաց, որ եթե հետագայում ինձ վկայական պետք գա, ես այն կկարողանամ ստանալ ցանկացած դպրոցից՝ հանձնելով համապատասխան դասարանի քննությունները:

Ընտանեկան խորհրդակցությունից հետո հայրս այդպես էլ վարվեց: Ես դպրոցը թողեցի, և այդ ժամանակից սկսած ավագերեց Բորշն ինքը զբաղվեց իմ կրթության գործով. որոշ առարկաներ անձամբ ինքն էր դասավանդում, որոշների համար էլ ուսուցիչներ գտավ: Նրանք աստվածաբանական դպրոցի շրջանավարտներ Պոնոմարենկոն և Կրեստովսկին էին, որոնք տաճարում ծառայում էին որպես սարկավագներ՝ պատրաստվելով դառնալ բանակային քահանաներ: Բացի նրանցից, ինձնով զբաղվեց նաև դոկտոր Սոկոլովը:

Պոնոմարենկոն ինձ աշխարհագրություն և պատմություն էր դասավանդում, Կրեստովսկին՝ Սուրբ Գիրքն ու ռուսաց լեզու, իսկ Սոկոլովը՝ մարդակազմություն և ֆիզիոլոգիա: Մաթեմատիկա և շատ ուրիշ առարկաներ ինձ ուսուցանում էր ինքը՝ ավագերեց Բորշը:

Իմ գործը հեշտ չէր: Թեև ընդունակ աշակերտ էի և լավ հիշողություն ունեի, բայց ժամանակս հազիվ էր հերիքում պարապմունքներին նախապատրաստվելու համար. տառացիորեն ոչ մի ազատ ընթացք չէր մնում:

Շատ ժամանակ էր կորչում ճանապարհի վրա, քանի որ ուսուցիչներս ապրում էին քաղաքի տարբեր շրջաններում, իսկ դոկտոր Սոկոլովը՝ Չակման կոչվող բերդում, քաղաքից մի քանի մղոն հեռավորության վրա:

Սկզբում հայրս ու մայրս ուզում էին, որ ես հոգևորական դառնամ, բայց ավագերեցն այդ հարցի վերաբերյալ այլ կարծիք ուներ: Նա կարծում էր, որ հոգևորականը պետք է հոգ տանի ոչ միայն իր հոտի հոգիների համար, այլ պարտավոր է ամեն ինչ իմանալ նաև մարմնական տկարությունների և դրանց բուժման մասին:

Նա համոզված էր, որ հոգևորականի ու բժշկի պարտականությունները պետք է համատեղվեն. չէ՞ որ միայն այն բժիշկը կարող է իրական օգնություն ցույց տալ իր հիվանդին, որը հասկանում է նաև նրա հոգին: Միննույն ժամանակ, միայն նա կարող է լավ հոգևորական լինել, ով բժշկական կրթություն ունի, քանի որ մարմինն ու հոգին փոխկապակցված են, և հնարավոր չէ բուժել դրանցից մեկը, եթե հիվանդության պատճառը մյուսի մեջ է թաքնված:

Հայր Բորշը կարծում էր, որ ես պետք է բժշկական կրթություն ստանամ, բայց ոչ նրա համար, որ հետագայում բժիշկ աշխատեմ:

Բայց ես ինձ համար այլ ճակատագիր էի ուզում: Մանուկ հասակից զանազան բաներ պատրաստելու հակում ունենալով՝ ես երագում էի տեխնիկական մասնագիտության մասին:

Եվ քանի որ դեռևս որոշված չէր, թե որն ընտրել, ես շարունակում էի նախապատրաստվել հոգևորական և բժիշկ դառնալու համար, մանավանդ որ շատ առարկաներ ինձ պետք կգային բոլոր դեպքերում:

Ամեն ինչ շարունակվում էր նախկինի պես, և ես լինելով ընդունակ աշակերտ, բոլոր ուղղություններով ամեն ինչ հասցնում էի և նույնիսկ ժամանակ էի գտնում գրքեր կարդալու համար, որոնց մի մասը հայր Բորշն էր ինձ տալիս, մի մասն էլ ես ինքս էի հայթայթում:

Հայր-ավագերեցն շատ մանրակրկիտ կերպով էր ինձ հետ պարապում իր ընտրած առարկաները. նաև հաճախ ինձ թույլ էր տալիս դասերից հետո մնալ, թեյ էր հյուրասիրում և լսում, թե ես ինչպես եմ կատարում իր հորինած հոգևոր երգերը:

Մեր հաճախակի ու երկարատև հանդիպումների ընթացքում նա ինձ հետ զրուցում էր տարբեր թեմաներով՝ և՛ նրանցով, որոնք առնչվում էին իր դասավանդած առարկաներին, և՛ նրանցով, որոնք

այդ առարկաների հետ կապ չունենին: Կամաց-կամաց մեր միջև այնպիսի վստահություն հաստատվեց, որ հայր Բորշն ինձ հետ սկսեց զրուցել ոչ թե որպես երեխայի, այլ իրեն հավասար հասուն մարդու հետ: Ես նրա հետ այնքան մտերմացա, որ իմ ամաչկոտությունը, որն սկզբնական շրջանում զգում էի, իսպառ չքացավ: Նրա նկատմամբ ամբողջ հարգանքս չկորցնելով հանդերձ՝ ես երբեմն այնքան էի ինքս ինձ կորցնում, որ հանդգնում էի վիճել նրա հետ, ինչից նա ոչ միայն բոլորովին չէր վիրավորվում, այլև, ինչպես հիմա է ինձ թվում, նույնիսկ ուրախանում էր:

Ինձ հետ ունեցած իր գրույցների ընթացքում հայր-ավագերեցն հաճախ անդրադառնում էր սեռական հարցերին: Սեռական ցանկության վերաբերյալ մի անգամ նա ասաց հետևյալը. «Եթե դեռևս չհասունացած պատանին իր կրթին բավարարություն տա, ապա նրա հետ տեղի կունենա այն, ինչ տեղի ունեցավ ոչ անհայտ Եսավի հետ, որը մի աման ոսպապուրի համար ծախեց առաջնեկության իր իրավունքը: Քանզի գեթ մի անգամ գայթակղությանը տրվելով՝ նա ինքն իրեն գրկեց հետագայում արժանավոր մարդ դառնալու հնարավորությունից:

Նախքան հասունանալը կրթին հագուրդ տալը նույն բանն է, ինչ մոլլավայան³ մաճառին սպիրտ խառնելը: Թեկուզ մի կաթիլ սպիրտ խառնելն այդ գինին վերածում է քացախի:

Հասունանալուց հետո կարելի է անել այն ամենը, ինչին ձգտում ես: Նույնը՝ գինու դեպքում. երբ խմորումն արդեն ավարտվել է, կարելի է դրան սպիրտ ավելացնել ըստ ցանկության՝ խմիչքին տալով անհրաժեշտ թնդությունը»:

Հայր Բորշը բավականին յուրահատուկ աշխարհայացք ուներ, որն սկզբունքորեն տարբերվում էր ինչպես նրա շրջապատի մարդկանց հայացքներից, այնպես էլ այն ամենից, ինչ ես հասցրել էի կլանել գրքերից:

Այստեղ ես կրեբեմ նրա գաղափարներից որոշները, որոնք թույլ կտան պատկերացում կազմել այդ անձնավորության մասին:

Նա ասում էր. «Դեռևս չհասունացած մարդը պատասխանատվություն չի կրում իր արարքների համար՝ լինեն դրանք լավ թե վատ, կամա թե ակամա: Դրանց համար պատասխանատու են նրա մերձավորները՝ այն մարդիկ, որոնք միտումնավոր կամ պատահականորեն պարտավորվում են նրան նախապատրաստել գիտակից կյանքին:

Անկախ այն բանից, թե մարդը կին է թե տղամարդ՝ մանկությունն ու պատանեկությունը նրան տրված է, որպեսզի նրա ներսում ձևավորվի գիտակից անձնավորություն: Հասունանալու ընթացքում մարդը կարծես շարունակում է մնալ «մայրական գրկում», և միայն այդտեղից դուրս գալուց հետո է, որ անձնական պատասխանատվություն է կրում իր արարքների համար:

Համաձայն բնության օրենքների, ինչպես պնդում են իմաստուն մարդիկ, տղամարդկանց հասունացումն ավարտվում է 20-23 տարեկանում, իսկ կանանցը՝ 15-19 տարեկանում՝ կախված այն վայրի կլիմայական պայմաններից, որտեղ նրանք մեծանում են:

Այդ ժամանակահատվածները պայմանավորված են բնության օրենքներով, բայց, ցավոք, դա դեռևս համընդհանուր ընդունված փաստ չի դարձել:

Իմ կարծիքով՝ ժամանակակից մանկավարժությունը ծայրաստիճան անփույթ է վերաբերվում սեռական հարցերին, որոնք կարևորագույն դեր են խաղում ցանկացած մարդու կյանքում:

Ինչ վերաբերում է սեփական արարքների համար պատասխանատվությանը, ապա հասուն տարիքին հասած կամ այդ շեմը նոր հատած ժամանակակից մարդկանց մեծ մասը, որքան էլ առաջին հայացքից տարօրինակ թվա, իմ կարծիքով մեղավոր չեն իրենց պախարակելի շատ արարքների համար, քանի որ դրանք բնության օրենքների խախտման արդյունք են:

Մարդկանց կատարած չպատճառաբանված հակասոցիալական գործողությունների գլխավոր պատճառներից մեկն այն է, որ այդ տարիքում մարդիկ հակառակ սեռի հետ շփման պակաս ունեն, ինչն անհրաժեշտ է անձի լիարժեք զարգացման ու ինքնակատարելագործման համար, ուստի և հայտնվում են ներքին անհարմարավետության վիճակում:

Ահա թե ինչու հասունության տարիքին հասնող մարդուն կատարելապես անհրաժեշտ է իր կողքին ունենալ հակառակ սեռի մեկին, որպեսզի ներդաշնակ ու լիարժեք կյանք վարի:

³ Մոլլավային շրջան է Կարսի գավառում

Մեր հեռավոր նախնիները դա շատ լավ էին հասկանում և հասարակության նորմալ զարգացման համար անհրաժեշտ էին համարում, որ ընտանեկան հարաբերություններում ներդաշնակություն հաստատվի:

Հինավուրց ժողովուրդները նույնիսկ իրենց փոքրահասակ երեխաներին նշանելու ավանդույթ ունեին. տղաներին՝ յոթ տարեկանից, իսկ աղջիկներին՝ մեկ տարեկանից: Նշանդրեքից հետո ապագա ամուսինների ծնողներն իրենց վրա պարտավորություն էին վերցնում ամեն կերպ նպաստելու երեխաների մոտ այնպիսի սովորությունների զարգացմանը, որոնք բարերար կազդեին նրանց համատեղ կյանքի վրա»:

Ես շատ լավ հիշում եմ նաև, որ հայրս ու Բորշը կրկնում էին՝ որպեսզի մարդը հասուն տարիքում հասարակությանն օգտակար լինի, այլ ոչ թե մակաբույծ, նրա դաստիարակությունը պետք է հենվի տասը հիմնական սկզբունքների վրա:

Վաղ հասակից երեխային պետք է աստիճանաբար ներշնչել հետևյալ բաները.

– հավատ՝ անհնազանդության դեպքում պատժի անխուսափելիության նկատմամբ.

– հավատ առ այն, որ պարզև տրվում է միայն արժանի վաստակի դեպքում.

– սեր՝ Տիրոջ նկատմամբ, բայց անտարբերություն՝ սրբերի նկատմամբ.

– կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի նկատմամբ անհանդուրժողականություն.

– երկյուղ՝ ծնողներին և ուսուցիչներին նեղացնելուց.

– վախի բացակայություն՝ սատանաներից, մկներից և օձերից.

– ունեցածով ուրախանալու կարողություն.

– շրջապատի մարդկանց հետ բարի հարաբերություններ պահպանելու ցանկություն.

– համբերատար վերաբերմունք ֆիզիկական տառապանքների նկատմամբ.

– «իր հացը» հնարավորինս շուտ վաստակելու ձգտում:

Խորապես ցավում եմ, որ ինձ չվիճակվեց ներկա լինել այդ արժանավոր մարդու կյանքի վերջին օրերին և երկրային կյանքում վերջին պարտքս հատուցել իմ անմոռանալի ուսուցչին՝ իմ երկրորդ հորը:

Մի կիրակի օր՝ նրա վախճանվելուց շատ տարիներ անց, Կարսի տաճարի սպասավորներին շատ զարմացրեց և խիստ հետաքրքրություն պատճառեց այն, որ ոմն օտարական ամբողջական հոգեհանգստի արարողություն պատվիրեց նրա համար, ով պառկած էր մեկուսի ու բուլոբից մոռացված գերեզմանում: Նրանք տարակուսած իրար երեսի նայեցին, երբ տեսան, որ այդ բուլոբին անձանոթ մարդը դժվարությամբ է զսպում աչքերից հոսող արցունքները:

Խաղաղություն և քեզ, սիրելի ուսուցիչ... Չգիտեմ՝ արդարացրի՞ արդյոք քո հույսերը, բայց իմ ամբողջ կյանքի ընթացքում միշտ առաջնորդվեցի քո պատվիրաններով:

ԳԼՈՒԽ Գ Բոգաչևսկի

Բոգաչևսկին, նույն ինքը՝ հայր Եվլիսիոսը, ներկայումս ողջ և առողջ է և պատիվ ունի որպես վանահոր օգնական ծառայել Եսսեական եղբայրության գլխավոր վանքում, որը գտնվում է Մեռյալ ծովի ափին: Ըստ ավանդության՝ այդ եղբայրությունը կազմավորվել է Քրիստոսի Ծննդից երկու հարյուր տարի առաջ, և պնդում են, որ հենց այդ եղբայրությունում է Հիսուս Քրիստոս ստացել իր առաջին հաղորդությունը:

Առաջին անգամ Բոգաչևսկու կամ հայր Եվլիսիոսի հետ ես հանդիպեցի, երբ նա դեռևս շատ երիտասարդ էր. նոր էր ավարտել ռուսական հոգևոր սեմինարիան և սպասում էր Կարսի տաճարում սարկավագի հոգևոր աստիճան ստանալուն:

Մեր քաղաք ժամանելուց հետո շատ շուտով հայր-ավագերեցի խնդրանքով նա համաձայնեց դառնալ իմ ուսուցիչը՝ փոխարինելով Կրեստովսկուն, որը դրանից ոչ շատ վաղ Լեհաստանում ինչ-որ տեղ կայանած գնդում քահանա էր նշանակվել: Բոգաչևսկուն կանչել էին Կարս, որպեսզի տաճարում փոխարինի Կրեստովսկուն:

Նա շատ մարդամոտ էր ու բարեհոգի և շուտով արժանացավ համընդհանուր սիրո ու վստահության: Նույնիսկ Պոնոմարենկոն, որին բոլորը ոչ առանց հիմքի բռի մարդ էին համարում, բավականին մտերմացավ Բոգաչևսկու հետ: Նրանք միասին սենյակ վարձեցին, որը գտնվում էր քաղաքային հասարակական այգու և հրշեջ կայանի հարևանությամբ:

Քանի որ Բոգաչևսկին դեռևս շատ ջահել էր, մեր միջև հաստատվեցին ընկերական, փոխադարձ վստահության հարաբերություններ, ուստի ես հաճախ նրան հյուր էի գնում կամ դասերից հետո մնում էի, որպեսզի լսեմ, թե նա ինչի մասին է գրուցում Պոնոմարենկոյի կամ ուրիշ ծանոթների հետ, որոնք հավաքվում էին նրա սենյակում: Երբեմն նրան օգնում էի տան գործերում:

Բոգաչևսկուն հաճախ այցելողներից իմ հիշողության մեջ տպավորվել են ռազմական ճարտարագետ Վսեսլավսկին՝ նրա մոտ ընկերն ու հայրենակիցը, և հրաձգային զորքերի սպա Կուզմինը, որը պայթուցիկ նյութերի մասնագետ էր:

Ինքնատեղի շուրջ նստած՝ նրանք գրուցում էին աշխարհիս երեսին եղած ամեն ինչի մասին, և ես ուշադրությամբ ունկնդրում էի նրանց գրույցները: Լինելով ընթերցանության մեծ սիրահար՝ ես մեծ քանակությամբ գանազան հարցերի նվիրված գրքեր էի կլանել և սպունգի պես ներծծել էի այն ամենը, ինչ իմացել էի դրանցից: Տարիքներիս տարբերության պատճառով ես երբեք չէի միջամտում նրանց գրույցներին և ակնածանք էի գգում նրանց ընդարձակ ու խոր գիտելիքներից:

Մեր գավառական քաղաքում կյանքը ձանձրալի էր, և այդ ձանձրությամբ ցրելու համար այդ մարդիկ բավական հաճախ էին իրար գլխի հավաքվում: Նրանց քննարկումները, որոնց մշտական վկան էի դառնում, իմ ներսում հետաքրքրություն գրգռեցին վերացական հարցերի նկատմամբ, որը չի մարել առ այսօր:

Նման «բարձր նյութերով» հրապուրվելը վճռորոշ դեր խաղաց իմ ամբողջ հետագա կյանքի համար, այդ պատճառով իմ կյանքի այդ շրջանին ես կանդորադառնամ բավական մանրամասնորեն: Մի անգամ՝ հերթական քննարկման ժամանակ, տաք վիճաբանություն ծագեց հոգեկանչության թեմայով՝ ներառյալ սեղանապտույտի, որն այն ժամանակ համընդհանուր հետաքրքրության առարկա էր:

Ռազմական ճարտարագետը պնդում էր, թե այդ երևույթը տեղի է ունենում հոգիների մասնակցությամբ, իսկ մյուս ներկաները դա վերագրում էին բնության այլ ուժերին, ինչպիսիք են մագնիսականությունը, ձգողականության օրենքը, ինքնաներշնչանքը և այլն, բայց ոչ ոք չէր ժխտում բուն այդ երևույթի գոյությունը:

Ես, ինչպես միշտ, ուշադրությամբ լսում էի. այդ թեման ինձ շատ էր հետաքրքրել: Թեև շատ բաներ էի կարդացել, բայց իմ ձեռքը դեռ հոգեկանչության վերաբերյալ գիրք չէր ընկել: Իմ այդ հետաքրքրվածությունը բազմակիորեն ուժեղացավ իմ կյանքում պատահած մի դեպքի ազդեցության տակ: Ես դեռևս սգում էի իմ նոր մահացած կրտսեր քույրիկի համար, և մահվան ու հետմահու գոյության հարցերը, որոնք քննարկում էին իմ ծանոթները, չափազանց հուզում էին ինձ:

Քննարկումն ավարտվեց, և հավաքվածները որոշեցին մի փորձ անել, որի համար եռոտանի սեղան էր պետք: Սենյակում այդպիսի սեղան կար, բայց այդ հարցի մեծ մասնագետ հրաձիգ սպան դրանից հրաժարվեց, քանի որ մեխերով էր պատրաստված: Նա բացատրեց, որ մետաղ չպարունակող սեղան է պետք փորձի համար, ուստի ինձ ուղարկեցին հարևանից ուզելու: Շուտով ես բերեցի այն, ինչ անհրաժեշտ էր:

Երբ երեկոյան մութն ընկավ, մենք նստոտեցինք այդ սեղանի շուրջ և մեր ձեռքերը որոշակի ձևով դրեցինք դրա վրա, ինչպես ցույց տվեց Կուզմինը:

Քսան բոպե հետո սեղանը սկսեց շարժվել: Ճարտարագետը հարցրեց ներկա եղած մարդկանց տարիքները, և սեղանի ոտքն ամեն անգամ տկտկացրեց համապատասխան թվերը:

Դժվար է նկարագրել, թե ինձ վրա ինչպիսի ուժեղ տպավորություն թողեց այդ դեպքը: Իմ առջև բացվեց անիմանալի, անըմբռնելի մի ամբողջ աշխարհ:

Իմ տեսածն ու լսածն ինձ այնպես ապշահար արեցին, որ ես տուն վերադառնալու ամբողջ ճանապարհին մտածեցի այդ մասին, ամբողջ գիշեր չքնեցի՝ խորհելով պատահածի մասին:

Ի վերջո ես որոշեցի ամբողջ իմ տեսածի մասին հարցնել հայր Բորշին: Իմ մանրամասն պատմությունը լսելուց հետո հայր-ավագերեցն ասաց. «Այդ ամենը դատարկ բան է: Գլուխդ մի լցրու նման հիմարություններով: Ինքդ մտածիր, եթե հոգիներն իսկապես հնարավորություն ունենային տկտկացնելու սեղանի ոտքով, կնշանակեր, որ նրանք օժտված են ֆիզիկական ուժով: Իսկ եթե դա

այդպես է, հապա ինչու՞ են նրանք այդպիսի ապուշ եղանակով հայտնում իրենց ներկայության մասին»:

Թեև ես շատ էի հարգում իմ ուսուցչին, բայց չկարողացա անվերապահ ընդունել նրա պատասխանը: Ես մտածեցի, որ իմ երիտասարդ կրկնուսույցն ու նրա ընկերները, որոնք բարձրագույն ուսումնական հաստատություններ են ավարտել, անհամեմատ ավելի կրթված են, քան իմ ծեր ուսուցիչը, որն այնպիսի ժամանակներում է սովորել, երբ գիտությունն այնքան զարգացած չէր, ինչքան հիմա: Ես եզրակացրի, որ իմ երիտասարդ ընկերներն ամենայն հավանականությամբ որոշ բաների մասին անհամեմատ ավելի գիտեն, քան նա:

Որպեսզի ավելի շատ խորանամ ինձ հետաքրքրած հարցում, ես դիմեցի այն գրքերի օգնությանը, որոնք ինձ տվեցին Բոգաչևսկին և նրա ընկերները:

Սակայն իմ ուսման լարվածության պատճառով ես դրա համար շատ քիչ ազատ ժամանակ ունեի, և ի վերջո այդ ամենի մասին մոռացա:

Ժամանակն անցնում էր: Ես շատ ջանադիր պարապում էի իմ ուսուցիչների հետ, իսկ կարճատև արձակուրդների ժամանակ այցելում էի Ալեքսանդրապոլում գտնվող քեռուս, և այնտեղ շատ ընկերներ ձեռք բերեցի: Իմ այցելության նպատակը վաստակելու ցանկությունն էր, քանի որ մշտապես փողի կարիք էի ունենում: Ես պետք է գնեի ուտելիք, հագուստ, գրքեր և այլն, ինչպես նաև նյութապես օգնեի մեր ընտանիքի որոշ անդամներին:

Ալեքսանդրապոլում ես բազմահմուտ վարպետի համարում ունեի, և ինձ հաճախ խնդրում էին վերանորոգել այս կամ այն բանը: Մեկը կողպեք էր տալիս վերանորոգման, մյուսը՝ հին ժամացույց, երրորդն էլ խնդրում էր տեղական քարից հատուկ կառուցվածքի վառարան պատրաստել: Մեկը հարուստ ասեղնագործված բարձեր էր ուզում իր աղջկա օժիտի համար, մյուսը խնդրում էր մանր իրերով զարդարել իր հյուրասենյակը: Կարճ ասած՝ ես պատվիրատուների լայն շրջանակ ունեի, և իմ աշխատանքը ճոխ վարձատրության էր արժանանում:

Կարսում ես շրջում էի մտավորական մարդկանց միջավայրում և իմ նախապաշարմունքների պատճառով չէի ուզում, որ նրանք իմանային, որ ես հասարակ արհեստավոր եմ, և գլխի ընկնեին, թե որքան աղքատ է իմ ընտանիքը: Ինձ համար տհաճ կլինեի, եթե նրանք տեսնեին, թե ինչպես եմ վաստակում իմ հացը: Իմ ինքնասիրությունը դրանից խիստ կխոցվեր:

Եվ ահա, Ջատիկին սովորականի պես ես մեկնեցի Ալեքսանդրապոլ, որը գտնվում է Կարսից մոտավորապես 60 մղոն հեռավորության վրա. մտադիր էի մնալ քեռուս տանը, որը միշտ շատ սիրալիր էր վերաբերվում ինձ:

Հաջորդ օրը՝ ճաշի ժամանակ, քեռակինս հանկարծ ինձ ասաց. «Լսի՛ր, զգույշ եղիր, որ քեզ հետ ոչ մի բան չպատահի»:

Ես զարմացա. «Իսկ ի՞նչ կարող է ինձ հետ պատահել...»:

«Ճիշտն ասած, ես էլ կարգին չգիտեմ,- շփոթվեց նա,- բայց գուշակության մի մասն արդեն կատարվեց, և ես վախենում եմ, որ մնացած մասն էլ կկատարվի...»:

Ապա նա պատմեց հետևյալը:

Չմեռնամուտին կիսախելառ Եղունգ Աշող Մարտիրոսը⁴ եկել էր Ալեքսանդրապոլ, և քեռակնոջս խելքին փչել էր նրան հարցնել, թե ինձ ինչ է սպասվում ապագայում: Նա գնացել և նրանից գուշակություն էր լսել իմ բախտի մասին, ընդ որում՝ նկարագրված դեպքերից որոշներն իսկապես արդեն տեղի էին ունեցել:

«Բայց, փառք աստծո, - ավելացրեց քեռակինս, - որոշ բաներ տեղի չեն ունեցել. նախ՝ քո աջ կողքում ցավեր պետք է ունենայիր, և երկրորդ՝ որսի ժամանակ դժբախտ դեպք պետք է պատահեր: Խնդրում եմ՝ զգույշ լինես հրազենի հետ և որսի չգնաս, - պատվիրեց այդ բարի կինը: - Թեև ասում են՝ խելապակաս է, բայց ավելի լավ է ռիսկի չդիմել»:

Ինձ շատ զարմացրեց ամբողջ լսածս, քանի որ դրանից երկու ամիս առաջ ես իսկապես աջ կողքիս չիբան էի ունեցել, որից ազատվեցի միայն մի քանի շաբաթ անց՝ վիրակապս փոխելու համար ամեն օր այցելելով զինվորական հոսպիտալ: Բայց ես այդ մասին ոչ ոքի չէի պատմել, և նույնիսկ մեր տանն այդ մասին ոչ մեկը չգիտեր: Ինչպե՞ս այդ մասին կարող էր իմանալ քեռակինս, որն այնքան հեռու էր գտնվում, որ չէր կարող դրա մասին լուր առնել:

⁴ ռուս. տարբերակում՝ Иунг Ашох Мадиросс, անգլ. տարբերակում՝ Eoung-Ashokh Mardiros

Սակայն ես այդ պատմությանն առանձնապես նշանակություն չտվեցի, քանի որ գուշակություններին չէի հավատում, և շուտով ընդհանրապես մոռացա այդ մասին:

Ալեքսանդրապոլում Ֆատինով ազգանունով մի ընկեր ունեի, որն էլ իր հերթին Գորբակյան անունով մի բարեկամ ուներ, որը հունական թաղամասից ոչ հեռու գտնվող Բաքվի թաղամասի մի ընկերության կառավարչի որդին էր:

Քեռակնոջս՝ իմ զարմանքը հարուցած պատմությունից մոտավորապես մի շաբաթ անց Ֆատինովը եկավ ինձ մոտ և առաջարկեց իր այդ բարեկամի հետ միասին գնալ լիճ՝ բաղ որսալու: Այդ լիճը բարձր սարի ստորոտում էր գտնվում: Առանց տատանվելու ես համաձայնեցի նրանց ընկերակցել, քանի որ հանգստանալու կարիք էի զգում. դրանից առաջ եռանդագին կերպով քրքրել էի նյարդաբանությանը վերաբերող աշխատություններ և շատ հոգնած էի: Բացի այդ՝ մանկությունից ի վեր կրակել սիրել եմ: Երբ դեռ նոր էր բոլորել իմ վեց տարին, մի անգամ առանց թույլտվության վերցրեցի հորս հրացանը և գնացի ծիտ որսալու: Թեև առաջին իսկ կրակոցից հետո հետհարվածն ինձ գետին գլորեց, բայց դա իմ եռանդը չնվազեցրեց, այլ նույնիսկ ուժեղացրեց հրազենի նկատմամբ ունեցած կիրքս: Իհարկե, հրացանը ձեռքիցս առան ու կախեցին այնքան բարձր, որ էլ ձեռքս չհասնի, բայց ես ինձ համար մի ուրիշը պատրաստեցի՝ օգտագործելով հին պարկուճներ: Այդ հրացանը կրակում էր իմ խաղալիք հրացանի սովորաթող զնդիկներով: Նույն հրացանը, երբ ես այն լիցքավորեցի կապարե զնդիկներով, այնքան դիպուկ էր խփում նշանակետին, որ գրավեց ինձ հետ խաղացող ընկերներին ուշադրությունը: Նրանք ինձ խնդրեցին իրենց համար էլ պատրաստել նույնպիսի հրացաններ, որից հետո, ձեռք բերելով «զինագործ վարպետի» համբավ, ես սկսեցի շատ լավ վաստակել:

Եվ ահա, երկու օր հետո Ֆատինովն իր ընկերների հետ եկավ ինձ մոտ, և մենք միասին գնացինք որսի: Քանի որ լիճը հեռու էր տասնհինգ մղոն, պետք է դուրս գայինք վաղ լուսաբացին, որպեսզի առանց շտապելու երեկոյան կողմ հասնեինք այնտեղ:

Մենք չորս հոգի էինք, քանի որ մեզ միացել էր նաև մի զինվոր՝ Գորբակյանի սպայակը: Բոլորս հրացան էինք վերցրել, իսկ Գորբակյանը՝ անգամ մարտական հրացան: Ժամանակին հասնելով լճին՝ մենք խարույկ վառեցինք, ընթրեցինք և պառկեցինք քնելու:

Առավոտ կանուխ արթնանալով, մենք ցրվեցինք՝ ամեն մեկս իր տեղը գրավելով ափի երկայնքով, և սկսեցինք սպասել բաղերի թռիչքին: Ինձնից ձախ Գորբակյանն էր տեղավորվել: Առաջին բաղի վրա կրակելիս նա հրացանի փողը շատ ցածր պահեց, և գնդակը կպավ ուղիղ իմ ոտքին: Բարեբախտաբար, ոտքիս միջով անցնելով, գնդակը ոսկորը չէր վնասել:

Իհարկե, որսը ստիպված եղանք ընդհատել: Ոտքիցս ուժեղ արյուն էր հոսում և սկսեց ցավել. քանի որ քայլել չէի կարող, ընկերներս հետդարձի ամբողջ ճանապարհին ինձ տարան հանպատրաստից շինված պատգարակով:

Որոշ ժամանակ ես տանը պառկած մնացի, իսկ վերքը լավանալուց հետո դեռ երկար ժամանակ կադին էի տալիս:

Տեղացի «գուշակի» կանխատեսումների հետ այդ դեպքի համընկնելն ինձ լուրջ մտորումների մեջ զցեց: Երբ հերթական անգամ այցելեցի քեռուս, իմացա, որ Եղունգ Աշող Մարտիրոսն Ալեքսանդրապոլում է, և քեռակնոջս խնդրեցի նրան տուն հրավիրել: Նա ինձ վրա թողեց ոչ այնքան նորմալ մարդու տպավորություն. ժամանակ առ ժամանակ ցնցվում էր և անընդհատ ծիում: Անկասկած, նա շատ հիվանդ էր:

«Գուշակության» ամբողջ գործընթացն այսպիսին էր. նստելով երկու վառվող մոմերի միջև՝ նա իր ձեռքի բուխ մատը ցցում էր իր հայացքի դեմ և ակնդետ նայում եղունգին այնքան ժամանակ, մինչև հայտնվում էր քնի նմանվող վիճակի մեջ: Այնուհետև նա սկսում էր պատմել, թե ինչ է տեսնում եղունգի վրա. նախ նկարագրում էր, թե մարդն ինչ շորեր է հագել, հետո դիմագծերն էր նկարագրում և վերջում գուշակում էր, թե այդ մարդուն ինչ է սպասվում ապագայում:

Եթե պահանջվում էր գուշակել բացակա մարդու ճակատագիրը, գուշակը խնդրում էր նկարագրել նրա արտաքինը, տարիքն էր հարցնում և այն ուղղությունը, որտեղ նա այդ պահին գտնվում է:

Ես խնդրեցի, որ գուշակը իմ ապագան էլ նկարագրի. Երբևէ կասեմ ձեզ, թե իրականացե՞լ է արդյոք նրա գուշակությունը:

Այդ նույն տարվա ամռանը, կրկին Ալեքսանդրապոլում, ես ականատես եղա մի ուրիշ երևույթի, որի համար չեմ կարողանում բացատրություն գտնել: Քեռուս տան դիմաց բարդիներ էին աճել. դա շատ գեղեցիկ մի վայր էր, որտեղ գնում և նստում էի՝ հետս վերցնելով որևէ գիրք կամ ձեռքի գործ:

Այդտեղ միշտ լինում էին խաղացող երեխաներ, որոնք հավաքվում էին քաղաքի տարբեր շրջաններից: Կարելի էր տեսնել ամեն գույնի մաշկ ունեցող երեխաների՝ հույն, քուրդ, թաթար: Նրանց խաղերն անասելի աղմկոտ ու խառնիխուռն էին, բայց դրանք ինձ բոլորովին չէին խանգարում: Մի անգամ բարդու շվաքում ես կլանված էի մի գործով, որը հարևանս էր պատվիրել՝ իր ազգականուհուն հարսանեկան նվեր մատուցելու համար: Տախտակի վրա ես պետք է քանդակեի այդ ազգականուհու և նրա ապագա ամուսնու անունների սկզբնատառերը, ինչպես նաև այդ հիշարժան հանդիսության օրը, ամիսն ու տարին: Այն պահին երբ ջանադիր կերպով աշխատում էի այդ պատվերի վրա, հանկարծ լսվեց մի աղեկտուր ճիչ: Ես տեղիցս վեր թռա՝ համոզված լինելով, որ խաղացող երեխաներից մեկի հետ դժբախտ պատահար է տեղի ունեցել: Բայց տեսա, որ երեխաները շրջապատել են մի տղայի, որը բարձրաձայն լալիս էր և տարօրինակ շարժումներ անում: Մյուս մանչուկները ծիծաղում էին նրա վրա: Ավելի մոտենալով՝ ես հարցրի նրանց, թե ինչ է պատահել և իմացա, որ լացող երեխան եզդի է. նրա շուրջը շրջան էին գծել, որի ներսից նա չէր կարող դուրս գալ, մինչև չջնջեին: Երեխան ամբողջ ուժով փորձում էր դուրս գալ այդտեղից, բայց չէր կարողանում: Ես մոտեցա և շրջանի մի մասը ջնջեցի, որից հետո երեխան կարողացավ դուրս պրծնել դրանից:

Ես այնպես էի ապշահար եղել այդ երևույթից, որ պարզապես մեխվել էի տեղում, և այնքան էլ շուտ չվերականգնվեց իմ շարժվելու կարողությունը: Թեև շատ էի նման բաներ լսել եզդիների մասին, բայց երբեք չէի հավատացել: Եվ միայն սեփական աչքերով տեսածս ստիպեց, որ փոխեմ իմ տեսակետը:

Տեսնելով, որ երեխաները վերսկսել են իրենց սովորական խաղերը, ես խոր շփոթմունքի մեջ շարունակեցի իմ ընդհատված աշխատանքը, որն անհրաժեշտ էր հենց այդ նույն օրն ավարտել, քանի որ հարսանիքը նշանակված էր դրա հաջորդ օրը:

Եզդիները աղանդ են, որի անդամներն ապրում են Անդրկովկասում՝ գլխավորապես Արարատ լեռան շրջակայքում: Նրանց երբեմն սատանայապաշտներ են անվանում:

Նկարագրված դեպքից շատ տարիներ անց ես հատուկ փորձ կատարեցի այդ երևույթն ուսումնասիրելու նպատակով և համոզվեցի, որ եթե եզդու շուրջը շրջանագիծ գծվի, ապա նա, որքան էլ ջանա, իսկապես չի կարողանա դրա ներսից դուրս գալ: Շրջանի ներսում մարդու շարժումները չեն սահմանափակվում, և որքան շրջանը մեծ լինի, այնքան ավելի շատ տարածություն կունենա տեղաշարժվելու համար, բայց այդ մոգական գիծը հատել նա ի վիճակի չէ: Ինչ-որ գերբնական ուժը, որը նշանակալիորեն գերազանցում է մարդու ֆիզիկական ուժը, նրան պահում է շրջանի ներսում:

Դժվար է ինձ թույլակազմ մարդ համարելը, բայց ինձ չհաջողվեց այդպիսի շրջանի միջից դուրս քաշել նրբակազմ մի կնոջ:

Երբ եզդուն ուժով են փորձում դուրս քաշել շրջանի միջից, նա անմիջապես ընկնում է փայտացմանը նմանվող վիճակի մեջ, որից դուրս է գալիս միայն այն բանից հետո, երբ նրան վերադարձնում են շրջանի ներսը: Բայց եթե նրան անմիջապես շրջանի ներսը չտանեն, ապա նա ուշքի է գալիս միայն տասներեք կամ քսանմեկ ժամ հետո:

Այդ ժամկետներից շուտ նրան ուշքի բերել հնարավոր չէ. ամեն դեպքում, ես դա չկարողացա անել, չնայած այն բանին, որ բավական խոր գիտելիքների եմ տիրապետում հիպնոսի բնագավառից, և մի անգամ չէ, որ ինձ վիճակվել է մարդկանց դուրս բերել սովորական փայտացման վիճակից: Միայն հատուկ ձեռնադրյալ աղանդավորները կարող են դա անել՝ արտաբերելով գաղտնախորհուրդ հմայական խոսքեր:

Եվ այսպես, մի փոքր ուշքի գալուց հետո ես գնացի Ալեքսանդրապոլի ռուսական թաղամասը, որտեղ ապրում էին իմ ծանոթների և ընկերների մեծ մասը. հույս ունեի, որ նրանք ինձ կօգնեն տեսածս հասկանալու գործում: Քաղաքի ռուսական թաղամասում էր կենտրոնացված տեղական մտավորականությունը:

Պետք է նշեմ, որ ութ տարեկանից սկսած, շնորհիվ հանգամանքների երջանիկ դասավորության, ինչպես Ալեքսանդրապոլում, այնպես էլ Կարսում իմ ընկերները ոչ միայն տարիքով մեծ էին ինձնից, այլև բարձր սոցիալական դիրք ունեցող ընտանիքներից էին: Հունական թաղամասում, որտեղ ապրում էին իմ ազգականները, ես ընկերներ չունեի: Բոլոր նրանք ապրում էին քաղաքի մի այլ մասում և սպաների, պաշտոնյաների և հոգևորականների զավակներ էին: Ես նրանց հաճախ էի հյուր գնում և այդպիսով շատ շուտով յուրային դարձա այդ թաղամասի համարյա բոլոր տներում:

Հիշում եմ, որ առաջին մարդը, որի հետ քննարկեցի իմ զարմանքը հարուցած երևույթը, իմ մտերիմ ընկեր Անանն էր: Նա նույնիսկ ինձ չլսեց մինչև վերջ՝ համարելով, որ երեխաները պարզապես խաղ են խաղացել իմ գլխին:

«Դուք շատ միամիտ ու դյուրահավատ եք, ահա և ձեռք են առել ձեզ: Ա՛յ թե ճարպիկ են այդ անիծյալները», - ասաց նա և անցավ հարևան սենյակ, որպեսզի ծառայության գնալուց առաջ փոխի հագուստը (Այդ օրերին Անաննը փոստում էր աշխատում): Հետո նա ինձ առաջարկեց, որ իրեն ուղեկցեմ, բայց ես հրաժարվեցի՝ ժամանակի սղությունը պատճառ բռնելով, և քայլերս ուղղեցի մի ուրիշ ընկերոջ մոտ, որը նույն փողոցում էր ապրում: Նրա ազգանունը Պավլով էր, հաշվապահ էր աշխատում և հրաշալի տղա էր, թեև թունդ խմիչքների սիրահար էր: Նրա մոտ ես հավաքված տեսա նաև սարկավազ հայր Մաքսիմին, հրետանու սպա Արտյոմինին, կապիտան Տերենտին, ուսուցիչ Ստոլմախին և էլի երկուսին, որոնց հետ դեռ ծանոթ չէի: Երբ ես ներս մտա, նրանք օղի էին խմում և ինձ առաջարկեցին միանալ իրենց:

Պետք է ասեմ, որ ես առաջ էլ էի քիչումիչ խմում, և երբ առաջարկում էին, ես սովորաբար չէի հրաժարվում: Ոչ մեծ չափաբաժիններով օղի խմելն ինձ համար սովորություն դարձավ Կարսում պատահած մի դեպքից հետո: Ամբողջ գիշեր մի հետաքրքրաշարժ գիրք կարդալուց հետո առավոտյան կողմ պատրաստվում էի քնելու, բայց անսպասելիորեն ինձ մոտ մտավ մի զինվոր և ինձ առաջարկեց գնալ տաճար: Այդ օրը ժամերգություն պետք է լիներ (արդեն չեմ հիշում, թե ինչի պատվին), և վերջին պահին որոշվել էր, որ երգչախումբն էլ պետք է դրան մասնակցի: Ուստի քաղաքի բոլոր կողմերն էին ուղարկել սպասյակների և զինվորների:

Ամբողջ գիշեր աչք չկապնելուց հետո ես այնպես հոգնեցի թեք սարալանջով զորամաս բարձրանալով, որ ոտքերս հազիվ էի քարշ տալիս: Ժամերգությունից հետո սեղան գցվեց, և երգչախմբի ղեկավարը, խմիչքի մեծ սիրահար լինելով և իմ վիճակը տեսնելով, ինձ մի բաժակ օղի առաջարկեց:

Խմելուց հետո ես ինձ անհամեմատ լավ զգացի, իսկ երկրորդ բաժակից հետո իմ հոգնածության հետքն անգամ չմնաց: Այդ ժամանակից սկսած, երբ ֆիզիկապես հոգնած էի լինում կամ նյարդայնանում էի, մեկ-երկու բաժակ օղի էի խմում:

Այդ երեկոյան ես ընդամենը մի բաժակ խմեցի հավաքվածներից չառանձնանալու համար և այլևս օդուն ձեռք չմեկնեցի: Հավաքվածները դեռ նոր էին սկսել կոնծել, բայց ես արդեն գիտեի, թե դա ինչով կվերջանա: Հայր-սարկավազն, օրինակ, չգիտես ինչու սկսեց Ալեքսանդր Ա-ի հոգու հանգստության երգը երգել, իսկ մյուսներն էլ ավելի լավ վիճակում չէին: Իրավիճակից ելնելով՝ ես իմ հարցը տվեցի կատակի տոնով:

Իմ պատմությունը լսեցին մեծ հետաքրքրությամբ և իրար հերթ չտալով՝ սկսեցին իրենց կարծիքն ասել: Առաջինը կապիտանը խոսեց՝ ասելով, որ ինքն անձամբ վկա է եղել ինչ-որ նման բանի: Մի քանի զինվորներ գետնի վրա շրջան են գծել մի քրդի շուրջ, վերջինս էլ արցունքն աչքերին աղաչել է նրանց, որ ջնջեն այդ գիծը: Մինչև կապիտանն իր զինվորներին չի հրամայել դա անել, քուրդը չի կարողացել դուրս գալ շրջանի միջից:

«Ես կարծում եմ, - ավելացրեց կապիտանը, - որ նրանք երդվել են երբեք փակ շրջանից դուրս չգալ: Նրանք այդտեղից դուրս չեն գալիս ոչ թե այն պատճառով, որ ֆիզիկապես ի վիճակի չեն, այլ որովհետև չեն ուզում դրժել իրենց երդումը»:

Իսկ հայր-սարկավազն ասաց հետևյալը. «Այդ սատանայապաշտները հրաշալի գիտեն, որ իրենց տերն իր հոտին վնաս չի տա, բայց նրանք իբր արտաքին պատշաճություն են պահպանում՝ ցույց տալով, թե նա ինչ իշխանություն ունի իրենց վրա: Դեն իր հոտի հետ վարվում է ճիշտ այնպես, ինչպես Ֆիլինը՝ ինձ հետ»:

Ֆիլինը այն ժանդարմն էր, որը հերթապահում էր հենց այդ փողոցի անկյունում և երբեմն ոչ մեծ վարձատրության դիմաց գնում և ամբողջ այդ խմբի համար ծխախոտ էր բերում, երբ դրա կարիքը զգացվում էր:

«Ասենք թե, - շարունակեց հայր-սարկավազը, - ես թունդ խմած վիճակում հայտնվել եմ փողոցում: Ֆիլինը, որպես իշխանության ներկայացուցիչ, պետք է անմիջապես ինձ ձերբակալի և տանի ոստիկանական տեղամաս: Որպեսզի անցորդներն իրեն չհանդիմանեն, նա ձևի համար այդպես էլ կվարվի, բայց հենց որ փողոցի անկյունից թեքվենք, նա ինձ լրիվ ազատ կարձակի՝ չմոռանալով թեյավճարի մասին»:

Հրետանու սպան հայտնեց, որ երբեք չի լսել նման երևույթի մասին, և որ իր կարծիքով դա ուղղակի դատարկաբանություն է: Նա զարմանք հայտնեց, որ մտավորական մարդիկ կարող են դրան հավատալ և գլուխ կոտրել նման հանելուկի բացատրությունը գտնելու համար:

Ուսուցիչ Ստուրբախը դրան հակաճառեց, որ ինքը համոզված է այնպիսի գերբնական երևույթների գոյության մեջ, որոնց բացատրությունը ժամանակակից գիտությունը չի կարող տալ, բայց, հետագայում զարգանալով, այն անպայման կապացուցի մետաֆիզիկական ուժերի գոյությունը. «Ինչ վերաբերում է ձեր պատմածին, ապա ես կարծում եմ, որ դա այն մագնիսական երևույթներից մեկն է, որոնք ժամանակակից գիտնականները դեռ չեն ուսումնասիրել»: Նա ուզում էր էլի ինչ-որ բան ավելացնել, բայց Պավլովն ընդհատեց նրան.

«Գրո՛ղը տանի այդ սատանայապաշտների: Եթե նրանց բոլորին մի-մի շիշ օղի տաս, ապա ոչ մի դև նրանց չի կարողանա հետ քաշել շրջանի ներսը: Եկեք խմենք Իսակովի առողջության կենացը» (Իսակովը տեղի օղու գործարանի տերն էր):

Այս քննարկումը դուրս-ինչ անգամ չօգնեց ինձ՝ հասկանալու սեփական աչքերով տեսածս: Ընդհակառակը, այդ պահից սկսած՝ ես սկսեցի կասկածել, որ իմ ընկերները խոր գիտելիքներ ունեն:

Հաջորդ առավոտյան ես պատահաբար հանդիպեցի 39-րդ դիվիզիոնի հոսպիտալի գլխավոր բժիշկ Իվանովին: Նրան կանչել էին մի հիվանդ հայի մոտ, և նա ինձ առաջարկեց ուղեկցել իրեն՝ որպես թարգմանիչ: Դոկտոր Իվանովը մեր քաղաքում մեծ հարգանք էր վայելում և մեծ փորձ ուներ: Ես նրան լավ էի ճանաչում, քանի որ հաճախ էի հանդիպել քեռուս մոտ: Հիվանդին ացելելուց հետո ես նրան ասացի. «Ձե՛րդ բարեճություն (նա գեներալի կոչում ուներ), խնդրում եմ, ինձ բացատրեք, թե եզրիներն ինչու չեն կարողանում դուրս գալ շրջանից»: «Ա՛, դուք այդ սատանայապաշտների՞ն նկատի ունեք: Դա ընդամենը հիստերիայի դրսևորում է»: «Հիստերիայի՞», - վերահարցրի ես: «Այո, դա տիպիկ հիստերիկական հոգեվիճակ է»: Եվ նա ինձ համար մի ոչ մեծ դասախոսություն կարդաց հիստերիայի մասին: Ես այդ դասախոսությունից ընդամենը իմացա, թե ինչ բան է հիստերիան: Բայց ես դրա մասին առանց այդ էլ գիտեի, քանի որ մինչ այդ նյարդաբանության ու հոգեբանության վերաբերյալ մի աշխարհ գիրք էի կլանել, որոնք վերցրել էի գրադարանից: Բայց ո՛չ այդ գրքերը, ո՛չ էլ դոկտոր Իվանովի ճառն իմ կասկածները չփարատեցին և չտվեցին այդ երևույթի բացատրությունը:

Որքան շատ բացատրություններ էի ես լսում, այնքան ավելի դժվար էր դառնում հասկանալ, թե որն է ճշմարտությունը և ինչին հավատալ՝ գրքերում գրվածների՞ն, թե՛ իմ սեփական աչքերով տեսածին:

Շուտով տեղի ունեցավ մի ուրիշ իրադարձություն, որից իմ տարակուսանքներն ավելի ուժեղացան: Ես գնացի աղբյուրի մոտ՝ լվացվելու (առավոտներն աղբյուրի սառնորակ ջրով լվացվելու սովորություն ունեի) և այնտեղ խմբված կանանց տեսա, որոնք աշխուժորեն ինչ-որ հարց էին քննարկում: Մոտենալով նրանց՝ ես իմացա, որ իրենց թաղամասում չար ոզի է հայտնվել, ինչպես անվանում էին ոչ վաղ անցյալում մեռած մարկանց կերպարանքն առած ուրվականին, որը զանազան չարագործություններ էր կատարում՝ տհաճություն պատճառելով հատկապես այդ մեռածի թշնամիներին:

Եվ ահա այդպիսի մի չար ոզի այն թաթարի կերպարանքն էր առել, որը նոր էր մահացել և թաղվել ընդամենը մի օր առաջ:

Ես գիտեի, որ այդ մարդը մեռել է: Նրա տունը գտնվում էր այն տան հարևանությամբ, որտեղ նախկինում իմ ծնողներն էին ապրել, և ես հաճախ էի գնում այնտեղ, որպեսզի վարձակալության վճար ստանամ:

Նա մի ջահել տղա էր, որը նոր էր աշխատանքի անցել ուստիկանությունում: Մի քանի օր առաջ, ջիզիթական մրցույթի ժամանակ նա վայր էր ընկել ձիուց և ուժեղ ներքին վնասվածքներ ստացել: Թեև բժիշկը հնարավոր ամեն ինչ արեց, որ այդ ջահելը չմահանա, բայց նրան փրկել չհաջողվեց, և, թաթարական սովորույթի համաձայն, նույն օրը նրան թաղեցին:

Նրա կերպարանքն առած չար ոզին տուն գնալիս է եղել, երբ ինչ-որ մեկը նրան նկատել է և տագնապ հնչեցրել: Որպեսզի չար ոզին որևէ մեկին չվնասի, այդ մարդը նրա կոկորդը կտրել է և նրան նորից տարել գերեզմանոց:

Քրիստոնեական հավատի հետևորդների շրջանում համոզմունք էր հաստատված, որ ոզիները միայն մեռած թաթարի մարմին են առնում, քանի որ նրանց սովորույթն այնպիսին է, որ դագաղը խոր չեն թաղում, և չար ոզին հեշտությամբ մուտք է գործում մարմնի մեջ:

Այդ դեպքն ինձ շշմեցրեց: Ի՞նչ բացատրություն կարող էի գտնել դրա համար... Բոլորը քննարկում էին այդ դեպքը, նրանց թվում նաև իմ քեռին՝ Գեորգի Մերկուրովը, և նրա որդին, որը նոր էր ավարտել դպրոցը և ծառայում էր ոստիկանությունում: Բոլորն ինձնից անհամեմատ տարիքով էին, հարգանք էին վայելում և այնքան շատ բաներ գիտեին, որոնց մասին ես չնչին պատկերացում անգամ չունեի: Տեսա՞ արդյոք նրանց դեմքին տարակուսանք, վիշտ կամ զարմանք: Ոչ, կարծես նրանք նույնիսկ ուրախ էին, որ ինչ-որ մեկին հաջողվել է ժամանակին պատժել չար ոգուն, որն այդպես էլ չէր հասցրել որևէ չարիք գործել:

Ես կրկին գրքերից կպա՛ հույս ունենալով, որ դրանց օգնությամբ կկարողանամ բավարարել իմ հետաքրքրասիրությունը: Բոգաչևսկին, որն ինձ շատ էր օգնել, ցավոք, ստիպված էր շուտով մեկնել, քանի որ քահանայի պաշտոն էր ստացել անդրկովկասյան գորամասերից մեկում: Քանի դեռ նա Կարսում էր ապրում և իմ ուսուցիչն էր, ինձ զարմացրեց նրանով, որ դեռ չձեռնադրված՝ ամեն շաբաթ ստիպում էր ինձ խոստովանել: Մեկնելուց առաջ նա ինձ առաջարկեց գրի առնել իմ խոստովանությունները և նամակով ուղարկել իրեն: Նա խոստացավ երբեմն այդ նամակներին պատասխանել: Մենք պայմանավորվեցինք, որ քեռիս կստանա այդ պատասխան-նամակները և կփոխանցի ինձ:

Դրանից մի տարի հետո Բոգաչևսկին ընդհատեց քահանայի իր ծառայությունը և կուսակրոն վանական դարձավ: Լուրեր էին պտտվում, թե նա այդ քայլին գնացել է մի սպայի հետ իր կնոջ ունեցած սիրավեպի պատճառով: Կնոջը վնդդելուց հետո նա հրաժարվել է այդ քաղաքում ապրելուց և նույնիսկ չի ցանկացել տաճարում ժամերգություն մատուցել: Կարսից նրա մեկնելուց հետո շուտով ես մեկնեցի Թիֆլիս: Մինչ այդ ես նրանից ընդամենը երկու նամակ էի ստացել, իսկ դրանից հետո մի քանի տարի նրանից ոչ մի լուր չունեի:

Ավելի ուշ պատահաբար նրան հանդիպեցի Սամարայում, որտեղ նա ապրում էր տեղի եպիսկոպոսի տանը: Բոգաչևսկին ինձ միանգամից չճանաչեց, քանի որ անցած տարիների ընթացքում հասունացել ու շատ էի փոխվել: Բայց երբ հայտնեցի, թե ով եմ, նա շատ ուրախացավ, և մի քանի օր անընդհատ մենք հանդիպում ու զրուցում էինք: Հետո երկուսիս էլ վիճակվեց հեռանալ Սամարայից:

Դա իմ վերջին հանդիպումն էր Բոգաչևսկու հետ. այլևս ես նրան ոչ մի անգամ չտեսա: Միայն լսեցի, որ նա չի ուզեցել մնալ ռուսական մենաստանում և մեկնել է Թուրքիա, որից հետո էլ թողել է վանականությունը և գնացել Երուսաղեմ: Այնտեղ Բոգաչևսկին ծանոթացել է տերոդորյանների վաճառքով զբաղվող մեկի հետ, որն, ինչպես պարզվել է, Եսսեական եղբայրության վանական է եղել. հենց նրա օգնությամբ էլ նա դարձել է այդ եղբայրության անդամ: Իր բարեպաշտ կյանքի շնորհիվ նա սկզբում դարձել է եկեղեցու երեցփոխ, իսկ մի քանի տարի անց՝ այդ եղբայրության Եգիպտոսի համայնքներից մեկի ավագերեց: Նա այնպիսի գնահատանքի ու հարգանքի է արժանացել, որ երբ վախճանվել է վանահոր օգնականներից մեկը, նրան առաջարկել են գրավել թափուր մնացած տեղը:

Նրա անսովոր ճակատագրի մասին ես շատ հետաքրքրական բաներ իմացա մի թուրք դերվիշից, որը հաճախ էր հանդիպել Բոգաչևսկու հետ և անգամ նրանից օրինաբանական նամակ էր ստացել: Նամակի հետ կային մի քանի լուսանկարներ: Նրանցից մեկի վրա ինքը Բոգաչևսկին էր՝ հույն վանականի հանդերձանքով, իսկ մյուսներում պատկերված էին Երուսաղեմի շրջակայքի սուրբ վայրեր:

Կարսում կայացած մեր հաճախակի զրույցներից ես գիտեի, որ Բոգաչևսկին, դեռևս նախքան ձեռնադրվելը, իր առանձնահատուկ հայացքն ուներ բարոյականության հարցերի վերաբերյալ: Նա ինձ ասում էր, որ բարոյականության երկու տեսակ գոյություն ունի. մեկը համընդհանուրն է, որը հազարամյա զարգացման ընթացքում կյանքն ինքն է ձևավորել, իսկ մյուսը՝ սուբյեկտիվը, որը ծառայում է ինչպես առանձին անհատների, այնպես էլ ամբողջ ազգերի, ընտանիքների, սոցիալական խմբերի:

Համընդհանուր, օբյեկտիվ բարոյականությունը, որը մեզ տրված է Տեր Աստծո այն պատվիրաններով, որոնք մեզ են հասցրել Նրա մարգարեները, հող է ծառայել այն բանի աճի համար, ինչին մենք խիղճ ենք անվանում: Եվ այդ խղճի շնորհիվ է, որ համընդհանուր բարոյականությունը պահպանվում է երկրում: Արժեքների համընդհանուր օբյեկտիվ համակարգը չի փոխվում, այլ միայն լայնորեն տարածվում է երկրագնդով մեկ: Իսկ ինչ վերաբերում է սուբյեկտիվ բարոյականությանը, ապա այն մարդիկ են հորինել և, հետևաբար, հարաբերական է՝ տարբեր լինելով տարբեր ժողովուրդների, սոցիալական խմբերի և անգամ առանձին մարդկանց համար: Այն կախված է չարի ու

բարու անհատական կամ խմբակային ըմբռումից, որը տվյալ ժամանակահատվածում և տվյալ վայրում տիրապետող է:

«Օրինակ՝ այստեղ՝ Անդրկովկասում,- ասում էր Բոգաչևսկին,- եթե կինն իր դեմքը չի ծածկում, կամ եթե առաջինն է սկսում խոսել հյուրի հետ, ապա շրջապատի մարդիկ նրան կհամարեն կարգազանց, փչացած ու վատ դաստիարակված: Իսկ Ռուսաստանում հակառակն է. եթե կինն իր դեմքը փակում է կամ սիրալիք չի լինում հյուրի հետ և նրա հետ զրույցի չի բռնվում, ապա նրան կհամարեն անդաստիարակ, անհարգալից ու տհաճ արարած:

Մի ուրիշ օրինակ՝ եթե Կարսում ապրող տղամարդը շաբաթը մեկ անգամ կամ թեկուզ երկու շաբաթը մեկ թուրքական բաղնիք չի գնում, ապա նրա ծանոթները կսկսեն նրա նկատմամբ հակակրանք և նույնիսկ զզվանք զգալ՝ որոշելով, որ նրանից վատ հոտ է գալիս, թեև դա կարող է չհամապատասխանել իրականությանը: Իսկ Մանկտ Պետերբուրգում ամեն ինչ հակառակն է. եթե կարգին հասարակության անդամը նույնիսկ թեթև ակնարկ անի առ այն, որ ինքը բաղնիք է գնում, ապա նրան կհամարեն անքաղաքավարի, ոչ ինտելիգենտ անձնավորություն: Եվ եթե նա իսկապես սիրում է շոգեհարվել ու չի ուզում հրաժարվել այդ սովորությունից, ապա ստիպված կլինի շրջապատից դա թաքցնել՝ որպես ամոթալի մի բան, որպեսզի պահպանի բարի համբավը:

Իմ այս միտքը շատ լավ հաստատում են երկու դեպքեր, որոնք հիմա կպատմեմ,- շարունակեց Բոգաչևսկին:- Դրանք տեղի են ունեցել մեզ մոտ՝ Կարսում, և ժամանակին արժանացան համընդհանուր ուշադրության: Առաջինը լեյտենանտ Կ.-ի դատն էր, իսկ երկրորդը՝ լեյտենանտ Մակարովի ինքնասպանությունը:

Լեյտենանտ Կ.-ն տրիբունալի առջև կանգնեց կոշկակար Իվանովին ծեծելու պատճառով, որի հետևանքով վերջինս գրկվեց աչքից: Մեղադրյալն արդարացվեց, երբ քննության արդյունքում դատավորներն իմացան, որ կոշկակարը շատ է նեղություն տվել լեյտենանտ Կ.-ին՝ նրա մասին վարկաբեկիչ լուրեր տարածելով:

Այդ գործն ինձ հետաքրքրեց, և ես որոշեցի, անկախ դատարանի որոշումից, սեփական հետաքննություն անցկացնել՝ հարցաքննելով տուժողի ծանոթներին ու ազգականներին, որպեսզի անձամբ համոզվեմ, թե որոնք են եղել լեյտենանտ Կ.-ի արարքի իրական դրդապատճառները:

Ինչպես ես իմացա, լեյտենանտը կոշկակարին սկզբում մի գույգ երկարաճիտ կոշիկ է պատվիրել, հետո՝ էլի երկու գույգ և այդ աշխատանքի դիմաց խոստացել է վարձահատույց լինել ամսի քսանի կողմերը, երբ ստացած կլինի իր ռոճիկը: Քանի որ վարձը ժամանակին չի վճարվել, կոշկակարը եկել է լեյտենանտի մոտ և պահանջել պարտքը: Սպան վարձը հետաձգել է հաջորդ օրվան, և այդպես շարունակվել է բավական երկար ժամանակ: Լեյտենանտը խոստումներից բացի ոչինչ չի վճարել, սակայն Իվանովը շարունակել է ամեն օր գալ ու պարտքը պահանջել, քանի որ այդ փողերը նրա համար կարևոր էին: Որպեսզի այդ կոշիկների համար կաշի գներ, նա ծախսել էր իր բոլոր խնայողությունները և այլևս ոչինչ չուներ իր վեց երեխաներին կերակրելու համար:

Ի վերջո կոշկակարի այցելություններն այնքան են ձանձրացրել լեյտենանտին, որ նա իր սպասյակին հրամայել է վզակոթից բռնած դուրս շարտել նրան, իսկ եթե նորից գա, մի լավ ջարդը տալ:

Սպասյակը, բարեհոգի մարդ լինելով, չի ծեծել Իվանովին, ինչպես հրամայված էր, այլ, որպեսզի նրան ընկերաբար համոզի այլևս չգրգռել իր տիրոջը, հրավիրել է խոհանոց: Իվանովն այնտեղ նստել է, իսկ սպասյակն սկսել է սազ փետրել, որ տապակի: Այդ առթիվ կոշկակարն ակնարկ է արել. «Ձեր տերն իմ պարտքը չի վերադարձնում, բայց ամեն օր տապակած սազ է ուտում. իսկ իմ երեխաները մեռնում են սովից...»:

Այդ ժամանակ լեյտենանտը պատահաբար մտել է խոհանոց և լսել այդ խոսքերը: Նա կատաղել է և սեղանի վրայից ձեռքն ընկած ճակնդեղն այնպիսի ուժով է խփել Իվանովի դեմքին, որ նրա աչքը դուրս է թռել:

Երկրորդ դեպքը,- շարունակեց Բոգաչևսկին,- այսպես ասած, առաջինի հակապատկերն է: Ոմն լեյտենանտ Մակարով չի կարողացել նշանակված ժամկետին իր պարտքը վերադարձնել կապիտան Մաշվելովին և այդ պատճառով ինքն իրեն գնդակահարել է: Հարկ է նշել, որ այդ Մաշվելովը թղթախաղի հայտնի խարդախ էր: Ամեն օր նա մեկնում էր թղթախաղով, և բոլորի համար ակնհայտ էր, որ նրա ձեռքը մաքուր չէ: Ինչ-որ ժամանակ լեյտենանտ Մակարովը ուրիշ սպաների հետ, որոնց մեջ էր նաև Մաշվելովը, նստել է թղթախաղի և ոչ միայն տանուլ է տվել իր ունեցած ամբողջ փողը, այլև որոշակի գումար է պարտք վերցրել նույն Մաշվելովից՝ խոստանալով

երեք օր հետո վերադարձնել: Քանի որ այդ գումարը բավական խոշոր է եղել, և նա չի կարողացել նշված ժամկետին այդքան փող ձարել, ապա ստիպված ինքնասպան է եղել, որպեսզի չարատավորի սպայի պատիվը:

Պատմաձու երկու դեպքերի պատճառն էլ փողն է: Առաջին դեպքում պարտապանը հանեց պարտատիրոջ աչքը, իսկ երկրորդ դեպքում, գերադասեց ինքնասպանություն գործել: Ինչու՞ այդպես ստացվեց, որովհետև Մակարովի ծանոթները կսկսեին նրան արհամարհել, եթե նա չփակեր թղթախաղի պարտքը, մինչդեռ Իվանովի դեպքում պարտքը չփակելը սովորական բան կհամարվեր, նույնիսկ եթե նրա երեխաները սովից մեռնեին: Կոշկակարին ունեցած պարտքը ժամանակին վերադարձնելը նախատեսված չէ սպայական պատվի կանոնագրքում:

Այդպիսի դեպքեր հնարավոր են դառնում այն պատճառով, որ մարդիկ իրենց երեխաների գլուխները լցնում են հնարավոր ամեն տեսակի նախապաշարմունքներով և դրանով խանգարում են բնությանը, որ նրանց ներսում խիղճ զարգացնի»:

Բոգաչևսկին ինձ համոզեց, որ չտրվեմ սոցիալական ու ազգային նախապաշարմունքների ազդեցությանը: Նա ասում էր. «Իսկական մարդուն անհրաժեշտ է ունենալ իսկական, ճշմարիտ բարոյականություն, որը նրա խղճից է բխում և նրան տրված է Տեր Աստծո պատվիրաններով:

Խիղճն ամենուրեք նույնն է՝ լինի դա այստեղ՝ Կարսում, Պետերբուրգում, Ամերիկայում, Կամչատկայում թե Մոդոնոնյան կղզիներում: Այսօր դու այստեղ ես, իսկ վաղը կարող ես հայտնվել Ամերիկայում. բայց եթե դու իսկական խիղճ ունես և դաշն ես դրա հետ, ապա, որտեղ էլ հայտնվես, քեզ միշտ լավ կզգաս: Դու դեռ շատ ջահել ես, նոր ես սկսում քո կյանքը: Մեծ դժբախտություն չի լինի, եթե մեկն ասի, թե դու վատ ես դաստիարակված, քանի որ ճիշտ խոնարհվել կամ աշխարհիկ գրույց վարել չես կարողանում. կարևորն այն է, որ քո ներսում խիղճը զարգանա, որը համընդհանուր օբյեկտիվ բարոյականության հիմքն է:

Սուբյեկտիվ բարոյականությունը հարաբերական բան է, և եթե քո գլուխը լցված է բացարձակ արժեք չունեցող բաներով, ապա, երբ հասուն մարդ դառնաս, կսկսես մարդկանց դատել անարդար դատով: Դու չպետք է ապրես այն կանոններով, որոնք քեզ պարտադրում են շրջապատի մարդիկ՝ կախված չարի ու բարու մասին ունեցած իրենց պատկերացումներից, այլ պետք է անես միայն այն, ինչ թելադրում է քո խիղճը:

Եթե լսես քո խղճի ձայնը, ապա ավելի շատ բան կհիմանաս, քան կարող են տալ բոլոր գրքերը և ուսուցիչները միասին վերցրած, իսկ քանի դեռ քո խիղճը չի ձևավորվել, առաջնորդվիր մեր Ուսուցիչ Հիսուս Քրիստոսի պատվիրաններով. ուրիշի հետ մի՛ վարվիր այնպես, ինչպես չէիր ուզենա, որ քեզ հետ վարվեն»:

Հայր Եվլիսիոսը, որն այժմ ծերունի է, երկրագնդի վրա ապրող այն քչերից մեկն է, որ իրենց կյանքում առաջնորդվում են Մեծ Ուսուցիչ Հիսուս Քրիստոսի պատվիրաններով:

Գուցե նրա աղոթքներն օգնեն նրանց, ովքեր ճշմարտության ուղիներն են փնտրում:

ԳԼՈՒԽ Դ

Միստր Իքս, կամ նավապետ Պողոսյան

Սարգիս Պողոսյանը, կամ, ինչպես նրան հիմա անվանում են, Միստր Իքսը մի քանի շոգենավերի տեր է, որոնցից մեկը, որը երթևեկում է նրա հավանած Մոդոնոնյան կղզիների շուրջ, նա օգտագործում է սեփական ուղևորությունների համար:

Նա ազգությամբ հայ է, ծնվել է Թուրքիայում, իսկ մանկությունն անց է կացրել Անդրկովկասում՝ Կարս քաղաքում:

Ես ծանոթացել և ընկերացել եմ Պողոսյանի հետ, երբ նա դեռ շատ ջահել էր. նոր էր ավարտել աստվածաբանական ճեմարանը և պատրաստվում էր հոգևոր աստիճան ստանալ:

Նախքան մեր առաջին հանդիպումը նրա մասին շատ էի լսել իր ծնողներից, որոնք ապրում էին մեզնից ոչ հեռու և հաճախ այցելում էին հորս: Ես գիտեի, որ նրանք միայն մեկ որդի ունեն, որն

սկզբում Երևանում է սովորել, ապա տեղափոխվել Էջմիածնի թեմական դպրոցը: Պողոսյանի ծնողները թուրքահպատակ էին⁵: Նրանք Էրզրումից Կարս էին տեղափոխվել անմիջապես այն բանից հետո, երբ ռուսները գրավել էին այն: Հայրը մասնագիտությամբ ներկարար էր, իսկ մայրը ոսկեկարեր էր անում. հատկապես լավ էին ստացվում նրա ասեղնագործությունները հայ կնոջ տարազի գոտու և այլ մասերի վրա: Համեստ կյանք վարելով՝ նրանք իրենց ամբողջ դրամը ծախսում էին իրենց միակ որդուն լավ կրթություն տալու համար:

Սարգիս Պողոսյանը հազվադեպ էր այցելում ծնողներին, և ինձ չվիճակվեց նրա հետ հանդիպել Կարսում: Առաջին անգամ ես նրան տեսա Էջմիածնում: Նախքան այդ քաղաքը գնալու ես անցա Կարս, որպեսզի տեսնեմ հորս: Պողոսյանի ծնողները, տեղեկանալով Էջմիածին գնալու մտադրությանս մասին, խնդրեցին, որ իրենց որդուն հանձնեմ սպիտակեղենի մի ծանրոց:

Ես Էջմիածին էի գնում, որպեսզի ինձ համար պարզեմ՝ գոյություն ունի՞ արդյոք գերբնականը: Այդ խնդիրը դեռ շարունակում էր ինձ հետաքրքրել:

Պետք է ասեմ, որ, ինչպես նշեցի նախորդ գլխում, տարվելով գերբնական երևույթներով, ես նախ խորասուզվեցի գրքերի մեջ, որպեսզի գտնեմ այդ երևույթի բացատրությունը: Այդ հարցի պատասխանը չստանալով ո՛չ գրքերից, ո՛չ էլ այն գիտուններից, որոնց հետ բախտ ունեցա հանդիպելու՝ ես դիմեցի կրոնի օգնությանը: Այցելելով տարբեր վանքեր՝ ես ծանոթացա այնպիսի մարդկանց հետ, որ հայտնի էին իրենց բարեպաշտությամբ, կարդացի սուրբ Գիրքն ու սրբերի Վարքերը և նույնիսկ երեք ամիս անցկացրի Սանահինի վանքում՝ հայր Եվլամպիոսի մոտ: Դրանից զատ, ես ուխտագնացություններ կատարեցի դեպի Անդրկովկասի սուրբ վայրերը: Իմ կյանքի այդ ժամանակահատվածում ես մի ամբողջ շաբթ երևույթների ակնատեսը դարձա, որոնց համար չկարողացա գտնել բանական բացատրություններ: Դրանք ոչ միայն իմ միտքը չպայծառացրին, այլև ավելի շատ խճճեցին:

Օրինակ մի անգամ, երբ ուխտավորների խմբի հետ Ալեքսանդրապոլից գնում էի Ջաջուռի լանջին գտնվող և բոլոր հայերին լավ հայտնի Ամենափրկիչ եկեղեցում կայանալիք կրոնական տոնախմբությանը մասնակցելու, վկա դարձա հետևյալ միջադեպին:

Փալոկան կոչվող գյուղակում ծնված անդամալույծ մի մարդ, որին ուխտավայր էին տանում սայլով, ամբողջ ճանապարհին զրուցում էր իրեն ուղեկցող հարազատների հետ:

Այդ զրույցից ես իմացա, որ երեսուն տարին դեռ չբոլորած այդ մարդը կաթված է ստացել վեց տարի առաջ, իսկ դրանից առաջ բացառիկ առողջություն է ունեցել և նույնիսկ զինվորական է եղել: Հիվանդացել է բանակից վերադառնալուց հետո, անմիջապես իր հարսանիքից առաջ՝ կորցնելով մարմնի ձախ կեսի զգայնությունը: Բժիշկների և հեքիմների ամեն տեսակի ջանքերը նրան որևէ օգուտ չեն տվել: Հիվանդին հարազատները հասցրել էին մինչև Կովկասի «Միներալնիե Վոդի» կոչվող վայրը, իսկ հիմա իրենց հետ տանում էին Ամենափրկիչ, որպեսզի սուրբը նրան բուժի:

Սրբավայր հասնելուց առաջ մենք դադար առանք Դիսկիանտ գյուղակում. ուխտավորներն այնտեղ պետք է աղոթք անեին Փրկչի սրբապատկերի առջև, որը գտնվում էր մի հայ գյուղացու տանը: Հիվանդը նույնպես ցանկություն հայտնեց աղոթելու սրբապատկերի առջև, և հարազատները նրան բերեցին այդ տունը:

Ճաշից հետո մենք ճամփա ընկանք դեպի Ջաջուռի լեռը, որի լանջին փոքրիկ եկեղեցի կար և մի հրաշագործ գերեզման: մենք կանգ առանք մի վայրում, որտեղ սովորաբար ուխտավորները թողնում էին իրենց սայլերն ու կառքերը և իրենց ճանապարհը շարունակում ոտքով: Մոտավորապես քառորդ մղոն երկարությամբ ճանապարհի այդ հատվածը շատերը հաղթահարում էին ոտաբոքիկ կամ ծնկաչոք, ինչպես ընդունված է տեղական սովորույթով:

Երբ կաթվածահարին սայլից իջեցրին, որպեսզի իրենց ձեռքերի վրա տանեն, նա հանկարծ բողոքեց՝ ասելով, որ այդտեղից մինչև սրբավայր ուզում է անցնել առանց կողմնակի օգնության: Պատկերով գետնի վրա նա սկսեց սողալ՝ դրա համար օգտագործելով մարմնի առողջ աջ կեսը: Դա մի այնպիսի ծանր տեսարան էր, որ բոլոր ներկաների աչքերն արցունքոտվեցին: Բայց անդամալույծը շարունակում էր սողալ՝ հրաժարվելով շրջապատի մարդկանց օգնությունից: Հաճախակի դադար

⁵ ռուս. տարբերակում՝ «были турками», ինչը հակասում է հեղինակի՝ այս գլխում ավելի վաղ ասված խոսքին, որ «Սարգիս Պողոսյանն ազգությամբ հայ էր»: Հավանաբար այս թյուրիմացությունը ռուս թարգմանչի անփութության հետևանքն է (Խ.Ս.)

առնելով՝ երեք ժամ հետո նա վերջապես հասավ սրբի գերեզմանին, որը գտնվում էր եկեղեցու կենտրոնում, համբուրեց գերեզմանաքարը և անմիջապես ուշագնաց եղավ:

Հարագատները նրա շուրջն իրար անցան՝ աշխատելով ուշքի բերել. բերանը ջուր լցրին, թրջեցին դեմքը: Իսկ երբ նա ուշքի եկավ, հրաշք կատարվեց. կաթվածն անցավ:

Սկզբում այդ մարդն ուրախությունից հագիվ խելքը չթոցրեց. ոտքի թռավ, սկսեց պարել խելագարի պես, ապա խելքը տեղը գալուց հետո բարձր գոչեց, բերանքսիվայր փովեց գետնին և սկսեց ջերմեռանդ աղոթել:

Բոլոր ներկաները վանահոր գլխավորությամբ հետևեցին նրա օրինակին և ծնկաչոք սկսեցին փառաբանել Տիրոջը: Ապա վանահայրն օրհնեց ծնկաչոք մարդկանց և անցավ իր ժամերգությանը, որպեսզի Բարձրյալին երախտագիտություն հայտնի հրաշագործ բուժման համար:

Հաջորդ դեպքը, որն ինձ ապշեցրեց առաջինից ոչ պակաս, տեղի ունեցավ Կարսում: Այդ տարի ահավոր շոգ էր, և երաշտի տակ ընկան հսկայական տարածքներ: Համարյա ամբողջ բերքը խանձվեց, մարդկանց սով էր սպառնում, և նրանք խուճապահար եղան: Այդ ամառ Ռուսաստանից ծայրագույն վարդապետ ժամանեց, որն իր հետ բերել էր Աստվածամոր հրաշագործ սրբապատկեր, որպեսզի դրա միջոցով դրամահավաք կատարի պատերազմից տուժած հույներին օգնելու նպատակով: Ծայրագույն վարդապետը հիմնականում կանգ էր առնում այն վայրերում, որտեղ հունական սփյուռք կար, ուստի չըջանցեց նաև Կարսը: Չգիտեմ՝ միայն կրոնի հետ էր կապված, թե այստեղ քաղաքականությունն էր խառը, բայց ռուսական համայնքը նույնպես մասնակցեց այդ գործին՝ ցուցաբերելով ջերմ ընդունելություն և ամեն տեսակի պատիվներ:

Երբ ծայրագույն վարդապետը ժամանում էր որևէ քաղաք, սրբապատկերը մի եկեղեցուց փոխանցվում էր մյուսին, և հոգևորականները խաչվառներով ընդառաջ էին գնում՝ ընդգծելով այդ իրադարձության բացառիկությունը:

Ծայրագույն վարդապետի Կարս հասնելու հենց հաջորդ օրը լուր տարածվեց, որ Աստվածամոր սրբապատկերի առջև հատուկ ժամերգություն տեղի կունենա: Այդ արարողությանը, որը պետք է տեղի ունենար քաղաքից դուրս, մասնակցելու էր Կարսի ամբողջ կղերականությունը, որպեսզի ծարավից տապակվող հողի համար անձրև խնդրի: Եվ իրոք, այդ օրը քաղաքի բոլոր եկեղեցիներից դեպի Կարսի շրջակայքում գտնվող պայմանավորված վայրն ուղղվեցին եկեղեցական թափորներ՝ խաչվառներով ու սրբապատկերներով: Արարողությանը մասնակցում էին վերջերս վերականգնված հունական եկեղեցու, կուրանյան գնդի եկեղեցու, ինչպես նաև հայկական եկեղեցու հոգևորականները:

Այդ օրը երկնքից ուղղակի կրակ էր թափվում: Կարսի համարյա ամբողջ բնակչության ներկայությամբ հոգևորականությունը շամերգություն մատուցեց, որից հետո բոլորը ճամփա ընկան դեպի քաղաք: Եվ այստեղ տեղի ունեցավ այն, ինչը հնարավոր չէ բացատրել առողջ բանականության տեսակետից: Երկնքում հանկարծակի ամպեր կուտակվեցին, և, նախքան մարդիկ կհասնեին քաղաք, այնպիսի մի հրեշավոր տեղատարափ սկսվեց, որ բոլորին թրջեց մինչև ոսկորները:

Նման երևույթները բացատրելիս մարդիկ սովորաբար կիրառում են կարծրատիպային «գուգադիպություն» բառը, որը հատկապես շատ են սիրում օգտագործել, այսպես կոչված, մտածող մարդիկ: Սակայն չի կարելի ժխտել, որ այդ «գուգադիպությունն» այս դեպքում չափից դուրս անհավանական էր:

Երրորդ դեպքը, որն ուզում եմ պատմել, տեղի ունեցավ Ալեքսանդրապոլում, երբ մեր ընտանիքը ժամանակավորապես վերադարձել էր այնտեղ և ապրում էր մեր հին տանը: Մեր հարևանությամբ մորաքրոջս տունն էր: Նրա տան սենյակներից մեկը վարձել էր մի թաթար, որը որպես քարտուղար էր աշխատում տեղական կառավարչությունում: Նա ապրում էր իր ծեր մոր և կրտսեր քրոջ հետ և հենց նոր ամուսնացել էր մի գեղեցիկ աղջկա՝ հարևան Ղարադաղ քաղաքից մի թաթարուհու հետ: Սկզբում նրանց մոտ ամեն ինչ հրաշալի էր: Բայց երբ հարսանիքից քառասուն օր անց երիտասարդ կինը, սովորույթի համաձայն, դարձ էր գնացել, հավանաբար այնտեղ խիստ մրսել էր և տուն վերադառնալուց հետո հանկարծակի իրեն վատ զգաց: Ամուսնու ընտանիքը նրան շրջապատեց հոգատարությամբ, սակայն թեև հրավիրեցին լավագույն բժիշկներին, որոնց մեջ էին, որքան հիշում եմ, նաև Կարսի գլխավոր բժիշկ Ռեզնիկը և նախկին զինվորական բժիշկ Կիլչևսկին, երիտասարդ կնոջ վիճակը շարունակում էր վատանալ: Բժիշկ Ռեզնիկի ցուցումով ինձ ծանոթ մի բուժակ ամեն օր այցելում և սրսկում էր նրան: Այդ մարդը, որի անունը, ցավոք, չեմ հիշում, իր գործը կատարելուց հետո հաճախ մտնում էր մեր տուն:

Մի անգամ առավոտյան նա ներս մտավ, երբ ես ու մայրս թեյ էինք խմում: Մենք նրան հրավիրեցինք սեղանի մոտ, և մեր զրույցի ընթացքում ամեն ինչից գատ ես հետաքրքրվեցի հիվանդի վիճակով: Պատասխանն ինձ տխրեցրեց. պարզվեց, որ նա հիվանդ է սրընթաց թոքախտով, և արդեն հաշված օրեր են մնացել նրան:

Մեր այդ զրույցի ընթացքում մի ծեր կին ներս մտավ՝ հիվանդի սկեսուրը, և մորիցս թույլտվություն խնդրեց, որ մեր ոչ մեծ պարտեզից մի քանի վարդ պոկի: Արցունքն աչքերին՝ նա պատմեց, որ Մարիամ Անան (թաթարներն այդպես են անվանում Կույս Մարիամին) երագում երևացել է հիվանդ կնոջը և պատվիրել վարդի թերթիկներ հավաքել, եփել կաթի մեջ և թուրմը խմել: Հիվանդին չմերժելու համար ծեր կինը որոշել էր այդպես էլ անել: Այդ մասին լսելով՝ բժշկի օգնականը չկարողացավ իր ժպիտը թաքցնել:

Մայրս, իհարկե, ոչ միայն թույլ տվեց, այլև ինքն էլ գնաց վարդ հավաքելու: Երբ իմ ծանոթը գնաց, ես նույնպես պարտեզ մտա, որպեսզի առաջարկեմ իմ օգնությունը:

Որքա՞ն մեծ եղավ իմ զարմանքը, երբ հաջորդ առավոտյան շուկա գնալու ճանապարհին ես տեսա այդ երիտասարդ կնոջն իր սկեսուրի հետ. նրանք գնում էին Սև ժամ կոչվող հայկական եկեղեցին, որտեղ դրված էր Աստվածամոր հրաշագործ սրբապատկերը, և ուզում էին իրենց երախտագիտությունը հայտնել երկնահաս հրաշագործ բուժման համար: Իսկ մի շաբաթ անց նա արդեն եռանդուն կերպով տան գործերով էր զբաղված: Բժիշկ Ռեզնիկը դա պատահականություն համարեց և մտաբերեց, որ իր բժշկական պրակտիկայում նման դեպքեր էլի են եղել:

Այս երեք դեպքերը, որոնց ինքս ականատես եմ եղել, ինչպես նաև շատ ուրիշ դեպքեր որոնց մասին բազմիցս լսել եմ իմ ճամփորդությունների ընթացքում, վկայում էին գերբնական երևույթների գոյության մասին, որոնք ոչ մի կերպ չեն կարող բացատրվել ճշգրիտ գիտությունների միջոցով, քանի որ դրանք ուղղակի բացառում են նման բաների հնարավորությունը:

Այդ հակասություններն ինձ զրկեցին հոգեկան անդորրից, քանի որ երկու տեսակետների կողմնակիցների բերած ապացույցներն էլ բավարար չափով համոզիչ էին: Ես շարունակեցի այդ խնդրին վերաբերող իմ ուսումնասիրությունները՝ հուսալով, որ երբևէ կգտնեմ ճշմարտությունը:

Այդ հանելուկը լուծելու փորձն էլ հենց ինձ հասցրեց Էջմիածին, կամ, ինչպես երբեմն ասում են, Վաղարշապատ: Հայերի համար այն այնպիսի վայր է, ինչպես Մեքքան՝ մուսուլմանների և Երուսաղեմը՝ քրիստոնյաների համար: Դա Ամենայն հայոց կաթողիկոսի նստավայրն է և հայկական մշակույթի կենտրոնը, որտեղ ամեն տարի աշնանը տեղի են ունենում հանդիսավոր կրոնական տոնակատարություններ: Այնտեղ ուխտավորներ են գալիս ինչպես Հայաստանի տարբեր անկյուններից, այնպես էլ ամբողջ աշխարհից: Այդ տոնակատարությունից դեռ մի շաբաթ առաջ շրջակա բոլոր ճանապարհները լցվում են ուխտավորների թափորներով, որոնք ուխտի են գնում թե՛ ոտքով, թե՛ սայլերով ու կառքերով, թե՛ ձիերով ու ավանակներով:

Ես, իրեղենս բեռնելով մալականների ձիասայլին, ավեքսանդրապոլյան ուխտավորների խմբի հետ ոտքով էի գնում այնտեղ:

Հասնելով Էջմիածին՝ ես, ընդունված կարգի համաձայն, նախ գնացի խոնարհվելու սուրբ վայրերին, այնուհետև մտա քաղաք, որ մնալու տեղ գտնեմ: Ես անհաջողության մատնվեցի, քանի որ բոլոր իջևանատները (հյուրանոցներ այն ժամանակ դեռ չկային) արդեն գերբեռնված էին ուխտավորներով: Ուստի ես որոշեցի շատերի պես գիշերել քաղաքից դուրս թողնված սայլի տակ: Բայց նախքան այդ դեռ շատ ժամանակ կար, և ես որոշեցի գտնել Պողոսյանին և նրան հանձնել սպիտակեղենի իր ծանրոցը:

Նա ապրում էր ամենամեծ իջևանատնից ոչ շատ հեռու՝ իր ազգական արքեպիսկոպոս Սուրենյանի տանը: Իմ բախտից նա տանն էր: Նա դեռ շատ ջահել էր իմ հասակակիցը, շատ թուխ դեմքով, միջահասակ, ոչ մեծ ու կոկիկ բեղերով: Նրա աչքերը թախծոտ էին, բայց միաժամանակ ներքին կրակ էին առկայծում: Աջ աչքը մի փոքր շիլ էր: Ընդհանուր առմամբ նա թողնում էր ֆիզիկապես թույլ, ամաչկոտ մարդու տպավորություն:

Պողոսյանը նախ հարցեր տվեց իր ծնողների որպիսության մասին, որից հետո, իմանալով, որ ինձ համար կացարան չեմ գտել, առաջարկեց տեղավորվել իր մոտ:

Ես երախտագիտությամբ համաձայնվեցի և անմիջապես գնացի իրեղենս բերելու, որ թողել էի մալականների ձիասայլում: Երբ Պողոսյանի հետ արդեն ինձ համար քնելու տեղ էինք պատրաստել,

եկան և մեզ հրավիրեցին հայր Սուրենյանի հետ ընթրիքի, որն ինձ շատ սիրալիք ընդունեց և շատ հարցեր տվեց ինչպես Պողոսյանի ծնողների, այնպես էլ ավեքսանդրապոլյան կյանքի մասին:

Ընթրիքից հետո ես Պողոսյանի ուղեկցությամբ գնացի քաղաքը տեսնելու և սուրբ մատույններին հավատքի տուրք մատուցելու: Պետք է ասեմ, որ տոնակատարության ժամանակ քաղաքն ամբողջ գիշեր արթուն է մնում. փողոցները լիքն են լինում մարդկանցով, և սրճարանները բաց են լինում:

Ամբողջ այդ երեկոն և հետագա օրերը ես անցկացրի Պողոսյանի ընկերակցությամբ: Նա ինձ ամեն տեղ տարավ, քանի որ լավ գիտեր քաղաքն ու դրա շրջակայքը: Մենք եղանք այնպիսի տեղերում, որտեղ սովորական ուխտավորներին թույլ չէին տալիս մտնել. անգամ եղանք Գանձարանում, որտեղ պահվում են քաղաքի գանձերը, և որտեղ մուտք գործելը շատ դժվար է:

Մի քանի օր շփվելով Պողոսյանի հետ՝ ես հասկացա, որ մենք շատ ընդհանուր բաներ ունենք. ինձ հետաքրքրող հարցերը նաև նրան էին հետաքրքրում: Աստիճանաբար մեր գրույցները դարձան ավելի անկեղծ ու սրտաբուխ, և մեր միջև իսկական բարեկամություն հաստատվեց:

Պողոսյանը շուտով պետք է ավարտեր ճեմարանը և երկու տարի հետո հոգևոր աստիճան ստանար, բայց դա նրան բոլորովին չէր գրավում: Նա ուժեղ հակակրանք ուներ այն մարդկանց նկատմամբ, որոնց շրջապատում իրեն վիճակված էր ապրել:

Երբ մենք մտերմացանք, նա ինձ պատմեց եկեղեցական կղերի կյանքի թաքնված շատ կողմերի մասին: Հենց միայն այն միտքը, որ հոգևոր աստիճան ստանալուց հետո պետք է ապրեր այդպիսի շրջապատում, նրան վիստայության մեջ էր գցում:

Էջմիածնում անցկացրած երեք շաբաթվա ամբողջ ընթացքում ես ապրեցի արքեպիսկոպոս Սուրենյանի տանը և հնարավորություն ունեցա անձամբ գրուցելու նրա հետ՝ քննարկելով այնպիսի հարցեր, որոնք հետաքրքրում էին ինձ: Ես շփվեցի շատ վանականների հետ, որոնց հետ նա ինձ ծանոթացրեց: Բայց ես, բավական ժամանակ կորցնելով, այնուամենայնիվ չգտա ինձ տանջող հարցերի պատասխանները և ի վերջո հասկացա, որ այդտեղ ես դրանք չեմ գտնի:

Ես ու Պողոսյանն իրարից բաժանվեցինք որպես ընկերներ՝ խոստանալով իրար նամակ գրել և փոխանակել մեր այն գաղափարներն ու դիտումները, որոնք կվերաբերեին երկուսիս հետաքրքրող հարցերին:

Երկու տարի անց, մի գեղեցիկ օր Պողոսյանը հայտնվեց Թիֆլիսում, որտեղ այդ ժամանակ ես ապրում էի, և եկավ ինձ տեսակցության: Նա արդեն ավարտել էր ճեմարանը, կարճ ժամանակով եղել էր Կարսում՝ ծնողների մոտ, և հիմա պետք է ամուսնանար միայն այն քանի համար, որ իրեն եկեղեցական համայնք տրվի: Ծնողները նրա համար արդեն հարսնացու էին գտել, բայց նա դեռևս տատանվում էր՝ չիմանալով, թե ինչ որոշի: Այդ օրերը նա անցկացրեց գրքեր կլանելով, որոնք ես էի նրան մատակարարում: Երբ ես աշխատանքից տուն էի գալիս (որպես հնոցապան էի աշխատում Թիֆլիսի երկաթգծի կայարանում), մենք շատ անգամ զբոսնում էինք Մուշտափղի ընդարձակ տարածքներում և երկար խոսում ու գրուցում իրար հետ:

Մուշտափղում այդպիսի զբոսանքներից մեկի ժամանակ ես Պողոսյանին կատակով առաջարկեցի ինձ հետ միասին աշխատել երկաթգծի կայարանում և շատ զարմացա, երբ հաջորդ օրը նա տվեց իր համաձայնությունը և ինձ խնդրեց, որ օգնեմ գործի ընդունվել: Ես չփորձեցի հետ համոզել և մի գրությամբ նրան ուղարկեցի իմ ընկեր ինժեներ Յարոսլի մոտ, որն էլ իր հերթին անմիջապես նրան իր երաշխավորությունը տվեց երկաթգծի վարպետի մոտ: Եվ արդյունքում Պողոսյանն աշխատանքի ընդունվեց որպես փականագործի օգնական:

Այդպես շարունակվեց մինչև հոկտեմբեր: Պողոսյանը չէր պատրաստվում վերադառնալ իր նախկին կյանքին: Մի անգամ Յարոսլի տանը ես ծանոթացա նրա ծանոթներից մեկի՝ ինժեներ Վասիլի հետ, որը նոր էր եկել Կովկաս, որպեսզի հետախուզական աշխատանքներ կատարի երկաթգծի նոր պլանավորվող մի ճյուղավորումում՝ Թիֆլիսի ու Ղարաքիլիսայի միջև: Մեր ծանոթությունից մի քանի օր հետո Վասիլին ինձ առաջարկեց իր հետ մեկնել որպես թարգմանիչ: Առաջարկված վարձատրության չափը շատ հրապուրիչ էր, քանի որ չորս անգամ գերազանցում էր իմ ստացածը: Էլ չասած, որ հնոցապանի իմ աշխատանքն ինձնից շատ ուժեղ ու ժամանակ էր խլում: Ես Պողոսյանին առաջարկեցի մեզ հետ մեկնել՝ համապատասխան պաշտոն ստանձնելով, բայց նա մերժեց իմ առաջարկը, քանի որ իր ներկա աշխատանքով շատ էր հետաքրքրված և ուզում էր շարունակել այդ գործը:

Մեր այդ արշավը տևեց երեք ամիս: Մենք ուստակ տվեցինք Թիֆլիսի ու Ղարաքիլիսայի միջև ընկած բոլոր հարթավայրերը, և այդ ընթացքում ես վատ չվաստակեցի, քանի որ աշխատավարձից բացի լրացուցիչ եկամուտի որոշ չափով կասկածելի մի քանի աղբյուրներ էլ ունեցա: Նախապես իմանալով, թե կոնկրետ ո՞ր բնակավայրերով է անցնելու պլանավորվող երկաթգծի ճյուղավորումը՝ ես իմ վստահելի մարդուն ուղարկում էի այդ փոքրիկ քաղաքների կամ գյուղերի տեղական իշխանությունների ներկայացուցիչների մոտ և առաջարկում այնպես «դասավորել», որ երկաթգիծն անցնի իրենց բնակավայրով: Որպես կանոն՝ իմ առաջարկն ընդունվում էր, և ես իմ «ծառայության» դիմաց համապատասխան պարգևատրում էի ստանում, ինչը երբեմն բավական շոշափելի գումար էր կազմում:

Նախքան Թիֆլիս վերադառնալս պարզ դարձավ, որ ես նյութապես բավականաչափ ապահովված եմ, որպեսզի ամբողջությամբ նվիրվեմ այն գերբնական երևույթներն ուսումնասիրելու գործին, որոնք ինձ հետաքրքրում էին:

Պողոսյանը, որն այդ ժամանակ արդեն փականագործ վարպետ էր դարձել, հիմա ավելի շատ ազատ ժամանակ ուներ ընթերցանությանը նվիրելու համար: Վերջին ժամանակներում նա հատկապես սկսել էր հետաքրքրվել հին հայկական գրականությամբ և հսկայական քանակությամբ գրքեր էր կլանում այդ թեմայով:

Մենք միաժամանակ այն եզրակացությանը հանգեցինք, որ մեր նախնիներն «ինչ-որ բան» են իմացել, և այդ գիտելիքն անվերադարձ կորսվել է: Ժամանակակից գիտությունը բանալի չունի այդ գաղտնիքը բացելու համար: Հիասթափվելով ժամանակակից գիտական գրականությունից և չգտնելով բազմաթիվ հարցերի պատասխանները՝ մենք մեր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրինք հին գրականության վրա: Քանի որ հնարավորություն ունեինք աշխատելու հինավուրց գրքերի հսկա հավաքածուի հետ, մենք շատ նոր բաներ կարողացանք քաղել: Հետո մենք որոշեցինք վերադառնալ Ալեքսանդրապոլ և այնտեղ մի մեկուսի տեղ գտնել, որ կարողանանք մեր ժամանակն ամբողջությամբ նվիրել հնադարյան գրքեր կարդալուն: Այդպիսի տեղ մեզ համար դարձան Անի քաղաքի ավերակները, որոնք գտնվում էին Ալեքսանդրապոլից մոտ երեսուն մղոն հեռավորության վրա: Ավերակների մեջ մենք մեզ համար խրճիթ պատրաստեցինք, իսկ սնունդը գնում էինք մոտակայքում գտնվող գյուղակներից ու հովիվներից:

Անին Բագրատունիների մայրաքաղաքն էր դարձել 961 թվականին: 1046 թ.-ին այն զավթել են բյուզանդացիները, և այդ ժամանակ Անին կոչվում էր նաև Հազար եկեղեցիների քաղաք: Ավելի ուշ քաղաքը նվաճել են թուրք-սելջուկները, իսկ 1125-1209 թվականների միջև հինգ անգամ գրավվել է Վրաստանի կողմից. 1239 թ.-ին Անին զավթել են մոնղոլները, այնուհետև 1313 թ.-ի երկրաշարժից քաղաքն ամբողջովին ավերվել է: Ավերակների մեջ կիսաքանդ վիճակում են Կաթողիկոսի նստավայրը, որը կառուցվել է 1010 թ.-ին, 11-րդ դարի երկու եկեղեցիներ և մի եկեղեցի, որը կառուցվել է 1215 թ.-ին:

Չեմ կարող լռության մատնել մի փաստ, որը կարող է հետաքրքրել իմ ընթերցողներին: Հայոց մայրաքաղաք Անիին վերաբերող տարեթվերը միակ տեղեկատվությունն է, որ ես քաղել եմ պաշտոնական աղբյուրներից: Դա առաջին և վերջին անգամն է, որ ես դիմել եմ հանրագիտարանի օգնությանը:

Գոյություն ունի հինավուրց մի առասպել այն մասին, թե երկար ժամանակի ընթացքում Հազար եկեղեցիների քաղաք կոչված Անին ինչու է հետազայում սկսել կոչվել Հազար և մեկ եկեղեցիների քաղաք: Մի անգամ հովիվներից մեկի կինը բողոքում է ամուսնուն, թե եկեղեցում հավաքվող ամբոխի աղմուկն ու իրարանցումը խանգարում են իրեն, որ ամբողջությամբ տրվի աղոթքի: Եվ ահա այդ հովիվը, կնոջ տրտունջները փարատելու նպատակով մի առանձին եկեղեցի է կառուցում նրա համար: Պետք է ասեմ, որ այն ժամանակներում «հովիվ» բառը մի փոքր այլ բովանդակություն ուներ. նախկինում հովիվներն իրենց արածեցրած հոտերի իրական տերերն էին և հաճախ շատ հարուստ էին լինում: Երբ այդ հովիվն ավարտում է եկեղեցու շինարարությունը, այն անվանում է հովիվի կին Փիրուզի եկեղեցի, և այդ ժամանակից սկսած՝ Անին սկսում է կոչվել Հազար և մեկ եկեղեցիների քաղաք: Որոշ աղբյուրներ վկայում են, թե հովիվի կառուցած այդ եկեղեցուց դեռ շատ առաջ այդ քաղաքում արդեն հազարից ավելի եկեղեցիներ են եղել, սակայն պեղումների արդյունքում հայտնաբերված քարի վրայի գրառումները հաստատում են հարուստ հովիվի և նրա բարեպաշտ կնոջ պատմության իսկությունը:

Հինավուրց քաղաքի փլատակների մեջ ապրելով և ամբողջ մեր ժամանակն ընթերցանությամբ ու քննարկումներով անցկացնելով՝ մենք երբեմն հանգստի համար պեղումներով էինք զբաղվում այն հույսով, որ ինչ-որ հետաքրքիր բան կգտնենք, քանի որ փլատակների տակ շատ ստորգետնյա անցուղիներ կային: Մի անգամ մենք այդպիսի անցուղիներից մեկում մի տեղի հանդիպեցինք, որի հողաշերտն իր բնույթով տարբերվում էր: Շարունակելով փորփրել, մենք նեղ մի անցք գտանք, որի մյուս ծայրը փակված էր քարերով: Քարերը հեռացնելուց հետո մենք տեսանք մի փոքրիկ սենյակ, որի կամարները ժամանակի ազդեցության տակ ճկվել էին: Դա վանականի համարյա դատարկ խուց էր, որի հատակին կավե անոթի կտորտանք կար ու փայտի փոշի, որ, անկասկած, ինչ-որ փայտե կահույքից էր մնացել: Դարակի նմանվող մնացորդների մեջ մենք հայտնաբերեցինք հին մագաղաթների մի կույտ: Դրանց որոշ մասը փոշու էր վերածվել, բայց կային նաև քիչ թե շատ պահպանված նմուշներ: Ծայրահեղ զգուշությամբ մենք դրանք հասցրինք մեր խրճիթը և փորձեցինք կարդալ: Պարզվեց, որ դրանք գրված են մի լեզվով, որը սկզբում մեզ հայերեն թվաց, բայց որևէ բառ հասկանալ հնարավոր չէր: Թեև ինչպես ես, այնպես էլ Պողոսյանը կատարելապես տիրապետում էինք հայերենին, բայց այդ գրառումները հասկանալու մեր փորձերն ապարդյուն անցան, քանի որ դրանք գրված էին շատ հին հայերենով, որը քիչ ընդհանուր բան ուներ ժամանակակից հայերենի հետ: Մագաղաթներն այնքան շարժեցին մեր հետաքրքրասիրությունը, որ մենք, դրանք մեզ հետ վերցնելով, շտապ վերադարձանք Ալեքսանդրապոլ և շատ օրեր ու զիշերներ ծախսեցինք դրանք վերծանելու վրա: Վերջապես, հսկայական ջանքեր գործադրելուց և հաճախակի գրաբարի գիտականների օգնությանը դիմելուց հետո մեզ հաջողվեց ինչ-որ բաներ պարզել: Դրանք նամակներ էին, որոնք մի վանական ուղարկել էր մյուսին՝ ուն հայր Երեմի: Մեզ հատկապես հետաքրքրեց դրանցից մեկը, որը հանելուկային բնույթ ուներ: Այդ մագաղաթը, ցավոք, շատ էր վնասված և որոշ բառեր բացարձակապես հնարավոր չէր կարդալ, բայց մենք արդեն բավական փորձառու էինք դարձել վերծանության գործում: Ամենաշատը մեզ այդ պատմական փաստաթղթի ավարտական մասը հետաքրքրեց և ոչ՝ դրա սկզբնամասը: Սկսելով սովորական երկարաշունչ ողջույնի խոսքերով՝ նամակագիրն իր նամակն ավարտում էր երջանկություն մաղթելով և բարեհաջող կյանք էր կամենում այն վանքում, որում հավանաբար ապրում էր հայր Երեմը: Այդ նամակի վերջնամասում կար մի տեղեկություն, որը հատկապես գրավեց մեր ուշադրությունը: Այն այսպիսին էր. «Մեր պատվելի հայր Թելվանտը վերջապես իմացավ ձյմարտությունը Սարմունգյան եղբայրության մասին: Նրանց միաբանությունն իսկապես հիսուն տարի առաջ գոյություն է ունեցել Միրանուշ քաղաքի մերձակայքում, և ժողովուրդների տեղահանության ժամանակ նրանք էլ են գաղթել ու հաստատվել Բզրումիսի դաշտավայրում՝ Նիվսիից երեք օրվա հեռավորության վրա»: Դրանից հետո նամակագիրն անցնում էր ուրիշ, ավելի քիչ հետաքրքիր նյութերի:

Մեզ ամենաշատն ապշեցրել էր այն, որ «Սարմունգ» բառը, որը հանդիպում է «Մերկ Հավատ» կոչվող գրքում, հայտնի էզոթերիկական դպրոցի անվանումն է, որը, համաձայն պատմական աղբյուրների վկայության, Քրիստոսի Ծննդից 2500 տարի առաջ կազմավորվել է Բաբելոնում, ինչպես նաև մ.թ. 6-7 դարերի ընթացքում ծաղկում է ապրել Միջագետքում ինչ-որ տեղ: Ուրիշ վկայություններ այդ մասին չկան:

Այդ էզոթերիկական ուսմունքը, որի մեջ հսկայական գիտելիքներ են կենտրոնացված, տալիս է բազմաթիվ գաղտնիքների լուծման բանալին: Ես ու Պողոսյանը վաղուց էինք հետաքրքրված այդ ուսմունքով և երազում էինք ավելի ամբողջական ու հավաստի տեղեկություններ ստանալ դրա մասին: Եվ ահա, մեզ համար լրիվ անսպասելի, այդ էզոթերիկական դպրոցի մասին հիշատակություն գտանք այդ հինավուրց մագաղաթներում: Բայց հիշատակությունից բացի ուրիշ տեղեկություններ չկային, և մենք այդպես էլ ոչ մի նոր բան չիմացանք:

Եվս մի քանի օր համառ որոնումներ կատարելուց հետո մենք պարզեցինք հետևյալը: Մոտավորապես վեցից յոթերորդ դարերում ասորիների հետնորդ այսորներին բյուզանդացիները Մեսոպոտամիից քշել են Պարսկաստան: Հնարավոր է, որ դա տեղի է ունեցել հենց մեր գտած նամակները գրելու ժամանակներում: Մենք կարողացանք պարզել, որ ներկայիս Մոսուլ քաղաքը՝ նախկին Նիվիա պետության մայրաքաղաքը, այն ժամանակ կոչվել է Նիվսի, և որ ներկայումս այդ քաղաքի ու նրա մերձակայքի բնակչությունը հիմնականում կազմված է այսորներից: Եթե այդ էզոթերիկական դպրոցն իսկապես այն ժամանակ գոյություն է ունեցել, ապա այն միայն այսորական դպրոց կարող էր լինել: Եվ եթե հիմա այդ ուսմունքի հետևորդներ կան, ապա նրանց պետք է փնտրել

այստրական միջավայրում: Նկատի ունենալով մագաղաթում նշված երեք օրվա ճանապարհի հեռավորությունը Մոսուլ քաղաքից, մենք որոշեցինք, որ այդ վայրը պետք է գտնվելիս լինի Ուրմիայի և Քրդստանի արանքում ինչ-որ տեղ, որը հույս ունեինք փնտրել և գտնել առանց մեծ դժվարության: Այդ վայրը գտնելը դարձավ մեր կյանքի նպատակը:

Այստրները, որոնք, ինչպես արդեն նշեցի, ծագել են ասորիներից, ներկայումս ցրված են ամբողջ աշխարհով մեկ: Նրանցից շատերն ապրում են Անդրկովկասում, հյուսիս-արևմտյան Պարսկաստանում և արևելյան Թուրքիայում, ինչպես նաև ամբողջ Միջին Ասիայի տարածքում: Համարվում է, որ նրանց քանակը մոտ երեք միլիոն է: Նրանց մեծ մասը նեստորականներ են, այսինքն չեն ընդունում Հիսուս Քրիստոսի աստվածային բնույթը, մնացածները վահաբականներ են, կաթոլիկներ, գրիգորյաններ: Նրանց մեջ նաև կան սատանայապաշտներ, սակայն մեծ թիվ չեն կազմում:

Վերջին ժամանակներում տարբեր կրոնների քարոզիչներ հաճախ փորձում են այստրներին իրենց հավատքին դարձնել, սակայն արժանին պետք է մատուցել այսօրներին. նրանք ոչ միայն ձևացնում են, թե դավանափոխ են եղել, այլև կարողանում են նյութական շահ կորզել դրանից, ինչն արդեն խոսելիք է դարձել ուրիշ ազգերի միջավայրում: Անկախ կրոնական տարբերություններից՝ դավանափոխության այդ ամբողջ մրցավազքը կառավարվում է Արևելյան Հնդկաստանից:

Այստրներն ապրում են ոչ մեծ գյուղակներում, իշխանական գործառույթներն իրականացնում են հոգևոր անձինք: Մի քանի գյուղակներ կազմում են ցեղական համայնք, որը կառավարում է իշխանը, կամ, ինչպես իրենք են ասում, մելիքը: Բոլոր մելիքները ենթարկվում են նահապետին, որի իշխանությունը ժառանգաբար փոխանցվում է հորեղբորից եղբորորդուն. ընդունված է համարել որ այն սկիզբ է առել Միմոնից՝ Հիսուս Քրիստոսի եղբորից: Հարկ է հիշատակել, որ այստրները խիստ տուժել են առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ խաղալիք դառնալով ռուսական ու անգլիական քաղաքական գործիչների ձեռքին: Յուրաքանչյուր երկրորդ այստրն սպանվել է քրդերի և պարսիկների վրիժառությունից, իսկ կենդանի մնացածները փրկվել են միայն ամերիկյան հյուպատոս դոկտոր Յ.-ի գործողությունների շնորհիվ: Եթե այդ պատվարժան մարդը դեռ ապրում է, ապա հարկ է, որ այստրները պատվո պահակ կանգնեն նրա տան դռանը, իսկ եթե արդեն մեռած է, ապա արժե, որ նրա արձանը կանգնեցնեն իր հայրենիքում:

Այն ժամանակահատվածում, երբ ես և Պողոսյանը պատրաստվում էինք դուրս գալ գիտարշավի, տեղի հայերի շրջանում թափ էր առնում ազգային հիմքով քաղաքական շարժում: Հայերի շուրթերին այն մարդկանց անուններն էին, որոնք կոչվում էին Հայաստանի ազատագրության համար. հատկապես հաճախ էր լսվում պատանի Անդրանիկի անունը, որը հետագայում դարձավ ազգային հերոս:

Ամենուրեք ինչպես Թուրքիայի ու Պարսկաստանի, այնպես էլ Ռուսաստանի հայերը կազմավորում էին քաղաքական կազմակերպություններ, որոնք, սակայն, այդպես էլ չկարողացան համախմբվել: Դրսից տարվող քաղաքականությունը, որի հիմնական նշանաբանն էր՝ «բաժանիր, որ տիրես», երկպառակություն մտցրեց ազգային ազատագրական շարժման կողմնակիցների շարքերում:

Մի անգամ՝ վաղ առավոտյան, երբ ես սովորականի պես գնում էի Արփաչայ գետում լողանալու, կես ճանապարհին՝ Կարակուլի կոչվող վայրում իմ հետևից հասավ Պողոսյանը և հայտնեց, որ մի օր առաջ՝ վանահայր Ջ.-ի հետ զրուցելիս ինքը իմացել է, որ Հայկական կոմիտեն մտադիր է իր կուսակցության անդամների թվից կամավորներ հավաքագրել և հատուկ առաքելությամբ նրանց ուղարկել Մուշ:

«Իմ գլխում միտք ծագեց,– շարունակեց Պողոսյանը,– որ մենք կարող ենք այդ հանգամանքից օգտվել մեր նպատակներին հասնելու համար, այսինքն՝ դրանից օգտվելով փորձենք գտնել դեպի Մարմունգյան եղբայրություն տանող ճանապարհը»:

Ես նրան ընդհատեցի՝ հիշեցնելով, որ նախ՝ մենք այդ կուսակցության անդամներ չենք, և երկրորդ ... Բայց նա չթողեց, որ խոսքս շարունակեմ՝ բացատրելով, որ գիտի, թե այդ ամենն ինչպես դասավորել, և որ հիմա ինքը միայն ուզում է իմանալ՝ համաձայն եմ ես իր պլանին, թե՞ ոչ:

Ես պատասխանեցի, որ գլխավորը հայտնվելն է այնտեղ, որտեղ ձգտում ենք լինել, և ինձ չեն հետաքրքրում այն հանգամանքները, որոնցում դա տեղի կունենա: Որպեսզի հայտնվեմ այն դաշտավայրում, որն ինչ-որ ժամանակ Իզրումին է կոչվել, ես պատրաստ եմ հոգիս ծախել սատանային կամ նույնիսկ հոգևորական Վլասովին (Պողոսյանը գիտեր, որ ես այդ մարդուն տանել

չեմ կարողանում և միշտ ջանում եմ, որ մեր միջև եղած հեռավորությունը մեկ մղոնից հանկարծ չպակասի):

«Եթե դու կարող ես այդ գործը գլուխ բերել,- շարունակեցի ես,- ապա վարվիր քո ուզածի պես, իսկ ես կանխավ համաձայն եմ ամեն ինչին. միայն թե արդյունքում հայտնվենք այնտեղ, որտեղ ձգտում ենք հասնել»:

Ես չգիտեմ, թե ինչ քայլեր ձեռնարկեց Պողոսյանը, բայց արդյունքում այդ հատուկ առաքելության համար մենք մեր ձեռքին ունեցանք վստահելի անձանց հասցեագրված նամակներ, ռուսական, թուրքական ու պարսկական տարադրամներով որոշակի գումար, ինչպես նաև երաշխավորագրեր՝ այն վայրերում ապրող մարդկանց անուններով, որտեղով պետք է անցեր մեր ճանապարհը: Եվ այսպես, Ալեքսանդրապոլից մենք շարժվեցինք Քալիշմանի ուղղությամբ և երկու օր հետո հասանք Արաքս գետին՝ Թուրքիայի և Ռուսաստանի բնական սահմանին: Մեզ օգնության ուղարկված մի քանի քրդերի օգնությամբ գետանց կատարելուց հետո մենք որոշեցինք, որ գլխավոր դժվարությունները հետևում ենք թողել, և հետագա ճանապարհին ավելի հեշտ կանցնենք:

Մենք հիմնականում ոտքով էինք գնում՝ զիջերելու համար կանգ առնելով հովիվների ու այն մարդկանց մոտ, որոնց անունով երաշխավորական նամակներ ունեինք:

Թեև մեր հնարավորության սահմաններում մենք կատարում էինք մեր առաքելությունը, բայց ոչ մի րոպե չէինք մոռանում մեր ճամփորդության գլխավոր նպատակի մասին, որի երթուղին ոչ միշտ էր համընկնում մեզ ուղարկած մարդկանց նախագծածի հետ, և դրա համար բոլորովին խղճի խայթ չէինք զգում:

Ռուսաստանի սահմանն անցնելուց հետո մենք որոշեցինք անցնել Էզրի-դաղ լեռնագագաթով: Դա ամենադժվար երթուղին էր, բայց մեզ հնարավորություն էր տալիս խուսափելու քրդերի և թուրքերի անհաշիվ ավազակախմբերից, որոնք հետապնդում էին հայերին: Լեռնանցքը հատելուց հետո մենք մեր ճամփան ծռեցինք դեպի հարավ՝ Վանա լճի ուղղությամբ՝ աջ կողմում թողնելով Տիգրիս և Եփրատ գետերի ակունքները:

Մեր այդ ճամփորդության ընթացքում մենք հազարավոր արկածներ ունեցանք. ես դրանց վրա կանգ չեմ առնի, բայց պատահարներից մեկը շատ լավ հիշում եմ մինչև հիմա: Դրանից շատ տարիներ են անցել, հիմա այն հիշելը ուրախ ժպիտ է առաջացնում, բայց վտանգը, որ այն ժամանակ կախվել էր մեր գլխին, չափազանց լուրջ էր:

Հետագայում ես մի անգամ չէ, որ հայտնվել եմ այնպիսի իրադրությունների մեջ, որոնք ինձ համար կարող էին աղետալի վախճան ունենալ. բառիս բուն իմաստով ես հայտնվել եմ ուղիղ նշանառության առաջ, լեռնային կաճանով անցնելիս հանդիպել եմ որսի դուրս եկած թուրքեստանյան վագրի, բայց այն, ինչի մասին հիմա ուզում եմ պատմել, միաժամանակ և՛ ահավոր էր, և՛ ծիծաղաշարժ: Մենք, քթի տակ երգելով, անհոգ քայլում էինք, երբ որտեղից-որտեղ հանկարծ ճանապարհին հայտնվեց մի հսկա շուն, հետո՝ երկրորդը, երրորդը... ընդհանուր հաշվով մի տասնհինգ հատ, որոնք շրջապատեցին մեզ և սկսեցին հաչել ու գոմալ: Պողոսյանը բնագործն քար վերցրեց և շպրտեց նրանց վրա, որից հետո նրանք հարձակման անցան: Դրանք քուրդ հովիվների շներն էին խոշորակազմ ու չարանենգ կենդանիներ, որոնք մի ակնթարթում մեզ պատառ-պատառ կանեին, եթե ես, Պողոսյանին հրելով, չստիպեի նստել գետնին՝ ինքս նույն կերպ վարվելով: Դրանից հետո շները հանդարտվեցին և նստոտեցին մեր շուրջը:

Երբ որոշ ժամանակ անց ուշքներս տեղը եկավ, կարողացանք գիտակցել մեր դրության ամբողջ ծիծաղաշարժությունը և սկսեցինք քրքջալ: Իսկապես, շատ ծիծաղելի վիճակ էր. քանի դեռ մենք նստած էինք մնում, շներն էլ էին նստած մնում. հաճույքով կերան մեր տված հացը, բայց հենց որ փորձեցինք վեր կենալ, նորից գոմալով հարձակվեցին: Այդպես մի քանի ժամ անցնելուց հետո այլևս ծիծաղելու սիրտ չունեինք՝ Վեր կենալու մեր բոլոր փորձերը նույն ավարտն էին ունենում, ուստի մենք որոշեցինք այլևս ռիսկի չդիմել և հնազանդորեն սպասել դրսից եկող փրկության: Ես չգիտեմ, թե էլի որքան կմնայինք այդ խղճուկ վիճակում, եթե հեռվում մի քուրդ աղջնակ չհայտնվեր, որն իր իշուկի սանձից բռնած՝ աթար էր հավաքում: Զանազան նշաններ անելուց հետո մեզ բարեբախտաբար հաջողվեց գրավել նրա ուշադրությունը: Պատահածը հասկանալուց հետո նա վազեց այդ շների տեր հովվի մոտ, որը մոտակա բլրի այն կողմում էր գտնվում: Վերջինս կենդանիներին իր մոտ կանչեց, բայց երբ մենք դրանց բավարար չափով հեռանալուց հետո վերջապես որոշեցինք ոտքի կանգնել, այդ չարանենգ արարածները նորից խեթ նայեցին մեզ՝ կրճտացնելով իրենց ահռելի ժանիքները:

Մեր այն հույսը, թե Արաքսն անցնելուց հետո կազատվենք վտանգների մեծ մասից, սին պատրանք դուրս եկավ: Իսկական դժվարությունները դեռ նոր էին սկսվում: Մենք գտնվում էինք այստրներով բնակեցված մի շրջանում, որտեղ հայի համար մարդկանց հանդիպելն ավելի վտանգավոր էր, քան շների: Այդ տեղանքում բոլոր ազգերը, խոսքները մեկ արած, հետապնդում էին հայերին: Մակայն որպես պարսիկ կամ թուրք ներկայանալը նույնպես անվտանգ չէր: Ամենալավը ռուս կամ հրեա ձևանալն էր, ինչը մեր արտաքինին հարմար չէր գալիս: Արտասահմանցի ձևանալը կրկին լավագույն լուծում չէր լինի. վստահելի աղբյուրներից ես լսել էի, որ մի քանի անգլիացու կաշիները քերթել էին սոսկ այն պատճառով, որ փորձել էին հնէաբանական պեղումներ կատարել:

Երկարատև քննարկումից հետո մենք որոշեցինք որպես կովկասյան թաթարներ ներկայանալ և մեր հագուստները համապատասխան ձևի փոխփխելուց հետո շարունակեցինք մեր ճանապարհը:

Արաքսն անցնելուց ուղիղ երկու ամիս հետո մենք հասանք Ջ. քաղաքը, որի մյուս կողմում գտնվող կիրճն անցնելուց հետո պետք է թեքվեինք դեպի Սիրիայի սահմանը: Բայց հենց այդ կողմերում հայտնի ջրվեժի շրջակայքում, մենք հույս ունեինք գտնել այն վայրը, որը մեր երկարատև ճամփորդության իսկական նպատակակետն էր: Մենք բավականաչափ ժամանակ ունեցանք, որպեսզի հարմարվենք այն դժվարություններին, որոնց անընդհատ բախվում էինք. այդքանից հետո ամեն ինչ հարթ էր ընթանում, քանի դեռ չպատահեց մի դեպք, որը մեզ ստիպեց փոխել մեր բոլոր պլանները:

Շերթական դադարի ժամանակ, երբ քաղցներս հագեցնում էինք ճանապարհից գնած աղ դրած տառեխով, Պողոսյանը հանկարծ ճչալով տեղից վեր թռավ: Ես սարսափով նրա կողքին տեսա մի մեծ դեղին մորմ: Սպանեցի և սկսեցի զբաղվել տուժածով: Կծած տեղը ոտքի վրա էր: Ես գիտեի, որ մորմազգիներին պատկանող այդ միջատի խայթոցը հաճախ մահացու է լինում, ուստի խայթոցի մասում հագուստը պատռեցի, որպեսզի թույնը վերքից արտածվեր դուրս: Բայց հիշեցի, որ այդ թույնը կարող է նաև ինձ վնասել, եթե շրթունքներիս կամ բերանիս մեջ թեկուզ փոքրիկ քերծվածք ունենամ: Այդ ամենը հաշվի առնելով՝ ես դանակով կտրվածք արեցի խայթած տեղում: Հուզմունքիս և անփորձությանս պատճառով կտրվածքը չափազանց խոր ստացվեց: Երբ մահվան ելքի վտանգն անցած էր, ես հանգիստ շունչ քաշեցի, լվացի ու կապեցի վերքը՝ աշխատելով այդ ամենն անել շատ խնամքով: Վերքը շատ խորն էր, և արյան մեծ կորստի պատճառով կարող էին տարբեր բարդացումներ լինել: Ճանապարհը շարունակելու մասին խոսք անգամ չէր կարող լինել. Պետք էր որոշել, թե հետո ինչ անել:

Իրավիճակը քննարկելուց հետո մենք հանգեցինք այն եզրակացության, որ այդ գիշեր կմնանք տեղում, իսկ առավոտյան հնարավորություն կփնտրենք երեսուն մղոն հեռավորության վրա գտնվող Ն. քաղաքը հասնելու համար, որտեղ գտնվում էր այն վանականը, որին պետք է ուղերձ հանձնեինք: Նախքան դեպքը մենք մտադիր չէինք դա անելու, քանի որ Ն. քաղաքը գտնվում էր մեր նախընտրած այն ուղուց դուրս, որը մեզ պետք է հասցներ մեր իսկական նպատակին:

Հաջորդ օրը մենք դիմեցինք պատահաբար մեր մոտով անցնող մի քուրդ ծերունու օգնությանը, որը շատ բարյացակամ մարդ դուրս եկավ: Մոտակա գյուղակից մենք վարձեցինք երկու եզ լծած մի երկանիվ սայլակ, որն այնտեղ օգտագործվում էր գումաղբ տեղափոխելու համար. Պողոսյանին տեղավորեցինք դրա վրա և շարժվեցինք դեպի Ն. քաղաքը: Տեղ հասնելը մեզնից խլեց համարյա երկու օր, քանի որ ստիպված էինք դադար առնել ամեն չորս ժամը մեկ, որպեսզի կերակրենք եզներին: Քաղաք հասնելուն պես մենք գնացինք այն հայ վանականի մոտ, որին պետք է նամակ հանձնեինք: Նա մեզ շատ սրտաբաց ընդունեց և, երբ իմացավ, թե ինչ դժբախտություն է պատահել Պողոսյանին, առաջարկեց մնալ իր տանը: Մենք երախտագիտությամբ ընդունեցինք այդ առաջարկը, քանի որ տուժածի ջերմությունը բարձրացել էր, վերքը թարախակալել էր և ուշադիր խնամք էր պահանջում: Հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ մեզ վիճակվեց այդ բարի մարդու հյուրընկալությունից օգտվել ամբողջ մի ամիս:

Այդ վանականի հետ այդքան երկար ժամանակ միևնույն տանիքի տակ ապրելու ընթացքում մենք լավ մտերմացանք և զրուցում էինք տարբեր թեմաներով: Մի անգամ նա ինձ պատմեց, որ իր մոտ մի շատ հին մագաղաթ կա, որը շատ հետաքրքիր պատմություն ունի: Այդ մագաղաթը, որի վրա ինչ-որ անհայտ վայրի քարտեզ հիշեցնող պատկերներ կան, անհիշելի ժամանակներից պահվում է իրենց ընտանիքում, և իրեն որպես ժառանգություն է հասել իր ապուպայից:

«Մի տարի առաջ,– շարունակեց իր պատմությունը վանականը,–մի անծանոթ եկավ իմ տուն և խնդրեց ցույց տալ մագաղաթը: Ես զարմացած էի, որ նա տեղյակ է այդ քարտեզի գոյության մասին, և

քանի որ այդ ամենն ինձ շատ կասկածելի թվաց, սկզբում մերժեցի և անգամ ժխտեցի, որ այդպիսի բան կա ինձ մոտ: Բայց անձանոթը շատ համառեց, և ես տեղի տվեցի: Նա մանրակրկիտ գննեց մագաղաթը, ապա հարցրեց, թե արդյոք դա չե՞մ վաճառի երկու հարյուր թուրքական ֆունտով: Դա բավական շոշափելի գումար էր, բայց ես այդ ժամանակ փողի կարիք չունեի և մերժեցի առաջարկը՝ չցանկանալով բաժանվել մի բանից, որը թանկ հիշատակ էր իմ նախնիներից:

Այդ մարդը գիշերեց մեր բեկի տանը, իսկ հաջորդ առավոտյան բեկի ծառան եկավ և այդ անձանոթի անունից մագաղաթի համար առաջարկեց այս անգամ արդեն հինգ հարյուր ֆունտ:

Պետք է ասեմ, որ մենակ մնալով և մտածելով այդ գործի մասին՝ ես էլ ավելի էի խճճվել: Ակնհայտ էր, որ այդ մարդը երկար ճանապարհ էր անցել այստեղ հասնելու համար, բայց ինձ համար անհասկանալի էր մնում, թե ինչպես է նա իմացել այ մագաղաթի գոյության մասին, և վերջապես, հանելուկային էր այն հետաքրքրությունը, որ անձանոթը դրսևորում էր այդ մագաղաթի նկատմամբ: Այդ ամենն ինձ դրդում էր մտածելու, որ ես շատ թանկ մի բանի տեր եմ: Հինգ հարյուր ֆունտ գումարն, իհարկե, հրապուրում էր ինձ, բայց ես դեռևս տատանվում էի՝ վախենալով դա ավել էժան տալ, քան իրականում արժե: Արդյունքում որոշեցի զգուշություն ցուցաբերել և կրկին մերժեցի գործարքը:

Երեկոյան անձանոթը կրկին այցելեց ինձ, բայց այս անգամ՝ բեկի ուղեկցությամբ: Նա կրկնեց հինգ հարյուր ֆունտի իր առաջարկը, և ես կրկին կտրականապես մերժեցի: Բայց, բեկի նկատմամբ հարգանքից դրդված, երկու զրուցակիցներիս հրավիրեցի տուն և սուրճ հյուրասիրեցի: Զրույցի ընթացքում պարզվեց, որ կասկածելի անձանոթը ռուս իշխան է, որը հետաքրքրվում է հինավուրց հազվագյուտ իրերով, և, քանի որ իմ մագաղաթը շատ լավ կլրացներ նրա հարուստ հավաքածուն, նա ինձ այդպիսի գումար է առաջարկում, որն իր կարծիքով շատ ավելին է, քան իրականում այդ իրն արժե:

Բեկը, որին հետաքրքրեց մեր զրույցը, ցանկություն հայտնեց տեսնելու այդ իրը, որի համար այդպիսի մեծ գումար է առաջարկվում: Երբ մագաղաթը բերեցի և ցույց տվեցի նրան, նա շատ զարմացավ, որ անհասկանալի գրություններ պարունակող ինչ-որ մի փաթույթ կարող է այդքան թանկ արժենալ: Հետագա զրույցի ընթացքում իշխանը հանկարծակի ինձ հարցրեց, թե ի՞նչ գումարի դիմաց թույլ կտամ, որ այդ փաստաթուղթը պատճենահանվի: Ես դժվարացա պատասխանել այդ անսպասելի առաջարկին՝ վախենալով զրկվել շահավետ գործարքից: Այնժամ նա ասաց, որ համաձայն է երկու հարյուր ֆունտ տալ պատճենը հանելու դիմաց: Ես ամաչեցի այլևս սակարկել, քանի որ ինձ այնպես թվաց, թե նա նշանակալի գումար է առաջարկում տառացիորեն ոչնչի համար, և, իհարկե, հաճույքով համաձայնեցի:

Երբ հաջորդ առավոտյան իշխանը եկավ ինձ մոտ, մենք մագաղաթը փռեցինք սեղանի վրա, յուղ քսեցինք մակերևույթին, ապա ջրի ոչ մեծ քանակությամբ շաղախված ալեբաստրի փոշի, որն իշխանը բերել էր իր հետ, և պատճենը հանեցինք: Իշխանը դա խնամքով փաթաթեց իմ տված ջեջիմի կտորի մեջ, վճարեց ու հեռացավ: Այնպես որ, Տերը ողորմաձաբար ինձ ուղարկեց երկու հարյուր ֆունտ և թույլ տվեց, որ մեր ընտանեկան սրբությունը մնա ինձ մոտ»:

Հայ հոգևորականի պատմությունն ինձ շատ հետաքրքրեց, բայց ես դա որևէ կերպ չարտահայտեցի, և երբ ուրիշ բանի մասին էինք խոսում, կարծես իմիջիայլոց խնդրեցի, որ ցույց տա այդ շատ թանկ գնահատված բանը: Վանականը գնաց եկեղեցի և այնտեղից բերեց մագաղաթը: Երբ նա փաթույթը բացեց, ես սկզբում չկարողացա ջոկել, թե ինչ է պատկերված դրա վրա, բայց երբ ավելի ուշադիր գննեցի, հազիվ զսպեցի ինձ, որ հիացմունքից չգոռամ: Տե՛ր աստված... Ես երբեք չեմ մոռանա, թե ինչ զգացմունքներ ունեցա այդ պահին: Չանալով թաքցնել հուզմունքս՝ ես իմ ձեռքում բռնել էի այն վայրի հինավուրց քարտեզը, որն այդքան ամիսների ընթացքում փնտրում էի՝ դրա մասին երազելով երկար ու անքուն գիշերներով: Ինձնից մեծ ջանքեր պահանջվեցին, որ զսպեմ ձեռքերիս դողը և շարունակեմ սովորական զրույցը: Երբ վանականը կրկին մագաղաթը փաթաթեց ու տարավ, ես, նրա հետևից նայելով, ափսոսացի, որ հարուստ ռուս իշխան չեմ և չեմ կարող երկու հարյուր ֆունտ վճարել մագաղաթը պատճենահանելու համար:

Բայց այդ քարտեզն ինձ մոտ ունենալու ցանկությունս այնքան մեծ էր, որ ես որոշեցի ամեն գնով ստանալ դրա պատճենը: Այդ ժամանակ Պողոսյանն արդեն անհամեմատ լավ էր զգում իրեն: Մեր օգնությամբ սանդղահարթակ դուրս գալով, նա երկար ժամանակ նստում էր արևի տակ և հիանում շրջակա գեղեցիկ տեսարաններով: Ես նրան խնդրեցի ինձ տեղյակ պահել, թե երբ է վանականը երկար ժամանակով տնից գործով բացակայում: Հենց հաջորդ օրն ինձ հաջողվեց գաղտնի մտնել ընտանեկան

սրբությունների սենյակը, որտեղ սնդուկի մեջ մագաղաթն էր դրված: Առաջին անգամ ինձ չհաջողվեց բանալի հարմարեցնել այդ սնդուկի համար, բայց երրորդ անգամից հաջողվեց: Մի ուրիշ անգամ երեկոյան՝ մեր այդտեղից մեկնելուց երկու օր առաջ, երբ վանականը երկար ժամանակով բացակայում էր, ես կրկին մտա այնտեղ, մագաղաթը հանեցի և տարա սենյակ, կիսաթափանցիկ թղթի վրա արտանկարեցի այն ամենը, ինչ կար դրա վրա և իմ այդ պատճենը խնամքով կարեցի հագուստիս ծալքի մեջ: Այնուհետև մագաղաթը հետ տարա և դրեցի իր նախկին տեղում:

Ես վառվում էի այն ցանկությամբ, որ անհապաղ գնամ և գտնեմ քարտեզում պատկերված վայրը. ուրիշ ոչ մի բանի մասին չէի մտածում:

Ոմանք կարող են հյուրընկալ հայ վանականի նկատմամբ իմ այդ արարքը պախարակելի համարել, բայց ես կարծում եմ, որ այն արժանի է որոշակի ներողամտության՝ հաշվի առնելով այն կիրքը, որն ինձ դրդեց այդ քայլին:

Ես համոզեցի Պողոսյանին, որ ավելի լավ է ժլատություն չանենք և տեղական ցեղի երկու թամբած ձի գնենք, որոնք շատ փափուկ վարճ ունեն, և ճանապարհ ընկնենք սիրիական սահմանի ուղղությամբ: Ճանապարհին մենք իսկապես հնարավորություն ունեցանք ըստ արժանվույն գնահատելու ձիերի այդ ցեղի առանձնահատկությունը: Նրանք այնքան սահուն էին վազում, որ ամենաուժեղ վարճի ընթացքում կարելի էր ձեռքում ջրով լիքը բաժակ բռնել և ոչ մի կաթիլ չթափել:

Ես չեմ նկարագրի մեր այդ ճամփորդության բոլոր մանրամասները, միայն կասեմ, որ հյուրասեր հայ վանականին հրաժեշտ տալուց ուղիղ մեկ ամիս անց մեզ հաջողվեց հասնել Զմյուռնիա քաղաքը, որտեղ նույն օրվա երեկոյան մասնակիցները դարձանք մի իրադարձության, որը շրջադարձային կետ դարձավ Պողոսյանի ճակատագրում:

Որպեսզի մի լավ հանգստանանք, զվարճանանք և ինքներս մեզ վարձահատույց լինենք մեր կրած բոլոր դժվարությունների դիմաց, մենք որոշեցինք երեկոյան կողմ գնալ հունական ռեստորաններից մեկը: Այնտեղ, առանց շտապելու նշանավոր «տուզիկո» ըմպելով և ձկնից ու մսից պատրաստված զանազան համեղ խորտիկներ ճաշակելով, մենք խաղաղ գրուցում էինք՝ մտաբերելով մեր դեգերումների ժամանակ ունեցած ապրումները: Մեզնից բացի ռեստորանում բավական շատ հաճախորդներ կային՝ հիմնականում նավամատույցում կայանած արտասահմանյան նավերի նավաստիներ: Նրանք բավականին շատ էին աղմկում. երևում էր, որ դա առաջին հաստատությունը չէր, որ նրանք հասցրել էին լինել այդ օրվա ընթացքում:

Տարբեր սեղանների շուրջ նստած և տարբեր երկրներ ներկայացնող նավաստիների միջև ժամանակ առ ժամանակ վեճեր էին ծագում, որոնք սկսվում էին հունարեն և իտալերեն համապատասխան հայեցողությունների փոխանակությամբ և վերջո վերածվում էին ծեծկոտուքի: Արդեն չեմ հիշում՝ հատկապես ինչ վիրավորանք էր դա, որ այդպիսի բուռն արձագանք առաջացրեց, բայց հարևան սեղանի շուրջ նստած նավաստիների մի մեծ խումբ հանկարծակի վեր թռավ տեղից և կատաղի բացականչություններով ու սեղմած բռունցքներով վրա պրծավ վիրավորանք հասցնողների վրա: Ակնթարթորեն իսկական կատաղի ճակատամարտ սկսվեց: Ես ու Պողոսյանը նույնպես գրգռվել էինք կրքերի այդ բուռն հորդումից և միացանք փոքրամասնություն կազմող խմբին՝ անգամ չհետաքրքրվելով, թե այդ խմբերից որն է ճիշտ, որը՝ սխալ: Երբ ռեստորանի չեզոք հաճախորդներին ու մոտակայքով անցնող զինվորական հսկիչների խմբին վերջապես հաջողվեց կռվողներին իրարից բաժանել, պարզվեց, որ բոլորիս էլ տեղը տեղին բաժին է հասել. իմ ձախ աչքը զարդարում էր մի խոշոր կապտուկ, իսկ Պողոսյանը, հայերեն անեծքներ շող տալով, բողոքեց կրծքի անտանելի ցավից:

Երբ, ինչպես նավաստիներն են ասում, «փոթորիկը հանդարտվեց», մենք որոշեցինք, որ մի երեկոյի համար այդքան արկածները լիովի բավական են և երեսներս դարձրինք դեպի տուն: Չէի ասի, թե ճանապարհին աչքի ընկանք շատախոսությամբ: Իմ ուռած, չբացվող աչքն ու Պողոսյանի վնասված կողը սիրալիրություններ փոխանակելու չէին տրամադրում:

Շաջորդ առավոտյան՝ հայելու մեջ մեր արտացոլանքները քննադատաբար դիտելուց և ինքերս մեզ երեկվա դեպքի համար մի լավ դատափետելուց հետո, մենք որոշեցինք չձգձգել դեպի Եգիպտոս մեր ուղևորությունը:

Մտածեցինք, որ նավով երկարատև ճամփորդության ժամանակ ծովից փչող թարմ օդն ավելի արագ կբուժի մեր վերքերը, ուստի գնացինք նավահանգիստ, որպեսզի իմանանք՝ արդյո՞ք մնացած փողներս կհերիքի նավի տոմս առնելու և Ալեքսանդրիա մեկնելու համար: Պարզվեց, որ հենց այդ ժամանակ նավահանգստում մի հունական նավ է կանգնած, որը պատրաստվում է Ալեքսանդրիա

մեկնել: Մենք շտապեցինք դեպի այն շոգենավային ընկերությունը, որին պատկանում էր այդ նավը, որպեսզի անհրաժեշտ տեղեկություններ ստանանք: Բայց հենց որ մոտեցանք գրասենյակին, մեզ մոտ վազեց մի նավաստի և ինչ-որ բան փնթփնթալով՝ սկսեց թափահարել ձեռքերը:

Սկզբում մենք շփոթության մեջ ընկանք, բայց որոշ ժամանակ անց պարզվեց, որ նա այն անգլիացի նավաստիներից մեկն է, որոնց կողմից երեկ երեկոյան մենք մասնակցեցինք կռվին: Նշանացի նա մեզ հասկացրեց սպասել, վազեց ինչ-որ տեղ և հետ եկավ ևս երեք հոգու հետ, որոնցից մեկը, ինչպես հետագայում պարզվեց, սպա էր: Նրանք մեզ ջերմորեն շնորհակալություն հայտնեցին երեկվա մեր արարքի համար և պնդեցին, որ միասին գնանք մոտակա հունական ռեստորանը և իրար հետ մի-մի բաժակ «տուզիկո» խմենք ու գրուցենք: Դրվատելով հին հույների օրհնյալ մաստիկայի այդ ժառանգին՝ մենք գրուցեցինք, իհարկե, բացատրվելով հիմնականում միջազգայնորեն ընդունված շարժումների ու դիմախաղերի լեզվով: Երբ նրանք իմացան, որ ուզում ենք Ալեքսանդրիա հասնել, նրանց արտահայտչամիջոցներն առավել ակտիվացան: Մի պահ մեզ թվաց, թե նրանք մոռացան մեր մասին՝ հուզված իրար մեջ ինչ-որ բան քննարկելով: Անսպասելիորեն նրանցից երկուսը մի կուռով կուլ տվին բաժակի տակ մնացածը և հեռացան, իսկ մնացածները, իրենց արտահայտչամիջոցներից ակտիվորեն օգտվելով, կարծես թե ուզում էին մեզ ինչ-որ բան համոզել:

Վերջապես կարծես թե գլխի ընկանք, թե նրանք ինչ են ուզում ասել մեզ: Եվ, ինչպես հետագայում պարզ դարձավ, ճիշտ էինք գլխի ընկել. այն երկուսը, որ հանկարծակի հեռացել էին, գնացել էին իրենց նավը, որպեսզի մեզ համար ուղերթի թույլտվություն ստանան: Հաջորդ օրը նավն ուղղություն պետք է վերցնեք դեպի Սիցիլիա, այնտեղից հասնեք Ալեքսանդրիա, որտեղից էլ, երկշաբաթյա կայանումից հետո, պետք է մեկնեք Բոմբեյ:

Սպասելով այդ երկուսի վերադարձին՝ մենք շարունակում էինք բաժակ դատարկելու գործը, երբ հանկարծ Պողոսյանը, հավանաբար հիշելով իր ջարդված կողի մասին, սկսեց համոզել, որ վերադառնանք տուն: Նա ամենալուրջ տոնով պնդում էր, թե իմ տեսքն ահավոր է, քանի որ մյուս աչքս էլ է սկսում ուռչել:

Ենթադրելով, որ ընկերս մորմի խայթոցից հետո դեռ կարգին ուշքի չի եկել՝ ես չուզեցի հակաճառել նրան և, ոչ մի բացատրություն չտալով բաժակակիցներիս, հետևեցի նրան:

Տարակուսելով մեր անսպասելի և լուռ հեռացման կապակցությամբ՝ նավաստիները նույնպես վեր կացան ու եկան մեր հետևից: Մենք բավական երկար քայլեցինք՝ ամեն մեկս յուրովի զվարճանալով. մեկը քթի տակ երգում էր, մյուսը ձեռքերն այնպես էր թափահարում, կարծես ինչ-որ մեկին բան է ուզում ապացուցել, երրորդն էլ զինվորական մարշ էր շվշվացնում:

Երբ տեղ հասանք, Պողոսյանն առանց հանվելու պառկեց մահճակալին, իսկ ես, տեղս զիջելով մեզ ուղեկցած նավաստիներից ավագին, մեկնվեցի հենց հատակին՝ մյուս նավաստուն նշանացի առաջարկելով հետևել իմ օրինակին:

Գիշերը մի պահ ես արթնացա ցավից տրաքվող գլխով և աղոտ վերհիշեցի անցած օրվա դեպքերի հաջորդականությունը, ապա, տեսնելով, որ նավաստիներն արդեն սենյակում չեն, նորից քնով անցա: Արթնացա ամանեղենի զրնգոցից. Պողոսյանն իր համար թեյ էր պատրաստում՝ կիսաձայն ինչ-որ սաղմոսներ երգելով: Բայց այդ առավոտ մենք թեյ չխմեցինք, այլ առանց մի բառ փոխանակելու կրկին պառկեցինք քնելու: Կյանքումս երբեք ինձ այդպես վատ չէի զգացել. բերանիս մեջ այնպիսի համ էի զգում, կարծես այնտեղ ամենաքիչը մի դյուժին կազակ էր գիշերել իրենց ձիերի հետ: Հանկարծ սենյակի դուռը բացվեց, և ներս մտան երեք անգլիացի նավաստիներ: Նրանցից միայն մեկն էր մեզ ծանոթ, մյուս երկուսին առաջին անգամն էինք տեսնում: Իրար ընդհատելով ու ձեռքները թափահարելով՝ նրանք փորձում էին մեզ ինչ-որ բան բացատրել: Մենք լարեցինք մեր բոլոր մտավոր կարողությունները, որոնք խիստ թուլացել էին ակոհոլի ազդեցությունից, և վերջապես հասկացանք, որ պետք է արագորեն հագնվենք և իրենց հետ գնանք նավ, քանի որ թույլտվություն էին ստացել մեզ վերցնելու նավի վրա՝ որպես օժանդակ աշխատուժ:

Մինչ մենք հագնվում էինք, նավաստիներն արագորեն կապկպեցին մեր աղքատիկ իրեղենը, և երբ վճարեցինք հյուրանոցի տիրոջը, ամեն ինչ արդեն պատրաստ էր: Մենք դուրս եկանք փողոց և գնացինք դեպի նավահանգիստ: Ափի մոտ երկու նավաստիներով մի շոգենավույկ կար, որը, հավանաբար, մեզ էր սպասում. մենք տեղավորվեցինք դրա մեջ, իսկ կես ժամ հետո մոտեցանք մի մեծ ռազմանավի: Հազիվ էինք տախտակամած բարձրացել, երբ կամրջակի վրա կանգնած մի քանի

նավաստիներ վերցրին մեր իրեղենը և տաքան մեզ հասկացված նավախցիկը, որը գտնվում էր նավախոհանոցի մոտ:

Արագորեն այդ բավականին նեղ, բայց հարմարավետ ու մաքուր սենյակում տեղավորվելուց հետո այն երեք նավաստիներից մեկի ուղեկցությամբ, որոնց հետ ուս ուսի տված մարտնչել էինք հունական ռեստորանում, մենք բարձրացանք վերին տախտակամած: Մեր շուրջը խոնվել էր նավի համարյա ամբողջ անձնակազմը: Անկախ պաշտոնից ու կոչումից՝ բոլորն իրար ընդհատելով մեզ շնորհակալություն էին հայտնում մեր արիության ու օժանդակության համար՝ դա արտահայտելով ամենատարբեր լեզուների խառնուրդով:

Այդ յուրօրինակ զրույցի ժամանակ նավաստիներից մեկը, որը տանելի հունարեն գիտեր, առաջարկեց, որ իրար գոնե քսանական օտար բառ սովորեցնենք. ես ու Պողոսյանը նրանց թուրքերեն, իսկ իրենք մեզ՝ անգլերեն: Այդ առաջարկը բոլորը ոգևորությամբ ընդունեցին, և երկու նավաստիներ անմիջապես քսան անգլերեն բառերի ցուցակ կազմեցին, որոնք մենք պետք է սովորեինք առաջին հերթին, իսկ մենք էլ նրանց համար գրեցինք համապատասխան թուրքերեն համարժեքները:

Երբ նավին մոտեցավ նավապետի շոգեմակույկը, անձնակազմը ցրվեց, որպեսզի կատարեն իրենց պարտականությունները և պատրաստվեն մեկնելու: Ես ու Պողոսյանն անմիջապես ձեռնամուխ եղանք այդ անգլերեն բառերը սերտելու գործին, որոնք մեր հարմարության համար գրված էին հունարեն տառերով: Մենք այնքան էինք խորասուզվել այդ զբաղմունքի մեջ՝ ջանալով լավագույնս արտաբերել մեր ականջին օտար այդ հնչյունները, որ չնկատեցինք որ արդեն երեկո է, և մեր նավը վաղուց ճանապարհին է: Մենք դադար տվեցինք միայն այնժամ, երբ մեզ մոտ մտավ մի նավաստի և նշանացի բացատրեց, որ հասել է կերակուր ընդունելու ժամը: Ընթրիքից ժամանակ, հունարեն իմացող նավաստու հետ խորհրդակցելով, մենք որոշեցինք, որ ես զբաղվեմ նավի մաքրության գործով, իսկ Պողոսյանը զնա մեքենայական բաժանմունք: Այդպես էլ եղավ, և այստեղ ես այլևս կանգ չեմ առնի մեր այդ նավարկության մնացած մանրամասների վրա:

Երբ հասանք Ալեքսանդրիա, ես ջերմորեն հրաժեշտ տվեցի իմ նոր ընկերներին՝ շնորհակալություն հայտնելով իմ նկատմամբ ունեցած նրանց հոգածության ու հյուրընկալության համար և լքեցի նավը: Ես անհամբերությամբ ուզում էի հնարավորինս արագ հասնել Կիպրոս: Իսկ Պողոսյանը, որը նավարկության ընթացքում շատ էր մտերմացել նավի անձնակազմի հետ և շատ էր սիրել մեքենայական բաժանմունքի իր աշխատանքը, հրաժարվեց ինձ հետ գալ և որոշեց շարունակել նավարկությունը: Մենք պայմանավորվեցինք իրար հետ կապ պահպանել:

Ինչպես հետո իմացա, Պողոսյանը շարունակել էր իր աշխատանքը մեքենայական բաժանմունքում, հասել մինչև Բումբեյ, որից հետո՝ Ավստրալիայի շատ նավահանգիստներ: Նավը նա լքել էր Անգլիայում՝ Լիվերպուլում, և, հետևելով իր նոր ընկերների խորհրդին, ընդունվել էր տեխնիկական ինստիտուտ: Ջուզահեռաբար հարստացնելով իր անգլերենի իմացությունը՝ երկու տարի հետո նա դարձել էր նավագնացության բնագավառի բարձր որակավորում ունեցող մասնագետ:

Ավարտելով իմ առաջին ընկեր և համախոհ Պողոսյանին նվիրված այս գլուխը՝ ես ուզում եմ պատմել նրա բնավորության մի քանի գծերի մասին, որոնք նա ձեռք էր բերել դեռևս պատանի հասակում:

Ոչ ոք երբևէ չէր տեսել, որ Պողոսյանը ձեռքերը ծալած անգործ նստի: Նա միշտ իր համար մի այնպիսի զբաղմունք էր գտնում, որը կարող էր սնունդ տալ նրա գործուն ուղեղին: Ստիպողական պարապուրդն այնքան էր ճնշում նրան, որ սկսում էր ֆիզիկական վարժանքների պես ինչ-որ բաներ անել:

Մի անգամ, այլևս չդիմանալով, ես հարցրի նրան, թե ինչու՞ մնացած նորմալ մարդկանց պես չի կարողանում հանգիստ նստել և զվարճանալ, այլ ուժերը ծախսում է այնպիսի գործունեության վրա, որի դիմաց իրեն ոչ ոք չի վճարում:

«Եթե հիմա չեն վճարում, նշանակում է՝ հետագայում կվճարեն,– պատասխանեց նա:– Ես կատակ չեմ անում, ինձ համար աշխատանքը հաճույք է, թեև իմ բնույթով ես նույնպես ծույլ էի, ինչպես բոլոր մարդիկ: Բայց ես գիտակցաբար ինձ վարժեցրի սիրել աշխատանքը, քանի որ գիտակցված աշխատանքը միակ բանն է, որով մենք տարբերվում ենք կենդանիներից: Կամավոր գիտակցական աշխատանքը երբեք իզուր չի կորչում: Վաղ թե ուշ այն առատորեն կվարձատրվի: Մշտապես ինձ համար զբաղմունք գտնելով, ես ինձ հետ եմ վարժեցնում ծուլությունից, որը հատուկ է ամեն մարդու, և

միաժամանակ նաև ապրուստի միջոցներ եմ վաստակում, քանի որ իմ ծնողները չեն կարող ինձ ապահովել ամեն ինչով, որպեսզի ես պարապ կյանք վարեմ»:

Իր ամբողջ կյանքի ընթացքում նա անդավաճան կերպով հետևեց այդ սկզբունքներին և որոշ ժամանակ անց դարձավ աշխարհի ամենահարուստ մարդկանցից մեկը: Եվ ես կարող եմ երաշխավորել, որ նա իր վիթխարի հարստությունը ձեռք է բերել ազնիվ աշխատանքով: Նրա հավատն առ այն, որ համառ գիտակցական աշխատանքն առանց վարձատրության չի մնում, նրան չխաբեց: Նա իր ամբողջ կյանքում եզան պես աշխատեց, և ես հույս ունեմ, որ Տերը նրան ի վերջո կարժանացնի վաստակած հանգստի:

ԳԼՈՒԽ Ե **Աբրամ Ելով**

Պողոսյանից հետո Աբրամ Ելովն այն հիշարժան մարդկանցից մեկն է, որոնց հետ ճակատագրի բերումով ես հանդիպել եմ իմ հասունության նախապատրաստական շրջանում, և որոնք կամա թե ակամա «կենարար» ազդեցություն են ունեցել իմ անհատականության ձևավորման վրա:

Առաջին անգամ ես նրան հանդիպեցի, երբ կորցրի իմ ժամանակակիցներից այն հարցերի պատասխաններն ստանալու բոլոր հույսերս, որոնք խլել էին իմ հոգեկան անդորրը, և Էջմիածնից վերադարձա Թիֆլիս ու գլխովին խորասուզվեցի անտիկ գրականության ուսումնասիրության մեջ: Թիֆլիսն ինձ գրավում էր նրանով, որ այստեղ հնարավոր էր ցանկացած գիրք ճարել ցանկացած լեզվով, հատկապես՝ հայերեն, վրացերեն և արաբերեն:

Հասնելով Թիֆլիս՝ ես բնակություն հաստատեցի Դիդուբայ կոչվող շրջանում՝ Ալեքսանդրյան այգու արևմտյան մասում գտնվող մի փողոցում, որտեղի «Սոլդատսկի բազարում» հսկայական քանակությամբ զանազան խանութներ կային: Թիֆլիսի բուկինիստական կրպակները տեղակայված էին հենց այդտեղ՝ հիմնական գրախանութների դիմաց: Մանր առևտրականներն ու շրջիկ գրավաճառներն իրենց գրքերը ցուցադրում էին հենց գետնի վրա, հատկապես տոնավաճառային օրերին:

Գրքեր վաճառող այդ առևտրականների մեջ կար այսորազգի մի պատանի, որը գնում, վերավաճառում ու կոմիսիոն վաճառքի էր հանում ցանկացած գիրք: Նրան կոչում էին Աբրաշկա Ելով. նա ամենաճարպիկ խարդախն էր իմ ճանաչածներից և, չնայած դրան, իմ անփոխարինելի ընկերն էր: Նա ինձ համար քայլող տեղեկագիրք էր, քանի որ անհաշիվ քանակությամբ գրքերի անուններ գիտեր տարբեր լեզուներով, ինչպես նաև դրանց հեղինակների անունները, այդ գրքերի հրատարակման թվերն ու վայրերը և այն, թե որտեղից կարելի է դրանք ձեռք բերել: Սկզբնական շրջանում ես միայն գիրք էի գնում նրանից, բայց հետագայում, որևէ գիրք կարդալուց հետո ես այն փոխում էի ինձ հետաքրքրած ուրիշով, քանի որ նա կարողանում էր ճարել ցանկացած հրատարակություն: Շուտով մենք մտերիմ ընկերներ դարձանք: Այդ ժամանակ նա պատրաստվում էր ընդունվել կադետական ուսումնարան և համարյա ամբողջ իր ազատ ժամանակը ծախսում էր համապատասխան բաներ սերտելու վրա: Բայց քանի որ հետաքրքրվում էր նաև փիլիսոփայությամբ, երբեմն կարճ ժամանակ էր հատկացնում այդ թեմայով գրքեր կարդալուն: Հենց նրա փիլիսոփայությամբ տարված լինելու հանգամանքն էլ մեր մտերմության պատճառ դարձավ: Երեկոները մենք հաճախ հանդիպում էին Ալեքսանդրյան այգում և զրուցում փիլիսոփայական թեմաներով, ինչպես նաև միասին քրքրում էինք հին հրատարակությունների կույտերը. ես նույնիսկ սկսեցի տոնավաճառային օրերին նրան օգնել կրպակի առջև կանգնելու գործում:

Մեր ընկերությունը հատկապես մտերմական դարձավ մի զվարճալի դեպքից հետո: Տոնավաճառային օրերին Աբրամ Ելովի կրպակի մոտ վրան էր խփում ոմն հույն, որը զանազան իրեր էր ծախում, ինչպես ինքն էր ներկայացնում՝ արտասահմանյան արտադրության, այսպես կոչված «made in Paris»: Դրանք ամեն տեսակի արձանիկներ էին, նշանավոր մարդկանց կիսանդրիներ, Կուլպիդոնի ու Փսիխեայի, հովվի ու հովվուհու, ինչպես նաև կատուների, շների, խոզուկների, խնձորի,

տանձի տեսքով գանձանակներ և այլն, որոնք այն ժամանակ գնահատվում ու մեծ հաճույքով գնվում էին՝ զարդարելով ոչ հարուստ մարդկանց կացարանները:

Մի անգամ, երբ Աբրամի առևտուրը կանգ էր առել, նա, ցույց տալով ամբողջ այդ իրեղենը, իրեն բնորոշ հեզնական տոնով ասաց. «Այդ ամբողջ աղբով նա ահագին փող է դիզում: Դրանք իտալացի ներգաղթյալներն են պատրաստում իրենց հյուղակներում, իսկ այնպիսի ճարպիկ մանրավաճառները, ինչպիսին այս հույնն է, նրանց գրպաններն ուռցնում են այն փողերով, որոնք հասարակ մարդիկ վաստակում են տաժանակիր աշխատանքով. միամիտ մարդիկ այդ անճաշակության գլուխգործոցները գնում են, որպեսզի դրանցով զարդարեն իրենց խղճուկ հյուղակները: Իսկ մեր գրքերի առևտուրն այնքան էլ աշխույժ չի ընթանում և մեզ ստիպում է ամբողջ օրը նստած մնալ նույն տեղում՝ տառապելով մերթ շոգից, մերթ ցրտից: Օրվա վերջում մեր հոգին հազիվ է դիմանում մեր մարմնում, իսկ հաջորդ օրը ստիպված ենք լինում նորից անցնել նույն տաժանակությանը»:

Այդ մեր զրույցից հետո շատ շուտով ես գնացի այդ հույնի մոտ և իմացա, որ այդ անպետքություններն իրոք իտալացիներն էին պատրաստում՝ խնամքով թաքցնելով արտադրական գաղտնիքները:

«Արձանիկներն այնպիսի մեծ պահանջարկ էին վայելում, որ մի դյուժին վաճառողներով հազիվ ենք հասցնում դրանք վաճառել ամբողջ Թիֆլիսով մեկ», – ասաց նա:

Այդ ամենն իմանալուց հետո իմ գլխում միտք ծագեց ամեն կերպ իմանալ այդ արձանիկների արտադրության գաղտնիքը և սեփական գործ սկսել, քանի որ նախկինում վաստակած իմ փողերն արդեն սպառվելու վրա էին Իսրայելի տան գավակների պես:

Ես նախ կրկին խոսեցի այդ հույնի հետ՝ առանց բացելու իմ պլանները, և նրան համոզեցի, որ ինձ տանի այդ իտալացի արհեստավորների մոտ: Իմ բախտը բանեց, քանի որ, ինչպես պարզվեց, նրանց մոտ աշխատող աշխատողներից մեկը մեղադրվել էր գողության մեջ և վճռվել. այնպես որ ես կարող էի այդ հույնի երաշխավորությամբ անմիջապես զբաղեցնել նրա տեղը: Իմ կազմած պլանի համաձայն ես ներկայացա որպես լրիվ ապուշ, բայց շատ ջանասեր ու աշխատասեր: Ես համարյա երեք մարդու գործ էի անում: Համոզվելով իրենց նոր աշխատի անհաղթահարելի ապուշության մեջ՝ իտալացիները ջանք չթափեցին ինձնից որևէ բան թաքցնելու համար, ինչպես վարվում էին նախորդ աշխատողների հետ: Երկու շաբաթ անց ես արդեն միանգամայն բավարար չափով ամեն ինչ գիտեի, քանի որ արձանիկների արտադրության ամբողջ գործընթացն ընթանում էր իմ աչքի առաջ: Կային շատ նրբություններ, որոնք իսկապես կարևոր էին հաջող արտադրանք տալու համար: Օրինակ՝ անհրաժեշտ էր իմանալ բոլոր այն բաղադրիչների ճշգրիտ համամասնությունը, որոնցով գիպսի փոշի էր պատրաստվում, որպեսզի պատրաստված իրի վրա ծակոտկենություն չառաջանար, օրինակ՝ քթի, ականջի կամ այլ մասերում, և իրի մակերևույթը լիներ հարթ: Նաև իմացա, որ սոսնձից, ժելատինից ու գլիցերինից բացի պետք է խառնել նաև կիտրոնի հյութ:

Մի խոսքով, մեկուկես ամիս անց շուկայում երևացին նաև իմ սեփական նմուշօրինակները: Ես ավելացրի դրանց տեսականին՝ հորինելով մի քանի նոր տեսակի ծիծաղաշարժ գլուխներ, որոնք նույնպես հսկայական պահանջարկ ունեցան: Չեմ կարծում, թե Թիֆլիսում մնաց թեկուզ մեկ տուն, որ հարստացած չլիներ իմ պատրաստած «արվեստի ստեղծագործություններով»:

Գործերս այնքան լավ գնացին, որ ես նույնիսկ մի քանի բանվոր և կես դյուժին վրացուհիներ ընդունեցի որպես աշխատողներ, որոնք չէին դժգոհում պարապությունից: Ելովը նույնպես մեծ հաճույքով օգնում էր ինձ և նույնիսկ շաբաթվա լի օրերին թողեց գրքերի առևտուրը: Ամբողջ այդ ընթացքում մենք շարունակում էինք մեր սովորելու գործը՝ կլանելով փիլիսոփայությանը վերաբերող գրքերի հսկայական քանակություն:

Մի քանի ամիս անց, երբ ես, ըստ իմ պատկերացման, շոշափելի գումար էի վաստակել և ահավոր զգվել էի տխմար արձանիկներ պատրաստելու գործից, ծաղկուն շրջանում գտնվող արհեստանոցս լավ գնով վաճառեցի երկու հրեաների: Քանի որ պետք է ազատեի խանութին կից գտնվող իմ կացարանը, ես տեղափոխվեցի երկաթգծի կայարանի մոտ գտնվող մալականների փողոցը, և Աբրամ Ելովն իր գրքերով հանդերձ նույնպես տեղափոխվեց այնտեղ:

Ելովը միջահասակ էր, գիրուկ ու թուխ դեմքով, ածուխի պես վառվող աչքերով: Նրա մազերը խիտ էին, ունքերը՝ շատ հաստ, իսկ մորուքը բուսել էր անմիջապես քթի տակից և ամբողջությամբ ծածկել այտերը, որոնց շառագույնն այնուամենայնիվ միշտ նկատելի էր:

Նա ծնվել էր Թուրքիայում՝ Վանի շրջանում կամ Բիթլիսում, կամ դրա մերձակայքում, որտեղից նրա ընտանիքը տեղափոխվել էր Ռուսաստան մեր առաջին հանդիպումից երեք-չորս տարի առաջ: Թիֆլիսում Աբրամը սկզբում գիմնազիա էր հաճախել, բայց շուտով, թեև այդ ուսումնական հաստատությունում կարգերն այնքան էլ խիստ չէին, նա հաջողեցրել էր այնքան համը հանել, որ ուսուցչական խորհուրդը որոշել էր նրան հեռացնել: Որոշ ժամանակ անց հայրն էլ տնից էր վռնդել, որից հետո նա սկսել էր ապրել սրտի ուզածի պես: Կարճ ասած՝ ընտանիքի համար նա «քոստո ոչխար» էր: Մայրը հորից թաքուն շարունակում էր նրան փող ուղարկել:

Մոր նկատմամբ նա ամբողջ կյանքում նուրբ զգացմունքներ էր տածում, որոնք չէր աշխատում թաքցնել: Մոր լուսանկարը միշտ կախած էր պահում անկողնու գլխավերևում: Տնից դուրս գալուց առաջ նա միշտ համբույրով հրաժեշտ էր տալիս մոր լուսանկարին, իսկ երբ ինչ-որ տեղից տուն էր վերադառնում, հենց շենքից բացականչում էր. «Բարև, մայրի՛կ ջան...»: Ինձ թվում է, որ մոր նկատմամբ տածած այդ զգացմունքի շնորհիվ է հենց, որ ես սկսեցի նրան ավելի շատ հարգել: Նա հորն էլ էր յուրովի սիրում, բայց նրան սահմանափակ, սնապարծ ու կամակոր մարդ էր համարում:

Ելովի հայրը հարուստ մարդու համբավ ուներ և հարգված էր իր շրջապատի կողմից, քանի ու սերում էր (մայրական գծով) այսորական Մարշիմունների արքայատոհմից, որը ժամանակին իշխող արքաներ էր տվել:

Աբրամը նաև մի եղբայր ուներ, որն այն ժամանակ ուսում էր առնում կարծեմ Ֆիլադելֆիայում. եղբորը նա չէր սիրում՝ նրան համարելով եսասեր ու անհոգի մարդ: Աբրամի որոշ սովորություններ շատ ծիծաղելի էին շրջապատի համար: Օրինակ՝ նա անընդհատ շավարը վեր էր քաշում, և նրա ընկերներից շատ ջանքեր պահանջվեցին, որ նրան հետ վարժեցնեն այդ սովորությունից: Պողոսյանը հաճախ ձեռ էր առնում նրան, ասելով. «Հայ-հա՛յ, և դու այդ հալով դեռ ուզում ես սպա՞ դառնալ... Հանդիպած առաջին իսկ գեներալը քեզ հաուպտվախտ կուղարկի, որովհետև նրա առաջ պատվի առնելու փոխարեն կսկսես շավարդ վեր քաշել»: Պողոսյանի կատակները երբեմն առանձնապես աչքի չէին ընկնում նրբանկատությամբ: Ընկերական ձեռառնոցները նրանց հաղորդակցության մշտական մասն էին կազմում: Պողոսյանին Ելովն «աղ արած հայ» էր անվանում, Իսկ Պողոսյանը Ելովին՝ «խաչագող»: Հայերի ու այսորների մոտ դրանք տարածված պիտակներ էին: Ե՛վ այսորը, և՛ խաչագողը «եկեղեցական գողի» իմաստն ունեին, իսկ դրանց ծագման պատմությունն այսպիսին է: Այսորները հայտնի էին իրենց խարդախությամբ: Անդրկովկասում նույնիսկ այսպիսի մի ասացվածք էր շրջանառվում. «Իրար միացրու յոթ ռուսի՝ կստանաս մի հրեա. իրար միացրու յոթ հրեայի՝ կստանաս մի հայ. իրար միացրու յոթ հայի՝ կստանաս մի այսոր»:

Այսորների մեջ շատ տարածված էր հոգևորականի մասնագիտությունը, բայց նրանց մեծ մասն ինքնակոչ էին: Ապրելով Արարատ լեռան մերձակա տարածքներում, որտեղ իրար սահմանակից են Ռուսաստանը, Թուրքիան և Պարսկաստանը, և ազատորեն մի երկրից մյուսն անցնելով՝ նրանք Ռուսաստանում ներկայանում էին որպես թուրքահպատակ այսորներ, Պարսկաստանում՝ ռուսահպատակ և այլն: Այդ ինքնակոչ տերտերները ոչ միայն կարողանում էին կատարել բոլոր եկեղեցական ծեսերը, այլև մեծ հաջողությամբ զբաղվում էին զանազան եկեղեցական մասունքների վաճառքով: Ռուսական գավառներում նրանք ներկայանում էին նաև որպես հույն վանականներ, որոնք վայելում էին տեղական բնակչության վստահությունը, և հարստանում էին՝ «սրբազան մասունքներ» վաճառելով, որոնք իբր բերված են Երուսաղեմից, Աֆոնից և այլ սուրբ վայրերից: Այդ «մասունքների» մեջ լինում էին, օրինակ, այն խաչի կտրոններից, որի վրա իբր խաչվել էր Հիսուս Քրիստոսը. Կույս Մարիամի մազերից, սուրբ Նիկողայոս Միրլիկացու եղունգներից. Հուդայի ատամներից, որոնք տիրոջը հաջողություն էին բերում. սուրբ Գևորգի ձիու պայտերից և անգամ այդ սրբի գանգից ու կողերից: Այդ ամենը հաճույքով գնում էին տգետ մարդիկ: Եվ այդ իրերից շատերը հետագայում սրբորեն պահվում էին հավատացյալների եկեղեցիներում ու տներում: Դրա համար էլ հայերն այսորներին եկեղեցական գողեր էին անվանում: Իսկ հայերին «աղ արած» էին անվանում, քանի որ նրանք իրենց նորածինների վրա աղ ցանելու սովորույթ ունեին: Պետք է նկատեմ, որ այդ սովորույթն այնքան էլ անհեթեթ չէ, որքան կարող է թվալ առաջին հայացքից: Իմ դիտարկումների հիման վրա կարող եմ պնդել, որ ուրիշ բնակավայրերում ծնված նորածինները հայ նորածիններից անհամեմատ ավելի հաճախ են մաշկի ցան ստանում մարմնի այն մասերում, որտեղ անհրաժեշտ է մաշկային փոշի ցանել՝ բորբոքական պրոցեսները կանխելու համար: Հայ երեխաներն այդ մաշկային

ցանով շատ հազվադեպ են հիվանդանում, թեև մնացած մանկական հիվանդություններից զերծ չեն մնում: Այդ փաստը ես բացատրում եմ աղի հակաբորբոքական ազդեցությամբ:

Աբրամը չուներ իր ցեղակիցներին բնորոշ գծերը: Թեև շատ դյուրաբորբոք բնավորություն ուներ, բայց նրան երբեք հիշաչար չէիր կոչի: Շուտ բռնկվում էր, շուտ էլ հանդարտվում, իսկ եթե զգում էր, որ իր վարքով ինչ-որ մեկին վիրավորել է, ջանում էր հնարավորին չափ արագ հարթել տարածայնությունը:

Աբրամն աչքի էր ընկնում ուրիշների հավատքի նկատմամբ առանձնահատուկ հանդուրժողականությամբ: Մի անգամ, երբ քննարկում էինք միսիոներների գործունեությունը, որոնք տարբեր երկրներից գալիս էին, որպեսզի տեղական բնակչությանը «ճիշտ ուղու վրա դնեն», նա ասաց հետևյալը. «Կարևոր չէ, թե ինչ աստծու է աղոթում մարդը. կարևորն այն է, որ նա հավատ ունենա: Հավատը մարդու խիղճն է, որի հիմքերը դրվում են մանուկ հասակում: Նա, ով փոխում էիր հավատը, կորցնում է իր խիղճը, իսկ խիղճը մարդու ամենաթանկ բանն է: Եթե ես հարգում եմ մարդու խիղճը, որը հավատով է պահվում, ուրեմն պարտավոր եմ հարգել և նրա կրոնը: Ուրիշի կրոնը դատապարտելը նույնպիսի մեղք է, ինչպես նրա խիղճն ավերելը»:

Նրա այս խոսքերից հետո Պողոսյանն այսպիսի հարց տվեց. «Իսկ դու ինչու՞ ես ուզում սպա դառնալ»: Աբրամի այտերը կաս-կարմիր կտրեցին, և նա կատաղի մոնչաց. «Կորի՛ր գրողի ծոցը, աղ արած կարի՛ճ...»:

Ելովն արտակարգ նվիրված էր իր ընկերներին: Եթե որևէ մեկին համակրում էր, ապա նրա համար կարող էր ամեն ինչ անել: Երբ Ելովն ու Պողոսյանը մտերմացան, մեկը մյուսի նկատմամբ խնամք էին տածում եղբայրների պես, թեև արտաքինից նրանց մտերմությունը բավական զավեշտական էր երևում: Որքան շատ էին մտերմանում, այնքան ավելի էին կոպտում ու ծաղրում իրար՝ արտաքին կոպտության տակ թաքցնելով նուրբ զգացմունքները: Այդ մտերմությունն այնքան հուզիչ էր, որ անտարբեր չէր թողնում այն տեսնողներին: Արտաքին կոպտության տակ թաքնված այդ մտերմությունը երբեմն այնպես էր հուզում ինձ, որ չէի կարողանում զսպել աչքերիցս ինքնաբուխ հոսող արցունքները:

Հիշում եմ այսպիսի դեպքեր: Երբ պատահում էր, որ Ելովին հյուր էին կանչում, նրան երբեմն քաղցրավենիք էին հյուրասիրում, որոնք ընդունված կարգի համաձայն նա պետք է անմիջապես ուտեր, որպեսզի չնեղացնի տանտերերին: Սակայն, թեև քաղցրասեր էր, նա դրանք չէր ուտում, այլ թաքցնում էր գրպանում, որ բերի Պողոսյանի համար, ընդ որում՝ դա համեմուն էր քնձիծաղի ու ծաղրի մի իսկական կարկուտով:

Սովորաբար լինում էր այսպես. Աբրամը ճաշի ժամանակ, իբր հանկարծակի, գրպանում կոնֆետ էր հայտնաբերում և այն առաջարկում Պողոսյանին՝ ասելով. «Մատանան տանի, այս կոնֆետն ինչպե՞ս է հայտնվել իմ գրպանում... Հապա մի արագ կուլ տուր, որովհետև դու ուղղակի չեմպիոն ես այնպիսի անպետքություններ կուլ տալու գործում, որոնցից ուրիշները երես են թեքում»: Պողոսյանը կոնֆետը դնում էր բերանը և արտաբերում պատասխան խայթոցը. «Այս համեղ պատառը այնպիսի տխմարի համար չէ, ինչպիսին դու ես: Դու ավելի լավ է փորդ լցնես կաղինով, ինչպես քո եղբայրակից խոզերն են անում»: Դրան ի պատասխան Ելովը զզվանք արտահայտող դեմք էր ընդունում և ասում . «Մի տես, է՞... Կոնֆետը խժռում է ավելի արագ, քան դարաբաղյան ավանակն է ծամում տատասկը, իսկ դրանից հետո հետևիցս կվազի քսմավող շնիկի պես՝ սպասելով հերթական կերաբաժնին»... Այնուհետև փոխադարձ խայթոցները շարունակվում էին նույն ոգով:

Արտակարգ լավ ծանոթ լինելով գրականության բնագավառին՝ նա նաև շատ լեզուների էր տիրապետում: Թեև ես տիրապետում էի տասնութ լեզվի, սակայն նրա համեմատությամբ ինձ խակ կաթնակեր էի զգում: Մինչ ես որևէ եվրոպական լեզվով մի քանի բառ կսովորեի, նա արդեն համարյա բոլորին տիրապետում էր մայրենի լեզվի պես: Ի հաստատումն ասվածի՝ պատմեմ մի միջադեպ:

Հնէաբանության պրոֆեսոր Մկրիդովը (նրա մասին ես հետո կպատմեմ) մի հնէաբանական գտածո պետք է ձեռք գցեր Աֆղանստանի տարածքից, բայց դա անելն անհնարին էր, քանի որ ինչպես ռուս, այնպես էլ աֆղանական ու բրիտանական սահմանապահները ձերբակալում էին յուրաքանչյուրին, ով փորձում էր հատել սահմանը: Ինչ-որ տեղից բրիտանական սպայի մի համազգեստ գտնելով՝ Ելովը դա հագավ և ներկայացավ բրիտանական սահմանապահներին որպես անգլիացի սպա, որը Հնդկաստանից է եկել և ուզում է այդ կողմերում թուրքեստանյան վագր որսալ: Նա սահմանապահների ուշադրությունն այնքան երկար գրավեց Հնդկաստանի մասին իր անգլերեն

պատմություններով, որ մենք առանց շտապելու սահմանն անցանք, գտանք այն, ինչ մեզ պետք էր և անարգել հետ վերադարձանք:

Արտակարգ խոր գիտելիքներ ունենալով հանդերձ, Ելովը մշտապես դրանք համալրում էր՝ նոր բաներ իմանալու ոչ մի առիթ բաց չթողնելով: Նա չընդունվեց կադետական դպրոց, ինչպես նախկինում ուզում էր, այլ մեկնեց Մոսկվա, որտեղ փայլուն կերպով քննություններ հանձնելուց հետո ընդունվեց արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը, իսկ դրանից մի քանի տարի անց, եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, Կազանի համալսարանի ավարտական դիպլոմ ստացավ փիլիսոփայության գծով:

Ինչպես Պողոսյանն առանձնահատուկ հայացք ուներ ֆիզիկական աշխատանքի նկատմամբ, այնպես էլ Ելովն իր յուրահատուկ կարծիքն ուներ մտավոր աշխատանքի նկատմամբ: «Քանի որ մեր ուղեղն այսպես թե այնպես օրոգիչ էր աշխատում է, ապա, փոխանակ այն զբաղեցնելու անտեսանելի դարձնող գլխարկի ու Ալադինի հարստության պես դատարկ բաներով, ավելի լավ է նրան ինչ-որ ավելի օգտակար սնունդ տալ: Քանի որ ամեն դեպքում ստիպված ենք լինում մտավոր էներգիա ծախսել, ապա ավելի լավ է այն ծախսել խելամտորեն: Այդ համոզիչ փաստարկների ազդեցության տակ ես որոշեցի շարունակել օտար լեզուներ ուսումնասիրելու գործը, և դա արեցի ոչ միայն իմ միտքը պարսպ չթողնելու համար, այլև որ նա հանկարծ իմ մարմնի մյուս գործառույթներին չխանգարի իր ապուշ երազանքներով ու մանկական երևակայությամբ: Բացի այդ՝ լեզուների իմացությունը երբեմն շատ օգտակար է լինում»:

Իմ երիտասարդության այդ ընկերն այժմ նախկինի պես ողջ և առողջ է և այժմ հարմար տեղավորվել է Հյուսիսային Ամերիկայի քաղաքներից մեկում: Պատերազմի ժամանակ նա դեռ Ռուսաստանում էր և հիմնականում ապրում էր Մոսկվայում: Ռուսական հեղափոխությանը նա վկա դարձավ Սիբիրում, ուր գնացել էր, որպեսզի իր բազմաթիվ զրքերից մեկը գտնի ինչ-որ գրախանություն: Հեղափոխությունը նրան շատ տհաճություններ պատճառեց և երկրի երեսից իսպառ ջնջեց նրա ողջ հարստությունը:

Միայն սրանից երեք տարի առաջ էր, որ նրա ազգական դոկտոր Ելովը եկավ Ամերիկայից և նրան համոզեց իր հետ քոչել այդ երկիրը:

ԳԼՈՒԽ Զ

Իշխան Յուրի Լյուբովեցկի

Ռուս իշխան Լյուբովեցկին այն ամենահետաքրիք մարդկանցից մեկն էր, որի հետ ինձ կապեց ճակատագիրը: Նա ինձնից տարիքով մեծ էր և համարյա քառասուն տարի եղել է իմ ավագ ընկերն ու մտերիմ բարեկամը:

Նրա շատ սիրելի կնոջ ողբերգական մահվան հանգամանքները պատճառ դարձան, որ մեր միջև հաստատվեն երկարամյա ամուր ու մտերմական կապեր:

Երիտասարդ տարիքում՝ գվարդիայի սպա եղած ժամանակ, նա մինչև ականջների ծայրը սիրահարվել էր իր հայացքների տեր մի գեղեցկու, շուտով ամուսնացել նրա հետ և սկսել հաշտ ու խաղաղ ընտանեկան կյանք վարել Մոսկվայում՝ Մադովայա փողոցի մոտակայքում:

Իշխանուհին մահացել էր իր առաջնեկին լույս աշխարհ բերելու ժամանակ, և իշխանը, իր խոր վշտից ելք փնտրելով, սկսել էր հետաքրքրվել հոգեկանչությամբ՝ հույս ունենալով, որ այդ կերպ կկարողանա զրուցել իր սիրելի հանգուցյալ կնոջ հոգու հետ. այնուհետև ավելի ու ավելի էր խորացել թաքնագիտության մեջ՝ փորձելով պարզել կյանքի իմաստը: Նա այնքան էր խորացել այդ հետազոտություններում, որ ամբողջովին փոխել էր իր նախկին կենսակերպը. չէր այցելում ոչ մեկին, ոչ մեկին հյուր չէր ընդունում, այլ առանձնանում էր իր գրադարանում և զբաղվում իր հետաքրքրությունների միակ առական դարձած թաքնագիտությամբ:

Մի անգամ, երբ նա առանձնապես շատ էր կլանված իր մեկուսի հետազոտություններով, նրա միայնությունը խախտում է ինչ-որ մի անծանոթ ծերունի, որին, ի զարմանս տնեցիների, իշխանն անմիջապես ընդունում է: Գրադարանում փակված՝ նրանք շատ երկար զրուցում են, որից հետո շատ

չանցած իշխանը թողնում է ամեն ինչ և իր հետագա կյանքն անցկացնում Աֆրիկայում, Հնդկաստանում, Աֆղանստանում և Պարսկաստանում. Ռուսաստան վերադառնում էր միայն խիստ անհրաժեշտության դեպքում և միայն կարճ ժամանակով:

Իշխանը մեծ հարստության տեր էր, և իր ամբողջ հարստությունը ներդրեց իր «որոնումների» մեջ. հատուկ արշավախմբեր էր կազմակերպում դեպի այն վայրերը, որտեղ հույս ուներ գտնել իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները: Երկար ժամանակ նա ապրել է մի քանի մենաստաններում, հանդիպել նույնպիսի հետքորդություններ ունեցող շատ մարդկանց հետ:

Երբ մենք առաջին անգամ հանդիպեցինք, նա արդեն տարեց մարդ էր, իսկ ես դեռ երիտասարդ էի: Դրանից հետո մինչև նրա մահը մենք միշտ կապ ենք պահպանել իրար հետ:

Մեր այդ առաջին հանդիպումը կայացավ Եգիպտոսում՝ բուրգերի մոտ, իմ ու Պոդոյանի ճամփորդությունից կարճ ժամանակ անց: Ես նոր էի հեռացել Երուսաղեմից, որտեղ իմ ապրուստը վաստակում էի զբոսաշրջիկներին, հիմնականում՝ ռուս, քաղաքի տեսարժան վայրերը ցույց տալով և նրանց սովորական բացատրություններ հրամցելով: Մի խոսքով, ես արհեստավարժ ուղեկցորդ էի: Եգիպտոս հասնելով՝ որոշեցի զբաղվել նույն մասնագիտությամբ: Ես շատ լավ տիրապետում էի արաբերենին և հունարենին, գիտեի նաև իտալերեն, որը շատ էր պետք գալիս եվրոպացիների հետ զրուցելիս: Մի քանի օրում ես պարզեցի այն ամենը, ինչ պետք էր իմանալ դրա համար, որից հետո մի շատ ճարպիկ արաբ երիտասարդի հետ ձեռնամուխ եղանք զբոսաշրջիկների «գլուխը վարելու» գործին: Ինձ անհրաժեշտ էր այդ եղանակով որոշակի գումար վաստակել, որպեսզի կարողանամ իրականացնել իմ սեփական պլանները:

Մի անգամ ինձ վարձեց Սկրիդով ազգանունով մի ռուս, որն, ինչպես պարզվեց հնէաբանության պրոֆեսոր էր: Երբ մենք Սֆինքսի մոտից ուղղություն էինք վերցրել դեպի Քեոփսի բուրգը, իմ հաճախորդին հեռվից ձայն տվեց ինչ-որ մի ալեհեր պարոն: Սկրիդովին կատակով դիակապուս անվանելուց հետո ալեհեր ջենտլմենը զրույցի բռնվեց նրա հետ: Նրանք խոսում էին ռուսերեն՝ չիմանալով, որ ես տիրապետում եմ այդ լեզվին: Մինչ այդ Սկրիդովը կոտրտված իտալերենով էր ինձ հետ հաղորդակցվում: Նրանք նստած էին բուրգի ստորոտին, իսկ ես՝ ոչ շատ հեռու, որպեսզի լսեմ նրանց խոսակցությունը: Ալեհեր պարոնը, որն, ինչպես պարզվեց, ռուս իշխան էր, հարցնում էր իր ծանոթին, թե ինչու է նա անհանգստություն պատճառում վաղուց մեռած մարդկանց ոսկորներին և հավաքածուներ կազմում տանյին իրերի մնացորդներից, որոնցից իրենց խղճուկ կյանքում ինչ-որ ժամանակ օգտվել են ինչ-որ մարդիկ:

«Իսկ ինչու՞ ոչ,– պատասխանեց պրոֆեսորը,– դրանք գոնե ինչ-որ իրական ու շոշափելի բաներ են, ի տարբերություն այն վերացական բաների, որոնց դուք նվիրել եք ձեր ամբողջ կյանքը: Դուք զբաղվում եք մի բանով, որը կարող են իրենց թույլ տալ միայն հարուստ անբանները: Իսկ իմ գործը, թեև ինձ բարոյական բավարարվածություն չի տալիս, ապահովում է իմ ապրուստի միջոցները»:

Շուտով զրուցակիցները հրաժեշտ տվեցին իրար՝ պայմանավորվելով հանդիպել հինավուրց Թեբեում:

Հարկ է նշել, որ ես իմ ամբողջ ազատ ժամանակը ծախսում էի իմ քարտեզի օգնությամբ այդ վայրերն ուշադիր գննելու վրա՝ հուսալով լուծել Սֆինքսի և մյուս հինավուրց հուշարձանների հանելուկները:

Պրոֆեսորի և իշխանի այդ հանդիպումից մի քանի օր անց մի անգամ, խոր մտածումներին մեջ ընկած և քարտեզս բացած, նստել էի բուրգերից մեկի մոտ և հանկարծ կողքիս զգացի ինչ-որ մեկի ներկայությունը: Ես բնագոյաբար փակեցի քարտեզը և վեր նայեցի: Դա հենց այն մարդն էր, որն իմ հաճախորդի հետ զրուցում էր Քեոփսի բուրգի մոտ: հուզմունքից գունատված և անթաքույց զարմանքով նա ինձ իտալերենով հարցրեց, թե որտեղից եմ ձեռք բերել այդ քարտեզը: Այդ հարցից իմ գլխում անմիջապես մի միտք փայլատակեց, որ սա հենց այն անծանոթն է, որը, ըստ հայ վանականի նկարագրածի, մեծ գումար էր վճարել հինավուրց մագաղաթի պատճենը հանելու համար: Անցնելով ռուսերենի՝ ես նրան հարցրի այդ մասին, և նա հաստատեց իմ միտքը: Դրանից հետո ես պատմեցի իմ մասին և նկարագրեցի, թե ինչպես եմ ձեռք բերել քարտեզի իմ օրինակը: Չարմանալի զուգադիպությունից ապշած՝ մենք զրույցի բռնվեցինք: Որոշ ժամանակ հետո նա ինձ հրավիրեց Կահիրեում գտնվող իր առանձնատունը, որպեսզի մեր զրույցը շարունակենք ավելի հարմարավետ պայմաններում:

Այդ պահից ի վեր, մեր հետաքրքրությունների ընդհանրության շնորհիվ, մենք հաճախ էինք հաղիպում և երկարատև գրույցներ ունենում: Մեր մտերմությունը շարունակվեց ավելի քան երեսունհինգ տարի, մինչև այդ զարմանալի մարդու մահը: Այդ տարիների ընթացքում մենք իրար հետ շատ ենք ճամփորդել, եղել ենք Տիբեթում, Հնդկաստանում և Միջին Ասիայի տարբեր վայրերում:

Վերջին անգամ իշխանի հետ ես հանդիպել եմ Կոնստանդնուպոլսում, որտեղ նա տուն ուներ Բերաթադամասում՝ ռուսական դեսպանատնից ոչ շատ հեռու: Այստեղ նա ապրեց բավական երկար:

Մեր այդ հանդիպումը կայացավ հետևյալ հանգամանքներում: Ես այդտեղ էի եկել Մեքքայից, դերվիշների մի խմբի հետ, որոնց հետ նոր էի ծանոթացել: Կոնստանդնուպոլսից ես մտադիր էի գնալ Թիֆլիս, հետո՝ Ալեքսանդրապոլ, տեսակցել ընտանիքիս հետ, ապա դերվիշների այդ խմբի հետ գնալ Բուխարա: Բայց այդ պլանին վիճակված չէր իրականանալ: Կոնստանդնուպոլսում ինձ խիստ վհատություն պատճառեց այն, որ մեր շոգենավը ծով էր դուրս գալու միայն վեց-յոթ օր հետո, իսկ մի ամբողջ շաբաթ պարապ մնալը լավ հեռանկար չէր ինձ նման մարդու համար: Որպեսզի անտեղի ժամանակ չվատնեմ, ես որոշեցի հանդիպել Բրուսում ապրող ծանոթ մի դերվիշի հետ և միասին այցելել հանրահայտ Կանաչ մզկիթը: Գալաթիայով անցնելիս իմ գլխում միտք ծագեց նախ այցելել իշխանին, ինձ կարգի բերել երկար ճանապարհից հետո, ինչպես նաև հանդիպել իշխանի հայազգի սպասուհուն՝ Մարիամ բաջուն, որի հետ շատ մտերիմ էի:

Իշխանից ստացված վերջին նամակից հետևում էր, որ նա պետք է որ այդ ժամանակ Յեյլոնում լինեք, բայց, ի զարմանս ինձ, ես նրան գտա Կոնստանդնուպոլսում: Աշխույժ նամակագրությամբ հանդերձ՝ մենք չէինք տեսնվել ամբողջ երկու տարի, և այդ հանդիպումը հաճելի անակնկալ էր երկուսիս համար: Ես ստիպված եղա հրաժարվել Բրուսա գնալուց և իմ պլանավորած կովկասյան ճամփորդությունից, որպեսզի իշխանի խնդրանքով դեպի Ռուսաստան ուղեկցեմ մի երտասարդ տիկնոջ, որի պատճառով իշխանը Յեյլոնի փոխարեն հիմա Կոնստանդնուպոլսում էր: Նույն օրը՝ բաղնիք գնալուց և մարդկային տեսքի գալուց հետո, երեկոյան ես ընթրեցի իշխանի հետ, և այդ ժամանակ էլ իմացա այդ տիկնոջ պատմությունը, որին պետք է ուղեկցեի:

Այդ հիշարժան տիկնոջ կյանքն այնքան անսովոր էր ընթացել, որ ես անհրաժեշտ եմ համարում իմ այս գրքում մի քանի էջ նվիրել նրան:

Ես ոչ միայն կկրկնեմ նրա մասին այդ երեկոյան իշխանի պատմածները, այլև կնկարագրեմ նրա հետագա կյանքը, որին ծանոթ եմ մեր բարի հարաբերությունների շնորհիվ. առավել ևս, որ որ իմ այն ձեռագիրը, որում այդ կնոջ ճակատագրին անհամեմատ ավելի շատ ուշադրություն է հատկացվել, մնաց Ռուսաստանում և կորստյան մատնվեց ուրիշ շատ ձեռագրերիս հետ:

Վիտվիցկայա

Իշխանն ինձ պատմեց հետևյալը. «Երբ մի շաբաթ առաջ պատրաստվում էի Յեյլոն մեկնել և արդեն նավի տախտակամածի վրա էի, ճանապարհ դնողների մեջ տեսա ռուսական դեսպանատան կցորդին, որն էլ իմ ուշադրությունը հրավիրեց ուղևորներից մեկի՝ միանգամայն ներկայանալի մի պարոնի վրա: - Հապա նայե՞ք այդ արժանապատիվ տեսքով ջենտլմենին, - ասաց կցորդը, - դուք ինձ երևի չեք հավատա, բայց նա կենդանի ապրանքի՝ սպիտակ ստրկուհիների հայտնի առևտրական է: Ո՞վ կարող է դա գլխի ընկնել՝ ելնելով նրա արտաքինից ստացած տպավորությունից...»

Նավի մեկնումին նախորդող իրարանցման մեջ ես առանձնապես ուշադրություն չդարձրի ո՛չ այդ մարդու, ո՛չ էլ կցորդի ասածի վրա և շուտով բոլորովին մոռացա այդ մասին:

Նավը ծով դուրս եկավ: Հրաշալի եղանակ էր: Տախտակամածին նստած՝ գիրք էի կարդում, իսկ կողքիս Ձեկն էր՝ ինձ միշտ ուղեկցող ֆոքստերիերը: մեզ մոտեցավ մի հմայիչ օրհորդ, շոյեց շանը և բռի մեջ մի կտոր շաքար մեկնեց նրան: Քանի որ Ձեկին վարժեցրել էի առանց իմ թույլտվության ուրիշներից ոչինչ չվերցնել, ապա նա, ականջները ցցելով, հարցական հայացքը հառեց ինձ՝ «Կարելի՞ է...»: Ես գլխով արեցի և ռուսերեն ասացի. «Այո, կարելի է»: Դրանից հետո մենք գրույցի բռնվեցինք, և պարզվեց, որ օրհորդը հրաշալի խոսում է ռուսերեն: Նա ներկայացավ Վիտվիցկայա ազգանվամբ և ասաց, որ մեկնում է Ալեքսանդրիա, որպեսզի տնային դաստիարակչուհի աշխատի այնտեղի ռուս հյուպատոսի ընտանիքում: Մեր գրույցի ընթացքում մեզ մոտեցավ այն պարոնը, որի մասին կարծիք էր հայտնել դեսպանատան կցորդը, որից հետո նրանք միասին ինչ-որ տեղ գնացին: Հիշելով լսածս կարծիքը՝ օրհորդի հետ նրա ծանոթությունն ինձ կասկածելի թվաց: Մանավանդ, որ լավ ծանոթ էի

նշված ռուս հյուպատոսի հետ և, որքան հիշում էի, նա տնային դաստիարակչուհու կարիք չուներ: Կասկածներս փարատելու նպատակով Դարդանելի նավահանգստից հեռագիր ուղարկեցի դեսպանին՝ հարցում անելով տնային դաստիարակչուհու կարիք ունենալու մասին: Մի հեռագիր էլ ուղարկեցի Սալոնիկի իմ ընկերներին, որտեղ մեր նավը շուտով պետք է հասներ: Կասկածներս կիսեցի նաև մեր նավի նավապետի հետ, այնպես որ մինչև Սալոնիկ հասնելն ինձ համար արդեն ամեն ինչ պարզ էր. օրիորդին խաբեությանը իրենց ցանցն էին գցել, և նրա հետագա ճակատագիրը կարող էր ահավոր լինել: Ես ինձ պարտավորված զգացի փոխելու իրադարձությունների ընթացքը և որոշեցի նրան հետ ուղարկել Ռուսաստան, իսկ մինչև նրա հետագա ճակատագիրը դասավորելը ընդհատել դեպի Ցեյլոն իմ ուղևորությունը: Օրիորդի հետ մենք նավը լքեցինք Սալոնիկում և հենց նույն օրն էլ նստեցինք Կոնստանդնուպոլիս վերադարձող մի ուրիշ նավ: Շուտով պարզվեց, որ Ռուսաստանում աղջիկը ոչ ոք չունի, որ հոգար նրա մասին, և ահա այդ պատճառում մնացել եմ այստեղ:

Օրիորդի կյանքը շատ անսովոր է ընթացել: Նա ծնվել է Վոլինյան նահանգում և ամբողջ մանկությունն անցկացրել Ռովնո քաղաքից ոչ հեռու՝ մի կոմսի կալվածքում, որտեղ նրա հայրը որպես կառավարիչ է աշխատել: Մայրը մահացել է, երբ երեխաները՝ երկու տղա և երկու աղջիկ, դեռ շատ փոքր են եղել, և նրանց դաստիարակությամբ զբաղվել է ծեր մորաքույրը: Երբ Վիտվիցկայան տասնչորս տարեկան է եղել, իսկ ավագ քույրը՝ տասնվեց, մահացել է նաև նրանց հայրը: Այդ ժամանակ մեծ եղբայրը սովորում էր Իտալիայում ինչ-որ տեղ, որպեսզի կաթոլիկ հոգևորական դառնար, իսկ մյուսը, որը հետագայում սրիկա դուրս եկավ, ինչ-որ մուլթ գործերով էր զբաղված Օդեսայում՝ թողնելով քույրը, որտեղ սովորում էր: Հոր մահից հետո քույրերն իրենց մորաքրոջ հետ պետք է հեռանային կալվածքից, քանի որ կոմսն արդեն նոր կառավարիչ էր ընդունել: Դժբախտությունները հաջորդում են մեկը մյուսին. Ռովնո քաղաք տեղափոխվելուց շատ չանցած մահանում է նաև մորաքույրը: Շատ դժվարին կացության մեջ հայտնվելով՝ քույրերը հեռավոր մի ազգականի խորհրդով գնում են Օդեսա, որտեղ սկսում են դերձակություն սովորել: Վիտվիցկայան աչքի էր ընկնում արտակարգ գեղեցկությամբ և, ի տարբերություն ավագ քրոջ, բավականին թեթևամիտ էր: Նա շատ երկրպագուներ ուներ, որոնց մեջ կար մի շրջիկ առևտրական, որին հաջողվում է նրան գայթակղել և իր հետ Սանկտ-Պետերբուրգ տանել: Քույրերը վիճում են իրար հետ, և Վիտվիցկայան, ժառանգության իր բաժինը վերցնելով, գնում է այդ ջահելի հետ: Վերջինս Սանկտ-Պետերբուրգ հասնելուն պես թալանում է նրան և մենակ թողնում օտար մեծ քաղաքում: Շատ չարչարանաքներ կրելուց հետո նա դառնում է ինչ-որ մի ծեր սենատորի սիրուհին, որն էլ նրան շուտով լքում է՝ խանդելով ինչ-որ մի ջահել ուսանողի պատճառով: Ապա նա հայտնվում է մի գործող բժշկի «հարգարժան» ընտանիքում, որը նրա օգնությամբ մի շատ արտառոց եղանակով մեծացնում է իր այցելուների թիվը: Բժշկի կինը նրան գտնում է Ալեքսանդրյան թատրոնին կից այգում մի նստարանի վրա նստած և խղճահարվելով համոզում է գնալ և ապրել իրենց հետ: Հետո նա բացատրում է, թե օրիորդն ինչ պիտի անի. պետք է զբոսնի Նևսկու պողոտայով և իր արտակարգ գեղեցկությամբ հրապուրված տղամարդկանց թույլ տա, որ իրեն ուղեկցեն: Այնուհետև պետք է բժշկի տան շքամուտքում լքի իր այդ երկրպագուին՝ նրան որոշակի հույսեր ներշնչելով: Վերջինս դռնապանին հարցուփորձ կանի իր ով լինելու մասին և կիմանա, որ բժշկի կնոջ ընկերուհին է: Հետո իր ներսում հազար ու մի հիվանդություն կգտնի և ևս մի հոգով կավելացնի բժշկի հաճախորդների ցուցակը՝ իր հրապուրանքի գեղանի առարկային բժշկի ընդունարանում ևս մեկ անգամ տեսնելու հույսով»:

«Ավելի շատ մտերմանալով Վիտվիցկայայի հետ, – շարունակեց իշխանը, – ես համոզվեցի, որ միայն անելանելի կարիքն է ստիպել նրան այդպիսի կյանք վարել, որն իրականում զզվելի էր նրա համար: Մի անգամ, երբ նա, իր սովորական գործն անելով, քայլելիս է լինում Նևսկի պողոտայով, հանկարծ հանդիպում է իր փոքր եղբորը, որին չէր տեսել շատ տարիներ: Նա լավ էր հանգնված և հարուստ մարդու տպավորություն էր թողնում: Եղբայրը պատմում է իր նոր բիզնեսի մասին, որ առևտրոտով է զբաղվում Օդեսայում և անգամ արտասահմանում: Իմանալով, որ քրոջ գործերը հեռու են լավ լինելուց, նա իր օգնությունն է առաջարկում և նրան տանում Օդեսա, որտեղ, ըստ նրա պատմածի, ինքը լավ կապեր ունի բարձր հասարակությունում և կարող է կարգավորել նրա ճակատագիրը: Շուտով նա քրոջը հայտնում է, որ տնային դաստիարակչուհու լավ գործ է գտել Ալեքսանդրիայի ռուս հյուպատոսի մոտ, հետո նրան է ներկայացնում համակրելի արտաքինով մի պարոնի, որը պատրաստ է նրան ուղեկցել մինչև Ալեքսանդրիա: Մնացածն արդեն ձեզ հայտնի է»:

Իշխանը պնդում էր, որ միայն աղքատությունն ու հանգամանքների դժբախտ դասավորությունն են պատճառ դարձել, որ այդ օրիորդը հայտնվել է անդունդի եզրին, և որ նա նույնիսկ այդ պայմաններում կարողացել է պահպանել իր լավագույն հատկանիշները: Ուստի ինքը որոշել է օգնել դժբախտ աղջկան և կարգավորել նրա ճակատագիրը՝ բերելով ճշմարիտ ուղու վրա:

«Ես նրան ուզում եմ ուղարկել Տամբովում կալվածք ունեցող իմ քրոջ մոտ, որպեսզի նախ վերականգնվի իր ամբողջ ապրածի ազդեցությունից, իսկ հետո՝ կտեսնենք», – իր խոսքը եզրափակեց իշխանը:

Ծանոթ լինելով իմ ընկերոջ բարությանն ու որոշակի միամտությանը, ես շատ հոռետեսորեն էի նայում նրա այդ պլանին՝ հիշելով այն հին խոսքը, թե՛ «կորածը կորած է»: Մտածելով, որ Վիտվիցկայան պարզապես հիմարացնում է իշխանին՝ ես միանգամից նրա նկատմամբ հակակրանքով լցվեցի և սիրտս կախ համաձայնեցի նրան ուղեկցել, քանի որ չէի կարող մերժել ընկերոջս խնդրանքը: Միայն մի քանի օր անցնելուց հետո, երբ մենք արդեն նավի տախտակամածի վրա էինք, ես ուշադիր նայեցի նրան: Սևահեր գեղեցկուհի էր՝ կախարդիչ սև աչքերով և հրաշալի կազմվածքով: Նրա հայացքը խոսում էր ուժեղ բնավորություն ունենալու մասին, և անգամ ես մտածեցի, որ հավանաբար Թախ Աթենացին կնոջ հենց այդ տեսակին է պատկանելիս եղել: Չնայած նրա հրապուրիչ արտաքինին՝ ես դեռևս շարունակում էի նրա նկատմամբ հակասական զգացմունքներ ունենալ՝ երբեմն արհամարհելով, երբեմն խղճալով, երբեմն էլ հիանալով:

Երբ հասանք Տամբով, ես նրան թողեցի իշխանի քրոջ մոտ, որն անմիջապես սիրեց նրան, և նրանց միջև մտերմություն հաստատվեց: Միասին շրջագայության դուրս եկան դեպի արտասահման և հատկապես երկար մնացին Իտալիայում: Կամաց-կամաց իշխանի և նրա քրոջ ազդեցությունը դրական արդյունք տվեց, և երիտասարդ կինը սկսեց հետաքրքրվել թաքնատեսական գիտություններով և հավատալ այն ամենին, ինչին հավատում էին նրա խնամակալները: Ինքնակրթությամբ նա շատ աշխատեց իր վրա, և ամեն ոք, ով գոնե մեկ անգամ զրուցում էր նրա հետ, նկատում էր նրա սուր միտքն ու խոր իմացությունները:

Ռուսաստանում իրարից բաժանվելուց հետո ես նրան չտեսա բավական երկար ժամանակ: Կարծում եմ, ավելի քան չորս տարի էր անցել, երբ նրան կրկին հանդիպեցի Իտալիայում իշխան Յուրի Լյուբովեցկու քրոջ հետ: Այդ հանդիպումը տեղի ունեցավ հետևյալ հանգամանքներում:

Մի անգամ Հռոմում ես դժվարին կացության մեջ հայտնվեցի, քանի որ սպառվել էին բոլոր փողերս: Երկու ջահել այտորների խորհրդով, որոնց հետ այդտեղ էի ծանոթացել, սկսեցի զբաղվել փողոցում կոշիկ մաքրողի գործով: Չեմ կարող ասել, թե հենց սկզբից գործս հաջող գնաց, ուստի որոշեցի այդ գործն էլ մի քիչ կատարելագործել: Այդ նպատակով ես հատուկ բազկաթոռ պատվիրեցի, որի տակ թաքցրի Էդիսոնի ձայնարկիչ, որին ռետինե ականջակալների պես մի բան հարմարեցրի: Այդպիսով, հաճախորդը նստում էր բազկաթոռին և հաճույք ստանում օպերային մեներգերից, մինչև ես ավարտում էի նրա կոշիկները փայլեցնելու գործը: Դրանից գատ, բազկաթոռի թիկնակին նաև ոչ մեծ մատուցարան հարմարեցրի, որի վրա ջրաման ու բաժակ էի դնում, վերմուտ, ինչպես նաև մի քանի նկարագարդ ամսագրեր:

Դրանից հետո իմ գործերն այնքան լավ ընթացան, որ ինձ ոչ թե սանտիմներ էին բաժին հասնում, այլ լիրաներ: Առանձնապես առատաձեռն էին լինում ջահել ու հարուստ զբոսաշրջիկները: Հետաքրքրասեր անբաններն ամբողջ օրը խոնվում էին իմ շուրջը: Իրենց հերթին սպասելիս նրանք աչքները տնկում էին իմ այդ նորամուծության վրա՝ թողնելով ոչ այնքան նորմալ մարդկանց տպավորություն: Այդ ամբոխում ես մի քանի անգամ նկատեցի մի ջահել կնոջ, որն ինձ ծանոթ թվաց: Քանի որ միշտ շատ զբաղված էի լինում, չէի կարողանում լավ նայել նրան, բայց մի անգամ լսեցի, որ նա իր տարեց ուղեկցուհուն ասում է. «Գրագ կգամ, որ հենց ինքն է...»: Դա իմ հետաքրքրությունն այնքան շարժեց, որ գործս ընդհատեցի, մոտեցա նրան և հարցրի. «Ասացե՛ք խնդրեմ, ո՞վ էք Դուք: Ինձ թվում է, որ Ձեզ ինչ-որ տեղ տեսել եմ»:

«Ես նա եմ, որին մի անգամ դուք այնպես ատեցիք, որ ճանձն այդ ատելության դաշտում անմիջապես կսատկեր, – պատասխանեց երիտասարդ կինը: – Եթե հիշում եք իշխան Յուրի Լյուբովեցկուն, ապա հավանաբար կհիշեք նաև այն խեղճ աղջկան, որին Կոնստանդնուպոլսից ուղեկցեցիք Ռուսաստան»:

Իհարկե, ես ճանաչեցի Վիտվիցկայային և նրա ուղեկցուհուն, և հետագա օրերին՝ ընդհուպ մինչև նրանց Մոնտե Կառլո մեկնելը, մենք հաճախ հանդիպում և զրուցում էինք: Այդ հանդիպումից

մեկուկես տարի անց Վիտվիցկայան պրոֆեսոր Սկրիդլովի հետ եկավ մեր հերթական արշավախմբի հավաքատեղին, որից հետո մասնակցեց նաև մեր բոլոր մյուս ճամփորդություններին:

Որպեսզի լիակատար պատկերացում տամ Վիտվիցկայայի ներաշխարհի մասին՝ մի կնոջ, որը կանգնել էր բարոյական անկման եզրին, ապա բարձր գաղափարներով օժտված մարդկանց օգնության շնորհիվ վերածվել, չեմ խուսափում ասել՝ բացառիկ անհատականություն, ես ընդամենը մի օրինակ կրեբեմ նրա կյանքից:

Վիտվիցկայան լրջորեն հետաքրքրվում էր երաժշտության տեսությամբ. դրա ապացույցը կարող է լինել մեր խոսակցությունը, որը կայացավ մեր արշավներից մեկի ժամանակ, որի երթուղին անցնում էր Թուրքեստանի կենտրոնական շրջաններով: Հատուկ երաշխավորության շնորհիվ մեզ թույլատրվել էր երեք օր անցկացնել մի մենաստանում, որը մեծամասնության համար մատչելի չէր: Վերջին առավոտյան, երբ մենք լքում էինք այդ մենաստանը, ես նկատեցի, որ Վիտվիցկայան գունատ է դիակի պես, իսկ ձեռքը վիրակապված է: Նա ինքնուրույն չկարողացավ ձի նստել, և պահանջվեց մեր օգնությունը: Երբ մեր քարավանը շարժվեց, ես աշխատեցի նրան մոտիկ գտնվել, որպեսզի իմանամ, թե ինչ է պատահել: Ես կասկածներ ունեի, որ մեր խմբից ինչ-որ մեկը նրա հետ կոպիտ է վարվել և վիրավորել նրա զգացմունքները՝ մի կնոջ, որին մենք արդեն սրբացնում էինք, ուստի պատրաստ էի վիրավորողին գնդակահարել կաքավի պես: Բայց Վիտվիցկայան փարատեց իմ կասկածները՝ ասելով, որ իր վատ տրամադրության պատճառն այն «սատանայական երաժշտությունն» է, որի միակար մեղեդին հնչել էր եկեղեցական երգեցողության ժամանակ: Նա հարցրեց, թե ինչ տպավորություն ստացա ես այդ մեղեդուց, և ես ասացի, որ այն ինձ վրա էլ է տարօրինակ ազդեցություն գործել: Մենք սկսեցինք քննարկել այդ թեման, և մեր երկխոսությունը վերածվեց մենախոսության, որը վերաբերում էր նրա անցյալին: Չգիտեմ, թե ինչը պատճառ դարձավ նրա սրտաբաց պատմության համար՝ զարմանալի գեղեցիկ վայրէ՛րը, որտեղով անցնում էր մեր քարավանը, թե՛ ուրիշ ինչ-որ բան, բայց ես մինչև հիմա հիշում եմ նրա հետաքրքիր պատմության համարյա ամեն մի բառը:

Այն այսպես սկսվեց. «Պատանությանս տարիներին երաժշտությունն ինձ վրա առանձնապես խոր տպավորություն չէր թողնում: Երբ այդ թեմայով զրուցում էի որևէ մեկի հետ, ես ինչ-որ խորիմաստ արտահայտություններ էի բերում, որպեսզի ցույց չտամ իմ տգիտությունը, բայց հոգով անտարբեր էի մնում: Որպես կանոն՝ ես քննադատում էի երաժշտական ստեղծագործությունները, որպեսզի գիտակ ձևանամ, և դրա համար աշխատում էի հատուկ երաժշտական տերմիններ օգտագործել: Եթե երբեմն գովում էլ էի որևէ գործ, ապա միայն այն պատճառով, որ մտածում էի հետևյալ կերպ. եթե հռչակավոր կոմպոզիտորը հրատարակել է այդ ստեղծագործությունը, ուրեմն համոզված է եղել, որ դա հաջողված գործ է: Դատողություններս ես անում էի ոչ անկեղծորեն և որևէ խղճի խայթ չէի զգում դրա համար, քանի որ ինձ թվում էր, թե հենց այդպես են վարվում շրջապատի բոլոր մարդիկ:

Հետագայում, երբ իշխան Լյուբովեցկու քույրը՝ այդ բարի կինը, ինձ իր թևի տակ առավ, համոզեց, որ դաշնամուր նվագել սովորեմ: «Ամեն մի կրթված ու ինտելիգենտ կին պետք է լավ տիրապետի այդ գործիքին»,– ասում էր նա: Որպեսզի չնեղացնեմ այդ պատվարժան կնոջը, ես սկսեցի ջանադիր կերպով դաշնամուր նվագել սովորել և վեց ամիս անց այնպիսի արդյունքների հասա, որ հրավեր ստացա մասնակցելու բարեգործական մի համերգի: Այդ համերգին ներկա եղած մեր բոլոր ծանոթները հիացմունք հայտնեցին իմ նվագի վերաբերյալ՝ բարձր գնահատելով իմ ունակությունները: Մի անգամ, խիստ հուզվելով մի երաժշտական ստեղծագործության իմ կատարումից, իշխանուհին մոտեցավ ինձ և հանդիսավոր տոնով ասաց, որ քանի որ Բարձրյալն ինձ այդպիսի տաղանդով է օժտել, ապա մեծ մեղք կլինի այդ շնորհն անտեսելը և այն լրիվ չգարգացնելը: Նա ավելացրեց, որ ես պետք է շարունակեմ կատարելագործել իմ նվագը՝ չանտեսելով նաև երաժշտության տեսությունը: Այդ օրից սկսած՝ նա սկսեց բաժանորդագրվել այդ թեմային վերաբերող ամեն տեսակի գրականության և անգամ անձամբ մեկնեց Մոսկվա, որպեսզի մի քանի հազվագյուտ հրատարակություններ ձեռք բերի ինձ համար: Շուտով իմ բոլոր գրադարակները բերնբերան լցվեցին երաժշտության տեսության վերաբերյալ գրքերով, և ես սկսեցի ջանասիրաբար ուսումնասիրել դրանք, այս անգամ արդեն ոչ միայն իմ հովանավորուհուն հաճույք պատճառելու համար: Ես տարվեցի երաժշտության տեսությամբ, և իմ հետաքրքրությունն օր օրի աճում էր: Մակայն գրքերը չէին պատասխանում ինձ հետաքրքրող հարցերին. ոչինչ չէր ասվում այն մասին, թե ինչ բան է երաժշտությունը, և թե ինչ օրենքներով է այն ազդեցություն թողնում մարդու հոգեկան աշխարհի վրա: Որպես կանոն, դրանց բովանդակությունը նվիրված էր լինում երաժշտության պատմությանը: Օրինակ՝ կարող էիր տեղեկանալ, որ եթե մեր

օկտավան յոթ նոտա ունի, ապա չինականը սահմանափակվում է հինգով. որ հին եգիպտացիները քնարին թեքունի էին ասում, իսկ ֆլեյտային՝ մեմ. որ բազմաձայն երաժշտությունն առաջին անգամ հայտնվել է իններորդ դարում և սկզբնական շրջանում որպես ժխոր էր ընկալվում. այն աստիճան, որ դրա պատճառով կանանց մոտ երբեմն վիժման դեպքեր էին նկատվում. որ տասնմեկերորդ դարում Գվիդո դե Արեցոն հորինեց սոլֆեջիոն և այլն, և այլն: Դ՜անց մեջ կարելի էր գտնել նաև հայտնի երաժիշտների կենսագրությունները և փառքի հասնելու նրանց ճանապարհի նկարագրությունը: Անգամ մանրամասներ կարելի էր գտնել նրանց փողկապի գույնի կամ մազերի երկարության մասին, բայց ոչինչ չէր ասվում նրանց ստեղծագործության էության կամ այն մասին, թե ինչ սկզբունքով է նրանց ստեղծագործությունն ազդում մարդկանց հոգեկան աշխարհի վրա: Ես դատարկ տեղը մի ամբողջ տարի կորցրի այդ, այսպես կոչված, երաժշտության տեսությունն ուսումնասիրելու վրա, բայց այդ խնդրի նկատմամբ իմ հետաքրքրությունը չբավարարվեց: Ուստի ես հանգիստ թողեցի այդ գրքերը և սկսեցի ուրիշ տեղ տեղեկություններ փնտրել:

Մի անգամ բոլորովին պատահաբար իշխանի գրադարանում ես գտա «Հնչյունների աշխարհը» վերնագրով մի գիրք, որը նոր ընթացք տվեց իմ մտքերին: Հեղինակը երաժիշտ չէր, իսկ գրքի բովանդակությունից հետևում էր, որ նա ընդհանրապես երաժշտությամբ չէր հետաքրքրվել: Լինելով մաթեմատիկոս և ճարտարագետ՝ նա երաժշտությունը որպես օրինակ էր օգտագործում տատանումների տեսությունը բացատրելու համար: Նա ասում էր, որ հնչյունները որոշակի թրթիռներ են, որոնք համապատասխան թրթիռներ են առաջացնում մարդու օրգանիզմում՝ առաջացնելով զանազան զգացողություններ: Այդ վարկածն ինձ արտակարգ հետաքրքրեց, և ես կարողացա դրանով վարակել նաև իմ խնամակալուհուն: Մենք հաճախ էինք զրուցում այդ թեմայով և ի վերջո որոշեցինք որոշ փորձեր կատարել: Սկզբում երաժշտության ազդեցությունը մենք ստուգեցինք կենդանիների վրա՝ այդ նպատակով գնելով մի քանի կատու և շուն: Հետո սկսեցինք հյուրասենյակ բերել նաև մեր ծառաներին: Համեղ ընթրիքից հետո նրանց նստեցնում էինք բազկաթոռների վրա և նրանց համար նվագում զանազան երաժշտական ստեղծագործություններ: Սկզբնական շրջանում մեր փորձերը որոշակի արդյունք չէին ունենում, բայց շուտով ես նկատեցի, որ իմ հորինած մի վալսի կատարման ժամանակ մեր «փորձարկվողները» հակվում էին քնելուն: Հետագայում այդպիսիների թիվը մեծացավ, բայց դա միակ նկատելի արդյունքն էր, որ մենք ունեցանք: Այդ գաղափարներից ու փորձերից ես այնպիսի գերհոգնածություն ունեցա, որ, իմ վիճակով մտահոգվելով, իշխանուհին ինձ տարավ արտասահման: Իտալիայում ունեցած նոր տպավորությունները բուժեցին իմ նյարդային հյուծվածությունը: Միայն հինգ տարի անց, երբ մասնակցում էի դեպի Պամիր և Աֆղանստան կատարվող արշավներին, ես իմ մեջ ուժ գտա վերադառնալու այդ թեմային: Հիշելով իմ նախկին «փորձերը», ես հազիվ էի ծիծաղս զսպում: Մենք անսահման միամիտ էինք. մեր գլխում երբեք չծագեց այն միտքը, որ «փորձարկվողները» ննջում էին միայն այն պատճառով, որ օրվա հոգնածությունից հետո նրանց կուշտ ընթրիք էինք տալիս, իսկ երաժշտությունը որևէ դեր չէր խաղում:

Վերադառնալով Ռուսաստան՝ ես նոր փորձեր դրեցի՝ ավելի խելամիտ հիմքով և հաշվի առնելով ամենաչնչին մանրամասները՝ ամեն մի փորձարկվողի բնավորությունն ու տեմպերամենտը, անգամ օրվա ժամն ու եղանակը: Այնուամենայնիվ ինձ չհաջողվեց հասնել այն բանին, որ միևնույն մեղեդին նույն կերպ ազդի տարբեր մարդկանց վրա: Դա տեղի էր ունենում միայն այն դեպքում, երբ փորձի մասնակիցները պատկանում էին միևնույն ռասային և ունենում էին միատեսակ բնավորություն և տեմպերամենտ:

Այդ պատճառով ես խիստ զարմացա, երբ երեկ երեկոյան հնչած այդ տարօրինակ երաժշտությունը բոլոր ներկաների վրա թողեց միատեսակ տպավորություն: Այդ փաստը հնարավոր չէ բացատրել «հոտային բնագործով», քանի որ ներկաները զարգացած և անկախ հայացքներ ունեցող անձիք էին: Այդ երևույթի համար ոչ մի բացատրություն չգտնելով՝ ես վերադարձա իմ սենյակը և չկարողացա քնել: Հանելուկը լուծելու ցանկությունն ուղղակի խելքահան էր արել ինձ: Գիշերն անքուն մնալուց հետո ես առավոտյան ոչինչ չկերա ու չխմեցի, հետո զայրույթի նոպայի մեջ ընկա և կծեցի սեփական ձեռքս: Այս վիրակապը դրա հետևանքն է: Մատու այնպես եմ վնասել, որ հազիվ եմ կարողանում սանձը պահել»:

Նրա այս պատմությունը ուժեղ տպավորություն թողեց ինձ վրա և դրա ազդեցությամբ էլ ես Վիտվիցկայայի հետ կիսեցի իմ սեփական փորձերի ու դիտումների արդյունքները: Ես հատուկ ուշադրություն հրավիրեցի մի երևույթի վրա, որն ինձ հաջողվեց դիտել իմ նկատմամբ հայր Եվլեսիոսի

ունեցած բարի վերաբերմունքի շնորհիվ: Նա ինձ երաշխավորագիր տվեց, որի շնորհիվ կարողացա շփվել մի աղանդի ներկայացուցիչների հետ, որի անդամները կարողանում էին կես ժամի չափ տևող հին եբրայական մեղեդիների շնորհիվ բույսերի նկատելի աճ ապահովել:

Տիկին Վիտվիցկայան ուղղակի ապշած էր իմ պատմածից և ինձ առաջարկեց նմանատիպ փորձերը շարունակել ռուսական մի որևէ փոքրիկ քաղաքում, որտեղ ոչ ոք մեզ չէր խանգարի: Շուտով նա լիովին կազդուրվեց իր ապրած նյարդային ցնցումից և մեր արշավի մնացած ընթացքում իրեն սովորականի պես էր պահում: Չնայած մատը վնասել էր, բայց ամենաանխոնջ հեծյալն էր և արշավախմբի ամենաարդյունավետ մասնակիցներից մեկը:

Վիտվիցկայան Ռուսաստանում մահացավ խիստ մրսելուց, երբ ճամփորդում էր Վոլգա գետով: Նա թաղվեց Սամարայում: Տաշքենդում հեռագիր ստանալով՝ ես հասցրի գնալ և մասնակցել նրա հուղարկավորությանը:

Եվ հիմա, երբ ինձ հատկացված կյանքի հիմնական մասն արդեն ապրել եմ, եղել տարբեր երկրներում ու շփվել շատ ու շատ հետաքրքիր մարդկանց հետ, պետք է խոստովանեմ, որ երբեք չեմ հանդիպել ու հավանաբար հետագայում էլ չեմ հանդիպի ավելի արժանապատիվ, կիրթ ու խելացի կնոջ, քան նա էր:

Վերադառնալով իմ մտերիմ ընկեր իշխան Յուրի Լյուբովեցկու անձին՝ ուզում եմ շարունակել նրա զարմանալի կյանքի նկարագրությունը: Կոնստանդնուպոլից իմ հեռանալուց հետո իշխանը նույնպես լքել էր այդ քաղաքը, և մի քանի տարի մենք չէինք հանդիպում, այլ միայն նամակագրությամբ էինք կապ պահպանում իրար հետ: Հենց այդ նամակներից էլ ես իմացա այն ամենակարևորը, որը տեղի էր ունեցել այդ մարդու կյանքում:

Մեր հաջորդ հանդիպումը կայացավ միասին Ցեյլոն գնալու ժամանակ, որտեղից արշավ կազմակերպեցինք դեպի Ինդոս գետի ակունքները: Հերթական բաժանումից հետո ես իշխանից նամակներ ստացա Աֆղանստանից, Բելուջիստանից և Կաֆիրստանից, ապա մեր նամակագրությունը հանկարծակի ընդհատվեց: Այլևս նրա հետագա ճակատագրից ոչ մի լուր չստանալով՝ ես մտածեցի, որ նա զոհվել է իր արշավներից մեկի ժամանակ: Աստճանաբար ես վարժվեցի այն մտքին, որ այլևս երբեք չեմ տեսնի իմ այդ ընկերոջը, բայց հանկարծ բոլորովին պատահաբար ես նրան հանդիպեցի Ասիայի բուն սրտում:

Որպեսզի ավելի լավ լուսաբանեմ իմ վերջին հանդիպման հանգամանքները՝ մի մարդու հետ, ով կարող է օրինակ ծառայել ցանկացած մարդու համար, ես կրկին կշեղվեմ և նախ կպատմեմ ումն Մոլովյովի մասին: Այդ մարդը համընդհանուր ճանաչված հեղինակություն էր արևելյան բժշկության բնագավառում: Նա առանձնապես լավ էր ուսումնասիրել Տիբեթի բժշկությունը և ավիոնի ազդեցությունը մարդու օրգանիզմի, մասնավորապես՝ հոգեկանի վրա:

Մոլովյով

Բուխարական խանության մայրաքաղաք Բուխարայից չորս-հինգ մղոն հեռավորության վրա, Անդրկովկասյան երկաթգծի կայարաններից մեկի շրջակայքում ռուսները մի քաղաք են կառուցել և այն անվանել Նոր Բուխարա: Առաջին անգամ Մոլովյովին ես հանդիպեցի հենց այդ քաղաքում: Ես այդ վայրերն էի հասել իսլամի հիմունքներն ուսումնասիրելու նպատակով, որպեսզի ավելի խոր մակարդակով կարողանամ հաղորդակցվել տարբեր աղանդների պատկանող դերվիշների հետ, որոնցից մեկն իմ հին ընկեր Բոգա-Էդդինն էր: Նա այդ ժամանակ Բուխարայում չէր, բայց ես հույս ունեի, որ շուտով կվերադառնա:

Նոր Բուխարայում ես բնակություն հաստատեցի ռուսական կվասի առևտրով զբաղվող իմ ծանոթներին պատկանող տան մի փոքրիկ սենյակում: Կացարանս ինձ հետ կիսում էր իմ լավագույն ընկերը՝ քրդական հսկա հովվաշուն Փիլոսը, որն ինը տարի շարունակ ինձ ուղեկցում էր իմ բոլոր ճամփորդությունների ժամանակ: Այդ շունը շատ արագ հայտնի էր դառնում բոլոր այն վայրերում, որտեղ մեզ վիճակվում էր դադար առնել: Նրան հատկապես շատ էին սիրում փոքր երեխաները. նրանք ուղղակի ճչում էին հիացմունքից, երբ տեսնում էին, թե ինչպես է դնչով բռնած թեյնիկով ինձ համար տաք ջուր բերում պանդոկից կամ թեյարանից, ուր ես նրան ուղարկում էի: Փիլոսը նաև գնումների էր գնում իմ կազմած ցուցակով: Ես ինձ պարտավորված եմ զգում ընթերցողներին պատմել

այդ զարմանալի կենդանու մասին՝ նրա խելքի արտասովոր ճկունությունը հաստատող մի քանի իրական դեպքեր նկարագրելով:

Մինչև Բուխարա գնալս ես ապրում էի Պ. քաղաքում, որտեղ հայտնվեցի նյութական ծանր կացության մեջ: Երբ վճարեցի իջևանատանը զբաղեցրած իմ սենյակի վարձը և վճարեցի ունեցած պարտքերս, տեսա, որ մոտս մնացել է ընդամենը 60 կոպեկ: Այդ քաղաքում փող աշխատելը համարյա անհնարին էր. շատ խուլ վայր էր, և հնարավոր չէր հույս կապել ինչ-որ գեղարվեստական իրեր վաճառելու հետ: Հուսալով, որ իմ ունակություններն ավելի լայն կիրառություն կգտնեն Մամարղանդում, որտեղ շատ ռուսներ ու եվրոպացիներ կային, ես նախապես պատվիրել էի, որ Թիֆլիսից ինձ համար փող ուղարկեն այդ հասցեով: Բայց քանի որ նյութական միջոցներս արդեն չէին ներում, որ այնտեղ հասնեմ հարմարավետ եղանակով, ստիպված էի ամբողջ յոթանասուն մղոն ճանապարհը ոտքով անցնել: Մի գեղեցիկ օր ես ճամփա ընկա իմ ընկեր Փիլոսի հետ՝ ինձ համար գնելով հինգ կոպեկի հաց, իսկ նրա համար՝ նույն գնի ոչխարի զլուխ: Մենք ստիպված էինք կիսաքաղց ապրել, և ամբողջ ճանապարհին ինձ անհանգստություն էր պատճառում մեր սնունդն ավելացնելու ցանկությունը, երբ անցնում էինք բանջարանոցների մոտով, որոնք տեղական սովորության համաձայն շրջափակված էին երուսաղեմական բարձր արտիճուկներով, որոնք յուրահատուկ ցանկապատի դեր էին կատարում:

Գայթակղությունն այնքան մեծ էր, որ այդ տուններից մեկին մոտենալով և ստուգելով, որ մեզ ոչ ոք չի նայում, արագ-արագ մի քանի արտիճուկ հանեցի հողից: Քայլելու ընթացքում մեծ ախորժակով կերա դրանք՝ մեկն էլ առաջարկելով իմ ընկեր Փիլոսին: Բայց նա միայն հոտոտեց և կտրուկ հրաժարվեց համտես անելուց:

Մամարղանդի ծայրամասում ապրող տեղական մի պաշտոնյայի տանը սենյակ վարձելուց անմիջապես հետո ես շտապեցի փոստ, որպեսզի ստանամ ուղարկված փողը: Սակայն այն դեռ տեղ չէր հասել: Ստիպված էի մտածել փող աշխատելու ձև գտնելու մասին, և ես որոշեցի արհեստական գունավոր ծաղիկներ սարքել: Մտա խանութ, որպեսզի դրա համար գունավոր թղթեր գնեմ, բայց պարզվեց, որ մոտս մնացած 15 կոպեկով դրանցից շատ քիչ քանակությամբ կարող եմ գնել: Ավելի էժան էր ստացվում սպիտակ թուղթ և անիլինային ներկեր գնելը, որպեսզի ինքս ներկեմ: Խանութից դուրս գալուց հետո գնացի քաղաքային այգի, որպեսզի մի փոքր հանգստանամ ծառերի ստվերում: Ոչ այնքան ուրախ մտքերի մեջ խորասուզված՝ ես ցրված հայացքով դիտում էի ճնճողուկներին, որոնք աշխուժորեն ճյուղից ճյուղ էին թռչում՝ վայելելով կեսօրվա խաղաղությունն ու ստվերի զովությունը: Հանկարծ գլխումս այսպիսի միտք ծագեց. «Այս ճնճողուկներով փող չաշխատեմ արդյոք...»: Տեղացիները հավանաբար շատ են սիրում դեղձանիկները դայլայլ լսել: Իսկ ինչու՞ ճնճողուկը դեղձանիկի չվերածել: Ոչ շատ հեռու նկատեցի մի քանի սայլապանի, որոնք ստվերոտ տեղերում ննջում էին՝ ուղևորների սպասելով: Ես մոտեցա ձիերից մեկին և, առանց ինձ վրա ուշադրություն հրավիրելու, պոչից մի քանի մազ քաշեցի: Դրանցից ես թակարդներ սարքեցի այգու տարբեր մասերում: Ամբողջ այդ ընթացքում Փիլոսն ուշադիր հետևում էր իմ անսովոր գործողություններին: Շուտով առաջին ճնճողուկն ընկավ թակարդներից մեկը. ես որսս զգուշորեն ազատեցի և տարա տուն:

Տանտիրուհուց մկրատ խնդրեցի, խուզեցի ճնճողուկի փետուրների մի մասը և նրան դեղձանիկի տեսք սովեցի: Հետո գունազարդեցի անիլինով: Հին Մամարղանդում «դեղձանիկն» անմիջապես ծախվեց երկու ռուբլով, քանի որ գնորդը հավատաց, որ դա իսկական «ամերիկյան դեղձանիկ» է: Այդ երկու ռուբլով ես մի քանի հասարակ վանդակներ գնեցի և հաջորդ ճնճողուկները դեղձանիկների տեղ վաճառեցի ավելի թանկ գնով: Երկու շաբաթվա ընթացքում ինձ հաջողվեց այդպիսի 80 «ամերիկյան դեղձանիկ» վաճառել:

Առաջին օրերին ճնճողուկի որսի գնալիս Փիլոսին հետս էի տանում, բայց հետո ստիպված եղա նրան թողնել տանը, քանի որ մշտապես իր շուրջն էր հավաքում երեխաներին և դրանով իսկ հեռու փախցնում թռչուններին: Իմ այդպես վարվելուց մի օր անց, Փիլոսն առավոտյան անհայտացավ տնից և երեկոյան վերադարձավ՝ կեղտի մեջ կորած, իսկ բերանում՝ սասկած մի ճնճողուկ, որը հանդիսավորապես դրեց իմ մահճակալին: Եվ այդպես մի քանի օր իրար հետևից, առավոտյան գնում էր, երեկոյան վերադառնում սասկած ճնճողուկով: Ես զգուշացա Մամարղանդում երկար մնալուց, քանի որ իմ վաճառած «ամերիկյան դեղձանիկներից» մեկը կարող էր պատահաբար հայտնվել անձրևի տակ կամ որոշել լողանալ սեփական ջրամանում և ինձ կանգնեցնել մեծ տհաճությունների առջև:

Ուստի որոշեցի պոչս քաշել այդ քաղաքից՝ խուսափելով այն վնասից, որը կարող էին իմ առողջությանը հասցնել «ամերիկյան դեղձանիկների» գայրագնած գնորդները:

Մամարդանդից գնացի Նոր Բուխարա, որտեղ հույս ունեի հանդիպել իմ հին դերվիշ-ընկեր Բոգա-Էդդիի հետ: Ես ինձ արդեն հարուստ էի համարում, քանի որ հասցրել էի 150 ռուբլի վաստակել, որն այն ժամանակ նշանակալի գումար էր կազմում:

Ինչպես արդեն ասացի, Նոր Բուխարայում ես սենյակ էի վարձել ռուսական կվասի առևտրով զբաղվող իմ ծանոթների տանը: Այնտեղ որևէ կահույք չկար, և ես ինձ համար քնելու տեղ պատրաստեցի՝ հատակին ուղղակի մաքուր սավան փռելով, հրաժարվելով բարձից ու ծածկոցից: Ես այդպես վարվեցի ոչ ժլատությունից, տվյալ դեպքում հարմարավետությունից հրաժարվելու հիմնական պատճառը փող խնայելը չէր: Բանն այն էր, որ այդ ժամանակ ես հրապուրվել էի հնդկական յոգայի ուսմունքով: Ընդ որում պետք է խոստովանեմ, որ նույնիսկ ամենաձանր նյութական իրավիճակներում ես չեմ կարողացել հրաժարվել մաքուր սավանից և ամեն օր մարմինս շփում էի բավականին թանկ օձանելիքով, որի թնդությունը ուրանասուն տոկոսից պակաս չպետք է լիներ:

Ինձ համար հանպատրաստից անկողին սարքելուց հինգ-տասը բոլոր հետո երբ պառկեցի, և Փիլոսի հաշվարկներով արդեն պետք է քնեի, նա պառկեց իմ ոտքերի մոտ, քանի որ երբեք իրեն թույլ չէր տալիս հայտնվել իմ անկողնու գլխամասում: Մենյակում որպես սեղան էր ծառայում թելով կապած գրքերի կապոցը: Դրանք վերաբերում էին այն թեմային, որն այդ ժամանակ ինձ ամենաշատն էր հետաքրքրում: Այդ յուրօրինակ սեղանի վրա ես տեղավորել էի բոլոր այն իրերը, որոնք կարող էին պետք գալ գիշերվա ընթացքում. լամպը, նոթատետրը, հակառօջիլային փոշու տուփը և այլն: Մի անգամ՝ առավոտյան, երբ Նոր Բուխարա հասնելուց հետո անցել էր մի քանի օր, իմ այդ սեղանի վրա մի խոշոր երուսաղեմյան արտիճուկ նկատեցի: Հիշում եմ, որ այդ հաճելի անակնկալը ես անմիջապես վերագրեցի տանտիրուհուն, որը հավանաբար ինչ-որ կերպ իմացել էր, որ ես շատ եմ սիրում հատկապես այդ բանջարեղենը: Մտքիս մեջ երախտագիտություն հայտնելով բարի կնոջը, ես մեծ ախորժակով կերա այդ արտիճուկը: Քանի որ կասկածելու որևէ առիթ չունեի, որ հենց նա է այդ հաճելի անակնկալի հեղինակը (նրանից բացի ոչ ոք իմ սենյակ չէր մտնում), ես հենց առաջին հանդիպման ժամանակ ջերմորեն շնորհակալություն հայտնեցի նրան այդ սիրալիրության համար: Ի գարմանս ինձ, պարզվեց, որ տանտիրուհին այդ արտիճուկից տեղյակ չէ: Հաջորդ առավոտյան կրկնվեց նույնը՝ արտիճուկն իր նախկին տեղում էր: Թեև հրաշքի պես մի բան էր, բայց ես այդ մեկն էլ ոչ պակաս հաճույքով խժոեցի: Բայց երբ երրորդ օրն էլ նույն բանը կատարվեց, ես որոշեցի հանելուկը լուծել և գտնել կատակաբանին: Առավոտյան թաքնվեցի միջանցքում դրված կվասի տակառի հետևում և որոշ ժամանակ անց տեսա Փիլոսին, որը միջանցքով գաղտագողի անցնում էր՝ աստամներով մի մեծ արտիճուկ բռնած: Նա զգուշորեն մտավ իմ սենյակը և արտիճուկը դրեց այնտեղ, որտեղ սովորաբար ես դրանք գտնում էի: Որոշեցի հետաքննություն կատարել: Հաջորդ առավոտյան ձեռքով թփթփացրի շան գլխի ձախ կողմին, ինչը նշանակում էր, որ ես տնից գնում եմ՝ առանց իրեն հետս տանելու: Հետո տնից հեռացա և թաքնվեցի մոտակա կրպակում: Շուտով Փիլոսը դուրս եկավ տնից և, ուշադիր շուրջը նայելով, գնաց շուկայի կողմը, որտեղ ուտելու բաներ էին վաճառում և օրվա այդ ժամին անավոր իրարանցում էր լինում: Կրպակներից մեկի մոտ Փիլոսը կանգ առավ և համոզվելով, որ շրջապատում ոչ ոք իրեն չի նայում, գլուխը խոթեց բանջարեղենի զամբյուղի մեջ, այնտեղից մի խոշոր արտիճուկ հանեց ու փախավ: Երբ տուն եկա, տեսա, որ այդ արտիճուկը դրված է իմ սեղանին:

Հիմա ուզում եմ պատմել իմ հավատարիմ ընկեր Փիլոսի բնավորության ևս մի գծի մասին, որը նույնպես դրսևորվեց Նոր Բուխարայում:

Սովորաբար, երբ ես տնից դուրս էի գնում առանց շանը հետս տանելու, նա պառկում էր դռան մոտ և սպասում իմ վերադարձին: Իմ բացակայության ժամանակ ցանկացած մարդ կարող էր մտնել իմ սենյակ, բայց այնտեղից դուրս գալ չէր կարող, քանի որ շունը գրմում էր և ցույց տալիս ժանիքները, և դա բավարար էր, որ անկոչ այցելուի չոքերը թուլանան: Որպես օրինակ՝ բերեմ մի զվարճալի դեպք, որ տեղի ունեցավ հենց Նոր Բուխարայում: Ոմն լեհ, որի գործը քաղաքից քաղաք շրջելով կինոֆիլմեր ցուցադրելն էր (ինչը հազվադեպ երևույթ էր այն ժամանակներում), տեղացիներից մեկի խորհրդով դիմել էր ինձ, որպեսզի վերանորոգեմ ացետիլենի բալոններից մեկը, որն օգտագործվում էր կինոցուցադրումների ժամանակ: Ես խոստացել էի դրանով զբաղվել, երբ ժամանակ ունենամ: Բայց այնպես էր ստացվել, որ երկրորդ բալոնն էլ էր սկսել զազ բաց թողնել, և այդ լեհը, երկու բալոնը շալակած, շտապել էր ինձ մոտ, որպեսզի դրանք հասցնեի վերանորոգել մինչև երեկոյան սեանսը:

Տեսնելով, որ տանը չեմ, նա որոշել էր այդ ծանր բալունները թողնել իմ սենյակում և ինքը հեռանալ: Այդ օրվա առավոտյան ես գնացել էի Հին Բուխարա, որպեսզի հանդիպեմ մի մահմեդականի հետ: Քանի որ Մուհամեդի հետևորդները շանն անմաքուր կենդանի են համարում, ես Փիլոսին հետս չէի տարել: Եվ ահա Փիլոսն այդ մարդուն ներս էր թողել, իսկ դուրս թողնել կտրականապես հրաժարվել էր: Խեղճ լեիր մի քանի անհաջող փորձերից հետո ծայրահեղ վիատված վիճակում նստել էր հատակին և առանց հաց ու ջրի մինչև ուշ երեկո սպասել իմ վերադարձին:

Եվ այսպես, ինչպես արդեն ասել եմ, Նոր Բուխարայում գտնվելուս ընթացքում իմ ապրուստն իրոք հոգում էի արհեստական գունավոր ծաղիկներ պատրաստելով, ինչը նաև ինձ թույլ էր տալիս մուտք գործել ինձ հետաքրքրող վայրերը: Բացի այդ, իմ այդ գործունեությունից եկող շահույթը խոստանում էր առատ լինել: Բանն այն էր, որ այդ տարի հուղայական ու քրիստոնեական զատիկները համընկնում էին, իսկ այդ վայրերի բնակիչները շատ էին սիրում իրենց բնակարաններն այդ օրվա կապակցությամբ զարդարել արհեստական ծաղիկներով Շահույթս խոստանում էր մեծ լինել այն պատճառով, որ ինչպես Հին, այնպես էլ Նոր Բուխարաների բնակչության հիմնական մասն այդ երկու կրոնների հետևորդներ էին:

Ես օր ու գիշեր քրոնաջան աշխատում էի, միայն երբեմն դադար էի առնում դերվիշ ընկերներիս ացելելու համար, երբեմն էլ բիլիարդ էի խաղում մոտակա ռեստորաններից մեկի բակում: Երիտասարդ տարիներիս շատ էի տարված այդ խաղով և լավ խաղացողի համբավ ունեի:

Մի անգամ՝ երեկոյան, երբ, գործից հոգնած, տնից դուրս էի եկել, որպեսզի մի փոքր թարմանամ բիլիարդի գնդակ գլորելով, հանկարծ ինչ-որ ժխոր և բարձրաձայն գոչյուններ լսեցի: Ես, կին մի կողմ դնելով, շտապեցի աղմուկի կողմը և տեսա, որ մի քանի տղամարդիկ ծեծում են մեկին: Թեև բոլորն ինձ անձանոթ էին, և ես նույնիսկ չգիտեի, թե ինչն է այդ կովի պատճառը, ես մեջ ընկա, որպեսզի պաշտպանեմ ծեծվողին: Այդ տարիներիս ես մարզվել էի ճապոնական ջիու-ջիտսու մարտարվեստով և դեմ չէի այդ բնագավառի իմ հմտությունները գործնականում ցուցադրելուն: Մարզական հետաքրքրությունից դրդված միջամտելով այդ կովին՝ ես մի լավ դաս տվեցի հարձակվողներին և նրանց ստիպեցի փախուստի դիմել:

Նոր Բուխարայի բնակչությունն այն ժամանակ հիմնականում բաղկացած էր այնպիսի մարդկանցից, որոնք աքսորվել էին Ռուսաստանից և, այսպես կոչված, «մերժվածի փաստաթղթով» գտնվում էին ռուսկանության հսկողության տակ: Այստեղ ապրում էին բազմաթիվ ազգերի և երկրների ներկայացուցիչներ: Շատերն աչքի էին ընկնում մութ անցյալով և խիստ կասկածելի ապագայով: Նրանց մեջ կային թե՛ քրեական հանցագործներ, որոնք նոր էին ազատվել բանտարկությունից, թե՛ քաղաքական աքսորյալներ: Վերջիններիս մի մասն այստեղ էին հայտնվել դատարանի որոշմամբ, ոմանք էլ աքսորվել էին վարչական կարգով: Քաղաքականապես անհուսալի մարդկանց առանց դատի աքսորելն այդ ժամանակներում լայնորեն տարածված էր Ռուսաստանում:

Աքսորյալներն այստեղ ապրում էին շատ խղճով և իրենց համար անսովոր պայմաններում և, որպես կանոն, վերածվում էին հարբեցողների: Նույնիսկ նրանք, ովքեր նախկինում չէին խմում, աստիճանաբար սանձերը բաց էին թողնում և կորցնում մարդկային տեսքը:

Հակառակորդների հախից գալուց հետո ես որոշեցի պատահական ընկերոջս տուն ուղեկցել, մտածելով, որ մենակ գնալու դեպքում նրա հետ դժբախտություն կպատահի: Բայց պարզվեց, որ նա բնակվում է հենց իրեն ծեծող տղամարդկանց հետ միևնույն տանը, ուստի ստիպված եղա նրան հրավիրել ինձ մոտ, ինչին նա ուրախությամբ համաձայնեց:

Իմ նոր ծանոթը, որը ներկայացավ Մոլովյով ազգանվամբ, դեռ շատ երիտասարդ էր, բայց ես նկատեցի, որ նա արդեն հակում ունի դեպի սպիրտային խմիչքները: Առավոտյան պարզվեց, որ Մոլովյովը լավ տուժել է ծեծկոտուքից. մարմինը բազմաթիվ կապտուկներով էր ծածկված, իսկ աչքերից մեկը համարյա չէր բացվում: Ես նրան առաջարկեցի ինձ մոտ ապրել մինչև լրիվ ապաքինվելը, մանավանդ որ Ջատկի կապակցությամբ կարող էր աշխատանքի չգնալ: Շուտով նա ինչ-որ տեղ գնաց և երեկոյան վերադարձավ, որպեսզի գիշերի ինձ մոտ:

Ամբողջ հաջորդ օրը ես վազվզոցի մեջ էի քաղաքով մեկ. պատվիրատուներին էի հասցնում Ջատկի համար նախատեսված ծաղիկները: Քանի որ այստեղ քրիստոնյա ծանոթներ չունեի, ոչ մի տեղ հրավիրված չէի, ուստի զատկի համար նախատեսված ուտեստեղեն գնեցի՝ չմոռանալով նաև մի շիշ օղին, և երեկոյան կողմ, ավարտելով աշխատանքս, եկա տուն: Մոլովյովը դեռ չկար, և ես լվացվեցի,

մաքրեցի հազիս շորերը, քանի որ փոխնորդ չունեի, և գնացի եկեղեցի՝ երեկոյան ժամերգությանը մասնակցելու:

Երբ վերադարձա, Սուրվյոժին քնած գտա: Քանի որ սենյակում սեղան չունեի, պատուհանից մի դատարկ արկղ ներս մտցրի և, աշխատելով իմ աղմուկով քնածին չանհանգստացնել, սեղանը ծածկեցի մաքուր սավանով և դրա վրա դասավորեցի գնածս տոնական ուտեստեղենը: Դրանից հետո արթնացրի Սուրվյոժին: Վերջինս, զգված սեղանը տեսնելով, շատ զարմացավ և ուրախությամբ համաձայնեց մասնակցել տոնական «խնջույքին»: Նա նստեց իմ գրքերի կապոցի, իսկ ես՝ շրջված դուլի վրա: Ես մի բաժակ ողի առաջարկեցի, բայց Սուրվյոժը, ի զարմանս ինձ, հրաժարվեց խմելուց: Ես մենակ խմեցի, որից հետո ձեռնամուխ եղանք ուտելուն: Փիլոսին տոնի առթիվ մեկի փոխարեն ոչխարի երկու գանգ էր բաժին հասել: Մենք ուտում էինք սուսուփուս, և մեր տրամադրությունները դժվար էր տոնական համարել: Հիշելով, թե ինչպես էինք Չատիկը նշում ընտանեկան շրջապատում, իմ մտքերը գնացին հարազատներիս կողմը, որոնք հեռու էին ինձնից: Սուրվյոժն էլ իր մտածումներն ուներ, և մենք այդպես նստեցինք բավական երկար:

Հանկարծ Սուրվյոժը, կարծես սեփական մտածումներն ազդեցության տակ, բացականչեց. «Տե՛ր աստված, ուժ տուր ինձ, որ այլևս ձեռք չմեկնեմ այդ թույնին, որն ինձ այս վիճակին է հասցրել...»: Հետո նա որոշ ժամանակ լռեց, ապա սկսեց անսովոր անկեղծությամբ պատմել իր մասին: Գուցե այդ անկեղծության պատճառը Չատիկն էր, որը նրան հիշեցրեց նախկին կյանքի մասին, գուցե տոնական սեղանը, գուցե և՛ մեկը, և՛ մյուսը, բայց նա ամբողջ գիշեր հոգին բացեց իմ առաջ:

Պարզվեց, որ Սուրվյոժը նախկինում փոստի աշխատող էր եղել, բայց պատահաբար էր այդ գործին անցել: Ծագումով նա հարուստ վաճառականի ընտանիքից էր: Սամարայում նրա հայրը մի քանի ջրաղացներ ուներ: Մոր ծնողները սնանկացած ազնվականներ էին և նրան ոչ մի ժառանգություն չէին թողել, ոչ էլ կարողացել էին նրան լավ կրթություն տալ: Ազնվական օրիորդների ինստիտուտն ավարտած լինելով, նա իր զավակներին միայն լավ վարվելաձևեր էր սովորեցրել, և դա միակ բանն էր, որ նա ձեռք էր բերել այդ ուսումնական հաստատությունից: Հայրը հազվադեպ էր տանը լինում և ժամանակի մեծ մասն անց էր կացնում իր ջրաղացներում ու շտեմարաններում: Բացի այդ, նա թունդ խմող էր և տարին մի քանի անգամ մի քանի շաբաթով ընկնում էր հարբեցողության նոպայի մեջ: Իսկ երբ լուրջ էր լինում, Սուրվյոժի բառերով ասած, իրեն պահում էր ինքնահավան արյուրի պես:

Ծնողներից ամեն մեկն իր ինքնուրույն կյանքով էր ապրում, և հազիվ էին հանդուրժում իրար: Սուրվյոժը կրտսեր եղբայր էլ ուներ, և, ինչպես հաճախ է լինում, ծնողները երեխաներին բաժանել էին իրար մեջ: Մոր սիրելին ավագն էր, որի պատճառով ստիպված էր լինում տանել հոր մշտական ծաղրուծանակը: Դա հանգեցնում էր մշտական վիճաբանությունների, որոնք էլ ի վերջո վերածվեցին իսկական թշնամության: Մայրն ամեն ամիս ավագ որդուն որոշակի գումար էր տալիս, բայց շուտով դա սկսեց չբավարարել, քանի որ որդին սկսել էր աղջիկների հետևից ման գալ: Եվ ահա մի անգամ նա գողանում է մոր թանկարժեք ապարանջանը, որ նվիրի իր սիրեցյալին: Մայրն իմանում է գողության մասին, բայց ամուսնուն չի հայտնում այդ մասին, իսկ որդին շարունակում է տնից արժեքավոր իրեր դուրս տանել: Արդյունքում ընտանիքի գլխավորն էլ է ի վերջո իմանում այդ մասին: Գողը տնից վռնդվում է, բայց շուտով մոր թախանձանքների շնորհիվ ներում է ստանում:

Երբ Սուրվյոժն ավարտում է գիմնազիայի հինգերորդ դասարանը, շարժական կրկես է հայտնվում Սամարայում, և պատանին իսկապես թոցնում է՝ սիրահարվելով ակրոբատ-հեծյալ ու գեղեցկուհի Վերային: Կրկեսը հեռանում է քաղաքից՝ իր հետ տանելով նաև Սուրվյոժին, որը նախապես տնից նշանակալի մի գումար է թոցնում: Այդ ժամանակ նա արդեն տարվել էր սպիրտային խմիչքներով: Ցարիցիում նա իմանում է, որ Վերան սիրավեպ է սկսել հեծյալ ոստիկանության ոմն կապիտանի հետ, և դրանից հետո ավելի շատ է սկսում խմել՝ դառնալով նավահանգստային պանդոկների մշտական այցելուն: Դրանցում նա կապվում է գանազան մութ անձնավորությունների հետ, որոնք էլ նրան մի օր գիտակցությունը կորցնելու չափ խմեցնում են և թալանում մինչև վերջին կոպեկը: Այդ վիճակում հատնվելով անձանոթ քաղաքում, նա չի համարձակվում այդ մասին հայտնել ծնողներին, քանի որ սկսել էր խղճի խայթ զգալ իր վարքագծից:

Սուրվյոժը ստիպված է լինում ապրուստ փող վաստակել ամենասև աշխատանքով. նա հաճախակի փոխում է գործը և ի վերջո հայտնվում Բաքվում: Այստեղ բախտը մի փոքր ժպտում է նրան, քանի որ մի պատահական ծանոթից փոխ առած վայելուչ հագուստի շնորհիվ կարողանում է աշխատանքի ընդունվել որպես հեռագրիչի օգնական Բալախանի շրջանում:

Ապրած դժբախտությունները նրան ստիպում են խելքի գալ, և նա սկսում է բարեխղճորեն կատարել իր ծառայողական պարտականությունները: Մի անգամ Սոլովյովը հանդիպում է մի մարդու, որը Սամարայի նախկին բնակիչ էր և ծանոթ էր իր ընտանիքին: Վերջինս որոշում է երիտասարդին օգնել պատշաճ դիրք գրավելու հարցում: Գիմնագիական կրթության շնորհիվ Սոլովյովը փոստային ծառայողի պաշտոն է ստանում Բաքվում և եռամսյա անվճար փորձաշրջանն անցնելուց հետո աշխատանքի նշանակվում Քուշքի փոստային վարչությունում: Նա սկսում է համեստ կյանք վարել, նվազագույնի է հասցնում ծախսերը, որից հետո կարողանում է վայելուչ հագնվել և դեռ մի բան էլ հետ գցել: Քսանմեկ տարեկանում Սոլովյովին հայտնում են, որ շուտով պետք է գնա զինվորական ծառայության: Նա վերադառնում է Սամարա և հյուրանոցից նամակ գրում մորը՝ չհամարձակվելով միանգամից տուն վերադառնալ: Բայց ծնողերն ուրախանում են նրա խելքի գալն իմանալով, ներում իրենց անառակ որդուն և կրկին ընդունում ընտանիք: Լինելով հեռագրիչ՝ նա պետք է մի քանի ամիս սպասեր իր գորակոչին, քանի որ այդ տեսակի գորակոչիկների ճակատագիրը որոշվում էր բանակի գլխավոր շտաբում: Երեք-չորս ամիս հետո նրան կանչում են և ծառայության նշանակում անդրկասպյան երկաթուղում, որն այն ժամանակ գտնվում էր զինվորական ենթակայության տակ: Որոշ ժամանակ անց Սոլովյովը հիվանդանում է դեղնախտով և նախ պառկում տեղի հոսպիտալում, ապա տեղափոխվում Սամարղանդի հոսպիտալ, որպեսզի այդտեղ անցնի բժշկական հանձնաժողովով, որը պետք է որոշեր թե արդյոք նա պիտանի է հետագա զինվորական ծառայության համար: Զինվորական հոսպիտալի գլխավոր կորպուսում, որտեղ պառկած էր Սոլովյովը, կար հատուկ բանտային բաժանմունք, որտեղ բուժում էին ացնում քրեական հանցագործներն ու դատի տակ գտնվողները: Մի անգամ՝ միջանցքում զբոսնելու ժամանակ, Սոլովյովը, պարապությունից դրդված, ծանոթանում է բանտային բաժանմունքի հիվանդներից մեկի հետ, որը, ինչպես հետո պարզվում է, փող կեղծող էր: Երբ Սոլովյովը հետագա ծառայության համար ոչ պիտանի է ճանաչվում և դուրս գրվում հոսպիտալից, այդ նոր ծանոթը նրան խնդրում է գրություն տանել իր գործընկերներից մեկին և այդ ծառայության դիմաց Սոլովյովին ինչ-որ կապույտ հեղուկով մի սրվակ է տալիս: Նա բացատրում է, որ այդ լուծույթի օգնությամբ հնարավոր է առանց մեծ դժվարության երեք ռուբլիանոց թղթադրամներ կեղծել: Հատուկ թուղթը պետք էր թրջել այդ հեղուկով, երկու կողմից իսկական երեք ռուբլիանոցներ դնել և այդ ամենն իրար հետ սեղմել հաստ գրքի էջերի արանքում: Կենտրոնական Ասիայում, որտեղի բնակչությունն այնքան էլ գլուխ չի հանում ռուսական փողերից, այդ թղթադրամները, ինչպես վստահեցնում էր այդ նոր ծանոթը, կարելի է հեշտությամբ իրացնել առանց որևէ լուրջ վտանգի: Սկզբում Սոլովյովն այդ գործընթացին ձեռնամուխ է լինում հետաքրքրությունից դրդված, բայց քանի որ տնից հեռանալուց հետո նյութական դժվարություններ ուներ, նա ի վերջո չի կարողանում զսպել իրեն և իրացնում է կեղծ փողերի որոշակի քանակություն: Հետո նա վերադառնում է Սամարա, գրկաբաց ընդունվում ծնողների կողմից և հոր խորհրդով սկսում աշխատել Սամարայից բավական հեռու գտնվող նրա ձեռնարկություններից մեկում: Մի քանի ամիս անց, չնայած իր բարի մտադրություններին, նա այնքան է ձանձրանում այդ գործից ու կարոտում նախկին թափառական կյանքին, որ գալիս է հոր մոտ և բացեիբաց հայտնում իր հեռանալու ցանկության մասին: Ի զարմանս Սոլովյովի, հայրն այս անգամ չի զայրանում և անգամ որոշակի գումար է տալիս ճանապարհի համար: Սկզբում Մոսկվա, հետո Սանկտ-Պետերբուրգ գնալով՝ Սոլովյովը կրկին իրեն խմիչքին է տալիս և այդ նույնի մեջ հայտնվում Վարշավայում: Զինվորական ծառայությունից ազատվելուց հետո արդեն անցած է լինում մի տարի, երբ Լեհաստանում Սոլովյովը պատահաբար հանդիպում է հոսպիտալի իր ծանոթին, որն, ինչպես պարզվում է, դատով արդարացվել և ազատ էր արձակվել: Վարշավայում նա սպասում էր, որ Գերմանիայից ուղարկված տպագրական մեքենան ստանա, որով հույս ուներ ավելի մեծ հաջողությամբ թղթադրամներ կեղծել: Նա Սոլովյովին առաջարկում է մտնել այդ գործի մեջ և զբաղվել Բուխարայում կեղծ թղթադրամներն իրացնելով: Առաջարկը գայթակղիչ էր, քանի որ մեծ շահույթներ էր խոստանում, և Սոլովյովը չի կարողանում հրաժարվել: Նա գալիս է Բուխարա, որ այնտեղ սպասի գործընկերոջը, որը Լեհաստանում իր արտասահմանյան ծանրոցին էր սպասում: Բուխարայում Սոլովյովը նորից տրվում է հարբեցողության և ծախսում բոլոր փողերը, որից հետո ստիպված աշխատանքի է ընդունվում երկաթգծում որպես սևագործ բանվոր: Դրանից հետո երեք ամիս էր անցել, և նա հիմա նստած էր իմ կողքին:

Այս անկեղծ պատմությունը խորապես հուզեց ինձ և նրան օգնելու ցանկությունն առաջացրեց: Այդ ժամանակ արդեն բավական շատ բան գիտեի հիպնոսի բնագավառից. կարողանում էի, մարդուն հիպնոսային վիճակի մեջ գցելով, նրան հրահանգ տալ ազատվելու անցանկալի հակվածությունից: Ուստի իմ նոր ծանոթին առաջարկեցի իմ օգնությունը՝ խոստանալով նրան ազատել կործանարար սովորությունից, եթե նա իրոք նման ցանկություն ունի, և բացատրեցի, թե ինչպես է դա արվում: Սովորվումն ուրախությամբ համաձայնեց, և մենք անմիջապես գործի անցանք: Ամեն օր ես հիպնոսացնում և համապատասխան հրահանգ էի տալիս նրան: Շուտով նա այնպիսի զգվանք ձեռք բերեց սպիրտային խմիչքի նկատմամբ, որ իր ասածով՝ օղի կոչվող այդ թույնի երեսն անգամ տեսնել չէր ուզում: Թողնելով երկաթուղայինի իր աշխատանքը, նա սկսեց ինձ հետ ճանապարհորդել. նույնիսկ օգնում էր ինձ արհեստական ծաղիկներ պատրաստելու և դրանք շուկայում վաճառելու գործերում:

Սովորվողի հետ ծանոթանալուցս որոշ ժամանակ անցնելուց հետո իմ հին դերվիշ ընկեր Բոգա-Էդդինը, որից երկար ժամանակ լուր չունեի, վերջապես վերադարձավ Հին Բուխարա: Տեղեկանալով, որ ես ապրում եմ Նոր Բուխարայում՝ վերադարձի հենց հաջորդ օրը նա այցելեց ինձ: Երբ հարցրեցի, թե ինչն էր նրա այդքան երկարատև բացակայության պատճառը, Բոգա-Էդդինը պատասխանեց, որ իրեն բախտ է վիճակվել ծանոթանալու մի արտասովոր մարդու հետ և, որպեսզի նրա հետ հաճախ զրուցելու հնարավորություն ունենա, համաձայնել է որպես ուղեկցորդ ծառայել Ամու Դարյա գետի երկայնքով նախատեսված արշավում: Բոգա-Էդդինը նաև ասաց, որ հիմա իրենք միասին են վերադարձել Հին Բուխարա:

«Այդ զարմանալի մարդը Սարմունգ կոչվող հին կրոնական մի աղանդի հետևորդ է. այդ աղանդի գլխավոր մենաստանը գտնվում է Միջին Ասիայի բուն սրտում ինչ-որ տեղ: Պարզվում է, որ այդ մարդն ինչ-որ տեղից ճանաչում է քեզ, և երբ ես նրան առաջարկեցի հանդիպել քեզ հետ, նա ուրախությամբ համաձայնեց: Նա ասաց, որ թեև դու գյավուր ես, բայց քո հոգին ճանաչել է ճշմարտությունը»:

Բացատրեմ, այս վայրերում գյավուր էին անվանում այլազգիներին և այլադավաններին՝ ներառյալ բոլոր եվրոպացիներին, որոնք տեղացիների պատկերացմամբ ոչ թե մարդիկ էին, այլ ավելի շուտ հոգի չունեցող կենդանիներ:

Նոր ծանոթի մասին Բոգա-Էդդինի պատմածն այնքան հետաքրքրեց ինձ, որ նրան խնդրեցի մեր հանդիպումը կազմակերպել հնարավորին չափ շուտ: Այն շուտով կայացավ: Այդ մարդու հետ ես հաճախակի շփվեցի և այնպիսի վստահություն վաստակեցի, որ նա ինձ առաջարկեց որոշ ժամանակ անցկացնել իրենց կրոնական եղբայրության գլխավոր մենաստանում:

«Հնարավոր է, որ դուք այնտեղ գտնեք այն հարցերի պատասխանները, որոնք ձեզ հանգիստ չեն տալիս», - ասաց նա և ավելացրեց, որ հաճույքով կօգնի ինձ այնտեղ ընկնել այն պայմանով, որ համաձայնեմ ոչ ոքի ոչինչ չպատմել այնտեղ տեսածներիս մասին:

Իհարկե, ես երախտագիտությամբ ընդունեցի այդ առաջարկը՝ համաձայնելով բոլոր պայմաններին: Միայն ափսոսում էի, որ ստիպված եմ լինելու բաժանվել Սովորվողից, որի հետ մտերմացել էի հարազատ եղբոր պես: Ուստի հարցրի իմ նոր ծանոթին՝ կարո՞ղ եմ արդյոք այդ արշավին մասնակից դարձնել նաև լավագույն ընկերոջս: Մի փոքր մտածելուց հետո նա պատասխանեց, որ չի առարկում, պայմանով, որ այդ ընկերս նույնպես համապատասխան երդում տա, և ես էլ երաշխավոր լինեմ նրա համար: Ես հաստատեցի, որ Սովորվողին կարելի է անվերապահորեն վստահել, քանի որ մեր ընկերության ընթացքում համոզվել էի, որ նա կարողանում է իր խոսքի տերը լինել:

Ամեն ինչ քննարկելուց հետո մենք պայմանավորվեցինք ուղիղ մեկ ամիս անց հանդիպել Ամու Դարյայի ափին, որտեղ մեզ կապասեն չորս ուղեկցորդներ. նրանք մեզ կուղեկցեն մինչև մենաստան մեզնից գաղտնաբառը լսելուց հետո: Պայմանավորված օրը ես ու Սովորվողը հասանք Ենի Խիսար կոչվող հինավուրց բերդի ավերակների մոտ, որտեղ հանդիպեցինք մեզ դիմավորելու ուղարկված չորս կիրգիզների հետ: Գաղտնաբառերը փոխանակելուց հետո մենք նրանց պահանջով շտապեցինք կրկին երդվել, որ գաղտնի կպահենք այն ամենը, ինչ կիմանանք այդ արշավի ընթացքում: Հետո մենք ճամփա ընկանք, ընդ որում մեր աչքերը կապված էին բաշլուղով:

Ամբողջ ճանապարհին մենք մեր խոստումը կատարեցինք. չփորձեցինք վեր բարձրացնել բաշլուղները, որպեսզի որոշենք, թե որտեղով է անցնում մեր քարավանը: Մեզ թույլատրում էին հանել դրանք միայն դադարի ժամանակ, որպեսզի սնվեինք և հանգստանայինք: Բայց երթի ընթացքում մեր

բաշխուղները թույլատրեցին հանել միայն երկու անգամ: Առաջին անգամ դա տեղի ունեցավ ճամփորդության ութերորդ օրը, երբ մեր շարասյունը լեռնային կիրճը պետք է հաղթահարեր կախովի կամրջի վրայով: Այն այնքան նեղ էր, որ դրանով հնարավոր էր անցնել միայն իծաշարուկ՝ ձիերի սանձերից բռնած:

Տեղանքի բնույթից մենք ենթադրեցինք, որ գտնվում ենք Փյանջի կամ Ջերավշանի սարահարթերում ինչ-որ տեղ, քանի որ լեռնային գետի լայնքը բավական նշանակալի էր, իսկ կամուրջը մեզ հիշեցնում էր այն կախովի կամուրջները, որոնք մենք արդեն տեսել էինք այդտեղի գետերի վրա:

Պետք է ասել, որ ես կգերադասեի այդ կամրջի վրայով անցնել փակ աչքերով: Գուցե այն պատճառով, որ մենք երկար ժամանակ քայլել էինք փակ աչքերով կամ ինչ-որ ուրիշ պատճառով, բայց ես երբեք չեմ մոռանա այդ անցման ժամանակ ունեցածս ահն ու տազնապար: Երկար ժամանակ ես չի կարողանում անել առաջին քայլս:

Այդպիսի կամուրջներ հաճախ հանդիպում են Թուրքեստանում, որտեղ հիմնավոր կառույցներ կառուցելու հնարավորություն չկա, և որտեղ մեկ մղոն երկարությամբ այդ վտանգավոր անցումը շրջանցիկ ճանապարհով հաղթահարելու համար հարկ կլիներ կտրել քսան մղոն ճանապարհ:

Երբ ոտք ես դնում այդ երեքուն կառույցի վրա և հայացք նետում անդունդի հատակի օձագալար լեռնային հոսքին, այնպիսի զգացողություն ես ունենում, ինչպիսին ունենում է էյֆելյան աշտարակի գագաթից ներքև նայողը: Դեպի վեր նայելիս շրջակա լեռների գագաթները չեն երևում. որպեսզի երևան, դրանց ստորոտներից պետք է հեռանալ մի քանի մղոն:

Կախովի կամուրջները սովորաբար բռնելու տեղ չեն ունենում և այնքան նեղ են, որ դրանցով միայն իծաշարուկ կարելի է անցնել: Վատ է այն, որ դրանք վերև-ներքև են ճոճվում, և անցնողն այնպիսի զգացողություն է ունենում, կարծես գտնվում է ցատկահարթակի վրա: Իսկ եթե դրան գումարենք նաև հիմնավոր կասկածներն առ այն, որ կամուրջը չի դիմանա մարդկանց ու ձիերի ծանրությանը, ապա գուցե դուք մոտավոր պատկերացում կազմեք այդ պահին ունեցած իմ վիճակի մասին: Սովորաբար կամուրջը պարաններով կապված է լինում կիրճի եզրերին աճած ծառերից, և, իմ կարծիքով, չի կարող առաջարկվել անգամ, այսպես կոչված, “սուր զգացողությունների սիրահար” եվրոպացիներին: Այդպիսի կամրջով անցնելու փորձ կատարելիս մարդու չոքերը լրիվ թուլանում են և դեռ մի բան էլ ավելի վատ:

Երկրորդ անգամ մեր բաշխուղները թույլ տվեցին հանել մեր աչքերից հանդիպակաց ինչ-որ քարավանի մոտենալիս, որպեսզի մեր տարօրինակ տեսքով չգրավենք մարդկանց ուշադրությունը և տարբեր կասկածներ չառաջացնենք:

Մեր ճամփին պարբերաբար հանդիպում էին կառույցներ, որոնք բավականաչափ տիպական էին Թուրքեստանի համար: Առանց այդ հանելուկային հուշարձանների՝ ճանապարհորդները հնարավորություն չէին ունենա կողմնորոշվելու նորմալ ճանապարհներից զուրկ այդ վայրերում: Դրանք սովորաբար տեղաբաշխված են բարձրադիր տեղերում և տեսանելի են հեռվից՝ հաճախ մի քանի մղոնից: Այդ հուշարձանները միայնակ հսկա քարաբեկորներ են կամ հողի մեջ տնկած սյուներ:

Տեղական բնակչությունը զանազան առասպելներ ունի, որոնք այդ տարօրինակ հուշակոթողների ծագումը բացատրում են նրանով, որ դրանց տակ թաղված է այս կամ այն սուրբը կամ այդտեղից համբարձվել է երկինք, կամ սպանել է յոթզլխանի վիշապին, կամ նրա հետ տեղի է ունեցել էլի ինչ-որ մի անսովոր բան: Սովորաբար այն սուրբը, որի անվան հետ կապում են տվյալ հուշակոթողը, համարվում է տվյալ վայրի հովանավորը: Եվ երբ ճամփորդին հաջողվում է հաղթահարել ճանապարհին հանդիպած բոլոր դժվարությունները, օրինակ՝ խուսափել ավազակների կամ վայրի գազանների հարձակումներից կամ անփորձանք անցնել գետը կամ լեռնանցքը, համարվում է, որ սրբի կամքն է եղել այդպիսին:

Ամեն մի վաճառական, ուխտավոր կամ ճանապարհորդ, որը բարեհաջող կերպով խուսափում է բոլոր վտանգներից, նվիրատվություն է անում հուշակոթողին՝ նրան երախտագիտություն հայտնելով օգնության համար:

Համաձայն տեղական հավատալիքների՝ զոհաբերությունները սրբին հիշեցնում են մարդկային կարիքների մասին՝ փոխարինելով աղոթքներին: Սովորաբար կոթողի մոտ թողնում են հագուստի մասեր, կենդանու մսի կտորներ կամ էլի ինչ-որ նման բան: Նվիրաբերված իրի մի ծայրը կապում են սյունին, իսկ մյուս ծայրն ազատ ծածանվում է քամուց:

Այդ ծածանվող զանգվածը կառույցը տեսանելի է դարձնում շատ մեծ հեռավորությունից՝ դրա բարձր դիրքի շնորհիվ: Հայտնաբերելով դրանցից մեկը՝ ճամփորդը շարժվում է դեպի այն, հետո դրանից՝ հաջորդի ուղղությամբ և այլն, քանի որ այս վայրերում սովորական իմաստով ճանապարհներ չկան: Քարավանների տրորած արահետները հաճախակի ձնաբքերի հետևանքով լրիվ ջնջվում են երկրի երեսից:

Եթե այդ կառույցները չլինեին, ճանապարհորդն անպայման կկորցներ ճանապարհը, և նրան չէր փրկի նույնիսկ ամենաճշգրիտ կողմնացույցը: Ճանապարհին մենք մի քանի անգամ փոխեցինք մեր ձիերն ու ավանակները, մի քանի անգամ ստիպված եղանք հետիոտն շարժվել՝ սանձերով մեր հետևից քաշելով կենդանիներին: Մի անգամ չէ, որ լողալով անցանք արագահոս լեռնային գետերն ու մազլցեցինք բարձրաբերձ լեռնագագաթները: Շոգը փոխարինում էր ցրտին, ինչից եզրակացնում էինք, որ կամ վայրէջք ենք կատարում դեպի հովիտները, կամ լեռ ենք բարձրանում: Վերջապես, ճամփորդության տասներկուերորդ օրը մեզ թույլ տվեցին գնալ բաց աչքերով, և մենք տեսանք, որ գտնվում ենք մի խորունկ ձորում, որով հոսում է արագահոս, բայց ոչ լայն գետակ, իսկ սարալանջերը ծածկված են փարթամ բուսականությամբ:

Ինչպես պարզվեց, դա վերջին երթադադարն էր: Հաց ուտելուց հետո մենք հեծանք ձիերը և մնացած ճանապարհն անցանք բաց աչքերով: Հատելով լեռնային գետակը՝ մենք գնացինք ևս կես ժամ, որից հետո մեր առջև փռվեց չորս կողմից լեռներով շրջապատված մի հարթավայր: Լեռնագագաթները ձյունածածկ էին: Շուտով մենք տեսանք մի քանի շինություններ, որոնք նման էին Ամու Դարյա և Փյանջ գետերի ափերի մոտ մեր տեսած շինություններին: Ամրոցներ հիշեցնող այդ շինությունները շրջապատված էին հոծ ու բարձր պարիսպներով: Դարպասի մոտ մեզ դիմավորեց մի պառավ կին, որի հետ մեր ուղեկցորդները մի քանի խոսք փոխանակեցին, ապա անհետացան դարպասի հետևում: Մեզ հետ մնացած կինն անշտապ մեզ տարավ հյուրերի համար նախատեսված փոքրիկ սենյակները, որոնք նման էին վանական խցերի, մեզ ցույց տվեց այնտեղ եղած փայտե մահճակալները և հեռացավ:

Շուտով եկավ մի տարեց տղամարդ, որը մեզ հետ այնքան բարեհաճորեն խոսեց, կարծես վաղուցվա ծանոթներ լինեինք, և, մեզ ոչ մի բան չհարցնելով, բացատրեց, որ առաջին օրերին մեր կերակուրը կմատուցեն այստեղ: Նա մեզ խորհուրդ տվեց հանգստանալ երկար ճանապարհից հետո, բայց նաև ավելացրեց, որ եթե չենք հոգնել, ապա կարող ենք շրջել մոտակայքում և անել այն ամենը ինչ կուզենանք:

Քանի որ շատ հոգնած էինք, մենք որոշեցինք մի կուշտ քնել և հանգստանալ: Ամբողջ գիշեր ես քնեցի մեռածի պես և արթնացա միայն այն ժամանակ, երբ վանականներից մեկի կողմից մեզ մոտ ուղարկված պատանին թեյի գավաթներ ու ինքնաեռ բերեց և նախաճաշ՝ բաղկացած եգիպտացորենի լավաշիկներից, այծի պանրից ու մեղրից: Ես ուզեցի տղային հարցնել, թե որտեղ կարող ենք լվացվել, բայց պարզվեց, որ նա միայն իր տեղական լեզվով է խոսում և ծանոթ չէ իմ ու Սոլովյովի իմացած լեզուներից ոչ մեկին:

Երբ ես արթնացա, ընկերոջս սենյակում չտեսա. նա դուրս էր գնացել և շուտով վերադարձավ: Պարզվեց, որ նա ինչ-որ պատճառով արթնացել է գիշերվա կեսին և, որպեսզի ինձ չարթնացնի, անաղմուկ պառկել է մինչև լուսաբաց՝ մտքում հիշելով տիրեթական լեզվի իրեն հայտնի բառերը: Լուսաբացին նա փորձել է դարպասից դուրս ելնել, բայց այդ պահին նրան նկատել է նախորդ օրը մեզ դիմավորած պառավը և նշանացի նրան պատվիրել հետևել իրեն: Սոլովյովը նախ կարծել է, թե դարպասից դուրս գալ չի կարելի և դրանով է բացատրել նրա վարքը: Բայց պարզվել է, որ պառավն ուղղակի ուզում է նրան թարմ տաք կաթ հյուրասիրել: Դրանից հետո նա անգամ օգնել է ծանր դարպասը բացելու գործում: Քանի որ պատանուց բացի ոչ ոք չէկավ մեզ մոտ, մենք որոշեցինք ինքներս ծանոթանալ շրջակայքին և նախ քայլեցինք կառույցը շրջափակող պարսպի երկայնքով՝ հյուսիս արևմտյան կողմում հայտնաբերելով ևս մեկ ավելի փոքր դարպաս:

Չորս կողմում խաղաղ լռություն էր տիրում, որը խախտվում էր միայն հոսող ջրի միալար աղմուկով և թռչունների ճովողյունով: Արևը կիզում էր, դժվար էր շնչելը. մեզ չէր ուրախացնում շրջապատի բնապատկերի գեղեցկությունը, և միայն գետի կողմից զգացվող թարմությունն էր մեզ քաշում մագնիսի պես: Առանց իրար հետ պայմանավորվելու մենք շարժվեցինք դեպի ջուրը: Այդ օրից սկսած՝ գետի ափը դառնալու էր մեր աշխատանքի և հանգստի սիրելի վայրը:

Ոչ այդ, ոչ հաջորդ օրը վանականներից ոչ ոք չէկավ մեզ այցելության, միայն օրական երեք անգամ պատանին կանոնավորապես մեզ համար կերակուր էր բերում, որը բաղկացած էր լինում

կաթնամթերքներից, չորացրած մրգերից ու ձկից՝ հիմնականում կարմրախայտից, և ինքնաեռ եր դնում: Մեր ժամանակն անցկացնում էինք մահճակալին պառկելով կամ գնում էինք գետի ափը, որի վազող ջրերի միալար աղմուկի տակ տիրեթերեն բառեր էինք սերտում: Ոչ գետափին, ոչ այնտեղ տանող ճանապարհին չէինք հանդիպում ոչ ոքի. միայն մեկ անգամ, երբ գետափին նստել էինք ծառերի ստվերում, գետին մոտեցան չորս աղջիկներ, որոնք մեզ տեսնելուն պես թեքվեցին մյուս կողմ և փոքրիկ անտառակն անցնելով՝ մտան այն դարպասով, որը գտնվում էր պարսպի հյուսիս-արևմտյան կողմում:

Երրորդ օրվա առավոտյան մենք կրկին մեր ժամանակը կարճում էինք գետափին: Ես ցրված հետևում էի գետի հոսքին, իսկ Սուլվյովը փորձում էր իրեն հայտնի ինչ-որ եղանակով որոշել շրջակա լեռների բարձրությունը, որոնց գագաթներն ամպերի մեջ էին: Շուտով մեզ մոտ վազեց պատանին և Սուլվյովին տվեց անձրար, ծալծլած թղթի վրա մի գրություն: Սուլվյովն այն ձեռքի մեջ տարակուսանքով շուռումուռ տալուց հետո մեկնեց ինձ: Երբ թուղթը բացեցի ու ճանաչեցի ձեռագիրը, աչքերս կարծես մթնեցին, այնքան անսպասելի էր ինձ համար: Գրության հեղինակն իմ ամենալավ ընկերն էր, որից ես վաղուց լուր չունեի: Գրության բովանդակությունը հետևյալն էր.

«Միրելի՛ բարեկամս, երբ իմացա, որ դու այստեղ ես, ուրախությունից քիչ մնաց մեռնեի: Ցավոք, չկարողացա ձեզ դիմավորել և իմ գիրկն առնել, քանի որ հիմա հիվանդ եմ և անկողնուցս վեր չեմ կենում: Ձեր այստեղ լինելու մասին իմացա մի քանի րոպե առաջ: Ա՛խ, որքան ուրախ եմ, որ շուտով կտեսնենք իրար, որ սեփական նախաձեռնությամբ հասել էք այստեղ: Դա ապացուցում է, որ դուք չեք դադարեցրել ձեր որոնումները, հոգեպես չեք ծուլացել: Շտապեք գալ ինձ մոտ, մենք խոսելու բան ունենք: Ինձ ասացին, որ դուք ձեր ընկերոջ հետ եք: Թեև ծանոթ չեմ նրա հետ, բայց ուրախ կլինեմ հանդիպել. ձեր ընկերը լինելն արդեն իսկ բնութագրում է նրան»:

Այս բառերին հասնելուց հետո ես ոտքի ելա և, գրության մնացած մասն ընթացքում կարդալով, վազեցի վանքի կողմը՝ Սուլվյովին նշանացի հասկացնելով, որ գա իմ հետևից:

Թե ինչու էի այդ կողմ վազում, դեռ ինքս էլ չգիտեի և պատկերացում իսկ չունեի, թե որտեղ է իմ հին ընկերը: Սուլվյովն ու նամակաբերը հետևում էին ինձ: Երբ մտանք վանքի տարածք, պատանին ինձ առաջնորդեց երկրորդ բակը և ցույց տվեց իշխան Լյուբովեցկու խուցը: Ուրախ բացականչություններից ու գրկախառնությունից հետո ես շտապեցի հարցնել, թե ինչ է պատահել նրան:

«Երկու շաբաթ առաջ ես ինձ հրաշալի էի զգում, բայց հետո գետում լողանալու ժամանակ վնասեցի ոտքիս մատը: Մկզբում դրա վրա ուշադրություն չդարձրի, բայց հետո մատս սկսեց ցավել: Մտածելով, թե այդ ցավը շուտով կանցնի, ես ոչինչ չձեռնարկեցի, բայց շուտով վիճակս վատացավ թարախակալման պատճառով, մի շաբաթ անց տենդ սկսվեց, և ահա ստիպված եղա անկողին ընկնել: Վանականներն ասացին, որ արյան վարակում եմ ստացել, բայց ճգնաժամն արդեն անցել է, վտանգն անցած է, և ես շուտով լրիվ առողջ կլինեմ: Բայց բավական է իմ մասին խոսենք, ավելի լավ է պատմես, թե ինչ հրաշալի նախախնամություն է քեզ այստեղ հասցրել»:

Ես իշխանին պատմեցի նրանից բաժանվելուց հետո իմ անցկացրած կյանքի, Բոգա-Էդդինի հետ իմ ընկերության և այն մասին, թե ինչն ինձ բերեց այդ մենավոր վանքը: Հետո սկսեցի ինքս հարցեր տալ իշխանին, թե ինչու այդ ամբողջ ընթացքում նամակ չէր գրում կամ իր մասին լուր չէր ուղարկում որևէ այլ եղանակով, այնքան, որ ես արդեն ստիպված եղա մտածել որ ինքն այլևս կենդանի չէ: Ես նույնիսկ հոգեհանգստի պատարագ էի պատվիրել, չնայած այդ օրերին նյութական անապահով վիճակում էի: Այնուհետև հարցրի իշխանին, թե ինչպես է հայտնվել այս վայրերում, և նա ինձ պատմեց հետևյալը.

«Երբ վերջին անգամ հանդիպեցինք Կոնստանդնուպոլսում, ինձ արդեն սկսել էր ինչ-որ անտարբերություն պատել, մի հոգեկան ընկճվածություն, որը որոշ ժամանակ անց վերածվեց հոգեկան ունայնության վիճակի. ես լրիվ կորցրել էի հետաքրքրությունս ամբողջ շրջապատի նկատմամբ: Հասնելով Ցեյլոն՝ ես ծանոթացա բուրդայական մի հայտնի վանականի հետ: Պարզվեց, որ երկուսիս նույն հարցերն են հուզում, և ի վերջո մենք որոշեցինք արշավի դուրս գալ դեպի Գանգեսի ափերը: Ձեռնարկելով այդ վտանգավոր ճամփորդությունը՝ ես կարծես ձեռքս վերջին ծոցտին էի մեկնում՝ ջանալով արհեստականորեն վերականգնել կյանքի նկատմամբ նախկին հետաքրքրությունս, և երբ այն ավարտվեց, ես պարզապես չգիտեի, թե հետո ինչ անեմ: Իմ ներսում կարծես թե հանգել էին բոլոր նախկին ցանկություններն ու զգացմունքները: Հայտնվելով Քաբուլում՝

Ես ամբողջովին սուզվեցի անտարբերության գիրկը, միայն երբեմն հանդիպում էի հին ընկերներին հետ, որոնց թվում էր Աղա-խանը՝ մի մարդ, որի կյանքն արկածներով նույնքան հարուստ էր եղել, որքան իմը: Մի անգամ Աղա-խանի հյուրերի շարքում, ամենապատվավոր տեղում ես տեսա շատ անսովոր հագուստով մի ծեր թամիլի: Ողջունելով ինձ և տեսնելով, որ նկատելի հետաքրքրություն եմ ցուցաբերում այդ անսովոր հյուրի նկատմամբ, Աղա-խանն իմ ակնաչին շնչաց, որ նա իր հին ընկերն է, որին պարտական է իր կյանքը փրկելու համար: Այդ ծեր թամիլն ապրում էր ինչ-որ տեղ հյուսիսում, երբեմն գալիս էր Քաբուլ՝ իր հարազատներին տեսնելու և որոշ գործեր կարգավորելու նպատակով: Այդ քաղաքը գալիս նա միշտ այցելում էր Աղա-խանին, որն անչափ ուրախ էր լինում իր պաշտելի մարդուն տեսնելով: Աղա-խանը նաև ինձ խորհուրդ տվեց ծանոթանալ նրա հետ և նախապես զգուշացրեց, որ նրա հետ բարձրաձայն խոսեմ, քանի որ ծանր է լսում: Ջրույցը, որն ընդհատվել էր իմ հայտնվելու պատճառով, կրկին աշխուժացավ: Այն ձիերին էր վերաբերում: Ծեր թամիլը նույնպես մասնակցում էր քննարկմանը, և նրա խոսքերից անմիջապես պարզ դարձավ, որ նա ձիերի քաջ գիտակ ու սիրահար է: Հետո զրույցի թեման քաղաքականությունը դարձավ: Ջրուցակիցները խոսում էին հարևան երկրների, Ռուսաստանի և Անգլիայի մասին: Երբ խոսք գնաց Ռուսաստանի մասին, Աղա-խանը ժպտալով ցույց տվեց ինձ և ասաց. «Խնդրում եմ Ռուսաստանի մասին ոչ մի վատ բան չասել. կարող եք նեղացնել մեր ռուս հյուրին»: Թեև դա ասվեց կատակի տոնով, բայց ինձ համար պարզ էր, որ Աղա-խանն ուզում է կանխել անխուսափելի մեղադրանքները Ռուսաստանի հասցեին: Հատկապես այդ ժամանակներում սաստիկ ատելություն կար ռուսների և անգլիացիների նկատմամբ:

Այնուհետև ընդհանուր զրույցը դադարեց, և ներկաները բաժանվեցին առանձին խմբերի, որոնցում խոսակցությունների թեմաները տարբեր էին: Ես տեղ զբաղեցրի ծերունի թամիլին մոտիկ և նրա հետ զրույցի բռնվեցի՝ ավելի ու ավելի համակրելով նրան: Սկզբում նա ինձ դիմում էր տեղական բարբառով՝ հետաքրքրվելով, թե որտեղից եմ, ինչպես եմ հայտնվել Քաբուլում. հետո հանկարծ անցավ ռուսերենի՝ խոսելով շատ ճիշտ, բայց մի թեթև ակցենտով: Այդ պատվարժան մարդն ինձ պատմեց, որ որոշ ժամանակ ապրել է Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում, ինչպես նաև Բուխարայում, որտեղ ռուսներ շատ կան, և այդպիսով տիրապետել է ռուսերենին: Նա հավելեց, որ ուրախ է կրկին այդ լեզվով խոսելու առիթի համար, քանի որ չգործածելու պատճառով արդեն սկսել էր մոռանալ:

Այդ ընթացքում Աղա-խանի հյուրերն արդեն սկսում էին ցրվել, և իմ նոր ծանոթն ինձ առաջարկեց իր հետ գնալ թեյարան և մեր զրույցը շարունակել այնտեղ: Նա ինձ բացատրեց, որ թեյարանում կամ սրճարանում նստելը ջահել ժամանակ ձեռք բերած իր թույությունն է, որից մինչև այժմ չի կարողացել ձեռքազատվել: Եվ հիմա էլ, հենց որ հայտնվում է քաղաքում, չի կարողանում իրեն զրկել ամեն հարմար առիթով թեյարան մտնելու հաճույքից: Ծեր թամիլը նշեց, որ այդ վայրերում տիրող աղմուկն ու իրարանցումն իրեն ոչ միայն չեն խանգարում, այլև օգնում են մտածել:

Ես մեծ հաճույքով համաձայնեցի ընկերակցել նրան. ոչ միայն այն պատճառով, որ ինձ համար հաճելի էր ռուսերեն լեզվով զրուցելը, այլ նաև մի պատճառով, որը ես միանգամից չգիտակցեցի: Թեև արդեն ջահել չէի, բայց այդ մարդու կողքին ես ինձ զգում էի ինչպես թռչող պապի մոտ: Հասնելով թեյարան՝ մենք նստեցինք բաց հարթակում և բուխարական կանաչ թեյ պատվիրեցինք: Դատելով այն ուշադրությունից ու պատվից, որ ցուցաբերվում էին այդ ծերունուն, ես հասկացա, որ նա այստեղ հարգված ու սիրված անձ է: Մենք զրուցում էինք տաջիկերեն, և թեյի առաջին բաժակից հետո նա հանկարծ ընդհատեց զրույցը՝ ասելով. «Այն ամենը, ինչի մասին խոսում ենք, ոչ մի նշանակություն չունեցող դատարկ բաներ են», - որից հետո շուրջը նայեց և լռեց:

Այդ ամենն ինձ տարօրինակ թվաց՝ և՛ հանկարծակի ընդհատված զրույցը, և՛ ծերունու թափանցող հայացքը, ուստի ես մտածեցի. «Ավա դ, տարիքի հետ խելքը տկարացել է, և մտքերը խառնվում են իրար», և շատ վշտացա դրանից: Աստիճանաբար ես ավելի թթվեցի, մտածելով, որ ես էլ արդեն երիտասարդ չեմ, և հեռու չէ այն ժամը, երբ ինձ չի հաջողվի խելամիտ զրույց վարել: Ես այնպես էի խորասուզվել այդ անուրախ մտքերի մեջ, որ անգամ մոռացել էի զրուցակցիս մասին: Բայց հանկարծ կրկին լսվեց նրա ձայնը. և այն ինչ նա ասաց, ակնթարթորեն ինձ հանեց մտատանջությունից և մտքերս տարավ ուրիշ հունով:

- Էհ, Գոգո՛, քառասունհինգ տարի աշխատեցիք առանց դադար առնելու, և երբեք ձեր սիրտը ներդաշնակ չեղավ ձեր բանականության հետ: Եթե դրան հասած լինեիք, ապա հիմա այսքան միայնակ չէիք լինի:

Լսելով, թե նա ինչպես անվանեց ինձ, ես ապշեցի. ինչպես կարող էր այդ հնդիկը, որն առաջին անգամն էր ինձ տեսնում Միջին Ասիայում, իմանալ իմ մանկական մականունը; Այդպես ինձ անվանում էին միայն մայրս ու դայակս, և այն ժամանակներից ի վեր այլևս ոչ ոք ինձ այդ անունով չէր դիմել: Կարո՞ղ եք պատկերացնել իմ զարմանքը, երբ իմ այդ մականունն այդքան տասնամյակներ անցնելուց հետո հանկարծ լսեցի քաբուլյան թեյարանում... Ես հանկարծ մտաբերեցի մի ուրիշ ծերունու, որը կնոջս մահից հետո մի անգամ Մոսկվայում այցի եկավ ինձ, երբ ես դեռ շատ երիտասարդ էի: Բայց նա ավելի բարձրահասակ էր, այլ դիմագծեր ուներ և այն ժամանակ արդեն շատ ծեր էր: Ես չէի կարողանում որևէ բացատրություն գտնել տեղի ունեցածի համար. այս ծերունին որտեղի՞ց այդքան շատ բան գիտի իմ կյանքի և իմ հոգեվիճակի մասին, որից ես ինքս չեմ կարողանում գլուխ հանել:

Մինչ նման մտքեր էին թափառում իմ գլխում, ծերունին լուռ նստած էր: Ես այլևս չդիմացա և բացականչեցի. «Բայց ո՞վ եք դուք... Որտեղի՞ց գիտեք իմ մասին...»:

«Մեկ չէ՞ արդյոք, թե ով եմ ես: Այդ դատարկ հետաքրքրասիրությունն է այն բանի գլխավոր պատճառը, որ ձեր կյանքի ամբողջ աշխատանքն անարդյունք է եղել: Ի՞նչ նշանակություն ունի այն, թե ինչու այդքան շատ բան գիտեմ ձեր և ձեր հոգեկան վիճակի մասին, եթե այն ամենն, ինչ ասում եմ, ճշմարտություն է»:

Այդ հանդիմանանքն ինձ խոցեց մինչև սրտիս խորքը: Եվ իսկապես, մեկ չէ՞ արդյոք, թե ինչ է տեղի ունենում ինձնից դուրս: Ես բազմաթիվ անհավանական իրադարձությունների եմ ականատես եղել: Իսկ ի՞նչ եզրահանգում եմ արել այդ ամենից: Գուցե, եթե այդքան ազահաբար նոր տպավորություններ չփնտրեի, իմ կյանքն ունայնության մեջ չէր անցնի. ջանալով բավարարել իմ դատարկ հետաքրքրասիրությունը՝ ծերության շեմին հոգիս այսպիսի դատարկված վիճակում չէր հայտնվի:

Ես անկեղծորեն այդ մարդուց ներողություն խնդրեցի անհարկի հարցերիս համար: Դրանից հետո մենք երկար ժամանակ լուռ նստած մնացինք՝ յուրաքանչյուրս խորասուզված իր մտորումների մեջ: Վերջապես նա ասաց. «Հնարավոր է, որ դեռ ամեն ինչ կորած չէ: Եթե գիտակցում եք այն ամենը, ինչ տեղի է ունենում ձեզ հետ և հասկանում եք, որ ձեր հոգու ներկայիս դատարկ վիճակը պատրանքների հետևից ընկնելու արդյունք է, ապա ես ձեզ խորհուրդ եմ տալիս նս մեկ փորձի դիմել: Եթե համաձայնեք իմ մի պայմանին, ապա կփորձեմ օգնել ձեզ: Պայմանն այն է, որ պետք է մեռնեք աշխարհիկ կյանքի համար, մեկընդմիջտ հրաժարվեք ձեր նախկին սովորություններից ու զվարճություններից և գնաք այնտեղ, ուր կասեմ»:

Անկեղծ ասած, այդ պայմանը կատարելն ինձնից մեծ գոհողություններ չէր պահանջում, քանի որ, եթե չհաշվեմ իմ բազմաթիվ ընկերներին, մնացած ամեն ինչն ինձ համար կորցրել էր հետաքրքրությունը, և ինձ համար դժվար չէր այդ ամենից հրաժարվելը:

Ես դա բացատրեցի իմ գրուցակցին և ասացի, որ թեկուզ հենց հիմա պատրաստ եմ գնալու այնտեղ, ուր նա կասի: Նա ինձ պատասխանեց, որ հնարավորինս արագ կկարգավորի ամեն ինչ, և անհետացավ ամբոխի մեջ: Հաջորդ օրը ես կարգավորեցի բոլոր գործերս, անհրաժեշտ հրահանգներ տվեցի բոլոր ծառայողներինս, գործնական բնույթի մի քանի նամակ ուղարկեցի և սկսեցի սպասել:

Երեք օր հետո ինձ այցելեց մի տաջիկ երիտասարդ և շատ կարճաճառ ասաց. «Ես ձեր ուղեկցորդը կլինեմ: Ճամփորդությունը կտևի մոտավորապես մեկ ամիս»: Նա ինձ տեղեկացրեց, թե ինքն ինչեր է արդեն վերցրել այդ արշավի համար, և խնդրեց հայտնել, թե ուրիշ ինչի կարիք կունենամ ճանապարհին:

Ես ուրիշ ոչ մի բանի կարիք չունեի, քանի որ ուղեկցորդս արդեն ամեն ինչ նախատեսել էր. Ես ասացի, որ պատրաստ կլինեմ ճամփա ընկնելու վաղն առավոտյան, ապա խնդրեցի տեղյակ պահել մեկնարկի վայրն ու ժամանակը:

Նա նույնքան կարճաճառ ասաց, որ առավոտյան ժամը վեցին լինեմ Կալնատաս կոչվող իջևանատան մոտ, որը գտնվում է քաղաքի մոտակայքում՝ Ուզուն-Քերայի ուղղությամբ: Հաջորդ օրը մենք ճանապարհ ընկանք, իսկ երկու շաբաթ անց ես հայտնվեցի այստեղ: Իսկ հիմա ինձ պատմիր այն ամենն, ինչ գիտես մեր ընդհանուր ընկերների մասին»:

Տեսնելով, որ իմ երկար պատմությունը կարող է հոգնեցնել և խանգարել իշխանի ապաքինմանը, ես առաջարկեցի մեր գրույցը հետաձգել հաջորդ օրվան: Քանի դեռ նա հիվանդ էր, Մուրվյովի հետ մենք ամեն օր այցելում էինք նրան, իսկ երբ լրիվ ապաքինվեց, նա ինքն էր այցելում մեզ, և մենք երկարատև գրույցներ էինք ունենում:

Այդպես շարունակվեց երկու շաբաթ, մինչև այն օրը, երբ մեզ կանչեցին երրորդ ներքին սրահը՝ ավագ վանահոր մոտ, որը մեզ հետ գրուցեց թարգմանչի օգնությամբ: Նա ծեր վանականներից մեկին, որը բարետես էր սրբապատկերի պես, մեզ ուղեկցորդ և օգնական նշանակեց: Մեզ ասացին, որ այդ վանականը երկու հարյուր յոթանասունհինգ տարեկան է: Այնուհետև մենք դարձանք այդ եղբայրության լիարժեք անդամներ: Մեզ թույլատրվեց լինել վանքի բոլոր մասերում և հանդիպել բոլոր վանականների հետ: Եվ ահա թե ինչն անմիջապես շարժեց իմ հետաքրքրությունը: Վանական համալիրի միջնամասում մի բարձր կառույց կար, որը նման էր տաճարի և որում բոլորի համար օրական երկու անգամ տաճարային պարեր էին կազմակերպվում, որոնց մասնակցում էին հատուկ ուսուցում անցած վանականներ, կամ ներկաներն ունկնդրում էին եկեղեցական երգեցողություն ու երաժշտություն:

Երբ իշխան Լյուբովեցկին լրիվ առողջացավ, ամենուրեք մեզ հետ էր լինում և մեզ բացատրում էր ամեն ինչ, երբ մենք հարցեր էինք ունենում: Նա, այսպես ասած, մեր երկրորդ ուղեկցորդն ու օգնականն էր: Ես այժմ մանրամասն չեմ նկարագրի այն ամենը, ինչ մենք այնտեղ տեսանք և իմացանք. գուցե, երբ ժամանակը գա, ես այդ ամենին մի առանձին գիրք կնվիրեմ: Բայց այստեղ ես կուզենայի մի քանի տող նվիրել մի կրոնական արարողության նկարագրությանը, որին բախտ ունեցա ականատես լինելու, ինչպես նաև կանդրադառնամ մի հանելուկային հարմարանքի, որի նշանակությունը միանգամից պարզ չեղավ ինձ համար:

Մի անգամ իշխան Լյուբովեցկին թույլտվություն ստացավ մեզ տանելու վանական համալիրի այն մասը, որը նախատեսված էր կին վանականների համար, որտեղ նրանք սրբազան պարեր էին սովորում փորձառու վանական-ուսուցչուհու ղեկավարությամբ: Իմանալով, որ ես հետաքրքրվում եմ մարդու մարմնի շարժումների օրենքներով և անձի հոգեկան վիճակի հետ ունեցած դրանց կապով, իշխանը խորհուրդ տվեց այցելել այդ «պարի դասարանը» և տեսնել մի հարմարանք, որի օգնությամբ պարեր էին սովորեցնում ջահել աշակերտուհիներին: Հենց առաջին հայացքից այդ հարմարանքը հինավուրց էր թվում: Այն պատրաստված էր սև փայտից և դրվագազարդված փղոսկրով ու մարգարիտներով: Երբ այն չէր օգտագործվում, հավաքված վիճակում նմանվում էր երկար ճյուղերը կախ ընկած ծառի: Ներկա լինելով սրբազան արարողությանը՝ ես տեսա, որ հարմարանքը կազմված էր ամենաքիչը երկու մետր բարձրություն ունեցող հարթ գերանից, որն ամրացված էր եռոտանու վրա: Այդ գերանից տարածվում էին տարբեր չափերի յոթ «ճյուղեր», որոնցից յուրաքանչյուրն իր հերթին բաղկացած էր յոթ հատվածներից, որոնց երկարություններն ուղիղ համեմատական էին գերանից ունեցած հեռավորությանը, այսինքն՝ ամեն մի հաջորդ հատվածն ավելի երկար էր իր նախորդից: «Ճյուղի» ամեն մի հատվածն իր հարևան հատվածի հետ միանում էր փղոսկրից պատրաստված երկու սնամեջ գնդերի միջոցով: Գնդերն իրար մեջ էին հագնում, ընդ որում արտաքին գունդն ամբողջությամբ չէր ծածկում ներքինը, այնպես, որ «ճյուղի» մի հատվածն իր ծայրով միանում էր ներքին գնդին, իսկ հարևան հատվածի ծայրը՝ արտաքին գնդին: Այդ միացումներն աշխատում էին մարդու ուսահողի պես, ինչը յուրաքանչյուր հատվածի թույլ էր տալիս շարժվել ցանկացած ուղղությամբ: Ներքին գնդերի մակերևույթներին նկարված էին որոշակի նշանակությամբ ինչ-որ նշանագրեր: Այդ շինության ներսում ես տեսա ևս երկու այդպիսի հարմարանքներ, ընդ որում դրանցից յուրաքանչյուրի կողքին դրված էին փոքրիկ պահարաններ, որոնք լցված էին ինձ անձանոթ մետաղի քառակուսի թիթեղներով, որոնց վրա նույնպես ինչ-որ նշանագրեր կային: Իշխան Լյուբովեցկին ինձ բացատրեց, որ դրանք պատճեններ են, իսկ մաքուր ոսկուց պատրաստված բնօրինակները պահվում են շեյխի մոտ: Լավատեղյակ մարդիկ պնդում էին, որ այդ թիթեղներն ու հարմարանքն ավելի քան 4500 տարեկան են: Այնուհետև իշխանը բացատրեց, որ ներքին գնդերի նշանագրերը համապատասխանում են թիթեղների նշանագրերին, և որ գնդերով ամրացված հատվածները պետք է տեղաբաշխված լինեն որոշակի ձևով: Երբ բոլոր հատվածները տեղաբաշխված են լինում հարկ եղածին պես, ջահել աշակերտուհիները ժամերով դիտում և հիշողության մեջ ամրապնդում են դրանց դասավորությունը: Շատ տարիներ են անցնում, մինչև որ նրանց թույլատրվում է մասնակցել կրոնական ծիսակատարություններին և տաճարում սրբազան պարեր պարել: Նրանք այդ արվեստին պետք է տիրապետեն կատարելապես: Պարային յուրաքանչյուր դիրք, ինչպես և փայտյա հարմարանքի հատվածների ամեն մի դասավորվածություն, որոշակի իմաստ է պարունակում: Դրանք կարծես այն հատուկ այբուբենի առանձին տառերը լինեն, որը հայտնի է այդ վանքի բոլոր բնակիչներին: Եվ երբ երեկոյան ժամերին գլխավոր տաճարում սկսվում է սրբազան ծեսը,

վանականները, դիտելով պարուհիների շարժումները, «կարդում են» պարը, ինչպես գիրքն են կարդում և ճանաչում դրա պարունակած ճշմարտությունը, որն այնտեղ գետեղել են մեր հեռավոր նախնիները: Այդ պարերը, դարեդար փոխանցվելով, մեզ տեղեկություններ են հաղորդում հեռավոր ժամանակներում տեղի ունեցած իրադարձությունների մասին:

Այդ ջահել աղջիկները, որոնք սովորում են սրբազան պարերը, համաձայն իրենց ծնողների ուխտի կամ որևէ այլ պատճառով իրենց ամբողջ կյանքը նվիրաբերում են Բարձրյալին ծառայելուն: Նրանք վանքին են տրվում վաղ մանկությունից, որտեղ նրանց ուսուցանում են իրենց ապագա ծառայության համար անհրաժեշտ ամեն բան:

Երբ այդ ջահել աշակերտուհիներին այցելելուց հետո ես գնացի տեսնելու պարերի կատարումը փորձառու վանական պարուհիների կողմից, ես ապշած էի մնացել ոչ թե ծեսի գաղտնի իմաստից, որն ուղղակի չէի հասկացել, այլ նրանց կատարման կատարելությունից: Ոչ Եվրոպայում, ոչ էլ աշխարհում որևէ ուրիշ տեղ, որտեղ եղել եմ, ես երբեք նման բան չեմ տեսել:

Մենք այդ վանքում ապրեցինք մոտ երեք ամիս և արդեն այնքան էինք վարժվել շրջապատում եղած ամեն ինչին, որ արդեն ուրիշ կյանք չէինք պատկերացնում: Բայց մի անգամ իշխանը մոտեցավ ինձ և դեմքի տխուր արտահայտությամբ հայտնեց, որ այդ օրն իրեն կանչել է ավագ վանահայրը և կարևոր գրույց ունեցել իր հետ մի քանի վանականների ներկայությամբ:

«Ավագ վանահայրն ասաց,- շարունակեց Լյուբովեցկին,- որ ինձ երեք տարի է մնացել ապրելու և խորհուրդ է տալիս, որ այդ ժամանակն անցկացնեմ Հիմալայների հյուսիսային լանջերում գտնվող մի վանքում, եթե ես սեփական պլաններ չունեմ այդ ժամկետի համար: Վանահայրն ինձ իր օգնությունն առաջարկեց՝ խոստանալով այնպես անել, որ այդ տարիներն անցնեն հնարավորին չափ լիարժեք՝ ինձ մոտեցնելով ճշմարտությանը, որն այդքան երկար փնտրել էի:

Ես առանց տատանվելու ընդունեցի այդ առաջարկը, և մենք պայմանավորվեցինք, որ երեք օր հետո փորձառու ուղեկցորդի հետ լքեմ այս վանքը: Ես ուզում եմ մնացած այդ երեք օրն անցկացնել ձեզ՝ իմ ամենամտերիմ ընկերոջ հետ»:

Այդ անսպասելի լուրն ինձ այնպես շշմեցրեց, որ միառժամանակ չէի կարողանում որևէ խոսք ասել: Երբ խոսելու կարողությունս վերականգնվեց, ես միայն կարողացա հարցնել. «Ճի՞շտ ես ասում»: «Ավա դ, այո,- պատասխանեց իշխանը,- և ես հույս ունեմ, որ կկարողանամ հետ բերել այն ժամանակը, որն անիմաստ եմ ծախսել՝ իմ տրամադրության տակ ունենալով այդքան հնարավորություններ: Իսկ դուք իմ մասին շարունակեք մտածել որպես վաղուց մեռած մարդու մասին. չէ՞ որ ինքներդ էիք ասում, որ անգամ հոգեհանգիստ եք պատվիրել ինձ համար՝ համարելով, որ ես գոհվել եմ իմ բազմաթիվ արշավներից մեկի ժամանակ: Ուստի եկեք այսպիսի երջանիկ հանգամանքներում հանդիպելուց հետո իրարից բաժանվենք առանց վշտի»:

Իշխանը շատ հանգիստ էր այդ ամենն ինձ ասում, բայց ինձ համար ծանր էր հաշտվել այն մտքին, որ կրկին կկորցնեմ այդ զարմանալի մարդուն, որը դարձել էր իմ լավագույն ընկերը: Այդ երեք օրերի ընթացքում մենք համարյա անընդհատ գրուցում էինք իրար հետ, և երբ նա ժպտում էր, իմ սիրտը կտոր-կտոր էր լինում, քանի որ այդ ժպիտը սիրտ, բարության և համբերատարության արտահայտություն էր: Եվ ասե՛ք վրա հասավ մեր բաժանման տխուր օրը. ես ինքս օգնեցի բեռնելու այն քարավանը, որն ընդմիջտ ինձնից հեռացնելու էր իմ ընկերոջը: Երբ հեծելախումբը ճանապարհ ընկավ, իշխանը շրջվեց իմ կողմը և երեք անգամ օրհնանք հղեց ինձ:

Խաղաղություն՝ ն քո հոգուն, ո վ սուրբ մարդ...

Ավարտելով իմ ընկեր իշխան Յուրի Լյուբովեցկուն նվիրված այս գլուխը՝ ես ուզում եմ պատմել Մոլոկյովի ողբերգական մահվան մասին, որը տեղի ունեցավ արտակարգ հանգամանքներում:

Մոլոկյովի մահը

Շուտով, երբ հասավ լեռնային վանքից մեր հեռանալու ժամանակը, Մոլոկյովը միացավ իրենց կյանքն այն ճշմարտության որոնման գործին նվիրած մարդկանց խմբին, որի մասին արդեն խոսել եմ: Ես, իհարկե, դրա համար տվեցի իմ երաշխավորությունը: Նա դարձավ այդ ընկերության լիիրավ անդամ և դրանից հետո, շնորհիվ համառ ու գիտակցված ջանքերի, նա, ինքն իր վրա աշխատելով, կարողացավ ոչ միայն մեծ հաջողությունների հասնել, այլև միաժամանակ մասնակցում էր մեր բոլոր արշավներին:

Այդ ճամփորդություններից մեկի ժամանակ, 1898 թվականին նա մահացավ Գոբի անապատում վայրի ուղտի կծելուց: Ես հնարավորինս մանրամասն կնկարագրեմ այն հանգամանքները, որոնք ուղեկցեցին այդ ողբերգական իրադարձությանը ոչ միայն այն պատճառով, որ դրանք իմ ընկերոջ մահվանն են վերաբերում: Ես նաև ուզում եմ ուշադրություն հրավիրել անապատն անցնելու մեր եղանակի վրա, որը բավական անսովոր էր և կարող է օգտակար լինել ուրիշ ճանապարհորդների համար: Պատմությունս կսկսեմ այն պահից, երբ, հսկայական դժվարություններով հաղթահարելով Տաշքենդից մինչև Շարակշան գետի ափերը տանող ճանապարհը, որն անցնում էր բազմաթիվ բարձր լեռներով՝ մենք հասանք Գոբի անապատի ծայրամասում գտնվող Ֆ. փոքրիկ ավանը:

Նախքան Գոբի անապատով մեր պլանավորած անցումը կատարելը մենք որոշեցինք մի քանի շաբաթ մնալ այդ ավանում, որպեսզի մի լավ հանգստանանք, ինչպես նաև, տեղաբնիկներին հարցուփորձ անելով, ծանոթանանք այն առասպելներին ու հավատալիքներին, որոնք վերաբերում են այդ անապատին: Մեզ ասացին, որ անապատի ավազների տակ թաղված են հինավուրց շատ բնակավայրեր և անգամ հսկա քաղաքներ, և որ ավազների տակ պահված են երբեմնի ծաղկուն այդ շրջանի բնակիչներին պատկանող անհաշիվ հարստություններ: Մեզ ասացին նաև, որ այդ գանձերի տեղերը հայտնի են հարևան ավաններում ապրող որոշ մարդկանց, և այդ տեղեկությունները, հորից որդուն փոխանցվելով, խիստ գաղտնի են պահվում: Գաղտնիքը չպահողին, ինչպես մեզ տեղեկացրին, խստորեն պատժում են: Պատժի ծանրությունը կախված է գաղտնիքի կարևորությունից: Վստահությունն առ այն, որ Գոբի անապատի ավազների տակ մեծ քաղաք կա թաղված, ինչը հաստատվում էր իրար չհակասող բազմաթիվ փաստերով, փոխանցվեց մեզին շատերին, հատկապես հնէաբան պրոֆեսոր Սկրիդլովին՝ մեր արշավի մասնակիցներից մեկին:

Բուռն քննարկումներից հետո մենք որոշեցինք Գոբի անապատն անցնելու այնպիսի երթուղի ընտրել, որ այն անցնի հենց այն շրջաններով, որոնց ավազների տակ, ըստ ավանդության, թաղված է այդ քաղաքը: Մենք մտադրվեցինք այնտեղ ոչ մեծ պեղումներ կատարել պրոֆեսոր Սկրիդլովի՝ այդ բնագավառի մեծ մասնագետի ղեկավարությամբ: Այնուհետև, կախված այդ պեղումների արդյունքներից, պետք է որոշեինք մեր հետագա երթուղին:

Թեև այդ շրջանը հեռու էր ընկած Գոբի անապատով անցնող քիչ թե շատ հայտնի ճանապարհներից, սակայն մենք, հետևելով մեր սովորական կանոնին՝ երբեք չանցնել տրորված ճանապարհներով, ոչ միայն մեծ ոգևորությամբ պատրաստ էինք հաղթահարել մեզ սպասվող բոլոր դժվարությունները, այլև հոգեկան վերելք էինք զգում:

Երբ մի փոքր սառանք և լրջորեն սկսեցինք մտորել այն մասին, թե ինչն ինչպես անել, խոչընդոտները մեզ այնքան նշանակալի թվացին, որ մեզին շատերն սկսեցին կասկածել, որ ընդհանրապես կկարողանանք դրանք հաղթահարել:

Դրությունը բարդացնում էր այն, որ մեր պլանավորած երթուղին շատ երկար էր, և սովորական եղանակով այդ հեռավորությունը հաղթահարելն անհնարին էր թվում: Գլխավոր պրոբլեմը մեր քարավանին ջրով ու սննդով ապահովելու հարցն էր, քանի որ ամենահամեստ հաշվարկներով բեռն այնպես ծանր էր ստացվում, որ այն տանելը մարդկանց ուժից վեր էր: Միաժամանակ, բեռնակիր կենդանիներից օգտվելու մասին խոսք անգամ չէր կարող լինել, քանի որ չէինք կարող հուսալ, թե ճանապարհին կգտնենք մի խոտաբույս կամ մի կաթիլ ջուր: Մենք նույնիսկ չգիտեինք, թե արդյոք թ ճանապարհին կհանդիպենք օազիսի:

Չնայած այդ ամենին՝ մենք չհրաժարվեցինք մեր խիզախ ձեռնարկումից, այլ, ամեն ինչ մանրակրկիտ քննարկելով, միաձայն որոշեցինք հաջորդ ամիս նույնպես մնալ այդտեղ և մտավոր բոլոր ուժերը գործադրելով խնդրի լուծումը գտնելու համար, էլք գտնել այն իրավիճակից դուրս գալու համար, որն առաջին հայացքից անելանելի էր թվում: Այդ ժամանակի ընթացքում յուրաքանչյուրս պետք է ապահովված լինեինք այն ամենով, ինչը կարող էր օգտակար լինել այդ խնդրի լուծման գործում:

Պրոֆեսոր Սկրիդլովին՝ որպես արշավախմբի գլխավորի, հանձնարարված էր ղեկավարել այդ համարձակ ձեռնարկումը, և նա, ամեն ինչից գատ, պետք է տնօրիներ մեր դրամական միջոցները: Ստանալով որոշակի գումար՝ խմբի անդամներից ոմանք մնացին ավանում, ոմանք էլ իրենց պլանին համապատասխան լքեցին այն: Հանդիպման վայր էր նշանակված անապատի եզրին գտնվող փոքրիկ գյուղակը, որտեղից մտադիր էինք սկսել մեր անցումը: Մի ամիս անց մենք հավաքվեցինք այդ վայրում և պրոֆեսոր Սկրիդլովի ղեկավարությամբ ճամբար խփեցինք, որից հետո յուրաքանչյուրը պատմեց իր

մտածածը: Հերթականությունը որոշվեց վիճակ գցելով: Սկզբում իրենց պլանները ներկայացրին երեք հոգի՝ լեռնային ճարտարագետ Կարպենկոն, դոկտոր Սարի-օղլին և բանասեր Ելովը: Նրանց գեկույցները շատ հետաքրքիր էին և լի օրիգինալ մտքերով: Նույնիսկ դրանց ներկայացման ձևերն այնպես են տպավորվել իմ հիշողության մեջ, որ դրանք հիշում եմ բառ առ բառ: Կարպենկոն իր ճառն սկսեց այսպես. «Թեև ես գիտեմ, որ ներկաներից ոչ ոք հիացած չէ եվրոպական գիտնականների այն սովորությամբ, որ նախքան գործի բուն էությանն անցնելն իրենց նախաբանն սկսում են Ադամից, բայց տվյալ դեպքում, հաշվի առնելով մեր առջև դրված խնդրի լրջությունը, ես միանգամայն անհրաժեշտ եմ համարում նախքան իմ եզրակացությունները ձեռք ներկայացնելը պատմել այն մասին, թե ինչպես ես հանգեցի դրանց:

Գորին մի անապատ է, որի ավազները, ինչպես պնդում են գիտնականները, այնքան էլ վաղ չեն առաջացել: Այդ փաստը հաշվի առնելով՝ կարելի է երկու ենթադրություն անել:

Նախ՝ անապատի ավազը նախկինում ծովի հատակ է եղել կամ էլ քամին այն քշել-բերել է Տյան Շանի, Հինդուստանի կամ Հիմալայան լեռների ժայռոտ գագաթներից կամ էլ ավելի հյուսիս գտնվող լեռներից, որոնք վերացել են ուժեղ քամիների ազդեցությամբ: Հաշվի առնելով այն, որ մենք սննդի հարց պետք է լուծենք ինչպես մեզ, այնպես էլ այն կենդանիների համար, որոնք անհրաժեշտ կհամարենք մեզ հետ տանել, արժե մտորել այն մասին, թե արդյո՞ք հենց ավազը չի կարող օգտակար լինել այդ նպատակին:

Ես այսպես եմ մտածում. եթե անապատը նախկին ծովի հատակ է, ապա ավազը պետք է բաղկացած լինեն զանազան շերտերից ու գոտիներից և, ինչպես ցանկացած կենդանի օրգանիզմ, իր մեջ պարունակի օրգանական նյութեր: Հետևաբար մենք պետք է մի միջոց գտնենք, որպեսզի այդ օրգանական նյութերը վերածենք այնպիսի նյութի, որը կարող է յուրացվել մարդու օրգանիզմի կողմից և դրանով իսկ մեզ ապահովենք կենսագործունեության համար անհրաժեշտ էներգիայով: Իսկ եթե այդ ավազը քայքայված լեռնային ապարների ծագում ունի, ապա այդ դեպքում առավել ևս, քանի որ Թուրքեստանի խոշոր օազիսների ու անապատի հարակից տարածքների մեծ մասն անկասկած ունեցել է մաքուր բուսական ծածկույթ: Այսպիսով, մենք հանգում ենք այն եզրակացության, որ երկար դարերի ընթացքում այդ օրգանական միացությունները պետք է որ նստած լինեն ավազի հսկայական զանգվածի տակ և խառնված լինեն դրա հետ: Այնուհետև կարելի է պնդել, որ, գրավիտացիայի օրենքին համապատասխան, այդ միացությունները խմբավորվել են ըստ իրենց տեսակարար կշիռների, ուստի և կարելի է ենթադրել, որ այդ օրգանական նյութերը, թեթև լինելով ավազից, աստիճանաբար խմբավորվել են առանձին շերտերով ու գոտիներով:

Այսպիսի եզրակացության հանգելուց հետո ես մի փոքրիկ արշավ նախաձեռնեցի դեպի անապատ, որպեսզի գործնականում ստուգեմ իմ ենթադրության ճշտությունը, և երեք օրվա ճանապարհ անցնելուց հետո կատարեցի անհրաժեշտ հետազոտություններ: Շուտով որոշ տեղերում ես գտա շերտեր, որոնք, թեև անզեն աչքով հազիվ են առանձնանում ավազի ընդհանուր զանգվածից, սակայն ինձ հաջողվեց հատատել, որ դրանք որոշակիորեն այլ ծագում ունեն: Մանրադիտակի և քիմիական վերլուծության օգնությամբ գննելով այդ խառնուրդի որոշակի մասնիկները՝ ես իմացա, որ դրանք մանրագույն օրգանիզմների մեռած մարմիններ են և բուսական ծագման զանազան հյուսվածքների մնացորդներ: Իմ տրամադրության տակ եղած բոլոր յոթ ուղտերը բեռնելով օրգանական նյութեր պարունակող այդ հատուկ ավազահողով՝ հետ վերադարձա և պրոֆեսոր Սկրիդլովի խորհրդով գնեցի որոշակի քանակությամբ տարբեր կենդանիներ, որպեսզի մի շարք փորձեր կատարեմ դրանց հետ: Իմ գնած երկու ուղտին, երկու յակին, երկու ձիուն, երկու եզանը, երկու ավանակին, տասը ոչխարներին, տասը այծերին, տասը շներին և տասը կատուներին ես թողեցի, որ մի լավ քաղցեն՝ նրանց տալով գոյություն պահպանելու համար անհրաժեշտ սննդի նվազագույն քանակություն, որից հետո սկսեցի նրանց կերին քիչ-քիչ ավելացնել այն օրգանական նյութից, որն ինձ հետ բերել էի անապատից:

Փորձերի առաջին մի քանի օրերին անխտիր բոլոր կենդանիները հրաժարվում էին այդ խառնուրդն ուտել, բայց երբ ես փոխեցի դրա պատրաստման եղանակը, ընդամենը մի շաբաթ հետո ոչխարներն ու այծերը սկսեցին դա ուտել մեծ հաճությամբ:

Այնժամ ես իմ ուշադրությունը կենտրոնացրի հատկապես այդ կենդանիների վրա և երկու օր հետո լիովին համոզվեցի, որ ոչխարներն ու այծերը նույնիսկ իմ պատրաստած կերը գերադասում են մյուս կերերից: Ես խառնում էի յոթ ու կես մաս անապատի հող, երկու մաս ոչխարի աղացած միս և

կես մաս սովորական աղ: Սկզբում բոլոր կենդանիները, ներառյալ ոչխարները և այծերը, հրաժարվում էին այդ խառնուրդից, բայց երբ կորցրին իրենց քաշի կես տոկոսից մինչև երկուսուկես տոկոսը և սկսեցին այդ խառնուրդն ուտել, ոչ միայն դադարեցին նիհարել, այլև նույնիսկ իրենց քաշն ավելացրին 1-3 ֆունտով: Այդ փորձերի շնորհիվ ես պարզեցի, որ անապատի՝ օրգանական նյութեր պարունակող հողը լիովին կարելի է որպես կեր օգտագործել կենդանիների համար՝ պայմանով, որ այն խառնված լինի որոշակի քանակությամբ մսի հետ: Արդյունքում ես կարող եմ առաջարկել հետևյալը. որպեսզի լուծենք ամբողջ ճանապարհին մեր արշավախմբին սննդամթերքով ապահովելու խնդիրը, անհրաժեշտ է գնել մի քանի հարյուր ոչխար ու այծ և աստիճանաբար, ըստ անհրաժեշտության, դրանք որպես սնունդ օգտագործել ինչպես մեզ, այնպես էլ մնացած կենդանիների համար՝ պատրաստելով վերը նշված խառնուրդը: Չարժե մտահոգվել այն հարցով, որ ճանապարհին մեզ չի բավականացնի համապատասխան հողը, քանի որ իմ հավաքած տվյալները վկայում են, որ դրանսովածքներն անապատում տարածված են ամենուրեք:

Իսկ հիմա խոսենք ջրի խնդրի մասին: Որպեսզի ամբողջ ճանապարհին մեզ ապահովենք խոնավության բավարար պաշարով, մենք պետք է ձեռք բերենք ոչխարի և այծի միզափամփուշտի կամ ստամոքսի մեծ քանակություն՝ երկու անգամ ավելի, քան մեզ հետ տարած կենդանիների քանակն է, և դրանք համապատասխան ձևով մշակելուց հետո օգտագործենք որպես տիկեր՝ ջրով լցնելով և երկուական բեռնելով ամեն մի ոչխարի և այծի: Ես համապատասխան փորձեր կատարեցի և համոզվեցի, որ այդ կենդանիներն առանց դժվարության կարող են կրել այդքան քանակությամբ ջուր: Հաշվարկները ցույց են տալիս, որ այդ եղանակով պահեստավորած ջրի ընդհանուր քանակությունը լրիվ բավարար կլինի ինչպես սեփական կարիքների, այնպես էլ ճանապարհին կենդանիներին ջուր տալու համար, եթե առաջին երկու-երեք օրերին ջուրն օգտագործենք խնայողաբար: Այնուհետև մենք կկարողանանք օգտվել այն տիկերի ջրի պաշարից, որոնք կհանենք մեզ համար կերակուր դարձած կենդանիների վրայից և այդ ամենի արդյունքում ամբողջ ճանապարհին ջրի մեծ պակաս չենք զգա»:

Կարպենկոյի ելույթից հետո խոսք վերցրեց Սարի-օղլին: Նրա հետ ես հանդիպել և ընկերացել էի դրանից հինգ տարի առաջ: Ծագումով լինելով պարսիկ և ծնված լինելով Պարսկաստանի արևելյան շրջանում, նա կրթություն էր ստացել Ֆրանսիայում: Գուցե ինչ-որ ժամանակ ես նրա մասին առանձին գիրք կգրեմ, քանի որ այդ նշանավոր մարդը հսկայական ազդեցություն է ունեցել իմ կյանքում:

Սարի-օղլին ասաց մոտավորապես հետևյալը. «Լսելով լեռնային ճարտարագետ Կարպենկոյի ճառը, ես պետք է ձեռնպահ մնամ իմ ելույթի առաջին մասը բարձրաձայնելուց՝ ընդունելով, որ դրանից ավելի լավ բան առաջարկել հնարավոր չէ: Իսկ իմ հաղորդման երկրորդ մասը վերաբերում է այն լուրջ հարցին, թե ինչպես պետք է անապատով առաջ ընթանանք ավազամրրիկների ժամանակ: Դրա հետ կապված կուզենայի ձեզ ներկայացնել իմ դատողություններն ու կատարած փորձերի արդյունքները: Եզրահանգումներս, իմ կարծիքով, լրացնում են ճարտարագետ Կարպենկոյի ասածները:

Անապատը հատողները հաճախ ավազամրրիկների են հանդիպում, որոնց ժամանակ ո՛չ մարդիկ, ո՛չ կենդանիները չեն կարողանում առաջ շարժվել, քանի որ օդ բարձրացած ավազի հսկայական քանակությունը մի ակնթարթում բարձր սար է առաջացնում այնտեղ, որտեղ դրանից առաջ գոգավորություն է եղել: Ես կասկածի տակ եմ առել այն աքսիոման, թե ավազամրրիկի ժամանակ անապատով առաջ շարժվելը հնարավոր չէ: Ես մտածեցի, որ քանի որ ավազի տեսակարար կշիռը փոքր չէ, ապա այն չի կարող շատ վեր բարձրանալ, այսինքն գոյություն ունի մի սահման, որից ավելի վեր ոչ մի ավազահատիկ չի հասնում: Հիմնվելով այդ գաղափարի վրա, ես որոշեցի գնահատել այդ վարկածային բարձրության մեծությունը:

Այդ նպատակով ես այստեղ մի ծալովի աստիճան ձեռք բերեցի և երկու ուղտի և ուղեկցորդի ուղեկցությամբ խորացա անապատում: Առաջին օրվա ավարտին ես նոր էի գիշերելու տեղ պատրաստել, երբ հանկարծ ուժեղ քամի բարձրացավ, որը մեկ ժամ հետո վերածվեց իսկական մրրիկի, այնպես որ հնարավոր չէր տեղում կանգնած մնալ և անգամ շնչել օդ բարձրացած ավազի պատճառով:

Մեծ ջանքերի գնով ինձ հաջողվեց բացել ծալովի աստիճանը և դրան ուղղահայաց դիրք տալ, որից հետո, ուղտերին որպես հենարան օգտագործելով, մագլցեցի վեր: Պատկերացրեք իմ զարմանքը, երբ ընդամենը քսանհինգ ֆուտ բարձրության վրա ես այլևս ոչ մի ավազահատիկ չտեսա:

Իմ աստիճանը վաթսուն ֆուտ երկարություն ուներ. ես դեռ դրա մեկ երրորդին էլ չէի հասել, երբ օդը լրիվ պարզվեց: Վերևում հրաշալի աստղազարդ երկինքն էր, իսկ լուսինն այնպես պայծառ էր

փայլում, որի նմանը ես այնքան էլ հաճախ չեմ տեսել անգամ արևելյան Պարսկաստանում գտնվող իմ տնից: Իսկ ներքևում մի այնպիսի աներևակայելի բան էր կատարվում, կարծես փոթորկի ժամանակ կանգնած լինեի օվկիանոսի ափին:

Մինչ, վերևում կանգնած, ես ինձ լավ էի զգում, մրրիկը սկսեց հանդարտվել, և կես ժամ հետո ես ցած իջա: Թեև քամին շատ ուժեղ չէր, ուղեկիցս շարունակում էր քայլել, ինչպես նման դեպքերում ընդունված է, ավազաթմբերի գազաթներով՝ իր հետևից քաշելով ուղտերից մեկին: Ինչպես պարզվեց, երկրորդը կապը կտրել էր և փախել անհայտ ուղղությամբ:

Երբ քամին լրիվ դադարեց, մենք գնացինք երկրորդ ուղտին որոնելու: Շուտով նկատեցինք ավազից վեր ցցված նրա սմբակը՝ ոչ շատ հեռու այն վայրից, որտեղ ամրացրել էի աստիճանը: Ուղտին ավազի տակից հանելն արդեն իմաստ չուներ, քանի որ արդեն սատկած էր: Ուստի մենք անմիջապես բռնեցինք հետդարձի ճանապարհը՝ ընթացքում սնունդ ընդունելով, որպեսզի իգուր ժամանակ չկորցնենք և երեկոյան կողմ հասնենք մեր ավանը:

Հաջորդ օրը ես տարբեր բարձրությունների վրա ոտնատեղ ունեցող մի քանի քայլահեռակներ պատվիրեցի, որպեսզի խուսափեմ ավելորդ հարցերից, և սննդամթերքի հետ դրանք բարձելով ուղտին, նորից գնացի անապատ: Այնտեղ սկսեցի վարժվել քայլահեռակներով քայլելուն՝ սկզբում օգտագործելով ամենացածր ոտնահեռակները, ապա՝ ավելի բարձրերը: Որպեսզի ավազի վրայով քայլելը հեշտանա, ես քայլահեռակների ոտքերի տակ մետաղական կոշկատակերի նման ինչ-որ բաներ էի հարմարեցրել, որոնք, զգուշավորությունից դրդված, պատվիրել էի տարբեր տեղերում: Այն ընթացքում, երբ ես վարժվում էի դրանցով քայլելուն, երկու մրրիկ տեղի ունեցավ, որոնցից մեկն այնքան էլ ուժեղ չէր: Բայց նույնիսկ այդ համեմատաբար թույլ մրրիկի պայմաններում սովորական մեթոդներով այդ տեղանքով քայլելն ու կողմնորոշվելը միանգամայն անհնարին էր: Սակայն, բարձրանալով քայլահեռակների վրա, բոլոր մրրիկների ժամանակ ցանկացած ուղղությամբ ես քայլում էի այնպիսի թեթևությամբ, կարծես իմ տան մեջ քայլելիս լինեի: Սկզբում շատ դժվար էր ավազաթմբերի վրայով այնպես քայլել, որ չսայթաքեի, մանավանդ մրրիկի ժամանակ: Բայց բարեբախտաբար պարզվեց, որ ավազով հագեցած օդի ստորին շերտի մակերևույթն ունի անհարթություններ, որոնք ամբողջովին համընկնում են ավազաթմբերի անհարթություններին, այնպես որ քայլահեռակով քայլելը հեշտացնում է այն հանգամանքը, որ ավազով հագեցած մթնոլորտի ստորին շերտի ուրվագծերով դուք կարող եք պարզորոշ տեսնել, թե որտեղ է վերջանում մի ավազաթումբը և սկսվում երկրորդը:

Սարի-օղլին իր ելույթը եզրափակեց հետևյալ կերպ.

«Ամեն դեպքում կարելի է հաստատված համարել, որ ավազով հագեցած օդի ստորին շերտը որոշակիորեն ունի ոչ մեծ հաստություն, և որ նրա վերին մակերևույթի ուրվագծերը միշտ ճշտորեն համընկնում են բուն անապատի ուրվագծերին: Ուստի ես կարծում եմ, որ այդ գյուտից մենք կարող ենք օգտվել ակնկալվող ճամփորդության ժամանակ»:

Երրորդ ելույթ ունեցողը բանասեր Ելովն էր, որն իր հաղորդումը ներկայացրեց իրեն բնորոշ հուզականությամբ.

«Եթե թույլ կտաք, պարոնս՝ յք, ես կասեմ նույնը, ինչ մեր հարգարժան նախորդ էսկուլապն ասաց ճարտարագետ Կարպենկոյի ելույթի առաջին մասի վերաբերյալ, այն է՝ ես նույնպես «փաս» եմ ասում: Խոստովանում եմ նաև, որ ինքս ավելի լավ բան չեմ մտածել, քան մեր լսածներն էին, և որ իմ գտած գաղափարներն ուղղակի մանկական թոթովանք են՝ նախորդ բացահայտումների հետ համաեմատած:

Սակայն, այն ընթացքում, երբ լսում էի նախորդ ելույթ ունեցողներին, իմ գլխում մի քանի մտքեր ծագեցին, որոնք երևի թե օգտակար կլինեն մեր արշավի նախապատրաստման գործում, ուստի կցանկանայի դրանք կիսել ներկաների հետ:

Ինչպես դոկտորը հայտնեց, քայլել սովորելու համար տարբեր երկարության քայլահեռակներ են պետք, բայց ես կարծում եմ, որ մեզ հետ պետք է վերցնենք միայն նրանք, որոնց երկարությունը քսան ֆուտից պակաս չէ: Եթե անգամ հետևենք Կարպենկոյի խորհրդին, մենք մեզ հետ պետք է տանենք ոչխարների և այծերի մեծ հոտ: Եվ ահա ես մտածեցի, որ լավ եղանակին, երբ քայլահեռակներն ավելորդ բեռ կլինեն մեզ համար, փոխանակ ինքներս քարշ տանք դրանք, կարող ենք օգտագործել ոչխարներին և այծերին: Ինչպես գիտեք, հոտում ոչխարները բնագոյով հետևում են առջևից գնացողին, որն առաջնորդի դեր է կատարում: Եթե նրա վրա կապենք քայլահեռակների առաջին գույգը, ապա մյուս ոչխարները կշարվեն նրա հետևից և կկազմեն երկար շղթա: Մեզ միայն կմնա այնպես անել, որ

ոչխարները ոչ միայն քայլահեռակներն իրենց հետ տանեն, այլ նաև մեզ: Չուզահեռ տեղաբաշխված քսան ֆուտ երկարությամբ քայլահեռակների միջև կարելի է տեղավորել երեքական ոչխարներից կազմված յոթ շարքեր, այսինքն՝ քսանմեկ ոչխար: Այդքան ոչխարի համար մեկ հասուն տղամարդ տանելը դատարկ բան է: Միայն թե նրանք այնպես պետք է դասավորված լինեն, որ կենտրոնում գոյանա հինգուկես ֆուտ երկարությամբ և երեք ֆուտ լայնությամբ ազատ տարածք, որտեղ հարմարավետ պատգարակ կարելի է տեղադրել: Այդ դեպքում մեզնից յուրաքանչյուրը, փոխանակ ուժասպառ լինի քայլահեռակների ծանրության տակ, կնմանվի Մուխթար փաշային իր հարեմում, կամ հանգիստ կպառնի այն հարուստ անբանների պես, որոնք իրենց ավտոմեքենաներով ֆոֆոում են Բուլոնյան անտառում: Եթե անապատը հատենք նման հարմարավետ պայմաններում, ապա կկարողանանք առանց ժամանակ կորցնելու նաև լեզուներ սովորել, որոնք մեզ պետք կզան ապագա արշավների ժամանակ»:

Առաջին երկու ելույթներից և հատկապես Ելովի ասածներից հետո պարզ դարձավ, որ նոր գեկույցներ լսելու առանձնապես կարիք չկա: Մենք ապշել էինք մեր լսածներով: Մենք նույնիսկ մտածեցինք, որ Գոբի անապատը հատելու դժվարությունները նշանակալիորեն չափազանցված են, և որ նման ձեռնարկման անհնարինությունը դիտմամբ է ներշնչվում ճանապարհորդներին:

Բոլոր առաջարկներն առանց քննարկման միաձայն ընդունելուց հետո մենք որոշեցինք տեղի բնակիչներից թաքցնել անապատով անցնելու մեր մտադրությունը, որն իրենք սովի, վտանգների ու մահվան թագավորություն են համարում: Թո՛ղ որ պրոֆեսոր Սկրիդլովին համարեն խիզախ ռուս վաճառական, որն իրենց շրջանն է եկել զուտ առևտրական նպատակներով: Նա իբր այստեղ պետք է ոչխարներ գնի և ուղարկի Ռուսաստան, որտեղ դրանք շատ թանկ արժեն, մինչդեռ այստեղ շատ էժան են. նաև մտադիր է առանձնապես ամուր փայտանյութ արտահանել, որպեսզի Ռուսաստանում ջուլհակային հաստոցներ պատրաստել տա: Այստեղի փայտանյութի պես ամուր փայտանյութ Ռուսաստանում չկա, իսկ հաստոցների մասերը, որոնք պատրաստվում են ավելի փափուկ տեսակի փայտանյութերից, շատ արագ մաշվում են ուժեղ շփման պատճառով: Ուստի և խիզախ վաճառականը որոշել է դիմել նման համարձակ ձեռնարկման:

Այս ամենը քննարկելուց հետո մենք ուժերի հորդում զգացինք և այնպես էինք խոսում մոտակա արշավի մասին, կարծես պատրաստվում էինք զբոսանքի դուրս գալ Փարիզի Կոնկորդ լողափում: Հաջորդ օրը մենք ճամփա ընկանք դեպի գետափի այն վայրը, որտեղ գետն անհետանում է ավազի հաստ շերտի տակ, և այնտեղ Ռուսաստանից բերված վրաններով ճամբար դրեցինք: Թեև մեր ճամբարն ավանից շատ հեռու չէր, բայց տեղի բնակիչներից ոչ մեկի գլխում երբեք միտք չէր ծագել բնակություն հաստատել այդ շիկացած դժոխքում: Մեզնից ոմանք, ներկայանալով որպես «շեղված» ռուս վաճառական Իվանովի շքախմբի անդամներ ու սպասավորներ, սկսեցին «առանձնահատուկ ամուր փայտանյութ» գնել երկար գերանների տեսքով, ինչպես նաև այծերի ու ոչխարների մի ամբողջ հոտ: Այնուհետև մենք սկսեցինք ջանասիրաբար քայլահեռակներով քայլել սովորել՝ սկզբում կարճերի, ապա ավելի ու ավելի երկարների վրա:

Ուղիղ տասներկու օր հետո՝ մի հրաշալի առավոտյան, մեր ոչ մեծ քարավանը ճամփա ընկավ՝ այծերի մկկոցի, ոչխարների մայունի, շների հաչոցի, ձիերի խրխինջի և էշերի զոռոցի ուղեկցությամբ: Ստացվել էր մի երկար շարասյուն, ինչպիսին լինում է արքայական ցեղի պատկանող որևէ անձի տեղաշարժի ժամանակ: Մեր ուրախ երգերի ձայնը հասնում էր շատ հեռու. դետուդեն էին ճոճվում հանպատրաստից իրար հետևից շարված մեր պատգարակները, և իհարկե, ինչպես միշտ, համընդհանուր քրքիջ էին առաջացնում Ելովի սրամիտ դիտողություններն ու կատակները:

Երկու ահավոր ավազամորրիկ դիմագրավելուց հետո, մի քանի օր անց, մենք հայտնվեցինք անապատի սրտում: Ընդ որում, մենք բոլորովին հալումաշ չէինք եղել և անգամ, ինչպես կատակով առաջարկել էր Ելովը, ճանապարհին օտար լեզուներ էինք սովորել: Մենք հասել էինք մեր արշավախմբի հիմնական նպատակակետին:

Ամեն ինչ ընթացել էր մեր պլանավորածի պես՝ բացառությամբ Սոլովյովի հետ տեղի ունեցած պատահարի: Որպես կանոն, մենք գիշերներն էինք առաջ ընթանում՝ առաջնորդվելով արշավախմբի անդամներից մեկի՝ աստղագետ Դաշտամիրովի ցուցումներով, ով կարողանում էր կողմնորոշվել աստղերի օգնությամբ:

Մի անգամ լուսաբացին մենք դադար առանք, որպեսզի և՛ ինքներս սնունդ ընդունենք, և՛ կերակրենք մեր կենդանիներին:

Դեռ շատ վաղ էր, արևը նոր էր ուզում դուրս գալ հորիզոնի հետևից: Մենք հաճույքով նախաճաշում էինք թարմ պատրաստված ոչխարի մսով ու բրնձով, երբ հանկարծ հորիզոնում նշմարվեց ուղտերի մի նախիր: Մենք անմիջապես գլխի ընկանք, որ դրանք վայրի ուղտեր են: Մոլովյովը, լինելով կրթոտ որսորդ և դիպուկ կրակող, անմիջապես ձեռքն առավ հրացանը և վազեց դեպի ուղտերը, իսկ մենք, ծիծաղելով մեր ընկերոջ այդ թուլության վրա, շարունակեցինք արժանին մատուցել մեր համեղ նախաճաշին, որը հրաշալի էր պատրաստված ծայրահեղ արտակարգ պայմաններում: Ես դրանք ծայրահեղ արտակարգ եմ անվանում, քանի որ, գտնվելով անապատի սրտում, շրջապատված շիկացած ավազներով, ճանապարհորդները սովորաբար կրակ անելու հնարավորություն չեն ունենում. հարյուրավոր մղոն շրջագծով հնարավոր չի լինում նույնիսկ սաքսաուլի որևէ թուփ գտնել: Իսկ մենք ամենաքիչը օրը երկու անգամ կրակ էինք վառում, որպեսզի մեզ համար սուրճ կամ թեյ եփենք, այն էլ ոչ թե սովորական թեյ, այլ տիբեթական՝ ոչ մեծ խարույկ վառելով մորթված ոչխարների ոսկորներով: Այդ հարմարավետության համար մենք պարտական էինք Պոդոսյանին, որը մեզ գաղափար էր տվել ջրամանները կրող ոչխարների համար հատուկ «թամբեր» պատրաստել փայտյա տափակ ձողերից: Ուստի ամեն անգամ, երբ ճաշի համար մորթում էինք հերթական ոչխարը, նրա փայտե «թամբը» վերածվում էր խարույկի համար վառելիքի:

Արդեն մեկուկես ժամ էր անցել, ինչ Մոլովյովը գնացել էր վայրի ուղտ որսալու: Մենք արդեն պատրաստվում էինք շարունակել մեր ճամփորդությունը, իսկ նա դեռ չէր երևում: Մպասեցինք ևս կես ժամ և սկսեցինք անհանգստանալ: Մեզ հայտնի էր Մոլովյովի ճշտապահությունը. նա երբեք չէր ուշանում: Ենթադրելով, որ ինչ-որ մի դժբախտություն է պատահել, մենք վերցրինք մեր հրացանները և գնացինք մեր ընկերոջը որոնելու: Շուտով տեսանք ուղտերի նախիրը և գնացինք դրա ուղղությամբ: Բայց երբ մոտեցանք, կենդանիները, զգալով մեր ներկայությունը, փախան դեպի հարավ: Մենք որոշեցինք գնալ նախրի հետևից: Մոլովյովի անհետանալուց հետո արդեն չորս ժամ էր անցել, երբ հանկարծ նկատեցինք մեկին, ով մեզնից մոտ հարյուր քայլ հեռավորության վրա ընկած էր ավազին: Մոտենալով՝ մենք տեսանք մեր ընկերոջը, որն արդեն մեռած էր: Ուղտը համարյա լրիվ կրծել էր նրա վիզը: Մեզ համար դա իսկական ողբերգություն էր, քանի որ շատ էինք սիրում այդ արտասովոր մարդուն:

Հրացաններով մենք պատգարակ պատրաստեցինք և Մոլովյովի դին հասցրինք ճամբար, որտեղ էլ հոգևորականի դեր ստանձնած Սկրիդովի ղեկավարությամբ հանդիսավոր կերպով թաղման ծես կատարեցինք: Այդ միայնակ գերեզմանը թողնելով անապատի սրտում՝ մենք անմիջապես հեռացանք այդ անիծյալ վայրից:

Թեև շատ ջանքեր էինք գործադրել, որպեսզի գտնենք ավազների տակ թաղված առասպելական քաղաքը, բայց մենք հրաժարվեցինք մեր պլաններից և որոշեցինք հնարավորինս շուտ լքել անապատը: Թեքվեցինք դեպի արևելք և չորս օր հետո հասանք Կերնանի օազիս, որով ավարտվում էր անապատը, ապա շարունակեցինք առաջ ընթանալ, ավա դ, առանց մեր ընկեր Մոլովյովի:

Խաղաղություն և քո հոգուն, իմ ամենամտերիմ ու հավատարիմ ընկեր...

ԳԼՈՒԽ Է ԵՔԻՄ ԲԵՂ

Այս գրքի հերթական գլուխը ես ուզում եմ նվիրել իմ ընկերներից ևս մեկի մասին ունեցած իմ հիշողություններին, որին ես մեծ մարդ եմ համարում, և ում կենսագրությունը, ոչ այն է՝ ճակատագրի բերումով, ոչ այն է՝ ըստ անձի զարգացման օրենքների՝ համարյա ճշգրտորեն կրկնում է իմ սեփականը: Ներկայումս նա, սովորական մարդկային առումով ողջ և առողջ է, բայց ես կարծում եմ, որ դա վերաբերում է միայն նրա ֆիզիկական վիճակին:

Զգիտես ինչու ընդունված է կարծել, որ ազգամիջյան բախումների առատության մեր ժամանակներում եթե մարդիկ տարբեր ազգությունների են պատկանում, ապա բնագոյաբար պետք է իրար նկատմամբ թշնամանք և ատելություն զգան: Սակայն, չնայած այն բանին, որ ես ու ԵՔԻՄ ԲԵՂը դաստիարակվել էինք տարբեր ընտանեկան ավանդույթներով և իրարից տարբեր կրոնական

համոզմունքներ ունեինք, բայց, մեր հենց առաջին հանդիպումից սկսած, որը տեղի ունեցավ անսովոր հանգամանքներում, իրար նկատմամբ համակրանքով լցվեցինք, որը ժամանակի ընթացքում վերաճեց իսկական բարեկամության: Իսկ ավելի ուշ, մեզ վրա կրելով ճակատագրի բերած բոլոր տհաճությունները, մենք մի արմատից աճած երկու ծառերի պես ամբողջ կյանքում իրար հետ եղբայրաբար ենք վարվել:

Այս գլխում ես կպատմեմ Եթիմ բեյի հետ ունեցած իմ առաջին հանդիպման մասին՝ մի մարդու, որին ճանաչողները հարգանքով էին լցված նրա նկատմամբ՝ նրան համարելով իմաստուն և իրոք հրաշագործ մարդ: Ես նաև կանգ կառնեմ մի քանի կարևոր իրադարձությունների վրա, որոնք տեղի են ունեցել Ասիայի և Աֆրիկայի քիչ հետազոտված մասերում մեր համատեղ ճամփորդությունների ընթացքում:

Ներկայումս՝ իր ծառայությունների դիմաց ամեն տեսակի պարգևների արժանանալուց հետո, նա իր մնացած տարիներն անցկացնում է Եգիպտոսի մի ոչ մեծ, շատերին անհայտ քաղաքում՝ լինելով թուրքական մեծ փաշա: Հարկ է նշել, որ նա այդպիսի մեկուսի տեղ է ընտրել իր համար (չնայած ունի բոլոր հնարավորությունները ապրելու այնտեղ, որտեղ ուզում է՝ օգտվելով ժամանակակից ամեն հարմարավետությունից) գլխավորապես այն պատճառով, որ խուսափի բոլոր այն հոգեառ հետաքրքրասերներից, որոնք էլ ուրիշ զբաղվելու բան չունեն: Ավա՛ղ, այդ հատկանիշը բնորոշ է մեր ժամանակակիցների մեծ մասին:

Մեր առաջին հանդիպման ժամանակ մենք երկուսս էլ երիտասարդ էինք: Նա սովորում էր Գերմանիայում՝ մի զինվորական քոլեջում, և սովորականի պես եկել էր ամառվա արձակուրդը հոր հետ Կոնստանդնուպոլսում անցկացնելու: Նախքան մեր ծանոթության հանգամանքները նկարագրելու ես պետք է ասեմ, որ մինչև Էջմիածնում Պողոսյանին հանդիպելս, ինչի մասին պատմել եմ նախորդ գլուխներից մեկում, ես ջահել որսաշան նման թրև էի գալիս ամենուրեք, որպեսզի գտնեմ ինձ հուզող հարցերի պատասխանները: Այդ ժամանակ իմ ծանոթների կարծիքով ես թողնում էի կիսախելագարի տպավորություն և հենց այդ տեսքով էլ մեկնեցի Կոնստանդնուպոլիս՝ լսած լինելով այնտեղի դերվիշների գործած անհավանական հրաշքների մասին:

Հասնելով այդ քաղաքը՝ ես նախ ապաստանեցի Բերա թաղամասում, որից հետո շտապեցի այն մենաստանները, որտեղ ապրում էին դերվիշները: Համարյա ամբողջ ժամանակս ես անցկացնում էի այդ մարդկանց շրջապատում՝ ոչնչով չզբաղվելով և միայն գլուխ ջարդելով այդ բոլոր սին բաների վրա: Հետո հանկարծ գլխի ընկա, որ եթե այդպես շարունակեմ, ապա առողջ բանականության վերջին մնացորդները շուտով ամբողջովին կլքեն ինձ:

Դա գիտակցելուց հետո ես երկու օր անցկացրի լիակատար մենության մեջ՝ փորձելով ուշքի գալ և ձերբազատվել ինձ պարուրած հրապուրանքներից: Մակայն համառ ու կաշուն մտքերը շարունակում էին ինձ տանջել, ինչպես ճանճերը՝ իսպանական եզին:

Այդպիսի անհանգիստ վիճակում ես մի անգամ կանգնել էի Բերան Ստամբուլին միացնող կամրջի վրա և, բազրիքին հենված, մտորում էի այն բոլոր աճաբարությունների իմաստի մասին, որոնցով դերվիշները զարմացնում են պարապ հանդիսականներին: Կամրջի տակով շոգենավեր էին անցնում և անընդհատ դետուդեն էին սահում փոքրիկ մակույկներ:

Գալաթիայի ափին՝ կամրջից անմիջապես այն կողմ, նավահանգիստ կար, որտեղ կանգ էին առնում Կոնստանդնուպոլսի և Բոսֆորի հանդիպակաց ափի միջև երթնեկող շոգենավերը: Մեկնող ու ժամանող շոգենավերի մոտակայքում ես տեսա լողացող տղաների, որոնք սուզվում էին ջրի հատակը, որպեսզի գտնեն ձանձրացող ուղևորների նետած դրամները: Դա ինձ հետաքրքրեց, և ես մոտեցա, որ ավելի լավ տեսնեմ: Շատ ճարպկորեն և առանց այլևայլության այդ դեռահասները ճանկում էին շոգենավերից նետված դրամները՝ չկորցնելով դրանցից ոչ մեկը: Ես երկար ժամանակ դիտում էի նրանց՝ հիանալով տարբեր տարիքի տղաների ճարպկությամբ, որոնք կլինեին ուրիշ մինչև տասնութ տարեկան: Հանկարծ մի միտք ծագեց իմ գլխում. «Իսկ ինչո՞վ եմ ես նրանցից վատ: Ինչո՞ւ ես էլ չզբաղվեմ այդ արհեստով...»: Եվ հաջորդ օրը ես գնացի այդ ափը և սկսեցի սուզվել սովորել ռազմածովային նախարարության շենքի մոտակայքում:

Մի հույն, որը հաճախ էր գալիս այդ տեղերում լողալու, տեսավ իմ չարչարանքները և կամավոր կերպով հանձն առավ դառնալու իմ ուսուցիչը, որպեսզի ինձ օգնի տիրապետել իր խոսքով ասած, «բարձր արվեստին»: «Դասից» հետո մենք գնացինք սրճարան, և ես կարծում եմ, որ հարկ չկա խորանալ մանրամասների մեջ և պարզել, թե մեզնից ով վճարեց մեր խմած սուրճի համար:

Սկզբում ինձ համար դժվար էր, որովհետև աղի ջուրը գրգռում էր աչքերս. չէ՞ որ սուզվելու ժամանակ հարկավոր էր աչքերը բաց պահել, իսկ իմ աչքերը դրանից մրմռում էին: Բայց շուտով վարժվեցի և ջրում ինձ զգում էի ինչպես ցամաքում: Երկու շաբաթ հետո ես սկսեցի ապրուստս վաստակել՝ լողալով շոգենավերի շուրջը և որսալով նետված մետաղադրամները: Իհարկե, սկզբում այնպես ճարպիկ չէի շարժվում, ինչպես տեղացի տղաները: Բայց որոշ ժամանակ ևս անցնելուց հետո ես հասա իսկական կատարելության և ոչ մի մետաղադրամ բաց չէի թողնում:

Հարկ է նշել, որ ջուրը նետված մետաղադրամը սկզբում բավականին արագ է սուզվում, բայց հետո աստիճանաբար կորցնում է արագությունը. այնպես որ, եթե տեղը շատ խոր է, ապա բավական երկար ժամանակ էր անցնում, մինչև այն հասնում է հատակին: Այդպիսով, նախքան սուզվելը պետք է ուշադիր հետևել, թե որտեղ է նետված դրամը սկսում սուզվել, որից հետո արդեն դժվար չի լինում այն ջրի տակ գտնելն ու ճանկելը:

Մի անգամ մտքերի մեջ ընկած ուղևորներից մեկը հենվեց բազրիքին և տարվելով սուզորդների ստեղծած իրարանցմամբ՝ պատահաբար ջուրը գցեց համրիչը՝ յուրաքանչյուր իրեն հարգող ասիացու անբաժան ուղեկիցը, երբ նա զբաղված չէ ունայն աշխարհիկ գործերով:

Նա անմիջապես ձայն տվեց պատանի սուզորդներին և խնդրեց փնտրել կորուստը: Բայց, չնայած ջանքերին, դեռահասները չկարողացան այն գտնել, քանի որ դրա ջուրն ընկնելու տեղից բավական հեռու էին գտնվել և չէին հասցրել նկատել: Հավանաբար այդ իրը տիրոջ համար շատ թանկ արժեք, քանի որ նա գտնողին առաջարկեց քսանհինգ թուրքական ֆունտ:

Երբ շոգենավն արդեն մեկնել էր, սուզորդները դեռ երկար ժամանակ շարունակում էին իրենց փորձերը, բայց հաջողության չէին հասնում: Այդ տեղը շատ խորն էր, և հատակը հետազոտելը դժվար էր: Հարկ է նշել, որ մեծ խորության դեպքում հատակին հասնելուն խանգարում է ջրի ֆիզիկական հատկությունը, որով լողորդը դուրս է մղվում դեպի ջրի մակերևույթ:

Մի քանի օր անցնելուց հետո, երբ ես սովորականի պես սուզվում էի նետված մետաղադրամների հետևից, ուղևորներից մեկն իր դրամն այնքան հեռու նետեց, որ մինչև լողալով տեղ կհասնեի, այն աչքից կորավ: Քանի որ այդ օրն ինձ համար հաջողակ չէր եղել, ես որոշեցի ամեն գնով ճանկել այդ մետաղադրամը և սուզվեցի: Այն պահին, երբ վերջապես որսացի մետաղադրամը, հատակին ինչ-որ բան փայլվեց, որը նման էր համրիչի: Ես վեր բարձրացա ջրի երես և աշխատեցի հիշել գտածոյի տեղը, որի համար քսանհինգ ֆունտ էր առաջարկված:

Ոչ մեկին իմ տեսածի մասին չասելով՝ ես կրկին սուզվեցի, բայց մի քանի անհաջող փորձերից հետո հասկացա, որ սովորական եղանակով հատակին հասնել չեմ կարող, քանի որ այն շատ խորն էր: Հաջորդ օրը ես ինձ հետ դարբնի ծանր մուրճ բերեցի, կապեցի մարմնիս և այդ «բեռի» շնորհիվ շատ արագ հասա հատակին: Շուտով գտա իմ փնտրածը: Համրիչի հատիկները սաթից էին, որոնց վրա մանր ադամանդներ ու նոնաքարեր կային շարված:

Շենց նույն օրն իմացա, որ համրիչը կորցրած ուղևորը Ն. փաշան է՝ Կոնստանդնուպոլսից ոչ հեռու գտնվող փոքրիկ մի շրջանի նախկին կառավարիչը, ով ներկայումս ապրում է Բոսֆորի հանդիպակաց ափին՝ Սկյութարի կողմերում: Քանի որ ինձ այնքան էլ լավ չէի զգում, որոշեցի այլևս չսուզվել մետաղադրամների համար, այլ համրիչը տանել տիրոջը և միաժամանակ այցելել նաև Սկյութարի գերեզմանոցը:

Ես այնտեղ գնացի հաջորդ առավոտյան և շուտով գտա փաշայի տունը: Նա այդ ժամանակ տանն էր և երբ լսեց, որ մի սուզորդ է եկել և ուզում է տեսնել տանտիրոջը, անմիջապես հասկացավ, թե բանն ինչ է և անձամբ դուրս եկավ դիմավորելու: Տեսնելով գտնված համրիչը՝ նա շատ ուրախացավ և այնպես ջերմորեն ինձ շնորհակալություն հայտնեց, որ ես, խորապես հուզվելով նման ընդունելությունից, կտրականապես հրաժարվեցի հասանելիք պարգևատրումից:

Փաշան էլ իր հերթին ինձ հրավիրեց ընթրիքի, և ես, իհարկե, չկարողացա մերժել իմ նկատմամբ ուշադրության այդ նշանը: Ընթրիքից անմիջապես հետո ես ստիպված էի անմիջապես հեռանալ, քանի որ վախենում էի ուշանալ շոգենավի վերջին ուղերթից: Սակայն նավանցստի ճանապարհին հանկարծ այնպես տկարացա, որ նստեցի մոտակա տան աստիճաններին և հավանաբար ուշագնաց եղա:

Անցորդները նկատել էին ինձ հետ կատարվածը, և, քանի որ փաշայի տնից չէի հասցրել շատ հեռանալ, լուրը հասցրել էին նրան, որ ինչ-որ մի տղա հանկարծակի ուշագնաց է եղել: Գլխի ընկնելով, որ դա ոչ այլ ոք է, քան իր տնից հենց նոր դուրս եկած հյուրը, փաշան անմիջապես իր ծառաների հետ եկել և ինձ տարել էր իր տունը և շտապել բժիկ կանչել:

Ես շուտով ուշքի եկա, բայց քանի որ դեռ ինձ շատ վատ էի զգում, ստիպված եղա որոշ ժամանակ պառկած մնալ այդ բարի մարդու տանը:

Նույն օրվա գիշերը մաշկս սկսեց բորբոքվել և անտանելի այրվել, որի պատճառը հավանաբար ծովի աղի ջրի երկարատև ազդեցությունն էր: Ինձ տեղավորեցին կողաշենքում և իմ խնամքը հանձնեցին Ֆաթիմա բաջի անունով մի ծեր կնոջ: Փաշայի որդին, որը գերմանական ռազմական քոլեջի ուսանող էր, նույնպես գալիս էր ինձ այցելության և հետաքրքրվում իմ առողջական վիճակով: Հենց նա էր Եքիմ բեյը՝ մի մարդ, որը հետագայում դարձավ իմ սրտակից ընկերը:

Իմ առողջությունը սկսեց վերականգնվել, և մենք հաճախ էինք զրուցում իրար հետ՝ քննարկելով աշխարհում եղած ամեն ինչը, հետո աստիճանաբար անցանք փիլիսոփայական թեմաների: Երբ ես արդեն լրիվ առողջ էի, մենք արդեն մտերիմ ընկերներ էինք, իսկ երբ ափսոսանքով բաժանվեցինք, իրար հետ նամակագրություն էինք պահպանում: Այդ նույն տարում նա դուրս եկավ զինվորական քոլեջից և ընդունվեց բժշկական դպրոց, քանի որ այդ ընթացքում նրա հայացքներն այնքան էին փոխվել, որ ստիպված հրաժարվել էր նախկինում պլանավորած զինվորական կարիերայից:

Անցավ չորս տարի:

Մի անգամ, երբ Կովկասում էի, նրանից նամակ ստացա, որում ինձ հայտնում էր, որ արդեն ավարտել է կրթությունը, ուզում է հանդիպել ինձ հետ և միաժամանակ տեսնել Կովկասը, որով վաղուց է հետաքրքրված. ուստի հարցնում էր ինձ, թե որտեղ և երբ կարող ենք հանդիպել:

Այդ ամառ ես ապրում էի Սուրամում՝ ապրուստի միջոցներ հայթայթելով գիպսե արձանիկներ սարքելով, որոնք “made in Paris” ապրանքանիշն ունեին: Ես հեռագիր ուղարկեցի Եքիմ բեյին և հայտնեցի, որ անհամբերությամբ սպասում եմ նրա գալստյանը: Մի քանի օր հետո մենք հանդիպեցինք:

Այդ տարվա ամռան ամիսներին Պողոսյանը, Ելովն ու Կարպենկոն նույնպես ինձ հետ Սուրամում էին, որոնց հետ մտոհիկից ծանոթանալով, Եքիմ-բեյը մուտք գործեց մեր ընկերական շրջապատը:

Ամբողջ ամառը մենք անցկացրինք Սուրամում՝ հաճախակի ոտքով արշավի դուրս գալով դեպի այդ քաղաքի շրջակայքը. մագլցում էինք լեռները, ծանոթանում տեղի բնակիչների հետ, որոնք դեռ չէին ենթարկվել քաղաքակրթության ազդեցությանը. անգամ հասանք խնամքների ցեղի մոտ, որոնց սովորույթները կարող են խելագարության հասցնել ազգագրությամբ զբաղվող ցանկացած մարդու:

Այդ մի քանի ամսում սերտորեն շփվելով մեզ հետ՝ այդ տպավորվող պատանին վարակվեց մեր «զժական» գաղափարներով և շատ շուտով շրջապատի մարդկանց վրա թողնում էր ոչ այնքան նորմալ մարդու տպավորություն, ինչպես և մենք:

Այդ ժամանակներում մենք չորսով՝ Պողոսյանը, Ելովը, Կարպենկոն և ես, քննարկում էինք իշխան Յուրի Լյուբովեցկու առաջարկը, որով նա մեզ հրավիրում էր միանալ իր մյուս ընկերներին և ոտքով արշավի դուրս գալ Նախիջևանի շրջակայքից դեպի Պարսկաստան և Պարսից ծոց:

Այդ քննարկումներն ու նման ճամփորդության հետ կապված հեռանկարներն այնքան շատ հետաքրքրեցին Եքիմ բեյին, որ նա մեզ խնդրեց միջնորդել, որ իշխանն իրեն նույնպես թույլ տա մասնակցել այդ արշավին: Նա նաև սկսեց մտածել, թե ինչ հորինի, որ հայրն իրեն թույլ տա մասնակցելու այդ շրջագայությանը:

Ի վերջո ստացվեց այնպես, որ նա կարողացավ մասամբ նամակագրությամբ, մասամբ էլ անձամբ մեկ անգամ տուն հասնելու գնով կարգավորել բոլոր իր գործերը և մեր անխոնջ ընկերախմբի հետ երկար ճամփորդության դուրս գալ:

Նախիջևանից մենք դուրս եկանք կեսգիշերից հետո, իսկ առավոտյան արդեն մեզ վրա զգացինք մեր մոլորակի «սահմանապահներ» կոչվող երկոտանի բնակիչների անհավանական բժախնդրությունը: Բավական երկար ժամանակ նրանք մեզ ցուցադրում էին իրենց արհեստավարժ խորաթափանցությունն ու տեղեկացվածությունը:

Այդ արշավախմբին մասնակցում էին քսաներեք հոգի՝ ներառյալ իմ այն ընկերները, որոնց իմ այս գրքում որոշել եմ առանձին գլուխներ նվիրել: Նրանցից երեքի՝ Պողոսյանի, Ելովի և իշխան Լյուբովեցկու մասին ես արդեն գրել եմ, և այս մի գլուխն էլ նվիրում եմ դոկտոր Եքիմ-բեյին: Ճարտարագետ Կարպենկոյի և հնէաբան Սկրիդովի մասին դուք կիմանաք այս գրքի հաջորդ գլուխներում:

Մինչև Թավրիզ մեր ճամփորդությունը, ուր մենք հասանք մի քանի օր հետո, անցավ առանց առանձնակի արկածների: Բայց այնտեղ հասնելուն պես տեղի ունեցավ մի դեպք, որը ես ուզում եմ

մանրամասն նկարագրել ոչ միայն այն պատճառով, որ դրանում ամենակատիվ մասնակցությունն ունեցավ իմ ընկեր Եքիմ-բեյը, այլև որ այն ամբողջովին փոխեց իմ աշխարհայացքը:

Թավրիգում մենք լսեցինք մի պարսիկ դերվիշի մասին, որն իբր անհավանական հրաշքներ է գործում, և, իհարկե, դա մեզ շատ հետաքրքրեց: Հետագա մեր ճամփորդության ընթացքում մենք այդ մարդու մասին կրկին լսեցինք մի պարսիկ հոգևորականից, ուստի որոշեցինք շեղվել մեր նախանշած երթուղուց և գնալ ու անձամբ ծանոթանալ նրա հետ:

Մեր հոգնեցուցիչ ճամփորդության տասներեքերորդ օրը, որի ընթացքում գիշերում էինք պարսիկ և քուրդ հովիվների խրճիթներում, մենք վերջապես հասանք մի գյուղակ, որտեղ ապրում էր այդ դերվիշը, և անմիջապես շտապեցինք հանդիպելու նրան:

Մենք նրան գտանք իր տան մոտի ծառերի ստվերում նստած, որտեղ գրուցում էր իր մոտ եկած մի խումբ մարդկանց հետ: Նա ինչ-որ ցնցոտիներ հագած մի տարեց մարդ էր, որը ծալապատիկ նստել էր ուղղակի գետնին: Նրա շուրջը հավաքված երիտասարդ պարսիկները, ինչպես հետագայում պարզվեց, նրա աշակերտներն ու հետևորդներն էին: Մոտենալով, մենք խնդրեցինք, որ օրհնի մեզ և, ստանալով նրա օրհնանքը, միացանք ներկաներին և սկսեցինք գրուցել նրա հետ: Մենք հարցեր էինք տալիս, նա պատասխանում էր, հետո դերերը փոխվում էին:

Սկզբում նա մեզ բավական սառն ընդունեց, և թվում էր, թե մեր գրուցակիցը տրամադրված չէ երկար գրույցի. բայց հետո, երբ նա իմացավ, որ մենք երկար ճանապարհ ենք անցել իր հետ հանդիպելու համար, ավելի սրտաբաց դարձավ:

Նա շատ հասարակ էր խոսում՝ իր խոսքը չծաղկեցնելով ընտիր արտահայտություններով, և առաջին հայացքից թողնում էր անգրագետ, եվրոպական իմաստով բոլորովին կրթություն չստացած մարդու տպավորություն:

Մեր գրույցը պարսկերեն էր, ավելի ճիշտ՝ դրա բազմաթիվ բարբառներից մեկով, որին մեր ընկերախմբում տիրապետում էին ընդամենը երեք հոգի՝ ես, դոկտոր Սարի օղլին և Լսա մեկը, որն այնքան էլ վարժ չէր խոսում, այդ պատճառով ես մասնակցում էի գրույցին որպես թարգմանիչ՝ ներկաներին փոխանցելով հարցերն ու ստացված պատասխանները:

Մոտեցավ ճաշի ժամը: Դերվիշի աշակերտները նրան դափամա մատուցեցին, և նա, մեզ հետ գրույցը չընդհատելով, սկսեց ուտել: Քանի որ վաղ առավոտվանից ճամփա ընկնելով՝ մենք ոչինչ չէինք կերել, բացեցինք մեր ճամփորդական պայուսակները և նույնպես միացանք հացկերույթին:

Հարկ է նշել, որ այդ ժամանակ ես հնդիկ յոգերի ուսմունքի կրքոտ հետևորդ էի և ճշտորեն հետևում էի հաթիա-յոգայի կանոններին: Օրինակ՝ ըստ այդ ուսմունքի, ուտելու ժամանակ անհրաժեշտ է ուտելիքը մանրամասն ծամել. այդ պատճառով, երբ բոլոր գրուցակիցներն ու դերվիշն արդեն ավարտել էին իրենց ճաշը, ես դեռ շարունակում էի ջանասիրաբար ծնոտներս շարժել՝ ջանալով, որ ստամոքսիս մեջ ոչ մի կտոր չմանրացված ուտելիք չմտնի:

Դա նկատելով՝ դերվիշը դիմեց ինձ. «Ասա՛ ինձ, ջահե՛ լ օտարական, ինչու՞ ես այդպես անսովոր ձևով ուտում»: Ինձ զարմացրեց այդ հարցը, որն ինձ տարօրինակ թվաց՝ վկայելով հարց տվողի անտեղյակության մասին, այնպես որ, անմիջապես չպատասխանեցի, այլ մտածեցի, որ իզուր ենք այդքան երկար ճանապարհ անցել, որ նման մեկից ինչ-որ բան սովորենք: Հետո վրդովմունքով և նույնիսկ ամաչելով գրուցակցիս անգրագիտության համար՝ ես մի ամբողջ դասախոսություն կարդացի մարտոդության հարցերի վերաբերյալ՝ բացատրելով, որ լավ ծամված կերակուրն ավելի լավ է յուրացվում օրգանիզմում: Այդ ամենը ես իմացել էի բազմաթիվ «գիտական» հրատարակություններից:

Զրուցակիցս օրորեց գլուխը և հիշեցրեց մի ասացվածք, որը շատ սիրված է Պարսկաստանում. «Աստված պատժում է նրան, ով, չիմանալով Երկնային Արքայության ճանապարհը, այն ցույց է տալիս ուրիշներին»:

Դրանից հետո Սարի օղլին ինչ-որ ուրիշ հարց տվեց դերվիշին, որին նա կարճատու պատասխան տվեց և կրկին դիմեց ինձ. «Ասա՛ ինձ, ջահե՛ լ օտարական, մարմնամարզությամբ զբաղվում ես»:

Ես իրոք ֆիզիկական բեռնվածությունը բոլոր դժբախտությունների համադարման էի համարում և ուսումնասիրել էի ամեն տեսակի վարժությունների համակարգեր, որոնք առաջարկում էին ինչպես հնդիկ յոգերը, այնպես էլ Մյուլլերի շվեդական մարմնամարզությունը: Այդ ամենը ես ներկայացրի իմ գրուցակցին՝ ապացուցելով, որ կանոնավոր ֆիզիկական բեռնվածություններն անհրաժեշտ են

մարդու օրգանիզմին, ուստի ես մարմնամարզությամբ զբաղվում եմ օրական ամենաքիչը երկու անգամ: Ես նաև համառոտ կերպով նրա համար նկարագրեցի վարժությունների իմ համակարգը:

«Բայց այդ մարմնամարզությունը մարզում է միայն ձեռքերի, ոտքերի և մարմնի մյուս մասերի մկանները,- ասաց դերվիշը,- այն դեպքում, երբ ներքին մկաններն անմասն են մնում դրան»:

«Այո, այդպես է»,- հաստատեցի ես:

«Գերազանց է: Հիմա անդրադառնանք սնունդը ծամելու ձեր եղանակին: Եթե դուք այդպես եք վարվում ձեր ֆիզիկական վիճակը բարելավելու համար, ապա սխալ ճանապարհի վրա եք: Այդքան շատ ծամելով կերակուրը՝ դուք ձեր ստամոքսին ազատում եք իր անմիջական պարտականությունից: Հիմա դուք դեռ ջահել եք և առողջ, բայց ձեր ստամոքսը վարժեցնելով անգործության՝ հասուն տարիքում կհասկանաք, որ ձեր ստամոքսի մկանները նշանակալի հետաձ են ապրել, և դրա պատճառը հենց այն կլինի, որ հիմա չափազանց մանրամասն եք ծամում կերակուրը: Ձեզ հայտնի է, որ տարիքի հետ մարդու մկանները թուլանում են, և ահա այդ բնական թուլացմանը դուք հավելում եք ձեր ստամոքսի պատերի մկանների վաղաժամ թուլացումը, որը պայմանավորված է երկար ժամանակով իրենց անմիջական պարտականությունը չկատարելով: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ կկատարվի ձեր ֆիզիկական վիճակի հետ, եթե այդպես շարունակեք: Այդքան ջանասիրաբար սնունդը ծամելու անհրաժեշտություն չկա: Ընդհակառակը՝ ձեր այս տարիքում որքան քիչ ծամեք, այնքան լավ: Խորհուրդ եմ տալիս կուլ տալ սննդի ոչ մեջ կտորներ և անգամ կորիզներ, որպեսզի գործ ստեղծեք ստամոքսի համար: Ես կարծում եմ, որ այն մարդիկ, ովքեր ձեզ նման խորհուրդներ են տվել, ինչպես նաև նման բաներ ուսուցանող գրքերի հեղինակները «զանգի ձայն են լսել, բայց չգիտեն, թե որտեղից է գալիս»:

Դերվիշի այդ պարզ, բովանդակալից ու համոզիչ խոսքն ինձ ստիպեց, որ փոխեմ նրա մասին ունեցած կարծիքս: Մինչ այդ ես նրան հարցեր էի տալիս դատարկ հետաքրքրասիրությունից դրդված, բայց այդ պահից սկսած անեղծ հետաքրքրությամբ համակվեցի և բաց չէի թողնում նրա ասած ոչ մի բառը: Իմ ամբողջ էությունս ես զգացի, որ այն գաղափարները, որոնցով առաջնորդվում էի՝ դրանք որպես անառարկելի աքսիոմա ընդունելով, իրականում խորապես սխալ են: Այն, ինչ առաջ խելամիտ ու ակնհայտ էր թվում, իմ առջև բացվեց ուրիշ լույսի տակ: Ինձ սկսեցին հետապնդել կասկածները, ծագեցին հարյուրավոր հարցեր, որոնք անհապաղ պատասխան էին պահանջում:

Դոկտորի հետ մենք այնքան տարվեցինք այդ անսովոր մարդու հետ զրուցելով, որ ամեն ինչ մոռացել ու չէինք նկատում, որ վաղուց դադարել ենք մեր ընկերների հարցերն ու դերվիշի պատասխանները թարգմանելը: Տեսնելով, թե որքան ենք կլանված այդ զրույցով, նրանք սկսեցին մեզ հարցակոխ անել՝ «ի՞նչ ասաց», «ի՞նչի՞ մասին է խոսքը», և ամեն անգամ, որպեսզի գլուխներս ազատենք, մենք ասում էինք, որ հետո կպատմենք:

Երբ դերվիշը մեզ պարզ ու հստակ բացատրեց, թե ինչպես ճիշտ սնվել և ինչպես է աշխատում մարդու մարսողական համակարգը, ես հարցրի. «Խնդրում եմ, լուսաբանեք մեզ համար նաև ձեր գաղափարները, այսպես կոչված, «ճիշտ շնչելու արվեստի» վերաբերյալ»: Մինչ այդ ես յոզերի շնչառական համակարգի կրքոտ հետևորդ էի, որի հիմնական սկզբունքն այն է, որ ներշնչումից հետո պետք է որոշ ժամանակ պահել շնչառությունը, որից հետո՝ դանդաղ արտաշնչել: Ես հարցրի, թե արդյո՞ք ճիշտ է այդ սկզբունքը:

Դերվիշը, տեսնելով իմ անկեղծ հետաքրքրվածությունը, հաճույքով պատմեց հետևյալը. «Եթե մանրամասն ծամելով դուք ձեր օրգանիզմին անառարկելի վնաս եք հասցնում, ապա շնչառական նման համակարգի հետևելով՝ դուք ձեր օգանիզմին վնաս եք հասցնում անհամեմատ ավելի շատ: Բոլոր այդ շնչառական վարժությունները, որոնք ուսուցանվում են ժամանակակից եվրոպական էզոթերիկական դպրոցներում, վնասից բացի ուրիշ բան չեն կարող տալ: Ինչպես կարող է գլխի ընկնել առողջ բանականության տեր ամեն ոք, շնչառության գործընթացը նման է սննդառության գործընթացին, միայն թե սնունդն է ուրիշ: Օդը, ինչպես և սովորական կերակուրը, մտնելով մարդու մարմնի մեջ և յուրացվելով նրա կողմից, քայքայվում է և վերածվում բաղադրիչ տարրերի, որոնք էլ այնուհետև նոր համակցություններ են կազմում ինչպես իրար հետ, այնպես էլ այն տարրերի հետ, որոնք արդեն կան օրգանիզմում: Կազմավորված այդ նոր նյութերն աստիճանաբար յուրացվում են մարդու կենսագործունեության ընթացքում: Հարկ է, որ իմանաք, որ որևէ նոր սուբստանցիա ստանալու համար դրա բաղադրիչ մասերը պետք է միավորվեն ճշգրիտ, խիստ որոշակի չափաբաժիններով: Բերեմ մի պարզ օրինակ: Ենթադրենք, ուզում եք հաց թխել: Դրա համար նախ

անհրաժեշտ է խմոր հունցել: Բայց որպեսզի այն ճիշտ հունցեք, այլուրն ու ջուրը պետք է վերցնեք որոշակի չափաբաժիններով: Եթե ջուր քիչ վերցնեք, ապա խմորի փոխարեն պինդ զանգված կստացվի, որը կփշրվի ամեն թեթև հպումից: Իսկ եթե ջուրը շատ անեք, ջրիկ մի բան կստացվի, որը նման կլինի այն լավին, որը տալիս են ընտանի կենդանիներին: Երկու դեպքում էլ դուք այն խմորը չեք ստանա, որից հնարավոր է նորմալ հաց թխել:

Նույն բանը տեղի է ունենում նաև մեր օրգանիզմի համար անհրաժեշտ բոլոր նյութերի կազմավորման պարագայում: Դրանց բաղադրիչ մասերը պետք է խառնվեն ճիշտ համամասնություններով, ընդ որում՝ էլակետային տարրերի ինչպես քանակի, այնպես էլ որակի առումներով:

Երբ ձեր շնչառությունը բնական է ու առանց լարվելու, գործընթացը տեղի է ունենում ինքնաբերաբար՝ առանց ձեր կամքի մասնակցության: Օրգանիզմն օդից ինքն է առանձնացնում տարբեր նյութերի այնպիսի քանակություններ, որոնք անհրաժեշտ են իրեն: Մեր թոքերի կառուցվածքն այնպիսին է, որ դրանք ինքնաբերաբար իրենցով անցկացնում են որոշակի քանակությամբ օդ: Բայց եթե այդ քանակությունը դուք մեծացնեք, ապա թոքերով անցնող օդի բաղադրությունն էլ կփոխվի, ինչի հետևանքով փոփոխություն կկրեն նաև օրգանիզմում ընթացող գործընթացները: Սպառիչ կերպով չիմանալով այն օրենքները, որոնց համապատասխան գործում է ձեր օրգանիզմը, և ինքներդ ձեզ պարտադրելով շնչառության արհեստական համակարգ՝ դուք դանդաղորեն, բայց անխուսափելիորեն գնում եք դեպի ինքնաքայքայում:

Ընդ որում չպետք է մոռանալ, որ օրգանիզմին անհրաժեշտ տարրերից բացի օդն իր մեջ պարունակում է նաև անպետք և անգամ վնասակար նյութեր:

Այսպիսով, հրաժարվելով բնական ու ինքնաբերական շնչառության գործընթացից, դուք հշտացնում եք այդ վնասակար նյութերի մուտքը ձեր օրգանիզմ և միաժամանակ խախտում եք օգտակար տարրերի քանակական և որակական հավասարակշռությունը:

Շնչառության արհեստական համակարգը նաև փոխում է օդից ստացվող «սննդի» քանակի և սովորական սննդի քանակի միջև եղած հարաբերակցությունը: Ուրեմն, եթե շատացնում կամ քչացնում եք օրգանիզմ մուտք գործող օդի քանակությունը, դուք պետք է համապատասխան չափով քչացնեք կամ շատացնեք նաև մյուս տեսակի «սննդի» քանակությունը և չխախտեք հարկ եղած հավասարակշռությունը, ինչը հնարավոր չէ, եթե սպառիչ գիտելիքներ չունեք կենսապահովման բոլոր գործընթացների վերաբերյալ:

Արդյո՞ք այնքան լավ գիտեք ձեր օրգանիզմը, որ արհեստական եղանակով կարողանաք անհրաժեշտ հավասարակշռություն պահպանել: Գոնե գիտե՞ք այն մասին, որ ստամոքսը կերակուր է պահանջում ոչ միայն այն պատճառով, որ տվյալ պահին սնվելու կարիք ունի, այլ նաև այն պատճառով, որ պարզապես սովոր է կանոնավորապես իր մեջ ընդունել կերակուրի որոշակի քանակություն: Գլխավորապես մենք ուտում ենք, որ բավարարություն տանք բերանում եղած համային զգայաթելիկներին և մեր ստամոքսը լիքը լինելու զգացողություն ունենանք: Դրա պատերում, այսպես կոչված, թափառող նյարդեր կան, որոնք ակտիվանում են, երբ ճնշում չեն զգում, և առաջացնում են, ինչպես ասում ենք, «քաղցի զգացողություն»: Գոյություն ունեն քաղցի տարբեր տեսակներ. կա մարմնական կամ ֆիզիկական քաղց, և կա, այսպես ասած, հոգեբանական քաղց:

Բոլոր օրգանները գործում են մեքենայաբար՝ անկախ մեր կամքից, իրենց բնորոշ տեմպով, ընդ որում՝ մի օրգանի աշխատանքի ռիթմը կախված է մնացած բոլոր օրգանների աշխատանքի ռիթմերից: Այդ եղանակով ստեղծվում է որոշակի հավասարակշռություն. բոլոր օրգանները գործում են իրար հետ փոխկապակցված:

Եթե արհեստականորեն փոխում եք շնչառության ռիթմը, ապա առաջին հերթին փոխում եք ձեր թոքերի աշխատանքի ռիթմը, բայց քանի որ այն, ամեն ինչից գատ, կապված է նաև ձեր ստամոքսի աշխատանքի ռիթմի հետ, ապա բնականաբար այդ ռիթմն էլ է փոխվում՝ սկզբում քիչ, հետո՝ ավելի ու ավելի շատ: Որպեսզի սնունդը յուրացվի, ստամոքսը պետք է գործի որոշակի տեմպով: Ենթադրենք, թե կերակուրն այնտեղ պետք է մնա մեկ ժամ: Բայց եթե ստամոքսի աշխատանքի ռիթմը փոխվում է, ապա կերակուրի մնալու ժամանակը ստամոքսում նույնպես փոխվում է: Այն այնքան արագ կանցնի ստամոքսի միջով, որ նա բավարար ժամանակ չի ունենա ամեն ինչն անել հարկ եղած ձևով: Նույնը վերաբերում է նաև մնացած բոլոր օրգաններին:

Ահա թե ինչու հազար անգամ ավելի լավ է ստամոքսը թողնել բախտի քմահաճույքին, քան փորձել միջամտել դրա աշխատանքին՝ սպառնալից գիտելիքներ չունենալով սեփական օրգանիզմի մասին:

Իմացեք, որ մեր օրգանիզմը շատ բարդ համակարգ է: Նրա մասերն աշխատում են տարբեր, խիստ որոշակի դիմադրելով յուրաքանչյուրն իր օրենքով: Եթե մի բան փոխվում է, ապա պետք է փոխվի ամեն ինչ, այլապես օգուտի փոխարեն վնաս կտանք մեր օրգանիզմին:

Շնչառության համակարգի արհեստական փոփոխությունը կհանգեցնի ամենատարբեր հիվանդությունների. դրանց թվում են՝ սրտամկանի լայնացումը, շնչափողի նեղացումը, ստամոքսի, լյարդի, երիկամների աշխատանքի խանգարումները և նյարդային հիվանդությունները:

Շատ հազվադեպ է լինում, որ արհեստական շնչառություն կիրառողները չունենան ֆիզիկական ու հոգեկան վիճակների անդառնալի փոփոխություններ, այն էլ միայն այն դեպքերում, երբ կարողանում են ժամանակին կանգ առնել: Իսկ եթե համակարգը կիրառվում է բավական երկար ժամանակ, ապա հնարավոր են ամենատարբեր հետևանքներ:

Զե՞ որ որպեսզի կարողանաք վերանորոգել ձեր ավտոմեքենան, դուք պետք է լավ պատկերացնեք դրա ամենամանր դետալները և հետո գործի անցնեք: Բայց եթե լավ չեք պատկերացնում և փորձում եք ինչ-որ բան շտկել, ապա բանն ավելի էք վատացնում, քանի որ մեքենան շատ բարդ համակարգ է: Դրա կառուցվածքում բազմաթիվ մանր դետալներ կան, որոնք ջարդվում են ուժեղ ազդեցություններից և չենք կարող փոխարինվել խանութից գնված նոր դետալներով:

Այսպիսով, եթե դուք ինձնից խորհուրդ եք հարցնում, ապա թախանձագին խնդրում եմ ձեզ, որ հրաժարվեք շնչառության ձեր կիրառած արհեստական համակարգից»:

Դերվիշի հետ մենք զրուցեցինք բավական երկար, բայց ես նրա հետ ավելի երկար հաղորդակցվելու կարիք էի զգում: Իշխան Լյուբովեցկու հետ ես քննարկեցի մեր հետագա պլանները, և պարզվեց, որ մեր ցանկությունները համընկնում են. մենք շնորհակալություն հայտնեցինք դերվիշին և նրան հայտնեցինք, որ մի երկու օր էլ ենք ուզում մնալ այդտեղ՝ խնդրելով, որ թույլ տա կրկին հանդիպել և զրուցել իր հետ: Նա համաձայնեց և անգամ առաջարկեց, որ ցանկության դեպքում այցելենք իրեն ընթրիքից հետո:

Մենք երկու օրվա փոխարեն ամբողջ մի շաբաթ մնացինք. ամեն երեկո այցելում էինք դերվիշին և, զրույցով տարվելով, նստում մինչև կեսգիշեր: Մարի օղիին և ես մեր բոլոր ընկերների համար թարգմանում էինք դերվիշի ասածները: Այդտեղից մեր հեռանալու օրը մենք վերջին անգամ այցելեցինք դերվիշին, հայտնեցինք մեր շնորհակալությունը և հրաժեշտ սվեցինք նրան: Բայց հանկարծ Եքիմ բեյն իրեն ոչ բնորոշ խաղաղ տոնով դիմեց նրան պարսկերեն լեզով. «Հա՛յր, այս մի քանի օրը ձեզ հետ անցկացնելուց հետո ես իմ ամբողջ էությանս հասկացա, որ...»:

Այստեղ ընդհատելով իր խոսքը՝ նա կիսաձայն ինձ ու Մարի օղուն խնդրեց մինչև վերջ թույլ տալ իրեն արտահայտվելու և ուղղումներ կատարել միայն այն դեպքում, երբ իր կիրառած որևէ արտահայտություն տեղական բարբառով կունենա այլ նշանակություն և կաղավաղի իր ասածի իմաստը: Դրանից հետո նա շարունակեց. «... որ դուք, հենց այն մարդն, եք, որին ես փնտրել եմ ամբողջ կյանքում, և որին անվերապահորեն կարող եմ վստահել իմ ներաշխարհի ղեկավարությունը: Ես օգնության կարիք եմ զգում, որ ձերբազատվեմ ներքին հակասություններից, որոնք ինձ զրկում են հոգու անդորրից: Ցավոք, ինձնից անկախ հանգամանքների պատճառով ես չեմ կարող ընդմիջտ մնալ այստեղ, ապրել ձեր կողքին և վայելել ձեզ նման իմաստուն մարդու հետ զրուցելու հաճույքը: Դա, անշուշտ, ինձ կօգնեք ազատվելու ներքին տանջալից պայքարից, ինձ կնախապատրաստեք, որ փոխեմ իմ կենսակերպը և այն կառուցեմ նոր սկզբունքների վրա:

Ահա թե ինչու խնդրում եմ ձեզ, որ, եթե հնարավոր է, համառոտ ցուցումներ տաք իմ տարիքի մարդու կյանքի հիմնական սկզբունքների վերաբերյալ»:

Հարգարժան պարսիկ դերվիշը լիակատար ըմբռնումով մոտեցավ այդ անսովոր խնդրանքին և շատ մանրամասն մեզ հետ կիսեց այն ամենը, ինչ գիտեր:

Ես վաղաժամ եմ համարում այս գլխում ձեզ հայտնել այն ամենը, ինչ լսեցի այդ պատվարժան մարդուց, քանի որ դա կարող է խանգարել այս գրքում շարադրվող նյութի ճիշտ ընկալմանը: Ուստի ես որոշել եմ նրա ճառի համառոտ շարադրանքն առանձին գլխի տեսքով զետեղել իմ երրորդ գրքում, դրան տալով հետևյալ վերնագիրը՝ «Մարդու մարմինը, դրա պահանջումները և հնարավորությունները»:

Հաջորդ օրվա վաղ առավոտյան մենք շարունակեցինք մեր արշավը: Փոխանակ, ըստ պլանավորածի, շարժվելու դեպի Պարսից ծոց, մենք գնացինք Բաղդադ, քանի որ մեր ընկերներից երկուսը՝ Կարպենկոն և Նիձերաձեն, տենդի մեջ էին, և նրանց վիճակը գնալով վատանում էր:

Բաղդադում մնացինք ամբողջ մի ամիս, որպեսզի հանգստանանք և ուժ հավաքենք, որից հետո բաժանվեցինք ոչ մեծ խմբերի և շարժվեցինք տարբեր ուղղություններով: Իշխան Լյուբովեցկին, Ելովը և Եքիմ-բեյը գնացին Կոնստանդնուպոլիս, Կարպենկոն, Նիձերաձեն և Պողոսյանը որոշեցին Եփրատի հոսանքով շարժվել դեպի նրա ակունքը, որից հետո հատել լեռնաշղթան և ռուսական սահմանը: Իսկ մենք դոկտոր Սարի օղլու և մի քանի ուղեկցորդների հետ պայմանավորվեցինք հետ դառնալ և շարժվել Խորասանի ուղղությամբ, ապա այնտեղ հասնելուց հետո որոշել մեր հետագա երթուղին:

Պատմելով իմ ընկեր դոկտոր Եքիմ-բեյի մասին՝ ես չեմ կարող չհիշատակել նրա՝ հիպոստով և դրա հետ կապված ամեն ինչով հրապուրվածությունը: Նրան առանձնապես հետաքրքրում էր, այսպես կոչված, «մարդու մտքի էներգիան»: Հիպոստին վերաբերող ժամանակակից գիտության մի առանձին բնագավառ նվիրված է այդ երևույթի ուսումնասիրությանը:

Եվ պետք է խոստովանել, որ նա այդ բնագավառում հասավ աննախադեպ գործնական արդյունքների: Ծանոթները նրան իսկական կախարհ էին անվանում, գլխավորապես նրա այն փորձերի պատճառով, որոնք նա կատարում էր մարդկանց հետ, որպեսզի ի հայտ բերի մարդկային մտքի ուժի և էներգիայի դրսևորումների բազմատեսակ կողմերը:

Հաջող փորձերը, որոնցում փորձարկվողի դերում էին լինում նրա ընկերներն ու ծանոթները, ամեն ինչից գատ հանգեցրին այն բանին, որ ոմանք սկսեցին նրանից վախենալ, ոմանք էլ, ընդհակառակը, նրա հետ սկսեցին վարվել ընդգծված հարգանքով ու սիրալիրությամբ:

Ես կարծում եմ, որ նման վերաբերմունքի գլխավոր պատճառն այն էր, որ նա տիրապետում էր խոր գիտելիքների և կարողացել էր իր մեջ զարգացնել անսովոր ունակություններ: Պարզապես նրան հայտնի էր դարձել օրգանիզմի մի հետաքրքիր հատկությունը, որը որոշակի աստիճանով կապված է մարդկային բնության ընկալունակության հետ:

Այդ հատկությամբ օժտված է ցանկացած մարդ՝ անկախ դասային պատկանելությունից ու տարիքից: Բանն այն է, որ երբ մարդ անմիջականորեն հենց իրեն չվերաբերող ինչ-որ բանի մասին է մտածում, նրա մկաններն ակամա լարվում են և, այսպես ասած, սկսում են թրթռալ այդ մտքի ուղղությամբ: Օրինակ՝ եթե նա մտածում է Ամերիկայի մասին, ապա նրա մտքերը ձգվում են հենց այն ուղղությամբ, որտեղ, նրա կարծիքով, գտնվում է Ամերիկան: Ճիշտ նույն կերպ՝ եթե մարդ մտովի կենտրոնանում է այն շենքի երկրորդ հարկի վրա, որի առաջին հարկում գտնվում է ինքը, ապա նրա մկանները լարվում են այնպես, կարծես նրան դեպի վեր քաշելիս լինեն: Կարճ ասած, որևէ ուղղությամբ մարդու մտքի շարժումն ուղեկցվում է նույն ուղղությամբ մկանների լարմամբ:

Այդ երևույթը նկատվում է նաև այն մարդկանց մոտ, ովքեր գիտեն մկանների այդ ակամա լարվելու մասին և ամեն ջանք գործադրում են, որպեսզի խուսափեն դրանից:

Ամեն մեկին վիճակվել է թատրոնում, կրկեսում կա նմանատիպ այլ հաստատություններում դիտել հնդիկ ֆակիրների, մոզերի, կախարդների և նմանատիպ այլ արհեստներ ներկայացուցիչների, որոնք տիրապետում են գերբնական ունակությունների և ապշահար հանդիսատեսներին զարմացնում են զանազան աճաբարություններով. օրինակ՝ գտնում են թաքցված առարկան կամ կատարում են հանդիսատեսներից որևէ մեկի մտածած գործողությունը:

Այդ «հրաշքները» գործելու ժամանակ մոզը բռնում է մեկի ձեռքը, որն իր մտքերը կենտրոնացրել է մտածված գործողության վրա և այդ հանդիսատեսի ձեռքի ակամա, բնագոյական շարժումներով «գուշակում է» իր անելիքը և ի կատար ածում այն:

Այդպիսի մոզերը, որպես կանոն, չեն տիրապետում հատուկ գերբնական ունակությունների և գիտելիքների, այլ պարզապես նրանց հայտնի է մարդկային օրգանիզմի այդ հատկությունը, որ ակամա լարում է մկանները որոնք ձգվում են մտածածի ուղղությամբ: Այդ իմանալով՝ ամեն ոք, որոշակի ոչ տևական վարժանքներից հետո կարող է նմանատիպ աճաբարություններ կատարել:

Գլխավորն այստեղ այն է, որ կարողանաս ամբողջ ուշադրությունդ կենտրոնացնել մի ուրիշ մարդու ձեռքին և որսաս ամենաթույլ ակամա շարժումները: Համբերությամբ օժտված լինելու դեպքում որոշակի պրակտիկայից հետո դուք անպայման հաջողության կհասնեք և կկարողանաք ելույթ ունենալ կրկեսում՝ ցուցաբերելով ուրիշերի մտքերը կարդալու ձեր գերբնական ունակությունները: Օրինակ՝ եթե խնդիրն այն է, որ մոտենաք սեղանին և վերցնեք դրա վրա դրված գլխարկը, ապա

նույնիսկ այն դեպքում, երբ մարդը գիտի ֆոնուսի գաղտնիքը և դիտմամբ փորձում է մտածել ոչ թե գլխարկի, այլ, ասենք, կոշիկի մասին, որը դրված է սեղանի տակ, միևնույնն է, ենթագիտակցաբար կկենտրոնանա գլխարկի վրա, և նրա ձեռքի մկանների ակամա կծկումը ձեռք կհուշի ձեռք անելիքը:

Ինչպես արդեն ասացի, Եքիմ-բեյը նմանատիպ փորձեր էր անում իր ընկերների վրա, որպեսզի ավելի լավ հասկանա մարդու հոգեկառույցը և հայտնաբերի, թե դրա վրա ինչ ազդեցություն է թողնում հիպնոսը:

Նրա ցուցադրած փորձերի շարքում կար մեկը, որն անտեղյակ մարդկանց վրա ավելի ուժեղ տպավորություն էր թողնում, քան ցանկացած կրկեսային աճաբարություն: Վանդակավոր թղթի վրա Եքիմ-բեյը հերթականությամբ գրում էր այբուբենը, իսկ թղթի ներքևի մասում՝ 1-ից 9 թվերը: Այդպիսի թղթերը մի քանիսն էին՝ յուրաքանչյուրը մի լեզվով: Նստելով սեղանի դեմ՝ նա այդ թղթերից մեկը դնում էր իր առաջ, մի փոքր ձախ շեղված, իսկ աջ ձեռքին մատիտ էր պահում: Ձախ կոդումով՝ ուղիղ այբուբենի դիմաց, նա նստեցնում էր փորձի երկրորդ մասնակցին՝ նրանցից մեկնումեկին, որոնք խնդրում էին բախտ բացել. իր ձախ ձեռքով նա բռնում էր այդ մեկի աջ ձեռքը և նրան ասում մոտավորապես հետևյալը. «Նախ և առաջ ես պետք է գուշակեմ քո անունը...»- որից հետո, կարծես ինքն իր համար խոսելով, նա դանդաղ շարունակում էր, - ձեր անվան առաջին տառը...», ապա փորձարկվողի ձեռքը տանում էր այբուբենի վրայով: Մարդկային օրգանիզմի այդ հետաքրքիր հատկության շնորհիվ, որի մասին արդեն ասացի, երբ փորձարկվողի ձեռքը հայտնվում էր այն տառի վերևում, որով սկսվում է նրա անունը, ակամա ցնցվում էր:

Որսալով այդ հագիվ նկատելի շարժումը՝ Եքիմ-բեյն ասում էր. «Ձեր անվան առաջին տառը ...», - և տալիս էր այն տառի անունը, որի վրա ցնցվել էր փորձարկվողի ձեռքը: Նույն կերպ նա գուշակում էր նաև հաջորդ մի քանի տառերը, որոնց հիման վրա էլ գուշակում էր տվյալ մարդու ամբողջ անունը: Օրինակ՝ եթե գուշակված առաջին տառերը լինում էին ս, տ, ե, ապա նա ասում էր. «Ձեր անունը Ստեփան է: Հիմա ես կգուշակեմ ձեր տարիքը», որից հետո փորձարկվողի ձեռքը սահեցնում էր արդեն թվերի վրայով: Դրանից հետո Եքիմ-բեյն իմանում էր, թե այդ մարդն ամուսնացած է, թե ոչ, ապա գուշակում էր կնոջ ու երեխաների անունները, թե ով է նրա ռիտերիմ թշնամին, լավագույն ընկերը և այլն:

Ապշեղծ նրա «գերբնական» ունակություններից՝ հաճախորդները, մոռանալով աշխարհում ամեն ինչի մասին, շարունակում էին Եքիմ-բեյին «հայտնել» այն ամենը, ինչ նա ուզում էր իմանալ, և նրան մնում էր միայն կրկնել այն, ինչ «լսում էր»:

Այդ ելույթից հետո ինչպիսի հիմարություն էլ որ նա ասեր, «կանխագուշակելով նրանց ապագան», նրանք անվերապահ հավատում էին այդ ամենին և սրտի թրթիռով լսում էին նրա յուրաքանչյուր բառը:

Հետագայում նրանք, ում հետ Եքիմ-բեյը կատարած էր լինում իր փորձը, իրենց ծանոթներին ու պատահական հանդիպածներին պատմում էին նրա անսովոր շնորհի մասին՝ իրենց խոսքը գունագարդելով այնպիսի մանրամասներով, որ լսողների աչքերը թռչում էին ճակատները:

Այդպիսով, նրան ճանաչողների կամ նրա մասին լսողների մոտ աստիճանաբար պատկերացում էր ձևավորվում նրա ունեցած գերարտակարգ ունակությունների վերաբերյալ՝ այնքան, որ նրա անունը տալիս էին շշուկով, երկյուղալից թրթիռ էին զգում և կարծես մոգական աուրա էին տեսնում նրա գլխի շուրջը:

Ոչ միայն շատ թուրքեր, այլ նաև ուրիշ երկրների շատ բնակիչներ, գլխավորապես՝ եվրոպացիներ, սկսեցին նրան նամակներ գրել, նրան ձանձրացնելով տարատեսակ խնդրանքներով: Ոմանք խնդրում էին ձեռագրի հիման վրա բախտ գուշակել, ոմանք խնդրում էին իրենց բուժել անպատասխան սիրուց կամ որևէ խրոնիկական հիվանդությունից: Նա նամակներ էր ստանում սպաներից, ուսուցիչներից, հոգևորականներից, վաճառականներից և ամեն տարիքի կանանցից (ջահել կանանցից՝ ավելի շատ):

Կարճ ասած, նա ամեն տեսակի հիմար խնդրանքներով համեմված նամակների այնպիսի մեծ քանակություն ստացավ, որ դրանք արդեն չէին տեղավորվում գրասեղանի դարակներում, և եթե նրա մտքով անցներ բոլորին պատասխանել, ապա դրա համար հարկ կլիներ ամենաքիչը 50 քարտուղար վարձել:

Մի անգամ, երբ Սկյութարում ես նրան այցելեցի, նա ինձ նամակների մի սար ցույց տվեց և կարդաց դրանցից մի քանիսը: Հիշում եմ, թե ինչպես էինք ծիծաղից խեղդվում՝ ապշած մարդկային միամտությունից ու հիմարությունից: Ի վերջո այդ ամենը նրան այնքան ձանձրացրեց, որ ստիպված

եղավ հեռանալ այդ վայրերից, որտեղ նրան բոլորը լավ ճանաչում էին, և հրաժարվեց բժշկական պրակտիկայով զբաղվելուց:

Հիպնոսի և ամեն մարդու հոգեկառույցին բնորոշ ենթագիտակցական գործընթացների բնագավառում այդ մարդու ունեցած խոր գիտելիքները մեզ պետք եկան մեր ճամփորդություններից մեկի ժամանակ, երբ Եքիմ-բեյին հաջողվեց մեզ ազատել փորձանքից, որի մեջ ընկել էինք:

Մի անգամ, երբ ես ու Եքիմ-բեյը մեր ընդհանուր ընկերների հետ հանգստանում և ուժ էինք հավաքում Յանգի Նիշանում, որպեսզի այդտեղից մեկնենք Հինդուքու, նա Թուրքիայում ապրող իր քեռուց նամակ ստացավ առ այն, որ հայրը ծանր հիվանդ է և, բժիշկների կարծիքով, արդեն մահամերձ է: Նա այնքան վշտացավ այդ լուրից, որ որոշեց ընդհատել ճամփորդությունն ու վերադառնալ Թուրքիա, որպեսզի հոր կողքին լինի նրա կյանքի վերջին օրերին:

Անընդհատ մի տեղից մյուսը կատարած տեղաշարժերն ու մշտական նյարդային լարվածությունն ի վերջո այնպես էին հոգնեցրել ինձ, որ ես նույնպես որոշեցի հետաձգել ուղևորությունը և որոշ ժամանակ հանգստանալ ծնողներիս տանը: Եքիմ-բեյն ու ես միասին պետք է հասնեինք մինչև ռուսական սահմանը: Հրաժեշտ տալով մեր ընկերներին՝ մենք դուրս եկանք Իրկեշտամից և ուղղություն վերցրինք դեպի Ռուսաստան: Ճամփորդությունը շատ հոգնեցուցիչ ստացվեց, լի բազմաթիվ դժվարություններով. շրջանցելով Կաշգարից Օշ տանող սովորական ճանապարհները՝ մենք վերջապես հասանք Անդիջան՝ մի քաղաք, որը գտնվում է Ֆերգանայից ոչ հեռու:

Մենք որոշեցինք այդտեղ որոշ ժամանակ դադար առնել, քանի որ կամեցանք տեսնել որոշ հինավուրց քաղաքների ավերակները, որոնց մասին շատ էինք լսել և հույս ունեինք, որ դրանք կգտնենք մեր սեփական հաշվարկներով, որոնք հիմնված էին որոշ պատմական փաստերի համադրման վրա:

Այդպիսով մենք նշանակալիորեն երկարացրինք մեր ճամփորդությունը և այնքան էլ շուտ չհասանք Անդիջան: Մարգելանում մենք գնացքի տոմսեր առանք մինչև Կրասնովոդսկ և արդեն զբաղեցրել էինք մեր տեղերը, երբ, ի սարսափ մեզ, հասկացանք, որ այլևս միջոցներ չունենք ոչ միայն մնացած ճանապարհին անցնելու, այլև հաջորդ օրվա մեր սնունդն ապահովելու համար: Դեռ ավելին՝ Քաշգարում դեգերելու ընթացքում մեր հագուստներն այնպես էին քրքրվել, որ դրանցով կարգին հասարակության մեջ հայտնվել չէր կարելի, իսկ նորը գնելու փող չունեինք:

Այդ պատճառով մենք որոշեցինք փոխել մեր գնացքը և Կրասնովոդսկի փոխարեն մեկնել Չերնյակո, այնտեղից էլ՝ Տաշքենդ, որը մեծ քաղաք էր, և մենք հնարավորություն կստանայինք հեռագրով փող ուզել:

Այդպես էլ արեցինք: Տաշքենդում մի էժան սենյակ վարձեցինք կայարանի մերձակայքում և անմիջապես գնացինք հեռագիր տալու: Այդ հեռագիրը կերավ մնացած ամբողջ փողը, ուստի այդտեղից գնացինք շուկա, որպեսզի վաճառենք այն ոչ շատ իրեղենը, որ ունեինք՝ հրացանները, ժամացույցները, քայլաչափը, կողմնացույցը, աշխարհագրական քարտեզները... կարճ ասած՝ այն ամենը, ինչ կարող էր փող բերել:

Երեկոյան կողմ դուրս եկանք քաղաքում զբոսնելու և քննարկելու այն վիճակը որում հայտնվել ենք՝ փորձելով կռահել, թե որտեղ կարող են գտնվել այն մարդիկ, որոնց հեռագիր էինք ուղարկել, և եթե նրանք այդ հեռագրերը ստանան, արդյոք ք փողն անհապաղ կուղարկեն: Չնկատեցինք էլ, թե ինչպես հայտնվեցինք հին Տաշքենդում: Այստեղ մտանք մի թեյարան՝ շարունակելով քննարկել մեր աննախանձելի վիճակը. մտածում էինք, թե ինչ պետք է անենք, եթե դրամական փոխանցումն ուշանա: Զանազան տարբերակներ քննարկելուց հետո մենք որոշեցինք, որ Եքիմ-բեյը պետք է հանդես գա հնդիկ ֆակիրի դերում, իսկ ես՝ սուսեր կուլ տվողի, և այդպես իրար ձեռ առնելով՝ քննարկեցինք այդ անսովոր ձեռնարկման բոլոր մանրամասները:

Հաջորդ առավոտյան մեր առաջին գործը եղավ այն, որ գնացինք Տաշքենդում լույս տեսնող թերթի խմբագրատուն և հայտարարությունների բաժնում խնդրեցինք մեր գալստյան մասին տեղյակ պահել քաղաքի բնակչությանը:

Այդ բաժնի հրեա աշխատակիցը, որը նոր էր եկել Ռուսաստանից, շատ սիրալիր եղավ մեր նկատմամբ: Նրա հետ մի քիչ շատախոսելուց հետո մենք երկու ուրիշ խմբագրատուն էլ գնացինք, որից հետո մնացած փողով մի քանի գունազեղ ազդագիրպատվիրեցինք: Ես հիմա ճշգրիտ չեմ հիշում, թե իր համար ինչ մականուն էր հորինել Եքիմ-Բեյը. կարծեմ՝ Գանեզ, կամ էլ Գանգին:

Ամբողջ քաղաքով մեկ մենք ազդագրեր փակցրինք, որոնք ծանուցում էին, որ հայտնի հնդիկ ֆակիրն ու իր օգնական Սալականը հաջորդ օրվա երեկոյան հանդես կգան մի ակումբում, որտեղ կցուցադրեն իրենց գերբնական ունակությունները՝ հիպնոսացնելով մարդկանց և գործելով այլ հրաշքներ:

Հայտարարությունների բաժնի մեր նոր ծանոթն օգնեց մեզ, որ ոստիկանությունից թույլտվություն ստանանք այդ ելույթի համար, և շատ շուտով հին ու նոր Տաշքենդների բոլոր բնակիչներն արդեն գիտեին սպասվող անսովոր ներկայացման մասին:

Այդ ընթացքում մենք գտանք երկու գործազուրկ տղաների՝ Ռուսաստանի նախկին բնակիչների, որոնց ստիպեցինք բաղնիք գնալ, հետո մեզ հետ հյուրանոց տարանք և նրանց նախապատրաստեցինք, որ մեզ հետ հանդես գան հիպնոսի սեանսի ժամանակ՝ որպես մեր ասիստենտներ: Ներկայացման ժամանակ մենք նրանց այնպես էինք հիպնոսացնում, որ ոչինչ չէին զգում, երբ նրանց կուրծքը գնդասեղներ էինք խրում, բերանները կարում էինք կամ երկու աթոռների վրա պառկեցնում էինք այնպես, որ գլուխը լինի մեկի, ոտքերը՝ մյուսի վրա, և այդ վիճակում նրանց փորի վրա դնում էինք նշանակալի ծանրություններ:

Բայց այդ սենանսին ներկա գտնվողներին՝ բավականաչափ կրթված մարդկանց՝ բժիշկներին, պաշտոնյաներին և սպաներին, ամենաշատը զարմացրել էր այն, թե Եքիմ-բեյն ինչպես է կարողանում «գուշակել» իրենց անունը, տարիքը և մնացած բաները՝ այն մեթոդի օգնությամբ, որն արդեն նկարագրել եմ: Կարճ ասած, այդ ելույթի վերջում մենք ոչ միայն կարգավորել էինք մեր նյութական կացությունը, այլև հարյուրավոր ճաշերի և ընթրիքների հրավերներ էինք ստացել այդ քաղաքի անվանի մարդկանցից: Բացի այդ, սեանսին ներկա եղած կանայք մեր նկատմամբ ուշադրության պարգորոշ նշաններ էին ցույց տալիս, ինչից մենք մեզ խիստ շոյված էինք զգում:

Երեք երեկոների ընթացքում հանդես գալով մեծագույն հաջողությամբ՝ մենք բավականաչափ փող վաստակեցինք մեր ճանապարհը շարունակելու համար, ուստի որոշեցինք առանց ձգձգելու հեռանալ այդտեղից թեկուզ նրա համար, որ ազատվենք մեր բազմաթիվ երկրպագուների համառ ուշադրությունից:

Ավարտելով այս գլուխը և հիշելով իմ բազմաթիվ արշավներն ու դեգերումները, որոնք ունեցել եմ Ասիայի ամենահեռավոր անկյուններում՝ չեմ կարող չհիշատակել այդ աշխարհամասի մասին եղած այն տարօրինակ պատկերացումների մասին, որոնք ձևավորվել են եվրոպացիների մեծամասնության մոտ:

Տասնհինգ տարի ապրելով Եվրոպայում և սերտորեն շփվելով հասարակության տարբեր շերտերի և տարբերազգությունների պատկանող մարդկանց հետ՝ ես հանգեցի այն եզրակացության, որ եվրոպացիները ոչինչ չգիտեն Ասիայի մասին: Եվրոպայի բնակիչները մեծ մասը համարում է, որ դա մի մեծ, քիչ ուսումնասիրված աշխարհամաս է, որը սահմանակից է Եվրոպային և որում վայրենի, լավագույն դեպքում՝ կիսավայրենի ցեղեր են ապրում:

Անգամ այդ աշխարհամասի չափսերի մասին նրանք բավականին աղոտ պատկերացում ունեն և չեն էլ ենթադրում, որ Ասիայում մի քանի հատ Եվրոպա կտեղավորվի: Մինչդեռ Ասիայում ապրում են բազմաթիվ ազգերի ու ռասաների ներկայացուցիչներ: Եվ այդ «վայրի ցեղերը» գիտելիքների այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են, օրինակ, բժշկությունը, աստղագիտությունը, բնական գիտությունները, զարգացման այնպիսի աստիճանի են հասել, որ եվրոպացիներն անգամ երազում չեն տեսել:

Գլուխ Ը Պյոտր Կարպենկո

Այս գլուխը նվիրում եմ Պյոտր Կարպենկոյին՝ իմ մանկության ընկերոջը, որը հետագայում դարձավ հայտնի լեռնային ճարտարագետ, իսկ հիմա արդեն մեզ հետ չէ... Գուցե արժանացել է Երկնային Արքայության...

Ես կարծում եմ, որ որպեսզի ընթերցողին ճիշտ պատկերացում տամ Պյոտր Կարպենկոյի անձի վերաբերյալ և նրա ուշադրությանը ներկայացնեմ ճանաչողական արժեք ունեցող հետաքրքիր նյութ,

պետք է այս գլխի սկզբում նախ պատմեն այն հանգամանքների մասին, որոնցում սկիզբ առավ մեր ընկերությունն ու հոգևոր մտերմությունը, որից հետո ընթերցողին տեղեկացնեն մի քանի հետաքրքիր իրադարձությունների մասին, որոնք մեզ հետ տեղի են ունեցել մեր համատեղ արշավների ժամանակ, ինչպես նաև այն ողբերգական հանգամանքների մասին, որոնք նրա գոհվելու պատճառը դարձան:

Մենք մտերիմ ընկերներ դարձանք, երբ դեռ դեռահասներ էինք: Ես մեր հանդիպման հանգամանքները կնկարագրեմ հնարավորինս մանրամասն, որպեսզի ընթերցողը կարողանա լավ ծանոթանալ մեզ նման ջահել անբանների հոգեբանությանը, որոնցից շատերը հետագայում դարձան ականավոր մարդիկ:

Այդ ժամանակ մենք Կարսում էինք ապրում, ես էլ արդեն երգում էի եկեղեցական երգչախմբում: Հարկ է հիշեցնել, որ երբ իմ ուսուցիչ Բոգաչևսկին ինչ-որ գնդի քահանայի պաշտոն ստանալուց հետո մեկնեց Կարսից, և դրանից հետո շատ շուտով մահացավ իմ խնամակալ ավագերեց Բորշը, ես հայտնվեցի ուղիների խաչմերուկում և չգիտեի, թե ինչ պիտի անեմ: Համարյա միաժամանակ գրկվելով իմ երկու մոտ ընկերներից, որոնց խրատներն ինձ շատ էին օգնում, և իմանալով, որ ծնողներս որոշել են մոտակա ժամանակներում վերադառնալ Ալեքսանդրապոլ, ես որոշեցի նրանց հետ չգնալ, այլ մեկնել Թիֆլիս և ընդունվել հայտնի, այսպես կոչված, «արքիդյակոնական» երգչախումբ, ուր մի քանի անգամ ինձ հրավիրել էին՝ շոյելով իմ պատանեկան ինքնասիրությունը: Եվ հենց այդ ժամանակ, երբ տրվել էի նմանատիպ երազների, որոնք վկայում էին իմ թեթևամտության ու միամտության մասին, մի օր ինձ մոտ վազեց երգչախմբի երգիչներից մեկը, որը լավ էր տրամադրված իմ նկատմամբ, քանի որ երբեմն նրան լավ ծխախոտներ էի հյուրասիրում, որոնք, եթե անկեղծ խոստովանեմ, ուղղակի թոցնում էի քեռուց: Շունչը տեղը բերելով՝ նա ինձ հայտնեց, որ պատահաբար խոսակցություն է լսել բերդի պարետ գեներալ Ֆադեևի և տեղական ոստիկանության պետի միջև, որ ձերբակալել ու խաչաձև հարցաքննության են ենթարկել մի քանի մարդու՝ կապված հրաձգային գնդի զորավարության ժամանակ տեղի ունեցած միջադեպի հետ, և այդ խոսակցության մեջ հնչել է նաև իմ անունը՝ որպես այդ գործի հետ առնչված մարդու:

Ես, անկեղծ ասած, խղճիս վրա այդ չարաղետ միջադեպի հետ կապված ինչ-որ բան ունեի և, որպեսզի խուսափեմ տհաճություններից, որոշեցի անհապաղ պոչս քաշել և հենց հաջորդ օրը հեռանալ Կարսից:

Հրաձգային գնդի զորավարության ժամանակ տեղի ունեցած այդ միջադեպն էլ հենց պատճառ էր դարձել, որ ամուր ընկերություն ծագի իմ ու Պյոտր Կարպենկոյի միջև:

Այդ ժամանակ ես ընկերություն էի անում մի քանիսի հետ, որոնց մի մասն իմ հասակակիցներն էին, մյուս մասը՝ ավելի տարիքով. առաջինների մեջ կար Ռատուզով ազգանվամբ մի բարեհոգի պատանի՝ օղու գործարանի տիրոջ որդին: Ես հաճախ էի այցելում նրան, երբ հրավիրում էր իրենց տուն, երբեմն էլ այցելում էի առանց հրավերի:

Ծնողները երես էին տվել պատանուն: Նա ուներ առանձին սենյակ, որտեղ անարգել դասերն էր պատրաստում, իսկ գրասեղանին մշտապես ափսե էր լինում դրված՝ թարմ բազմաշերտ բլիթներով, որոնք ես շատ էի սիրում: Բայց կար նաև մի ուրիշ, ոչ պակաս կարևոր պատճառ, որն ինձ ստիպում էր հաճախ այցելել այդ տունը: Ռատուզովի քույրը՝ տասներկու-տասներեք տարեկան մի աղջնակ, հաճախ մտնում էր եղբոր սենյակը, երբ ես այդտեղ էի լինում:

Ես նրա հետ ընկերացա, ապա ինձ համար աննկատելի կերպով սիրահարվեցի: Ինձ թվում էր, որ նա էլ անտարբեր չէ իմ նկատմամբ: Իմ ծանոթների մեջ կար ևս մեկը՝ հրաձգային գնդի սպաներից մեկի որդին, որն ինձ նման հաճախ էր գալիս այդտեղ: Նա նույնպես տանն էր կրթություն ստանում, որպեսզի ընդունվի ինչ-որ գիմնազիա, քանի որ մասնակի խլության պատճառով նրան չէին ընդունել կադետական դպրոց:

Նրան կոչում էին Պյոտր Կարպենկո: Նա, իհարկե, նույնպես սիրահարվել էր Ռատուզովի քրոջը, և վերջինիս կողմից նույնպիսի ուշադրության էր արժանանում, ինչպես ես: Ինձ թվում է, որ նա աղջկան դուր էր եկել այն պատճառով, որ հաճախ ծաղիկներ ու կոնֆետներ էր նվիրում, իսկ ես՝ որ լավ կիթառ էի նվագում և գեղեցիկ զարդանախշեր էի հորինում, որոնք նա սիրում էր ասեղնագործել իր թաշկինակների վրա, ապա գլուխ գովել իր ընկերուհիների մոտ, թե այդ զարդանախշերի հեղինակը հենց ինքն է:

Քանի որ երկուսով սիրահարվել էինք միևնույն աղջկան, ապա աստիճանաբար սկսեցինք իրար խանդել: Մի անգամ՝ երեկոյան ժամերգությունից հետո, որին մասնակցում էր նաև իմ մրցակիցը, ես

պատշաճ պատրվակով ավագերեցից ինձ արձակելու թույլտվություն խնդրեցի: Ես մտադիր էի աղջկան դիմավորել մուտքի մոտ և նրան տուն ուղեկցել, բայց տաճարի հենց դռների մոտ դեմ առ դեմ բախվեցի Կարպենկոյին: Թաքցնելով իրար նկատմամբ ունեցած մեր ատելությունը՝ մենք ասպետաբար միասին ուղեկցեցինք աղջկան: Բայց հենց որ նա իրենց տան դուռը փակեց իր հետևից, ես այլևս չհամբերեցի. վեճ սկսեցի և մի լավ դաս տվի նրան: Այդ կովից հետո ես մի քանի ընկերների հետ գնացի եկեղեցու զանգակատուն: Այդ ժամանակ զորամասի տաճարն իսկական զանգակատուն չունեի. այն կառուցվեց ավելի ուշ: Իսկ այդ ժամանակ զանգն ուղղակի կախված էր բարձր տանիքով մի փայտե կառույցից, որը նման էր ժամապահի ութանկյուն դիտակետի: Չանգն իրենց վրա կրող գերանների և տանիքի միջև եղած տարածքը մեր «ակումբն» էր, որտեղ հավաքվում էինք համարյա ամեն օր և նստոտում գերանների կամ շուրջանակի ամրացված նեղ քիվի վրա, ծխում, անեկդոտներ պատմում և նույնիսկ դասեր պատրաստում: Երբ իսկական քարաշեն զանգակատուն կառուցվեց, փայտյա նախկին կառույցն ամբողջությամբ ռուսական ներկայացուցչության կողմից նվիրվեց այդ ժամանակ կառուցվող նոր հունական եկեղեցուն, որտեղ այն շարունակեց ծառայել որպես զանգակատուն:

Մեր «ակումբի» անդամներից բացի այստեղ ես տեսա իմ ընկեր Պետյային, որն Ալեքսանդրապոլից հյուր էր եկել Կարս: Նա Կերենսկի ազգանունով փոստային վարչության ինժեների որդին էր, և հետագայում, որպես սպա ծառայելով, զոհվեց ռուս-ճապոնական պատերազմում: Նորեկների մեջ էր նաև հունական թաղամասից Ֆեխի մականունով մի տղա, որի իսկական ազգանունը Կորխանիդի էր: Այդ ազգանունը հետագայում որպես հեղինակ գրվեց դպրոցական շատ դասագրքերի կազմերի վրա: Ֆեխին իր հետ տնական հալվա էր բերել, որով նրա մորաքույրը ցանկացել էր շնորհակալ լինել եկեղեցական երգչախմբի մասնակիցներին, որոնց երգեցողությունը մինչև հոգու խորքը հուզել էր նրան:

Մենք հալվա էինք ուտում, ծխում ու զրուցում, երբ հանկարծ հայտնվեց մի աչքը կապտած Պյոտր Կարպենկոն՝ երկու ռուս տղաների ուղեկցությամբ, որոնք մեր ընկերախմբից չէին: Նա մոտեցավ ինձ և համառ տոնով բացատրություն պահանջեց մեր միջև տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ: Լինելով շատ կարդացած տղա և վերամբարձ արտահայտվելու հակում ունենալով՝ նա նախօրոք պատրաստված մի երկար ճառ արտասանեց, որն ավարտեց անզիջում պնդումով.

«Երկիրը նեղ է գալիս երկուսիս, հետևաբար մեզնից մեկը պետք է մեռնի»:

Լսելով այդ փքուն հոխորտանքը՝ ես զայրացա և որոշեցի այդ ամբողջ անպետքությունը դուրս հանել նրա գլխից, բայց ընկերներս ինձ հետ պահեցին՝ ասելով, որ միայն անքաղաքավարի մարդիկ են այդպես հաշիվ մաքրում, իսկ մենք այլ կերպ պետք է պարզենք մեր հարաբերությունները, ինչպես դա անում են կարգին մարդիկ: Իմ արժանապատվությունը խոցվեց, և ես, չկամենալով անքաղաքավարի մարդ լինել, համաձայնեցի հարցը քննարկել իմ հակառակորդի հետ:

Երկար ժամանակ մենք վիրավորավորանքներ ու սպառնալիքներ էինք տեղում իրար գլխի, ինչը, չզիտես ինչու, քննարկում էինք կոչել, և որի ընթացքում մեզնից ամեն մեկը մյուսին խոստանում էր զանգակատնից ցած նետել կամ նրա հարցը լուծել մի այլ արյունալի եղանակով. ապա որոշվեց հարցը լուծել մենամարտով: Բայց այստեղ լուրջ խնդիր ծագեց՝ որտեղի՞ց զենք ճարել: Մենք ո՛չ ատրճանակ կարող էինք ճարել, ո՛չ սուսեր, և իրավիճակը հասավ փակուղու: Քիչ առաջ ունեցած մեր բոլոր մարտական հույզերը, որոնք հազիվ էինք զսպում, ուրիշ ուղղություն ստացան, և մենք համերաշխորեն սկսեցինք մտածել, թե ինչպես լուծենք ծագած խնդիրը:

Մեր ընկերախմբում Տուրչանինով ազգանունով մի տղա կար, որին մշտապես ծաղրում էին իր ճղճղան ձայնի պատճառով: Երբ մենք աշխուժորեն քննարկում էինք ծագած իրավիճակը, նա հանկարծ տեղից վեր թռավ ու բացականչեց. «Եթե ատրճանակներ չենք կարող ճարել, ուրեմն եկեք թնդանոթներն օգտագործենք»:

Բոլորը միահամուռ ծիծաղեցին, ինչպես հաճախ էր լինում նրա խոսքերից հետո:

«Հերիք է խրխնջաք, ապուշնե՛ր,- ինչպես միշտ, վրդովվեց նա,- թնդանոթները ոչնչով վատ չեն ատրճանակներից: Որոշ շտկումներ մտցրեք ձեր պլանի մեջ: Դուք որոշեցիք, որ ձեզնից մեկը պետք է մեռնի, բայց եթե մենամարտը թնդանոթներով լինի, ապա կարող եք մեռնել երկուսով: Այդպես հարմար է ձեզ... Ես խոստանում եմ կազմակերպել այդպիսի մենամարտ. դրանից հեշտ բան չկա»:

Նա մեզ առաջարկեց, որ երկուսով գնանք հրաձգային գնդի զորավարությունների վայրը, որը գտնվում էր քաղաքը շրջապատող սարերից ոչ հեռու: Դա բավականին մեծ մի հողատարածք էր՝ 6-9

քառակուսի մղոն մակերեսով, որտեղ մուտք գործելը խստիվ արգելվում էր, երբ գորավարժություններ էին անցկացվում: Տարածքն ամբողջ շրջագծով հսկում էին զինվորները: Մենք հաճախ էինք գնում այնտեղ, գլխավորապես՝ զիշերները, երբ մեզ այդ քայլին էին դրդում մեր երկու ավագ ընկերները՝ Այվազովն ու Դենիսենկոն: Գնում էինք այնտեղից հավաքելու, ավելի ճիշտ՝ գողանալու օգտագործված արկերի պղնձե մնացորդներ և կապարի կտորտանքներ, որոնք ամենուրեք սփռված էին լինում կրակոցներն ավարտվելուց հետո: Այնուհետև լավ գնով վաճառում էինք մեր ավարը: Թեև խստիվ արգելված էր դա անել, բայց մենք հաջողեցնում էինք այնտեղ հայտնվել լուսնկա զիշերներով կամ այն պահերին, երբ պահակախումբը կորցնում էր զգոնությունը:

Երկարատև քննարկումից հետո մենք ի վերջո ընդունեցինք Տուրչանինովի առաջարկը և որոշեցինք այդ հետաքրքիր նախագիծն ի կատար ածել հաջորդ օրը: Իմ մարտավկաներն էին Կերենսկին և Կորխանիդին, իսկ իմ հակառակորդինը՝ այն երկու ռուս տղաները, որոնց հետ ներկայացել էր: Որոշեցինք այդ մարտավկաների ուղեկցությամբ գորավարժանքների տարածք գնալ վաղ առավոտյան՝ նախքան հրետակոծության սկսվելը, և նշանակետերից հարյուր յարդ հեռավորության վրա թաքնվել թփերի մեջ պառկած, յուրաքանչյուրս «իր» թնդանոթի ուղղությամբ: Այնտեղ մենք պետք է մնայինք մինչև մուրճն ընկնելը և սպասեինք «մենամարտի» ելքին: Նա, ով այդքանից հետո կենդանի կմնար, կհամարվեր հաղթող:

Մարտավկաների պարտականությունը մեզ մինչև զորահրապարակ ուղեկցելն էր, որից հետո մինչև երեկո նրանք պետք է մնային գետի ափին, ապա գային և արձանագրեին «մենամարտի» արդյունքը: Եթե երկուսս կամ մեզնից մեկը վիրավորված լինեք, նրանք մեզ պետք է ցույց տային առաջին օգնություն և տանեին տուն. իսկ եթե տեսնեին, որ մեռած ենք, ապա, համաձայն պլանի, պետք է լուրեր տարածեին, թե զորահրապարակում պղինձ ու կապար հավաքելիս ենք եղել՝ չիմանալով, որ հրաձգություն է սկսվելու, և պատահաբար զոհվել ենք:

Հաջորդ առավոտյան մեր ընկերախումբն, իր հետ պաշար վերցնելով, շարժվեց դեպի «մարտադաշտ»: Գետի ափին դադար առանք, մթերքը բաժանեցինք և մեր մարտավկաների ուղեկցությամբ անցանք գորավարժությունների տարածք, որտեղ, մեզ համար թաքստոց ընտրելով, պառկեցինք ամեն մեկս իր տեղում: Դրանից հետո մեր ուղեկիցները հեռացան դեպի գետափ, որտեղ պետք է սպասեին մինչև երեկո՝ ժամանակը կարճելու համար զբաղվելով ձկնորսությամբ:

Մինչև հրաձգության սկիզբն ինձ ամեն ինչ զվարճալի կատակ էր թվում, բայց դրանից հետո էլ ծիծաղի տեղ չմնաց: Ես չգիտեմ, թե ինչ էր զգում արկերի կարկուտի տակ հայտնված իմ հակառակորդը, բայց իմ ապրածը ես հիշում եմ մինչև այսօր, կարծես երեկ եղած լինեք:

Սկզբում ես ամբողջովին բթացա վախից, բայց շուտով զգալու և մտածելու ունակություններս վերականգնվեցին, և սուր զգացողություններն այնքան ուժեղացան, որ այդ ժամանակվա իմ ապրածը հավասարվեց ու անցավ մի ամբողջ տարվա ապրածին ու զգացածին:

Ես հանկարծ պարզորոշ գիտակցեցի, որ սեփական հիմարության պատճառով հայտնվել եմ այնպիսի իրադրության մեջ, որում զոհվելս անխուսափելի է թվում:

Կենդանական վախն այնպես տիրեց իմ էությանը, որ շրջապատի իրականությունը չբացավ՝ իր տեղը զիջելով միայն մահացու սարսափի զգացողությանը:

Հիշում եմ, որ իմ միակ ցանկությունն այն էր, որ հնարավորինս չափսերով փոքրանամ, խրվեմ ու կորչեմ հողի մեջ, ոչինչ չտեսնեմ ու չլսեմ:

Ամբողջ մարմնիս մեջ սկսված դողն այնքան ուժեղացավ, որ կարծես թրթռում էին բոլոր բջիջներս ու մկաններս. և չնայած հրանոթների ահավոր որոտին՝ ես հստակ լսում էի սրտիս զարկերն ու ատամներիս կափկափյունը, և ինձ թվում էր, թե սիրտս ուր որ է կայայթի:

Միաժամանակ նշեմ, որ այդ դեպքը շատ նպաստեց իմ հոգևոր կազմավորմանը և խելամիտ, գիտակից մարդ դառնալուն, որը պատասխանատվություն է կրում իր ամեն մի արարքի համար: Դրանից հետո ես սովորեցի ամեն մի իրավիճակը դիտարկել դրանում մասնակցություն ունեցող բոլոր անձանց տեսանկյունից և իմ ներսում սովորություն զարգացրի զսպելու սեփական հույզերս ու բռնկումներս, որոնք կարող են վնաս պատճառել ուրիշ մարդկանց:

Ճշգրիտ չեմ հիշում, թե որքան երկար այդպես պառկեցի, բայց ճակատագիրը բարեհաճ գտնվեց իմ նկատմամբ, և ես աստիճանաբար վարժվեցի հրանոթների ռոնոնգին ու շուրջս թափվող արկերի պայթյուններին:

Կամաց-կամաց անխուսափելի կործանման զգացողությունը սկսեց նահանջել: Թեև հրաձգությունը ժամանակ առ ժամանակ ընդհատվում էր, բայց ես այդտեղից փախչել չհամարձակվեցի՝ գլխավորապես զգուշանալով այն բանից, որ կընկնեմ գորահրապարակը հսկող զինվորների ձեռքը:

Ինձ այլ բան չէր մնում, քան անշարժ պառկել և սպասել մութն ընկնելուն, երբ հնարավոր կդառնար անարգել լքել այդ տարածքը:

Հրաձգության դադարներից մեկի ժամանակ ես մի քիչ կերա ինձ հետ վերցրած մթերքից և աննկատելիորեն քնով անցա: Ակներևաբար նման ցնցում ապրած իմ նյարդային համակարգը հանգստի կարիք էր զգում: Չգիտեմ, թե որքան քնեցի, բայց երբ աչքերս բացեցի, տեսա, որ արդեն երեկո է, և շուրջս լրիվ խաղաղվել է:

Երբ ուշքս լրիվ տեղը գալուց հետո հիշեցի, թե ինչու եմ այդտեղ գտնվում, և հասկացա, որ ողջ ու առողջ եմ, հազիվ զսպեցի ինձ, որ չճչամ հրճվանքից: Եվ միայն մի փոքր հանդարտվելուց հետո ես հանկարծ հիշեցի իմ «հակառակորդի» մասին և սաստիկ տագնապեցի՝ չիմանալով, թե ինչ է եղել նրա հետ: Ես դուրս եկա իմ թաքստոցից և գաղտագողի գնացի դեպի այն վայրը, որտեղ նա պետք է թաքնված լիներ: Նրան գտնելով անշարժ պառկած՝ ես խիստ վախեցա. հետո չգիտես ինչու մտածեցի, որ նա քնած է, բայց ոտքի վրա արյուն տեսա և գլուխս կորցրի: Ես զգացի, որ իմ ամբողջ ատելությունը փոխարինվեց խղճահարությամբ ու զղջումով: Նույն սարսափով, որ մի քանի ժամ առաջ զգացել էի հրաձգության պատճառով, այժմ սողեցող մոտեցա իմ «հակառակորդին»՝ բնագդաբար աշխատելով աննկատ մնալ գորահրապարակի պահակախմբի համար: Ես շարունակում էի սարսափով դիտել այդ անշարժ մարմինը, երբ չորեքթաթ տալով մեզ մոտեցան մեր «մարտավկաները»: Նրանք հեռվից ինձ նկատել էին Կարպենկոյի անշարժ մարմնի մոտ քարացած վիճակում, իսկ երբ շտապ մոտեցան ու նրա հագուստի վրա տեսան արյան հետքերը, ապշահար եղան ինձնից ոչ պակաս՝ չիմանալով ինչ անել:

Մենք երկար նստած մնացինք հիպնոսացածի պես, հետո հանկարծ մեզ այդ վիճակից հանեց Կերենսկու ուրախ ճիչը: Ինչպես հետագայում նա մեզ պատմեց, երկար անշարժ մնալուց նրա ոտքը թմրել էր, և մի փոքր դիրքափոխվելուց հետո նա հանկարծ նկատել էր, որ Կարպենկոյի զարկերակը խփում է: Ավելի մոտենալով՝ նա հասկացել էր, որ ընկերը կենդանի է և միայն գիտակցությունն է կորցրել: Այդ ուրախալի լուրը մեզ ուշքի բերեց, և մենք, իրար ընդհատելով, սկսեցինք պատմել, թե ինչ է տեղի ունեցել, և որոշել, թե ինչ անենք հետո: Մեզնից երկուսը, ձեռքերը խաչաձև բռնելով, մենք բազկաթոռի պես մի բան կազմեցին և Կարպենկոյին հասցրին գետափ:

Աղյուսի հին գործարանի ավերակների մոտ մենք փռեցինք մեր հագուստները և վերջապես դրանց վրա պառկեցրինք մեր ընկերոջը, որից հետո սկսեցինք զննել, թե որտեղ է վերքը: Պարզվեց որ բեկորը վնասել է նրա ոտքերից մեկը, և վերքը վտանգ չի ներկայացնում կյանքի համար:

Քանի որ Կարպենկոն դեռ ուշքի չէր գալիս, իսկ մեզնից ոչ մեկը վիրաբուժությունից գլուխ չէր հանում, մենք որոշեցինք, որ մեզնից մեկնումեկը վազի քաղաք և բերի մեր մի ծանոթին, որը հոսպիտալում վիրաբույժի օգնական էր աշխատում և, ինչպես մենք, երգում էր եկեղեցական երգչախմբում. մնացածներս պետք է լվանայինք վերքը և ձեռքի տակ եղած միջոցներով վիրակապեինք:

Բժիշկը շուտով եկավ իր սայլակով, և մենք նրան բացատրեցինք, որ այդ դժբախտ դեպքը պատահել է այն ժամանակ, երբ մենք գորահրապարակում պղինձ ու կապար էինք հավաքում՝ չիմանալով, որ շուտով գորավարժություններ կսկսվեն: Վերքն ուշադիր զննելուց հետո վիրաբույժի օգնականը հաստատեց, որ այն կյանքի համար վտանգավոր չէ, և որ Կարպենկոն գիտակցությունը կորցրել է արյան մեծ կորստի պատճառով: Եվ իրոք, երբ նրա երեսին մոտեցրին հոտավետ աղի սրվակը, նա անմիջապես ուշքի եկավ:

Մենք բժշկին սկսեցինք թախանձել, որ նա ոչ մեկին չպատմի պատահածի մասին, քանի որ մեծ տհաճություններ կարող էին ծագել՝ կապված գորավարժությունների տարածք մեր մուտք գործելու հետ, ինչը խստորեն արգելված էր:

Երբ Կարպենկոն ուշքի եկավ, իր շուրջը նայում էր այնպես, կարծես փնտրում է ինչ-որ մեկին, և երբ նրա հայացքը կանգ առավ ինձ վրա, թույլ ժպտաց և ինչ-որ բան շշնջաց: Ինձ պատել էր զղջումի և վիրավոր ընկերոջս նկատմամբ խղճահարության զգացումը: Այդ պահից սկսած՝ ես նրան վերաբերվում էի հարազատ եղբոր պես:

Տուժյալին մենք տուն հասցրինք և ծնողներին բացատրեցինք, որ գետի կիրճով անցնելու ժամանակ, որտեղ նա սիրում էր ձուկ որսալ, հանկարծ սայթաքել ու գլորվել է ցած և վնասել ոտքը: Ծնողները հավատացին մեր ասածին, և ես թույլտվություն խնդրեցի ամեն երեկո գալ հիվանդին այցելության, մինչև որ նա լրիվ ապաքինվի: Այն ամբողջ ընթացքում, որ նա ստիպված եղավ անկողնուն գամված մնալ, ես դայակի պես հոգ էի տանում նրան. զբաղեցնում էի, անեկդոտներ ու զանազան պատմություններ պատմում, և այդ ժամանակվանից սկսվեց մեր իսկական ընկերությունը:

Իսկ ինչ վերաբերում է մեր ընդհանուր կրթի առարկայի նկատմամբ ռոմանտիկական զգացմունքներին, ապա դրանք երկուսիս մոտ էլ հանկարծակի չբացան:

Շուտով, երբ ստացած վերքը լրիվ ապաքինվեց, նա ծնողների հետ մեկնեց Ռուսաստան, որտեղ, հաջողությամբ հանձնելով ընդունելության քննությունները, ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտ:

Այդ դժբախտ պատահարից հետո անցած մի քանի տարիների ընթացքում Կարպենկոյի հետ մենք չտեսնվեցինք, թեև ամեն մի անվանակոչության և ծննդյան օրվա առիթով ես նրանից երկար նամակներ էի ստանում, որոնցում նա պատմում էր իր մասին՝ նամակն ավարտելով այդ ժամանակ իր հետաքրքրությունը շարժած հարցերի երկար ցուցակով:

Մի անգամ՝ ամռանը, Ալեքսանդրապոլի վրայով փոստային ձիերով Կարս անցնելիս (այդ ժամանակ դեռ երկաթգիծ չկար) նա իմացել էր, որ ես Ալեքսանդրապոլում եմ և այցելեց ինձ: Ես այդ ամառ Ալեքսանդրապոլում էի, քանի որ ուզում էի հանգիստ իրադրությունում, առանց խանգարիչ հանգամանքների մի քանի փորձեր դնել, որպեսզի պարզեմ, թե ձայնային ալիքներն ինչպես են ազդում մարդկանց ու կենդանիների վրա:

Ես նրան առաջարկեցի իմ օգնականը դառնալ այդ փորձերի անցկացման ժամանակ, որոնց համար ձիերի նախկին մի ախոռ էի հարմարեցրել: Տեսնելով իմ «լաբորատորիան» և սարքավորումները՝ նա այնքան հետաքրքրվեց իմ փորձերով, որ որոշեց երեք օրով հետաձգել ծնողների մոտ գնալը: Իսկ ավելի ուշ՝ ընտանիքին այցելելուց հետո, նա կրկին ինձ մոտ եկավ և Ալեքսանդրապոլում անցկացրեց ամռան մնացած մասը. միայն երբեմն մեկ-երկու օրով նորից այցելում էր Կարսում գտնվող իր ծնողներին:

Ամռան վերջում ինձ մոտ եկան իմ մի քանի ընկերները՝ նոր կազմավորված «Ճշմարտություն որոնողների ընկերության» անդամները, որոնց հետ միասին ես պատրաստվում էի հնէաբանական պեղումներ կատարել Հայաստանի հինավուրց մայրաքաղաք Անիի ավերակներում: Դա առաջին արշավախումբն էր, որին մասնակցում էր նաև Կարպենկոն, որը մեր ընկերախմբում մի քանի շաբաթ անցկացնելուց հետո մեզնից վարակվեց գերբնական և այլ արտառոց երևույթների նկատմամբ հետաքրքրությամբ:

Այդ ճամփորդության ավարտից հետո Կարպենկոն վերադարձավ Ռուսաստան և շուտով ստացավ լեռնային ինժեների դիպլոմ: Հաջորդ երեք տարիներին մենք չհանդիպեցինք, բայց նամակագրություն էինք պահպանում իրար հետ: Կարպենկոն նույնպիսի կապ էր պահպանում նաև «Ճշմարտություն որոնողների ընկերության» մյուս անդամների հետ, որոնց հետ ընկերացել էր արշավի ժամանակ: Երեք տարի հետո նա դարձավ մեր այդ ընկերության լիիրավ անդամ և այդ ժամանակից սկսած՝ մասնակցում էր դեպի Ասիա և Աֆրիկա կատարած մեր ճամփորդություններից շատերին:

Դա տեղի ունեցավ մեր արշավներից մեկի ժամանակ, երբ պատրաստվում էինք Հիմալայները հատել Պամիրից մինչև Հնդկաստան: Այդ արշավի հենց սկզբից, որում ես կորցրի իմ լավագույն ընկերներից մեկին, մեզ հետապնդում էին հսկայական դժվարություններ: Երբ հյուսիս-արևմտյան լանջերից մենք փորձում էինք անցնել կտրուկ լեռնանցքով, վերնից մեծ ձյունահյուսք իջավ և մեզ ծածկեց ձյան և սառույցի հաստ շերտով: Դժվարությամբ դուրս գալով դրա տակից՝ մենք նկատեցինք, որ մեր ընկերներից երկուսը դեռ ձյան տակ են մնացել: Մենք շտապեցինք նրանց դուրս հանել, բայց արդեն ուշ էր: Զոհվածներից մեկը բարոն Խ.-ն էր՝ համոզված օկուլտիստ, իսկ մյուսը՝ մեր ուղեկցորդ Կարակիր Խայնուն:

Այդ ողբերգական պատահարը ոչ միայն մեզնից խլեց մեր լավագույն ընկերներից մեկին, այլև մեզ թողեց առանց ուղեկցորդի, որը լավ գիտեր տեղանքը: Այստեղ հարկ է նշել, որ Հինդուքուշի և Հիմալայների միջև ընկած շրջանը, որտեղ տեղի ունեցավ այդ ողբերգական դեպքը, խաչվող նեղ կիրճերից կազմված մի լաբիրինթոս է, որը գոյացել է նախապատմական ժամանակներում մոլորակում տեղի ունեցած երկրաբանական ինչ-ինչ արհավիրքների արդյունքում: Կարծես ինչ-որ Վերին ուժեր

միտումնավոր կերպով այնպես են արել, որ ոչ մի կենդանի շունչ չհամարձակվի հասնել այս վայրերը և խաթարել լեռնագագաթների հավերժական անդորրը:

Դժբախտ դեպքի պատճառով կորցնելով մեր ուղեկցորդին, որը, տեղացիների հավաստիացմամբ, միակ մարդն էր, ով ծանոթ էր բոլոր կածաններին, մենք մի քանի օր փորձում էինք դուրս պրծնել այդ խիստ, անհյուրընկալ վայրերից: «Մի թե դուք քարտեզ ու կողմնացույց չունեիք», - տեղին հարց կարող է տալ անհանգստացած ընթերցողը:

Իհարկե, նման բաներ ունեինք և այն էլ բավարար քանակությամբ: Բայց ամբողջ խնդիրն այն է, որ ճանապարհորդների համար անհամեմատ ավելի լավ կլինեք, որ այդ քարտեզ կոչվածը բոլորովին գոյություն չունենար այս աշխարհում:

Ինչպես հաճախ սիրում էր ասել իմ ընկեր Ելովը, ինչ-որ մի լեզվով քարտեզը «իմաստություն» բառի հումանիշն է, որն այդ նույն լեզվով սահմանվում է այսպես՝ կարողանալ ապացուցել, որ երկու անգամ երկու հավասար է յոթուկեսի, հանած երեք և էլի մի քիչ:

Իսկ իմ կարծիքով՝ ժամանակակից քարտեզներից օգտվելուց առաջ լավ կլինի հիշել մի հին ասացվածք, որը վերաբերում է մարդկային ցեղի գեղեցիկ կեսին. «Եթե ուզում ես ինչ-որ գործում հաջողության հասնել, ապա խորհուրդ հարցրու կնոջից և դրա հակառակն արա»:

Այդ խոսքը կատարելապես հարմար է գալիս նաև քարտեզների պարագայում. եթե ուզում եք գտնել ճիշտ ճանապարհը, գտեք այն քարտեզի վրա և շարժվեք հակառակ ուղղությամբ. համոզված եղեք, որ կհասնեք ճիշտ այնտեղ, որտեղ պետք է: Այդ քարտեզները գուցե շատ օգտակար են այն մարդկանց համար, որոնք նստած են իրենց հարմարավետ գրասենյակներում և ո՛չ ցանկություն, ո՛չ էլ հնարավորություն ունեն ճանապարհ դուրս գալու, այլ միայն գրքեր են գրում հեռավոր ու վտանգավոր ճամփորդությունների մասին՝ առանց գրասեղանի հետևից դուրս գալու: Հենց այդ քարտեզների շնորհիվ են նման մասնագետները թխում իրենց անհեթեթ պատմությունները:

Գուցե և ինչ-որ տեղ գոյություն ունեն լավ քարտեզներ, բայց իմ ձեռքն ընկած քարտեզների մեջ՝ սկսած հին Չինաստանի քարտեզներից, վերջացրած ժամանակակից հատուկ ռազմական տեղագնական քարտեզներով, չի պատահել մեկը, որն ինձ օգներ կողմնորոշվելու տեղանքում: Իհարկե, խիտ բնակեցված շրջաններում քարտեզը կարող է պիտանի լինել և ճիշտ ճանապարհ հուշել, սակայն անմարդաբնակ վայրերում, որտեղ լավ քարտեզ ունենալը կենսական անհրաժեշտություն է (օրինակ՝ Կենտրոնական Ասիայում), դրանից ավելի լավ կլինի չօգտվել: Իրական տեղանքը և այն, ինչ պատկերված է քարտեզի վրա, ոչ մի ընդհանուր բան չեն ունենում:

Նման քարտեզներին վստահելը հաճախ հանգեցնում է ամենատխուր, երբեմն էլ ողբերգական հետևանքների: Ենթադրենք, ըստ քարտեզի երևում է, որ ձեզ հաջորդ օրը վիճակվելու է հաղթահարել տեղանքի բարձունքներից մեկը, որտեղ, բնականաբար, կհայտնվեք ուժեղ քամիների և ցածր ջերմաստիճանների գոտում: Դուք քանդում եք ձեր ուղեբեռը, տակից հանում տաք շորերը և դնում մի կողմ, որ կրկին դասավորելիս դրանք վերջում դնեք, որպեսզի լեռնային անցումը կատարելիս դրանք անհրաժեշտության դեպքում ձեռքի տակ լինեն:

Հաջորդ օրը դուք զարմանքով հայտնաբերում եք, որ քարտեզում նշված բարձունքի փոխարեն դուք անընդհատ քայլում եք անփոփոխ հարթ վայրերով, իսկ ցրտի փոխարեն ձեզ զգում եք ինչպես շոգեբաղնիքում և անհաղթահարելի ցանկություն եք ունենում հանել ձեր հագի ամեն ինչը, որպեսզի քայլեք մորեներկ:

Բայց քանի որ տաք հագուստը կարգին չեք դրել ուղեբեռի մեջ, այն անընդհատ տեղաշարժվում ու ցած է սահում բեռնված անասունների մեջքից՝ անհանգստություն պատճառելով ոչ միայն ձեր ձեռքերին, այլև հենց ձեզ: Իսկ թե ինչ բան է երկարատև ու հոգնեցուցիչ անցման ժամանակ բեռ քանդելն ու նորից կապկպելը, ինքներդ կարող եք գլխի ընկնել, մանավանդ եթե գոնե մեկ անգամ ձեզ վիճակվել է դա անել:

Իհարկե, այնպիսի արշավախմբերում, որոնք կազմակերպվում են այս կամ այն երկրի կառավարության կողմից ինչ-որ որոշակի քաղաքական նպատակով, կամ էլ այնպիսիներում, որոնք ամեն ինչով ապահովված են լինում շնորհիվ ինչ-որ մի բանկիրի՝ թեոսոֆիայով տարված այրու նվիրատվությունների, դուք կարող եք այնքան բեռնակիրներ վարձել, որքան անհրաժեշտ եք համարում, որ նրանք ճանապարհին հոգան ձեր ամբողջ ուղեբեռի մասին: Բայց իսկական ճանապարհորդը պետք է ամեն ինչ ինքն անի, անգամ եթե օգնականներ ունի: Չէ՛ որ նորմալ մարդը չի

կարող անգործ մնալ, երբ մյուսները ջանադիր աշխատում են, մանավանդ, երբ արշավը երկարատև է և լի գրկանքներով ու դժվարություններով:

Ժամանակակից աշխարհագրական քարտեզները բոլորովին պիտանի չեն, քանի որ դրանք չափազանց տարօրինակ մեթոդներով են գծվում, ինչին ինքս եմ վկա եղել: Դա պատահեց «Ճշմարտություն որոնողների ընկերության» խմբի կազմում իմ մի ճամփորդության ժամանակ, երբ պատրաստվում էինք Ալեքսանդր 3-րդի լեռնագագաթի շրջանում անցնել Պամիրի լեռնաշղթան: Հենց այդ ժամանակ այդ լեռնագագաթի մոտ գտնվող սարահարթերից մեկում ճամբար էր խփել մի արշավախումբ, որը կազմակերպել էր թուրքեստանյան զինվորական տեղագնական բաժանմունքը: Այդ արշավախմբի ղեկավարը ում գնդապետ էր՝ մեր ընկերության անդամներից մեկի ընկերը, ուստի մենք որոշեցինք հյուր գնալ նրանց:

Գնդապետին սպասարկում էին շտաբի մի քանի սպաներ, որոնք շատ ուրախացան մեր այցելությանը, քանի որ շատ ամիսներ էին անցկացրել մի վայրում, որտեղ հարյուր մղոնանոց շրջագծով հնարավոր չէր որևէ կենդանի շունչ գտնել: Մենք այդտեղ մնացինք երեք օր, որպեսզի մի լավ հանգստանանք հարմարավետ ու մեծ վրաններում:

Արդեն պատրաստվում էինք հրաժեշտ տալու մեզ հյուրընկալողներին, երբ սպաներից մեկը թույլտվություն խնդրեց միանալու մեզ, քանի որ պետք է գծեր մի տեղանքի քարտեզը, որը գտնվում էր այդտեղից երկու օրվա ճանապարհի վրա և համընկնում էր մեր ճամփորդության երթուղու հետ: Նա իր հետ վերցրեց միայն երկու օգնականների, որոնք տեղագնական արշավախմբի ազատ վարձվածների անձնակազմից էին:

Սարահարթերից մեկում մենք տեսանք քոչվոր դրոզների կայանատեղի և մոտեցանք, որպեսզի գրուցենք նրանց հետ: Մեզ ուղեկցող սպան գիտեր դրոզներն: Մեր հանդիպած քոչվորներից մեկն իր կյանքում շատ բան տեսած տարեց մարդ էր: Մենք նրան հրավիրեցինք մեր համեստ հացկերույթին՝ հուսալով նրանից հնարավորինս շատ բան իմանալ այն վայրերի մասին, որոնցով անցնում էր մեր երթուղին:

Հաց ուտելու ժամանակ մենք միաժամանակ գրուցում էինք: Մեր ուսապարկերից մենք ոչխարի ստամոքսի՝ տկճորի մեջ լցնած հրաշալի դավուրմա հանեցինք, իսկ սպան ներկաներին հյուրասիրեց Տաշքենդից գնված օղիով, որից քոչվոր դրոզները հաճույքով խմում են, երբ ցեղակիցների աչքից հեռու են լինում: Խմելուց և այդ խմիչքը գովաբանելուց հետո մեր հյուրն սկսեց պատմել տեղանքի մասին իր իմացածը՝ ցույց տալով առանձին օբյեկտներ, որոնցով կարող էինք կողմնորոշվել: Մեզնից ոչ շատ հեռու գտնվող ձյունագագաթ մի սար ցույց տալով՝ նա ասաց. «Տեսնո՞ւմ եք ահա այն լեռնագագաթը. դրանից այն կողմ... այս կա ու այն կա... ինչպես նաև Իսկանդարի նշանավոր քարանձավը»: Սպան, որը շատ ուշադիր լսում էր մեր հյուրին, այդ ամենը փոխանցեց թղթին:

Երբ հաց ուտելն ավարտեցինք, և ծեր դրոզը գնաց միանալու իր ցեղակիցներին, ես հայացք նետեցի մեզ ուղեկցող սպայի նկարած գծագրին և տեսա, որ դրոզի ասած օբյեկտները ոչ թե լեռան այն կողմում են նկարված, այլ այս կողմում: Ես նրան բացատրեցի այդ սխալը, և հետագա խոսակցությունից պարզվեց, որ սպան շփոթել է «այն կողմ» և «այս կողմ» արտահայտությունները, որոնք դրոզներենում համարյա նույն կերպ են հնչում, հատկապես նրանց համար, ովքեր այնքան էլ լավ չեն տիրապետում այդ լեզվին:

Երբ ես այդ ամենը բացատրեցի մեր ուղեկցին, նա սրտնեղած հայհոյեց, բայց գծագիրը, որի վրա երկու ժամ չարչարվել էր, նորից չգծեց, մանավանդ որ մենք արդեն պատրաստվում էինք ճամփա ընկնել: Ես չէի կասկածում, որ սխալներով լի այդ խզբզոցը շուտով վերածվելու էր այդ տեղանքի աշխարհագրական քարտեզի: Նման քարտեզներ կազմողները հետագայում երբեք չեն այցելում այն վայրերը, որոնցում այդ քարտեզներից օգտվող մեր եղբայր-ճամփորդները, քարտեզով առաջնորդվելով, խորունկ գետի հանդիպելու փոխարեն դեմ են առնում բարձր լեռան:

Եվ այսպես, մնալով առանց ուղեկցորդի, մենք շարունակեցինք ընթանալ ինչպես պատահե՛ր՝ պահպանելով զգուշություն և աշխատելով խույս տալ այդ կողմերում թափառող ավազակախմբերից, որոնք ակտիվորեն զբաղվում էին եվրոպացիների որսով. մեծ ծիսակարգերով նրանց գերի էին վերցնում, որից հետո առանց որևէ ծեսի նրանց փոխանակում էին ձիերի, լավ հրազենի և անզամ ջահել աղջիկների հետ, որոնց գերեվարում էին այդ վայրերում բնակվող ուրիշ ցեղախմբեր:

Հասնելով մի լեռնային գետի՝ մենք որոշեցինք գնալ դրա ափով՝ հուսալով, որ ի վերջո կհասնենք որևէ բնակավայրի: Մենք նույնիսկ չէինք կարող որոշել՝ հյուսիս՝ ս ենք գնում, թե՞ հարավ, քանի որ գտնվում էինք ջրբաժանի տեղում:

Գետի ափով գնացինք այնքան, մինչև այն չափազանց զառիվայր դարձավ, այնպես, որ այլևս ափով առաջ գնալ հնարավոր չէր: Ստիպված եղանք ճանապարհը շարունակել՝ քայլելով այդ լեռնային գետակի հունով, բայց մի քանի մղոն անց գետի հունը այնքան խորացավ բազմաթիվ վտակների պատճառով, որ մենք ստիպված կանգ առանք, որպեսզի լրջորեն մտածենք մեր հետագա անելիքի մասին: Երկարատև քննարկումներից հետո մենք որոշեցինք մորթել մեր ունացած բոլոր այծերը, որոնք մեզ համար ծառայում էին որպես թարմ միս և բեռնակիր անասուններ: Դրանց կաշվից կարող էինք տիկեր պատրաստել և դրանք լցնել օդով, որպեսզի լաստերի պես բաներ ունենայինք գետի հոսանքով ցած իջնելու համար: Այս վայրերում տիկերից ու գերաններից պատրաստված լաստը կորզիր է կոչվում:

Մեր այդ մտադրությունն իրականացնելու համար նախ գետից ոչ հեռու մի հարմար ու հարթ տեղ գտանք, որտեղ վտանգի դեպքում կարող էինք շրջանաձև պաշտպանություն ապահովել, և այդտեղ ճամբար խփեցինք: Քանի որ մեր պլանն իրագործելու համար արդեն չափազանց ուշ էր, մենք սովորականի պես խարույկ վառեցինք, կերակուր պատրաստեցինք, ընթրեցինք և պառկեցինք քնելու՝ չնոռանալով ժամապահներ նշանակել, որոնք հերթով պետք է հսկեին մեր ճամբարի շրջակայքը:

Վաղ առավոտվանից մեր առաջին գործն այն եղավ, որ առանց խղճի խայթի հսկայական սպանող կազմակերպեցինք: Անզգամորեն, ինչպես ժամանակակից մարդկանց մեծամասնությունը, մենք մորթեցինք մեր բոլոր այծերը, որոնց մինչև իրենց վերջին ժամը համարում էինք երկարատև ճամփորդության բոլոր դժվարությունները մեզ հետ կիսող մեր օգնականներն ու հավատարիմ ընկերները:

Այդ քրիստոնեա-մուսուլմանական նշանավոր արյունահեղությունից հետո մեզնից ոմանք սկսեցին միսը կտրատել, որ հետո խորովեն ու պաշար պատրաստեն, մյուսները զբաղվեցին տիկեր պատրաստելու և դրանք օդով լցնելու գործով, երրորդները այծի աղիքներից պարաններ էին սարքում, որպեսզի դրանցով կապկպենք լաստի գերանները, իսկ ես և էլի մի քանի հոգի, մեզ հետ վերցնելով ավանակներին, գնացինք ամուր փայտանույթ գտնելու, որպեսզի գերաններ սարքենք լաստի համար:

Որոնումները մեզ շատ հեռու տարան ճամբարից: Մեզ թեղի էր պետք գտնել կամ կեչի, որոնք, իմ կարծիքով, այստեղ աճող ծառատեսակներից միակն էին, որոնց փայտանույթը բավականաչափ ամուր է, որպեսզի դիմանար արագահոս գետի հոսանքի նեղ մասերում հսկա քարաժայռերին ընդհարվելուն:

Ճամբարի մոտակայքում միայն թզենիներ և նմանատիպ այլ ծառատեսակներ կային, որոնց փայտանույթը մեզ թվաց չափազանց փափուկ և մեր նպատակին ոչ հարմար: Մենք գնում էինք՝ մեր շուրջն ուշադիր գննելով, և հանկարծ նկատեցինք մի մարդու, որը, հավանաբար, պատկանում էր տեղական ցեղերից մեկին: Իրար հետ խորհրդակցելուց հետո մենք որոշեցինք մոտենալ նրան և հարցնել, թե որտեղ կարող ենք գտնել մեր ուզած ծառատեսակներից: Երբ մոտեցանք, տեսանք, որ նրա հագուստը ցնցոտիների է վերածված, և այդ մարդու արտաքինից հասկացանք, որ նա այն ճգնավորներից է, որոնց հետաքրքրում է միայն սեփական հոգու փրկությունը: Եվրոպացիները սովորաբար նրանց ֆակիր են անվանում:

Քանի որ ինձ վիճակվեց կիրառել այդ «ֆակիր» բառը, անհրաժեշտ եմ համարում մի քիչ շեղվել նյութից, որպեսզի անդրադառնամ այդ լայնորեն տարածված հասկացությանը: Դա այն բառերից մեկն է, որի իմաստի աղավաղումը եվրոպացիների միջավայրում հատկապես վերջին ժամանակներում լայնորեն կիրառվելով՝ երևի թե գլխավոր պատճառն է դարձել նրանց մտավոր կարողությունների հետաճի համար:

Թեև «ֆակիր» բառին եվրոպացիների վերագրած իմաստն անձանոթ է Ասիայի ժողովուրդներին, այնուհանդերձ այդ նույն բառն այստեղ համարյա ամենուրեք կիրառվում է: «Ֆակիր», ավելի ճիշտ՝ «ֆախր» բառը ծագել է թուրքերենի «աղքատ» բառից, որն օգտագործում են Ասիայի բոլոր այն ժողովուրդները, որոնց լեզուն թուրքական ծագում ունի: Այն հասել է մինչև մեր օրերը՝ ներկայումս ձեռք բերելով «խաբեբայի» կամ «խարդախի» իմաստ:

Եվ իրոք, որպեսզի որևէ մեկին խաբեբա կամ խարդախ անվանեն, Ասիայում թուրքական ծագում ունեցող երկու բառ են օգտագործում՝ «ֆակիր» և «լուրի»: Եվ եթե «ֆակիր» են ասում այն մարդուն, ով ուրիշներին խաբում է նրանց կրոնական մոլեռանդությունն օգտագործելով, ապա «լուրի» են

անվանում նրան, ով իր գործունեությունը ծավալում է՝ հիմնվելով մարդկանց հիմարության վրա: Սկզբում «լուրի» էին ասում ինչպես ընդհանրապես գնչուներին, այնպես էլ նրանց առանձին ներկայացուցիչներին:

Գնչուները միշտ ապրել են ուրիշ ժողովուրդների միջավայրում և վարել քոչվոր կյանք: Նրանք հիմնականում զբաղվում են ձիերի վաճառքով, ամանեղենկլայեկելով, տոներին երգելով ու պարելով, գուշակությամբ և նմանատիպ այլ գործունեությամբ: Իրենց վրանները խփելով, որպես կանոն, խիտ բնակեցված տեղերում՝ նրանք հաջողությամբ զբաղվում են փոքր քաղաքների ու գյուղերի միամիտ բնակիչների գլուխները վարելու գործով: Աստիճանաբար գնչուներին վերաբերվող «լուրի» տերմինը սկսել է կիրառվել նաև ցանկացած ռասայի ու ազգության պատկանող խաբեբաների ու խարդախների նկատմամբ: Իսկ այն հասկացության համար, որին եվրոպացիները սխալմամբ «ֆակիր» են ասում, ասիական ժողովուրդները մի քանի բառեր ունեն, որոնցից ամենատարածվածը «ազնավորյանն» է, ինչը նշանակում է՝ «նա, ով գերազանցել է ինքն իրեն»:

Եվրոպացիները հալած յուրի տեղ են ընդունում, այսպես կոչված, ֆակիրների բոլոր հնարքներն ու աճաբարությունները, մինչդեռ Ասիայի ամեն մի առողջ բանականություն ունեցող բնակիչ գիտի, որ այդ ամենը սոսկ անամոթ խաբեբայություն է:

Որպեսզի ցույց տամ, թե ինչպիսի խառնաշփոթ է ստեղծել եվրոպացիների կողմից այդ բառի սխալ ընկալումը, կարծում եմ բավարար կլինի ասել, որ շրջելով համարյա բոլոր այն երկրներում, որոնցում, համաձայն Եվրոպայի բնակիչների պատկերացման, այդ ֆակիրները պետք է որ վիստային ճանձերի պես՝ ես նրանցից չտեսա և ոչ մեկին: Բայց փոխարենը բոլորվին վերջերս ես «բախտ ունեցա» հանդիպելու մի իսկական ֆախրի՝ այդ բառի ասիական իմաստով. ի՞նչ եք կարծում, որտե՞ղ: Ո՛չ, Հնդկաստանում չէ, ոչ էլ Ասիայի որևէ ուրիշ խուլ անկյունում, այլ բուն Եվրոպայի սրտում՝ Բեռլինում:

Ես Կուրֆյուստենդամով գնում էի դեպի Կենդանաբանական այգու մուտքը, երբ սիզամարգում տեսա երկու ոտքից զուրկ մի հաշմանդամի, որն, իր սայլակի վրա նստած, պտտում էր իր անդրջրհեղեղյան «շարմանկայի» բռնակը:

Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում, ինչպես և ժամանակակից քաղաքակրթության մյուս կենտրոններում, արգելված է բացահայտորեն ողորմություն խնդրելը, բայց դրանով զբաղվել ցանկացող ամեն ոք, եթե չի ուզում տհաճություններ ունենալ ոստիկանության հետ, կարող է «շարմանկայի» բռնակ պտտել, լուցկու դատարկ տուփեր կամ անպարկեշտ բացիկներ վաճառել:

Այդ աղքատը, որի հագին գերմանական զինվորի համազգեստ կար, իր «շարմանկան» կիսաստպոռա էր նվագում: Երբ նրա մոտով անցնելիս մի քանի մետաղադրամ նետեցի և ցրված հայացքով նայեցի դեմքին, ինձ թվաց, թե ճանաչում եմ այդ մարդուն: Ես նրա հետ խոսակցության չբռնվեցի, քանի որ ո՛չ այն ժամանակ, ո՛չ էլ հիմա չեմ համարձակվում իմ կոտորված գերմաներենով փողոցում ինչ-որ մեկի հետ առաջինը խոսակցություն սկսել:

Երբ գործերս վերջացնելուց հետո նույն ճասնապարհով հետ էի դառնում, հաշմանդամը դեռ իր նախկին տեղում էր: Ես քայլերս դանդաղեցրի և սևեռուն նայեցի նրա դեմքին՝ փորձելով հիշել, թե որտեղ եմ տեսել այդ մարդուն: Բայց այս անգամ էլ հիշողությունս ինձ դավաճանեց: Միայն բավականին ուշ, երբ նստած էի «Ռոմանիչե» սրճարանում, հիշեցի, որ նա այն տիկնոջ ամուսինն էր, որը մի քանի տարի առաջ Կոնստանդնուպոլսում եկել էր ինձ մոտ, որպեսզի իրեն բժշկական օգնություն ցույց տամ: Նրա ամուսինը, որքան հիշում եմ, նախկին ռուս սպա էր, որը բարոն Վրանգելի բանակի հետ արտագաղթել էր Կոնստանդնուպոլիս:

Կամաց-կամաց հիշեցի նաև, որ այդ կնոջ ուսը դուրս էր ընկած, իսկ մարմինը պատված էր կապտուկներով: Մինչ ես ուսը տեղը կզցեի, այդ կինը հասցրեց ինձ պատմել, որ իրեն ամուսինն է ծեծել այն բանի համար, որ ինքն հրաժարվել է իր մարմինը մեծ գնով վաճառել մի հարուստ իսպանացի հրեայի: Բժիշկներ Վիկտորովի և Մաքսիմովիչի օգնությամբ ես մի կերպ կարգավորեցի նրա ուսը, և նա հեռացավ:

Դրանից երկու թե երեք շաբաթ անցնելուց հետո, երբ նստած էի «Սև վարդ» կոչվող ռուսական ռեստորանում, այդ կինը նորից մոտեցավ ինձ: Ցույց տալով սեղաններից մեկի մոտ նստած մի տղամարդու՝ նա ասաց. «Ահա նա՛ է իմ ամուսինը: Ես նորից միացա նրա հետ: Նա վատ մարդ չէ, պարզապես երբեմն կորցնում է ինքնատիրապետումը»: Հետո նա հեռացավ, և ես, աչքերով ուղեկցելով նրան, վերջապես հասկացա նրա ով լինելը: Այդ ռեստորանում մնալուս մնացած ընթացքում ես աչքս

չէի կտրում նրա ամուսնուց, քանի որ ինձ հետաքրքրում էր մարդկանց հազվադեպ պատահող այդ տիպը:

Եվ այդ նույն ռուս սպան՝ առանց ոտքերի և գերմանացի զինվորի համազգեստը հագին, պտտում էր կոտրած «շարմանկայի» բռնակը և մանր մետաղադրամներ հավաքում: Մի օրվա ընթացքում սրտացավ անցորդները պատերազմի այդ դժբախտ զոհի գլխարկը լցնում էին դրամներով:

Ահա թե ով է իսկական ֆակիրը՝ այդ բառի այն իմաստով, որ դրան տալիս են Ասիայի բնակիչները: Իսկ ինչ վերաբերում է նրա ոտքերին, ապա ես կլինդրեի Աստծուն, որ նա ինձ այնպիսի ամուր ու առողջ ոտքեր տա, ինչպիսիք նա ուներ...

Բայց բավական է այս մասին, հիմա վերադառնանք մեր նախկին պատմությանը:

Եվ այսպես, մենք նկատեցինք այդ ազնավուրյանին և ողջունելով նրան՝ նստեցինք գետնին՝ նրա կողքին: Նախքան մեր ուզած հարցերը տալը՝ մենք խոսակցությունը սկսեցինք հեռվից՝ պահպանելով այդ վայրերում ընդունված քաղաքավարության ավանդական կանոնները:

Հարկ է նշել, որ այդ շրջանի բնակիչների հոգեբանությունը սկզբունքորեն տարբերվում է եվրոպացիների հոգեբանությունից: Վերջիններս ինչ մտածում են, այն էլ նրանց լեզվի ծայրին է: Իսկ ասիացիների մոտ դա ընդունված չէ, նրանց հոգեբանությունն ամբիվալենտ է: Որքան էլ սիրալիր ու գրկաբաց ընդունեն ձեզ այդ ժողովուրդների ներկայացուցիչները, միաժամանակ ներքուստ կարող են ձեզ ատել իրենց ամբողջ հոգով և միայն այն մասին մտածել, թե ինչպես ձեզ ինչ-որ մի վատություն անեն:

Շատ եվրոպացիներ կան, որոնք տասնամյակներ շարունակ ապրել են ասիացիների միջավայրում և այդպես էլ չեն գիտակցել նրանց բնորոշ այդ առանձնահատկությունը. նրանց մասին իրենցով են դատում և այդ պատճառով հաճախ հայտնվում են զանազան տհաճ ու վտանգավոր իրավիճակներում, որոնցից լիովին կարելի է խուսափել: Ասիական աշխարհամասի բնիկները շատ հպարտ ու ինքնահավան են: Ամեն մի ասիացի, անկախ իր սոցիալական ու նյութական դրությունից, իր նկատմամբ ուշադրություն ու հարգանք է պահանջում:

Նրանց միջավայրում ընդունված չէ անմիջապես զրույցի բուն նյութին անցնելը: Հարկավոր է գիտալոր նյութին մոտենալ կարծես պատահաբար, իմիջիայլոց: Եթե այդ պայմանը չկատարեք, ապա լավագույն դեպքում ձեզ ցույց կտան պետք եղածի հակառակ ուղղությունը: Մյուս կողմից՝ եթե ձեզ պահեք այստեղ ընդունված պայմանականություններին համապատասխան, ապա ձեզ ոչ միայն ճիշտ ուղղություն ցույց կտան, այլև իրենց ուժերի ներածին չափ ամեն ինչ կանեն, որպեսզի ձեզ օգնեն հասնելու հենց այնտեղ, որտեղ ուզում եք:

Ուստի, մոտենալով այդ մարդուն, մենք միանգամից չսկսեցինք հարցուփորձ անել այն ծառատեսակների մասին, որ փնտրում էինք, այլ պահին հարմար խոսակցություն բացեցինք:

Նստելով գետնին՝ այդ ծերունու շուրջը՝ մեր զրույցը սկսեցինք շրջապատի գեղեցիկ տեսարանները զովաբանելով, հետո պատմեցինք մեր ու մեր ճամփորդության նպատակի մասին, նկարագրեցինք այն դժվարին կացությունը, որում հայտնվել ենք մեր ուղեկցորդին կորցնելուց հետո և միայն ամենավերջում, կարծես իմիջայլոց, ես հայտնեցի, որ հիմա մենք այնպիսի ծառեր ենք փնտրում, որոնցից հնարավոր կլիներ լաստանավ պատրաստել, բայց մինչև հիմա չենք գտել:

Դրան ի պատասխան նա մեզ ցավակցեց, հետո հայտնեց, որ ինքն էլ չգիտի, թե որտեղ են աճում այդպիսի ամուր փայտ ունեցող ծառեր, քանի որ վերջերս է եկել այստեղ, բայց փոխարենը ճանաչում է մի պատվարժան մարդու՝ իր հոգևոր ուսուցչին, որը պետք է որ գիտենա նման ծառերը տեղը: Նա ապրում է բլրից այն կողմ գտնվող քարանձավում և քաջածանոթ է այս վայրերին:

Մեր զրուցակիցը տեղից վեր կացավ, որ հեռանա, բայց դուկտոր Սարիօղլին նրան պահեց և հարցրեց, թե մենք կարո՞ղ ենք գնալ այդ մարդու մոտ և նրանից իմանալ այն, ինչ մեզ պետք է: Իսկ նա բացականչեց. «Օ, իհարկե, եկեք միասին գնանք: Իմ ուսուցիչը սուրբ մարդ է. նա միշտ ուրախ է բարի գործ կատարել մերձավորի համար»:

Ճամփա ընկնելով մեր այդ նոր ծանոթի հետ՝ դեռ հեռվից մենք նկատեցինք մեկին, որը ծառերի ստվերում նստած էր գետնին: Մեր ուղեկիցը շտապեց մեզնից առաջ անցնելով մոտենալ նրան և ինչ-որ բան ասել, որից հետո մեզ նշան արեց, որ մենք նույնպես մոտենանք:

Փոխադարձաբար իրար ողջունելուց հետո մենք նստոտեցինք նրա շուրջը: Այդ ընթացքում տեղի բնակիչներից մի քանի մարդ եկան և միացան մեզ: Հետագայում մենք իմացանք, որ նրանք այդ պատվարժան ազնավուրյանի աշակերտներն էին:

Այդ արժանավոր մարդու դեմքի արտահայտությունը մեզ այնքան իմաստուն ու բարեհաճ թվաց, որ մենք առանց որևէ նախաբանի ու դետուդեն ընկնելու նրան պատմեցինք, թե ճանապարհին ինչ է պատահել մեզ հետ և խնդրեցինք հուշել, թե ինչ անենք հետո և ինչպես դուրս գանք այդտեղից: Չմոռացանք հայտնել նաև մեր արշավի նպատակը: Ուշադրությամբ մեզ լսելուց հետո նա մի փոքր մտածեց և ասաց, որ այն գետը, որի ափին հայտնվել ենք, Չիտրալ գետի վտակն է: Չիտրալը գնում և խառնվում է Քաբուլ գետին, Քաբուլն էլ իր հերթին՝ Ինդոս գետին: Նա հայտնեց, որ այդտեղից դուրս գալու մի քանի ճանապարհ կա, բայց բոլորն էլ շատ հոգնեցուցիչ են, այնպես որ ավելի լավ է առաջնորդվենք մեր կազմած պլանով: Եթե մեզ հաջողվի խուսափել տեղական այն ցեղախմբերին հանդիպելուց, որոնք այնքան էլ չեն սիրում եվրոպացիներին, ապա այդ պլանը լավագույնն է, ինչ կարելի էր մտածել: Իսկ ինչ վերաբերում է այն ծառատեսակներին, որոնք մենք պիտանի ենք համարում լաստ պատրաստելու համար, ապա դրանք իրենայնքան էլ հարմար չեն թվում այդ նպատակի համար: Նա մեզ խորհուրդ տվեց կեռասենին ընտրել, որոնցից շատ է աճում այն արահետի ձախ կողմում, որով գնացել էինք իր մոտ:

Հանկարծ մոտակայքում ինչ-որ աղմուկ բարձրացավ, որից մենք փշաքաղվեցինք: Մակայն մեր խստաբարո զրուցակիցն անվրդով թեքեց գլուխը և ինչ-որ պայմանական ազդանշան տվեց: Անտառից դուրս եկավ մի հսկայական գորշ արջ, որն իր երախում ինչ-որ բան էր բռնել: Նա անշտապ մոտեցավ մեզ, ապա մեր նոր ծանոթը կրկին ինչ-որ կանչ արձակեց: Դրանից հետո արջը, իր փոքրիկ փայլող աչքերով մեզ նայելով, մոտեցավ ազնավուրյանին և իր բեռը դրեց նրա ոտքերի մոտ: Հետո անշտապ շրջվեց և ուղղվեց դեպի շրջակա խիտ թփուտները:

Մենք նստել էինք քար կտրած՝ այդ բառի լրիվ իսկական իմաստով, և ամբողջ մարմնով այնպես էինք դողում, որ հստակ լավում էր մեր ատամների կափկափոցը:

Մեր նոր ծանոթը մեզ բացատրեց, որ այդ արջն իր ընկերն է և երբեմն իրեն «ջունգարի» է բերում՝ եզրիպատացորենի մի տեսակ, որն աճում է այդ վայրերում և փոխարինում է ցորենին: Սեա հենց այդ բույսից էլ արջը բերեց և դրեց ձեռունու ոտքերի մոտ:

Անգամ այդ բացատրությունը լսելուց հետո էլ անմիջապես չվերականգնվեց մեր առողջ դատելու ունակությունը, և մեր գունատված դեմքերը դեռ վկայում էին մեր ունեցած ցնցման աստիճանի մասին: Ազնավուրյանը թեթևորեն վեր կացավ խոտի վրայից և մեզ հանեց ապշահար վիճակից՝ ասելով, որ հասել է իր ամենօրյա զբոսանքի ժամը, և եթե մենք ուզում ենք, մեզ կարող է ուղեկցել մինչև այն վայրը, որտեղ կեռասենիներ են աճում:

Ադոթք անելուց հետո նա առաջ ընթացավ՝ մեզ ցույց տալով ճանապարհը: Աշակերտները մեզ հետ միասին հետևում էին իրենց ուսուցչին: Շուտով մենք իսկապես մի քանի կեռասենիներ տեսանք: Բոլորս, այդ թվում և ազնավուրյանը, սկսեցինք սողցել դրանցից ամենաբարձրերը և ուղիղ բուն ունեցողները:

Կեռասենիների մաքրված բները մենք բեռնեցինք մեր ավանակներին, որից հետո ազնավուրյանին հրավիրեցինք մեր ճամբար՝ բացատրելով, որ հատուկ սարքի միջոցով ուզում ենք արագորեն հանել նրա դիմանկարը: Նա սկզբում հրաժարվեց, բայց քանի որ աշակերտները պաշտպանեցին մեր առաջարկը, ի վերջո տեղի տվեց: Բեռնված ավանակներն առաջներս արած՝ մենք շուտով հասաք մեր ճամբարը, որտեղ մնացած մեր ընկերներն անհամբերությամբ սպասում էին մեզ: Մեր պատմածները լսելուց հետո պրոֆեսոր Սկրիդլովն իր լուսանկարչական ապարատով նկարեց այդ զարմանալի ձեռնունու և անմիջապես սկսեց երևակել ֆոտոժապավենը:

Մինչ նա դա կաներ, բոլորս կրկին շրջապատեցինք ազնավուրյանին՝ մեծ թզենու ստվերում շրջանաձև նստոտելով գետնին: Մեզ հետ էր նաև Վիտվիցկայան, որն իր վիզը կապել էր արդեն մի քանի ամիս կոկորդում ունեցած ցավերի պատճառով, ինչը հազվադեպ երևույթ չէ լեռնային պայմաններում: Այդ հիվանդությունը նրա մոտ հանգեցրել էր խալիպի առաջացման:

Նրան այդ վիճակում տեսնելով, ազնավուրյանը նրան հարցուփորձ արեց հիվանդության մասին, գննեց ուռուցքը և սկսեց այն շփել հատուկ ձևով՝ միաժամանակ շնջալով ինչ-որ խոսքեր:

Դժվար է նկարագրել մեր զարմանքը, երբ քսան բոպե հետո ուռուցքը սկսեց փոքրանալ, իսկ ևս որոշ ժամանակ անցնելուց հետո բոլորիս աչքի առջև այն ամբողջովին չքացավ:

Այդ ժամանակ մեզ միացավ Սկրիդլովը, որն ավարտել էր աշխատանքը և զարմացած էր ոչ պակաս, քան մենք, որ այդ արագ ապաքինման ակնատեսներն էինք: Խոնարհաբար նա խնդրեց

ազնավորյանին, որ նա իրեն բուժի ցավի նուպաներից, որոնք վերջին մի քանի օրերին ունենում էր հավանաբար երիկամախիթերի պատճառով:

Բոլոր ախտանիշները նրանից իմանալուց հետո մեր հյուրն իր աշակերտներից մեկին անհապաղ ինչ-որ տեղ ուղարկեց: Վերջինս շուտով վերադարձավ և իր հետ բերեց մեզ անհայտ ինչ-որ թփի արմատներ: Դրանք տալով պրոֆեսորին՝ ազնավորյանն ասաց. «Կվերցնեք մի բաժին մանրացված արմատ և երկու բաժին թզենու կեղև, որն այստեղ ամենուրեք աճում է. կթրմեք եռացրած ջրի մեջ և երկու ամսվա ընթացքում օրումեջ քնելուց առաջ մի բաժակ դրանից կխմեք»: Հետո նա իր աշակերտների հետ սկսեց դիտել լուսանկարները, որոնք ակնհայտորեն նրանց զարմանքն էին հարուցել: Մենք մեր հյուրերին հրավիրեցինք ճաշի, որը բաղկացած էր այժի թարմ մսից ու զարու լավաշից, և նրանք հաճույքով ընդունեցին մեր հրավերը:

Այդ ընթացքում կայացած զրույցից պարզվեց, որ այդ մարդը եղել էր աֆղանական էմիրի՝ ներկայիս էմիրի պապի հրաձգային զորքի կապիտան և վաթսուն տարեկան հասակում մարտերից մեկի ժամանակ ծանր վիրավորվել է: Բուժվելու համար մեկնել է իր հայրենիքը՝ Խորասան: Բայց վերքերից լրիվ ապաքինվելուց հետո այլևս չի ուզեցել վերադառնալ զինվորական ծառայությանը, որին տվել էր համարյա ամբողջ կյանքը, այլ մնացած տարիները որոշել է նվիրել իր հոգու փրկության գործին: Սկզբում ծանոթացել է պարսիկ դերվիշների հետ, հետո որոշ ժամանակ տարվել է բապտիզմով, ապա մենաստան է ընդունվել Քաբուլի մոտակայքում: Հասնելով այն բանի զիտակցմանը, ինչն իրեն իսկապես անհրաժեշտ է և համոզվելով, որ մարդկանցից դա չի կարող ստանալ, նա սկսել է փնտրել մի խաղաղ, մեկուսի վայր: Այդ վայրը նա գտել է այստեղ և իր մի քանի հետևորդների շրջապատում սպասում է իր մահվան ժամին, քանի որ արդեն լրացել է իր 98 տարին:

Երբ նա արդեն ուզում էր հրաժեշտ տալ մեզ, Ելովը դիմեց նրան և խնդրեց մի միջոց առաջարկել աչքերի ցավի դեմ: Մի քանի տարի առաջ անդրկասպյան շրջանում նա հիվանդացել էր տրախոմայով, և, չնայած ստացած բուժմանը, հիվանդությունը խրոնիկական էր դարձել: «Թեև աչքերս առանձնապես շատ չեն անհանգստացնում ինձ, այնուհանդերձ ամեն առավոտ ինչ-որ փառով են պատվում, իսկ եղանակի կտրուկ փոփոխությունների ժամանակ կամ փոշի ընկնելու դեպքում սկսում են ցավել»- ասաց նա: Ծեր ազնավորյանն իմ այդ ընկերոջը խորհուրդ տվեց լավ մանրացնել պղնձարջասպը և ամեն երեկոյան քնելուց առաջ սեփական թքով թացացնելով ասեղի ծայրը՝ թաթախել այդ նյութի փոշու մեջ և դրանով գիծ քաշել թարթիչների միջև. ընդ որում այդ գործողությունը նա պետք է կրկներ երկար ժամանակի ընթացքում:

Այդ խորհուրդը տալուց հետո պատվարժան ծերունին վեր կացավ տեղից, օրհնեց բոլոր ներկաներին և ճամփա ընկավ դեպի իր խրճիթը: Բոլորը, ներառյալ նաև մեր շները, նրա ուղեկիցներն էին ամբողջ ճանապարհին:

Այդ ճանապարհին նույնպես զրույց սկսեցինք, և հանկարծ Կարպենկոն դիմեց ազնավորյանին՝ ուրբեկերենով նրան ասելով հետևյալը. «Հա՛յր, ճակատագրի բերումով ձեզ հետ՝ մի մարդու հետ, որը հասել է կատարելության և իմացել բարձրագույն ճշմարտություններ, մենք հանդիպեցինք այսքան անսովոր հանգամանքներում և հույս ունենք, որ դուք չեք մերժի մեզ մի խորհուրդ տալ: Մենք ուզում ենք իմանալ, թե ինչպե՞ս ապրենք հետագա կյանքում, ի՞նչ գաղափարներով առաջնորդվենք»:

Նախքան այդ անսպասելի խնդրանքին պատասխանելը՝ ծերունին շուրջը նայեց, կարծես ինչ-որ բան էր փնտրում, որից հետո քայլերն ուղղեց դեպի մի վայր ընկած ծառի բունը: Նա նստեց այդ բնի վրա, իսկ երբ բոլորը մոտեցան և նստոտեցին բնին և գետնի վրա, նա սկսեց խոսել՝ իր խոսքն ուղղելով բոլորին:

Նրա այդ խորհուրդը վերածվեց մի երկար քարոզի, որը շատ հետաքրքիր էր և ուսանելի: Ես անպայման թղթին կհանձնեմ այն ամենը, ինչ այդ ժամանակ լսեցի ազնավորյանից, իմ երրորդ գրքի այն գլխում, որը կանվանեմ այսպես. «Մարդու աստեղային մարմինը և դրա պահանջումներն արվարարման հնարավորությունները»: Իսկ այստեղ միայն կանդրադառնամ այն բուժումների արդյունքներին, որոնք կատարեց կամ հանձնարարեց այդ պատվելի մարդը, և որոնց արդյունավետության մեջ ես համոզվեցի իմ սեփական փորձով:

Վիտվիցկայայի հիվանդությունը, որը նրան տանջել էր մի քանի ամիս, այլևս երբեք իրեն զգացնել չտվեց: Պրոֆեսոր Սկրիդլովը չգիտեր, թե ինչպես իր շնորհակալությունը հայտնի այն մարդուն, որն ընդմիջտ իրեն ազատել էր երիկամների ցավերից: Իսկ Ելովի տրախոման անցավ մեկ ամսից:

Այդ հանդիպումից հետո, որը ցնցել էր բոլորին, մենք ևս երեք օր մնացինք այդ վայրում, որպեսզի ինչպես հարկն է նախապատրաստվենք մեր վտանգավոր ձեռնարկմանը: Մենք մի մեծ լաստ պատրաստեցինք և պաշար վերցրինք երկարատև ճամփորդության համար: Վաղ առավոտյան լաստն իջեցրինք ջրի մեջ, բարձրացանք դրա վրա և հրվեցինք ափից: Սկզբում մեր յուրահատուկ նավը ոչ միշտ էր ինքնուրույն կարողանում շարժվել հոսանքով. որոշ տեղերում հարկ էր լինում հրել և ձեռքերով առաջ տանել այն, բայց որքան գետը խորանում էր, այնքան մենք ավելի արագ էինք առաջ լողում, և շուտով սլանում էինք կատաղի արագությամբ:

Չի կարելի ասել, թե մենք մեզ անվտանգ էինք զգում, հատկապես այն տեղերում, երբ լաստն անցնում էր գետի նեղացող մասերով և բախվում գետի ժայռոտ ափերին, բայց հետո, երբ բավարար չափով համոզվեցինք մեր անսովոր նավի ամրության մեջ, մեզ ավելի վստահ էինք զգում և անգամ սկսեցինք ձեռն առնել մեկս մյուսին: Մեր ճամփորդությունն ավելի հարմարավետ դարձավ ինժեներ Սամսոնովի մի գյուտի շնորհիվ. նա առաջարկեց տիկերից երկուսը կապել լաստի քթամասում, ինչպես նաև երկուական հատ ամեն կողքից: Դրանք թափարգելի դեր էին կատարում քարերի ու ժայռերի հետ բախման ժամանակ:

Ճամփորդության երկրորդ օրը մեզ վիճակվեց փոխհրաձգության մեջ ընկնել մի ավազակախմբի հետ, որը բաղկացած էր տեղացիներից՝ գետի առափնյա մի ցեղախմբի ներկայացուցիչներից:

Այդ փոխհրաձգության ժամանակ ծանր վիրավորվեց Պյոտր Կարպենկոն և երկու տարի հետո մահացավ Ռուսաստանում դեռևս շատ երիտասարդ տարիքում:

Թող Տերը խաղաղություն տա քո հոգուն, հավատարի՛մ ընկեր...

Գլուխ Թ Պրոֆեսոր Սկրիդլով

Հնէաբանության պրոֆեսոր Սկրիդլովի հետ, որն իմ ընկերն ու համախոհը դարձավ, ես ծանոթացել եմ արդեն հասուն տարիքում: Նա տարիքով ինձնից բավականին մեծ էր և, ի խոր ցավ ինձ, հեղափոխական հուզումների ժամանակ անհետ կորավ Ռուսաստանում:

Ինչպես արդեն պատմել եմ Յուրի Լյուբովեցկուն նվիրված գլխում, մեր առաջին հանդիպումը կայացավ, երբ պրոֆեսորն ինձ որպես ուղեկցորդ վարձեց Կահիրեի շրջակայքին ծանոթանալու համար:

Դրանից հետո շատ շուտով ես նրան հանդիպեցի հինավուրց Թեբեում, որտեղ Յուրի Լյուբովեցկու հետ մենք ավարտում էինք մեր առաջին համատեղ արշավը, և այդտեղ պրոֆեսոր Սկրիդլովը միացավ մեզ, որպեսզի պեղումներ կատարի:

Մենք այդտեղ մնացինք երեք շաբաթ՝ պեղումներից ազատ ժամանակը նվիրելով տարբեր վերացական թեմաներ շոշափող զրույցներին: Չնայած մեր տարիքների զգալի տարբերությանը՝ շուտով մենք մտերիմ ընկերներ դարձանք, և երբ իշխան Լյուբովեցկին մեկնեց Ռուսաստան, մենք իրար հետ որոշեցինք համատեղ երկարատև ճամփորդություն ձեռնարկել:

Թեբեից մենք ուղղություն վերցրինք դեպի Նեղոսի ակունքները, այնտեղից էլ անցանք Աբիսինիա, որտեղ մնացինք երեք ամիս, որից հետո, կտրելով Կարմիր ծովը, մոտեցանք Սիրիային և մեր արշավն ավարտեցինք Բաբելոնի ավերակների մոտ: Չորս ամիս իրար հետ անցկացնելուց հետո պրոֆեսոր Սկրիդլովը մնաց այդտեղ, որպեսզի շարունակի իր պեղումները, իսկ ես, երկու պարսիկ գորգավաճառների ուղեկցությամբ (որոնց հետ պատահաբար հանդիպել և հինավուրց պարսկական գորգերի նկատմամբ սիրուց դրդված՝ ընկերացել էի Բաբելոնի մերձակայքում) Մեսոպոտամիան անցնելով, հասա Սպահան:

Պրոֆեսոր Սկրիդլովի հետ իմ հաջորդ հանդիպումը տեղի ունեցավ երկու տարի հետո Օրենբուրգում՝ դեպի Սիբիր մեծ արշավի մեկնակետում, որը նախաձեռնվել էր «Ճշմարտություն որոնողների ընկերության» առաջադրած նպատակով: Այդ ընկերության մասին ես արդեն մի քանի անգամ հիշատակել եմ այս գրքի նախորդ գլուխներում:

Այդ ճամփորդությունից հետո մենք բավական հաճախ ենք հանդիպել՝ միասին մասնակցելով տարբեր տևողություն ու բարդություն ունեցող արշավների. եղել են երկարատև բաժանումներին հաջորդող պատահական կարճատև հանդիպումներ, որոնց ընթացքում մենք տպավորություններ ենք փոխանակել բաժանումների ընթացքում մեր իմացած նոր բաների մասին:

Ես հնարավորինս մանրամասն կնկարագրեմ մեր այդպիսի հանդիպումներից մեկը և դրան հետևած երկարատև համատեղ ճամփորդությունը, որի ընթացքում պրոֆեսոր Սկրիդլովը կատարսիսի պես մի բան ապրեց, որը փոխեց նրա ամբողջ հոգեկառույցը: Դրանից հետո նա սկսեց գործել՝ առաջնորդվելով ոչ միայն տրամաբանական մտահանգումներով, այլև ենթարկվելով իր հույզերին ու բնագոյներին: Վերջիններս անգամ սկսեցին գերակշռել նրա վարքի մեջ և, այսպես ասած, խաղալ առաջին ջութակի դեր:

Բոլորովին պատահաբար Ռուսաստանում ես Սկրիդլովին հանդիպեցի այն բանից կարճ ժամանակ անց, երբ հեռացա Կոնստանդնուպոլսից, որտեղ այցելել էի իշխան Լյուբովեցկուն: Այնտեղից Անդրկովկաս գնալուս ճանապարհին ես մի անգամ նստել էի մի կայարանային բուֆետում և «տավարի մտով» կոտլետ էի անուշ անում՝ պատրաստված ձիու մսից, որը երկաթուղային բուֆետներին մատակարարում են Կազանի թաթարները: Հանկարծ ինչ-որ մեկը բարեկամաբար իր ձեռքը դրեց ուսիս: Ես շրջվեցի և տեսա ընկերոջս՝ պրոֆեսոր Սկրիդլովին:

Մեր գրույցից պարզվեց, որ նա նույն գնացքի ուղևոր է, ինչ որ ես, և գնում է տեսնելու իր աղջկան, որը Պյատիգորսկում հանքային ջրերով բուժում է ստանում:

Ուրախանալով այդ պատահական հանդիպումով՝ մենք որոշեցինք մնացած ճանապարհը միասին անցնել, և պրոֆեսոր Սկրիդլովն իր երկրորդ կարգի վագոնից տեղափոխվեց երրորդ կարգ, որով ես էի գնում: Այնուհետև ամբողջ ճանապարհին մենք գրուցում էինք:

Նա պատմեց, որ Բաբելոնի ավերակները զննելուց հետո նորից վերադարձել է Թեբե և այնտեղ շարունակել իր պեղումները: Ճամփորդություններով ու հնէաբանական ուսումնասիրություններով հագեցած երկու տարվա ընթացքում նա շատ գիտական բացահայտումներ էր արել և իմացել բազմաթիվ հետաքրքիր բաներ, բայց հետո ահավոր կարոտել էր Ռուսաստանն ու իր երեխաներին և որոշել որոշ ժամանակով հայրենիք վերադառնալու համար ժամանակավորապես ընդհատել իր գիտական պրպտումները:

Հասնելով Ռուսաստան՝ նա սկզբից մեկնել էր Սանկտ Պետերբուրգ, այնտեղից էլ Յարոսլավլ, որ այցելի ավագ դատերը, իսկ հիմա գնում էր կրտսերին տեսնելու, որն իր բացակայության ընթացքում երկու թռռ էր պարզնել իրեն: Թե ինչքան էր մնալու Ռուսաստանում, և թե հետո ինչ էր անելու, նա դեռ չգիտեր:

Ես էլ իմ հերթին պատմեցի նրան, թե ինչպես եմ անցկացրել մեր բաժանումից հետո անցած երկու տարին: Տարվելով իսլամով՝ ես բավական շատ հնարամտություն էի բանեցրել. կարողացել էի մուսուլման գործել Մեքքա և Մեդինա, ուր քրիստոնյաները մուսուլման չունեն: Ես հույս ունեի, որ այդ կրոնի սիրտը հաղիսացող այդ վայրերում կգտնեմ ինձ տանջող հարցերի պատասխանները:

Բայց իմ բոլոր ջանքերն իզուր անցան, և ես ոչ մի էական բան չիմացա: Ինձ համար պարզ դարձավ, որ թե այդ կրոնն իր մեջ ինչ-որ գաղտնիք ունի, ապա այն պետք է փնտրել ոչ թե Մեքքայում կամ Մեդինայում, այլ Բուխարայում, որտեղ ամենասկզբում կենտրոնացված է եղել այդ կրոնին վերաբերող ամեն ինչը՝ բոլոր գիտելիքներն ու սրբազան տեքստերը: Քանի որ ես չէի կորցրել բարձրագույն ճշմարտության հետ հաղորդակցվելու իմ հույսը, ես որոշեցի Բուխարա գնալ ուխտավորների մի խմբի հետ, որոնք Մեքքա և Մեդինա ուխտի գնալուց հետո վերադառնում էին տուն, և որոնց հետ ես միտումնավոր կերպով հաստատել էի ամենաբարի հարաբերություններ:

Հետո պրոֆեսոր Սկրիդլովին պատմեցի այն մասին, թե ինչն է խանգարել Բուխարա մտնելու իմ պլանի իրականացմանը՝ այն մասին, թե ինչպես իշխան Լյուբովեցկու խնդրանքով, ում հանդիպել էի Կոնստանդնուպոլսում, մի աղջկա այնտեղից ուղեկցեցի մինչև իշխանի՝ Տամբովում ապրող քրոջ տունը: Այդ գործն անելուց հետո ես ցանկացել էի այցելել ծնողներիս և որոշ ժամանակ մնալ Անդրկովկասում, որից հետո հարկ եղած ձևով նախապատրաստվել դեպի Բուխարա տանող ոչ դյուրին ճամփորդությանը և այնտեղ մեկնել... «ձեր ընկեր Սկրիդլովի հետ միասին»,- իմ փոխարեն խոսքս ավարտեց պրոֆեսորը:

Նա նաև ասաց, որ արդեն երեք տարի է, ինչ երագում է լինել Բուխարայում և Սամարղանդում, որպեսզի ստուգի Թամերլանի հետ կապված որոշ պատմական փաստեր և դրանով լույս սփռի

պատմության որոշ մութ էջերի վրա: Վերջին ժամանակներում նրա այդ ցանկությունն ավելի է ուժեղացել, և հապաղման միակ պատճառը հարմար ուղեկցի բացակայությունն է եղել: Իսկ հիմա, իմանալով, որ ես պատրաստվում եմ մեկնել իրեն հետաքրքրող շրջանը, նա ինձ հայտնեց, որ ուրախ կլինի ընկերակցելու ինձ, եթե ես որևէ առարկություն չունեմ:

Երկու ամիս անց, նախնական պայմանավորվածության համաձայն հանդիպելով Թիֆլիսում, այնտեղից մեկնեցինք դեպի անդրկասպյան շրջան՝ վերջնական նպատակակետ ունենալով Բուխարան, սակայն, հասնելով հինավուրց Մերվի ավերակներին, ուղիղ մի տարի անցկացրինք այնտեղ:

Որպեսզի բացատրեմ, թե ինչու այդպես ստացվեց, ես պետք է ասեմ, որ նախքան իրար հետ Բուխարա մեկնելու որոշում կայացնելը ես ու պրոֆեսորը հաճախ էինք երազում ու պլաններ կազմում առ այն, թե ինչպես հասնենք Քաֆիրստան՝ մի երկիր ուր եվրոպացիները բացարձակապես մուտք չունեն, և այդ պատճառով էլ այն այդքան գայթակղիչ է:

Մեր այդ ցանկությունն առավել էր ուժգնանում այն պատճառով, որ համաձայն մեր հավաքած տեղեկությունների, որոնք ստացել էինք՝ բազմաթիվ մարդկանց հետ շփվելով, միանգամայն հնարավոր էր, որ հենց այդտեղ թաքնված լինեին մեզ հուզող ինչպես հոգեբանական, այնպես էլ հնէաբանական բնույթի հարցերի պատասխանները:

Թիֆլիսում մենք սկսեցինք նախապատրաստել դեպի Բուխարա մեր անսովոր արշավի համար անհրաժեշտ ամեն ինչ՝ ներառյալ նաև հանձնարարական նամակներ, հանդիպեցինք ու զրուցեցինք այդ տարածքին լավ ծանոթ բազմաթիվ մարդկանց հետ:

Այդ հետաքրքիր ու բովանդակալից զրույցների արդյունքում Քաֆիրստանում հայտնվելու մեր ցանկությունն այնքան ուժեղացավ, որ բուռն քննարկումներից հետո մենք որոշեցինք այնտեղ մեկնել անմիջապես Բուխարայից վերդառնալուց հետո:

Մեր բոլոր մնացած ցանկություններն ու հետաքրքրությունները ցնդեցին ծխի պես. Թուրքեստան տանող ամբողջ ճանապարհին մենք մտածում ու խոսում էինք միայն այն մասին, թե ինչպես իրականացնենք այդ խիզախ ձեռնարկումը: Սակայն մեր ֆանտաստիկ պլանները որոշակի կերպարանք ստացան միայն որոշ ժամանակ անցնելուց հետո, հետևյալ հանգամանքներում:

Երբ մեր գնացքը կանգ առավ Նոր Մերվում, ես գնացի բուֆետ, որպեսզի թեյի համար տաք ջուր վերցնեմ, և հետ գալուս ճանապարհին ինձ հանկարծ կանգնեցրեց մեկը, որն անմիջապես փաթաթվեց ինձ:

Պարզվեց, որ դա իմ վաղեմի հույն ընկեր, մասնագիտությամբ դերձակ Վասիլակին է, որն արդեն երկար ժամանակ Մերվում էր ապրում: Իմանալով, որ ճամփի վրա եմ և գնում եմ Բուխարա, նա ինձ աղաչեց, որ մնամ մինչև վաղվա օրը և մասնակցեմ իր ընտանեկան հանդիսությանը՝ առաջնեկի կնունքին, որը պետք է տեղի ունենար այդ օրվա երեկոյան:

Հրավերն այնքան անկեղծ էր և հուզիչ, որ ես չկարողացա կտրականապես հրաժարվել և Վասիլակիին խնդրեցի մի փոքր սպասել: Գիտենալով, որ գնացքն ուր որ է պետք է շարժվի, ես, ձեռքիս եռման ջուրը ցայտեցնելով, շտապեցի իմ վագոնը, որպեսզի խորհրդակցեմ ուղեկցիս հետ:

Մինչ ես դժվարությամբ ճեղքում էի բոլոր ուղղություններով դետուղեն շարժվող մարդկանց ամբոխը, պրոֆեսորը, ինձ տեսնելով հարթակի վրա, ձեռքը թափահարելով գոչեց. «Ես արդեն հավաքել եմ քո իրեղենը, մոտեցիր պատուհանին, որ փոխանցեմ»:

Հավանաբար նա տեսել էր, որ հանդիպել եմ իմ հին ծանոթին և գլխի էր ընկել, որ դրան հրավերք է հետևելու: Մինչ ես կրկին շտապ-շտապ ամբոխի միջով մոտենում էի պատուհանին, որ իրերս վերցնեմ, պարզվեց, որ այդ շտապողականությունը բոլորովին անիմաստ է, քանի որ մեր գնացքն այդ կայարանում դեռ երկու ժամ պետք է կանգնի, մինչև վերականգնվի Կուշկայի հետ կապը, որն ընդհատվել էր ինչ-որ պատճառով:

Երեկոյան՝ կնունքի կրոնական ծեսին հետևած ընթրիքի ժամանակ, ես նստած էի մի ծերունու կողքին, որը մեր հյուրասեր տանտիրոջ ընկերն էր և քոչվոր թյուրքական ցեղի ներկայացուցիչ: Նա ցեղական մերիմոսյան ոչխարների մի հսկայական հոտ ուներ: Մեր միջև անկաշկանդ զրույց սկսվեց, որի ընթացքում ծերունին ինձ պատմեց Քաֆիրստանում բնակվող բազմաթիվ անկախ ցեղերի մասին: Ընթրիքից հետո, որի ժամանակ ոչ քիչ քանակությամբ ռուսական օղի էր հոսել, մեր զրույցը դեռ շարունակվում էր, և պատվելի ծերունին, որևէ մեկին չդիմելով, կարծես ինքն իր համար ասաց մի բան, որը ես աշխատեցի պահել իմ հիշողության մեջ:

Նա հայտնեց, որ չնայած Քաֆիրստանի բնակիչների ունեցած համարյա բնագրական թշնամությանը, որն այնտեղ տածվում է բոլորի նկատմամբ, ուլքեր իրենց ցեղին չեն պատկանում, նրանք այնուամենայնիվ շարունակում են գոյակցել և անգամ հաղորդակցվել իրար հետ. նաև ասաց, որ անկախ այն բանից, թե որ ցեղախմբին է պատկանում տվյալ մարդը, եթե նա իրեն նվիրել է Ալլահի սպասավորությանը, հարգանք է առաջացնում իր նկատմամբ և անգամ համակրանք, և նրան հարգում են ոչ միայն իր ցեղակիցները, այլ նաև ուրիշ ռասաների կամ ժողովուրդների ներկայացուցիչները:

Հաշվի առնելով ասվածը և քննարկելով բոլոր տարբերակները՝ մենք որոշեցինք, որ այդ երկիր պետք է մուտք գործենք ոչ որպես հասարակ մահկանացուներ: Մենք պետք է ներկայանանք որպես այնպիսի մարդիկ, որոնք հատուկ հարգանքի են արժանի և կարող են առանց կասկածներ հարուցելու ազատորեն տեղաշարժվել ամեն տեղ:

Հաջորդ երեկոյան, Նոր Մերվի մի թեյարանում նստած, մենք շարունակում էինք մշակել մեր խիզախ ձեռնարկման ամենափոքր մանրամասները՝ ուշադրություն չդարձնելով մեր շուրջը տեղի ունեցող բաների վրա: Մինչդեռ թեյարանում տիրող իրադրությունը շատ հեռու էր մտորումների համար հարմար լինելուց: Թուրքերի երկու ընկերախմբեր հարևան սեղանների շուրջ բավականին գինովցած էին և զվարճանում էին պարող տղաների ընկերակցությամբ, որոնց հիմնական մասնագիտությունը տեղական օրենքներով միանգամայն թույլատրված էր և ակներև էր բոլոր ներկաների համար: Եվրոպայում այդ գործով զբաղվում են այն կանայք, որոնք դեղին տոմս ունեն:

Եվ այսպես, մենք հանգեցինք այն մտքին, որ պրոֆեսոր Սկրիդլովը պետք է ներկայանա որպես պատվարժան պարսիկ դերվիշ, իսկ ես լրիվ կարող էի Մուհամեդի անմիջական հետնորդի տեղ անցնել:

Այդ դիմակահանդեսին հարկ եղածին պես նախապատրաստվելու համար պահանջվում էր երկար ժամանակ և մի խաղաղ ու մեկուսի վայր: Ուստի մենք որոշեցինք բնակություն հաստատել հինավուրց Մերվի ավերակների մերձակայքում, որը լիովին համապատասխանում էր մեր պահանջներին և մեզ հնարավորություն կտար նախապատրաստությունից ազատ ժամանակ քիչումիչ զբաղվել նաև պեղումներով: Նախապատրաստության գործը հիմնականում սրբազան պարսկական կրոնական տեքստեր անգիր անելն էր և տեղական խոսակցականին տիրապետելը, որը լի է պատկերավոր արտահայտություններով ու այլաբանություններով: Նաև մեր մազերը պետք է հարկ եղած չափով աճեին, որպեսզի նմանվեինք այն մարդկանց, ում պետք է ներկայացնեինք: Այդ հարցերում փոքրագույն անձշտությունը կարող էր մահացու վտանգ դառնալ մեզ համար:

Միայն ամբողջ մի տարի ջանադիր պատրաստվելուց հետո մենք մեզ բավարարված զգացինք ձեռք բերված հաջողություններով՝ ինչպես Ղուրանի սրբազան սուրահները անգիր իմանալու, այնպես էլ մեր ձեռնարկման համար անհրաժեշտ արտաքին տեսք ունենալու առումներով:

Եվ ահա մի հրաշալի առավոտ մենք լքեցինք Մերվի ավերակները, ոտքով հասանք Կենտրոնական ասիական երկաթուղու Բայրամ-Ալի կայարանը և նստեցինք Չարջոու տանող գնացքը: Այնտեղից ուղղություն վերցրինք դեպի Ամուդարյայի ակունքները:

Այդ գետը նախկինում Օկսուս է կոչվել և սրբացվել է Կենտրոնական Ասիայի որոշ ժողովուրդների կողմից, քանի որ դրա ափերը համարվել են ժամանակակից քաղաքակրթության ծագման վայրը: Եվ ահա, այդ գետի ափերով պրոֆեսոր Սկրիդլովի հետ դեպի վեր ճամփորդելու ընթացքում տեղի ունեցավ մի իրադարձություն, որը թեև անսպասելի կարող էր լինել եվրոպացիների համար, բայց լրիվ համապատասխանում էր նահապետական բարոյականության՝ դեռևս ժամանակակից քաղաքակրթության ազդեցությանը չենթարկված տեղական ավանդույթներին, և որին զոհ դարձավ մի շատ լավ ծեր մարդ: Այդ միջադեպը հիշելիս ես մինչև հիմա խղճի խայթ եմ զգում, քանի որ մեր պատճառով մի հարգարժան ծերունի, հավանաբար ընդմիջտ, զրկվեց իր բոլոր խնայողություններից: Ես ուզում եմ դեպի եվրոպացիների համար անմատչելի այդ երկիրը կատարած մեր ճամփորդությունը նկարագրել հնարավորինս մանրամասնորեն և դրա համար օգտվել գրական մի դպրոցի ոճից, որին հասու եմ դարձել պատանությանս տարիներին: Այդ գունագեղ ոճը հիմա էլ կա և բարգավաճում է հենց այդ նշանավոր գետի ափերին. ես այն այսպես եմ անվանում՝ նվազագույն քանակի մտքեր և առավելագույն քանակի հույզեր:

Իր վերին հոսանքում Ամուդարյան Փյանջ անունն է կրում, ապա անցնելով Հինդուքուշի միջով՝ թափվում է ներկայումս Արալյան կոչվող ծովը, թեև նախկինում, համաձայն որոշ տվյալների, թափվելիս է եղել Կասպից ծովը: Ժամանակի այն հատվածում, որին վերաբերում է իմ այս

պատմությունը, այդ գետը ողողում էր շատ երկրների ավերը՝ նախկին Ռուսաստանի Խիվինի և Բուխարայի խանությունների, Աֆղանստանի, Քաֆիրստանի, Բրիտանական Հնդկաստանի և այլն:

Նախկինում այդ գետով նավարկում էին հատուկ կառուցվածք ունեցող լաստերով, իսկ հետո, երբ այդ տարածքը զավթեց Ռուսաստանը, այստեղ երևացին նաև գետային շոգենավեր, որոնք ռազմական խնդիրներ լուծելուց զատ նաև բեռներ և ուղևորներ էին փոխադրում Արալյան ծովի և Ամուդարյայի վերին շրջանների միջև:

Եվ այսպես, ձեզ մի փոքր զվարճացնելու նպատակով ես իմ շարադրանքը սկսում եմ տանել վերը նշված գրական դպրոցի ոճով:

Ամուդարյա... Վաղորդյան հեքիաթային ժամ է: Լեռնագագաթները ոսկեգոծված են ծագող արևի քնքուշ ճառագայթներով: Բնության աստվածային այս վայրի անդորրը խաթարում են միայն գետի միալար խոխոջունն ու արթնացող թռչունների ու գազանների կանչերը: Մեր ճամփորդության իններորդ օրն է:

Առաջին երկու օրը մենք նավարկում էինք դանդաղ, բայց առանց կանգառների, իսկ երրորդ օրը երկար ժամանակով կառանվեցինք՝ սպասելով, թե երբ ուժեղ ու քմահաճ հոսանքը կքշի ավագոտ տիղմը և մեզ թույլ կտա կրկին առաջ ընթանալ:

36 ժամ հետո կրկնվեց նույն բանը, և այս անգամ արդեն մեր շոգենավը տեղում մեխված է ամբողջ երեք օր:

Ուղևորներն ու նավի անձնակազմը հաբերատար սպասում են, թե երբ կամակոր գետը բարեհաճ կգտնվի իրենց նկատմամբ և կբացի ճանապարհը:

Ոչ մի անսովոր բան չկա. այդպիսին է Ամուդարյան: Նրա հունն ամենուրեք լիքն է խոր ավազներով: Ուժեղ հոսանքներն ու ջրի անկայուն ծավալները մերթ անանցանելի ավազաթմբեր են գոյացնում ամենաանսպասելի տեղերում, մերթ քանդում են առափնյա տարածքները, ինչի հետևանքով գետի հունն անընդհատ փոխվում է:

Հոսանքին հակառակ շոգենավերը շատ դանդաղ են գնում, իսկ դեպի ներքև, ընդհակառակը, անջատված շարժիչներով սուրում են կատաղի արագությամբ:

Դուք երբեք գոնե մոտավոր չեք իմանա, թե որքան կտևի ձեր ուղևորությունը, այդ պատճառով հոսանքով դեպի վեր գնացող ուղևորները սննդամթերքի հսկայական պաշարներ են վերցնում իրենց հետ:

Մեր ճամփորդությունն ընթանում էր նավարկության համար տարվա ամենաանբարենպաստ ժամանակ, քանի որ ջրի մակարդակը շատ ցածր էր: Ձմեռնամուտ էր, աշնանային անձրևները դադարել էին, իսկ լեռներում, որտեղից սկիզբ են առնում այստեղի գետերը, արդեն ավարտվել էր զանգվածային ձնհալը:

Մեր այդ ճամփորդությունը չէր կարող հարմարավետ կոչվել նաև այն պատճառով, որ տարվա հենց այդ ժամանակ է կատարվում բեռների և ուղևորների ամենաշատ փոխադրումը: Եվ հիմա մեր ամբողջ նավը լցված է բամբակի հակերով, բանջարեղենով ու չորացրած մրգերով, որոնք աճեցվել են այս վայրերի օազիսների բարեբեր հողերում, ամենուրեք լսելի է փոխադրվող կարակուլյան ոչխարների մայունքը: Տախտակամածի մնացած ազատ մասը զբաղեցրել են Ամուդարյայով ճամփորդող ուղևորները, որոնք հիմնականում տեղացիներ են: Ոմանք վերադառնում են իրենց բնակավայրերը, ոմանք շուկա են տանում ոչխարի ու այծի պանիր, ոմանք էլ գնում են իրենց հարազատներին այցելության:

Ահա թե ինչու, երբ մենք նավ բարձրացանք, այն արդեն լիքն էր ուղևորներով, որոնց մեջ կային բուխարացիներ, խիվինցիներ, պարսիկներ, աֆղաններ և ասիական շատ այլ ազգությունների ներկայացուցիչներ:

Այդ խայտաբղետ ու շատ գունագեղ ամբոխում գերակշռում էին առևտրականները: Ոմանք իրենց ապրանքն են տանում վաճառելու, ոմանք էլ հոսանքով վեր են գնում, որպեսզի ապրանք առնեն: Հիմնականում այս տեղերից արտահանում են ոչխարի կաթից պատրաստված պանիր:

Ահա մի պարսիկ՝ իր չորացրած մրգերով, իսկ այստեղ ահա հայն է, որը ղրղըզական գորգեր է ուզում, իսկ սա լեռ շրջիկ գործակալ է, որն ուզում է մեծ քանակությամբ բամբակ գնել պոզնանյան մի ֆիրմայի համար: Այս մեկն էլ ռուսաստանյան հրեա է, որը կարակուլի մորթիներ է գնում, իսկ այս մի լիտվացի առևտրականն էլ լուսանկարների, նկարների շրջանակներ և ամեն տեսակի ոսկեգոծված մետաղներից զարդեղեն է տանում, որոնք զարդարված են արհեստական գունավոր քարերով:

Ուղևորների մեջ կան նաև բազմաթիվ պաշտոնյաներ և սահմանապահ զորքերի սպաներ, անդրկասպյան գնդի հրաձիգներ ու սակրավորներ, որոնք արձակուրդից վերադառնում են ծառայության վայր: Կա նաև զինվորի կին, որը կրծքի երեխայի հետ գնում է ամուսնու մոտ, որը որոշել է շարունակել ծառայությունը: Կաթոլիկ հոգևորական էլ կա այստեղ, որը պաշտոնապես գնում է այս վայրերում ծառայող կաթոլիկ զինվորներին խոստովանեցնելու:

Նավի վրա կան նաև նրբակիրթ տիկնայք: Մեկը գնդապետի կին է՝ լողող աղջկա հետ. նա վերադառնում է Տաշքենդից, ուր ուղեկցել էր իր կադետ որդուն, որպեսզի նրան ուղարկի Օրենբուրգի կադետական դպրոցը: Դուք այստեղ կարող եք տեսնել նաև սահմանի վրա ծառայող հեծելազորի մի կապիտանի կնոջը, որը Մերվ է հասել, որպեսզի մի քանի շրջագետս պատվիրի անուն հանած մի դերձակի մոտ: Իսկ այս մեկը զինվորական բժշկի կին է, որն իր ծառայի ուղեկցությամբ Աշխաբադից եկել է, որ այցելի ամուսնուն: Բժիշկը մենակ է ծառայում, քանի որ զոքանչը չի համաձայնել, որ իր աղջիկը բնակվի մի խուլ վայրում, որտեղ «կարգին» հասարակություն չկա:

Համբնդիհանուր ուշադրություն է գրավում մի ոչ այնքան երիտասարդ հաստամարմին կին, որն իր գլխին ներկած մազերով կեղծամ է դրել: Նրա մատանիների ու շրջագետսի կրծքազարդերի քանակությունը գերազանցում է բանական սահմանները: Այդ գռեհիկ կնոջն ուղեկցող երկու լավիկ ու ջահել օրիորդները նրան մորաքույր են ասում, բայց ոչ ոք դրանից մոլորության մեջ չի ընկնում, քանի որ նրանց ուղևորության նպատակը պարզից էլ պարզ է և լրացուցիչ բացատրությունների կարիք չի գգում:

Շոգենավի ուղևորների մեջ կան և՛ սնանկացած ազնվականներ, և՛ աղքատներ, որոնք հարստանալու հույսեր են փայփայում: Միայն Աստված գիտե, թե ինչ են որոնում նրանք այս կողմերում: Կա նաև երաժիշտների մի խումբ, որոնք անբաժան են իրենց ջութակներից ու կոնտրաբասներից:

Չարջոուի նավահանգստից դուրս գալու հենց առաջին օրվանից բոլոր այդ մարդիկ բաժանվեցին մի քանի առանձին խմբերի: Այսպես կոչված մտավորականությունը, բուրժուազիան և հասարակ մարդիկ չեն խառնվում իրար: Շփվելով միայն իրենց շրջապատի ներկայացուցիչների հետ՝ նրանք շուտով իրար հետ այնպես են հարմարվել, կարծես գտնվելիս լինեն իրենց հին ընկերների միջավայրում: Ընդ որում մի խմբավորման անդամները մյուս խմբավորման անդամներին նայում են անբահամարանքով ու վերևից կամ էլ խեղճանալով ու քաշվելով՝ կախված իրենց ունեցած հասարակական դիրքից: Միաժամանակ բոլորն էլ իրենց բավական անկաշկանդ են պահում, և կամաց-կամաց այնպես են մերվել իրենց նոր հանգրվանին, կարծես ծնված լինեին այդ շոգենավի վրա:

Թվում էր՝ ո՛չ երկարատև կանգառները, ո՛չ նավի լեփ-լեցուն լինելը ոչ մեկին չեն վրդովում, այլ ընդհակառակը, կարծես այդ երկարատև ու հոգնեցուցիչ ճանապարհորդությունը բոլորի համար մի զվարճալի զբոսանք լիներ՝ բնության գրկում խնջույքներով ու նմանատիպ զվարճություններով հագեցած:

Չենց որ պարզ է դառնում, որ շոգենավի կանգառը երկարատև է լինելու, համարյա բոլոր ուղևորները դուրս են թափվում ափ: Շատ շուտով շրջակա բնակարար գունավորվում է զանազան վրաններով ու ձեռքի տակ եղած նյութերից սարքած ծածկերով: Ամենուրեք խարույկներ են վառվում, համեղ կերակուրներ են պատրաստվում, հնչում է երգն ու երաժշտությունը: Գիշերները, որպես կանոն, ուղևորներն անցկացնում են ափին:

Առավոտյան բոլորը վերադառնում են կյանքի սովորական ռիթմին: Ինչ-որ մեկն օջախ է վառում, որպեսզի սուրճ եփի: Մի ուրիշը կանաչ թեյն է գերադասում: Ուղևորները մրջյունների պես դեսուդեն են վազվզում. անտառից խարույկի համար փայտ են բերում, ձկնորսության սիրահարներն իրենց կարթերով շարվում են գետափին, ակտիվ հանգստի սիրահարները շոգենավի շուրջ թիավարում են նավակներով: Ոչ ոք չի շտապում և անհանգստությամբ չի նայում շոգենավի կողմը, քանի որ բոլորը գիտեն, որ առանց իրենց այն տեղից չի շարժվի: Մեկնումից մեկ ժամ առաջ պետք է զանգ հնչեցվի, որը բոլորին կանչում է տախտակամած:

Նավի մեր հարևանը մի ծեր սարս էր, որը հավանաբար շատ հարուստ էր, քանի որ նրա իրերի մեջ փողերով լիքը մի քանի պարկեր կային:

Չգիտեմ, թե ներկայումս բանն ինչպես է, բայց այն ժամանակ Բուխարայում և հարևան շրջաններում բարձր արժեքով դրամներ չկային:

Օրինակ՝ Բուխարայում ամենամեծ փողը թենգեն էր՝ անկանոն ձև ունեցող մետաղի կտոր, որը համարժեք էր ֆրանսիական ֆրանկի մոտավորապես կեսին: Այդ պատճառով 50 թենգեից մեծ ցանկացած գումար մարդիկ կրում էին հատուկ պարկով կամ նույնիսկ մի քանի պարկով, ինչը շատ անհարմարություններ էր ստեղծում հատկապես ճամփորդությունների ժամանակ:

Եթե որևէ մեկն ուզենար իր ունեցած մի քանի հազար թենգեով ճանապարհ դուրս գալ, ապա դրանք պետք է բարձեր մի քանի ուղտերի կամ ձիերի վրա: Երբեմն ճանապարհորդը վարվում էր այսպես. թենգեների այն քանակությունը, որն անհրաժեշտ էր լինում տեղափոխել ինչ-որ տեղ, նա փոխանցում էր բուխարացի որևէ հրեայի և դրա փոխարեն նրանից գրություն էր վերցնում՝ ուղղված նրա ծանոթ մի ուրիշ հրեայի, որն ապրում էր նշված վայրում: Հասնելով այդ վայրը՝ ճանապարհորդը գտնում էր այն մարդուն, որին հասցեգրված է այդ գրությունը և նրանից ստանում իր ամբողջ գումարը՝ հանած ծառայության ոչ մեծ վճարը:

Եվ այսպես, հասնելով մեր շոգենավի վերջին հանգրվանին՝ Քյարքի քաղաքին, մենք տեղափոխվեցինք մեր վարձած կոբզիրի վրա և շարունակեցինք մեր ճանապարհը:

Որոշ ժամանակ անց, երբ Քյարքիից զգալիորեն հեռացել էինք, կանգառ ունեցանք Թերմիզում. այստեղ պրոֆեսոր Սկրիդլովը մի քանի օգնականների հետ ափ դուրս եկավ որպեսզի սննդամթերք հայթայթի հետագա ճանապարհի համար: Նրա հեռանալուց հետո մեր կոբզիրին մոտեցավ մի ուրիշը, որի վրա եղած հինգ սարտերը, առանց մի բառ ասելու, մեր կոբզիր տեղափոխեցին փողերով լիքը պարկեր:

Սկզբում ես չհասկացա, թե ինչ է տեղի ունենում, և միայն այն բանից հետո, երբ թենգեով լցված քսանհինգ պարկերն արդեն մեր կոբզիրի վրա էին, ես ամենաձեռք սարտից իմացա, որ նրանք բոլորով մեզ հետ շոգենայի վրա էին, և երբ մենք շոգենավից իջել էինք, իսկ փողերը մնացել էին իրենց տեղերում, այդ սարտերը կարծել են, թե մենք շոգենավից իջնելու իրարանցման ընթացքում մոռացել ենք դրանց մասին: Այնուհետև նրանք նավի անձնակազմից իմացել էին մեր հեռանալու վայրը և, թենգեի այդ քսանհինգ պարկերն իրենց հետ վերցնելով, շտապել էին մեր հետևից, որպեսզի դրանք հանձնեն ենթադրյալ տերերին: Ծերունի սարտն ինձ ասաց հետևյալը. «Ես որոշեցի ամեն գնով հասնել ձեր հետևից և հանձնել ձեր փողը, քանի որ մի անգամ ինձ հետ էլ է նման դժբախտություն պատահել, և ես շատ լավ գիտեմ, թե ինչ է նշանակում օտար երկրում առանց փողի մնալ: Իսկ ինձ համար կարող էր չանհանգստանալ. առանձնապես մեծ դժբախտություն չի լինի, եթե ես մեր գյուղ հասնեմ մի շաբաթ ուշացումով»:

Ես այնքան շփոթված էի, որ չգիտեի ինչպես վարվեմ, կամ ինչ ասեմ այդ հրաշալի մարդուն: Այդ ամենն անսպասելի էր ինձ համար: Ես որոշեցի սպասել պրոֆեսորի վերադարձին, ձևացնելով, թե սարտերն վատ գիտեմ: Որպեսզի այդ սպասողական վիճակը շատ ծանր չլինի այդ մարդկանց համար, ես նրանց մի քիչ օղի առաջարկեցի:

Հեռվում նկատելով վերադարձող Սկրիդլովին՝ ես արագ ափ վազեցի և, ձևացնելով, թե նրան օգնում եմ բերված սննդամթերքը տեղ հասցնել, ընթացքում նրան պատմեցի տեղի ունեցածի մասին: Մենք միասին որոշեցինք այդ բարի մարդուն չհիասթափեցնել և, նրան հայտնելով մեր խորին երախտագիտությունը, ընդունեցինք փողերի այդ պարկերը՝ մտածելով, որ դրանք կհանձնենք մոտակա ռուսական սահմանապահ ուղեկալին: Շուտով հենց այդպես էլ վարվեցինք: Ուղեկալում մենք պատմեցինք տեղի ունեցածը՝ նշելով շոգենավի անունը և նկարագրելով այն մարդուն, ով այդ փողերի իրական տերն էր:

Այդ դեպքից հետո, որն, ինչպես վստահ եմ, չէր կարող տեղի ունենալ ժամանակակից Եվրոպայում, մենք շատ շուտով հասանք մի քաղաք, որը ժամանակին փառքի է արժանացել Ալեքսանդր Մակեդոնացու շնորհիվ, իսկ ներկայումս վերածվել է կորած-մոլորած աֆղանական նավահանգստի: Այստեղ մենք ափ իջանք, մեզ տվեցինք այն արտաքին տեսքերը, որ համապատասխան էին մեր ստանձնած դերերին, և մեր հետագա ճանապարհը շարունակեցինք ոտքով:

Մի սարահարթից մյուսն անցնելով և շփվելով մեր ճանապարհին հանդիպած շատ ցեղերի հետ՝ մենք վերջապես հասանք Աֆրիդիս, որը համարվում է Քաֆիրստանի մայրաքաղաքը:

Ճանապարհին մենք անում էինք այն ամենը, ինչ հարկ է, որ անեն դերվիշները. Մայիդը, այսինքն՝ ես, ասերգով պարսկերեն սրբազան կրոնական տեքստեր էր արտասանում: Իսկ պրոֆեսոր Սկրիդլովը կարողանում էր ինձ նվազակցել տամբուրով՝ երբեմն նույնիսկ ռիթմը համընկեցնելով: Հետո այդ նույն երաժշտական գործիքով նա ողորմություն էր հավաքում:

Ես այստեղ չեմ սկսի նկարագրել մեր արշավի ավարտական մասն ու դրա հետ կապված արկածներն ու փորձությունները, այլ անմիջապես ուզում եմ պատմել մի արտակարգ մարդու հետ մեր հանդիպման մասին, ինչը տեղի ունեցավ վերոհիշյալ Աֆրիդիսից ոչ հեռու, մի հանդիպում, որը փոխեց մեր ներաշխարհն ու մտածելակերպը և ստիպեց վերանայել մեր բոլոր պլաններն ու մտադրությունները:

Լքելով Աֆրիդիսը՝ մենք մտադիր էինք գնալ Չիտրալ: Աֆրիդիսից ոչ շատ հեռու գտնվող մի բավականին մեծ բնակավայրի շուկայում հանկարծ ինձ մոտեցավ մի անծանոթ ծերունի և մաքուր հունարենով ասաց. «Խնդրում եմ, մի՛ երկյուղեք: Ես միանգամայն պատահաբար իմացա, որ դուք հույն եք: Իմ կողմից ձեզ ոչ մի վտանգ չի սպառնում, և ես չեմ պատրաստվում պարզել, թե ինչպես եք հայտնվել այստեղ և ինչ նպատակներ եք հետապնդում. պարզապես ինձ համար շատ հաճելի կլինեք զրուցել հայրենակցիս հետ, քանի որ արդեն հիսուն տարի է, ինչ չեմ տեսել ոչ մի մարդու, որ ծնված լինեք այն նույն երկրում, ինչ որ ես»:

Այդ ծեր մարդու ձայնն ու դեմքի արտահայտությունն ինձ վրա այնքան հաճելի տպավորություն թողեցին, որ ես անմիջապես վստահեցի նրան և նույնպես հունարենով պատասխանեցի. «Այս շուկայում այնքան էլ հարմար չէ զրուցելը, իսկ ինձ համար անգամ վտանգավոր է: Մենք պետք է ավել հարմար վայր փնտրենք և, վստահեցնում եմ ձեզ, եթե դա հաջողվի, ապա ես նույնպես չափազանց ուրախ կլինեմ զրուցելու հայրենակցիս հետ, քանի որ արդեն մի քանի ամիս է, ինչ հաղորդակցվում եմ միայն այլազգիների հետ»:

Համաձայնության գալով՝ մենք ընդհատեցինք մեր զրույցը և գնացինք ամենքս իր գործին: Հաջորդ օրվա մեր սովորական ելույթի ժամանակ ինչ-որ մի վանական աննկատ կերպով ողորմության փոխարեն իմ ձեռքը խցկեց մի գրություն: Զգուշությունից դրդված՝ ես այն անմիջապես չկարդացի, այլ դրան անցա մեր ելույթի ավարտից հետո, երբ հանդիսատեսները ցրվել էին: Գրությունը հունարենով էր, որտեղ ասված էր, որ մեր նոր ծանոթը հայտնի վանական միաբանության անդամ է և մեզ հրավիրում է իրենց մենաստանը, որտեղ կարող ենք ոչնչից չվախենալ, քանի որ այդ մենաստանում հարգում են բոլոր Աստծուն ծառայողներին՝ անկախ ռասայից և ազգությունից:

Հաջորդ օրը ես ու պրոֆեսորը գնացինք այդ մենաստանը: Այնտեղ մեզ դիմավորեցին մի քանի վանականներ, որոնց մեջ ես ճանաչեցի այն մարդուն որը շուկայում մոտեցել էր ինձ: Ողջույններ փոխանակելուց անմիջապես հետո նա մեզ տարավ մենաստանի մոտ գտնվող բլուրներից մեկի կողմը, որտեղ մենք հարմար տեղավորվեցինք ոչ մեծ, բայց արագահոս մի գետակի ափին: Նայելով մեզ՝ մեր նոր ծանոթն ասաց.

«Այստեղ մեզ ոչ ոք չի խանգարի, և դուք կարող եք միանգամայն ազատ խոսել, քանի որ ձեզ ոչ ոք չի տեսնում և չի լսում»:

Զրույցի ընթացքում պարզվեց, որ նա ծագումով իտալացի է, բայց լավ տիրապետում է հունարենին, քանի որ մանկության տարիներին հույն մոր պնդմամբ բացառապես այդ լեզվով է խոսել: Նախկինում նա քրիստոնեական քարոզիչ էր եղել և շատ տարիներ էր անցկացրել Հնդկաստանում: Մի անգամ Աֆղանստան գնալիս նա գերեվարվել է տեղի ցեղերից մեկի կողմից, երբ հաղթահարելիս է եղել ինչ-որ լեռնանցք: Որպես ստրուկ մի տիրոջից մյուսի ձեռքն անցնելուց հետո նա վերջապես հայտնվել է մի շատ անվանի և հարգարժան մարդու տանը: Մեր զրուցակիցը շատ լավ հարմարվել էր նոր պայմաններին, ուսումնասիրել տեղական սովորույթներն ու կենսակերպը և ի վերջո հասել էր նրան, որ վաստակել էր բարի, խելամիտ ու կշռադատող մարդու համբավ: Նվաճելով իր նոր տիրոջ սերն ու հարգանքը՝ որոշ ժամանակ անց նա արժանացել էր ազատության և, դառնալով հասարակության լիիրավ անդամ, կարող էր անել այն, ինչ կուզենար: Հենց այդ ժամանակներում էլ նա ծանոթացել էր Համաշխարհային եղբայրության վանականների հետ և հասկացել, որ դա հենց այն է, ինչ ամբողջ կյանքում փնտրել էր: Եվ ահա այդ ժամանակվանից ի վեր նա ապրում է այս մենաստանում:

Քանի որ մեր վստահությունը հայր Ջովաննիի նկատմամբ (մենք նրան սկսեցինք հենց այդպես անվանել՝ իմանալով, որ նա կաթոլիկ հոգևորական է եղել) բոլոր առ բոլոր աճում էր, մենք որոշեցինք ոչինչ չթաքցնել և մեր մասին պատմել ամբողջ ճշմարտությունը:

Ուշադիր լսելով մեր պատմությունը և պարզորոշ կերպով հավանության արժանացնելով ճշմարտություն փնտրելու մեր ձգտումը՝ նա դրանից հետո մի փոքր մտածեց և իմաստուն ու բարի ժպիտով մեզ ասաց հետևյալը. «Դե ի՞նչ, հնարավոր է, որ այն, ինչ դուք կիմանաք ու կհասկանաք, ինչ-

որ ժամանակ հասանելի կդառնա նաև իմ բոլոր հայրենակիցների համար, ուստի իմ կողմից ես կանեմ ամեն ինչ, որ ձեզ օգնած լինեմ ճշմարտություն որոնելու գործում»:

Մեր գրուցակիցը թույլտվություն ստացավ մեզ տեղավորելու մենաստանի պատերից ներս: Մենք կարող էինք այդտեղ մնալ այնքան ժամանակ, մինչև որոշեինք մեր հետագա անելիքը: Հենց հաջորդ օրը ես ու պրոֆեսոր Սկրիդլովը տեղավորվեցինք մենաստանի բնակելի մասում և շատ ուրախացանք, որ հնարավորություն ենք ստացել հանգստանալու հոգնեցուցիչ ճամփորդությունից հետո, որի ընթացքում ստիպված էինք մշտապես զգուշանալ:

Մենաստանի տարածքում մենք մեզ լիակատար ազատ էինք զգում և գնում էինք, ուր ուզում էինք: Միայն վանահոր մոտ չէր կարելի մտնել առանց հրավերի:

Հայր Ջովանիի հետ մենք հաճախ էինք գալիս այն գետափը, որտեղ առաջին անգամ գրուցեցինք մեր մենաստան գալու օրը:

Մեր նոր ընկերոջ հետ ունեցած գրույցների ընթացքում մենք շատ հետաքրքիր բաներ իմացանք այդ եղբայրության գործունեության, նրանց ներքին կյանքի և ուսմունքի հիմնական դրույթների մասին: Մենք հասկացանք, որ այդ եղբայրության անդամ կարող է դառնալ ցանկացած մարդ՝ անկախ ռասայից և նախկին կրոնական պատկանելությունից:

Ինչպես հետո իմացանք, այդտեղի վանականների մեջ կային նախկին քրիստոնյաներ, հուդայականներ, մահմեդականներ, բուդդիստներ, լամաիստներ և անգամ մի նախկին շաման: Նրանց բոլորին այստեղ միավորում էր հավատը միակ և ամենագոր Տիրոջ նկատմամբ:

Վանականների միջև այնպիսի փոխադարձ սեր ու վստահություն կար, որ ես ու պրոֆեսոր Սկրիդլովը, կողքից դիտելով նրանց, չէինք կարողանում որոշել, թե նրանցից ամեն մեկն ինչ կրոն է դավանել նախկինում:

Հայր Ջովանին մեզ շատ բաներ պատմեց նաև հավատքի և եղբայրության նպատակների մասին: Նա այնքան խորագետ ու համոզիչ էր խոսում ճշմարտության, հավատի և այն մասին թե մարդն ինչպես է հանգում դրանց, որ պրոֆեսոր Սկրիդլովը, հուզվելով մինչև հոգու խորքը, չդիմացավ և բացականչեց. «Հայր Ջովանի, ես չեմ կարողանում հասկանալ, թե ինչու եք մնացել այստեղ և չեք վերադառնում Եվրոպա, երբ այսպիսի հնարավորություն ունեք, որ ձեր հայրենիքում՝ Իտալիայում, ձեր հայրենակիցներին փոխանցեք այն ճշմարտության թեկուզ հազարերորդական մասը, որին այստեղ հասու եք դարձել: Ինչու՞ չեք ուզում ձեր այդ հավատը կիսել ուրիշների հետ...»:

«Է՛հ, սիրելի պրոֆեսոր, - պատասխանեց հայր Ջովանին, - ձեր այդ խոսքերը վկայում են այն մասին, որ դուք բացարձակապես գաղափար չունեք մարդկային հոգեբանությունից՝ ի տարբերություն հնդեաբանության: Հավատը հնարավոր չէ ինչ-որ մի իրի պես փոխանցել մի մարդուց մյուսին. այն մարդու մեջ ծնվում և զարգանում է ո՛չ ուսուցման արդյունքում:

Հավատ ձեռք բերելու համար ըմբռնում է անհրաժեշտ, իսկ դա դրսևորվում է ամբողջ անձնական փորձառության արդյունքում, որը վերախմաստավորում է հենց ինքը՝ տվյալ մարդը:

Օրինակ, եթե իմ հարազատ եղբայրը գա ինձ մոտ և աղաչի, որ իր հետ կիսեմ կյանքի իմաստի իմ իմացության և իմ հավատի թեկուզ մեկ հազարերորդական մասը, ապա ինչքան էլ ուզենամ, ես չեմ կարողանա բավարարել նրա խնդրանքը: Ես չեմ կարողանա իմ ունեցածի մեկ հազարերորդական մասը տալ նրան այն պատճառով, որ նա չունի իմ կենսափորձը, չի ապրել, չի իմաստավորել ու զգացել այն ամենը, ինչ ես եմ ապրել, իմաստավորել ու զգացել:

Ո՛չ, սիրելի պրոֆեսոր, հազար անգամ ավելի հեշտ է, որ, ինչպես ասված է Ավետարանում, ուղտն անցնի ասեղի ծակով, քան սեփական հավատը, զգացմունքներն ու աշխարհընկալումն ուրիշին փոխանցելը:

Առաջ ես էլ էի ձեզ նման մտածում և անգամ ընտրեցի քարոզչի ուղին, որպեսզի ուրիշ մարդկանց միջավայրում տարածեմ հավատն առ Հիսուս Քրիստոս: Ես ամեն մի հանդիպածի ուզում էի երջանկացնել, ինչպես ինքս էի երջանկացել՝ հավատ ձեռք բերելով: Բայց հավատի մասին պատմելու միջոցով այն ուրիշ մեկին փոխանցելը նույնքան անհնարին է, որքան հաց ցույց տալով սովածին կերակրելը:

Ինչպես ասացի, մարդ հավատ է ձեռք բերում՝ իր ունեցած հոգևոր ամբողջ փորձը վերախմաստավորելով, մինչդեռ գիտելիքը ոչ այլ ինչ է, եթե ոչ հիշողության մեջ բառերի որոշակի հերթականության մեխանիկական ամրապնդում:

Ամենայն ցանկության դեպքում հնարավոր չէ ուրիշին փոխանցել սեփական ներքնաշխարհի թեկուզ մի չնչին մասնիկը, որը ձևավորվել է ամբողջ կյանքի ընթացքում: Վերջերս, դիտելով այստեղի մյուս եղբայրներին, ես հասկացա, որ տեղեկության ընկալումը մեծ չափով կախված է այն հայտնող մարդու անձից: Ասածս պարզաբանելու համար մի օրինակ բերեմ: Մեր միաբանությունում գործում են երկու շատ ծեր վանականներ՝ եղբայր Էլն ու եղբայր Սեզը: Նրանք կամավոր պարտավորություն են վերցրել, որ կանոնավորապես հաճախեն մեր մենաստանները և մեր դավանաբանության էությունը պարզաբանող քարոզներ կարդան:

Մեր եղբայրությունը կազմված է չորս մենաստաններից. առաջինն այս է, որտեղ մենք հիմա գտնվում ենք, երկրորդը Պամիրի մի սարահարթում է, երրորդը՝ Տիբեթում և չորրորդը՝ Հնդկաստանում: Այդ երկու եղբայրները մշտապես մի մենաստանից մյուսն են անցնում և յուրաքանչյուրում կատարում իրենց քարոզչությունը:

Մեզ մոտ նրանք լինում են տարեկան մեկ-երկու անգամ: Նրանց գալուստն այստեղ մեծ իրադարձություն է համարվում: Այն ամբողջ ընթացքում, երբ այդ եղբայրները գտնվում են այստեղ, մեզնից յուրաքանչյուրի հոգին զգում է վերերկրային գմայլանք ու երանություն:

Երկու բարեպաշտ ծերունիների քարոզները, թեև երկուսն էլ միևնույն ճշմարտությունից են խոսում, ներկաների և հատկապես ինձ վրա ոչ միատեսակ են ազդում:

Երբ խոսում է եղբայր Սեզը, թվում է, թե հավքն է երգում դրախտային այգում. բոլորը նրան լսում են լիակատար լուռ՝ իրենց հայացքն, այսպես ասած, հառելով իրենց հոգուն: Նրա ձայնը խոխոջում է լեռնային գուլալ աղբյուրի պես, և ունկնդիրների միակ ցանկությունը լինում է այն, որ ականջալուր լինեն եղբայր Սեզի կախարդիչ ձայնին:

Եղբայր Էլի քարոզը բոլորվին այլ տպավորություն է թողնում, քանի որ, խիստ զառամյալ տարիքի պատճառով, նա խոսում է մեղմ ու անհասկանալի: Մեզնից ոչ ոք ճշգրիտ չգիտե նրա տարիքը, և թեև եղբայր Սեզն էլ է շատ ծեր (ասում են, թե նա մոտ երեք հարյուր տարեկան է), բայց թողնում է առողջ ու առույզ մարդու տպավորություն. իսկ Եղբայր Էլի զառամյալությունն այք է ծակում:

Ես նկատել եմ, որ որքան ուժեղ տպավորություն է թողնում եղբայր Սեզի քարոզը, նույնքան արագ էլ այդ ազդեցությունն անցնում է՝ հոգում ոչինչ չթողնելով: Բայց եղբայր Էլի դեպքում բանն ուրիշ է: Թեև սկզբում նրա խոսքերը կարծես թե չեն տպավորվում ունկնդիրների մոտ, և նրանք համարյա անտարբեր են թվում, բայց հետագայում նրա խոսքերը դուրս են լողում հիշողությունից և սեփական փորձի հիման վրա վերախմաստավորվելուց հետո ընդմիջտ մնում են սրտում:

Երբ մենք եղբայրներով դա նկատեցինք և խորհեցինք այն հարցի շուրջ, թե ինչու են նրանց քարոզներն այդքան տարբեր ազդեցություն ունենում, ի վերջո միասնաբար հանգեցինք այն մտքին, որ եղբայր Սեզի քարոզները նրա խելքի արդյունքն են և դրա համար էլ միայն մտքի վրա են ազդում. իսկ եղբայր Էլի քարոզները ծնվում են նրա հոգում և ունկնդրի հոգու վրա էլ ազդում են, այդ պատճառով դրանք թողնում են ավելի ուժեղ և խոր տպավորություն:

Այո՛, հարգելի՛ պրոֆեսոր, գիտելիքն ու իմացությունը տարբեր բաներ են: Պետք է ձգտել իմացության, քանի որ միայն դա է տանում Տիրոջ մոտ:

Որպեսզի մարդ սկսի հասկանալ Նրա օրենքներին համապատասխանող ու հակասող բնական երևույթները, նա պետք է նախ գիտակցորեն յուրացնի և իմաստավորի տեղեկությունների մի հսկայական ծավալ, որը վերաբերում է այն օբյեկտիվ ճշմարտությանն ու իրական իրադարձություններին, որոնք անցյալում տեղի են ունեցել երկրագնդում, որից հետո դրանք անցկանցի իր միջով և համադրի իր կենսափորձի հետ»:

Ես երբեք չեմ մոռանա հայր Ջովաննիի հետ ունեցած այդ զրույցները: Այնպիսի անսովոր հարցեր, որոնք երբեք չեն ծագում ժամանակակից մարդու գլխում, ծագում էին իմ ու պրոֆեսոր Սկրիդլովի գլխում, և այդ արտասովոր անձնավորություն հայր Ջովաննին դրանց տալիս էր սպառնիչ ու բովանդակալից պատասխաններ: Այդ բացատրություններից մեկը, որը հետևեց այդ մենաստանը լքելուց երկու օր առաջ պրոֆեսոր Սկրիդլովի տված հարցին, հատկապես արժեքավոր է իր մեջ պարփակված մտքերի շնորհիվ, և հնարավոր է, որ հետաքրքրական և ուսանելի լինի մեր այն ժամանակակիցների համար, որոնք հասել են իրենց հասուն տարիքին: Այդ հարցն ականա դուրս թռավ պրոֆեսոր Սկրիդլովի բերանից, երբ հայր Ջովաննին ասաց, որ որպեսզի ճշմարիտ հավատ ձեռք բերվի, անհրաժեշտ է այնպիսի հոգի ունենալ, որը տարողունակ է այդ հավատի համար, ինչպես նաև ունենալ կենսափորձ ու խոր գիտելիքներ: Նա նաև համոզմունք հայտնեց, որ մարդու հոգևոր

հատկանիշների զարգացման համար հատկապես կարևոր է նրա պատանեկության շրջանը, երբ մարդու բնույթն ինքն է նրան ճիշտ ճանապարհ ցույց տալիս, մինչդեռ տարիքն առնելու հետ մարդու ներսում հաճախ ձևավորվում են անառողջ, ավելորդ պահանջմունքներ, որոնք կյանքի անառողջ պայմանների արդյունք են լինում:

Մեր ուսուցչի այդ խոսքերից հետո պրոֆեսոր Սկրիդլովը վիստված բացականչեց. «Իսկ ի՞նչ անենք մենք... Ինչպե՞ս շարունակենք ապրել...»:

Այդ բացականչություններին ի պատասխան հայր Ջովանին մի փոքր մտածելուց հետո տվեց մի քանի իմաստուն խորհուրդներ, որոնք ես անհրաժեշտ եմ համարում փոխանցել իմ ընթերցողներին:

Իմ երրորդ գրքում ես դրանք կտեղադրեմ «Մարդու հոգևոր էությունը, դրա պահանջմունքներն ու հնարավորությունները» վերնագրով գլխում, որը ես որոշել եմ նվիրել այն մտքերի լուսաբանմանը, որոնք արտահայտել է այդ իմաստուն մարդը: Նա համարում էր, որ մարդու հոգին ու մարմինը մեկ ամբողջության առանձին մասերն են, որոնք զարգանում են միմյանցից անկախ:

Այդ մենաստանում գտնվելու ընթացքում մենք զրուցեցինք ոչ միայն հայր Ջովանիի, այլ նաև մյուս եղբայրների հետ, որոնց հետ նա մեզ ծանոթացնում էր՝ այդ ամբողջ ընթացքում մեզ պահելով իր հովանու ներքո:

Վեց ամիս մնալուց հետո մենք այդ մենաստանը լքեցինք ոչ այն պատճառով, որ մեզ թույլ չտվեցին ավելի երկար մնալ, և ոչ այն պատճառով, որ մեզ համար ձանձրալի էր այնտեղ մնալը: Մենք հեռացանք, քանի որ մեր ուղեղները ծայրեծայր լցվել էին նոր մտքերով ու տպավորություններով, և մեզ թվում էր, թե մեր բանականությունն այլևս չի դիմանա դրանից ավելին:

Մենք այնքան շատ նոր ու անսպասելի բաներ իմացանք, և այնպիսի սպառնիչ ու համոզիչ պատասխաններ ստանցանք այն հարցերին, որոնք երկար տարիներով մեզ հանգիստ չէին տալիս, որ թվում էր, թե մենք այլևս փնտրելու կամ ձգտելու ոչինչ չունենք: Ընդհատելով մեր այդ ճամփորդությունը՝ ես ու պրոֆեսոր Սկրիդլովը Ռուսաստան վերադարձանք այն նույն ճանապարհով, որով գնացել էինք:

Թիֆլիսում մենք բաժանվեցինք իրարից. պրոֆեսոր Սկրիդլովը Ռազմավիրական ճանապարհով գնաց Պյատիգորսկ՝ իր աղջկան հյուր, իսկ ես գնացի Ալեքսանդրապոլ՝ իմ ընտանիքի մոտ:

Դրանից հետո բավական երկար ժամանակ մենք իրար չհանդիպեցինք, բայց կանոնավորապես նամակներ էինք փոխանակում: Վերջին անգամ պրոֆեսոր Սկրիդլովի հետ ես հանդիպեցի պատերազմի երկրորդ տարում Պյատիգորսկում, որտեղ նա ապրում էր իր դստեր ընտանիքում: Ես երբեք չեմ մոռանա Բեշտաու լեռան վրա մեր ունեցած վերջին զրույցը: Ես այդ ժամանակահատվածում Եսենտուկիում էի ապրում, և երբ մի անգամ հանդիպեցինք Կիսլովոդսկում, նա ինձ առաջարկեց հին ու բարի ժամանակները հիշելու համար միասին բարձրանալ Բեշտաու լեռը, որը գտնվում է Պյատիգորսկի մոտակայքում:

Եվ ահա մի հրաշալի առավոտ, մեզ հետ բավարար քանակի սննդամթերք վերցնելով, մենք դուրս եկանք Պյատիգորսկից և քայլեցինք դեպի լեռը: Վերելքի համար մենք ընտրեցինք ամենազառիվայր ու վտանգավոր լանջը, որի ստորոտին կառուցված էր ամբողջ աշխարհին հայտնի մի վանք:

Այդ դիք լանջի հաղթահարումը բարդ է համարվում անգամ դրա մասնագետների համար. այն իսկապես դժվարին էր, բայց ոչ մեզ համար: Այն լեռնագագաթների համեմատ, որոնք մենք գրոհել էինք դեպի աշխարհի բոլոր ծագերն ունեցած մեր բազմաթիվ արշավների ընթացքում, այս մի վերելքը մեզ երեխայական զվարճություն էր թվում: Մենք հսկայական հաճույք ստացանք՝ մազլցելով դիք լանջերով, քանի որ երկարատև ու միապաղաղ քաղաքային կյանքի ընթացքում կարոտել էինք այդ կարգի տպավորություններին:

Թեև այդ լեռն այնքան էլ բարձր չէ, բայց դրա շրջակայքը չափազանց գեղեցիկ է. այնպես որ, երբ հասնում ես գագաթին, հայացքիդ առջև անմոռանալի տեսարան է բացվում:

Շեռու հարավում երևում է ձյունածածկ գագաթով Էլբրուսը՝ շրջապատված համեմատաբար ավելի ցածր լեռնագագաթներով: Ներքևում՝ լեռների ստորոտում, երևում են բազմաթիվ, խաղալիքների նմանվող տնակներ: Միներալնիե Վոդին է: Իսկ ավելի ցածր՝ հյուսիսային մասում, նշմարվում է Ժելեզնովոդսկը:

Ամենուրեք խաղաղություն է տիրում: Մենք մենակ ենք լեռան վրա, քանի որ մեր աչքի առաջ է դեպի Բեշտաու բերող անմարդ ճանապարհը, իսկ թեք լանջով վեր մազլցելու մեր սխրանքը կրկնել՝ հագիվ թե որևէ մեկը համարձակվի:

Լեռան գագաթին մի փոքրիկ խրճիթ կա, որը հավանաբար ուտելիք վաճառելու կրպակ է եղել, բայց հիմա այն դատարկ է: Հանգիստ առնելու համար մենք հարմար տեղ ենք գտել, որպեսզի հանգստանանք և հաց ուտենք: Մեր դեմ բացված համայնապատկերի գեղեցկությունից ապշած՝ նստել ենք լուռուժնուժ: Հանկարծ պրոֆեսորի աչքերում արցունքներ նկատեցի:

«Ի՞նչ պատահեց, եղբայրս»,- անհանգստացա ես:

«Ոչինչ,- աչքերը սրբելով՝ պատասխանեց նա և ապա ավելացրեց,- վերջին երկու-երեք տարում ես համարյա չեմ կարողանում վերահսկել զգացմունքներս, այնպես որ սկսել եմ նմանվել հիստերիկ կնոջ:

Այն, ինչ հիմա ինձ հետ կատարվում է, վերջին տարիներին շատ անգամ է եղել: Դժվարանում եմ բացատրել, թե ինչ է տեղի ունենում ինձ հետ, բայց երբ ինչ-որ գեղեցիկ ու վեհ բան եմ տեսնում կամ լսում, որի ստեղծմանը անկասկած մասնակցել են վերին ուժերը, հիացմունքից չեմ կարողանում արցունքներս զսպել: Ես լալիս եմ, ավելի ճիշտ՝ իմ ներսում լալիս է ինչ-որ բան՝ բայց ոչ թե վշտից, այլ քնքշության ու սիրո հորդանքից: Հիշում եմ, դա պատահեց ինձ հետ Քաֆիրստանում, երբ հանդիպեցինք հայր Ջովանիի հետ: Երբ այդ արշավից հետ եկանք, ես նկատեցի, որ իմ զգացմունքներն ու մտքերը փոխվել են: Ես կարծես ուրիշ մարդ էի դարձել. այն ամենը, ինչ առաջ կարևոր էր թվում, հիմա ինձ համար ոչ մի հետաքրքրություն չէր ներկայացնում: Այդ ծերունու հետ հանդիպելուց առաջ ես ամբողջովին խրված էի գործնական հոգսերի մեջ: Գլխավորապես ինձ հետաքրքրում էին միայն իմ մանր քմայքների բավարարումն ու ընտանիքիս նյութական բարեկեցության ապահովումը:

Կարճ ասած՝ ես եսամոլ էի: Բայց հայր Ջովանիի հետ հանդիպելուց հետո բոլոր ունայն հոգսերն անհետացան, իմ հոգում սկսեց «ինչ-որ բան» աճել, և միայն հիմա եմ ես հասկանում, թե որքան դժբախտ ու խղճուկ մարդ եմ ես եղել, և թե որքան դատարկ է եղել իմ կյանքը: Հիմա իմ կյանքը լցված է ճշմարիտ իմաստով. ես ձեռք եմ բերել հոգու հանգստություն և բերկրանք»:

Դրամական հարցեր

1924 թվականի ապրիլի 8-ին՝ Մարդու ներդաշնակ զարգացման ինստիտուտի Նյու Յորքի բաժանմունքի բացման օրը, պարոն Գյուրջիևի ընկերներն ու աշակերտները նրա պատվին ճաշկերույթ էին կազմակերպել ռուսական ռեստորաններից մեկում:

Ճաշկերույթից հետո ներկաների մեծ մասը գնացին միսիս Ռ.-ի առանձնատունը, որը 49-րդ փողոցի վրա է: Այստեղ հյուրընկալ տանտիրուհու մատուցած սուրճի և դոկտոր Բ.-ի բերած լիկյորի սեղանի շուրջ զրույցը շարունակվեց մինչև հաջորդ օրվա լուսաբացը: Միսոր Գյուրջիևը, ներկաների հետ հիմնականում հաղորդակցվելով թարգմանիչներ միսոր Լիլիանտի և միսոր Վերսիլովսկու օգնությամբ, պատասխանում էր հիմնականում փիլիսոփայական բնույթ կրող հարցերի:

Ոչ մեծ ընդմիջման ժամանակ, երբ հյուրերն արժանին էին մատուցում Բուենոս-Այրեսից բերված հրաշալի հասուն ձմերուկին (տարվա այդ ժամանակ դա հազվագյուտ ապրանք է անգամ Նյու Յորքում), Դոկտոր Բ.-ն մողայիկ մի առողջարանի տերը, ով շատ գործնական մարդու համբավ ունի, հանկարծ շրջվեց միսոր Գյուրջիևի կողմը և այսպիսի հարց տվեց. «Չէի՞ք ասի, թե ինչ միջոցներով է գոյատևում ձեր Ինստիտուտը, և որքա՞ն է դրա տարեկան բյուջեն»:

Ի ընդհանուր զարմանս մեզ՝ միսոր Գյուրջիևի պատասխանն ստացավ բավական երկարաշունչ պատմության տեսք:

Քանի որ դրա շարադրանքի ընթացքում բացահայտվեցին այն պայքարի որոշ թաքուն կողմեր, որը նա վարել էր իր ողջ կյանքի ընթացքում, ես որոշեցի բառ առ բառ արձանագրել այն ամենը, ինչ ասվել է այդ երեկոյի ժամանակ: Ես խորհրդակցել եմ նրանց հետ, ովքեր ինձ նման ուշադրությամբ ու հետաքրքրությամբ լսում էին միսոր Գյուրջիևին և այդ պատճառով լավ հիշում էին նրա պատմությունը: Ես նաև իմ տեքստը համեմատել եմ սղագրող միսոր Ֆ.-ի գրառումների հետ, ով մշտապես սղագրել է միսոր Գյուրջիևի զրույցներն ու ամերիկյան դասախոսությունները, այնպես, որ եթե որևէ մեկը նրան այնպիսի հարց էր տալիս, որին նա արդեն պատասխանել էր, ապա նրան ուղղակի հղում էին անում այդ գրառումներին:

Իր խոսքը միսոր Գյուրջիևը սկսեց այսպես.

«Հարգարժան դոկտորի տված հարցը մշտապես հետաքրքրել է իմ ծանոթներին, բայց մինչև հիմա ես անհրաժեշտ չեմ համարել նրանց տեղյակ պահել իմ անձնական գործերին: Նման դեպքերում ես կա՛մ լռել եմ, կա՛մ կատակի եմ տվել:

Գուցե այդ է պատճառը, որ այդ թեման սնունդ է ծառայել ամեն տեսակի ասեկոսեների համար, որոնք, վկայելով նրանց հեղինակների անանց հիմարության մասին և ձեռք բերելով անճշմարտանման մանրամասներ, արդեն շրջանառվում են բավական լայն շրջանակներում: Օրինակ՝ ասում են, թե իբր ես փող եմ ստանում օկուլտային գիտությունների հնդկական կենտրոնից, կամ որ իմ Ինստիտուտն աջակցություն է ստանում սև մոգության ինչ-որ ադանդի կողմից: Ոմանք պնդում են, որ ինձ անձամբ նյութապես օժանդակում է լեգենդար ռուս իշխան Մուխրանսկին, իսկ որոշներն էլ անգամ համարում են, որ ես փիլիսոփայական քար ունեմ, որն ինձ թույլ է տալիս ալքիմիական ճանապարհով ցանկացած քանակությամբ ոսկի ստանալ:

Ամենից «խելոքներն» էլ բոլորին ապացուցում են, որ ես ծառայում եմ բոլշևիկներին:

Բայց իրականում անգամ իմ մոտ ընկերները չգիտեն, թե ես որտեղից եմ միջոցներ հայթայթում. չէ՞ որ ես ստիպված եմ ամեն տարի վիթխարի ծախսեր անել:

Ես բացարձակապես անօգուտ եմ համարել այդ թեմայով խոսակցությունները, քանի որ ոչ մի պատրանք չունեմ խոշոր նվիրատվություն ստանալու վերաբերյալ:

Բայց հիմա նման հարցերն այնքան են հաճախակի դարձել, որ վերջապես ես կորցրի համբերությունս և որոշեցի քիչ թե շատ լրջորեն պատասխանել դրանց:

Այդ թեման վերջնականապես պարզաբանելու իմ ցանկությունը կապված է այն բանի հետ, որ ճակատագրի բերումով (ավելի ճիշտ՝ այն իրադարձությունների բերումով, որոնք տեղի ունեցան Ռուսաստանում) վանքի մկան պես աղքատ լինելով՝ ես խիզախեցի գալ այս երկիրը և, գնահատելով բացված հնարավորությունները, որոշեցի դրանք իմ ձեռքից բաց չթողնել:

Ես պատիվ ունեմ ներկա գտնվելու այնպիսի մարդկանց շրջապատում, որոնք հեռու են աղքատ լինելուց և գոհ են իրենցից ու իրենց գործարարական կարողություններից: Պատմելով այն մասին, թե ինչպես եմ միջոցներ հայթայթել Մարդու ներդաշնակ զարգացման Ինստիտուտը կազմակերպելու համար՝ ես պատրաստվում եմ մի փոքր սասանել սեփական հանճարեղության վերաբերյալ ձեր համոզվածությունը:

Այստեղ՝ մեր օրերի համար այնքա՛ն հազվադեպ այս հարմարավետ ու անկաշկանդ մթնոլորտում, ինչի համար պետք է շնորհակալ լինենք մեր հյուրասեր տանտիրուհուն, ես կաշխատեմ ի մի բերել իմ ողջ մտավոր ունակություններն ու հռետորական արվեստը և կպատասխանեմ տրված հարցին, այլապես ձեր մնացած ամբողջ կյանքում դուք կհավատաք, թե ես փիլիսոփայական քար ունեմ, որի միջոցով ոսկի եմ դարձնում այն ամենը, ինչին դա կպցնում եմ:

Եվ այսպես, իմ սիրելի՛ և, անշուշտ, շատ հարգելի փողի պարկեր, ես սկսում եմ իմ պատմությունը:

Մարդու ներդաշնակ զարգացման Ինստիտուտը ստեղծելուց շատ առաջ ես մանրակրկիտ կերպով կշռադատել եմ այդ խնդրի բոլոր կողմերը և, իհարկե, նաև այդքան արտասովոր իմ ձեռնարկման ֆինանսավորման հարցը:

Քանի որ ես ենթադրում էի, որ կբախվեմ բազմաթիվ խնդիրների ու խոչընդոտների, երբ կսկսեմ գործնականում ի կատար ածել այն գաղափարները, որոնց նկատմամբ մարդկանց մեծ մասը ցուցաբերում է թերահավատություն ու զգուշավորություն, ես կամեցա հենց սկզբից անկախ լինել նյութական իմաստով: Սեփական փորձով ես արդեն համոզվել էի, որ հազիվ թե կարողանամ իմ այդ ձեռնարկումով որևէ հարուստ մարդու շահագրգռել այնքան, որ նա սկսի ինձ օժանդակել այդ հարցում, իսկ համեստ կարողության տեր մարդիկ, անգամ ամենամեծ ցանկության դեպքում, չեն կարողանա էապես օգնել ինձ, քանի որ Ինստիտուտի ստեղծումը հսկայական միջոցների ներդրում կպահանջեր:

Այսպիսով, հոգեբանական խնդիրներ լուծելուն ձեռնամուխ լինելուց առաջ անհրաժեշտ էր նախ լուծել զուտ գործնական խնդիր: Հստակ իմանալով, թե ինչ է իմ ուզածը՝ ես ձեռքերս կախ չզցցեցի և չհիասթափվեցի իմ գաղափարներից, այլ, ընդհակառակը, կրկնակի եռանդով ձեռնամուխ եղա իմ առջև ծառայած խնդրի լուծմանը:

Նպատակը, որ դրել էի իմ առջև, կարող էր անիրագործելի թվալ ամերիկացիների մեծ մասի համար, որոնք համարվում են ամբողջ երկրագնդի ամենագործունյա մարդիկ: Դուք հիմա զարմանում

եք, թե ես ինչպես եմ կարողացել այդքան հեշտությամբ այդպիսի վիթխարի գումարներ վաստակել, և, հավանաբար, ինձ գլուխգովան եք համարում:

Այո, իհարկե, առաջին հայացքից անհավանական է թվում, բայց, այնուամենայնիվ, ես դա արեցի...

Որպեսզի դուք ավելի լավ հասկանաք, թե այդ ամենին ինչպես հասա, և թե որտեղից է գալիս սեփական ուժերիս նկատմամբ իմ վստահությունը, ես պետք է բացատրեմ, որ ամբողջ կյանքում զբաղվել եմ առևտրական զանազան ձեռնարկումներով, լայն կապեր եմ ունեցել գործարար շրջանակներում և հայտնի եմ եղել որպես ճարպիկ ու հաջողակ գործարար:

Նաև անհրաժեշտ եմ համարում պատմել իմ ստացած դաստիարակության մասին, որն, իմ կարծիքով, հսկայական դեր է խաղացել իմ կյանքում: Շնորհիվ այն հատկանիշների, որոնք իմ ծնողներիս հաջողվել է զարգացնել իմ ներսում, ես նախկինում միշտ կարողացել եմ և հարկ եղած դեպքում նաև ապագայում կկարողանամ ավելի լավ ավարտին հասցնել իմ նախաձեռնած ամեն ինչը, քան դա կարող են անել ուրիշները, եթե անգամ այդ ուրիշները լինեն գովաբանյալ ամերիկյան գործարարները:

Քանի որ այս տնական ու տրամադրող մթնոլորտում մենք հավաքվել ենք, որպեսզի տոնենք Ինստիտուտի բացումը, որի հիմնական նպատակը մարդու ներդաշնակ զարգացումն է, ապա մանկության տարիներիս և իմ ստացած դաստիարակության ու կրթության մասին պատմելը հատկապես տեղին կլինի: Մանավանդ որ Ինստիտուտը տարածում է այնպիսի գիտելիքներ, որոնք ձեռք են բերվում այնպիսի մարդու անձնական փորձի հիման վրա, որը համարյա իր ամբողջ կյանքը նվիրել է կրթության հարցի (որն այնքան ցավոտ է մեր ժամանակներում) ուսումնասիրությանը, և որը, դաստիարակված լինելով խիղճ ու պատիվ ունեցող մարդկանց կողմից, անկախ հանգամանքներից, մնացել է արդար ու անաչառ:

Ըստ էության, իմ դաստիարակությամբ ուղղակի իմաստով զբաղվել է հայրս, որն այդ հարցի նկատմամբ ուներ իր հատուկ տեսակետը: Երբևէ ես մի գիրք կգրեմ՝ նվիրված հորս կիրառած դաստիարակության մեթոդներին:

Սկսած իմ վաղ մանկությունից, հենց որ արդեն կարողանում էի իմաստավորված ընկալել շրջակա աշխարհը, հայրս սկսել է ինձ զանազան հետաքրքրաշարժ պատմություններ պատմել, որոնց գլխավոր հերոսը Մուստաֆա անունով մի կաղ հյուսն էր, ով կարողանում էր իր գործերը բոլորից լավ անել:

Այդ պատմություններով հայրս իմ մեջ զարգացրել է նախաձեռնողություն, հնարամտություն, տրոբված ճանապարհներով չգնալու ձգտում, որպեսզի ամեն անգամ հայտնագործեմ խնդրի լուծման իմ սեփական միջոցը, ինչպես դա անում էր հեքիաթների կաղ հյուսնը: Բոլոր իմ մանկական խաղերը՝ անգամ ամենասովորականները, իրենց մեջ ստեղծագործական տարր էին պարունակում, համակված էին ամեն ինչն ուրիշների պես չանելու և ինչ-որ նոր բան հորինելու ցանկությամբ: Եթե վաղ մանկության շրջանում իմ դաստիարակության այդ հակվածությունը կրում էր խաղային, չպարտադրված բնույթ, ապա վելի ուշ՝ պատանությանս տարիներին, այն կրում էր ավելի որոշակի և ուղղակի բնույթ: Իմ կրթությունը չսահմանափակելով դպրոցական ուսուցիչների ներկայացրած պահանջներով՝ հայրս անձամբ ինձ ուսուցանում էր զանազան արհեստներ, քանի որ համարում էր, որ մարդը պետք է կարողանա անել այն ամենը, ինչ կյանքում երբևէ կարող է պետք գալ նրան:

Դաստիարակության բնորոշ հնարքներից մեկն այն էր, որ հենց հայրս նկատում էր, որ արդեն բավականաչափ յուրացրել և սիրել եմ որևէ արհեստ, անմիջապես սկսում էր ինձ մի այլ բան սովորեցնել:

Ինչպես հետագայում ես հասկացա, նա ոչ միայն ուզում էր ինձ տարբեր արհեստներ սովորեցնել, այլև փորձում էր իմ մեջ դժվարությունները հաղթահարելու սովորություն զարգացնել, որոնք հանդիպում են ամեն նոր գործում: Այդ ժամանակներից ի վեր գործունեության ցանկացած տեսակ ինձ համար լինում էր հետաքրքիր ու հարգանքի արժանի, և ես միշտ ուզում էի ինչ որ նոր բան սովորել:

Կարճ ասած, իմ ծնողները, շնորհիվ դաստիարակության ու կրթության նկատմամբ ունեցած իրենց անսովոր հայացքների, կամա թե ակամա (տվյալ դեպքում դա կարևոր չէ) իմ ներսում զարգացրին մի սովորություն, որը հետագայում իմ բնավորության մի մասը դարձավ. այն է՝ մշտապես փոխել գործունեության տեսակը: Հաճախակի զբաղմունքս փոխելու արդյունքում ես մեծ փորձ ու գիտելիքներ ձեռք բերեցի և լայնացրի իմ շփումների շրջանակը:

Ուզում եմ ավելացնել, որ եթե հիմա ամբողջ աշխարհում բազմաթիվ մարդիկ ինձ համարում են ճշմարիտ գիտելիքների, ճշմարիտ հավատքի կրող, ապա դա տեղի է ունեցել այն բանի շնորհիվ, որ մանուկ հասակում ճիշտ դաստիարակություն եմ ստացել:

Այդ ճիշտ դաստիարակության ու կրթության շնորհիվ իմ ներսում զարգացում ստացած հնարամտությունը, լայն աշխարհայացքն ու հատկապես առողջ դատելու կարողությունն ինձ թույլ էին տալիս գնահատել ու վերախմայնել իմ ստացած ինֆորմացիան, այլ ոչ թե պարզապես դա կուտակել՝ ուղեղը վերածելով անպետք իրեղենով լցված փոշոտ պահեստի:

Այսպիսով, արդեն վաղ մանկությունից ես բավականաչափ նախապատրաստված էի, որ կարողանամ կյանքում վաստակել իմ հացը: Սակայն, քանի որ ինձ միշտ հետաքրքրել են այնպիսի վերացական հարցեր, ինչպիսիք են կյանքի նպատակն ու իմաստը, և ես այդ հարցերին էի հատկացնում համարյա իմ ամբողջ ազատ ժամանակը, ապա ես չէի ձգտում ավելի շատ վաստակել, քան պահանջվում է կենսական կարիքները հոգալու կամ ինձ հետաքրքրող վայրերն արշավներ կազմակերպելու համար:

Քանի որ ես ծագումով աղքատ ընտանիքից եմ և նյութապես ապահովված չեմ եղել, ապա հաճախ հարկ էր լինում, որ դիմեմ զանազան խորամանկությունների, որպեսզի մի քիչ փող ձեռք գցեմ, սակայն նյութական միջոցներ ձեռք բերելու բուն գործընթացն ինձնից շատ ժամանակ չէր խլում, որովհետև իմ ստացած դաստիարակության ու կրթության շնորհիվ ես բավականաչափ ճարպիկ ու նախաձեռնող էի:

Որպես իմ գործարարական ունակությունների դրսևորման բնորոշ օրինակ՝ ես կպատմեմ իմ կյանքից մի դրվագ, երբ, ձեռքի տակ ունենալով շատ համեստ միջոցներ, ես ոչ մեծ մի արհեստանոց բացեցի: Այդ դրվագի մանրամասները ներկայացնելու պատճառով իմ պատմությունը մի փոքր կձգվի, բայց շնորհիվ այս գերազանց լիկյորի (խոսքը մեր մեջ՝ գերազանց հատկապես այն պատճառով, որ այն պատրաստված է հատուկ պայմաններում՝ ոչ թե ցամաքի վրա, այլ Ամերիկայի առափնյա մասերից հեռու կանգնած հին նավերի վրա)՝ իմ պատմությունը ձեզ շատ երկար չի թվա և ձեզ չի ստիպի հորանջել:

Եվ այսպես, դա եղել է «Ճշմարտություն որոնողների ընկերության» դեպի Պամիր կազմակերպած վերջին արշավից ոչ շատ առաջ՝ մի կազմակերպության, որի անդամն եմ եղել դրա ստեղծման հենց առաջին օրերից:

Այդ արշավից մոտավորապես երկու տարի առաջ ընկերության անդամները որոշել էին հավաքվել անդրկասպյան Չարջոու քաղաքում: Բոլոր նրանք, ովքեր պատրաստվում էին մասնակցել այդ ճանապարհորդությանը, 1900 թվականի հունվար ամսվա երկրորդ կեսին պետք է հաղիպեին Չարջոու քաղաքում և այնտեղից սկզբում շարժվեին Ամուդարյայի ափերով:

Քանի որ մինչև նշանակված ժամկետը բավական շատ ժամանակ ունեի, ես մեկնեցի Ալեքսանդրապոլ՝ ծնողներիս ացելության, և որոշ ժամանակ ապրեցի այնտեղ՝ երբեմն կարճատև ժամանակով մեկնելով Բաքու: Այդ քաղաքում ես մի քանի պարսիկների էի ճանաչում, որոնք տարված էին հինավուրց մոգությամբ: Այստեղ կազմավորվել էր մոգության սիրահարների ընկերություն, որին որոշ ժամանակով անդամակցել եմ:

Դեպքերը, որոնց մասին հիմա ուզում եմ պատմել, հենց Բաքվի հետ են կապված: Մի անգամ կիրակի օրով ես գնացի շուկա: Պետք է խոստովանեմ իմ մի թուլությունը. շատ եմ սիրում այցելել արևելյան շուկաներ: Ուր էլ որ ճակատագիրն ինձ տանի, որքան էլ սուղ պայմաններում գտնվելիս լինեմ, եթե տվյալ բնակավայրում շուկա կա, ես ինձ չեմ զրկում այնտեղ լինելու հաճույքից: Քրքրելով հին իրերի կույտերը՝ ես միշտ հույս եմ ունեցել ինչ-որ արտասովոր բան գտնել:

Այդ օրը ես մի քանի հին գարդեր առա և արդեն ուզում էի հեռանալ այդ հնավաճառների շուկայից, երբ իմ ուշադրությունը գրավեց լավ հագնված մի երիտասարդ կին, որն ինչ-որ բան էր ծախում: Ամեն ինչից երևում էր, որ նա մասնագետ առևտրական չէ, և միայն ծանր նյութական կացությունն է նրան ստիպել, որ գա այդտեղ և վաճառի իր իրեղենը: Նա իր առջև գետնին դրել էր էդիսոնի ձայնարկիչ:

Այն ինձ բոլորովին պետք չէր, սակայն, կարեկցելով այդ դժբախտ կնոջը, ես այն գնեցի՝ ծախսելով իմ բոլոր խնայողությունները: Տանը հայտնաբերեցի, որ դրան կից բազմաթիվ գլանիկներ կան, որոնց մեծ մասն արդեն պիտանի չէին: Բայց կային նաև մի քանի լավ պահպանված գլանիկներ, որոնք ձայնագրություն չէին պարունակում:

Ես ևս մի քանի օր անցկացրի Բաքվում միջոցների խիստ սուղ մնացորդներով և սկսեցի մտածել, թե ինչպես ավելացնեմ իմ դրամագույլը: Մի անգամ, երբ, իմ սենյակում նստած, գլուխ էի կոտրում

այդ խնդրի շուրջ, իմ հայացքը պատահաբար կանգ առավ այդ ձայնարկիչի վրա: Հանկարծ իմ գլխում մի գաղափար փայլատակեց, և ես անմիջապես ձեռնամուխ եղա դրա ի կատար ածմանը:

Բաքվում գործերս կարգավորելուց հետո ես նույն օրը նավ նստեցի և հինգ օր հետո հայտնվեցի Կրասնովոդսկում, որտեղ պատրաստվում էի իմ նյութական կացությունը բարելավել այդ ձայնարկիչի միջոցով:

Պետք է ասեմ, որ այդ շրջանում ձայնարկիչը չտեսնված բան էր, և ես առաջինն էի, որ տեղի բնակչությանը ծանոթացրի այդ հրաշալի գյուտին:

Ինչպես ասացի, ձայնարկիչի հետ մի քանի չձայնագրված գլանիկներ կային, և ես, քաղաքում գտնելով մի տաղանդավոր շրջիկ երաժշտի, դրանց մի մասի վրա մի քանի տեղական հայտնի մեղեդիներ ձայնագրեցի, իսկ մնացածի վրա՝ տեղական անվայելուչ անեկդոտների մի շարք:

Այնուհետև սարքի հետ եղած չորս լսափողակներին (հավանաբար գիտեք, որ Էդիսոնի առաջին ձայնարկիչներն իրենց հետ լսափողակներ ունեին) ավելացրի ևս երկուսը և գնացի շուկա, որտեղ մի չտեսնված ատրակցիոն բացեցի:

Ամեն մի լսափողակներից օգտվելու համար ես 5 կոպեկ գին նշանակեցի, և պատկերացրեք, որ շուկայում նստած լինելուս ամբողջ ընթացքում, ինչը մի քանի օր տևեց, չէր անցնում մի ընթացք, որ լսափողակներից որևէ մեկը հանկարծ պարապ մնար: Շուկայում մնալուս ամեն մի օրվա ընթացքում ես ավելի քիչ չէի վաստակում, քան այդ քաղաքի ամենահարուստ գործարարները:

Կրասնովոդսկից ես մեկնեցի Ղզըլ-Արվաթ, և այստեղ մեկ անգամ չէ, որ իմ սարքով հրավիրվեցի հարուստ թուրքմենների տները: Իմ այդ ներկայացումների դիմաց ես ոչ 'քիչ թենգեներ վաստակեցի, իսկ մի անգամ ինձ նույնիսկ երկու ընտիր թեքինյան գորգ նվիրեցին:

Երբ այդ քաղաքի սկզբնական հետաքրքրասիրությունն էլ էր արդեն բավարարված, ես գնացք նստեցի՝ մտադրվելով այդ շահավետ արհեստով նաև Աշխաբադում զբաղվել, բայց գնացքում հանդիպեցի «Ճշմարտություն որոնողների ընկերության» անդամներից մեկին, որի հետ գրագ եկա: Այդ հանգամանքն ինձ ստիպեց հրաժարվել շրջիկ երաժշտի իմ կարիերայից:

Իմ այդ ընկերը անկրկնելի տիկին Վիտվիցկայան էր, որը սկսել էր մշտապես տղամարդու հագուստ կրել: Նա մասնակցում էր մեր բոլոր վտանգավոր ու հոգնեցուցիչ արշավներին, որոնք կազմակերպում էինք դեպի Ասիայի քիչ հետազոտված շրջանները, դեպի Աֆրիկա, անգամ դեպի Ավստրալիա ու դրա կղզիները:

Նա պատրաստվում էր մասնակցել նաև մոտակա արշավին, բայց քանի որ մինչև նշանակված ժամկետը դեռ մի քանի ամիս կար, նա Վարշավայից ուղևորվել էր հասնել Անդիջան, որտեղ ապրում էր նրա քույրն իր ամուսնու հետ, որը Պոզնանի գործվածքեղենի ֆիրմայի առևտրական ներկայացուցիչն էր: Անդիջանում նա ուզում էր մի լավ հանգստանալ երկարատև ճամփորդությունից առաջ:

Գնացքում մենք զրուցեցինք ինչի մասին ասես, և ամեն ինչից զատ ես նրան պատմեցի իմ վերջին շահավետ ձեռնարկման մասին:

Ճշգրիտ չեմ հիշում, թե ինչից սկսվեց մեր բանավեճը, որի արդյունքում մենք որոշեցինք գրագ գալ, բայց ես պարտավորվեցի խիստ որոշակի գումար վաստակել մինչև ճիշտ նշանակված օրն ընկած ժամանակում՝ խստորեն պահպանելով որոշակի պայմաններ:

Այդ գրագն այնքան հետաքրքրեց Վիտվիցկայային, որ նա որոշեց ոչ միայն մնալ ու տեսնել, թե ես ինչպես եմ իրականացնում իմ պլանը, այլև հանձն առավ օգնել ինձ:

Պետք է խոստովանեմ, որ ես ինքս էլ էի տարված այդ բարդ խնդրի լուծմամբ և որոշել էի ամեն գնով հաղթել: Դեռ գնացքում ես ամեն ինչ մանրակրկիտ պլանավորել էի՝ և՛ մարտավարությունս, և՛ ռազմավարությունս, իսկ որպես առաջին քայլ՝ արդեն կազմել էի այսպիսի հայտարարություն.

Ունիվերսալ արհեստանոց

Անտարբեր մի՛ անցեք

Այստղ ձեզ կսպասարկեն ռեկորդային

կարճ ժամկետներում

Շտապե՛ք օգտվել մեր ծառայություններից

Բերե՛ք այն ամենը, ինչ վերանորոգման կարիք ունի

Մենք վերանորոգում ենք՝

կարի մեքենաներ, գրամենքենաներ, հեծանիվներ, գրամաֆոններ ու ձայնարկիչներ, էլեկտրական սարքավորումներ, լուսանկարչական սարքեր, բժշկական սարքավորումներ, պրիմուսներ, ժամացույցներ, ամեն տեսակի երաժշտական գործիքներ՝ ակորդեոն, կիթառ, ջութակ և այլն

Վերնորոգում ենք նաև կողպեքներ և ամեն տեսակի զենքեր

Վերականգնում և լաքապատում ենք ցանկացած տեսակի կահույք ինչպես մեր արհեստանոցում, այնպես էլ տնային պայմաններում

*Վերանորոգում, լաքապատում ու լարում ենք
դաշնամուր, ֆիսհարմոնիա*

*Տեղադրում և վերանորոգում ենք
էլեկտրական լուսավորություն, հեռախոս ու դռան զանգ*

Վերանորոգում ենք հովանոցներ, մանկական խաղալիքներ՝ տիկնիկներ և ամեն տեսակի ռետինե իրեր

*Մաքրում ու վերականգնում ենք՝
գորգեր, գլխաշորեր, գոբելեն, մորթիներ և այլն*

Մաքրում ենք ցանկացած ծագում ունեցող կեղտաբծեր

Մոսնձում ենք ջարդված ճենապակին

*Ռեստավրացիայի ենք ենթարկում
նկարներ և այլ անտիկվար իրեր*

*Մեր արհեստանոցն ունի լավ կահավորված
գալվանոպլաստիկայի արտադրամաս,
որտեղ առարկաներն արծաթապատում ենք,
նիկելապատում, բրոնզապատում և ոսկեզօծում*

Ինքնաեռները վերանորոգում ենք 24 ժամվա ընթացքում

*Կտորեղենն ասեղնագործում ենք
և կատարում հուլունքներով ապլիկացիա*

*Պատվերներ ենք ընդունում՝
ալեքաստրից ու գիպսից իրեր պատրաստելու համար,
ընտանի ու վայրի կենդանիներ, մրգեր և այլն
հանում ենք հանգուցյալի գիպսե դիմակը*

*Պատրաստում ենք արհեստական ծաղկեփնջեր ու ծաղիկներ՝
մումից, վելվետից, գունավոր թղթերից՝
պսակների ու կանանց գլխարկների համար*

*Պատրաստում ենք այցեքարտեր,
հրավիրատուներ և շնորհավորական բացիկներ*

*Պատրաստում ենք սեղմիրաններ և կալանդներ
և վերանորոգում դրանք*

*Կարում ենք կանացի գլխարկներ՝
փարիզյան վերջին նորաձևությանը համապատասխան:*

Հենց որ մեր գնացքը հասավ Աշխաբադ, ես սենյակ վարձեցի և ուստիկանությունից թույլտվություն ստացա, որ տպեմ ու տարածեմ իմ այդ հայտարարությունը: Հաջորդ օրը քաղաքի կենտրոնում շինություն վարձեցի արհեստանոցի համար, որն ուներ բավականին մեծ մի դահլիճ, որը ելք ուներ դեպի բանուկ փողոցը, և երկու փոքր սենյակներ: Նաև ուներ մի մարագ, որը գտնվում էր շենքին կից փոքրիկ բակում:

Ձեռք բերելով բոլոր անհրաժեշտ գործիքները՝ ես սենյակներից մեկը կահավորեցի որպես գավառնոպլաստիկայի արտադրամաս՝ տաշտերի փոխարեն տեղադրելով մի քանի հին թասեր: Շինության ճակատին մի ցուցանակ կախեցի, որի վրա խոշոր կարմիր տառերով սպիտակ ֆոնի վրա գրեցի հետևյալը.

«Ամերիկյան ունիվերսալ արհեստանոց

*Այստեղ կարճ ժամկետում վերանորոգում
և պատրաստում են ամեն ինչ»*

Հաջորդ օրը, երբ իմ հայտարարությունները պատրաստ էին, ես դրանց մի մասը փողոցի տղաների օգնությամբ կպցրեցի շենքերի պատերին, իսկ մնացած մասը ինքս բաժանեցի անցորդներին:

Իսկ դրա հաջորդ օրվանից սկսվեց մի իսկական «աշխարհակործանում»:

Առավոտվանից սկսած՝ իմ արհեստանոցի շեմին հավաքվեց մարդկանց մի հսկայական ամբոխ, որոնք ուզում էին ամեն մեկը մի բան վերանորոգել:

Տե՛ր աստված, ինչքան ասես, որ չէին բերել...

Նրանց բերածների մեջ կային շատ բաներ, որ ես կյանքումս չէի տեսել և անգամ չէի լսել, որ նման բաներ գոյություն ունեն: Իսկապես, ձեռքովս անցան այնպիսի անհավանական առարկաներ, ինչպես օրինակ՝ սպիտակած մազեր քաշելու սարք, բալի կորիզները հեռացնելու սարք, դեղափոշու համար պղնձարջասպի մանրիչ, կանաչի կեղծամի մետաղական ցանց և այլն:

Որպեսզի ձեզ որոշակի պատկերացում տամ այդ քաղաքի մասին, ես պետք է մի փոքր շեղվեմ նյութից:

Անդրկասպյան տարածաշրջանում և Թուրքեստանում ռուսներն ու մնացած եկվորները սկսել են բնակվել մի քանի տասնամյակ առաջ, և հին քաղաքների կողքին նրանք կառուցում էին նորերը: Աստճանաբար այդ շրջանի համարյա բոլոր քաղաքները դարձան երկմասանի. հինը քաղաքի, այսպես կոչված, ասիական մասն էր, և նորը՝ ռուսականը, և այդ մասերից ամեն մեկն ապրում էր իր ինքնուրույն կյանքով:

Քաղաքի նոր մասի բնակչությունը բաղկացած էր հայերից, հրեաներից, վրացիներից, պարսիկներից և այլն, բայց գերակշռում էին ռուսները, որոնց մեծ մասը պետական պաշտոնյաներ էին կամ անդրկասպյան գնդի նախկին զինձառայողներ:

Շնորհիվ այդ շրջանի բնության հարստության և տեղաբնիկների ազնվության, որոնք դեռ չէին ենթարկվել ժամանակակից քաղաքակրթության կործանարար ազդեցությանը, եկվորներն արագորեն հարստանում էին: Բայց քանի որ նրանք կուլտուրական ազդեցության չէին ենթարկվում անկիրթ պաշտոնյաների կողմից, որոնք ճակատագրի բերումով դարձել էին նրանց պետերը, ապա նրանք մնացել էին նույնքան անկուլտուրական, ինչպիսին կային նախքան այստեղ տեղափոխվելը: Եվ այդպիսով, թեև այդ շրջանի տնտեսական բարգավաճման շնորհիվ նրանք հարստացել էին, սակայն դա չէր զուգակցվել ինտելեկտուլ գարգացման հետ: Նրանք համարյա զուրկ էին մնացել նաև տեխնիկական գիտելիքներից:

Աշխարհով մեկ արագորեն տարածվող եվրոպական քաղաքակրթությունը դեռ չէր հասել այս վայրերի բնակիչներին: Թերթերից ու ամսագրերից քաղվող տեղակությունները նրանց էին հասնում աղավաղված ձևով, ինչի պատճառը լրագրողների աներևակայելի սոցիալությունն էր, որոնք ամենուրեք, հատկապես Ռուսաստանում, ամենաչնչին իսկ պատկերացում չէին ունենում իրենց գրածների վերաբերյալ:

Այստեղի նորահայտ հարուստներն ու դուրսպրծուկները ջանադիր նմանակում էին նրանց, ում «կուլտուրական» և «ժամանակակից» էին համարում, տվյալ դեպքում՝ եվրոպացիներին: Բայց քանի որ ստիպված էին ամբողջ տեղեկատվությունը քաղել ռուսական թերթերից ու ամսագրերից, որոնց

հրատարակիչներին ամենևին լուսավորյալ չես համարի, ապա կողքից դիտողի վրա նրանք թողնում էին խղճուկ ծաղրանկարի տպավորություն:

Այդպիսով, նյութապես բարգավաճող, բայց ծայրահեղ հետամնաց տեղաբնիկները կուլտուրա էին խաղում, ինչպես երեխաներն են իրենց խաղով փորձում նմանվել մեծահասակներին:

Ոչ մի տեղ այնքան չեն մտահոգվում այն մասին, որ, Աստված չանի, հանկարծ հետ չմնան նորածնությունից, ինչքան խուլ գավառում: Ոչ մի տեղ այնպես չեն ձգտում գնել և փոստով պատվիրել այն նորածն ապրանքները, որոնց մասին գրված է թերթերում ու ամսագրերում, և որոնք պետք է ունենա ամեն մի «կուլտուրական» մարդ:

Իմանալով գավառացիների այդ առանձնահատկության մասին՝ բոլոր արտասահմանյան առևտրականները, հատկապես՝ գերմանացիները, այստեղ են բերում հսկայական քանակությամբ ապրանքներ, որոնք իրենց ցածրորակ լինելու պատճառով ուրիշ տեղերում պահաջարկ չունեն, և որոնք, իրենց նոր տիրոջ մոտ հայտնվելով, արագորեն ջարդվում ու մաշվում են: Առանց ծիծաղի հնարավոր չէ կարդալ այն հայտարարությունները, որոնցով գովազդվում է, օրինակ, սովորական լուցկի վառելու հատուկ սարքը:

Քանի որ գնված ապրանքները հենց սկզբից բացարձակապես անպետք են տնտեսության համար կամ էլ արագորեն շարքից դուրս են գալիս, ապա ամեն մի ընտանիքում աստիճանաբար կուտակվում է այդ անպետքության հսկայական քանակություն. չէ՞ որ մոտակայքում որևէ արհեստանոց գտնել հնարավոր չէ:

Բայց կար ևս մի պատճառ, որ բնակչության մոտ այդքան անսարք իրեր էին հավաքվել: Այդ ժամանակներում հատկապես Ռուսաստանի ասիական շրջաններում ընդունված էր պահպանել բոլոր երբևէ ձեռք բերված իրերը և ոչ մի դեպքում չվաճառել, անգամ եթե դրանք բոլորովին պետք չեն իրենց տիրոջը: Եվ եթե նույնիսկ տերն ուզենար ինչ-որ բան դրանցից վաճառել, ապա հազիվ թե կարողանար գնորդ ճարել: Բացի այդ, ընդունված էր հին իրերը պահել ի հիշատակ մոտիկ մարդու կամ հիշարժան իրադարձության:

Արդյունքում ամեն մի տան ձեռնահարկն ու խորդանոցը բերնեբերան լցվում էին անհավատալի քանակությամբ ամեն տեսակի իրերով, որոնք փոխանցվում էին հորից որդուն:

Եվ երբ քաղաքում իմացան, որ մի արհեստանոց է բացվել, որտեղ ինչ ասես կարող են վերանորոգել, դեպի այն ձգվեցին մարդկանց թափոռներ, որոնք իրենց հետ բերում էին ամեն տեսակի հնոտի, օրինակ՝ պապիկի սիրելի բազկաթոռը կամ տատիկի ակնոցը, նախապապի բալալայկան կամ նախատատի ժամացույցը: Իմ ձեռքն ընկավ նաև ցեցը կերած մի հին ծածկոց, որով ծածկվել էր այն եպիսկոպոսը, որը մի գիշեր մնացել էր այդ անկողնային պարագայի տիրոջ տանը. նաև մի Ոսկե Աստղի շքանշան, որը պարսից շահը անձամբ շնորհել էր դրա ներկայիս տիրոջ հորը:

Եվ այդ ամենը ես վերանորոգեցի, ծակերը լցրեցի, ներկեցի, մաքրեցի: Ոչ մի անգամ չհրաժարվեցի վերցնել որևէ բան այն իրեղենից, որ բերել էին վերանորոգման, և որևէ իր հետ չհանձնեցի դրա տիրոջը առանց վերանորոգման:

Անգամ եթե ենթադրյալ վճարը չէր փոխհատուցելու իմ ծախսած ջանքերը, ես չէի հրաժարվում այդ աշխատանքից, քանի որ ինձ հետաքրքրում էր ինձ անձանոթ մեխանիզմի աշխատանքի սկզբունքը ուսումնասիրելը:

Չարդված ու անպետք իրերից բացի բերում էին նաև լրիվ սարքին իրեր, որոնց տերերը դրանցից չէին կարողանում օգտվել՝ ամենատարրական տեխնիկական գիտելիքներ չունենալու, երբեմն էլ ուղղակի անանց հիմարության պատճառով:

Այդ ժամանակներում այնպիսի տեխնիկական նորույթները, ինչպիսիք են կարի մեքենաները, հեծանիվները, գրամեքենաները և այլն, աշխարհով մեկ տարածվում էին անհավատալի արագությամբ: Հաճույքով գնելով կամ պատվիրելով այդպիսի նորույթներ՝ դրանց տերերը ստիպված էին լինում շատ շուտով դրանք տանել խորդանոց կամ նկուղ, քանի որ, չունենալով տարրական տեխնիկական գիտելիքներ և մոտակայքում որևէ արհեստանոց, նրանք չէին կարողանում կարգի բերել տվյալ սարքի ամենաչնչին վնասվածքը:

Ես կբերեմ իմ հաճախորդների անանց օգիտության մի քանի օրինակ, որից ես օգտվեցի ի շահ ինձ՝ դրա համար ամենաչնչին խղճի խայթ չզգալով:

Հիշում եմ, մի անգամ իր դասեր ուղեկցությամբ իմ արհեստանոցը եկավ մի շատ հարուստ ու հաստափոր հայ: Տնքալով ու փնջացնելով նա դուրս հանեց մի կարի մեքենա, որն իր ասելով

վերանորոգման կարիք ունենալու: Նա ասաց, որ դա գնել է Նիժնի Նովգորոդի տոնավաճառից, որպեսզի օժիտ տա իր աղջկան: Սկզբում կարի մեքենան շատ լավ է աշխատել, և նոր տերերի ուրախությանը չափ ու սահման չի եղել իրենց ձեռքբերման համար: Բայց մեկ էլ հանկարծ կարի մեքենան սկսել է, ինչպես հայն ասաց, «թարս կարել»: Ջննելով մեքենան՝ ես տեսա, որ այն հրաշալի բանող վիճակում է և ամբողջովին սարքին:

Հավանաբար գիտեք, որ որոշ կարի մեքենաներ կարի տեսակը կարգավորող բռնակից բացի ունեն նաև մի բռնակ, որով փոխվում է կարի ուղղությունը: Եթե այն թեքում ես, ապա կտորը սկսում է շարժվել հակառակ ուղղությամբ: Երևի ինչ-որ մեկը պատահաբար թեքել էր այն, և դրա հետևանքով մեքենան սկսել էր «թարս կարել»:

Ես իսկույն հասկացա, որ մեքենան խելքի բերելու համար պետք է ուղղակի նախկին դիրքին բերել այդ բռնակը, բայց տեսնելով, որ գործ ունեմ քոքված խաբեբայի հետ, որն իր հարստությունը կուտակում է աղքատներին խաբելով (նա երեխայի պես միամիտ բուխարացիներից ու թեքինցիներից կարակուլի մորթիներ էր գնում), ես որոշեցի նույնով վճարել նրան: Սկսեցի հայեցողություններ տեղալ այն խարդախների հասցեին, որոնք այդ մետաղի ջարդոնը սաղացրել են նրա գլխին, որից հետո թվարկեցի բոլոր այն փչացած դետալները, որոնք անհրաժեշտ է փոխել: Կարճ ասած, ես նրա գրպանը թեթևացրի 12 ռուբլի 50 կոպեկով, ասելով, որ մեքենայի հետևից կարող է գալ երեք օր հետո, թեև հենց որ հայր ու աղջիկ դուրս եկան արհեստանոցից, ես բռնակի դիրքը փոխեցի և մեքենան տարա դրեցի արդեն վերանորոգված իրերի կողքին:

Հիշում եմ նաև մի ուրիշ դեպք, երբ արհեստանոց մտավ մի սպա և տիրական տոնով ասաց. «Գնացե՛ք գնդի շտաբը և ասացե՛ք գրագրին, որ ես նրան հրամայում եմ... (խոսքը մեր մեջ՝ այդ ռուս սպայի գործը մինչև հիմա միայն այն էր եղել, որ հրամաններ արձակի)... որ ձեզ ցույց տա գրամեքենաները: Դրանք զննելուց հետո կզեկուցե՛ք ինձ, թե բանն ինչ է»,– այդքանն ասելուց հետո նա երեսը շուռ տվեց և դուրս գնաց:

Այդ ամբարտավան ու արհամարհական տոնը ոչ միայն զարմացրեց ինձ, այլև նույնիսկ մի քիչ ջղայնացրեց: Այնուհանդերձ ես որոշեցի գնալ այնտեղ գլխավորապես այն նպատակով, որ հետախուզեմ իրավիճակը և մի միջոց գտնեմ այդ սրիկային մի լավ դաս տալու համար:

Գնացի շտաբ, դիմեցի գրագրին և փոխանցեցի սպայի ասածները և նրանից իմացա, որ ինձ մոտ եկած սպան գնդի հրամանատարի համհարզն է:

Մինչ ես զննում էի գրամեքենաները, շատախոս գրագիրը, որի համակրանքը շահեցի՝ լավ ծխախոտ հրամցնելով ու սպայների կյանքից անվայելուչ անեկդոտներ պատմելով, ինձ պատմեց հետևյալը:

Այդ երեք գրամեքենաները բերվել էին Սանկտ Պետերբուրգից և սկզբնական շրջանում շատ լավ էին աշխատել. բայց շուտով դրանցից մեկը, որից հետո էլ նաև մյուս երկուսը շարքից դուրս են եկել միևնույն պատճառով. տպող ժապավենը դադարել է փաթաթվել կոճի վրա: Հրամանատարի համհարզը գնդի մատակարարը և շատ ուրիշներ փորձել են նորոգել այն, բայց, որքան էլ ջանացել են, բան դուրս չի եկել, և, և ահա արդեն երեք օր է, ինչ գնդի հրամաններն ու որոշումները ստիպված ձեռագիր են ուղարկում ուր որ հարկն է:

Գրագրի շատախոսության ընթացքում ուշադիր զննելով գրամեքենաները՝ ես շուտով պարզեցի, թե ինչ է կատարվել:

Ձեզնից ոմանք երևի հիշում են, որ նախկինում գրամեքենաների ժապավենն իր կոճի վրա փաթաթվում էր հատուկ տեղում ամրացված զսպանակի ազդեցությամբ: Ահա հենց այդ զսպանակներն էլ լուրջ էին: Դա մի հասարակ անսարքություն էր, բայց այն մարդկանց համար, որոնք գուրկ են ամենաչնչին տեխնիկական գիտելիքներից ու հմտություններից, այն վերացնելն անլուծելի խնդիր էր:

Իհարկե, ես գրագրին ոչինչ չասացի, թեև ճաշելու նրա հրավերն ընդունեցի և հաճույքով շքի ու շիլա կերա, որից հետո անդրջրհեղեղյան ու մաշված դողերով իմ հեծանիվով վերադարձա տուն:

Նույն օրվա երեկոյան հրամանատարի համհարզը կրկին եկավ և նույն ամբարտավան տոնով տեղեկացավ. «Դե՛, գործերն ինչպե՛ս են: Դուք կարո՞ղ եք վերանորոգել գրամեքենաները»:

Ես վատ դերասան չեի և անմիջապես իմ դերի մեջ մտա: Մուրբ անմեղություն խաղալով և հատուկ տեխնիկական տերմիններ մեջբերելով՝ ես նկարագրեցի, թե որքան բարդ կառուցվածք ունի ժամանակակից տեխնիկայի այդ հրաշքը, և թե որքան ն դժվար կլինի ինձ համար այդպիսի լուրջ

անսարքությունները վերացնելը: Իմ այդ չարչարանքը ես գնահատեցի բուն այդ գրամեքենայի գնի քառորդ մասի չափ:

Հաջորդ օրը զինվորների մի ամբողջ դասակի ուղեկցությամբ և համհարզի անմիջական հրամանատարության ներքո բոլոր երեք մեքենաները հանդիսավորությամբ բերվեցին իմ արհեստանոցը:

Իմ դեմքին տալով հնարավորինս մտահոգ արտահայտություն՝ ես սպային նախազգուշացրի, որ այդ պատասխանատու առաջադրանքը ես կկատարեմ տասը օրից ոչ շուտ: Վհատված համհարզը երկար ժամանակ ինձ համոզում էր գործն արագացնել, և ես, խոնարհաբար համաձայնելով աշխատել նաև զիշերները, խոստացա առաջին գրամեքենան վերադարձնել երկու օրից, բայց պայմանով, որ զինվորներն ամեն օր բերեն գնդի խոհանոցի մնացորդները, որպեսզի դրանցով կերակրեմ իմ երեք կաթնակեր խոճկորներին, որոնց վերջերս գնել ու պահում էի արհեստանոցի բակում գտնվող մարագում:

Երկու օր հետո առաջին գրամեքենան վերջապես «վերանորոգված էր», իսկ մյուսների հետ իմ «չարչարանքը» տևեց մինչև շաբաթվա վերջը:

Շնորհակալությունից ու տասնութ ռուբլուց բացի, որ ստացա ամեն մի վերանորոգված գրամեքենայի դիմաց, երեք ամիս շարունակ ես իմ խոճկորներին կերակրեցի զինվորների բերած խոհանոցային մնացորդներով: Այդ ժամկետի վերջում կաթնակերներն արդեն դարձան քաշը լրիվ տեղը վարագներ, որ աչք էին շոյում:

Բնականաբար ես բացատրեցի գրագրին, թե ինչ պիտի անի, եթե գրամեքենաները սկսեն նորմալ չաշխատել, բայց նա այդպես էլ չհասկացավ, թե ես ինչ «վերանորոգում» եմ արել դրանց հետ:

Համանման պատմություններ եղան նաև Մերվ քաղաքում, ուր տեղափոխեցի իմ արհեստանոցը, երբ Աշխաբադում ամեն ինչ վերանորոգեցի, պրծա: Մերվում իմ գործունեությունը ծավալեցի ամբողջ հինգ ամիս: Մի անգամ իմ արհեստանոց մտավ տեղի նախակրթարանի մի ուսուցիչ: Նա իր հետ բերել էր փչացած էլեկտրական մի մեքենա, որն օգտագործվում էր ֆիզիկայի դասերին փորձեր ցուցադրելու համար: Դա սովորական էլեկտրաստատիկական մեքենա էր, որն էլեկտրական լիցքեր էր արտադրում: Ինձ համար անհասկանալի էր, թե ինչու է ամեն մի կարգին դպրոց անպայման ուզում ունենալ «ժամանակակից տեխնիկայի այդ հրաշքից», որով ուսուցիչները, ցուցադրելով ժամանակակից գիտության ու տեխնիկայի բնագավառում ունեցած իրենց խոր գիտելիքները, ոչինչ չկասկածող աշակերտներին ստիպում են ձեռքները հպել այն սեղմակներին, որոնցում լարում է առաջանում: Դեռահասի ակամա ցնցումն ու դեմքը ծամածռելը, որն առաջանում է լիցքերի պարպումից, որպես կանոն քրքիջի պայթյուններ է առաջացնում համադասարանցիների մոտ: Մովորական լեյդենյան անոթով բեմադրվող այդ ամբողջ թատրոնը, ինչպես կարծում են ուսուցիչները, օգնում է, որ դպրոցականները լավ յուրացնեն ուսումնական նյութը:

Այդ սարքը պատվերով ստացվել էր «Միմենս և Հալսկե» գերմանական ֆիրմայից, որն իր բաժանունքն ունի Սանկտ Պետերբուրգում: Այնտեղից սարքը տեղ էր հասել քանդած վիճակում, և, չնայած հավաքել էին ըստ կից ուղեցույցի, սարքն այդպես էլ չէր ցանկացել աշխատել՝ այդ դպրոցի աշակերտներին զրկելով իրենց հասանելիք հաճույքը ստանալուց:

Ձննելով սարքը՝ ես հասկացա, թե բանն ինչ է. երկու սկավառակները վատ էին համակցված մեկը մյուսին: Բավական էր մի փոքր մանեկը թուլացնել և մի քիչ տեղաշարժել սկավառակներից մեկը, որպեսզի սկսի կայծ առաջանալ: Ես կարող էի մի րոպեում անել դա, բայց հարգարժան ուսուցչին, որը երեխաներին ուսուցանում էր մի բան, ինչից հենց ինքը գլուխ չէր հանում, ստիպեցի չորս անգամ գնալ-գալ այն հույսով, որ արդեն ավարտել եմ «բարդ վերանորոգումը», որի համար նա պետք է վճարեր 10 ռուբլի 75 կոպեկ:

Քանի դեռ գործում էր իմ արհեստանոցը, նմանատիպ դեպքեր ամեն օր էին լինում: Ես մեծ մեղք չէի համարում նրանց հիմարությունից ու տգիտությունից օգտվելը, որոնք անարժան կերպով բարձր պաշտոններ էին զբաղեցնում և, իրենք իրենց ինտելիգենտի տեղ դնելով, քամահրանքով էին վերաբերվում տեղական բնակչությանը:

Բայց ամենամեծ վաստակը ես ունեցա այն ժամանակ, երբ ինձ համար անսպասելի կերպով սկսեցի պատրաստել նորաձև կանացի սեղմիքաններ:

Այդ ժամանակաշրջանում փարիզուհիները սկսեցին ավելի ցածր սեղմիքաններ կրել՝ հանկարծակի սառչելով նախկին բարձրերի նկատմամբ:

Այդ նորամուծության մասին արագորեն իմացան տեղական նորաձևության առաջամարտիկները, բայց նրանք ոչ մի տեղից չէին կարող այդ նորաձև սեղմիրաններից գնել, քանի որ այդ շրջանը բավական հեռու էր «կուլտուրական կենտրոններից»: Ուստի շատ կանայք սկսեցին իմ արհեստանոցը բերել իրենց մոդայից դուրս եկած սեղմիրանները՝ հետաքրքրվելով, թե չէ՞մ կարող արդյոք դրանք համապատասխանեցնել նորաձևության նոր պահանջներին:

Դրանից էլ ամեն ինչ սկսվեց: Մի անգամ ինձ կետի բեղիկ պետք եկավ, որպեսզի վերաձևեմ մի տիկնոջ սեղմիրանը, որի մարմնաձևերը ծավալով աճել էին, և միաժամանակ այն կարճացնեմ նոր ճաշակին համապատասխան: Այդ կետի բեղիկի երկարատև ու ապարդյուն փնտրտուքից հետո մի գործակատար ինձ խորհուրդ տվեց մոդայից ընկած սեղմիրան գնել՝ վստահեցնելով, որ կրպակի տերն այն շատ էժան կտա, քանի որ այդ ապրանքն այլևս պահանջարկ չունի:

Ես գնացի այդ կրպակը և, մինչ զբաղված էի գինն իջեցնելու գործով, իմ գլխում մի միտք ծագեց, որից հետո ես ոչ թե մեկ սեղմիրան գնեցի, այլ ամբողջը, ինչ կար պահեստում: Դրանցից ամեն մեկն ինձ վրա նստեց 20 կոպեկ, թեև սովորաբար 4-5 ռուբլի արժեին: Հետո շրջեցի քաղաքի բոլոր խանութները և է՛լ ավելի էժան գներով (բոլորն ուզում էին գլուխներն ազատել չվաճառված ապրանքից) հավաքեցի քաղաքում եղած բոլոր սեղմիրանները:

Բայց դա դեռ բոլորը չէր: Ես իմ օգնականին ուղարկեցի, որ նման սեղմիրաններ գնի նաև մյուս բոլոր քաղաքներից, որոնք տեղաբաշխված էին Կենտրոնական Ասիական երկաթգծի երկայնքով, իսկ ինքս, զինվելով տոցով ու հարթաշուրթով, ձեռնամուխ եղա փարիզյան վերջին նորաձևությանը համապատասխանող սեղմիրաններ պատրաստելու գործին:

Գործն առանձնապես բարդ չէր. պետք էր ընդամենը մատիտով նշել սեղմիրանը կարճացնելու չափը, հարթաշուրթի օգնությամբ կոտրտել կետաբեղիկների ավելորդ մասերը, ապա կտրել գործվածքը: Այնուհետև Վիտվիցկայայի ղեկավարությամբ գործին լծված մի քանի աղջիկներ կարում էին գործվածքի եզրերը և կրկին իրենց հին տեղերը վերադարձնում հանված ժանյակները: Մեկ օրում մենք հասցնում էինք պատրաստել հարյուր այդպիսի սեղմիրան:

Ամենաձիժաղելին այն էր, որ կրպակների տերերը, որոնք ինձ վաճառել էին մոդայից ընկած սեղմիրանների իրենց ամբողջ պահուստները, հիմա, վիատությունից ատամները կրճտացնելով, ստիպված էին ինձնից կարճացված սեղմիրաններ գնել ոչ թե 10-12 կոպեկով, ինչպես վաճառել էին, այլ ամեն մեկի համար 3 ռուբլի 50 կոպեկ վճարելով, քանի որ դրանք մեծ պահանջարկ էին վայելում:

Որպեսզի դուք պատկերացում ստանաք իմ այդ բիզնեսի ծավալների մասին, ասեմ, որ ես Կրասնովոդսկում, Մերվում, Աշխաբադում, Բուխարայում, Ղզըլ-Արվաթում, Սամարղանդում և Տաշքենդում վաճառեցի ավելի քան 6 հազար հատ սեղմիրան:

Իմ այդ ձեռնարկման հաջողության հիմքում դրված չէին ո՛չ տեղացիների միամտությունն ու դյուրահավատությունը, որոնք արդեն ասացվածք են դարձել, ո՛չ էլ իմ ճարպկությունն ու հնարամտությունը, որոնք դրսևորվում էին ցանկացած իրավիճակում: Իմ նյութականի բարգավաճման համար ես պարտական եմ ինչպես ինձ, այնպես էլ բոլոր մարդկանց բնորոշ ծուլության դեմ իմ անհաշտ ու համառ պայքարին: Ես զարմանքով նկատել եմ, որ ժամանակ առ ժամանակ իմ օրգանիզմը վերակառուցվում և սահմանային պայմաններում կարծես ձեռք է բերում երկրորդ շնչառություն՝ ի մի բերելով իր բոլոր հնարավորությունները, ինչն ինձ թույլ է տալիս շաբաթներով, նույնիսկ ամիսներով գրեթե անքուն մնալով անընդհատ աշխատել՝ առանց հոգնածություն զգալու:

Այդ անգամ նույնպես ես էներգիայի անսովոր հորդում զգացի, որն ինձ թույլ տվեց տանել գրազը և սահմանափակ ժամանակի ընթացքում վաստակել մեծ գումար:

Մարդու օրգանիզմում առկա առանձնահատուկ կարողությունների բացահայտման այդ երևույթն այնքան հետաքրքրեց ինձ, որ ես որոշեցի զբաղվել դրա հետազոտությամբ:

Իմ օրգանիզմի այդ անընթացիկ կարողությունը հատկապես վառ էր արտահայտվում բարդ իրադրություններում, որոնցից մեկը հենց նոր նկարագրեցի: Ամբողջ օրվա ընթացքում իմ արհեստանոցի դռան մոտ հսկայական հերթ էր լինում, որում գտնվողների մի մասն իրենց անսարք իրեղենն էր բերում վերանորոգման, իսկ մյուս մասն ուզում էր արդեն ստանալ վերանորոգվածը: Աշխատանքային օրվա մի զգալի մասը ծախսվում էր այդ ընդունում-հանձնում արարողության վրա: Ընդմիջումներն այնքան հազվադեպ ու կարճատև էին լինում, որ ես հազիվ էի հասցնում շուկա գնալ և գնել աշխատանքի համար պետք եկած բաները: Արդյունքում ստիպված էի լինում աշխատել նաև գիշերները:

Ամբողջ այն ընթացքում, որ իմ արհեստանոցը գոյություն ուներ, ես աշխատում էի նույն ժամակարգով՝ ցերեկով ընդունում ու հանձնում էի պատվերները, իսկ գիշերներն աշխատում էի այդ պատվերների վրա:

Պետք է ասեմ, որ այդ աշխատանքում ինձ շատ է օգնել Վիտվիցկայան, որը շատ շուտով դարձավ հովանոցների, կանացի սեղմիրանների ու գլխարկների վերանորոգման բնագավառների և հատկապես արհեստական ծաղիկների պատրաստման գերագանց մասնագետ: Ինձ հետ նաև երկու պատանիներ էին աշխատում, որոնց վարձել էի հենց սկզբից: Նրանցից ավագը գավառից առաջ մետադների մակերևույթները մաքրում էր ու ապա փայլաեղկում, իսկ կրտսերին ուղարկում էի զանազան հանձնարարություններով և, բացի դրանից, նա վառ էր պահում դարբնոցի կրակը և փչում դարբնոցի փուքերը: Որոշ ժամանակ հետո արհեստանոցում մեզ սկսեցին օգնել, և այն էլ՝ ոչ վատ, նահապետական ընտանիքներից ելած մի քանի աղջիկներ, որոնց իրենց ծնողներն էին ուղարկել, որ կարուձև սովորեն:

Արհեստանոցի բացման հենց սկզբից, երբ ընդամենը չորսով էինք աշխատում, այնպիսի տպավորություն էր ստեղծված, որ դեպի շինության ներքին բաժանմունքները տանող դռան հետևի կողմում, որ վրա, բնականաբար, ես փակցրել էի «Կողմնակի անձանց մուտքն արգելվում է» ցուցանակը, աշխատում են առնվազն մի քանի տասնյակ մարդիկ:

Այն երեքուկես ամսվա ընթացքում, որ իմ արհեստանոցը գործում էր միայն Աշխաբադում, ես վաստակեցի հիսուն հազար ռուբլի: Դուք պատկերացնում եք, թե դա ինչ գումար էր այն ժամանակներում:

Համեմատության համար ասեմ, որ ռուսական պետության մեջ ծառայության ընդունված միջին կարգի պաշտոնյան ամսական ստանում էր 33 ռուբլի 33 կոպեկ և դրանով պահում իր ամբողջ ընտանիքը: Բարձր կարգի պաշտոնյան ստանում էր 45 ռուբլի 50 կոպեկ, որը բավականին լավ ապրուստ էր ապահովում դառնալով շատերի նախանձի առարկան:

Մսի մեկ ֆունտն արժեր 6 կոպեկ, հացինը՝ 2-3 կոպեկ, որակյալ խաղողինը՝ 2 կոպեկ: Մի՛ մոռացեք, որ մի ռուբլին 100 կոպեկ է:

50 հազար ռուբլին այն ժամանակ մի հսկայական կարողություն էր:

Երբ իմ ամբողջ ուժերը ես նվիրել էի արհեստանոցին, մի անգամ չէ, որ պատեհ առիթ ստեղծվեց մեծացնելու իմ կարողությունը՝ փող ներդնելով որևէ շահավետ ձեռնարկման մեջ, բայց ես ստիպված էի հրաժարվել դրանից, քանի որ տիկին Վիտվիցկայայի հետ կապած մեր գրագի պայմանն այնպիսին էր, որ ես պետք է փող վաստակեի միայն ֆիզիկական աշխատանքով, և ոչ ֆինանսական աճպարարություններով:

Ես այդ գրագը շահեցի՝ սահմանված ժամանակահատվածում վաստակելով պահանջվածից 4 անգամ ավելի մեծ գումար և, չնայած դրան, որոշեցի շարունակել այդ գործը՝ արհեստանոցս տեղափոխելով մի այլ քաղաք:

Վիտվիցկայան մեկնեց իր քրոջ մոտ, իսկ ես ծախսիցի ամբողջ կահավորանքը և երեք օր հետո արդեն պատրաստ էի հեռանալու Մերվից:

Այն, ինչ ձեզ պատմեցի, կարծում եմ, որ ձեզ կհանգեցնի մի մտքի, որը ես համապատասխան եմ համարում գոյություն ունեցող իրավիճակին: Դրա էությունն այն է, որ այն առանձնահատուկ գծերը, որոնք ամերիկացիների կարծիքով հատուկ են միայն իրենց, իրականում լայնորեն տարածված են նաև այլ ժողովուրդների միջավայրում: Ընդ որում այդ ժողովուրդներն ունեն նաև այլ օգտակար գծեր, որոնցից զուրկ են Հյուսիսային Ամերիկայի բնակիչները: Դեպքը, որն ուզում եմ հիմա պատմել, համոզիչ կերպով կապացուցի իմ ասածի ճշտությունը և որոշակի պատկերացում կտա իմ նախաձեռնողական կարողության վերաբերյալ:

Պետք է նշեմ, որ իմ արհեստանոցը բացելուց հետո շատ շուտով ես հայտարարություն տվեցի, որ զանազան ապրանքներ եմ գնում: Ես դա արեցի երկու պատճառով. նախ՝ ստացած պատվերները կատարելու համար ինձ անհրաժեշտ էր ձեռքի տակ ունենալ տարբեր նյութեր ու պահեստամասեր և երկրորդ՝ ես հույս ունեի, որ ամեն տեսակի հին իրերի և դեն զցելու ապրանքների մեջ կգտնեմ ինչ-որ մի արժեքավոր բան, քանի որ հետաքրքրված էի հնամենի իրերով:

Այդ վայրերից հեռանալուց մի քանի օր առաջ շուկայում ես պատահաբար հանդիպեցի մի վրացու, որին նախկինում մի անգամ հանդիպել էի անդրկովկասյան երկաթուղու կայարաններից մեկի բուֆետում, որտեղ նա շվեդական սեղաններ էր սպասարկում: Հիմա նա զբացված էր ռուսական

բանակին մթերքներ մատակարարելու գործով և ինձ առաջարկեց, որ իրենից գնեմ մի քանի հին երկաթյա մահճակալներ:

Նույն օրվա երեկոյան ես գնացի նրա մոտ, և մենք միասին իջանք նկուղ, որպեսզի տեսնենք այնտեղ պահվող մահճակալները: Դիտումն ավարտելուց հետո ես շտապեցի անմիջապես վեր բարձրանալ և գործարքի պայմանները քննարկել դրսում գտնեմ մի քիչ շունչ քաշելուց հետո, քանի որ նկուղում անտանելի հոտ էր գալիս: Ինչպես պարզվեց, այդ հոտն արձակում էին նկուղում դրված քսան տակառ ծովատառեխները, որոնք այդ վրացին գնել էր Աստրախանից զինվորական ճաշարանի համար: Երբ առաջին երկու տակառը բացել էին, պարզվել էր, որ դրանք արդեն հոտած են: Որպեսզի սննդամթերք մատակարարողի իր հեղինակությունը չզցի, առևտրականը որոշել էր այդ ձուկն այլևս ցույց չտալ ու չառաջարկել ոչ մեկին և հնարավորինս արագ ազատվել այդ ապրանքից:

Նրան հատկապես ջղայնացնում էր այն, որ բացի այդ ապրանքը գնելու վրա շոշափելի գումար կորցնելուց, ինքը պետք է նաև ծախս աներ, որպեսզի այդ քսան ծանր տակառները հասցնեի աղբանոց, այլապես կարող էր դեռ մի բան էլ տուգանվել սանիտարական հանձնաժողովի կողմից:

Մինչ վրացին պատմում էր այս մասին, ես արդեն զցում-բռնում էի, թե ինչպես ինչ-որ ձևով փող աշխատել դրա վրա: Իմ մտքերի ընթացքն այսպիսին էր: Կա քսան տակառ հոտած ծովատառեխ, որը պատրաստվում են աղբանոց տանել: Բայց դատարկ փայտյա տակառն արդեն արժե մեկ ռուբլի: Հետևաբար պետք է մի բան մտածել, որ նախ այդ տակառները ձրիաբար ազատվեն իրենց հոտած պարունակությունից, քանի որ դրանց աղբանոց հասցնելու ծախսը կլինի տակառների գնից ոչ պակաս:

Եվ հանկարծ ծագեց գաղափարը. ծովատառեխը, մանավանդ հոտածը, հիանալի պարարտանյութ է, և այգի ունեցողներն անշուշտ կհամաձայնեն, որ տակառները տանեն, դատարկեն իրենց այգիներում և մաքրված տակառները վերադարձնեն ինձ, եթե այդ պարարտանյութը ձրի տամ: Դրանք հետո կարելի է ծխահարել, որպեսզի հոտն անցնի, որից հետո դնել վաճառքի, քանի որ փայտյա տակառները շուկայում մեծ պահանջարկ ունեն: Արդյունքում ես կունենամ 20 ռուբլի՝ այդ առևտրական գործարքի վրա ծախսելով ընդամենը կես ժամ, և այդ ընթացքում ոչ ոք չի տուժի, իսկ վրացին որոշակի գումար կխնայի, որը պետք է ծախսեր այդ ծանր տակառներն աղբանոց տանելու համար:

Մտքում այդ հաշվարկը կատարելուց հետո ես վրացուն ասացի. «Եթե մահճակալների գինը մի քիչ իջնես, ես ձրի այդ քսան տակառները դուրս կհանեմ քո նկուղից»:

Մենք եկանք համաձայնության, և ես խոստացա հաջորդ առավոտյան նրան ազատել այդ գարշահոտ ապրանքից:

Երբ ես վճարեցի մահճակալների համար և դրանք բարձեցի սայլի վրա, այնտեղ տեղավորեցի նաև մի տակառ այդ ձկից, որպեսզի ցույց տամ որևէ այգեգործի: Հասանք արհեստանոց և բեռը տեղավորեցինք մեր պահեստում:

Հենց ադ ժամանակ արհեստանոց մտավ մի ծեր հրեա՝ ինձ մոտ աշխատող պատանիների հայրը: Նա հաճախ էր գալիս և օգնում իր որդիներին կամ էլ գալիս էր ուղղակի որևէ մեկի հետ զրուցելու համար: Ես դուրս եկա բակում ծխելու և հանգստանալու, և հանկարծ գլխումս միտք ծագեց, որ այդ հոտած ձկներով կարելի է կերակրել նաև իմ գոճիներին: Օերունուն ոչինչ չբացատրելով՝ ես նրան խնդրեցի, որ օգնի բացել բերածս տակառը:

Երբ կափարիչը հանեցինք, ծերունին կոացավ տակառի վրա, հոտ քաշեց և հանկարծ բացականչեց. «Հոյակա պ ծովատառեխ է... Վաղուց է, ինչ չեմ կերել դրանից. կարծում եմ, այն ժամանակից ի վեր, երբ ոտք դրեցի այս անիծյալ երկրամասում»:

Ես մատու կծեցի: Իմ կյանքի մեծ մասն անցկացնելով Ասիայում, որտեղ ծովատառեխ չեն ուտում, ես դրանից բոլորովին գլուխ չէի հանում: Ես երբեմն փորձել էի դրանից ուտել, բայց հոտն ինձ դուր չէր եկել, և ես երբեք չէի կարողացել հասկանալ՝ ձուկը թա րմ է, թե ոչ: Ես չէի կարող ականջի հետև գցել մի մարդու խոսքը, որը երկար ժամանակ ապրել էր Ռուսաստանում, մթերային խանութ էր ունեցել և տարբեր մթերքների թվում նաև այդ ձկից էր վաճառել:

Ես զգուշորեն նրան հարցրի, թե չի՞ սխալվում արդյոք այդ ձուկը գովելով, որին մինչև հոգու խորքը վիրավորված զրուցակիցս պատասխանեց. «Ի՛նչ կասկածի մասին է խոսքը. սա համեմունքներով աղ դրած գերազանց ծովատառեխ է...»:

Դեռևս չկարողանալով ազատվել իմ կասկածներից՝ ես այդ մարդուն ասացի, որ այնպես է ստացվել, որ գնել եմ այդ ծովատառեխի մի ամբողջ խմբաքանակ, և որ մենք այսպիսի մի նախանշանի ենք հավատում. եթե ապրանքն արդեն բացվել է, ապա դրա մի մասը պետք է վաճառվի անհապաղ, այդ դեպքում հետո մնացած առևտուրը հաջող կընթանա:

Այդ եղանակով ես ուզում էի վերջնականապես համոզվել, որ ապրանքն իսկապես լավորակ է: Արհեստանոցիս մոտակայքում շատ հրեաներ էին ապրում, որոնց մեծ մասը զբաղվում էր առևտրով: Քանի որ արդեն մութն ընկնում էր, համարյա բոլոր խանութներն արդեն փակ էին, բայց մեզնից ոչ շատ հեռու ապրում էր Ֆրիդման անունով մի ժամագործ: Մենք նրան հրավիրեցինք, և նա մի դյուժին ծովատառեխ գնեց՝ մի գույգի համար վճարելով 15 կոպեկ:

Մեր հաջորդ գնորդը փողոցի անկյունի դեղատան տերը եղավ, որը միանգամից գնեց 50 հատ: Միայն լսելով, թե իմ ապրանքն ինչպես են գովում բոլոր այդ մարդիկ, ես համոզվեցի, որ ծերունին ճիշտ է ասում: Հաջորդ առավոտյան, դեռ լույսը կարգին չբացված, ես մի քանի սայլ վարձեցի և մնացած տակառներն էլ կրեցի ինձ մոտ՝ բացառությամբ երկուսի, որոնք բացվել էին մի քանի ամիս առաջ և դրանց միջի ծովատառեխն իսկապես հոտած էր. դրանք ես պատվիրեցի տանել աղբանոց:

Զբացված տակառների ծովատառեխը միանգամայն թարմ էր և, ինչպես պնդում էին գնորդները, գերազանց որակ ուներ:

Ակներն է, որ ոչ վրացի առևտրականը, ոչ նա, ով բացել էր այդ երկու տակառները, երբեք ծովատառեխ չէին կերել և դրա մասին ինձնից ավելի շատ բան չգիտեին, այսինքն՝ ոչինչ չգիտեին: Նրանց չափազանց նուրբ հոտառությունը չար կատակ էր խաղացել նրանց հետ, ինչի արդյունքում վրացի առևտրականը ոչ քիչ կորուստներ ունեցավ:

Երեք օրվա ընթացքում, իմ ծանոթ հրեայի օգնությամբ, որին ամեն ծախված տառեխի համար վճարում էի կես կոպեկ, և նա շատ գոհ էր դրանից, ամբողջ ապրանքը մենք վաճառեցինք մեծածախ ու մանրածախ եղանակներով:

Այդ ժամանակ ես արդեն փակում էի իմ բոլոր գործերը, և այդտեղից մեկնելուս նախօրյակին այդ վրացի արևտրականին և էլի մի քանի ծանոթների հրավիրեցի հրաժեշտի ընթրիքի: Սեղանի շուրջ ես պատմեցի Ծովատառեխի հետ կապված ամբողջ պատմությունը և գրպանիցս փող հանելով՝ առաջարկեցի այդ մարդուն, որից քսան տակառ ծովատառեխ էի վերցրել, որ նա վերցնի ստացված շահույթի կեսը: Բայց վրացին, խստորեն հետևելով առևտրական գործերի նկատմամբ տեղացիների մոտ հաստատում գտած հայացքներին, հրաժարվեց այդ փողերից: Նա ասաց որ ծովատառեխով լիքը այդ տակառները տվել է ինձ, քանի որ դրանց կիրառության ձևը չէր գտնում, և եթե ես դրանցով կարողացել եմ ինչ-որ գումար վաստակել, ապա ամբողջ վաստակը պատկանում է միայն ինձ: Նա բոլորովին իրեն խաբված չէր զգում և նեղացած չէր, այլ, ընդհակառակը, մյուս ներկաների հետ միասին հիացմունք հայտնեց իմ նախաձեռնողության վերաբերյալ:

Հաջորդ օրը, Մերվից դուրս գալուց առաջ, ես իմ ուղեբեռի մեջ մի տիկ հրաշալի գինի գտա, որն այդ վրացու նվերն էր ինձ:

Արհեստանոցի հետ կապված այդ պատմությունից հետո անցել էր մի քանի տարի, որոնց ընթացքում ես անխոնջ կերպով զբաղվում էի իմ գլխավոր նպատակի իրականացման համար անհրաժեշտ պայմանները նախապատրաստելով և հաճախ ստիպված էի լինում ժամանակ առ ժամանակ զբաղվել նաև այս կամ այն առևտրական նախագծով:

Թեև այդ տարիների ընթացքում ինձ հետ տեղի ունեցած շատ բաներ ձեռք կարող էին հետաքրքիր ու օգտակար թվալ ինչպես հոգեբանական, այնպես էլ գուտ գործնական առումներով, սակայն, որպեսզի շատ չշեղվենք մեր քննարկվող թեմայից, ես այսօր մանրամասն կանգ չեմ առնի այդ ժամանակահատվածի վրա, մանավանդ որ պատրաստվում եմ առանձին գիրք նվիրել այդ տարիներին:

Միայն ասեմ, որ այն ժամանակ, երբ իմ առջև որոշակի գումար վաստակելու նպատակ էի դնում, ես արդեն բավական փորձառու գործարար էի: Եվ թեև նյութական բարեկեցությունս ապահովվելն ինքնին իմ կյանքի նպատակը չէր, այնուհանդերձ ես այդ բնագավառում այնպիսի հաջողություններ էի հասել, որ դրանց կնախանձեին շատ ամերիկյան բիզնեսմեններ:

Ես անմիջական մասնակցություն եմ ունեցել շատ առևտրական ձեռնարկումներում, որոնք հաճախ լայն ընդգրկում են ունեցել: Օրինակ՝ ես գործարքի մեջ էի մտնում մասնավոր ֆիրմաների և նույնիսկ կառավարության հետ՝ ճանապարհաշինության գծով: Ես բազմաթիվ խանութներ,

ռեստորաններ և կինոթատրոններ են բացել, ապա դրանք վաճառել, երբ զգալի հաջողությունների են հասել գործունեության տվյալ բնագավառում. կարող են գլուխ գովել նաև, որ մեծ քանակությամբ անասուններ են տեղափոխել Ռուսաստան տարբեր երկրներից, գլխավորապես՝ Քաջգարից. ունեցել են նավթահորեր և ձկնորսանավեր, պատահել է, որ մասնակցել են միաժամանակ մի քանի առևտրակական ձեռնարկումների: Բայց ամենաշատն իմ սրտին մոտ է եղել արևելյան գորգերի և արվեստի հնամենի այլ առարկաների առևտրով զբաղվելը:

Մակայն 4-5 տարի այդպիսի բուռն գործունեությամբ անցկացնելուց հետո ես ի վերջո վաճառել եմ ամբողջ անշարժ գույքս, փակել իմ ունեցած ֆիրմաները և 1913 թվականի վերջում ժամանել Մոսկվա, որպեսզի գործնականում իրականացնեմ իմ գաղտնի երազանքները: Այդ ժամանակ իմ տրամադրության տակ ունեի 1 միլիոն ռուբլի և արժեքավոր իրերի երկու հավաքածու. դրանցից մեկը արևելյան գորգերն էին, իսկ մյուսը բաղկացած էր չինական ձենապակուց պատրաստված առարկաներից:

Թվում էր, թե նման կապիտալ ունենալով՝ ես կարող եմ ինձ թույլ տալ այլևս երբեք չհոգալ այն մասին, թե որտեղից միջոցներ գտնեմ այն գաղափարների իրականացման համար, որոնք այդ ժամանակահատվածում բավական որոշակի տեսք էին ստացել: Ես պատրաստվում էի հիմնել հատուկ Ինստիտուտ, որ այնպիսի պայմաններ ստեղծեմ, որոնցում մարդը կարողանա մտորել կյանքի իսկական իմաստի մասին՝ խուսափելով այն հակասություններից, որոնք ծագում են նրա գիտակցական անձնական դրսևորումների և մարդկային բնույթում ծնունդ առնող բնագոյների միջև: Դա համաշխարհային պատերազմից մի տարի առաջ էր:

Մոսկվայում, ապա նաև Մանկոտ Պետրեբուրգում ես մի շարք դասախոսություններ կարդացի, որոնք գրավեցին մտավորականության ներկայացուցիչների և գիտական շրջանակների ուշադրությունը, և շուտով իմ աշակերտների ու հետևորդների թիվը սկսեց աճել:

Իմ պլաններն իրականացնելու ընթացքում ես ձեռնարկեցի որոշ քայլեր, որոնց նպատակն իմ Ինստիտուտի հիմքը զգել էր:

Կամաց-կամաց ես սկսեցի նախապատրաստել իմ վաղեմի երազանքի համար անհրաժեշտ ամեն ինչը: Ես գնեցի հարմար հողամաս, եվրոպական շատ երկրներում պատվիրեցի այն ամենը, ինչ հնարավոր չէր ձարել Ռուսաստանում, և շուտով հավաքեցի ապագա Ինստիտուտի համար անհրաժեշտ ամբողջ կահավորանքը:

Այդ կազմակերպչական աշխատանքի ամենաթունդ պահին բռնկվեց համաշխարհային պատերազմը, և ես ստիպված եղա ընդհատելու բոլոր նախապատրաստական աշխատանքները և սպասել ռազմական գործողությունների ավարտին ու քաղաքական իրավիճակի կայունացմանը: Բայց պատերազմը հա՛շարունակվում էր ու շարունակվում, իսկ արագ խաղաղություն հաստատելու հույսերը՝ քշանում: Իրադրության վատացման պատճառով ես ստիպված եղա տեղափոխվել Կովկաս և մտադիր էի այնտեղ սպասել պատերազմական գործողությունների ավարտին:

Զնայած բարդ քաղաքական և տնտեսական իրադրությանը՝ հասարակության որոշակի շրջանների հետաքրքրությունն իմ ուսմունքի նկատմամբ շարունակում էր աճել: Առավել նվիրված հետևորդներս տեղափոխվեցին Եսենտուկի, որտեղ ես բնակություն էի հաստատել: Այստեղ հավաքվեցին ոչ միայն մերձավոր շրջանների՝ իմ ուսմունքով հետաքրքրված բնակիչները, այլև մի քանի մոսկվացիներ և պետերբուրգցիներ. ուստի ես, այլևս չսպասելով լավ ժամանակների, սկսեցի այնտեղ ծավալել իմ գործունեությունը:

Բայց շուտով նույնիսկ այդ հեռավոր անկյունում դեպքերն այնպիսի ընթացք ստացան, որ ինձ վիճակվեց հոգալ ոչ միայն աշխատանքիս, այլև տարրական գոյությունս պահպանելու մասին:

Միներալնիե Վոդիի շրջանը, որտեղ մենք ապրում էինք, վերածվեց քաղաքացիական պատերազմի ռազմական գործողությունների կենտրոնի, և մենք հանկարծակի հայտնվեցինք երկու կրակի արանքում: Քաղաքներն անընդհատ ձեռքից ձեռք էին անցնում. այսօր այստեղ բոլշևիկներն էին հրամաններ արձակում, հաջորդ օրը կազակներն էին քաղաքը գրավում, իսկ մյուս օրը նրանց դուրս էին մղում կամավորական սպիտակ բանակի զորամասերը: Կային նաև անորոշ քաղաքական կողմնորոշում ունեցող զինված խմբավորումներ, որոնք հիմնականում զբաղվում էին թալանով ու սպանություններով:

Երբեմն, առավոտյան աթոսանալով, մենք չգիտեինք, թե ինչ իշխանություն է քաղաքում. հարկ էր լինում դուրս գալ փողոց, որ կողմնորոշվես ըստ իրադրության: Անձամբ ինձ համար Ռուսաստան գալուցս հետո դա նյարդային ամենամեծ լարվածության ժամանակաշրջանն էր:

Այդ ժամանակ ես պետք է հոգ տանեի ոչ միայն իմ, այլև հարյուրավոր մարդկանց համար, որոնք հայտնվել էին իմ խնամակալության տակ: Ամենաշատն ինձ ահնանգստացնում էր այն, որ իմ աշակերտներից 20 հոգի (շուտով իրենք սկսեցին իրենց այդպես կոչել) գորակոչային տարիքում էին: Ջահել տղաները և անգամ միջին տարիքի մարդիկ մշտապես գտնվում էին հավաքագրվելու վտանգի տակ, ինչը կարող էր նախաձեռնել հակամարտող կողմերից յուրաքանչյուրը. այսօր՝ բոլշևիկները, վաղը՝ սպիտակները, հաջորդ օրը՝ այդտեղի ինչ-որ մի զինված ավազակախումբ:

Ուղղակի հնարավոր չէր մշտապես գտնվել դամոկլյան սրի տակ. հարկավոր էր ինչ-որ ելք գտնել:

Մի անգամ երեկոյան, երբ հրանոթաձգությունն առավել ուժեղ էր, և իմ ընկերների անհանգստությունը հասավ իր գագաթնակետին, ես լրջորեն մտահոգվեցի մեր վիճակով:

Որևէ քիչ թե շատ ընդունելի լուծում փնտրելիս ես հանկարծ հիշեցի իմաստուն մուլա Նասրեդինի մի ասացվածքը, որը խորհուրդ էր տալիս կյանքի ցանկացած իրադրությունում օգտակարը համատեղել հաճելիի հետ:

Պետք է ասեմ, որ արդեն երկար տարիներ ես հետաքրքրվում էի հնէաբանությամբ, և, որպեսզի լույս սփռեմ պատմության որոշ մույթ էջերի վրա, բազմաթիվ արշավների ընթացքում պեղումներ էի անում: Ինձ հետաքրքրում էին այն կառույցները, որոնց հնէաբանները դոլմեններ են անվանում: Հեռավոր անցյալից մեզ հասած այդ շինություններից կարելի է հանդիպել համարյա բոլոր աշխարհամասերում:

Ես արժանահավատ վկայություններ ունեի, որ նման դոլմեններ կարող են հանդիպել նաև Կովկասում և նույնիսկ մոտավոր կերպով գիտեի այն շրջանը, որը հարկավոր էր մանրակրկիտ հետազոտել: Իմ ժամանակը երբեք չէր հերիքել, որ լրջորեն զբաղվեմ այդ հարցով, բայց, հաճախ լինելով Կովկասում, երբեք տեղանքը հետազոտելու առիթը բաց չէի թողնում, և երկար տարիների ընթացքում իմ հավաքած տեղեկություններն արդեն թույլ էին տալիս բավական հիմնավոր ենթադրություններ անել:

Մեկ անգամ ևս վերլուծելով ձեռքիս տակ եղած տվյալները՝ ես հանգեցի այն եզրակացության, որ Կասպից ծով արևելյան ափի և Կովկասյան լեռնաշղթայի միջև, հատկապես որոշ լեռնանցքների շրջանում, որոնք ինչ-որ ժամանակ հպանցիկ հետազոտել էի, ամենայն հավանականությամբ կան դոլմեններ:

Քանի որ կտրված էի ամբողջ աշխարհից և դժվարությամբ էի տանում ստիպողական պարապությունը, ես որոշեցի այդ դադարն օգտագործել դեպի Կովկասի այդ շրջանները հատուկ արշավախումբ կազմակերպելու համար, որպեսզի գտնեմ և հետազոտեմ այդ դոլմենները՝ դրանով իսկ ինձ ու իմ ընկերներին փրկելով մշտապես մեզ սպառնացող վտանգից:

Հաջորդ առավոտյան ես գնահատեցի բոլոր հնարավորությունները և ինձ կարեկցող մի քանի մարդկանց օգնությամբ, որոնք կշիռ ունեին այդ պահին իշխանության գլուխ կանգնածների միջավայրում, պաշտոնական թույլտվություն ստացա հատուկ զիտական արշավախումբ կազմակերպելու համար:

Տեղական իշխանությունների հետ համաձայնության գալուց հետո ես սկսեցի պահեստավորել արշավախմբի համար անհրաժեշտ ամեն ինչ և ընտրեցի այն մարդկանց խումբը, որոնց ամենաշատն էր սպառնում գորահավաքի վտանգը, եթե մնային Միներալնիե Վոդիի շրջանում: Բաժանվելով երկու խմբի՝ մենք որոշեցինք լեռներում հանդիպել պայմանավորված վայրում:

Այդ զիտական արշավախմբի առաջին խումբը, որը պետք է մեկնարկ վերցնեք Պյատիգորսկից, բաղկացած էր քսան մարդուց, իսկ երկրորդը, որը պետք է ճանապարհ դուրս գար Եսենտուկիից՝ քսանմեկ մարդուց, որոնց մեջ էի նաև ես: Պաշտոնապես այդ երկու խմբերը բացարձակապես անկախ էին և ոչ մի ընդհանուր բան չունեին:

Նա, ով ամենաչնչին պատկերացում չունի այն մասին, թե ինչ էր կատարվում Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի եռուն շրջանում, դժվար թե հասկանա, թե ես ինչեր քաշեցի այդ տարիների ընթացքում արշավախումբ կազմակերպելով:

Եսենտուկիից ես պատրաստվում էի շարժվել բնակեցված վայրերով մինչև Տուապսեից ոչ հեռու գտնվող Ինդուր լեռը և այդտեղից էլ սկսել որոնումները՝ ընթանալով հարավ արևելյան ուղությամբ Սև ծովի ափերին գուգահեռ և այդ ափերից պահելով 25-60 կմ հեռավորություն:

Այդ խմբի համար ես մեծ դժվարությամբ կարողացա այդ ժամանակ իշխող բոլշևիկյան կառավարությունից գնացքի երկու վագոն ստանալ, և դա այնպիսի մի ժամանակ, երբ երկաթուղին օգտագործվում էր բացառապես զինվորներ և ռազմական բեռներ տեղափոխելու համար, իսկ նույնիսկ ուղեբեռ չունեցող քաղաքացիական անձի համար գնացք նստելը գործնականում անհնար էր:

Եվ ահա քսանմեկ հոգուց բաղկացած մեր խումբը, խիտ խցկված երկու վագոններում, որտեղ տեղավորել էինք նաև երկու ձի, երկու ջորի, երեք երկանիվ սայլակներ և տվյալ արշավախմբի համար անհրաժեշտ ամեն բան՝ ճանապարհ ընկավ:

Երկաթգծով մենք կարողացանք հասնել միայն մինչև Մայկոպ, որից այն կողմ գծերը վնասել էին իրենց «կանաչներ» կոչող նորաստեղծ զինված ավազակախմբի անդամները: Ուստի մենք մեր ճանապարհը ոտքով շարունակեցինք, բայց ոչ թե Տուապսեի ուղղությամբ, ինչպես պլանավորված էր, այլ՝ Սպիտակ գետի մոտի լեռնանցքի:

Որպեսզի հասնեինք այն անմարդաբնակ վայրերը, որոնք ուզում էինք հետազոտել, մենք ստիպված եղանք առնվազն հինգ անգամ հատել բոլշևիկների ու սպիտակ բանակի միջև ընկած ռազմաճակատային գիծը: Երբ ես հիշում եմ այն աներևակայելի դժվարությունները, որոնք մեզ վիճակվեց հաղթահարել, խորը բավականության զգացում եմ ունենում: Եվ իսկապես, նրանք, ովքեր գիտեն, թե ինչ պայմաններով է անցել մեր արշավախումբը, մեր փրկվելն ուղղակի հրաշք են համարում:

Անօրինականության ու բոլորին համակած փոխադարձ ատելության այդ տարիներին ոչ մի մագ չընկավ մեր զլխից, կարծես գտնվելիս լինեինք ինչ-որ բարձրագույն ուժերի հովանավորության տակ:

Քանի որ մենք չեզոք դիրք էինք գրավել հակամարտող կողմերի միջև, նրանք էլ նույն կերպ էին վարվում մեզ հետ՝ երևի համարելով, որ մենք այս աշխարհից չենք:

Թեև շրջապատված էինք վայրի գազանների վերածված մարդկանցով, որոնք պատրաստ էին բզկտել մեկմեկու, մենք ճամփորդում էինք կատարելապես ազատ՝ չթաքցնելով մեր արշավի իսկական նպատակները և չդիմելով որևէ խորամանկության: Եվ չնայած այն բանին, որ «բռնագրավում» կոչվող թալանն այդ ժամանակահատվածում հասել էր անհավանական չափերի, մեր արշավախմբի ամբողջ կահավորանքը լրիվ անվնաս մնաց, այդ թվում նաև մեր ունեցած երկու տիկ սպիրտը, որն այդ ժամանակ ոսկու գին ուներ:

Այս արկածալից արշավի մասին պատմելով՝ ես ուզում եմ մինչև վերջ անաչառ ու արդար մնալ և արժանին մատուցել ինչպես սպիտակ բանակի կամավորներին, այնպես էլ բոլշևիկներին, որոնց մեծ մասն արդեն կենդանի չեն, և որոնք կամա թե ակամա օգնեցին մեզ՝ շարունակելու մեր արշավը. ամեն դեպքում մեր նկատմամբ չգործեցին այն չարիքը, որ կարող էին գործել:

Եվ իսկապես, մեր արշավախմբի բոլոր անդամներն այդ դժոխքից դուրս պրծան ողջ ու առողջ, և դա հնարավոր դարձավ ոչ միայն այն մարդկանց հոգեբանության իմ լավ իմացության շնորհիվ, որոնց մենք հաղիպում էինք մեր ճանապարհին: Պայմանները, որոնցում ընթանում էր մեր այդ արշավը, աներևակայելի բարդ էին, և բացի այդ՝ անընդհատ այնպես էր փոխվում քաղաքական իրադրությունը, որ եթե անգամ ես առանց այք կպցնելու օր ու զիշեր կշռադատեի մեր քայլերն ու անելիքները, ապա չէի կարողանա ամեն ինչ հաշվի առնել ու կանխատեսել:

Ես կարծում եմ, որ մենք անվնաս մնացինք այն պատճառով, որ անգամ անասելի գազանացած մարդիկ պահպանում են բարին ու չարն իրարից ջոկելու որոշակի կարողություն, քանի որ այդ բնագործ ներդրված է մարդու բնույթի մեջ: Այն անհրաժեշտ է միայն արթնացնել: Ենթագիտակցաբար զգալով, որ իմ գործունեությունը մարդկանց բարիք է բերում, նրանք ինձ օգնելու պահանջ էին զգում, որ իրագործեմ իմ նպատակները:

Ստիպված լինելով անընդհատ շփվել ինչպես բոլշևիկյան իշխանության ներկայացուցիչների, այնպես էլ սպիտակ բանակի սպաների հետ՝ ես չեմ հիշում մի դեպք, որ ինձ չհաջողվեր նրանց հետ գործերը հարթել խաղաղ եղանակով:

Ի դեպ, ուզում եմ ավելացնել, որ երբ բռնությունների ու ատելության ալիքն անցած լինի, իսկ մարդիկ՝ վերադարձած սովորական կյանքին, և որևէ մեկը հետաքրքրվի այն ժամանակ Ռուսաստանում տեղի ունեցած իրադարձություններով, ես կարող եմ հետաքրքրաշարժ

փաստաթղթեր ներկայացնել, որոնք բնորոշում են ինչպես հենց այդ իրադարձությունները, այնպես էլ այն մարդկանց հոգեբանությունը, որոնք անմիջականորեն մասնակցել են դրանց:

Ահա այդպիսի փաստաթղթերից մեկը, որի առաջին երեսին գրված է.

«Մույն փաստաթուղթը ներկայացնող քաղաքացի Գյուրջիկին թույլատրված է ատրճանակ կրել. տրամաչափ՝ ..., համար ...»

Հաստատված է կնիքով և ստորագրությամբ:

Զինվորական և բանվորական դեպուտատների Խորհրդի նախագահ՝ Ռուխնաձե

Տրման վայրը՝ Եսենտուկի

Տարեթիվ՝ ...»

Փաստաթղթի մյուս երեսին կարելի է կարդալ հետևյալը.

«Հաստատում ենք պարոն Գյուրջիկին՝ ատրճանակ կրելու իրավունքը, որի տրամաչափն ու համարը նշված են փաստաթղթի հակառակ երեսին:

*գեներալ Դենիկինի փոխարեն՝ գեներալ Խեյման
Գլխավոր հրամանատար՝ գեներալ Դավիդովիչ*

Տրված է Մայկոպում

Տարեթիվ՝ ...»

Հսկայական դժվարություններ հաղթահարելով՝ մենք անցնում էինք քաղաքացիական պատերազմից ավերված բնակավայրերի միջով և վերջապես հասանք Կումիշլի, որից այն կողմ արդեն լրիվ անմարդաբնակ լեռնային տարածքներ էին ընկած: Այլևս ճանապարհներ չկային:

Կումիշլիում մենք մեծ դժվարությամբ մի քիչ սննդամթերք հայթայթեցինք, քանի որ սովի տարիներ էին: Երկանիվ սայլակներն այդտեղ թողեցինք բախտի քմահաճույքին, ունեցած-չունեցածներս բեռնեցինք ձիերին ու ջորիներին, հանդերձանքի մի մասն էլ առանք մեր ուսերին և սկսեցինք վերելքը դեպի լեռներ:

Միայն առաջին լեռնանցքն անցնելուց հետո մենք վերջապես թեթևացած շունչ քաշեցինք՝ համարելով, որ բոլոր վտանգները մնացել են հետևում: Մակայն շուտով պարզվեց, որ իսկական դժվարությունները դեռ նոր են սկսվում:

Ես այստեղ չեմ նկարագրի այն ամենը ինչ մենք ապրեցինք երկու ամիս տևած ճանապարհին՝ Կումիշլիի մերձակա Մպիտակ գետի լեռնանցքից անցնելով Կովկասյան վայրի ու ամայի լեռներով մինչև Մոչի քաղաքը: Իմ տեղեկությունների համաձայն՝ այդ արշավախմբի մասին մանրամասն հաշվետվությունները, ինչպես նաև այդ երկրամասի հայտնի ու անհայտ հարստությունների նկարագրությունը հրատարակման են պատրաստում մեր խմբի մի քանի մասնակիցներ, որոնք այդ արշավից հետո մնացին Ռուսաստանում և հայտնվեցին մնացած աշխարհից կտրված վիճակում:

Միանգամայն անսպասելիորեն պարզվեց, որ մեր արշավախմբի կազմում կան համարյա այն բոլոր մասնագիտությունների տեր մարդիկ որոնք անհրաժեշտ են գիտական հետազոտություններ կատարելու համար՝ լեռնային ինժեներներ, հնէաբաններ, կենսաբաններ, բժիշկներ և այլ բնագավառների ներկայացուցիչներ:

Ուզում եմ նշել, որ ինձ վրա ամենաուժեղ տպավորությունը թողեց Կումիշլիից մինչև Մոչի ընկած տարածքը, որը մեր արշավի շատ մասնակիցներ միանգամայն հիմնավոր կերպով անվանեցին երկրային դրախտ:

Թեև այդ շրջանի հողերը լրիվ պիտանի են գյուղատնտեսություն զարգացնելու և առողջարաններ կառուցելու համար (քանի որ հանքային ջրերի բազմաթիվ աղբյուրներ կան), որից հետո այստեղ

բազմաթիվ մարդիկ կարող էին գալ համապատասխան բուժումներ ստանալու համար, այնուհանդերձ այդ վայրերը լրիվ ամառի են մնացել:

Մի ժամանակ այդ վայրերում բնակվել են չերքեզները, բայց այն ժամանակից, երբ նրանք 40-50 տարի առաջ գաղթեցին Թուրքիա, այստեղ այլևս մարդու ոտք չի կպել:

Ճանապարհին հանդիպում էին լքված գյուղեր և մոլախոտով պատված այգիներ, որոնք առաջ հազարավոր մարդկանց ապահովում էին հրաշալի մրգեղենով: Մենքի պակասությունից ուժասպառ լինելով՝ մենք վերջապես հասանք Սոչի քաղաքը, որը գտնվում է Մև ծովի ափին:

Այստեղ մենք հրաժեշտ տվեցինք արշավախմբի մի քանի մասնակիցների, որոնք չկարողացան արժանավայել կերպով հաղթահարել այդ հոգնեցուցիչ անցման դժվարությունները, որին մենք «Գողգոթայի ճանապարհ» անունն էինք տվել: Մյուսների հետ մենք ճանապարհ ընկանք դեպի Թիֆլիս, որտեղ այդ անհանգիստ ժամանակներում հարաբերական կարգ ու կանոն էր պահպանվում, որն ապահովում էր վրաց ազգայնականների մենշևիկյան կառավարությունը:

Այն ժամանակից սկսած, երբ Մոսկվայում ես գործնական աշխատանքներ էի սկսել իմ Ինստիտուտի կազմակերպման համար, անցել էր ավել քան չորս տարի: Այդ ժամանակահատվածում ես զրկվել էի համարյա իմ բոլոր փողերից: Անսպասելի աղետալի իրադարձություններն իրենց հետ բերել էին անկանխատեսելի ծախսեր, որոնք ես չէի կարող հաշվի առնել:

Ռուսաստանի մասնակցությունը համաշխարհային պատերազմին, քաղաքական հեղաշրջումները, տնտեսական քայքայումը՝ այդ ամենը մարդկանց հսկայական զանգվածների ստիպում էին տեղաշարժվել իրենց բնակության վայրերից: Նրանք, ովքեր դեռ երեկ նյութապես ապահովված էին և վստահություն ունեին վաղվա օրվա նկատմամբ, հիմա կանգնած էին կոտրած տաշտակի առաջ: Շատերը նրանցից, ովքեր անկեղծորեն կիսում էին իմ հայացքները և իմ հետևից եկան մինչև Կովկաս, հիմա մնացել էին բառացիորեն առանց մի կտոր հացի և առանց տանիքի: Արդյունքում հիմա իմ պարտականությունների մեջ էր նաև այն, որ սնեմ ու կացարանով ապահովեմ մոտ երկու հարյուր ինձ վստահած մարդկանց: Հատկապես ծանր էր նրանց վիճակը, ովքեր այդ երկրամասն էին հասել ամբողջ ընտանիքով և խնամքի տակ մանր երեխաներ ունեին: Հարկավոր էր առաջին հերթին հոգալ նրանց մասին՝ ոչ միայն սննդով, այլև նրանց գլխավերևում տանիք ապահովելով:

Որպեսզի դուք գոնե մի փոքր պատկերացնեք մեր վիճակի ահավորությունը, ես միայն մի օրինակ կբերեմ՝ նկարագրելով մի դեպք, որի անմիջական վկան ինձ վիճակվեց լինել:

Դա պատահեց, երբ ես գտնվում էի Եսենտուկիում, և կյանքն էլ համեմատաբար հանգիստ էր: Ես իմ միջոցներով երկու «համայնք» էի պահում, որոնցում ընդգրկված էին իմ ընկերները, հարազատներն ու աշակերտները: Այդ համայնքներից մեկը գտնվում էր հենց Եսենտուկիում և բաղկացած էր 85 անձից, իսկ մյուսը, որը բաղկացած էր 65 անձից, գտնվում էր Պյատիգորսկում:

Ամենասովորական մթերքների գներն օր օրի աճում էին, և դրանք ճարելն ավելի ու ավելի էր դժվարանում: Ես հազիվ էի ծայրը ծայրին հասցնում:

Մի անձրևոտ առավոտ, երբ ես, պատուհանի մոտ նստած, մտախոհ դեպի փողոց էի նայում և գլուխ կոտրում այն հարցի վրա, թե ինչպես միջոցներ գտնեմ մեր բազմամարդ գաղութը պահելու համար, իմ դռան մոտ կանգ առան երկու արտասովոր կառքեր, որոնցից դանդաղորեն դուրս եկան հեռավոր կերպով մարդկանց հիշեցնող ինչ-որ էակներ:

Սկզբում ես լրիվ տարակուսած էի՝ ոչ մի պատկերացում չունենալով, թե ովքեր կարող են լինել նրանք:

Բայց հանկարծ ինձ կարծես կայծակ խփեց, երբ հասկացա, թե ովքեր են կմախքի նմանվող այդ մարդիկ, որոնց հագին պատռված ցնցոտիներ կային, իսկ բոբիկ ոտքները վերքերով էին պատած: Նրանք քսանութ հոգի էին, ներառյալ մեկից ինը տարեկան տասնմեկ երեխաներ:

Պարզվեց, որ այդ թշվառներն իմ հարազատներն են, որոնց մեջ էր և իմ քույրը՝ իր վեց փոքր երեխաներով:

Նրանք ապրում էին Ալեքսանդրապոլում, որը մի քանի քաղաքների պես երկու ամիս առաջ հանկարծակի ընկել էր թուրքերի հարձակման տակ: Քանի որ այդ ժամանակ ո՛չ փոստ էր աշխատել, ո՛չ հեռագրատուն, թուրքերի այդ հարձակման մասին տեղի բնակչությունն իմացել էր միայն այն ժամանակ, երբ թուրքական բանակն արդեն գտնվում էր քաղաքից ընդամենը երեք մղոն հեռավորության վրա: Քաղաքում խուճապ էր սկսվել:

Փորձեք պատկերացնել, թե ինչ էին զգացել բոլոր այդ մարդիկ, երբ հասկացել էին, որ հսկայական թուրքական բանակն արդեն հասել է իրենց համարյա անպաշտպան քաղաքի մատույցներին, և որ շուտով դաժան ջարդ կսկսվի, և թուրքերը կկոտորեն ոչ միայն հասուն տղամարդկանց, այլ նաև ծերերին, երեխաներին ու կանանց, ինչպես արդեն եղել էր:

Եվ երբ իմ հարազատներն Ալեքսանդրապոլի մյուս բնակիչների պես իմացել էին, որ թուրքերը մի ժամ հետո քաղաք են մտնելու, նրանց սարսափն էր պատել և փախել էին՝ չվերցնելով նույնիսկ ամենաանհրաժեշտ բաները: Սկզբում նույնիսկ սխալ ուղղություն էին ընտրել, և երբ ամբողջովին ուժասպառ էին եղել ու այլևս վազել չէին կարողացել, հասկացել էին իրենց սխալը և շուտ եկել դեպի Թիֆլիս:

Քսան օր նրանք քայլել էին, երբեմն էլ համարյա սողեսող էին անցել լեռնային կածաններով՝ տառապելով սովից ու ցրտից, մինչև որ հասել էին Թիֆլիս: Այնտեղ տեղեկանալով, որ ես գտնվում եմ Եսենտուկիում, և որ քաղաքների միջև երթևեկություն կա՝ նրանք ընկերներին օգնությամբ երկու ծածկած սայլ էին վարձել և Ռազմավիրական ճանապարհով վերջապես եկել հասել էին իմ տան դռան մոտ: Պետք է ասեմ, որ ես հազիվ ճանաչեցի նրանց, այնքան տանջահար տեսք ունեին:

Հիմա պատկերացրեք այն մարդու վիճակը, ով տեսնում է իր հարազատների հետ կատարվածը և իրեն պարտավորված է զգում այդ դժբախտներին գոնե հացով ու ծածկով ապահովել և ապա մտածել նրանց հետագա ճակատագրի մասին:

Բոլոր այդ չնախատեսված ծախսերը, ինչպես և այն միջոցները, որոնք ծախսվել էին վերջին արշավախմբի կազմակերպման ու անցկացման համար, և դրանց գումարած այն նյութական օժանդակությունը, որ ցուցաբերում էի Միներալնիե Վոդիում մնացած իմ աշակերտներին, համարյա ամբողջությամբ ի չիք դարձրին իմ կուտակած կարողությունը: Ես ոչ միայն ծախսեցի իմ բոլոր կանխիկ փողերը, այլ նաև ստիպված եղա վաճառելու բոլոր այն արժեքավոր իրերը, որոնք ես ու կինս ունեինք մեզ մոտ:

Ինչ վերաբերում է իմ արժեքավոր հավաքածուներին, որոնք հավաքել էի ամբողջ կյանքիս ընթացքում, ապա ես դրանք ի պահ էի սովել Մոսկվայում և Մանկտ Պետերբուրգում ապրող իմ ընկերներին. դրանք մնացել էին մայրաքաղաքում, և ես ոչ մի պատկերացում չունեի դրանց ճակատագրի մասին: Թիֆլիս հասնելուս հենց հաջորդ օրը ես հասկացա, որ այլևս ոչ մի գրոշ չունեմ և ստիպված եղա ընկերոջս կնոջից խնդրել, որ գոհաբերի մոտավորապես մեկ ամբողջ մեկ քառորդ կարատանոց ադամանդով իր վերջին մատանին, որպեսզի դրա վաճառքից ստացված փողով սննդամթերք գնեմ մեր ամբողջ գաղութի համար:

Դրությունը բարդացավ և նրանով, որ ես հիվանդացա արշավի ժամանակ ուժեղ մրսած լինելուս պատճառով, քանի որ լեռնային բարձրությունների վրա ցերկային ու գիշերային ջերմաստիճանների տարբերությունը շատ մեծ է լինում: Իմ վիճակն անընդհատ վատանում էր, քանի որ չէի ուզում անկողնում պառկել, այլ դրա փոխարեն, ֆարենհայտի 104° ջերմությամբ վազվզում էի քաղաքով մեկ, որպեսզի ինչ-որ կերպ խմբին ապահովեմ ամենաանհրաժեշտ բաներով և այդ հուսահատական վիճակից դուրս գալու մի ելք գտնեմ:

Ինձ հաջողվեց առևտրական ոլորտին վերաբերող որոշ տվյալներ քաղել, և պարզվեց, որ, չնայած ամբողջ Անդրկովկասն ընդգրկած տնտեսական ճգնաժամին, արևելյան գորգերի առևտուրը ծաղկում է ապրում և կարող է շոշափելի շահույթներ բերել: Կշռադատելով իրավիճակը՝ ես որոշեցի զբաղվել այդ բիզնեսով:

Նախ ես ընտրեցի մի քանի մարդկանց, որոնք գորգերից քիչ թե շատ գաղափար ունեին. նրանց մի մասն ինձ հետ այստեղ եկածերից էին, մի մասն էլ իմ այն հարազատներից էին, որոնք այստեղ ապրում էին արդեն բավական երկար ժամանակ: Նրանց ես հանձնարարություններ սովեցի և շատ արագ ծավալեցի գորգեր գնելու և վերավաճառելու գործունեություն:

Օգնականներին մի մասը հետախուզեցին Թիֆլիսն ու հարևան քաղաքները՝ փնտրելով և գնելով ցանկացած վիճակում գտնվող գորգեր, մի ուրիշ խումբ լվանում ու մաքրում էր դրանք, երրորդներն էլ զբաղվում էին դրանց վերականգնմամբ: Այնուհետև գորգերը տեսակվորվում էին ու հանվում վաճառքի: Դրանց մի մասը մանրածախ վաճառվեց, մի մասն էլ մեծածախ առաքվեց տեղական շուկա և Կոնստանդնուպոլիս:

Երեք շաբաթ անց այդ բիզնեսը սկսեց մեզ այնպիսի շահույթ բերել, որ մեր գաղութին ապահովեց անհրաժեշտ ամեն ինչով ու դեռ մի բան էլ կարողացանք հետ զցել սև օրվա համար: Հաշվի առնելով

մեր նյութական դրության բարելավումն ու այդ գործի ընդլայնման հնարավորությունը՝ ես որոշեցի իմ Ինստիտուտը բացել հենց այստեղ՝ չսպասելով, թե երբ կավարտվի քաղաքացիական պատերազմը, որ ես հնարավորություն ունենամ վերադառնալու Մոսկվա. մանավանդ, որ ես առաջ էլ էի պլանավորում, որ Թիֆլիսում բացեմ իմ Ինստիտուտի մի մասնաճյուղը:

Շարունակելով գորգեր գնելու, վերականգնելու և վերավաճառելու գործը՝ ես միաժամանակ սկսեցի կազմակերպել Ինստիտուտը: Շուտով ինձ համար պարզ դարձավ, որ Թիֆլիսում առկա բնակարանային ճգնաժամի պատճառով, ինչը բնական էր այդ պայմաններում, գործնականում հնարավոր չէ իմ նպատակներին համապատասխանող շինություն գտնել: Այդ պատճառով ես օգնություն ու օժանդակություն խնդրեցի վրացական կառավարությունից, որն ընդառաջ գնաց ինձ: Թիֆլիսի նահանգապետին հանձնարարվեց ամեն կերպ աջակցել ինձ Ինստիտուտի համար համապատասխան շինություն գտնելու գործում, որը ենթադրվում էր ամբողջովին դնել իմ տրամադրության տակ: Ե՛վ նահանգապետը, և՛ մի քանի ուրիշ պետական ծառայողներ իսկապես անկեղծորեն փորձեցին մեզ օգնել, բայց բարդ տնտեսական իրադրության պատճառով հարմար շինություն այդպես էլ չգտնվեց, և ես ստիպված եղա բավարարվել ժամանակավոր շինությամբ: Մակայն ինձ խոստացան, որ առաջին իսկ հնարավորության դեպքում այն կփոխարինվի մշտականով:

Այդպիսով, ես երրորդ անգամ սկսեցի կազմակերպել իմ Ինստիտուտը՝ այն կահավորելով անհրաժեշտ ամեն ինչով: Ինչպես տեղացիները, այնպես էլ եկվորները, որոնց հոգեկան վիճակի վրա սաստիկ ազդել էին տեղի ունեցող աղետալի իրադարձությունները, կյանքում ուրիշ կողմնորոշչներ գտնելու, կեղծ արժեքները դեն նետելու պահանջ էին զգում: Ուստի և Ինստիտուտի բացումից մի շաբաթ անց ժամանակավոր շինության բոլոր դասարաններն արդեն լեփ-լեցուն էին ունկնդիրներով: Իմ դասախոսությունները լսելու ցանկություն ունեցողների ցուցակը մի քանի անգամ գերազանցում էր մեր շենքի տարողունակությունը, ուստի մենք անհամբերությամբ սպասում էինք, թե երբ իշխանությունները մեզ համար ավելի հարմար պայմաններ կստեղծեն: Խմբերի գերհագեցվածությունը մեզ ստիպեց հերթ սահմանել. պարապմունքներ կային ինչպես առավոտյան, ցերեկային և երեկոյան, այնպես էլ գիշերային ժամերին:

Կառավարությունն անընդհատ հետաձգում էր մեր խնդրի լուծումը՝ տալով դատարկ խոստումներ, և ես գտա, որ այդ պայմաններում պարապմունքները շարունակել պարզապես հնարավոր չէ: Իսկ երբ որոշ ժամանակ անց Վրաստանում իշխանության եկան բոլշևիկները, և դրությունն ավելի վատթարացավ, ինձ համար պարզ դարձավ որ չարժե իզուր վատնել ժամանակը և էներգիան: Ես որոշեցի ոչ միայն փակել Ինստիտուտը, այլև անցնելով ուրիշ երկիր՝ ամեն ինչ նորից սկսել ավելի հարմար պայմաններում:

Շատ էժան գնով վաճառելով իմ ամբողջ կարողությունը և մի կերպ ապահովություն ստեղծելով մեր գաղութի՝ Ռուսաստանում մնացող անդամների համար՝ ես մեծ դժվարություններ հաղթահարելու գնով հեռացա Կոնստանդնուպոլիս՝ ինձ հետ տանելով իմ համախոհներից երեսուն հոգու:

Թիֆլիսից հեռանալուց առաջ ես ոչ քիչ գումար էի վաստակել՝ զբաղվելով գորգերի առևտրով: Իմ հաշվարկով այդ փողերը բավարար կլինեին ոչ միայն երեսուն հոգանոց խմբով Կոնստանդնուպոլիս հասնելու, այլ նաև այնտեղ որոշ ժամանակ համեմատաբար տանելի ապրելու համար:

Բայց, ավաղ, իմ հաշվարկները պատրանքային դուրս եկան: Մեզ չհաջողվեց մեզ հետ դուրս տանել այն միջոցները, որոնք վաստակել էինք տառաջիորեն ճակատի քրտինքով:

Քանի որ տեղական դրամը փոխարկելի չէր, և այն դուրս տանելը ոչ մի իմաստ չունեց, մենք որոշեցինք այդ փողերով հին արևելյան գորգերի մի խմբաքանակ գնել, ինչպես նաև որոշակի քանակությամբ թանկարժեք քարեր և դրանք հետոնք տանել՝ հավասարապես բաժանելով մեր խմբի բոլոր անդամների միջև:

Մակայն սահմանի վրա, անկախ անհրաժեշտ փաստաթղթերի համապատասխան ձևակերպումից ու բոլոր հարկերի վճարումից, իմ բոլոր գորգերն անօրինական ձևով բռնագրավեցին՝ կառչելով ինչ-որ մանրուքներից: Ավելի ուշ, երբ մենք փորձեցինք պայքարել արդարության համար և հետ պահանջել մեր գորգերը, պարզվեց, որ Բաթումն արդեն գրավել են բոլշևիկները, բռնագրավում իրականացրած կազմակերպությունը լուծարվել է, և մեր գորգերն անհետ չքացել են: Քսան հրաշալի հինավուրց գորգերից հաջողվեց փրկել միայն երկուսը, որոնք դիվանագիտական ծանրոցի տեսքով կարողացավ իր հետ անցկացնել իմ աշակերտ և համախոհ ֆիննական հյուպատոսը:

Եվ ահա ես Կոնստանդնուպոլսում հայտնվեցի համարյա նույնպիսի աղքատ վիճակում, ինչպես Թիֆլիս հասնելու ժամանակ: Իմ ձեռքի տակ մնացել էին միայն երկու փոքրիկ ադամանդներ և այդ անհաջողությունից հետո մնացած երկու գորգերը: Դրանց վաճառքը մեզ չէր տա այն գումարը, որն անհրաժեշտ էր մեր խմբի կյանքը որոշ ժամանակով ապահովելու համար, եթե հաշվի առնեինք և այն, որ համարյա բոլորիս նոր հագուստ էր անհրաժեշտ: Բանն այն է որ այդ ժամանակներում Թիֆլիսում նոր հագուստ գտնելը համարյա անհնարին էր, և մեր հագի շորերն այնքան էին մաշված, որ դրանցով չէինք կարող փողոց դուրս գալ մի քաղաքում, որտեղ կյանքն արդեն քիչ թե շատ կարգավորվել էր:

Բայց հաջողությունն ուղեկցում էր ինձ, և ես Կոնստանդնուպոլիս հասնելուց անմիջապես հետո զբաղվեցի բիզնեսով:

Ամեն ինչից գատ ես իմ հին ընկերներից մեկի հետ կիսովի զբաղվեցի մեծ խմբաքանակներով ձկնկիթի վերավաճառքով: Նույնիսկ առիթ եղավ միջնորդ դառնալ մի շոգենավի վերավաճառքի գործում: Այդ ամենի արդյունքում իմ նյութական վիճակը սկսեց բարելավվել:

Դեռևս Թիֆլիսում ես մեկընդմիջտ հրաժարվել էի Ռուսաստանում իմ Ինստիտուտի մշտական ներկայացուցչությունները կազմակերպելու մտքից: Սակայն բավականաչափ ծանոթ չլինելով Եվրոպայում տիրող վիճակին՝ ես դժվարին կացության մեջ էի հայտնվել՝ վերջնականապես չկարողանալով որոշել, թե որտեղ հաստատվեմ: Որոշ ժամանակ խորհրդածելուց հետո ես վերջապես հաստատվեցի Գերմանիայում՝ այդ երկրին նախապատվություն տալով Եվրոպայում նրա ունեցած կենտրոնական դիրքի պատճառով, ինչպես նաև հաշվի առնելով նրա կուլտուրական զարգացածության՝ համընդհանուր ճանաչում գտած բարձր մակարդակը:

Սակայն մինչ այդ, նյութական ապահովվածություն ստեղծելու հոգսերով երկար ժամանակ մնալով Կոնստանդնուպոլսում, ես ստիպված եղա զբաղվել ամեն տեսակի առևտրական ձեռնարկումներով, քանի որ Ամերիկայում հարուստ քեռի չունեի:

Այդ գործերիս ընթացքում Ռուսաստանից ինձ հետ այդտեղ տեղափոխված խմբի իմ աշակերտներն ու համախոհներն ուզում էին պարապմունքները շարունակել, և ես այդ նպատակին հարմար մի շենք գտա Բերայում՝ Կոնստանդնուպոլսի այն թաղամասում, որտեղ հիմնականում եվրոպացիներ էին ապրում: Եվ հենց որ մեկ կամ երկու ժամ ազատ ժամանակ էր լինում, ես զբաղվում էի իմ աշակերտներով. դասախոսություններ էի կարդում՝ դրանց հրավիրելով նաև տեղացիներին, որպեսզի ավելացնեմ իմ հետևորդների քանակը և իմ աշակերտներին սովորեցնեմ վարժվել կողմնակի անձանց ներկայությանը:

Իմ դասախոսություններին հաճախող մեծաքանակ թուրքերն ու հույները մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում իմ ուսմունքի նկատմամբ, բայց հատկապես նրանց գրավում էր այն երաժշտությունը, որը ես հորինում էի հատուկ մեր պարապմունքների համար: Այդ ընթացքում Եվրոպայի անկայուն քաղաքական իրադրությունը շարունակում էր խոչընդոտել իմ պլանների իրականացմանը, քանի որ տարբեր երկրների կառավարությունների միջև հաստատված թշնամական հարաբերությունների պատճառով ելքի թույլտվություն ստանալը դառնում էր համարյա անլուծելի խնդիր. անկայուն էր նաև տարադրամի փոխարժեքը:

Չնայած անբարենպաստ պայմաններին՝ ես որոշեցի ընդլայնել և ավելի եռանդուն դարձնել «լուսավորչական հովերով» իմ գործունեությունը, ուստի ավելացրի դասարանների քանակն ու դասախոսությունների տևողությունը՝ ունկնդիրներին ծանոթացնելով իմ ուսմունքի հիմնական դրույթներին:

Բայց քանի որ ստիպված էի իմ ժամանակի մեծ մասը հատկացնել առևտրական գործունեությանը, որը ծավալում էի ինչպես բուն Կոնստանդնուպոլսում, այնպես էլ Բոսֆորի նեղուցի մյուս կողմում, ապա դասախոսություններ կարդալու գործին մասնակից դարձրի իմ առավել պատրաստված աշակերտներին՝ նրանց օգնելով պլան կազմել, մշակել ելույթի սեղմագիրը՝ այդ գործով զբաղվելով հենց տամվայում կամ գտնվելով Բոսֆորը հատող լաստանավի վրա:

Անցավ անխոնջ ու տենդագին գործունեությամբ հազեցած մեկ տարի, և վերջապես ստացվեցին երկար սպասված ելքի թույլտվությունները: Մինչ այդ հաջող առևտրական գործարքների միջոցով ես արդեն հասցրել էի բավականին մեծ գումար կուտակել:

Միաժամանակ ինձ արդեն սկսել էր լրջորեն անհանգստացնել թուրք ազգայնամուլների չափազանց ակտիվությունը, և ես որոշեցի այլևս չսպասել, թե ինչով կավարտվի այդ ամենը: Հարկավոր էր

հնարավորինս արագ պոչը քաշել այդտեղից: Եվ ես մեկնեցի Գերմանիա՝ նախապես աշակերտներիս խումբը տեղափոխելով ավելի անվտանգ վայր:

Ժամանելով Բեռլին՝ ես ինձ ուղեկցող մարդկանց տեղավորեցի մայրաքաղաքի հյուրանոցներում, ինչպես նաև Շմարգենդորֆում՝ Բեռլինի շրջաններից մեկում, վարձեցի տարողունակ մի դահլիճ, որպեսզի հնարավորություն ունենամ շարունակելու տեղափոխության պատճառով ընդհատված աշխատանքը: Այնուհետև մեկնեցի Գերմանիայում ճամփորդելու՝ դիտելով բոլոր այն շինությունները, որոնք իմ բազմաթիվ ծանոթներն առաջարկում էին ինձ՝ դրանք հարմար գտնելով Ինստիտուտի համար:

Այդ բազմաթիվ շենքերից իմ ընտրությունը կանգ առավ մեկի վրա, որը գտնվում էր Դրեզդենից ոչ հեռու գտնվող Շելերաու կոչվող վայրում: Այդ շենքը նախատեսված էր այն ժամանակ շատ տարածված Դալկրոզի համակարգով ռիթմիկ պարերի դպրոցի համար և կահավորված էր դրա պահանջներին համապատասխան:

Շենքի պլանային լուծումները քիչ թե շատ համապատասխանում էին իմ նպատակներին, և ես որոշեցի հենց այդտեղ կազմակերպել իմ Ինստիտուտի կենտրոնական բաժանմունքը: Մակայն այդ շենքի տիրոջ հետ բանակցելուս ընթացքում անգլիացի իմ համախոհներից առաջարկ ստացա կենտրոնական բաժանմունքը բացել Անգլիայում, ընդ որում նրանք իրենց վրա էին վերցնում կազմակերպչական բոլոր ծախսերը:

Հաշվի առնելով աշխարհի շատ երկրներ ընդգրկած տնտեսական ճգնաժամի թողած հետևանքները, որոնք զգալիորեն ազդել էին նաև ինչպես իմ, այնպես էլ իմ գործընկերների նյութական կացության ու գործերի վիճակի վրա՝ ես հաճույքով ընդունեցի այդ առաջարկը և մեկնեցի Լոնդոն, որպեսզի տեղում ծանոթանամ իրավիճակին:

Քանի որ ինձ համար շատ կարևոր էր, որ Ինստիտուտի բեռլինյան բաժանմունքը չընդհատի իր սկսած գործունեությունը, և իմ տևական բացակայությունները չանդրադառնան դրա աշխատանքի վրա, ես որոշեցի Լոնդոն գնալ յուրաքանչյուր երկու-երեք շաբաթը մեկ մի քանի օրով՝ ընդ որում ամեն անգամ ընտրելով ուրիշ երթուղի, որպեսզի հարկ եղած չափով կարողանամ ծանոթանալ նաև ուրիշ եվրոպական երկրներին:

Այդ հետաքրքիր և օգտակար ճանապարհորդությունների ընթացքում ուսումնասիրելով տարբեր երկրներում տիրող իրավիճակները՝ ես հանգեցի վերջնական որոշման, որ իմ Ինստիտուտի կենտրոնական բաժանմունքը բացել ո՛չ Գերմանիայում, ո՛չ էլ Անգլիայում: Իմ ընտրությունը կանգ առավ Ֆրանսիայի վրա:

Այդ երկիրն ինձ ամենակայունը թվաց տնտեսական ու քաղաքական առումներով. բայցի այդ, թեև Ֆրանսիայի աշխարհագրական դիրքը պակաս շահեկան էր, քան Գերմանիայինը, սակայն Փարիզն իրավամբ աշխարհի մայրաքաղաքն էր համարվում, որտեղ ներկայացված էին բոլոր ազգերն ու մշակույթները: Այդ պատճառով Ֆրանսիան ինձ թվաց այն երկիրը, որն ամենահարմարն է իմ գաղափարների բարեհաջող տարածման համար:

Անգլիան իր կղզիացված ու մեկուսի աշխարհագրական դիրքի պատճառով այնքան էլ չէր համապատասխանում իմ նպատակներին. այստեղ հիմնված Ինստիտուտը կվերածվեր տեղական, լոկալ կազմակերպության:

Ահա թե ինչու Լոնդոն կատարած իմ այցերից մեկի ժամանակ ես վերջնականապես հրաժարվեցի այնտեղ հաստատվելուց, բայց խոստացա այնտեղ ուղարկել հատուկ իմ կողմից պատրաստված հրահանգիչների և առավել օժտված աշակերտների մի խումբ, որոնք Անգլիայում պետք է կազմակերպեին Ինստիտուտի բաժանմունքներից մեկը:

Ես տեղափոխվեցի Ֆրանսիա 1922 թվականի ամռանը: Իմ նյութական կացությունն այնպիսին էր, որ բոլոր պարտքերս վճարելուց հետո իմ տրամադրության տակ կունենայի ընդամենը հարյուր հազար ֆրանկ:

Փարիզում ես ժամանակավոր կացարան վարձեցի իմ աշակերտների համար, որից հետո Գերմանիայում սկսածս դասախոսություններն ու սեմինարները շարունակելու համար վարձակալության վերցրեցի նաև Դալկրոզի դպրոցի շենքը, այնուհետև սկսեցի շինություն փնտրել, որը հարմար կլիներ Մարդու ներդաշնակ զարգացման Ինստիտուտի կենտրոնական բաժանմունքի բացման համար: Հարկավոր էր նաև նոր միջոցներ հայթայթել պահանջվող կազմակերպչական ծախսերը հոգալու համար:

Երկար փնտրելուց հետո իմ ընտրությունը կանգ առավ Փարիզի մերձակայքում գտնվող Շատո դյու Պրիեր դոյակի վրա, որը շատ հեռու չէր ոչ անհայտ Շատո դե Ֆոնտենբլոյից:

Դոյակի տիրուհին, որն այդ դոյակը ժառանգություն էր ստացել հաջողակ դատապաշտպան ազգականից, ուզում էր իր այդ ծանր բեռից ազատվել հնարավորին չափ շուտ, քանի որ դոյակի հսկայական ծախսերը հոգալն ակնհայտորեն նրա գրպանի բանը չէր: Նա ինձ հայտնեց, որ գերադասում է դոյակը ծախել, այլ ոչ թե վարձակալության տալ: Ունենալով մի քանի պոտենցիալ գնորդներ, նա ամեն կերպ ձգձգում էր գործարքի կնքումը՝ ինձ որոշակի պատասխան չտալով, քանի որ բավականաչափ միջոցներ չունեի դոյակը գնելու համար և ուզում էի վարձով վերցնել:

Վերջապես, զանազան քաջքուկներից հետո, գործարքին ավելացնելով ևս մի քանի լրացուցիչ պայմաններ, տիրուհին համաձայնեց մեկ տարով հետաձգել իր կալվածքի վաճառքը և այդ ընթացքում վարձով տալ ինձ 65 հազար ֆրանկով: Ինձ վեց ամիս ժամանակ էր տրված, որ վերջնականապես որոշեմ՝ դոյակը գնելու՞ եմ, թե՞ ոչ: Եթե այդ ընթացքում որոշակի որոշման չհանգեի, տիրուհին իրավունք ուներ կալվածքը վաճառելու ուրիշ մեկին:

Այդ պայմաններով Շատո դյու Պրիերը վերցնելուց հետո ես իմ հիսուն աշակերտներով այնտեղ տեղափոխվեցի 1922 թվականի հոկտեմբերի սկզբին: Իմ կյանքի այդ նոր շրջանը հազիվ թե կարելի լինի հաջողակ համարել, քանի որ ինձ վիճակվել էր ապրել ու աշխատել մի երկրում, որի օրենքներին ու սովորույթներին ես ծանոթ չէի: Այդ կալվածքը ստանալուց հետո ես ձեռք բերեցի բազմաթիվ պրոբլեմներ: Իմ ունեցած հարյուր հազար ֆրանկը մինչև վերջին սուն ծախսվեց կալվածքի վարձը տալու և իմ աշակերտների նյութական կարիքները հոգալու վրա, որոնք արդեն երեք ամիս էր, ինչ ապրում էին Փարիզում: Իսկ հիմա, շարունակելով հոգալ մեր գաղութի ընթացիկ ծախսերը, ես պետք է նաև շոշափելի գումար ծախսեի մեծ քանակությամբ կահույք և առաջին անհրաժեշտության իրեր գնելու համար, քանի որ Շատո դյու Պրիեր կալվածքում շատ բաներ չէին հերիքում: Դրանից գատ, Լոնդոնից սպասվում էր աշակերտների մեծ խմբի հոսք, քանի որ Ինստիտուտի բաժանմունքն այնտեղ այդպես էլ չէր բացվել:

Իմ վիճակը բարդացնում էր նաև այն, որ ես չէի խոսում ոչ մի արևմտաեվրոպական լեզվով:

Այս հարցն ինձ սկսել էր մտահոգել դեռևս այն ժամանակ, երբ ես նոր էի պատրաստվում մեկնել Բաթումից: Կոնստանդնուպոլսում ես այդ կարգի ոչ մի խնդիր չունեի, քանի որ այնտեղ կիրառական էին հիմնականում թուրքերենը, հունարենը և հայերենը, որոնց տիարապետում էի կատարելապես: Բայց հենց որ հասա Բեռլին, ես հասկացա, որ իմ անհանգստությունն իզուր չէր: Իսկ հիմա Փարիզում, կանգնելով նորանոր հաշիվները վճարելու համար վիթխարի գումարներ ճարելու անհրաժեշտության առջև, ես զգացի, թե իմ կյանքը որքան կհեշտացնեն լեզվի իմացությունը: Ես ոչ միայն չէի տիրապետում լեզվին, այլև, ծանրաբեռնված լինելով գործերով, ազատ ժամանակ չէի գտնում, որպեսզի ֆրանսերենի դասեր առնեմ:

Թարգմանչի միջոցով առևտրական գործերը հաջողությամբ վարելը գործնականում անիրականանալի խնդիր դուրս եկավ: Շատ կարևոր է գործարքի մասնակցի տրամադրությունը զգալը, որպեսզի այն ի շահ քեզ գործածես: Անգամ գերազանց թարգմանիչ ունենալու դեպքում հնարավոր չէ խուսափել բանակցության տևական դադարներից, որոնք մարդուն չափազանց սառեցնում են, էլ չասած, որ հնարավոր չի լինում որսալ ձայնի նրբերանգները, որոնք շատ կարևոր են հաջող գործարքի համար:

Իսկ ինձ անգամ չհաջողվեց հարմար թարգմանիչ գտնել, քանի որ ինձ օգնել կամեցող մարդիկ ներգաղթյալներ էին, որոնց համար ֆրանսերենը մայրենի լեզու չէր: Ներգաղթյալների մեծ մասը, հատկապես ռուսները, չէին ձգտում կատարելապես տիրապետել իրենց օթևան տված երկրի լեզվին և բավարարվում էին միայն մակերեսային գիտելիքներով, որոնք թույլ են տալիս ընդամենը սեղանի շուրջ զրույց վարել: Իսկ առևտրական գործարքներ վարելու համար պահանջվում էր լեզվի խոր իմացություն:

Այն նյարդային էներգիան, որը ես ծախսեցի Ֆրանսիայում գտնվելու առաջին երկու տարիներին՝ հատկապես այն դեպքերում, երբ զգում էի, որ իմ ասածները ճիշտ չեն թարգմանվում, հաստատ կհերիքեր Նյու Յորքի ֆոնդային բորսայում գործող մի հարյուր սկսնակ մակլերի:

Քանի որ այն գումարը, որն անհրաժեշտ էր Շատո դյու Պրիեր կալվածքին հարկ եղած տեսքը տալու համար, հնարավոր չէր միանգամից վաստակել, ես սկսեցի փոխառություն վերցնելու հնարավորություն փնտրել, որպեսզի գնեմ սկզբի համար ամենաանհրաժեշտ բաները: Իմ հետագա

ծրագրում նախատեսված էր իմ ժամանակի կեսը հատկացնել Ինստիտուտի կազմակերպման գործին, իսկ մյուս կեսը՝ առևտրական գործունեությանը, որպեսզի կարողանամ հնարավորինս շուտ վերադարձնել պարտքը:

Ինձ հաջողվեց հարկ եղած գումարը պարտքով վերցնել իմ լոնդոնյան մի քանի ծանոթներից, որոնք հետաքրքրություն էին ցուցաբերում իմ ձեռնարկումների նկատմամբ և միաժամանակ նշանակալի կարողության տեր էին: Սա առաջին դեպքն էր, որ ես նահանջեցի իմ հիմնական սկզբունքներից մեկից, որն անշեղորեն պահպանում էի տասնհինգ տարիների ընթացքում: Ես միշտ գործն ավարտին հասցնելու համար նյութական պատասխանատվությունն ամբողջությամբ ինձ վրա էի վերցնում՝ հրաժարվելով ցանկացած դրամական օգնությունից:

Բոլոր նրանք, ովքեր գործ են ունեցել ինձ հետ, մաքուր խղճով կարող են հաստատել, որ չնայած այն վիթխարի ծախսերին ու կորուստներին, որոնք ես ունեցա ոչ թե սեփական անշրջահայացության, այլ քաղաքական ու տնտեսական ցնցումների հետևանքով, որոնցով առատ էին նախորդ տարիները, ես ոչ մեկից ոչ մի ցենտ պարտք չեմ վերցնել: Ինչ որ ունեցել եմ, ես ինքս եմ վաստակել: Իմ ընկերներն ու համախոհները հաճախ են ինձ նյութական օգնություն առաջարկել, բայց ես միշտ մերժել եմ այն՝ գերադասելով եղած դժվարությունները հաղթահարել՝ ապավինելով միայն սեփական ուժերիս:

Վերցրածս փոխառությունը ներդնելով Շատո դյու Պրիերի կահավորման գործում՝ ես սկսեցի կրկին զբաղվել առևտրական գործունեությամբ: Իմ ծրագրածն իրականացնելը մարդկային ուժերիցվեր էր թվում: Երբեմն աշխատում էի տառացիորեն օրական 24 ժամ. ամբողջ գիշերն անցկացնում է Ֆոնտնբլոյում՝ զբաղվելով Ինստիտուտի հիմնախնդիրներով, իսկ ցերեկով շտապում էի Փարիզ՝ որպեսզի հասցնեմ գործնական հանդիպումներ ունենալ: Անգամ Փարիզից Ֆոնտենբլո ճանապարհին ես ինձ չէի մատնում անգործության. նամակներն էի քրքրում կամ կշռադատում հերթական առևտրական գործարքի պայմանները:

Գործերը հաջող էին ընթանում, սակայն այդ ամիսների ծայրահեղ լարվածությունը, որոնք հետևել էին ութ տարվա անխոնջ աշխատանքին, հանգեցրին նրան, որ իմ առողջությունը սկսեց լրջորեն տեղի տալ, և ես ստիպված եղա եռանդս նվազեցնել:

Չնայած ամեն քայլափոխին ծագող դժվարություններին, առողջական վատ վիճակիս ու ֆրանսերենի չիմացությանս, և ուշք չդարձնելով այն բանի վրա, որ իմ թշնամիների քանակն աճում էր բարեկամների քանակին ուղիղ համեմատական կերպով՝ ինձ հաջողվեց վեց ամսվա ընթացքում իրականություն դարձնել համարյա այն ամենը, ինչ նախապես ծրագրել էի:

Քանի որ ձեզ՝ ամերիկացիներիդ վրա հատկապես վերջին ժամանակներում հնարավոր է տպավորություն թողնել միայն ֆինանսական հաշվետվություն ներկայացնելով, ապա ես պարզապես կթվարկեմ այն բոլոր ծախսերը, որոնք ստիպված էի կատարել Շատո դյու Պրիերի տարածք ոտք դնելուս ժամանակից մինչև Ամերիկա գալստ:

Ահա դրանց մոտավոր ցուցակը.

վճար՝ կալվածքի արժեքի կեսի և դրան կից հողամասի լրիվ արժեքի համար.

վճար՝ Ինստիտուտի կարիքներին համապատասխանող վերակահավորման, այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի ու բժշկական սարքավորումների գնման համար.

անասնանոցի հետ կապված ծախսեր, այդ թվում՝ ձիերի ոչխարների խոզերի և ընտանի թռչունների գնում և խնամք:

Թվարկվածին պետք է հավելեմ նաև այն, որ անհրաժեշտություն ծագեց վերակահավորելու այն շենքը, որը նախատեսել էի մարմնամարզության և ֆիզիկական այլ տեսակի պարապմունքների, ինչպես նաև ելույթների ու դասախոսությունների անցկացման համար: Այդ մեծ դահլիճը մենք թատրոն կոչեցինք:

Անկախ ամեն ինչից՝ ինձ հաջողվեց պարտքիս կեսը մարել և միաժամանակ կազմակերպչական ծախսեր կատարել Ինստիտուտի գործունեությունն ապահովելու համար:

Մշտական եկամտուտի աղբյուրներից մեկը որպես հոգեթերապևտ իմ գործունեությունն էր, որի ժամանակ հանձն էի առնում բուժել ակոհոլիզմի և թմրամոլության հատկապես բարձիթողի վիճակի հասած դեպքերը: Ես ճանաչված մասնագետ էի այդ բնագավառում, և դժբախտ հիվանդների

հարազատները հաճախ շոշափելի գումարներ էին ինձ առաջարկում իրենց հիվանդին բուժելու համար:

Հիշում եմ ամերիկյան մի ամուսնական զույգի, որոնք ինձ մոտ բուժման էին բերել իրենց որդուն, որի վրա պաշտոնական բժշկությունն արդեն խաչ էր քաշել: Երբ իմ մեթոդը համոզիչ արդյունք տվեց, նրանք կամավորապես կրկնապատկեցին նախապես պայմանավորված իմ հոնորարը:

Այդ ամենից զատ ես զբաղվում էի նաև բորսային գործարքներով և շատ լավ շահույթ էի ստանում՝ նավթային ձեռնարկությունների բաժնետոմսերը վերավաճառելով:

Գործընկերնոջս հետ ես նաև երկու ռեստորան բացեցի Մոնմարտրում, որոնք շուտով սկսեցին նշանակալի շահույթ բերել. բայց որոշ ժամանակ անց ես դրանք վաճառեցի, քանի որ չէի սիրում երկար զբաղվել նույն գործով:

Իհարկե, այսօր, երբ հպանցիկ թվարկում եմ իմ առևտրական գործունեության տեսակները, ձեզ կարող է թվալ, թե այդ ամենն ինձ հեշտ է տրվել: Բայց իրականում այդ բազմաթիվ առևտրական ձեռնարկումներին մասնակցելն ինձնից հսկայական ֆիզիկական ու հոգևոր էներգիա էր խլում:

Այդ ամիսների ընթացքում ես ստիպված էի լինում աշխատել առավոտվա 8-ից մինչև երեկոյան ժամը 10-11-ը, իսկ գիշերվա մնացած մասն անց էի կացնում Մոնմարտրում, և ոչ միայն այն պատճառով, որ պետք է վերահսկեի ռեստորանների աշխատանքը: Ես զբաղվում էի նաև մի հարբեցողի բուժման գործով, որը ցերեկով քնում էր, իսկ գիշերը հարբեցողությամբ էր զբաղվում այդ շրջանի ժամանացային հաստատություններից մեկում: Ես ահավոր չարչարվեցի նրա հետ, քանի որ իմ մեթոդը հիմնված էր կործանարար սովորությունից կամովին հրաժարվելու ցանկության առկայության վրա, իսկ այդ մարդը բուժվել չէր ուզում:

Հարկ է նշել, որ իմ կյանքի այդ շրջանը, երբ ես գիշերներն անցկացնում էի Մոնմարտրում՝ այն մարդկանց, ովքեր ինձ ճանաչում էին կամ թեկուզ լսել էին իմ մասին, առատ նյութ էր տալիս իմ մասին զանազան բամբասանքների համար: Մեկը նախանձով էր լցվում իմ «ուրախ քեֆերի» առիթով, մյուսն էլ դատապարտում էր նման ապրելակերպը: Իսկ ինչ վերաբերում է ինձ, ապա ես անգամ իմ ամենադաժան թշնամուն չէի ցանկանա նման «քեֆեր»:

Կարճ ասած, այն ֆինանսական խնդիրները լուծելու ծայրահեղ անհրաժեշտությունը, որոնք ծագում էին Շատո դյու Պրիերի վարձակալության հետ կապված, հանապազօրյա հաց վաստակելու մշտական հոգսը և ամբողջ ժամանակս և ուժերս իմ հիմնական կոչմանը նվիրելու ցանկությունս (որը կայանում էր իմ հայացքների համակարգը քարոզելու ու տարածելու մեջ և անընդհատ հետաձգվում էր ինձնից անկախ հանգամանքների բերումով) ստիպում էին ինձ աշխատել գերծանրաբեռնված տեմպով, ինչն էլ ի վերջո իր ազդեցությունն ունեցավ իմ ֆիզիկական վիճակի վրա:

Մակայն, չնայած սկսած գործը մինչև վերջ հասցնելու իմ կրքոտ ցանկությանը, ես ստիպված եղա իմ գործունեությունը դադարեցնել հենց այն ժամանակ, երբ արդեն շատ մոտ էի իմ նպատակների իրականացմանը:

Վերջին մի քանի ամիսների ընթացքում իմ առողջական վիճակն այնքան էր վատացել, որ ես ստիպված էի զգալիորեն կրճատել իմ աշխատանքային օրվա տևողությունը: Եվ քանի որ դրանից հետո էլի շարունակում էի ավելի ու ավելի վատ զգալ, ապա սկսեցի լրջորեն անհանգստանալ իմ հետագա ճակատագրով և որոշեցի ամբողջովին հրաժարվել իմ գործունեության բոլոր այն տեսակներից, որոնք ինձնից ֆիզիկական ու հոգևոր լարվածություն էին պահանջում: Մակայն այդ բարի մտադրությունները շարունակեցին սուսկ մտադրություններ մնալ այնքան ժամանակ, մինչև որ լուրջ մրսաճությունս մի յուրոտ խաչ քաշեց իմ աշխատանքի վրա:

Դա տեղի ունեցավ հետևյալ հանգամանքներում: Մի անգամ փարիզյան իմ գործերը ես սովորականից ավելի շուտ ավարտեցի՝ մոտավորապես երեկոյան ժամը 10-ին, և, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաջորդ առավոտյան պետք է լինեի Շատո դյու Պրիերում, որպեսզի ճարտարագետի հետ իմ նախագծածբաղնիքի շինարարության համար նախահաշիվ կազմեմ, որոշեցի անմիջապես գնալ այնտեղ և վաղ պառկել անկողնում, որպեսզի վերջապես կարգին քունս առնեմ:

Ուստի միանգամից ճամփա ընկա դեպի Ֆոնտենբլո՝ անգամ չմտնելով իմ փարիզյան բնակարանը: Եղանակը խոնավ էր, այդ պատճառով փակեցի մեքենայիս ապակիները: Ճանապարհին այնքան լավ էի զգում ինձ, որ նույնիսկ սկսեցի մտքիս մեջ քննարկել կերամիկական իրերի թրծման նպատակով կալվածքում վառարան կառուցելու հնարավորության հարցը, որը ոչ թե ժամանակակից կառուցվածք ունենար, այլ այնպիսին, ինչպիսին օգտագործել էին պարսիկները հազարավոր տարիներ առաջ:

Երբ մուտք գործեցի Ֆոնտենբլոն շրջապատող անտառային տարածքը, հիշեցի, որ այդտեղ հաճախ գիշերով մառախուղ է նստում: Ժամացույցս ցույց էր տալիս ժամը 11-ն անց 15 րոպե, ուստի ես գազն սվեցի, որպեսզի հնարավորինս արագ անցնեմ ճանապարհի այդ հատվածը: Այդ պահից հետո ես արդեն ոչինչ չեմ հիշում: Երբ ուշքի եկա, տեսա հետևյալ տեսարանը. ես նստած էի մեքենայում, որը հայտնվել էր ճանապարհի աջ մասում, իսկ չորս կողմում արևի լույսով ողողված խիտ անտառն էր: Մեքենայիս դիմաց կանգնած էր խոտով բեռնված մի սայլ, որի տերը մոտեցել և մտրակի ծայրով տկտկացնում էր մեքենայիս ապակին (հենց այդ ձայնից էլ ես արթնացել էի):

Պարզվեց, որ նախորդ օրվա երեկոյան՝ ժամացույցի սլաքներին նայելուց հետո, ես քնով էի անցել դեկի վրա և մնացել քնած մինչև առավոտյան ժամը 10-ը: Նման բան ինձ հետ նախկինում երբեք չէր պատահել:

Երջանիկ պատահականությամբ մեքենան նախքան լրիվ կանգ առնելը մի փքր աջ էր անցել և դրանով իսկ չէր խանգարել ուրիշ մեքենաների երթևեկությանը, և ոչ ոք իմ քունը խանգարելու առիթ չէր ունեցել: Իսկ այդ խոտով բեռնված սայլն այնքան լայն էր, որ չէր կարողացել կողքից անցնել, դրա համար էլ սայլապանը ստիպված էր եղել ինձ արթնացնել:

Ավաղ, ես ոչ միայն լավ քնել էի, այլև լավ էլ մրսել էի՝ ամբողջ գիշերն անցկացնելով խոնավ վայրում: Մրսածությունս այնքան լուրջ էր, որ դրա հետևանքներն զգացվում են մինչև այսօր:

Գրանից հետո ստիպված եղա կամավորապես ինձ վրա վերցրած պարտականությունների մեծ մասից հրաժարվել, քանի որ բառացիորեն հազիվ էի կարողանում ոտքերս քարշ տալ:

Իրավիճակը տագնապալից դարձավ, քանի որ ինձ փոխարինող չկար, և այդ ժամանակահատվածում իմ ստեղծած ամեն ինչը սպառնում էր փուլ գալ: Անընդհատ նորանոր հաշիվներ էին գալիս, որոնք վճարելու ոչ մի հնարավորություն չկար: Հարկավոր էր շտապ ինչ-որ բան մտածել:

Մի անգա, երբ նստած էի օտարերկրացիների կողմից սիրված Գրանդ կաֆեի սանդղահարթակին և մտորում էի իմ անուրախ ու կարծես թե անելանելի վիճակի մասին, հանկարծ իմ գլխում մի գաղափար ծագեց:

Մեկ որ իմ ներկա առողջական վիճակը թույլ չի տալիս և հավանաբար դեռ երկար ժամանակ թույլ չի տա, որ հարկ եղած չափով լարված աշխատեմ Ինստիտուտի բացման հետ կապված իմ պլաններն իրականացնելու վրա, ապա ավելի լավ չի՝ լինի, եթե ինքս ինձ թեկուզ կարճատև «արձակուրդ» տամ և մեկնեմ Ամերիկա, ինչի մասին վաղուց էի երազում:

Առանց երկարատև կանգառների շրջագայությունը Հյուսիսային Ամերիկայում, որտեղ անընդհատ կփոխվեն տպավորություններս, լիարժեք հանգստի համար անհրաժեշտ պայմաններ կստեղծի: Քանի որ բավականաչափ հեռու կգտնվեմ այն վայրից, որի վրա կենտրոնացած են իմ բոլոր հետաքրքրությունները, ես կկարողանամ զսպել կրկին աշխատանքի լծվելու իմ գայթակղությունը, որն իմ առողջության ներկա վիճակի պայմաններում կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ:

Պետք է նշեմ, որ ես վաղուց էի նյութեր պատրաստում դասախոսությունների համար, որոնք ունկնդիրներին պետք է ծանոթացնեին իմ ուսմունքի հիմադրույթներին, որոնք վերաբերում են մարդկային գործունեության այնպիսի բնագավառներին, ինչպիսիք են հոգեբանությունը, բժշկությունը, հնէաբանությունը, արվեստը, ճարտարապետությունը և անգամ այն ամենը, ինչ անվանվում է «գերբնական երևույթներ»:

Միաժամանակ ես սկսել էի իմ աշակերտներին նախապատրաստել ելույթների մի շարքի, որոնք ես պատրաստվում էի ներկայացնել Եվրոպայում և Ամերիկայում շրջագայելու ընթացքում: Իմ նպատակն այն էր, որ սովորական մարդկանց առօրյա կյանք մտցնեմ իմ գաղափարների բուն ելույթները և նրանց հասկացնեմ, թե ինչ գործնական արդյունքների կարող է հանգեցնել այդ գաղափարներով առաջնորդվելը՝ հիմնվելով Ասիայի տարբեր տարածաշրջաններում հավաքած նյութերի վրա, , որոնցից շատերը մատչելի չեն սովորական մարդկանց համար:

Մի լավ կշռադատելուց հետո ես որոշեցի ռիսկի դիմել և անհապաղ ճանապարհ ընկնել՝ չսպասելով, որ ամեն ինչ նախապատրաստվի դրա համար:

Ես նույնիսկ ինքս ինձ խոստացա ոչ մի լուրջ բանի մասին չմտածել ամբողջ ճամփորդության ընթացքում, միշտ լավ սնվել ու լավ քնել և կարդալ միայն այնպիսի գրքեր, որոնք ինձ դուր են գալիս և կշեղեն հոգսերիցս:

Ես խիզախեցի կատարել այդ շրջագայությունը նաև այն պատճառով, որ հույսս դնում էի իմ աշակերտների պատրաստվածության վրա, որոնք պետք է ինքնուրույնաբար, առանց իմ միջամտության մի շարք դասախոսություններ կարդային և ներկայացնեին մի շարք ցուցադրական ելույթներ:

Իմ այդ պլանի գլխավոր դժվարությունը, պլան, որը պետք է նպաստեր ինչպես իմ առողջական վիճակի, այնպես էլ նյութական դրության լավացմանը, այն էր, որ անհրաժեշտ էր ինձ հետ միասին շրջագայության տանել ամենաքիչը 46 հոգու, որոնք Ամերիկայում, ինչպես դրանից առաջ Ֆրանսիայում, ամբողջովին լինելու էին իմ խնամակալության տակ: Դա միակ եղանակն էր լուծելու Ֆրանսիայում հասունացող ֆինանսական պրոբլեմը, բայց չէր կարելի հաշվի չառնել, որ անհաջողության դեպքում իրավիճակը կարող էր էլ ավելի վատթարանալ և բերել իսկական աղետի:

Թե նյութական տեսակետից ինչ է նշանակում 46 հոգու ուղեկցությամբ Ամերիկա մեկնելը, ձեզ՝ ճամփորդությունների կրքոտ սիրահարներիդ, կարծում եմ բացատրելու հարկ չկա: Բայց մի մոռացեք, որ դուք ճամփա ընկնելուց առաջ ձեր դուրսերը ֆրանկների եք վերածում, իսկ ես ստիպված էի կատարել հակառակ գործողությունը, որն անհամեմատ ավելի քիչ շահավետ փոխանակություն է:

Այն պահին, երբ ես որոշեցի մեկնել Ամերիկա, ձեռքի տակ ունեի ընդամենը մոտ 300 հազար ֆրանկ, որ նախատեսված էր մինչև փետրվարի 15-ը Շատո դյու Պրիերն ամբողջովին որպես սեփականություն գնելու համար. դա այն վերջին ժամկետն էր, որ այդ գործարքը կարող էր կայանալ: Եվ, չնայած դրան, ես որոշեցի ռիսկի դիմել և այդ փողերը ծախսել Ամերիկայում ճամփորդելու համար. ուստի հապճեպորեն սկսեցի պատրաստվել մեկնելու:

Տոմսեր ձեռք բերելու, մուտքի արտոնագրեր ստանալու, սովորական ու հատուկ հագուստներ գնելու (որոնցով իմ աշակերտները պետք է պարեր ցուցադրեին) ամբողջ վազվզոցի մեջ ես այնուամենայնիվ ժամանակ գտա, որպեսզի աշակերտներիս հետ ավելի շատ աշխատեմ ռիթմիկ շարժումների մշակման վրա, որոնք պետք է ցուցադրեինք Ամերիկայում. անգամ ավելացրի դրա համար նախատեսված փորձերի քանակը: Նկատելով, որ ելույթների մասնակիցներին շատ է շփոթեցնում կողմնակի անձանց՝ հանդիսատեսների ներկայությունը՝ ես որոշեցի Ամերիկա մեկնելուց առաջ մի քանի ներկայացում տալ Փարիզի Ելիսեյան դաշտերի թատրոնում:

Թեև ես արդեն իսկ ենթադրում էի, որ ճամփորդության նախապատրաստությունն ինձ վրա մի կլորիկ գումար կնստի, բայց իրականությունը գերազանցեց իմ բոլոր սպասելիքները:

Եվ իրոք, թատրոնի վարձակալությունը, շոգենավի տոմսեր գնելը, զանազան այլ հաշիվներ փակելը, Եվրոպայում մնացողների համար որոշակի գումար թողնելը, ինչպես նաև այլ չնախատեսված ծախսեր աննկատելիորեն «կուլ տվին» իմ ունեցած 300 հազար ֆրանկը դեռ մինչև մեկնելը:

Այդպիսով ես հայտնվեցի ողբերգական իրավիճակում: Ամեն ինչ պատրաստ էր մեկնելու համար, բայց մենք չէինք կարող դուրս գալ նավարկության: Այդպիսի մեծ խմբով չի կարելի դուրս գալ ճամփորդության՝ պահուստային գումար չունենալով անկանխատեսելի ծախսերի համար, որոնք հաճախ են ի հայտ գալիս ճանապարհին:

Շոգենավի մեկնելուն նախորդած երեք օրերի ընթացքում ես կարծես փշերի վրա էի:

Սակայն ամենաձայրահեղ պահին տեղի ունեցավ մի անհավանական իրադարձություն:

Այն հնարավոր չէ բացատրել այլ կերպ, քան մարդու կյանքի մեջ վերին ուժերի միջամտությամբ: Ինչ վերաբերում է ինձ, ապա համարձակվում եմ պնդել, որ արժանացել էի երկնքի ողորմածությանը իմ ապրած ամբողջ կյանքով, որը լի էր եղել գործերով ու հոգսերով, իմ առջև դրված նպատակներն իրականացնելու համար ձգտումով: Իսկ դեպքը տեղի ունեցավ այսպես: Ես նստած էի Շատո դյու Պրիերի իմ առանձնասենյակում և գլուխ էի ջարդում այն հարցի վրա, թե ինչպես դուրս պրծնեմ ստեղծված ծայրահեղ իրավիճակից, երբ հանկարծ սենյակի դուռը բացվեց, և ներս մտավ իմ մայրը: Նա վերջերս էր ժամանել Փարիզ իմ մի քանի ուրիշ ազգականների հետ, որոնք Ռուսաստանից իմ հեռանալուց հետո մնացել էին Կովկասում: Եվ ահա մեծ դժվարությամբ ինձ հաջողվել էր նրանց Փարիզ հասցնել:

Մայրս մոտեցավ և ինձ հանձնեց մի փաթեթ, ասելով. «Որդի՛ս, խնդրում եմ, ազատի՛ր ինձ այս բեռից. ես այնքա՛ն եմ հոգնել դա ամենուրեք հետս կրելով...»:

Սկզբում չհասկացա, թե նա ինչ է նկատի ունի և մեքենայաբար սկսեցի քանդել փաթեթը: Բայց երբ տեսա, թե ինչ է այն պարունակում իր մեջ, ուղղակի ուրախությունից թռչկոտեցի:

Որպեսզի ձեզ բացատրեմ, թե այդ փոքրիկ փաթեթի ի հայտ գալն ինչու՞ իմ բուռն ուրախության պատճառ դարձավ, ես պետք նախ պատմեմ որոշ բաներ: Ես ենտուկիում ապրելուս տարիներին Ռուսաստանում ամենուրեք տեղի ունեցող խժոժությունները ինչպես ամեն մի առողջ մտածողության տեր մարդու, այնպես էլ ինձ չէին կարող որոշակի մտահոգություններ չպատճառել, ուստի ես իմ ծեր մորը Ալեքսանդրապոլից տեղափոխել էի ինձ մոտ: Իսկ ավելի ուշ, պատրաստվելով մեկնել գիտական արշավի, որի մասին արդեն հիշատակել եմ, ես մորս թողեցի Եսենտուկիում մնացած իմ ընկերների խնամքին:

Պետք է հիշեցնեմ, որ 1918 թվականին Կովկասում, ինչպես և ամբողջ Ռուսաստանում ռուբլու գինն անշեղորեն ընկնում էր, և քիչ թե շատ կարողություն ունեցող ամեն ոք աշխատում էր գնել ավելի կայուն արժեք ունեցող իրեր, ինչպիսիք են քանկարժեք քարերն ու մետաղները, հնաոճ իրերը և այլն:

Ես նույնպես իմ բոլոր փողերը վերածեցի նմանատիպ արժեքների, որոնք միշտ կրում էի ինձ հետ:

Բայց քանի որ այն օրերին, երբ ես պատրաստվում էի արշավի մեկնել, բռնագրավման անվան տակ ամենասովորական բան էին դարձել կողոպուտն ու թալանը, ապա այդ արժեքներն ինձ հետ տանելը կնշանակեր հսկայական վտանգի ենթարկվել: Ուստի ես այդ առարկաների մի մասը բաշխեցի ուղեկիցներին միջև այն հույսով, որ եթե անգամ թալանից չկարողանանք խուսափել, ապա գոնե ինչ-որ բան կփրկվի. մնացած արժեքավոր իրերը ես վստահեցի Պյատիգորսկի և Եսենտուկիի իմ ընկերներին, որոնց խնդրել էի հոգալ մորս մասին: Ամենարժեքավոր իրը, որը գնել էի փողի կարիք զգացող մի դքսուհուց, ես հանձնեցի մորս:

Ես վստահ էի, որ, լինելով ծանր նյութական կացության մեջ, իմ մեկնելուց հետո նա շուտով կվաճառի այդ կրծքագարդը: Չէր բացառվում նաև, որ այն կգողացվեր փախստականների անվերջանալի տեղափոխությունների ընթացքում, քանի որ ամենուրեք վիստում էին զինված ավազակախմբեր, կամ ճանապարհին կկորսվեր:

Կարճ ասած, ես լրիվ մոռացել էի դրա մասին և, աղքատությունից դուրս պրծնելու զանազան եղանակներ մտածելուս ընթացքում մտքով, բացարձակապես չէր անցնում, որ այն կարող է հանկարծակի վեր հաննել անգոյությունից:

Պարզվեց, որ մայրս, այդ կրծքագարդն ի պահ վերցնելով, սխալ էր ընկալել իմ խոսքերը դրա հատուկ արժեքավորության մասին՝ կարծելով, թե այն թանկ է ինձ համար որպես մասունք կամ նվեր մտերիմ մարդուց, ուստի և այն ոչ մի դեպքում վաճառել չի կարելի: Եվ բոլոր այդ տարիներին նա աչքի լույսի պես պահել էր այդ գարդը՝ ոչ մեկին ցույց չտալով և գործնականում ձեռքից ցած չդնելով: Եվ հիմա նա ուրախ էր, որ հնարավորություն ունի այն վերադարձնելու ինձ և վերջապես ազատվելու այն անփորձանք պահպանելու համար մշտական տագնապի զգացումից:

Կարո՞ղ եք պատկերացնել իմ վիճակը, երբ տեսա այդ կրծքագարդը և հասկացա, որ փրկված եմ:

Այդ կրծքագարդը ես կարող էի առնվազն երկու հազար դոլարով գրավ դնել իմ ծանոթներից մեկի մոտ, բայց ես որոշեցի այն ինձ հետ տանել Ամերիկա, քանի որ Փարիզում ինձ դրա դիմաց առաջարկեցին 125 հազար ֆրանկ, մինչդեռ ես վստահ էի, որ այն անհամեմատ ավելին արժե: Հետո Նյու Յորքում ես այն վաճառեցի և հասկացա, որ չեմ սխալվել»:

Այստեղ միսոր Գյուրջինն ընդհատեց իր պատմությունը և ծխախոտ կպցրեց՝ խորամանկ ժպիտով աչքի տակից դիտելով մեզ: Մենյակում տիրած համատարած լռությունը խախտեց միսոր Խ.-ն, որ իր սեղանից մոտեցավ միսոր Գյուրջինին և ասաց. «Ես չգիտեմ՝ մեղավորը ձեր պատմությունն է, թե՞ իմ զգացմունքայնությունը, բայց ես հիմա պահանջ եմ զգում թեթևացնելու ձեր հոգսերի բեռը՝ դրա մի մասը վերցնելով իմ ուսերին»:

Թույլ տվեք ձեզ հանձնել այս չեկը, որով ձեր Ինստիտուտին եմ նվիրաբերում այն ամենը, ինչ այս պահին ունեմ իմ ձեռքի տակ: Միևնույն ժամանակ բոլոր այս մարդկանց նեկայությամբ ես խոստանում եմ, որ նույնքան գումար դուք ինձնից կստանաք ամեն տարի՝ անկախ այն բանից, թե երկրագնդի ո՞ր անկյունում եք գտնվում և ինչպիսի՞ն է այդ պահին ձեր նյութական կացությունը»:

Երբ միսոր Խ.-ն իր խոսքն ավարտեց և, ակնհայտորեն հուզված, ճակատը սրբեց գրպանի թաշկինակով, միսոր Գյուրջինը տեղից վեր կացավ, ձեռքը դրեց նրա ուսին և, այնպիսի բարի ու երախտապարտ հայացքով նրան նայելով, որը հնարավոր չէ մոռանալ, ասաց. «Երախտապարտ եմ ձեզ... այսօրվանից ես ձեզ իմ եղբայրն եմ համարում»:

Սակայն ներկաների վրա միսոր Գյուրջինի պատմության թողած տպավորության ավելի համոզիչ վկայությունը եղավ այն, որ ոմն լեդի Լ., ով ժամանակավորապես Նյու Յորքում էր գտնվում և միսոր Ռ.-

ի հյուրերի թվում ներկա էր այդ երեկոյին, տեղից վեր կացավ և ամենայն անկեղծությամբ ասաց. «Մի՛ ստոր Գյուրջին, ճակատագրի բերումով ես պատահաբար հայտնվեցի ընթրիքի հրավիրվածների թվում, որը կազմակերպվել է Մարդու ներդաշնակ զարգացման Ինստիտուտի նյույորքյան բաժանմունքի բացման առիթով, և այն ամենը, ինչ լսեցի ձեզնից, ինձ վրա թողեց մեծ տպավորություն: Ինձ առաջ էլ էր բախտ վիճակվել լսելու ձեր գործունեության մասին, որին նվիրաբերել եք ձեր ամբողջ կյանքը. ես անգամ երջանկություն եմ ունեցել ներկա գտնվելու ձեր մի քանի դասախոսություններին ու ձեր աշակերտների ելույթներին, և սեփական աչքերով համոզվել եմ ձեր նվաճումների մեջ: Եվ իհարկե, ձեզ չի զարմացնի իմ հաղորդումն այն մասին, որ ձեր գաղափարներն ինձ չափազանց հետաքրքրել են, և ես կուզենայի նպաստել դրանց տարածմանը: Ուստի և ես անհրաժեշտ եմ համարում իմ հնարավորության սահմաններում ներդրում անել ձեր գործին նվիրաբերելով այն ամբողջ կարողության կեսը, որն այս պահին ես ունեմ:

Հավանաբար ձեզ համար գաղտնիք չէ, որ ես բավականին մեծ դրամագլուխ ունեմ: Այդ գումարի մյուս կեսը լիովին բավարար է, որպեսզի իմ մնացած կյանքն անցկացնեմ իմ սոցիալական դրությանը համապատասխան: Երկար ժամանակի ընթացքում ես մշտապես որոշակի գումար եմ ներդրել իմ բանկային հաշվին՝ սև օրվա համար: Բայց ես կարծում եմ, որ դուք ավելի լավ կիրառություն կգտնեք դրա համար: Եթե ես երբևէ հայտնվեմ դժվարին նյութական կացության մեջ, հուսով եմ, որ դուք կօգնեք ինձ, ինչպես ես եմ հիմա ձեզ օգնում. չէ՞ որ ոչ ոք չգիտի, թե ճակատագիրն ինչ է նախապատրաստում իր համար»:

Քանի դեռ խոսում էր լեդի Լ.-ն, միստր Գյուրջինը շատ ուշադիր լսում էր նրան, իսկ դեմքից անկեղծ հետաքրքրություն ու երախտագիտություն էր ծորում, իսկ հետո նա ասաց. «Խորապես շնորհակալ եմ, հարգելի՛ լեդի Լ., ես խիստ տպավորված եմ ձեր անկեղծությամբ ու բարությանբ և, խորին երախտագիտության զգացումով ընդունելով ձեր նվիրատվությունը, ես էլ իմ հերթին խոստանում եմ, որ ձեզնից ստացված փողերը կվերադարձնեմ ամենաուշը ութ տարի հետո, թեև հույս ունեմ, որ նախախնամությունը բարեհաճ կգտնվի ձեր նկատմամբ, և սև օրեր դուք երբեք չեք ունենա»:

Դրանից հետո դահլիճում խոր լռություն էր տիրում, կարծես բոլորը խորասուզվել էին իրենց մքերի մեջ՝ գտնվելով այդ երեկոյի ընթացքում իրենց ամբողջ լսածի տպավորության տակ:

Եվ ահա ես նստած եմ Նյու Յորքի ռեստորաններից մեկում, որը գտնվում է Հինգերորդ ավենյուի և 56-րդ փողոցի հատման անկյունում և խմբագրում եմ իմ ձեռագիրը նույնպիսի իրադրության մեջ, ինչպիսին համարյա միշտ ուղեկցել է վերջին վեց տարիների իմ գրական գործունեությանը: Ես գրում էի հիմնականում ռեստորաններում, սրճարաններում և այլ հասարակական վայրերում, որոնք, որքան էլ տարօրինակ է, շատ են նպաստել իմ աշխատանքին: Ուշագրավ եմ համարում այն փաստը, որը ոմանք երևի կհամարեն սովորական զուգադիպություն, ոմանք էլ՝ նախախնամություն, բայց ես, առանց որևէ հատուկ միտում ունենալու, իմ այս աշխատանքն ավարտում եմ ուղիղ յոթ տարի անց այն օրից, երբ կայացավ իմ կողմից հենց նոր նկարագրված գրույրը:

Որպեսզի ավարտեմ այս պատմությունը, ամերիկյան իմ շրջագայության առիթով ես պետք է հավելեմ, որ թեև իմ կողմից շատ համարձակ քայլ էր նման մեծ խմբի ուղեկցությամբ և առանց գրպանում գրոշ ունենալու ուրիշ երկիր մեկնելը, մանավանդ երբ ո՛չ լեզու գիտես, ո՛չ էլ լրիվ նախապատրաստված ես այն խնդրին, որը դրված է քո առաջ, այնուհանդերձ, չնայած այդ ամենին, մեր ելույթների հաջողությունը գերազանցեց մեր բոլոր սպասելիքները:

Ամենայն վստահությամբ կարող եմ պնդել, որ եթե Ֆրանսիա վերադառնալուցս մի քանի օր հետո տեղի չունենար այն լուրջ դժբախտությունը, որն ինձ խանգարեց վեց ամիս հետո կրկին Ամերիկա գնալ, ինչպես նախապես մտադրվել էի, ապա ես կկարողանայի իմ աշակերտների հետ ոչ միայն շոշափելի գումար վաստակել, որը կհերիքեր բոլոր պարտքերս փակելուն, այլև կապահովեի Մարդու ներդաշնակ զարգացման իմ Ինստիտուտի արդեն գոյություն ունեցող բաժանմունքների հետագա գոյատևումը և կկազմակերպեի նոր բաժանմունքներ:

Բայց արժե՞ արդյոք հիմա այդ մասին խոսել...

Նկարագրելով իմ կյանքի այս շրջանը՝ ես հիշեցի մեր հարգարժան մուլլա Նասրեդինի սիրած խոսքը, թե՛ «Գլուխը կորցնողը մազերի համար լաց չի լինի»:

Երբ ավարտում էի վերջին նախադասությունը, ինչ-որ մեկը մոտեցավ իմ սեղանին:

Իմ բոլոր ընկերները գիտեն, որ եթե ինչ-որ հարցով ուզում են դիմել ինձ, ապա պետք է սպասեն, մինչև ավարտեմ գործս: Պետք է ասեմ, որ թեև նրանք պահպանում են այդ պայմանը, բայց ես զգում եմ, որ դա նրանց առանձնապես հաճույք չի պատճառում. երբեմն նրանց դեմքին այնպիսի արտահայտություն է դրոշմվում, կարծես դառը դեղահաբ խմած լինեն:

Պարբերությունը վերջացնելուց հետո ես շրջվեցի եկողի կողմը և նրա ասածները լսելուց հետո հանկարծ մի լուրջ որոշում կայացրի: Բայց եթե հիմա ես սկսեմ նկարագրել բոլոր այն մտքերը, որոնք հայտնվեցին իմ գլխում և այդ որոշումն ընդունելու ամբողջ գործընթացը ապա դրանով դեմ կգնայի իմ սեփական սկզբունքներին, որոնք կարմիր գծի պես անցնում են իմ ամբողջ պատմության միջով:

Որպեսզի էլ գլուխներդ չցավեցնեմ, ես պետք է նախ բացատրեմ, թե ով էր ինձ մոտեցած մարդը, որն ինձնից անհրաժեշտ ցուցումներ ստանալուց հետո անմիջապես հեռացավ: Նա ոչ այլ ոք էր քան հնաճ իրերի առևտրի իմ գաղտնի գործընկերը: Ես ասացի «գաղտնի», քանի որ ոչ ոք, անգամ իմ ամենամտերիմ ընկերներից որևէ մեկը, չգիտեր նրա գոյության մասին:

Ես այդ բիզնեսով սկսեցի զբաղվել վեց տարի առաջ ինձ հետ տեղի ունեցած դժբախտությունից վեց ամիս հետո, երբ դեռ ֆիզիկապես շատ թույլ էի, բայց հրաշալի գիտակցում էի, թե որքան է վատացել իմ նյութական դրությունը Հյուսիսային Ամերիկա կատարած շրջագայության հսկայական ծախսերի, ինչպես նաև մորս և քրոջս բուժման համար կատարած ծախսերի հետևանքով, որոնք ծանր հիվանդ էին: Քանի որ երկարատև անկողնային ռեժիմն ու լիակատար անօգնական վիճակն ուղղակի անտանելի էին, ես սկսեցի կամաց-կամաց մեքենայով ոչ մեծ ուղևորություններ կատարել, որպեսզի և՛ նոր տպավորությունների շնորհիվ մի փքր ցրվեմ, և՛ կարողանամ պարզել, թե չի՞ գտնվի արդյոք մի զբաղմունք, որից կկարողանամ գլուխ հանել՝ հաշվի առնելով իմ այժմյան առողջական վիճակը: Իմ մտերիմ ընկերների ուղեկցությամբ, որոնք համարյա միշտ իմ կողքին էին լինում, ես սկսեցի շրջագայել ամեն տեղ՝ առավել հաճախ գնալով այն վայրերը, որտեղ ռուս ներգաղթյալներ շատ կային:

Եվ ահա մի անգամ, երբ նստած էի փարիզյան համբավվոր սրճարաններից մեկում, ինձ մոտեցավ մի մարդ, որին անմիջապես չճանաչեցի: Միայն հետագա զրույցի ընթացքում ես հիշեցի, որ նրան շատ անգամ եմ հանդիպել ինչպես Կովկասում ու Անդրկովկասում, այնպես էլ անդրկասպյան տարածաշրջանում: Մի վայրից մյուսը մեկնելով՝ նա զբաղվում էր հնաճ իրերի իրերի առք ու վաճառքով և հաճախ դիմում էր ինձ խորհրդատվության համար՝ ինձ համարելով այդ բնագավառի ճանաչված գիտակ: Ես առանձնապես լավ էի գլուխ հանում արրևելյան գորգերից ու չինական ձենապակուց:

Ամեն ինչից գատ նա նաև ասաց, որ իրեն հաջողվել է Ռուսաստանից դուրս հանել իր կապիտալի մի զգալի մասը և, լավ տիրապետելով անգլերենին, անմիջապես Եվրոպայում սկսել է զբաղվել իր նախկին բիզնեսով: Ինձ պատմելով իր առևտրական գործարքների մասին՝ իմ հին ծանոթը բացատրեց, որ ամենամեծ բարդությունն այն է, որ Եվրոպական շուկան հիմա լցված է ամեն տեսակի կեղծված ապրանքներով, ապա հանկարծ հարց տվեց ինձ. «Իսկ դու՞, բարեկա՛մս, չէի՞ր ուզենա արդյոք իմ գործընկերը դառնալ: Ամեն դեպքում կարող էիր գտնե՞լ ապրանքները գնահատելու գործը քեզ վրա վերցնել»:

Համագործակցության պայմանները քննարկելուց հետո մենք հասանք լիակատար փոխըմբռնման և իրար ձեռք սեղմեցինք: Մեր համատեղ աշխատանքը տևեց չորս տարի: Նախքան որևէ ապրանք գնելն իմ գործընկերն այն բերում էր ինձ մոտ, որպեսզի ես տայի իմ մասնագիտական գնահատականը: Երբեմն էլ ինքս էի գնում տվյալ ապրանքը վաճառողի մոտ և հենց տեղում գնահատում այն, որից հետո իմ կարծիքը հայտնում էի գործընկերոջս:

Այդպես շարունակվեց մի որոշ ժամանակ: Նա ամբողջ տարին շրջագայում էր Եվրոպայում, գնում զանազան հազվագյուտ իրեր և դրանք տեղափոխում Ամերիկա՝ հիմնականում Նյու Յորք, որտեղ դրանք վաճառում էր մեծածախ գնորդներին: Իսկ իմ գործը միայն ապրանքը գնահատելն էր և ուրիշ ոչինչ:

Այն ժամանակահատվածում, երբ իմ նյութական դրությունը հատկապես ողբալի էր, հնաճ իրերի իրերի բիզնեսը ծաղկում էր ապրում, քանի որ Եվրոպան ուղղակի հեղեղված էր նման ապրանքներով: Ուստի ես որոշեցի, որ գործարքների ծավալն ընդլայնելու ճիշտ ժամանակն է:

Եվ ահա, փոխանակ հանգստանալու երկարատև ու հոգնեցուցիչ ճամփորդությունից հետո, ես, համաձայն իմ գործունյա բնավորությանը, գլխովին խրվեցի այդ գործերի մեջ և կարողացա մոտ մեկ

միլիոն ֆրանկ փոխ առնել այն մարդկանցից, որոնց հետ նման գործեր էի վարում, և որոնք անվերապահորեն ինձ վստահում էին: Հավաքածու գումարը ես անհապաղ ներդրեցի իմ բիզնեսն ընդլայնելու գործում: Ոգեշնչվելով մեր ձեռնարկումների արագ զարգացմամբ և մեծ շահույթներ ստանալու հեռանկարով՝ իմ գործընկերը, չինայելով ուժերն ու ժամանակը, չափչփում էր ողջ Եվրոպան և մեծ խմբաքանակներով ապրանքներ գնում: Մեր պայմանավորվածության համաձայն՝ նա վերադարձավ Ամերիկա իմ այնտեղ գնալուց վեց ամիս առաջ:

Դժբախտաբար, հենց այդ տարիներին բռնկված տնտեսական ճգնաժամն ամենաանբարենպաստ ձևով անդրադարձավ մեր բիզնեսի վրա: Մենք ոչ միայն չէինք կարող շահույթ ակնկալել, այլև կորցրինք մեր ներդրած կապիտալը վերադարձնելու ամեն մի հույս:

Ինչ խոսքեր գտնեմ, որպեսզի նկարագրեմ այն անելանելի դրությունը, որում հայտնվել էի՝ հույս ունենալով, որ ճգնաժամը շուտով կավարտվի, մինչդեռ դա մեծ տնտեսական ճգնաժամի սկիզբն էր...

Բարձրագույն կրթություն ունենալու կարիք չկա հասկանալու համար, թե որքան ծանր էր իմ վիճակն այդ ժամանակ:

Երբ այդ տարի ընդլայնում էի իմ բիզնեսը, ես լիովին համոզված էի, որ այդ ձեռնարկումն ինձ այնքան շահույթ կբերի, որ այն բավարար կլինի կուտակած պարտքերս մարելու համար, և վաստակածու կապիտալն ինձ թույլ կտա ամբողջ ժամանակս նվիրել գրական աշխատանքին: Առաջին գիրքն այդ ժամանակ արդեն ավարտին էի հասցրել, և ակնկալում էի, որ այն կկարողանամ հրատարակել սեփական միջոցներս հաշվին՝ կախված չլինելով ոչ մեկից, որից հետո ձեռնամուխ կլինեմ երկրորդ գիրքը գրելուն: Սակայն ամբողջ Ամերիկան ընդգրկած այդ տնտեսական ճգնաժամը, ինչպես կասեր պատվարժան մոլլա Նասրեդինը՝ ինձ այնպիսի մի խոր ծակի մեջ կոխեց, ուր չէր թափանցում ցերեկային լույսի ոչ մի ճառագայթ:

Այդ վեց տարիների ընթացքում աշխատելով երեք գրքերի վրա՝ ես պետք է միշտ և ամենուրեք հիշեի իմ գլխավոր նպատակի մասին, որն ամեն գնով հարկավոր էր իրագործել, և որն իմ ոչ դյուրին կյանքի միակ արդարացումն ու իմաստը կլիներ:

Ես ինքս ինձ երես չէի տալիս և թույլ չէի տալիս, որ ծանր նյութական դրությունը, որում հայտնվել էի, խանգարեր իմ գրական աշխատանքին:

Ուրիշներին մատչելի ձևով մտքերս արտահայտելու ցանկությունն այնպես էր համակել ինձ, որ հաճախ մոռանում էի ժամանակին սնվելու մասին:

Բայց ամենածանրն ինձ համար այն էր, որ չէի կարողանում ուշադրությունս կենտրոնացնել գրական աշխատանքի վրա, քանի որ մշտապես ստիպված էի լինում շեղվել այն հարցով, թե ո՞ր պարտքը մարեմ առաջին հերթին, որովհետև բոլորը միանգամից վճարել հնարավոր չէր:

Այդ վեց տարիների ընթացքում ես հասա նյարդային հյուծվածության աստիճանի: Ոչ այն պատճառով, որ միաժամանակ աշխատում էի երեք գրքերի վրա, որոնց ձեռագրերն իրար գլխի լցված էին որպես արխիվ կահավորված սենյակում: Ինձ հյուծում էր այն, որ պետք է անընդհատ գլուխ կոտրեի այն հարցի վրա, թե ինչպե՞ս վարվեմ շարունակ աճող պարտքերիս հետ:

Բայց եթե նախկինում կարող էի հրաժարվել իմ առաքելությունից, ապա հիմա, երբ իմ գաղափարներն արդեն լայնորեն հայտնի էին դարձել, նահանջի բոլոր ճանապարհները փակված էին:

Իսկ այն անգամ, երբ իմ գործընկերն ինձ գտավ փարիզյան ռեստորանում և հայտնեց մեր ձեռնարկումների ձախողման մասին, ես կայացրի մի որոշում, որը չէր հակասում իմ հիմնական սկզբունքներին: Այդ որոշումը հետևյալն էր: Ես պետք է առանց ուրիշների օգնությանը դիմելու գումար վաստակեմ, որը ոչ միայն ինձ թույլ կտա մարել պարտքերս, այլև արժանավայել գոյատևում կապահովի ինձ համար, ընդ որում ես չպետք է անեմ այնպիսի բան, որից հետո խղճի խայթ կզգամ:

Այդպես վարվելով, ես կրկին կկարողանամ Արարչի շնորհած երանությունն ապրել, մի երանություն, որի մասին Մովսեսի առաջին խրատատու եզիպտացի հոգևորականն այսպես է ասել. «Մարդուն ոչինչ այնքան որախություն չի պատճառում, որքան մաքուր խիղճը»:

Այսօր հունվարի 10-ն է: Հին տոմարով երեք օր առաջ իմ ծննդյան օրն էր:

Մանկությունից իմ մեջ արմատացած մի սովորության համաձայն՝ ես այդ օրը նվիրեցի այդ մի տարվա ընթացքում տեղի ունեցած ամեն ինչի վերախմաստավորմանը և իմ առջև նոր նպատակ դնելուն: Նոր տարում ես պետք է ի մի բերեմ իմ բոլոր ունակությունները և այնպիսի գումար վաստակեմ, որը բավարար լինի բոլոր պարտքերս մարելու և Ամերիկայից հետ վերադառնալուս համար, ինչը նախատեսված է մարտի կեսերին:

Այնուհետև, Ֆրանսիա հասնելուն պես ես կսկեմ նորից գրել՝ պայմանով, որ արդեն ձերբազատված կլինեմ նյութական բնույթ կրող բոլոր հոգսերից:

Իսկ եթե այս կամ այն պատճառով չկարողանամ ի կատար ածել մտադրվածս կամ հիասթափվեմ այն գաղափարներից, որոնք մինչ այժմ քարոզում էի, ապա, հավատարիմ մնալով իմ սկզբունքներին,՝ կվարվեմ հետևյալ կերպ: Հրատարակչություն կտանեմ միայն այն ձեռագրերը, որոնք ամբողջովին պատրաստ եմ համարում տպագրության, այն է՝ առաջին գրքի ամբողջ նյութը և երկրորդ գրքի առաջին երկու գլուխները, որից հետո կվերադառնամ տուն, մի մեծ խարույկ կվառեմ այն բացատի կենտրոնում, որը գտնվում է իմ աշխատասենյակի պատուհանի դիմաց և դրա մեջ կնետեմ մնացած բոլոր անավարտ ձեռագրերս:

Հետո նոր կյանք կսկսեմ՝ ձգտելով միայն մեկ նպատակի՝ իմ անձնական եսասիրությանը հագուրդ տալուն:

Ահա և իմ ապագա կյանքի պլանն ուրվագծվեց իմ երևակայության մեջ:

Ես ինձ տեսնում եմ նոր Ինստիտուտ ստեղծելու գործով զբաղված, որն իր բազմաթիվ բաժանմունքներն ունի ամբողջ աշխարհում, բայց այս անգամ՝ ո՛չ Մարդու ներդաշնակ զարգացման Ինստիտուտ: Իմ նոր կյանքում ես միջոցներ կփնտրեմ, որոնք մարդուն թույլ կտան հասնել հոգեկան հավասարակշռության և այն պահպանել իր ամբողջ կյանքի ընթացքում:

Եվ ես կասկած չունեմ, որ այդ նոր գործում կհասնեմ հաջողության: